

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՎՈՒ ՄԱՆԿՈՎԱՐԺՈՎԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊՐՈՖ. Ի. Մ. ՏՐՈՆՍԿԻ

Ա. Ն. Տ Ի Կ


ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ


Մ Ա Ս Ն Ի


\*

ԵՐԵՎԱՆ

1953







ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

87/88.09

ՊՐՈՖ. Ի. Մ. ՏՐՈՆՍԿԻ

S-99

ՈՏԻՊԿԱՆ 1961 թ.

Ա Ն Տ Ի Կ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

1961

Մ Ա Ս Ն II

ՀՌՈՍԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


11  
A 21329

ՅՈՒՑԼԱՏՐՎԱԾ Է՝ ՍՈՒՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԻ ԻՐԲԵՎ ԳԱՍԱԳԻՐՔ ՀԱՄԱ-  
ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ  
ՖԻԼՈՒՆԳԻՍԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ

1949



ՀՈՌՈՄԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՄՊՈՒՐԼԻԿԱՅԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գ Լ Ո Ւ Ն I

Ն Ե Ր Ս. Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՀՈՌՈՄԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր թ. ա. III դարի կեսին, երբ հույների համար նրանց կլասիկ գրականությունն անցյալ էր, իսկ հելլենիստականն արդեն հասել էր իր ծաղկման ամենաբարձր աստիճանին, Միջերկրական ծովի արևմտյան մասում՝ Իտալիայում սկսում է զարգանալ անտիկ հասարակության երկրորդ գրականությունը՝ հռոմեականը։ Հռոմը, լինելով Իտալիայի միավորումը պլեսվորոզ լատինների ցեղի կենտրոնական համայնքը, ստեղծում է հունականին զուգահեռ իր գրականությունը և ստեղծում է այն իր սեփական լատիններեն լեզվով։

Հռոմեական ստրկատիրական հասարակությունը հիմնական զծերով զարգացման նույն էտապներն է անցել, ինչ որ հունականը։ Տոհմատիրական կարգերի քայքայման և ստրկատիրության զարգացման հետևանքով դասակարգային հասարակության ծագումը, ստրկական աշխատանքի վրա հենված արտադրության եղանակը, պոլիսը՝ դասակարգային հակասությունների և սեպուրելիական պետական կառուցվածքի տիպիկությամբ, հետագայում՝ ստրկության համակենտրոնացումը, ազատ մանր սեփականատերերի քայքայումը, պոլիսի կազմալուծվելը և ռազմական դիկտատուրայի անցնելը, — անտիկ հասարակության այս ամբողջ ուղին նույնքան բնորոշ է Հռոմի, որքան և Հունաստանի համար։ Բայց

անտեսական և սոցիալական զարգացման ընդհանուր աիպի նուշնութեամբ հանդերձ, հոմեական ստրկատիրական հասարակութեան աճումն ու անկումն ընթանում էին որոշ շափով ալիւի ուշ ժամանակ և այլ տեմպով, պատմական և աշխարհագրական այլ միջավայրում, միջազգային տարբեր պայմաններում, ուստի և Հոմի պատմութեանը մի շարք սպեցիֆիկ առանձնահատկութեաններ ունի: Աճող Հոմը նվաճում է կործանվող Հունաստանն ու հելլենիստական երկրները, և Հոմում այդ «ամբողջ պրոցեսը կրկնվում է ալիւի բարձր աստիճանում» (Էնդելս): Ստրկատիրութեան հակասութեանները Հոմեական կայսրութեան մեջ ամենամեծ սրութեան հասան, որն անտիկ հասարակութեանը խորտակման հասցրեց և հող պատրաստեց նոր, ալիւի առաջադիմական արտադրական եղանակի՝ ֆեոդալականի ծագման համար, որը արդեն հիմնված էր ոչ թե ստրկական, այլ ճորտերի աշխատանքի շահագործման վրա:

Այսպիսով, Հոմում կրկնվում է այն ուղին, որով անցել էր հունական հասարակութեանը, բայց կրկնվում է փոփոխված և բարդացված ձևով: Հոմի զարգացման այդ «երկրորդային» բնութեթը անջնջելի կնիք դրեց նրա ամբողջ կուլտուրայի վրա: Հունաստանից ալիւի ուշ զարգանալով, Հոմը շատ հաճախ պատրաստի պատասխաններ էր գտնում իր իդեոլոգիական պահանջների համար: Հունաստանում, նրա պատմական զարգացման ուղու զանազան էտապներում, մշակված աշխարհայացքն ու իդեոլոգիական ձևերը հարմար էին գալիս երկրորդ անտիկ հասարակութեան՝ հոմեականի համար, վերջինիս զարգացման համապատասխան մոմենտներում: Ուստի հուշներից «փոխառումը» շատ նշանակալի գեր էր խաղում հոմեական կուլտուրայի, կրոնի, փիլիսոփայութեան, արվեստի և գրականութեան ամենաբազմազան բնագավառներում: Սակայն, հուշներից «փոխ առնելով», հոմեացիներն այդ հարմարեցնում էին իրենց պահանջներին և զարգացնում էին իրենց պատմութեան սպեցիֆիկ առանձնահատկութեաններին համապատասխան: Հոմեական գրականութեան ոճական ձևերը՝ հունական ոճական ձևերի թե կրկնողութեանը և թե դրա հետ միասին ձևափոխութեան էին, և հոմեական գրականութեանն իր ամբողջութեամբ անտիկ գրականութեան, որպես համաշխարհային պատմական-գրական պրոցեսի, երկրորդ վարիանտն էր:

Այդ վարիանտի պատմական նշանակութեանը, հոմեական գրականութեան տեղը Եվրոպայի գրականութեան մեջ, որոշվում է

պատմական այն դերով, որ խաղում էր Հոտմը եվրոպական Արևմուտքի կուլտուրական զարգացման գործում: Հոտմեական գրականությունը փոխանցող օղակ է եղել հունական և արևմտաեվրոպական գրականությունների միջև: Արևմտաեվրոպական գրականության համար ձևավորող դերն ընդհուպ մինչև XVIII դարը հիմնվում էր հոտմեական, և ոչ թե հունական վարիանտի ներգործության վրա: Ե՛վ Վերածնության դարաշրջանում և՛ XVII—XVIII դարերում Եվրոպայում հունական գրականությունն ընկալվում էր Հոտմի պոեզիայի միջոցով: Եվրոպական «կլասիցիզմի» ողբերգության մեջ անտիկ շիթը ավելի մեծ չափով էլնում էր հոտմեական գրամատուրգ Սենեկայից, քան էսքիլոսից, Սոֆոկլեսից և էվրիպիդեսից: Այդ ժամանակվա եվրոպական էպոսը կողմնորոշված էր դեպի Վերգիլիոսի «էնեականը», և ոչ թե դեպի հոմերոսյան պոեմները: Միայն XVIII դարի բուրժուական «նեոհումանիզմը» իր հետ բերեց նոր կողմնորոշում, որն ուղղված էր այս անգամ արդեն անմիջականորեն դեպի հունական գրականությունը: Կողմնորոշման փոփոխությունը հանգեց այն բանին, որ XIX դարում հոտմեական գրականությունն սկսեցին թերազնահատել, դիտել որպես զուտ նմանողական գրականություն: Նրա նշանակությունն սկսեցին վերածել լոկ «միջնորդական» դերի, պայմանավորված իբր թե այն հանգամանքով, որ լատիներեն լեզուն Արևմտյան Եվրոպայում ավելի էր տարածված, քան հունարենը: Այդ տեսակետը միանգամայն անհիմն է: Իսկապես, Միջին դարերի առաջին կեսին և խաղաղական վաղ Վերածնության ժամանակ հունարեն լեզուն Արևմտյան Եվրոպայում գրեթե անհայտ էր, մինչդեռ լատիներեն գիտեին ամենուրեք: Բայց անտիկ գրականության մեծ ներգործությունը եվրոպական գրականության վրա կատարվում է սկսած XV—XVI դարերից, երբ Եվրոպայում արդեն գիտեին հունարեն: Երբ Եվրոպան դիմում էր անտիկ գրականության հոտմեական վարիանտին, ապա այդ տեղի էր ունենում ոչ թե հունական լեզվին անձանձ լինելու շնորհիվ, այլ որովհետև հոտմեական վարիանտն ավելի շատ էր համապատասխանում այդ ժամանակվա գեղարվեստական ճաշակին ու նրա գրական պահանջներին: XVI—XVII դարերի եվրոպական կլասիցիզմի տեսաբանները, զբաղվելով անտիկ երկու գրականությունների համեմատական գնահատությամբ, միշտ հանդում են հոտմեացիների «զերազանց» լինելու եզրակացության: Այս տեսակետից շատ հատկանշական է այդ ժամանակվա գրականության տեսության վերաբե-

րլալ ամենազգեցիկ տրակտատներինց մեկը՝ Սկալիգերի (1484—1558)՝ Հոլլոս Կեսարի «Պոետիկան»։ Սկալիգերը, հոմերոսյան էպոսը վերգիլոսի «էնեականի» հետ մանրամասն համադրության մեջ դնելուց հետո, նախապատվությունը տալիս է «էնեականին»։ Այդ կարգի դատողությունները, որքան էլ պատմականորեն սահմանափակված լինեն որոշ դարաշրջանի ճաշակով, այնուամենայնիվ վկայում են այն մասին, որ «միջնորդական» դերը հոմեական գրականությունը բաժին է ընկել ո՛չ թե պատահաբար, լատիներեն լեզվի ավելի շատ տարածված լինելու հետևանքով, այլ շնորհիվ նրա սեփական սպեցիֆիկ հատկությունների, որոնք նրան տարբերում էին հունական գրականությունից և վերածնության ու XVI—XVII դարերի կլասիցիզմի էսթետիկական պահանջներին ավելի ներդաշնակ էին դարձնում։

Չնայած այդ երկու գրականությունների միատիպ լինելուն, իբրև գրականություններ, որոնք համապատասխանում էին մարդկային հասարակության զարգացման միեկնույն էտապին, շնայած ավելի երիտասարդ հոմեական գրականության մեծ կախմանը՝ ավելի վաղ զարգացած հունականից, հոմեական գրականությունը հունական օրիգինալի պարզ ընդօրինակությունը, պատճենը չէ և իր սպեցիֆիկ առանձնահատկություններն ունի։

Հունական կլասիկ գրականությունը վերաբերում է անտիկ հասարակության գոյացման ժամանակաշրջանին (Հոմերոս) և նրա զարգացման այն աստիճանին, որը կարելի է բնութագրել որպես «պոլիսային» ժամանակաշրջան (ատտիկական գրականություն)։ Հոմեում գործն այլ կերպ էր դասավորված։ Հոմեական գրականության ծաղկումը, նրա «ոսկե դարը» համընկնում է հոմեական պոլիսի քայքայման և կայսրության ծագման, անտիկ աշխարհի զարգացման ավելի ուշ աստղիայի հետ։ Նոր հասարակական էտապին համապատասխանում է հասարակության և անհատի փոխհարաբերությունների այլ փուլ, ավելի նեղ պրոբլեմատիկա, բայց անձնական ինքնագիտակցության ավելի բարձր մակարդակ։ Հոմեական գրականության «ոսկե դարը» ծանոթ չէ այն լայն ու բարդ հարցերին, որոնք ծառայած էին ատտիկական ժամանակաշրջանի հունական հասարակական մտքի առաջ, բայց նա սուբեկտիվ կյանքի և ներքին ապրումների նկարագրման ավելի մեծ ինտենսիվության է հասնում, թեպետև ավելի նեղ և սահմանափակ ոլորտում։ Այսպես էլ պարունակվում է այն նորը, որն իր ամբողջությամբ գիտվող հոմեական գրականությունը հարակցում է անտիկ

գրականութեան ընդհանուր պատկերին: Վերածնութեան և եվրոպական արքայադուրի գարաշրջանի համար ուշ անտիկ շրջանի կուլտուրան ամեն կողմից էլ ավելի մոտ էր, քան պոլիսի կուլտուրան (բավական է հիշել, որ հենց այդ ժամանակ Արևմտյան եվրոպայում մտցվում է հոմեական քաղաքացիական իրավունքը, և գույքային հարաբերութիւնները կարգավորվում են Հոմի կայսրների մշակած օրենքներով), և այդ հակումը դրսևորվում է նույնպես գրականութեան և արվեստի բնագավառում: Բնորոշ է, օրինակ, որ հոմեական գրականութեանը տրվող առավելութեան զուգընթաց, մեծ ժողովրդականութիւն էին վայելում ուշ հունական հեղինակներ՝ Պլուտարքոսը, Կուլիանը, հունական վիպագիրները:

Այս հիմնական տարբերութեանը, որը բնորոշում էր հոմեական գրականութեան սպեցիֆիկ դեմքը նրա ամենափայլուն ժամանակաշրջաններում, հարկավոր է ավելացնել «միջնորդական» դերը զյուրացնող որոշ այլ մոմենտներ ևս:

Ընդօրինակելով հունական գրականութեան ոճական ձևերը, հունական գրական ժանրերը, Հոմը վերացնում է հույների մոտ պահպանված գերապրուկային մոմենտներից շատ-շատերը: Այսպես, հունական դրամայում՝ ողբերգութեան և կատակերգութեան մեջ՝ պարտադիր էր խմբի մասնակցութիւնը: Կապված լինելով Դիոնիսիոսի տոնակատարութիւնների հետ, որոնց ժամանակ տեղի էին ունենում թատերական ներկայացումները, այդ խումբն շարունակում է գերապրուկոսն գործել և այն ժամանակ, երբ դրաման ըստ էութեան դադարել էր դրա կարիքն զգալ: Հոմեական գրականութեան մեջ դրա պարտադիր լինելու հանգամանքը վերացավ, այնպիսի տեղական առանձնահատկութիւններ, որոնք բխում էին ժանրի ծագման սպեցիֆիկ պայմաններից, հոմեական գրականութեան մեջ արդեն կորչում են:

Մյուս կողմից, հոմեական գրականութիւնն իր լավագույն արտահայտութիւններով հաճախ իրենից ներկայացնում է մի սինթետիկ ալի բոլորի, ինչ որ տալիս էր զանազան ժամանակաշրջանների հունական գրականութիւնը: Վերգիլիոսի էպոսը և Հորացիոսի լիրիկան, օրինակ, կողմնորոշված են դեպի կլասիկ ժամանակաշրջանի հունական գրականութիւնը, բայց դրա հետ միասին օգտագործում են նաև հելլենիստական գրականութեան նվաճումները, դարերի ընթացքում կուտակած ամբողջ վարպետութիւնը: Հունական հին ժանրերը հոմեացիների մոտ նորոգված ձև են ստանում: Հոմոս, այսպիսով, Հունաստանի գրական ձևերի ընդլայնած վերար-

տադրութիւնն է կատարվում, ազատագրված տեղական առանձնահատկութիւնները:

Հետեւեալ, հոմեական գրականութեան պատմական նշանակութիւնն այն է, որ նա անտիկ գրականութեան այնպիսի վարիանտ է, որի ծաղկումը կատարվում է հոմեական տիրութեան ավելի ընդլայնած բազայի վրա և անտիկ հասարակութեան ավելի ուշ աստիճանում, մի վարիանտ, որն իր սպեցիֆիկ հատկութիւններով ավելի հեշտութեամբ կարող էր օժանդակել արեւմտաեվրոպական նոր գրականութեան ձեւավորմանը:

## 2. ՀՈՌՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՅԻԱՆ

Ըստ արագիցիայի, որն իր ակունքներով սկիզբ է առնում վերածնութեան դարաշրջանից, ընդունված է հոմեական գրականութիւնը ստորաբաժանել ժամանակաշրջանների՝ լատինական գրական լեզվի դարգացման էտապների համապատասխան. այդ առումով տարբերվում են՝ «արխաիկ» լատիներենը, «կլասիկ» լատիներենը («ոսկե» և «արծաթե») և «ուշ» լատիներենը: Այդ տեսակետից հոմեական գրականութեանը պերիոդիզացիայի է ենթարկվում հետեւյալ կերպով.

I. Հնագույն ժամանակաշրջան — մինչև Հոմերոս հունականի օրնիակով գրականութեան առաջնալը (մինչև 240 թ. մ. թ. ա.),

II. Արխաիկ ժամանակաշրջան — մինչև Յիցերոնի գրական գործունեութիւնը (240—81 թ. մ. թ. ա.),

III. Հոմեական գրականութեան ոսկե դարը՝

ա) Յիցերոնի ժամանակը — հոմեական պրոզայի ծաղկումը (81—43 թ. մ. թ. ա.),

բ) Օգոստոսի ժամանակը — հոմեական պոեզիայի ծաղկումը (43 թ. մ. թ. ա. — 14 թ. մ. թ.),

IV. Հոմեական գրականութեան արծաթե դարը — մինչև Տրայանոս կայսրի մահը (14—117 թ. մ. թ.),

V. Կայսերական ուշ ժամանակաշրջան (117—476 թ. մ. թ.):

Այս պերիոդիզացիան, թեպետև հիմնավորված է լեզվի «գնահատման» միակողմանի սկզբունքի վրա («ոսկե» և «արծաթե» լատիներեն և այլն), միանգամայն բավարար է նշում Հոմերոսի գրական պրոցեսի գլխավոր դադաթիւնը: Հոմեական գրականութեան պատմութեան մեծ մասը տարբերելու ենք հետեւյալ ժամանակաշրջանները.

I. Ռեսպուբլիկայի դարաշրջան (մինչև 30-ական թվականները մ. թ. ա.)՝

ա) նախադրական ժամանակաշրջանը (մինչև III դ. կեսերը),

բ) հռոմեական գրականության առաջին դարը (մինչև II դ. կեսը, սարկատիրական ռեսպուբլիկայի աճման ժամանակը).

գ) ռեսպուբլիկայի վերջին դարի գրականությունը (քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանը՝ սկսած II դ. վերջից մինչև 30-ական թ. թ. մ. թ. ա.),

II. Կայսրության դարաշրջան (30-ական թվականներից մ. թ. ա. — 476 թ. մ. թ.)՝

ա) ռեսպուբլիկայից կայսրության անցման ժամանակի գրականությունը («Օգոստոսի դարը» մինչև 14 թ. մ. թ.),

բ) կայսերական Հռոմի գրականությունը՝

1) մեր թվականության I դարը («արծաթե դար»),

2) ուշ ժամանակվա հռոմեական գրականությունը

(II—V դ. դ.):

## ՆԱԽԱԳՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Հոռմում գեղարվեստական գրականությունը համեմատաբար ուշ է հանդես գալիս: Այն ծագում է III դարում, հոռմեական կուլտուրայի հելլենականացման պրոցեսում, երբ Հոռմն արդեն վերջնականապես կազմավորված ստրկատիրական պոլիս էր և կարողացել էր իր իշխանությունը տարածել գրեթե ամբողջ Իտալիայի վրա:

Ավելի վաղ ժամանակի խոսքի արվեստը գրական սաղմերից հետո չէր գնացել. այդ սաղմերը մասամբ կլանվեցին, մասամբ դուրս վնդրվեցին հետագա զարգացմամբ: Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության ծագման ժամանակաշրջանը, սրբ Հունաստանում ուղեկցվում էր գրական հարուստ ծաղկումով, հոռմեական գրականության համար անպատշաճ անցավ:

Հոռմեական համայնքի սոցիալական և քաղաքական զարգացման տեմպերից գրականության հա մնալն արմատավորված էր ոչ թե հոռմեացիների դեպի գեղարվեստական ստեղծագործությունն ինչ-որ «անընդունակ» լինելու մեջ (ինչպես երբեմն պնդում են բուրժուական գիտնականները), այլ հոռմեական վաղագույն պատմության սպեցիֆիկ պայմաններում:

Հոռմը՝ էտրուրիայից դեպի հարավ Իտալիայի արևմտյան առափնյա հին կացիում փոքր մարզի՝ համայնքներից մեկն էր: Կացիումի բնակիչները, լատինները, Իտալիայի մի շարք ցեղերի օղակներից մեկն էին կազմում. այդ ցեղերը միմյանց հետ կապված էին կուլտուրայի միասնությամբ և լեզվական մոտիկությամբ: Լատինական լեզուն պատկանում էր աշապես կոչված «իտալիկական» լեզվախմբին: Դրանց մյուս ճյուղավորումը կազմում էին ումբրա-սարբեյական բազմաթիվ բարբառները, որոնցից

մեզ ամենից լավ հայտնի են ումբրերի (միջին Իտալիայի արևելյան մասում) և օսկերի (միջին և հարավային Իտալիայում) լեզուները: Իտալիայի բնակչությունը, սակայն, աչքի էր ընկնում մեծ բազմազանությամբ ինչպես ազգագրական, այնպես էլ լեզվական տեսակետից: Ոչ-իտալիկ լեզվով խոսող ժողովուրդներից ամենից շատ նշանակություն ունեին էտրուսկները, որոնք հաստատված էին թերակղզու հյուսիս-արևմտյան մասում, և հույները, որոնք Սիցիլիան և հարավային Իտալիան ծածկել էին իրենց գաղութներիցանցով («Մեծ Հունաստանը»): էտրուսկներն ու հույները միմյանց հետ պայքար էին մղում Իտալիայի արևմտյան առափնյա ծովային հեզեմոնիայի համար: Լացիումը, տեղավորված լինելով էտրուրիայի և Կամպանիայի հունական գաղութների միջև, ներգրավվեց այդ պայքարի մեջ:

Հռոմեական պատմաբանների տրադիցիան Հռոմի «հիմնադրումը» հարմարեցնում է VIII դ. կեսերին մ. թ. ա. (սովորաբար 753 թվին մ. թ. ա.): Հնագիտական հետախուզությունների արդյունքները, սակայն, թույլ չեն տալիս այդ «հիմնադրումը» դիտելու որպես ինչ-որ միաժամանակյա ակտ: Լատինական և սարնիական առաջին բնակչությունների հաստատումն ապագա Հռոմի տիրիտորիայի վրա տեղի է ունեցել տրադիցիոն թվականությունից ավելի առաջ, X—IX դարերում. այդ բնակչությունների միավորումը կատարվել է ավելի ուշ և ընդ որում մի քանի նվազով: Հռոմեական պոլիսի կազմվելու մեջ վճռողական դեր է խաղացել այն ժամանակը, երբ Հռոմում կառավարում էին էտրուսկական գինաստիայի թագավորները: Հռոմը, որ ծառայում էր Լացիումում էտրուսկական ազդեցության տարածմանը, այդ ժամանակ լատինական քաղաքների շարքում գերակշռող տեղ էր գրավում: Հռոմի պատմության այդ առաջին էտապում պայմանները բարեհաջող էին դասավորվում երիտասարդ պոլիսի կուլտուրական զարգացման համար: Աճում էին նյութական կուլտուրան ու տեխնիկան, երևան եկավ դիրք: Բարգացում էր նկատվում և կրոնի բնագավառում: Հռոմեական հին հավատալիքներն աչքի էին ընկնում իրենց պրիմիտիվությունով. առանձին առարկաներն ու պրոցեսներն իրենց աստվածություններն ունեին, բայց հռոմեացիները հաճախ այդ «աստվածներին» չէին անջատում նրանց արտահայտության ոլորտից, նրանց բմբւնում էին ոչ թե որպես ինքնուրույն էակներ, այլ ուժեր, որոնք գտնվում են առարկայի կամ պրոցեսի մեջ, անխզելիորեն ձուլված դրանց հետ: Յեղային աստվածություն — «նախահայրերը» պատ-

կերացվում էին կենդանակերպ, իբրև գայլ, ծառուտուտ: Այժմ, այդ պրիմիտիվ հավատալիքներին զուգընթաց, մասամբ էտրուսկների միջոցով, սկսեցին տարածվել հունական մարդկայնացրած աստվածությունների պաշտամունք, և սկսեցին Հռոմ ներթափանցել հունական դիցաբանության պատկերացումները:

VI դ. վերջին էտրուսկական թագավորները տապալվեցին, և հաստատվեց արևատիկրատական ռեսպուբլիկա: Դրանից հետո շուտով Հռոմի գրուբյունը խիստ կերպով փոխվեց: Նա միառժամանակ կորցնում է իր գերակշռությունը Լացիումում և դառնում է մեկուսացած համայնք, որն ստիպված էր անընդհատ պատերազմներ մղել հարևանների հետ: Իտալիական լեռնական ցեղերի տեղաշարժերը պատնեշ են կազմում Կամպանիայի հետ հարաբերություն ունենալուն: Հռոմի մեջ ուժեղանում է գյուղական պահպանողական տարրի տեսակարար կշիռը, և կուլտուրական զարգացումը դանդաղում է: Համայնքի ներսում պայքար է գնում պլեբեյների և պատրիկիների միջև: Այդ երկարատև պայքարում, որը շարունակվում է մոտավորապես երկու դար (V—IV դ. դ.), պլեբսն իր համար քաղաքական իրավունքներ նվաճեց, բայց հոմեակական գյուղին, իր բազմաթիվ ազատ մանր հողատերերով և տոհմատիրական կենցաղի նշանակալի գերապրուկներով, մնում էր իբրև արիստոկրատիայի պատվար, և պատրիկական քրմության իդեոլոգիական տիրապետությունը չջախջախվեց: Աշխատասեր գյուղացիական համայնքի դաժան դիսցիպլինը, հոր անսահմանափակ իշխանության վրա հիմնված ընտանեկան կառուցվածքը, վաղեմի անցյալի հետ կապված լինելը, — նահապետական-երկրագործական կենցաղի այս գծերը Հռոմին հատուկ էին տակալին III դարում: Հռոմեական կրոնի մեջ հունական աստվածների արմատավորվելու պրոցեսը երկար ժամանակով կանգ առավ: Այդտեղ կենտրոնական տեղը գրավում էր ծիսակատարությունը, որը պաշտպանվում էր քրմերի կողմից, իսկ դիցաբանական պատկերացումները մնում էին աղքատիկ ու անզարգացած: Դիցաբանական և պաշտամունքային հիմքի վրա բազմապիսի բանաստեղծական ձևեր ստեղծելու համար, ինչպես այդ տեղի ունեցող Հունաստանում, այդ ժամանակվա Հռոմում ոչ հող կար և ոչ էլ բավարար չափով շարժիչ ուժեր:

Էտրուսկների կուլտուրական ազդեցությունը Հռոմի վրա, որը շատ նշանակալի էր հին ժամանակներում, նույն ուղղությամբ էլ ներգործում էր: Էտրուսկները հարուստ դպրություն ունեին, բայց

նրանց բազմաթիվ «գրքերը» կրոնական, քրմական բնույթի էին։ Էտրուսկները գրականություն չտեսելուցին։ Ինչ վերաբերվում է Հռոմի հարևաններին՝ իտալիկական ցեղերի թվից, ապա նրանք կուլտուրական ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում, քան հռոմեացիները։

Հռոմեական համայնքի փակված դրուժյունը և նրա պահպանողականությունը, քրմության իդեոլոգիական տիրապետությունը, էտրուսկների կուլտուրական ազդեցությունը, — այս բոլորը մ. թ. ա. V—IV դարերի Հռոմում արգելակում էին իդեոլոգիական զարգացմանը ամբողջությամբ, գրականության գոյացմանը մասնավորապես։ Առանձնապես այդ անգրագրածավ պոեզիայի վրա, որը լիակատար չափով տակավին պահպանում էր իր ֆոլկլորային բնույթը։

Ըին Հռոմում կարելի է դիտել երգագոյացման այն բոլոր հիմնական տիպերի առկայությունը, որոնց մեկը հանդիպում էինք հունական գրականության ֆոլկլորային ակունքները քննելիս։ Ռիթմավորած կամ չափավորած խոսքը (carmen), ուր բառը դեռ լիովին չի անջատվի երաշտությունից, ուղեկցում էր աշխատանքային օպերացիաները և ծիսական արարողությունները, և դրանց բնույթը սրորում էր «երգի» ժանրային առանձնահատկությունները։

Հռոմեական պոեզիայի հնագույն հուշարձանները պաշտամունքային հիմներն են, որոնք պահպանվել են քրմերի գրանցումներում։ Ամեն տարի մարտին և հոկտեմբերին «աալիների» (ցատկողների — прыгун-ների)՝ Մարս աստծու քրմերի կուլեգիան՝ Հռոմ քաղաքի շուրջը ծիսական «պտույտ» էր կատարում։ Զինվորական հագուստով, սրբազան վահաններով ու նիզակներով, կամ մահակներով, նրանք պարելով շրջում էին քաղաքում, մահակներով խփում վահաններին և դիմում տարբեր աստվածների պաշտամունքային «կոչով»։ Չափազանց աղճատված ձևով պահպանվել են քաղվածքներ նրանց հինավուրց հիմներից. լատինական ամենահին պոետիկական այդ տեքստը հետագայում անհասկանալի էր արդեն նույնիսկ հիմնը կատարող քրմերի համար։ Մի այլ քրմական կուլեգիա՝ «արվալյան («հերկային») եղբայրությունը»՝ մայիսին կատարում էր եռօրյա տոնակատարություն նվիրված երկրագործության աստվածուհի Dea Dia-ին։ Մեզ հասել են նրանց սրբազան արարողությունների արձանագրությունները, որոնք վերաբերում են կայսրության դարաշրջանին, և նրանց հիմնի գրանցումը։

Քրմերը պարում էին, երեք անգամ կրկնելով գրած երգի ոտանա-  
վորը, որն այնքան արխաիկ չէ, որքան սալիների հիմնը, բայց  
նույնպես պատկանում է լատիներեն լեզվի ամենավաղ հուշար-  
ձանների թվին: Այդ՝ պաշտամունքային դիմում է աստվածներին  
խնդիր ցանքսի բարեհաջողության համար:

«Օգնեցեք մեզ, կարեր: Թույլ մի տուր, Մար-Մար, մահ-գրո-  
ղին կործանել ավելի շատերին: Կշտացի՛ր, կատաղի Մարս, շեմ-  
քին ցատկի՛ր, կանգնի՛ր, Բեր-Բեր (?): Փոխնեկոխ կանչեցեք (?)  
բոլոր Սերմնավորներին (ոգիներին): Օգնի՛ր մեզ, Մար-Մոր»):

Հոմեական «երգերի» պահպանված գրանցումները, սակայն,  
բազմաթիվ չեն և պատահական են, իսկ այն, ինչ էլ որ կա, հա-  
ճախ վերաբերում է ավելի ուշ ժամանակներին: Մի քանի աղոթք,  
դուրսմաներ, պատգամախոսների նախագուշակումներ, ժողովրդա-  
կան օրացույցի նշաններ — մոտավորապես այսպիսին է այն եր-  
գերի տեքստերի կազմը, որոնք գալիս են նախագրական ժամա-  
նակաշրջանից: «Երգերի» այլ տեսակների մասին տեղեկություննե-  
րը հիմնված են ոչ այնքան անմիջական գրանցումների, որքան  
հոմեական գրողների հաղորդումների վրա:

Այսպես, հոմեական գրողները հիշատակում են աշխատանքի  
երգերի տարբեր տեսակների մասին՝ խաղողը հավաքելիս, մանե-  
լիս ու հյուսելիս, հովիվների և թիավարողների երգերի մասին:  
Այստեղ տեքստեր չեն պահպանվել, միայն թիավարողների երգի  
ուշ-անտիկ շրջանի գրական ընդօրինակություն կա, իր կրկներգու՝

էյա՛, թիավարն՛ր, թող արձագանքի մեր գլրդյուն էյաս:

Ավելի շատ տեղեկություններ պահպանվել են ծիսական եր-  
գերի մասին:

Փոստ թող լինի նա, ով վերջինը կվազի՛:

Ավելի շատ տեղեկություններ պահպանվել են ծիսական երգերի  
մասին:

Հուզարկավորության ժամանակ, սրինգի նվագածուկյամբ,  
կատարվում էր նենիյա՝ ողբ: Ողբում էին կանայք, ննջեցյալի աղ-  
գականուհիները, բայց մենեղը կատարողները վարձու լալկան  
կանայք, պրոֆեսիոնալ եղերամայրերն էին լինում: Նինիյան իր մեջ  
պարունակում էր ինչպես վշտի արտահայտություն, այնպես էլ ննջե-  
ցյալի գովերգություն, որն, ըստ հին մարդկանց պատկերացում-

ներքի, պետք է մեռածին օգնել նրա անդրշիրիմյան ճանապարհին: Հին հռոմեական կրոնն առանձին պրոցեսներին հատուկ աստվածներ էր վերապրում, և հռոմեացիները երկրպագում էին Նենիյա աստվածուհուն իբրև մահացողների հովանավորի: Նենիյա տերմինը հանդիպում ենք և Փոքր Ասիայում փոյուզացիների մոտ, թեթև այդ Հոմ է ընկել էտրուականների միջոցով, որոնց հետ հռոմեական ծիսակատարական շատ մոմենտներ են կապված: Հուդարկավորության ժամանակ լալկան կանանց հրավիրելու սովորույթը հետագայում վերացավ, և «նենիյա» բառն սկսեց նշանակել թախճալի, մոնոտոն և տխուր երգ:

Պողարեբուլայան տոներին հնչում էին ծիծաղաշարժ երգեր, նման հունական յամբերին: Այստեղ էլ, ինչպես հույների մոտ, ծիծաղը, հայհոյանքը և պղծաշրթուքյունը դիտվում էր իբրև օգնություն բնության կենսարար ուժերին, նույնպես և, ավելի ուշ իմաստավորմամբ, իբրև միջոց մարդկային երջանկությանը «ախանձող» շար դեերի դեմ (հմմ. էպիլոսի և Հերոդոտի մոտ «աստվածների նախածնի» մասին պատկերացման հետ): Այդ երգերը կոչվում էին ֆեսցենինական, իսկ ծաղրածուները և զվարճախոսները հորջորջվում էին՝ «ֆեսցենիններ»<sup>6</sup>:

Հնձի տոնակատարությունների ժամանակ «ֆեսցենինական ազատությունների» մասին հիշատակում է հոմերական պոետ Հորացիոսը (65—8 թ. մ. թ. ա.):

Չարածնի սովորույթը ֆեսցենին այդ տոների մեջ էր մտել՝  
Հայհոյական ոտանավորով գյուղացիք հերթով իրար էին ձաղկում:  
Ուղերձներ, գիրք II, ուղերձ I:

«Հերթով» նշանակում է երկու խումբ երգողներ լեզվակախվ էին մղում, մեկը մյուսին խիստ ծաղրի ենթարկելով: Ֆեսցենինական երգերը շատ երկարատև պահվեցին հռոմեական կենցաղում, մա-

<sup>6</sup> Անտիկ գիտնականներն այդ տերմինը տարբեր կերպ էին բացատրում: Ոմանք այն բխեցնում էին Fescennium քաղաքի անունից (հարավային Իտալիայում, լատինացիներին ցնդակից ֆալսիկների մարզին մոտ), ուրիշները կապում էին Fascinum (մոգական կախարհություն կամ ֆալուա) բառը հետ: Ժամանակակից հետազոտողները նույնպես տատանվում են այդ երկու ենթադրությունների միջև: Ֆեսցենինական երգերի «ֆալուական» բնույթը և նրանց վերաբերված մոգական նշանակությունը կասկածի ենթակա չեն, բայց լեզվաբանորեն առաջին մեկնաբանությունն (Fescennium-ից) ավելի արժանաբան է թվում:

նազանդ հարսանեկան ծեսերի մեջ: Հարսանիքն էլ պողաբերութեան տոնակատարութիւնն էր հանդիսանում, և քիչ չէին լինում «տոնական անարգանքներ» նորապսակների հասցեին:

Ծիսական անարգանքի մոմենտը առանձնապես վառ երևան է գալիս հաղթահանդեսի երգերում: «Հաղթահանդեսը» ամենաբարձրագույն պատիվն էր, ինչպիսին կարող էր տրվել հռոմեական զորավարին, որը վճռական հաղթանակ էր տարել թշնամու հանդեպ: Հանդիսավոր երթով բանակը մտնում էր Հոռոմ քաղաքը, որ սովորաբար չէր թուլատրվում: Այդ օրը հաղթանակողն իրեն ներկայացնում էր Կապիտոլական Յուպիտերի՝ հռոմեական համայնքի գերագույն աստծու՝ կերպարով, — Յուպիտերի հանդերձանքով, այդ աստծու պատկերին հատկացրած բոլոր պատվանշաններով և որոնք այդ դեպքի առթիվ բերվում էին տաճարից. աստծու ոսկե կառքով, լծված չորս սպիտակ ձի, նա առաջ էր շարժվում դեպի կապիտոլիական տաճարը, ուր իր հաղթական դափնե պսակը դրոշմ էր կուռքի դիրքը: Իսկ թափորի ժամանակ զինվորները միմյանց նետում էին զորավարին «պախարակող» երգեր: Հուլիոս Կեսարի հաղթական շքերթի ժամանակ, օրինակ, երգում էին նրա վատնողութեան և անառակութեան մասին՝

Քաղաքացիներ, պահեցե՛ք ձեր կանանց, ճաղատ շնայողն է մեզ հետ  
Ամբողջ ավարը շուտե՛յան ևս ծախսել, Հոռոմում փող ևս պարտք արել:

Անարգանքները հաղթական երթի ծիսակատարութեան անհրաժեշտ մասին էին: Հաղթական երթի ամբողջ բնույթն այն է վկայում, որ հաղթողն իր մուտքը կատարում էր իբրև համայնքի աստծու մարմնավորող, բայց հետագայում այդպիսի նույնացումը վատնագավոր մեծամտութիւնն էր թելում, և հաղթանակողի գլխին ոսկե պսակ պահող պետական ստրուկն անընդհատ կրկնում էր նրան՝ «ես նայիր և հիշիր, որ դու մարդ ես»: Հաղթողին «աչքով աւալու» հնարավորութիւնը կասեցնելու համար, նրան տալիս էին հատուկ հմայիչ: Հաղթահանդեսի երգերը, հավանորեն, իմաստավորվում էին նույնպես իբրև հանդիսավորութիւնը «մոռացելու» միջոցներից մեկը, որով երջանկութեան արժանացածին նախապահպանում էին «նախանձից»\*:

Տոնական անարգանքը ֆիեկաիվ, դուռ ծիսական բնույթ ունեւր,

\* Հմմ. սուսական սովորույթը հարսանիքի ժամանակ արիտ կտորելը, նույնպես և բազմազան միջոցառումները «շար աչքից» պաշտպանելու համար, որն էր գովեստի ժամանակ:

բայց ծիծաղաշարժ («Ֆեսցենինական») երգերը կարող էին ծառայել և հասարակական պարսավանք արտահայտելու համար: Իտալիկական ժողովրդական սովորույթը թույլատրում էր հանրային անպատվությունը իբրև հասարակական ներգործության միջոց այն անձնավորության վրա, որն անպատշաճ վարվեցողություն է ունեցել: Մեղավորի տան լուսամուտների տակ կատվի համերգ էին կազմակերպում կամ փողոցում «խաչտառակում» էին (այդպես էր կոչվում այդ անպատվությունը), շրջապատելով նրան բազմությամբ (հմմ. նման հունական սովորույթը): Կարիքի դեպքում այդպիսի անպատվումը կարող էր սոցիալական բողոքի գործիք հանդիսանալ: XII տախտակների հին հոտմեական օրենսդրությունը «վատ երգերի» համար սպառնում էր խիստ պատժի ենթարկել:

Մեր աղբյուրները հիշատակում են երգային ֆոլկլորի մի տեսակի մասին ևս, այն է՝ խնջույքի (սեղանի) երգերի մասին:

Այդ հաղորդումներից ամենակարևորը սկիզբ է առնում մ. թ. ա. II դարի պետական գործիչ և գրող Կատոնից: Ըստ նրա խոսքերի, մի ժամանակ Հռոմում խնջույքներին ներկա եղողները սրնգի ձայնակցությամբ հերթով կատարում էին երգեր, որոնք փառաբանում էին հռչակավոր մարդկանց: Այդ երգերից, որոնք, ակնհերևորեն, պատկանում էին լիրիկո-էպիկական ժանրին, ուղղակի հետքեր չեն պահպանվել: Այն սովորույթը, որի մասին խոսում է Կատոնը, վերացել էր շատ վաղուց, և ոչ Կատոնն ինքը, ոչ հետագայի հոտմեական հեղինակները, որոնք հաղորդում են սեղանի երգերի մասին, իրենց տրամադրության տակ ոչ մի գրանցում չունեին: Սակայն, Հռոմում էպոսի սաղմերի հարցը մեծ նշանակություն ստացավ կապված հոտմեական պատմական ավանդությունների ծագման ավելի լայն պրոբլեմների հետ:

Հոտմեական պատմաբանների աշխատություններում մենք գտնում ենք հոտմեական համայնքի ճակատագրի հաջորդական շարադրությունը, սկսած, նրա ենթադրական «հիմնադրումից» մ. թ. ա. 753 թվից, և ընդարձակ պատմվածքներ հին Հռոմի առանձին գործիչների մասին: Եթե այդ պատմվածքներն արժանահավատ լինեին, հարկավոր կլիներ ընդունել որ ոչ մի հին ժողովուրդ իր անցյալի մասին այնպիսի ճշգրիտ գիտելիք չի ունեցել, ինչպես հոտմեացիք: Իրականում, սակայն, հոտմեացիները գրեթե որևէ տեղեկություն չունեին իրենց պատմության թագավորական ժամանակաշրջանի մասին և շատ շնչին նյութ ունեին ռեսպուբլիկայի առաջին երկու դարերի մասին: Հոտմեական պատմաբանների



պատմածներն այդ ժամանակվա դեպքերի և մանավանդ անձնավորութիւնների մասին շատ զգալի շափերով իրենցից ներկայացնում են առասպելական պատմութիւն: Հոմերի երկվորյակ-Հիմնադիրների՝ Ռոմուլոսի և Ռեմոսի մասին, Տարպեա աղջկա մասին, որ թշնամուն է մատնել բերդը, որը պաշտպանում էր նրա հայրը, երեք երկվորյակ-եղբայրներ Հորացիուանների մենամարտը՝ երեք երկվորյակ-եղբայրներ՝ Կուրյացուանների դեմ և այլն, — այդ բոլորը ախպիկ ֆոկլորային սյուժեներ են, որոնք լայնորեն տարածված են զանազան ժողովուրդների մեջ: Առասպելներով դարձրված են նույնպես վաղազույն ռեսպուբլիկայի գործիչների կերպարները, ինչպիսիք են օրինակ՝ Կորնուլիանուսը, Յինցինատուսը կամ Կամիլուսը: Որտեղի՞ց են քաղել հոմեական պատմաբաններն այդ առասպելները:

Դեռ XVII դ. վերջին ենթադրվում էր, որ այդ առասպելների համար աղբյուր են ծառայել սերնդե-սերունդ հաղորդվող այն երգերը, որոնց մասին վկայում է Կատոնը: Ելնելով այդ մտքից, հին պատմութեան քննադատական մեթոդի հիմնադիր պատմաբան Նիբուրը (1776—1831) զարգացրեց հետևյալ հիպոթեզը. հնագույն Հոմերի մասին հոմեական պատմաբանների պատմածը հոմեական էպոսի պրոզաիկ շարադրութիւնն է: Լինելով Վոլֆի և Լախմանի ժամանակակից, Նիբուրը հին հոմեական էպիկական պոեմները պատկերացնում էր որպես երգերից կազմված մի շարք և փորձում էր վերականգնել դրանց բովանդակութիւնը: Նրա հիպոթեզի այդ կողմը արդարացի առաբկութիւնն էր առաջացնում. կարելի է Հոմոմը ենթադրել ֆոլկլորային լիրիկա-էպիկական երգերի առկայութիւն, բայց որևէ հիմք չկա պնդելու, թե հոմեական ֆոլկլորը զարգացավ մինչև մեծ պոեմների ստադիան: Նիբուրի հակառակորդները սակայն մյուս ծայրահեղութեան մեջ ընկան: Դիտելով հոմեական պատմութեան մեջ հունական ասքեր անկասկածորեն փոխադրելու որոշ դեպքեր, նրանք փորձում էին ընդհանրացնել այդ պրոցեսը և հոմեական բոլոր առասպելները մեկնաբանել որպես արհեստական գիտական կոնստրուկցիա ըստ հունական օրինակի, բացասելով նրանց մեջ հոմեական ֆոլկլորային տարրի ներկայութիւնը: Այս կետում Նիբուրի հիպոթեզն շատ ավելի արժանահավատ է թվում:

Այստեղ տեղին է նշել խիստ էական մի տարբերութիւն, որ կար հոմեական և հունական պատմողական ֆոլկլորի միջև: Հունական առասպելը պիտավորապես զարդանում էր

«Տերոսների» մասին ասքերի ձևով: Հունական համայնքներում «Տերոսները» պաշտամունքային երկրպագության առարկա էին, նրանք ըմբռնվում էին իբրև անցյալում իսկապես դոյություն ունեցած մարդիկ, բայց հույների պատկերացմամբ այդ առանձնակի անցյալ էր, տարբեր հասարակ պատմական անցյալից՝ առանձնակի մարդկանցով, որոնք ավելի մոտ էին կանգնած աստվածներին և հաճախ նրանց հետ տոհմակցական հարաբերության մեջ էին գտնվում: Հեսիոդոսը՝ իբրև հատուկ էտապ, որն անմիջականորեն նախորդել է արդի «երկաթե սերնդին»՝ տեղավորում է՝

Փառապանծ Տերոսների տոհմն աստվածային: Կիսաստվածներ են անվանում նրանց մարդիկ որոնք,

Մեզանից առաջ ապրում էին այս երկրում:

Տարբեր էր դրությունը Հռոմում: Հռոմեական կրոնը՝ իր ազոտ, գրեթե միմյանց հետ չկապված աստվածային դեմքերով և Տերոսների պաշտամունքի բացակայությամբ՝ նպաստավոր հող չէր ներկայացնում նշված ախլի «Տերոսական» ասքերի զարգացման համար: Միայն սակավ դեմքեր կային, ինչպես օրինակ, Հռոմի առասպելական հիմնադիր, աստվածացրած Ռոմուլոսն էր, որոնք այդ կողմից նմանութուն են երևան բերում հունական «Տերոսների» հետ: Հռոմեացիները երկրպագում էին «Նախնիներին», բայց նրանց սովորական մարդ էին պատկենախնիներին», բայց նրանց առավելապես կենտրոնացած են ոչ բացնում: Հռոմեական ասքերն առավելապես անցյալին վերադրվող կերթն դիցաբանական, այլ պատմական անցյալին վերադրվող կերպարների շուրջը, և հռոմեական պատմողական Փոլիլորը ծավալվում է գլխավորապես պատմական առասպելի ձևով: Փոլիլորային հողի այդ արմատական տարբերությունը՝ դիցաբանական ավանդություններ Հունաստանում, պատմա-առասպելական Հռոմում՝ հետագայում իրենց ազդեցությունն են ունենում հռոմեական գրականության վրա:

Այդ տարբերությունն արտացոլվել է և կերպարվեստում: Հռոմեական գեղանկարչության և բարձրաքանդակների համար բնորոշ է հետաքրքրությունը դեպի պատմական թեմատիկան, և, ի տարբերություն հունական արվեստի իդեալականացնող տեղեկանքներից, հռոմեական դիմանկարը ձգտում է ռեալ անձնավորության անհատական գծերը ճշգրիտ հաղորդելուն:

Ընդ սմին միանգամայն հարկ չկա հռոմեական պատմողական Փոլիլորը երևակայել բացառապես լիրիկա-էպիկական երգի ձևով: Դրան զուգընթաց միանգամայն հավանական է տոհմային կամ քրմական պրոզայիկ ասքի տրադիցիան ևս:

Տեղական ավանդույթներին միանում էին հունականները, որոնք ներթօնում էին կացիում անմիջականորեն Կամպանիայի հույներից և էտրուրիայի միջոցով: Իտալիան վաղուց ի վեր մրանում էր հունական դիցաբանության մտահորիզոնի մեջ: Այդ «Հեսպերիան» էր՝ «երեկոյան», «արևմտյան» երկիրը, մայրամուտի և մահվան մարզը: Ենթադրում էին, որ Սիցիլիայի և Իտալիայի մտերբում էին կատարվում Ոդիսևսի թափառումները, այստեղ էին տեղադրված Պոլիֆեմոսն ու էոլոսը, Կիրկեն և ստորերկրյա թագավորության մուտքը: Համաձայն Հեսիոդոսի «Ռեոգոնիայի» եզրափակիչ տողերի, Լատինը Ոդիսևսի և Կիրկեի որդին է, որն իշխում էր տերրենցներին (էտրուականներին): Իտալիայում իրենց վերջին օրերն են ապրել հունական առասպելի և այլ հերոսներ Դիոմիդոսը, Փրոկտեստեսը: Այդ սաքերն ընկալում էին և իտալիկական ցեղերը, որոնք իրենց կապում էին այդ հերոսների հետ: Կացիումում առանձնակի նշանակություն էր ստացել Իլիականի պերսոնաժներից մեկի՝ տրոյացի Էնեասի մասին ավանդությունը: Էնեասը, Ափրոդիտեի և տրոյացի Անխիսի որդին, կործանումից հետո թողնց իր հայրենիքը և ժամանեց կացիում, ուր ամուսնացավ Լատին արքայի դուստր Լավինեի հետ: Նրա որդի Ասկանիոսը համարվում էր՝ Հոմերի բարձրանալուց առաջ ամենախոշոր լատինական կենտրոն՝ Ալբա-Լոնգայի հիմնադիրը, իսկ հոմեացիք իրենց Ռոմուլոսին Ասկանիոսի սերունդ էին համարում: Հոմերոսյան էպոսի դեմքերն, այսպիսով, արմատանում էին հոմեական սաքերի ցիկլում:

Երկրագործական հասարակություններում սովորական միմականացումով ծիսախաղերը վկայագրված են և Հոմերի համար: Տարբեր տոնակատարություններին ելնում էին ծպտյալների թափոններ, շրջագայում էին խոսող դիմակներ (օրինակ՝ հարբած պառավի տեսքով) և զրուցում էին հանդիսատեսների հետ: Ծրպտրվածների խաղերն ուղեկցվում էին դիալոգի խմբավիզացիայով: Ագրարային տոների ծիծաղաշարժ «Ֆեսցենինական» երգերը կատարում էին ծպտվածները, և դրանք կրում էին «կառնավալային ազատության» բոլոր գծերը: Կառնավալային մոմենտներով առանձնապես հարուստ էր Սատուռնալիում տոնը (դեկտեմբերին), որի ծիսականությունը պահանջում էր «շրջադարձել» սովորական հասարակական հարաբերությունները. տերերն սպասարկում էին ստրուկներին, վիճակով նշանակվում էր հատուկ «արքա Սատուռ-

նախիում», որի կարգադրութիւնները պարտադիր էին տոնակատարութեան բոլոր մասնակիցների համար: Սակայն այդ բոլորը դրամայի թույլ սաղմերից այն կողմը շէր անցնում: Դրամատիկական խաղի ավելի բարդ ձևեր Հռոմ էին ընկնում միայն դրսից, հարեաններից փոխառման կարգով: Ըստ հռոմեական պատմաբանների ունեցած տեղեկութեան, առաջին անգամ 364 թ. կազմակերպվել են «բեմական խաղեր», իբրև համաճարակի ժամանակ «աստվածային ցասման վերաբերյալ ողորմութիւն հայցելու միջոց»: Էարուրիայից հրավիրվեցին պարողներ, որոնք միմական պարեր էին կատարում: Բեմական ներկայացումները դրանից ոչ շատ առաջ հաստատված «հռոմեական խաղերի» (սեպտեմբերին) կարգուկանոնների մեջ անցան: Հռոմեական բեմական խաղերի կարգուկանոնները մեջ անցան: Հռոմեական բեմական խաղերի կարգուկանոնները հաստատվում է և տերմինավրա էտրուսկական ազդեցութիւնը հորջորջվում էին էտրուսկերեն բանորեն. Հռոմում դերասանները հորջորջվում էին էտրուսկերեն ֆիսարիոններ (histriones) բառով: Բեմական խաղերի մի այլ տեսակ փոխ էր անվել Հռոմի հարավային հարեաններ՝ Կամպանիայի օսկերից: Այդ՝ առեյլանան է (Կամպանիայի Atella քաղաքի անունով): Առեյլանան՝ ոչ-մեծ, մի արարվածով դրամա է, մշտական ծաղրանկարային դիմակներով, հիշեցնում է հարավիտալիկական Ֆլիակների խաղը և իմպրովիզացիա է կատարում ըստ սյուժետային հենքի: Կարևորագույն դիմակները չորսն էին՝ որկրամուկ հիմարը — Մաքուսը (Makkus), սնապարծ ապուշը — Բուկոնս (Bucco, bucca — «այս»-ից), ծիծաղաշարժ ձերուլը — Պապուսը (Pappus) գիտնական սրիկան — շարանենգ սապատավոր Դոսսենուսը (Dossennus, dorsum — սապատ»-ից): Առեյլանան ֆուկլորային դրամա էր, խաղում էին սիրողներ, և ոչ թե պրոֆեսիոնալ դերասաններ, և նույնիսկ ավելի ուշ ժամանակ պահպանում էր կառնավալային ազատութիւն տարրեր՝ առանձին անձնավորութիւնների և հասարակական կարգերի վերաբերյալ:

Վերջապես, հռոմեական ֆուկլորի համար վկայագրված են և սովորական մանր ձևերը — առածներ, ասույթներ:

Հռոմեական, և ընդհանրապես իտալիկական, ֆուկլորային տեքստերի համար (աղոթքներ, հմայումներ) բնորոշ է դիմավորած խոսքը, հնչնակրկնութեան լայն կիրառմամբ, մանավանդ ակտիտերացիաներով, այսինքն՝ սկսող բառերի հնչնակրկնութեամբ: Օրինակ՝ *pastores pecuaque salva servassis* («պահպանիր անվնաս հովիվներին և անասուններին») — հողամասի հաջողակութեան մասին՝ հին աղոթքից): Սակայն կային և մշակված ոտանա-

վորային ձևեր: Հռոմեական ֆուլկլորային երգում հաճախ պատահում է ոտանավոր, որն իր շարժումով հիշեցնում է մեծասարային քառաչափը: Մինչև հունականի նմանող ստանավորի ձևերի մուծումը, հռոմեական առաջին պոետներն օգտվում էին յուրահատուկ և հին շափերով: Այդ շափը կոչվում էր սատուռնակյան՝ հնագույն Իտալիայի դիցարանական տիրակալ՝ Սատուռն աստծու անունով: Սատուռնական ոտանավորի տողը կազմված է երկու կիսատողից, յուրաքանչյուրում 3—4 բարձրացումով՝

Mällum dähünt Metelli Naevio poetae

(Մետելլիուսները քոթակ կտան պոետ Նեվիուսին):

Սատուռնական ոտանավորի տողի վարիանտները բազմապիսի են, և դրա տաղաչափական բնույթը դեռ չի հաջողվել սահմանել: Վիճում էին նույնիսկ այն մասին, արդյոք նա քվանտիտատիվ է՝ կառուցված երկար և կարճ վանկերի հերթագայություն վրա, թե շեշտական՝ հիմնված շեշտերի վրա. սակայն վերջինը շատ քիչ է հավանական: Վերանալով գրականությունից՝ այն շարունակվում էր կիրառվել պաշտամունքային տեքստերում, դերեզմանաբարերի արձանագրություններում: Այդպիսիք են, օրինակ, հռոմեական պատմության մեջ հռչակավոր Սկիպիոն տոհմի ներկայացուցիչների սարկովագների վրայի արձանագրություններից մի քանիսը:

Մինչև III դ. պոեզիան բանավոր բնույթ էր կրում, այն ինչ Հռոմում վաղուց դոյություն ուներ գիրը: Արձանագրություններ կան, որոնք սկիզբ են առնում VI կամ նույնիսկ VII դարից, V դ. կեսից Հռոմում գրավոր օրենսդրություն կար («տասներկու տախտակների օրենքներ»): Մագիստրատներն ու քրմերը դանազան գրանցումներ էին անում, կապված իրենց դորժունեության հետ: Ամենից շատ նշանակություն ունեին պոնտիֆիկալների քրմական կոլեգիայի նյութերը: Գերագույն քուրմն ամեն տարի տախտակ էր դնում, սրի վրա այնուհետև նշանակվում էին տարվա կարեվորագույն դեպքերը: Պոնտիֆիկների տարեգրությունները («աննալներ») հետագայում հիմք ծառայեցին հռոմեական պատմագրության համար: Այսպիսով, հռոմեացիների մեջ մշակվում էր գործնական պրոզայի ոճը: Հռոմի պետական կյանքը որոշ պայմաններ էր ստեղծում նաև հասարակական հատի դարգացման համար, այդ ճառերն արտասանվում էին՝ սենատում, ժողովրդական ժողովում, դատարանում: Հին հռոմեական պերճախոսության հատուկ տեսակ էր կազմում «հուղարկավորական դրվատումը»: Համբավավոր հռոմեացիների թաղումը կատարվում էր մեծ հան-

դիսավորութեամբ: Ննչեցյալի դեմքից դիմակ էր հանվում. այդպիսի դիմակները, նրանց կրողների անունների և պաշտոնների նշումով այնուհետև պահվում էին հոռմեացու տան գլխավոր դահլիճում (ատրիումում): Նախնիքները կարծես թե տանն էին մնում, սերունդների հետ միասին: Եվ երբ մահանում էր համբավվոր տոհմի ներկայացուցիչը, հուղարկավորության թափորին հանդես էին գալիս կառքերով «նախնիքների կերպարանքները», այսինքն՝ մարդիկ նախնիների դիմակով, այն զգեստով, որը հատկացված էր նախնիներին ըստ նրանց երբեմնի պաշտոնների և համապատասխան շքախմբով: Կերպարանավորում էին և իրեն ննչեցյալին: Թափորը, որը դառնում էր հոռմեական համայնքի պատմության մեջ տվյալ տոհմի ունեցած նշանակության մի ցույց, շարժվում էր դեպի ֆորում՝ հոռմեական հանրային կյանքի կենտրոնը: Այնտեղ ննչեցյալի մերձագուլյն տոհմակիցը (կամ պետության կողմից նշանակված որևէ մեկը) արտասանում էր «հուղարկավորական դրվատում», որի ժամանակ թվարկվում էին ինչպես ննչեցյալի, այնպես էլ նրա նախնիների արժանիքները: Տոհմի փառքը բարձրացնելու ձգտումը հաճախ հասցնում էր ֆալսիֆիկացիաների. հոռմեական գրողները գանգատվում են, որ պատմական տրագիգիան խեղաթյուրված է «հուղարկավորական դրվատումներով և կերպավորությունների վրա կեղծ մակագրություններով», ի փառս տանձին տոհմերի:

«Կերպավորության իրավունքը» միայն նորբիլիտետին էր պատկանում, այսինքն՝ այն անձնավորությունների սերունդին, որոնք բարձր պետական պաշտոններ են զբաղեցրած եղել: Եվ հասարակական ճառը և գործնական պրոզան առավելապես դարգանում էին արիստոկրատիայի շրջաններում, որից հավաքագրվում էին մագիստրատները, քրմերը, իրավագետները: Ժողովրդական ժողովք քվեարկում էր առաջարկները, չքննարկելով դրանք, և հասարակական ճառի հնարավորություններն աննշան մարդու համար շահազանց սահմանափակ էին: Նույնիսկ հետագայում, երբ Հոռմում սկսեց զարգանալ դեղարվեստական գրականությունը, դեռ երկար ժամանակ արիստոկրատիայի համար ավելի սագական էր համարվում պրոզան, քան թե պոեզիան:

«Պոեզիան հարզի շէր,— գրում էր հին ժամանակների մասին Մ դարի պահպանողական Կատոնը.— ով դրանով տարվում էր կամ դեպի խնջույքները հակումն էր երևան բերում, նրան անբան էին անվանում»:





րազմից հետո (218—201), որի հետևանքով Կարթագենի հզորութ-  
յունը կործանվեց, իսկ հռոմեացիք ստացան արևմտյան Միջեր-  
կրականի կղզիները և Իսպանիայի մի մասը: Ի դարի ընթացքում  
Հռոմը նվաճեց Մակեդոնիան և Եվրոպական Հունաստանը, ամրա-  
ցավ Փոքր Ասիայի արևմտյան ափերին, նվաճեց Կարթագենի  
մարզը («Աֆրիկան»), Պիրենեյան թերակղզին և «նախալպյան»  
Գալիան»:

Վիթխարի շափերով ստրուկների և հարստությունների ներհո-  
սումը, որոնք կուտակվում էին շնորհիվ հաջողակ պատերազմների  
և նվաճած երկրների շահագործման, արմատապես փոխեց Հռոմի  
էկոնոմիկան: Հռոմը ներգրավվեց միջերկրածովյան ապրան-  
քաշրջանառության մեջ: Ամենից խիստ փոփոխություններ կատար-  
վեցին Ի դարում: Ազատ կապիտալների առկայության և ստրուկ-  
ների էթանության պայմաններում արիստոկրատիան անցնում էր  
ստրկական աշխատանքի օգնությամբ խոշոր-կալվածատիրական  
տնտեսավարության, հավաքագնում էր հողեր և մշակում էր վիթ-  
խարի կալվածքներ («լատիֆունդիաներ»): Մյուս կողմից, հռոմեա-  
կան պետությունն ի վիճակ չէր իր տարեցտարի փոխվող ընտրովի  
մագիստրատների ոչ-բարձր ապարատի ուժերով շահագործել պրո-  
վինցիաների բնական հարստությունները և դիմում էր կապալա-  
ռուների օգնության: Դրանք աննշան ծաղում ունեցող ձեռներեց  
գործարարներ էին, որոնք վիթխարի գումարներ էին վաստակում.  
այդ գումարները նրանք առևտրական շրջանառության մեջ էին  
մտցնում և դրանով էլ վաշխառուական գործարքներ էին վարում,  
վարկավորելով նույնիսկ օտար պետություններին: Առևտրա-վաշ-  
խառուական կապիտալի ներկայացուցիչները, սենատական արիս-  
տոկրատիայից հետո, կազմում էին Հռոմի ցենզային երկրորդ  
«հռոմեական հեծյալների» դասը (բարձր գույքային ցենզ ունեցող  
քաղաքացիները ծառայում էին հեծելազորում): Հենց դրանք էլ  
պետությանը դրդում էին հետագա էքսպանսիաներին, այնինչ  
նոբիլիտետի շարքում կային ազդեցիկ խմբավորումներ, որոնք  
առաջարկում էին ընդհատել նվաճումները և Հռոմի տիրապետու-  
թյունների շուրջը ստեղծել անվանապես անկախ, բայց փաստորեն  
սենատին ենթակա պետությունների ցանց: Այդ խմբավորումը  
դիվավորում էր Սկիպիոնների ընտանիքը, որն զգալի դեր էր խա-  
ղացել Հռոմի կուլտուրական զարգացման գործում և, մասնավոր-  
ապես, հռոմեական գրականության զարգացման մեջ: Տիրող դա-  
սակարգի շարքերում առաջացավ երկու հոսանք: Նրանց միջև եղած

տարածաշնությունը վերաբերվում էր և ներքին քաղաքականության  
հարցերին: Սկիսվումների խմբավորումը կողմնակից էր իտալիկ-  
ների մանր սեփականատերերին արտոնություններ տալուն, քանի  
որ դրանց վրա արդեն սկսել էր կործանարար ազդեցություն ունե-  
նալ ստրկական աշխատանքի մրցումը: Մինչդեռ իտալիկական  
գյուղացիությունը հանդիսանում էր և արիստոկրատական ռեա-  
պուբլիկայի սոցիալական հենարանը և նրա հիմնական ռազմա-  
կան ուժը: Ստրկատիրական հասարակության հակասությունները,  
որոնք իր ժամանակին ոչնչացրին պոլիսային սիստեմը Հունաս-  
տանում, սկսեցին ակնառու կերպով զգացվել և Հռոմում:

Հինավուրց կյանքի խնայողական եղանակը փլվեց: Ստրկա-  
տիրական հասարակության մեջ հարստությունների կուտակման  
հետևանքը միշտ անարտադրողական սպառումն է լինում: Վաս-  
տակի հետևից ընկնելն ուղեկցվում էր ճոխության ծարավով, և  
օրենսդրական միջոցառումներով դրա արգելման փորձերը ռեալ  
արդյունքների չէին հանդում: Անհատական սեփականության աճը  
սասանում էր նահապետական ընտանիքը. մեծանում էր կանանց  
գույքային ինքնուրույնությունը: Հարկավոր է, սակայն, նկատի  
ունենալ, որ անհատի առանձնացումը դեռ նշանակալի չափերի չէր  
հասնում և հոռմեական պոլիսի սոցիալական կապերն ամուր էին:  
Նորբլիտետի ներփակվածությունը, քանի որ նա չէր ցանկանում  
իր միջավայրը «նոր մարդիկ» թողնել, նրա մեջ պահպանում էր  
կաստայի ոգի: Հռոմեական արիստոկրատն առաջվա պես իր  
կարծքն էր համարում ակտիվ մասնակցություն ցուցաբերել պե-  
տական կյանքում, հող տանել իր տոհմի փառքի մասին: Մյուս  
կողմից, արիստոկրատիան թույլ չէր տալիս առանձին գործիչների  
չափազանց առաջադաշում ի վնաս դասին ամբողջությամբ առած  
Առաջվա պես համբավավոր ընտանիքների շուրջը համախմբվում  
էին բազմաթիվ կախյալ մարդիկ՝ «կլիենտները», իսկ հոռմեական  
գյուղը մինչև II դ. կեսը տակալին շատ քիչ էր ենթարկվել սո-  
ցիալ-տնտեսական փոփոխության:

Թեկում կատարվեց նաև կուլտուրայի բնագավառում: Փոխ-  
ված հասարակական հարաբերությունները, ռեպուբլիկայի առա-  
ջին երկու դարերի կուլտուրական լճացումից հետո, իդեոլոգիա-  
կան նորոգման պահանջ առաջացրին: Առաջին խթանը ծառայեց  
Կամպանիայի նվաճումը. դրա հետևանքով հոռմեացիներն անմի-  
ջական շփման մեջ մտան հարավիտալիկական հույների հետ:  
Վրա է հասնում հոռմեական կուլտուրայի հեղինակագրի: Հունա-

կան իրենց զգացի խորությունն ու տեմպերն աճում էին այն շափով, որչափով Հոռոմի առաջ ծառանում էին քաղաքական և տնտեսական նոր խնդիրներ, որոնք արդեն չէին համատեղվում սովորական նորմաների հետ և պահանջում էին իրականության ավելի վերացական իմաստավորում:

Առաջին և երկրորդ Պունիկյան պատերազմներն այդ պրոցեսի պատմության ակնառու գագաթնակետերն էին, մի պրոցես, որն ընթանում էր ոչ առանց հիվանդագին դեպքերի և պահպանողականների կողմից ոչ առանց օպոզիցիայի: Այդ կուլտուրական պայքարն առանձնապես խիստ ձևեր ընդունեց երկրորդ Պունիկյան պատերազմից հետո, սոցիալական հակասությունների սրվածության ֆոնի վրա: Հելլենաֆիլ Սկիպիոններին այդ ժամանակ հակադրվում էր պահպանողական խմբավորման պարագլուխ, հոռմեական հնության երկրպագու՝ Կատոնը:

Հելլենականացումն ընդգրկել էր կյանքի ամենատարբեր կողմերը: Կենցաղի մեջ էր թափանցում հունական նյութական կուլտուրան, սովորույթները, հունական անունները. լայնանում էր հունական լեզվի հետ ծանոթությունը: III դ. վերջին Հոռոմում մեծ քանակությամբ հարավիտալիկական հույներ էին ապրում, շխտելով արդեն ստրուկների մասին, իսկ երկրորդ Պունիկյան պատերազմից հետո այդ հոսանքն էլ ավելի ուժեղացավ: Առանձնապես բնորոշ էր քաղաքի պլեբսի (պլեբեյների) լեզվի համար հունական ազդեցությունը: Պլավտի կատակերգությունները, գրված III և II դ. դ. սահմանազլխին, լեցուն են հունարեն բառերով: Հույն ստրուկ-դաստիարակը սովորական երևույթ էր դառնում արիստոկրատական միջավայրում: Հունական լեզվի և կուլտուրայի հետ ծանոթությունը II դարում հոռմեական ավազանու զրեթե դասակարգային շատկանիշն էր, և նույնիսկ նրա ամենապահպանողական ներկայացուցիչները ենթարկվում էին այդ ընդհանուր հոսանքին: Նշանակալի հելլենականացման ենթարկվեց կրոնը: Հունական դիցաբանության հետ հոռմեացիները վաղուց էին ծանոթ, շնորհիվ էտրուսկների արվեստի և առաջվա պաշտամունքային փոխառումների: III դ. մոտ աստվածների մասին անտրոպոմորֆիկ պատկերացումներն ընդգրկում են ամբողջ հոռմեական կրոնը, հավասարության նշան է հաստատվում հունական Օլիմպոսի դեմքերի և հոռմեական աստվածությունների միջև: Հոռմեական աստվածների համար կառուցվում են տաճարներ և կանգնեցվում են արձաններ: Հոռոմում կազմակերպվում են սրբազան արարողու-

Յուններ հունական օրինակով՝ թափորներով, խմբերգային օրհներգներով և բեմական ներկայացումներով: Այդ հող է պատրաստում հունական պաշտամունքում ամրացած գրական ձևերը տեղափոխելու համար: Էնհասի մասին ասքը, որը դիցաբանական կապ էր հաստատում հունական աշխարհի հետ, պաշտոնական ընդունելություն է գտնում: Հին հռոմեական կրոնը ֆորմալիստական էր՝ նա միայն պահանջում էր ծեսերի մանրակրկիտ կատարում. հելլենականացումը, իր ուժի մեջ թողնելով հին ծիսական սիստեմը, աստվածների մասին պատկերացումների մեջ մտցնում էր բարոյախոսական մոմենտ: Այդպիսի ֆորմալիզմով էլ աշքի էր ընկնում հին հռոմեական իրավունքը. այն ընդունում էր միայն մի քանի գործարքներ, բոլորապատված ծանրակշիռ ծիսակատարություններ, և գործողության իրավաբանական ուժը կախումն ուներ բացառապես որոշ ծեսեր կատարելուց և համապատասխան ֆորմուլաներ արտասանելուց: Այդ ծեսերը կատարելու համար՝ գործարքը կատարելիս կամ դատական քննության ժամանակ՝ կողմերի անձնական ներկայությունը պարտադիր էր: Գույքային շրջանառության բարդացումով այդ իրավունքը սակավ կարող էր գործադրվել, ընդ որում դա իրավաբանական պաշտպանություն էր ցույց տալիս միայն հռոմեական քաղաքացիներին («քաղաքացիական իրավունք» — *ius civile*): Օտարերկրացիների հետ հարաբերությունների համար հունական գաղափարների հիման վրա սկսեց մշակվել նոր իրավունք, որը գործի էությունը և պարտավորությունների կատարման բարեխղճությունը ավելի էր նշանակություն տալիս, քան խոսքերին ու ծեսներին («ժողովուրդների իրավունք» — *ius gentium*): Հռոմեական պետության մեջ կենտրոնը և՛ տնտեսապես և՛ իդեոլոգիապես ավելի քիչ էր զարգացած, քան ծայրամասը, և քննվող ժամանակաշրջանի ընթացքում իրավունքային երկու սիստեմներն էլ միասին գոյություն ունեին՝ հինը քաղաքացիների համար, նորն այնտեղ, ուր եթե կողմերից գոնե մեկը օտարերկրացի էր: Իրավունքի բնագավառում, սակայն, հռոմեացիները նշանակալի օրիգինալություն պահպանեցին և, ելնելով հույների սկզբունքներից, նրանց համար ինքնուրույն իրավաբանական արտահայտություն ստեղծեցին: Անտիկ իրավագիտությունը ոչ թե հույների, այլ հռոմեացիների ստեղծագործությունն է:

Հունական գաղափարների կարևորագույն հաղորդիչն այդ ժամանակ գրահաճութունն էր:

Հռոմեական գրականության նախակարապետը՝ IV դ. վերջի և

III դ. սկզբի ականավորագույն պետական գործիչ, համարձակ ռեֆորմատոր Ապիուս Կլավդիուսն էր: Լինելով տոհմիկ պատրիկ և պահպանողականության ու պատրիկական արտոնությունների դեմ վճռական պայքարող, որը կանգ չէր առնում գրեթե ռեյուցիոն բնույթի միջոցառումների առաջ՝ Ապիուս Կլավդիուսն առաջինն էր Հռոմում, որ գնահատեց գրականության նշանակությունն իբրև իդեոլոգիական ուժ և հանդես եկավ որպես գրող: Հռոմի պատմության մեջ հռչակավոր նրա ճառը, ուղղված Պլուրոս Թափափոսի հետ հաշտություն կնքելու դեմ (279 թ.), հրատարակվեց իբրև քաղաքական բրոշյուր: Այդ պետական գործիչի համար է՛լ առավել նշանակալից է այն, որ նա կազմում է «Մենտենցների», աֆորիզմների ժողովածու սատուռնական ոտանավորներով, օգտագործելով հունական դնոմական գրականությունը: «Մենտենցներից» պահպանվել է միայն երեք աֆորիզմ — դրանցից մեկը մտել է նոր Եվրոպայի ժողովուրդների առածների մեջ՝ «յուրաքանչյուրն իր բաղդի գարբինն է»: Ապիուս Կլավդիուսի բանաստեղծական գործունեությունն իր հետնորդները շունեցավ, բայց նրա օրինակը նախանշում էր, որ հունական երկերի մշակույթն այն ուղին է, որով կրննթանա ծագող հռոմեական գրականությունը:

Հռոմեական առաջին պոետները սոցիալական ցածր դիրք ունեցող մարդիկ էին, սովորաբար նույնիսկ հռոմեական քաղաքացիներ չէին, այլ իտալիկներ կամ ազատագրված ստրուկներ էին: Նրանք հունական օրինակները վերարտադրում էին իբրև Թարգմանություններ և փոխադրություններ կամ ինքնուրույն երկեր՝ հունական ոճով: Հունական թեմատիկան երկար ժամանակ գերիշխում էր հռոմեականի վրա: Բայց, չնայած ամբողջ արտաքին նմանողությունը, հունական գրականության շատ առանձնահատկություններ կորչում էին, երբ փոխադրվում էին այլ հասարակական միջավայր, և հունական ժանրերն այնտեղ նշանակալի փոփոխությունների էին ենթարկվում: Հենց սկզբից հռոմեական «նմանողություն» մեջ նկատելի են փոխադրության ու ընտրության մոմենտները: Հունական գրականության բոլոր տեսակները չէ, որ կարող էին հարմարվել III դ. Հռոմի իդեոլոգիական պահանջներին և հռոմեական հասարակության կուլտուրական մակարդակին: Այդ նպատակի համար ամենից քիչ պիտանի էին նորածե հելլենիստական հոսանքները, ալեքսանդրիական պոեզիան՝ նրա «գիտնական» պոետներով, էլիգիաներով, էպիգրամներով, իդիլլիաներով: Հոմերոսի ստեղծագործությունները կողմնորոշվում էին դեպի հին ժանրերը,

զրոնք բնորոշ էին պոլիտային ժամանակաշրջանի համար՝ դեպի էպոսը, ողբերգությունը և կատակերգությունը: Այս երեք ժանրերի Հոտմ մտնելուց հետո է, որ ըստ էության սկսվում է հոտմեական դրահանութայան պատմությունը:

III—II դ. դ. գրահանությունից իբրև ամբողջական երկեր, եթև հաշվի շաննեք կատունի «Երկրագործութայան մասին» դյուղատնտեսական տրակտատը, պահպանվել են միայն Պլավտուտի և Տերենտիուսի կատակերգությունները: Հոտմեական գրահանութայան ծաղկումը վերաբերվում է նրա դարգացման արդեն հաջորդ ժամանակաշրջաններին, և ուշ անտիկ ժամանակը, որի հետաքրքրությունը որոշում է մեզ հասած հուշարձանների կազմը, մեծ ուշադրութայն չէր դարձնում «արխաիկ» գրողներին: Հոտմեական Ֆիլոլոգների սերը դեպի հինավուրց լեզուն, ճիշտ է, որ պահպանել է հին գրահանութայան բավականաչափ մեծ քանակությամբ Ֆրագմենտներ, բայց դրանք միշտ չէ, որ բավարար չափով հստակ պատկերացումներ են տալիս գեղարվեստական ամբողջութայն մասին: Հոտմեական վաղ պոեզիայի այնպիսի նշանակալի ճյուղ, ինչպիսին ողբերգությունն է, մեզ համար միանգամայն մոռ է մնում:

## 2. ԱՌԱՋԻՆ ՊՈԵՏՆԵՐԸ

Մեր թ. ա. 240 թ., առաջին Պոնիկյան պատերազմը վերջանալուց հետո, առանձին հանդիսավորությամբ կատարվեց «հոտմեական խաղերի» տոնը: Այդ տոնին հրավիրվել էր նույնիսկ Հոտմի սիցիլիական դաշնակից, Սիրակուզայի տիրան Հիերոնը: Այդ տոնակատարութայն բեմական խաղերի ծեսի մեջ առաջին անգամ մտցվել էին հունական օրինակի դրամաներ, և լատինական գամ մտցվել էին հունական բեմադրությունը հանձնարարվել էր ինն լեզվով արդպիսի դրամայի բեմադրությունը հանձնարարվել էր Լիվիուս Անդրոնիկին (վախճանվել է 204 թ.):

Հույն գերի, Լիվիուսների պլեբեյական ընտանիքի ազատագրված ստրուկ, Լիվիուս Անդրոնիկն ուսուցիչ էր: Հույների մատախասկզբնական ուսուցումը կառուցվում էր բացատրական ընթերցանութայն վրա, և առաջին տեքստը, որին դիմում էր սովորողը, հոմերոսյան էպոսն էր: Լիվիուս Անդրոնիկն այդ մեթոդը փոխադրում է Հոտմ և համապատասխան լատիններեն տեքստ է ստեղծում՝ նա «Ողիսականը» թարգմանելով լատիներեն: Թե ինչով էր թելադրված «Ողիսականի» և ոչ «Իլիականի» ընտրությունը, կարելի

է միայն կռահել: Թարգմանիչը կարող էր առաջնորդել ինչպես քարոյախոսական-մանկավարժական նկատառումներով, այնպես էլ այն հանգամանքով, որ Ողիսևսի դեմքը և նրա թափառումները մեկուսացած Սիցիլիայում և Իտալիայում, հոռմեացիների համար տեղական հետաքրքրություն էին ներկայացնում: Լիվիուսի «Լատիներեն Ողիսական»-ը երկու դար շարունակ մնում էր որպես Հռոմի դպրոցական գիրք, բայց այդ, դրա հետ միասին, հոռմեական դրականության առաջին հուշարձանն էր: Դրա նշանակությունը լիսպես արժեքավորելու համար, պետք է հաշվի առնել, որ հոռմեական գրականությանն անծանոթ էր գեղարվեստական թարգմանությունը: Լիվիուսի աշխատությունը նոր և անօրինակ էր. եվրոպական գրականության մեջ այդ առաջին գեղարվեստական թարգմանությունն էր: Թարգմանության սկզբունքը Լիվիուսը կատարեց ինքնուրույնորեն: Ինչպես ցույց են տալիս ֆրագմենտները, Լիվիուսն իրեն թույլ էր տվել պարզեցնել բնագիրը, վերապատմել, քացատրել, կերպարները փոփոխել: Հոռմեական աստվածների անունները ձևափոխվում են հոռմեական եղանակով: Ազատ թարգմանության այդ սկզբունքն ընկալեցին և հետագայի հոռմեական թարգմանիչները: Նրանց խնդիրն էր ոչ թե օտար հուշարձանի վերարտադրությունն իր բոլոր պատմական առանձնահատկություններով, այլ դրա հարմարեցումը՝ Հռոմի կուլտուրական պահանջներին, սեփական գրականության և գրական լեզվի հարստացումը օտար նյութի օգնությամբ: Այդպիսի թարգմանությունն արժեքավորվում էր որպես ինքնուրույն գրական ստեղծագործություն: Լիվիուսը շհեռեց բնագրի և ոտանավորի ձևին: «Ողիսականը» նա թարգմանեց սատուռնական ոտանավորով, այդպիսով, հարելով հոռմեական պոետիկ տրադիցիային: Սատուռնական տողը կարճ է հեկզամետրից, և բնագրի շարահյուսա-ոլիթմական շարժումը Լիվիուսի մոտ միանգամայն փոփոխված է:

Սկսած 240 թվից Լիվիուս Անդրոնիկն աշխատում է հոռմեական բեմի համար, մշակելով հոռմեական ողբերգություններն ու կատակերգությունները: Ողբերգությունները հոռմեական դիցաբանական թեմատիկա ունենին: Լիվիուսն առանձնապես հաճույքով սյուժեներն ընտրում էր տրոյական ցիկլից, որը դիցարանորեն կապված էր Հռոմի հետ: Իր ողբերգությունների հիմքի համար նա վերցնում էր ատտիկական մեծ դրամատուրգների երկերը ևս (օրինակ՝ Սոֆոկլեսի «Այաքսը»), ինչպես և ավելի ուշ պիեաները: Հոռմեական դրաման, ինչպես և հոռմեականը, միշտ կազմվում է



թիւում դտնվում էին այն Մետեղիւումները, որոնք, ըստ ավան-  
 դույթյան, պոետին պատասխանել էին սատուունական բա-  
 նաստղով: Հոտմեական պայմանների համար Անվիուտի աղա-  
 ստարանութիւնը շափազանց համարձակ էր և շատովատովեց:  
 Նեմիուտին անարդաւնքի սյունին դամեցին և վտարեցին Հոտմից,  
 իսկ հետագայի կատակերպու պոետները խուսափում էին  
 արդիական քաղաքական հարձակումներից: Մեծ շափով տարած-  
 վեց մի այլ եղանակ, որը գործադրում էր Նեմիուտը հունական  
 կատակերգութիւնները մշակելիս: Այդ կոնաամինացիան էր, այն  
 է՝ թարգմանվող պիեսի մեջ հետաքրքրական տեսարաններ և ժո-  
 տիվներ մտցնելն այլ պիեսներից: Հոտմեական հասարակութիւնն  
 ավելի ուժեղ զվարճալի էֆեկտներ էր պահանջում, քան հունակա-  
 նը: Ատտիկական պիեսները բավականաչափ ծիծաղաշարժ չէին  
 թվում և կարելի էր զգացվում ուժեղացնել դավեշտականութիւնը:  
 Այդ նպատակին էլ ծառայում էր կոնաամինացիան: Այդպիսի եղա-  
 նակի հնարավորութիւնը պայմանավորված էր հունական կենցա-  
 ղային կատակերգութիւնի սյուժեների ծիակերպութիւնը և դիմակ-  
 ների մշտականութիւնը:

Իբրև ողբերգու պոետ Նեմիուտը չէր սահմանափակվում հու-  
 նական դրամաների ձեափոխութիւնը: Նա հոտմեական սյուժեով,  
 ինքնուրույն ողբերգութիւններ էր կազմում: Այդ ողբերգութիւն-  
 ները հոտմեացիները «պրետեքստատ» էին անվանում (fabula  
 praetextata). գործող անձինք զգեստավորված էին «պրետեքստ»-ով  
 (praetexta)՝ հոտմեական մագիստրատների և քրմերի ծիրանի  
 երկզով պարեգատով: Ինչպես մենք արդեն մասնանշել ենք, հոտ-  
 մեական ավանդութիւնը միայն Ռոմուլոսն էր իրենից հունական  
 առասպելի կերպարներին նմանվող դեմք ներկայացնում: Հոտմեա-  
 կան ասքերի բնույթին համապատասխան «պրետեքստատները»  
 պրվում էին պատմական սյուժեի հիման վրա, հաճախ նյութ քա-  
 ղելով ժամանակակից պատմութիւնից: Արդեն Նեմիուտի սյուժե-  
 ների մեջ մենք գտնում ենք Ռոմուլոսի մասին ասքին զոգրնթաց,  
 նրա ժամանակակից Կլավդիուս Մարցելիուսի գալլերի հանդես  
 տարած հաղթանակը: Սակայն Նեմիուտի և հետագայի դրամատուրգ-  
 ների ստեղծագործութիւնի մեջ «պրետեքստատները» շատ ավելի  
 համեստ տեղ են զբաղում, քան հունական դիցաբանական սյու-  
 ժեով ողբերգութիւնները: Հոտմեական դեմքերն ամենից շատ պի-  
 տանի էին ռազմա-պատմական թեմատիկայի համար: «Պրե-  
 տեքստատները» բեմադրվում էին առավելագույն պատահական խա-

ղերի ժամանակ, որոնք կազմակերպվում էին մասնավոր ինքնա-  
տիվաշով հաղթական երթերի կամ հոռմեական զորավարների հու-  
յարկավորութան ժամանակ:

Այն, ինչ որ վատ հաջողվեց ողբերգության համար, ավելի  
շատ կենսունակ դուրս եկավ էպոսի բնագավառում: Նեվիուսի  
ինքնուրույն նվաճումը նրա ստեղծած «Պոնիկյան պատերազմ»  
պատմական էպոսն էր: Թեման մոտ անցյալի պատմական դեպքը՝  
Պոնիկյան պատերազմն էր, բայց պատմական մասին նեվիուսը  
նախադրել է դիցաբանական մաս, աստվածների մասնակցու-  
թյամբ՝ հունական պոեմների օրինակով: Նեվիուսն սկսում էր Տրո-  
յայի կործանումից, պատմում էր Տրոյայից հեռացած էնեասի  
Յափառումների մասին, փոթորկի մասին, որ նրա ղեմ էր ուղղել  
տրոյացիներին թշնամարար տրամադրված Յոնոնան, էնեասի  
Խալքիա ժամանելու մասին: Երկրային պլանի հետ հերթագայում  
էր օլիմպականը. էնեասի մայրը, Վեներան, իր որդուն պաշտպա-  
նում էր Յուպիտերի առաջ: Նեվիուսի այդ պատմածը, որը հիշեց-  
նում է «Ողիսականի» որոշ էպիզոդները, հետագայում օգտագոր-  
ծեց Վերգիլիոսը «էնեականի» համար: Շարադրվում էր նույնպես  
Ռոմուլոսի մասին ասքը. նեվիուսը նրան պատկերացնում էր էնե-  
ասի թոռ: Նեվիուսը հիշատակում է Կարթագենի հիմնադիր Դի-  
դոնա թագուհու մասին: Վերգիլիոսի «էնեականում» էնեասը Յա-  
փառումների ժամանակ ընկնում է կառուցվող Կարթագենը, և Դի-  
դոնան սիրահարվում է էնեասի վրա: Հայտնի չէ, կա՞ր արդյոք  
այդպիսի սյուժետային համակցում Նեվիուսի մոտ, եթե այդ այդպես  
լիներ, ապա Դիդոնայի մերժված սերը դիցաբանական հիմնավո-  
րում կծառայեր Հոռմի ու Կարթագենի թշնամիների և Պոնիկյան այն  
պատերազմի համար, որը ընդարձակորեն շարադրվում էր պոեմի  
երկրորդ մասում: Նեվիուսի էպոսը, հետագայի հոռմեական հրա-  
տարակիչների կողմից յոթ գրքի բաժանված, գրվել է, ինչպես և  
Լիվիուս Անդրոնիկի «Ատրիններեն Ողիսականը» սատուունական  
ստանավորով:

### 3. Պ Լ Ա Վ Տ Ո Ւ Ս

Հոռմում թատրոնն արագորեն արժատավորվում էր: Մոտավո-  
րապես 220 թվին, բացի հին «հոռմեական խաղերից», հաստատ-  
վեցին «պլեբեյական խաղեր», որոնք շուտով հարստացան թատե-  
րական ներկայացումներով. 212 թվից դրանց միացան «Ապուլոն-

յան խաղերը», իսկ 194 թվից աստվածները մեծ տիրամոր պատվին նվիրված խաղերը: Մեծացած պահանջը Հոռոմ էր գրավում դրամատիկական և զերասանական տաղանդներ, դրամալի սուսնձին ճշուղերում ծնունդ առավ մասնագիտացում: Այն պոետների թվին, որոնք իրենց սահմանափակում էին կատակերգական ժանրով, պատկանում է և հոռոմեական առաջին հեղինակ Պլավտուսը (վախճանվել է մոտավորապես 184 թ.), որից մեզ հասել են սրողչական երկեր:

Տիտուս Մաքուսը (կամ, ինչպես նրան անվանում էին ավելի ուշ ժամանակ՝ Մալցիոսը), Պլավտուս («տափակատոք») մականունով, ծնվել էր Լացիումից ղեպի հյուսիս-արևելք գոնվոզ՝ Ումբրիումի մարզում: Նրա մասին կենսագրական տեղեկություններն աղքատ են և քիչ արժանահավատ: Նա պոռֆեսիոնալ բեմի գործիչ էր, և հնարավոր է Մաքուս անունը, որ նշում էր առելլանայի դիմակներին մեկը, նույնպես իրենից մականուն էր ներկայացնում: Պլավտուսի գրական գործունեության ժամանակը վերաբերվում է մեր թ. ա. III դ. վերջին և II դ. սկզբին: Նրա կատակերգությունների բեմադրության երկու տարեթիվ են միայն ճշգրիտ հայտնի՝ 200 և 191 թ. թ.: Լինելով բեղմնավոր և հոռոմեական հասարակության կողմից ժողովրդականություն վայելող՝ դրամատուրգ, Պլավտուսը թողել է կատակերգությունների մեծ քանակ, դրան հետագայում խառնվել են նրան չպատկանող շատ պիեսներ, որոնք բեմադրվել են նրա անունով: Մեր թ. ա. I դարի հոռոմեական դիմակային Վառոնը դրանցից ջոկել է 21 կատակերգություն, իրը՝ Պլավտուսի անվիճելի ժառանգություն: Այդ կատակերգությունները մեզ են հասել՝ 20 ամբողջական երկ (առանձին լակուններով) և մեկ պիես էլ Փրագմենտային վիճակում: Պլավտուսն աշխատում էր «Պալլիատայի»՝ հունական սյուժեով կատակերգության՝ բնագավառում, հոռոմեական բեմի համար ձեռփոխելով հունական պիեսները, գլխավորապես «նոր» կատակերգության վարպետներ՝ Մենանդրոսի, Փիլեմոնի և Դիփիլոսի երկերը: Ուստի Պլավտուսի կատակերգությունները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հոռոմեական դրականության տեսակետից, դրանք բնորոշում են մեր տեղեկությունները և հենց նոր-ատտիկական կատակերգության մասին:

Վերարտադրելով «նոր» կատակերգության սովորական սյուժեները և դիմակները, Պլավտուսի պիեսները բազմազան են ըստ կառուցվածքի և ըստ տոնի: Այդ կախումն ունի ինչպես հունական

օրիգինալների տարրերու վայելանքից, որոնք արտացոլում են իրենց հեղինակների անհատական առանձնահատկությունները, այնպես էլ համեմատական պոետի կողմից մուծած փոփոխությունների բնույթից: Պլավտուսը պիեսները պետք է հարմարեցնեն Հռոմի հանրային խաղերի հաճախորդների աշխարհայացքին, կուլտուրական և էսթետիկական մակարդակին: Հռոմի քաղաքային պլեբսը, որը մերվում էր տնտեսական կյանքի նոր ձևերի հետ, բայց շատ կոպտերով տակավին պահպանողական էր, պահանջկոտ չէր իր վարձու վայելանքի մեջ և հաճախ բռնաբարձարական մրցումները պերագասում էր դերասանների խաղից, — Պլավտուսի հանդիսատեսների հիմնական մասսան էր: Հունական բնագրերի վերամշակման ուղղությունը նրա մոտ այն էր, որ, ելնելով «նոր» կատակերգությունից, հռոմեական դրամատուրգը թուլացնում է նրա լուրջ կողմերը, մտցնում է բուֆոնադալի և ֆարսի տարրեր, իր պիեսները մոտեցնում է կատակերգական խաղի ավելի պրիմիտիվ «ստորին» ձևերին, — բայց այդ մոտեցման աստիճանը հույժ տարրեր է լինում:

Ձևերի և ոճերի բաղմազանությունն անմիջապես աչքի է ընկնում Պլավտուսի նախերգանքներում: Անմիջականորեն հասարակության այդ դիմումները տարրեր նպատակների են ծառայում՝ կարճապես, հարկ եղած դեպքում, հաղորդում են պիեսի սյուժետային նախադրանք, հարկ եղած դեպքում, հաղորդում ու հեղինակի անունը և գրեթե խաղը խնդիր են պարունակում բարեհաճության և ուղադրության մասին: Որոշ նախերգանքներ լուրջ տոն են պահանջում: «Պարան» կատակերգության նախերգանքում, օրինակ, զարգանում են այնպիսի մտքեր, որոնք համապատասխանում են հռոմեական մասսաների կրոնական և բարոյախոսական պատկերացումների մեջ առաջացած շրջադարձին և ուղղված են կրոնական հինավուրց ֆորմալիզմի դեմ: Այլ կատակերգություններում մենք գտնում ենք ծաղրածուական ախալի նախերգանքներ, կատարողը (յուրակերպ «կոնֆերանսի») հասարակության հետ զվարճախոսություններ է անում, գովաբանում է պիեսը, սյուժեի շարադրությունը համեմտում է սրախոսություններով՝ հիմնված բեմական իլուզիայի անընդհատ խախտման վրա: Այդ կողմից Պլավտուսի նախերգանքները ձայնակցում են հին-ատտիկական կատակերգության «պարաբասանքի» հետ:

Նշանակալի քանակությամբ բուֆոնային մոմենտներով պիեսի օրինակ կարող է ծառայել 191 թ. բեմադրված «Պանդրուսը»

(«խաբերա-ստրուկը»): Այդ կատակերգութիւնը պատկանում է Պլավտուսի սեպերտուարում հարուստ կերպով ներկայացված՝ ինտորիգի տիպի կատակերգութիւններին: Սյուժեն՝ աղջկա ազատումն է կավատի ճանկերից. ինտորիգը վարում է գլխավոր հերոսը՝ հունա-լատինական «արտահայտիչ» Պսեւդոլուս «անունով ստրուկը» (Pseudolus, pseudos — հունարեն՝ «սուտ», dolus — լատիներեն՝ «խորամանկ»): Սակայն Պսեւդոլուսը հասարակ խորամանկ և խաբերա չէ. նա իր ստերի «բանաստեղծը», հնարումների հանձարն է: Պլավտուսը մեծ սիրով կերտում և շատ կատակերգութիւնների կենտրոնական դեմք է դարձնում ճարպիկ ստրուկի կերպարը («Բաքոսականներ», «Էպիդիկ», «Ուրվական» և այլն), բայց այդ կերպարն ամենից լիակատար մարմնացում է ստանում «Պսեւդոլուսում»:

Գործողութիւնը կատարվում է Աթենքում և ծավալվում է երկու տան առաջ. մեկը պատկանում է ունևոր արքեպի Սիմոնին, մյուսը՝ կավատ Բալլիոնին: Սիմոնի որդին, Կալիդորը, նամակ է ստացել իր ընկերուհի Ֆենիկիեից՝ կավատի ստրուկուհուց՝ հաղորդումով, որ ինքը վաճանկում է մակեդոնացի զինվորին: Երիտասարդը հնարավորութիւն չունի 20 մին գումար գանելու, մի գումար, որով վաճառվում է Ֆենիկիեն: Այնինչ զինվորն արդեն 15 մին կանխավճար է թողել. հաջորդ օրից ոչ ուշ սպասվում է նրա սուրհանդակը մնացած դրամով և զինվորի կնիքով իբրև առաքող անձնավորութիւն հաստատում: Այդ ամենը մենք իմանում ենք Կալիդորի դիալոգից նրա ստրուկ Պսեւդոլուսի հետ: Առաջին տեսարանը, որը պարունակում է էքսպոզիցիան, նկարագրում է այդ երկու դեմքերը. լալկան, անձարակ, հուսահատութիւնից արագորեն հուշի անցնող և նույնքան արագութեամբ նախկին հուսահատութիւն մեջ ընկնող Կալիդորն իրենից մի խաղալիք է ներկայացնում՝ հանդարտ, ինքնավստահ, հեզնող Պսեւդոլուսի ձեռքին: Տիրոջ որդուց դուրս կորզելով նրա գաղտնիքը և կուշտ ծիծաղելով նրա անձարակ սիրահարվածութիւնն լքա, Պսեւդոլուսը Կալիդորին խոստանում է իր օժանդակութիւնը: Ծաղրանմանեցնելով հոռմեական իրավական ձեւերը, նա հանդիսավոր խոստում է տալիս մի օրվա ընթացքում գտնել անհրաժեշտ քսան մինը: Այդ դեմքի է, Պսեւդոլուսը ցանկանում է գործել բացէիբաց և նախազգուշացնել պատրաստվող ինտորիգում իր ճարպկութիւնը, հնարավոր գոհերի մասին. նա «հրաման» է տալիս՝ «Այսօր ինձնից վախեցե՛ք և ինձ մի՛ հավատացե՛ք»:

Կիալոզին հետևում է մի մեծ ռեչիտատիվ պարտիա երաժշտության ուղեկցութեամբ: Կատակերգութեան «Ճիվաղ» կավատ Բալլիոնը, մտրակը թափահարելով, դիտում է իր տան կենդանի ինչինսարը՝ ստրուկներին՝ և զուգված հետերաներին: Բալլիոնը, որի անունն այնուհետև դարձավ հասարակ անուն և նշանակում էր նողկալի մարդ, — ստորութեան և անասնական կոպտութեան մարմնացումն է: Այդ օրը նա տոնում է իր ծնունդը և հետերաներին հրամայում է, որպեսզի նրանց երկրպագուները իրեն համար մի ամբողջ տարվա պաշար բերեն, սպառնալով հակառակ պարագայում ամեն կերպ շարշարել նրանց:

Գործողութունն առաջ չի շարժվում և երկրորդ տեսարանում: Կալիգորի փորձերը՝ զարեթցնելու Բալլիոնի խիղճը, վերջինիս կողմից միայն ծաղրի են արժանանում: Կավատի վրա որևէ ազդեցություն չի ունենում և հանրային «անարգանքը», որին ենթարկում են նրան, ըստ խաչիկական սովորութի, Կալիգորն ու Պսեվդոլուսը: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Պլավտուսն ազատորեն իրար է խառնում հռոմեական և հունական կենցաղի գծերը: Այդ տեսարանը որոշ չափով կրկնում է առաջինը և երկրորդ անգամ տալիս է էքզպոզիցիա, որը առանձին մանրամասնութուններում տարբերվում է առաջին տեսարանի էքզպոզիցիայից:

Պսեվդոլուսը մտնում է «զորավարի» դերի մեջ և պատրաստվում է գրոհել Բալլիոնի «բաղաքը»: Նա Կալիգորին հանձնարարում է գտնել մի որևէ ճարպիկ օգնական: Հայտնի չէ թե ինչի համար է այդ օգնականը, քանի որ Պսեվդոլուսը, բեմում միայնակ մնալով, ստիպված է խոստովանել, որ ինքը որևէ ծրագիր չունի:

Գրությունը բարդանում է նրանով, որ Սիմոնին արդեն չի կարելի խաբել՝ նա լսել է որդու մտազրույցունների մասին և գշուշանում է Պսեվդոլուսի արարքներից: Ինչպես հաճախ լինում է «նոր» կատակերգության մեջ, հանդիսատեսի առաջ երևան են գալիս նրկու «ձեռոնի»՝ խտաբարո Սիմոնը և ազատամիտ Կալիֆոնը: Որը Սիմոնին հիշեցնում է նրա պատանեկության հրապույրները, որդին հորն է պցել: Պսեվդոլուսի գերազանցությունն իրեն շրջապատողներից աչս տեսարանում դրսևորվում է առանձնակի ուժով: Իրեն ցուցադրելով իբրև հավատարիմ և ազնիվ ստրուկ, նա հանդարտորեն ամեն ինչ խոստովանվում է և տիրոջը խորհուրդ է տալիս դպաստ լինել, բայց հավատացնում է, որ Սիմոնն անձնա-

պէս ինքը, և ոչ թէ մի ուրիշը, իրեն կտա այն դրամը, որի մասին խոսք կա: Է՛լ ավելի շատ լալիքշանալով, նա իբ վրա է վերցնում նախապէս խորամանկորեն խաբել կալաւաին և նրանից փախցնել Կալիֆորնի ընկերուհուն: Այլշած Միմոնը խոստանում է այդպիսի ճարտկութեան համար նրան պարգևատրել 20 մին, իսկ Կալիֆոնը հրձիկով Պսելդոլուսով, հետաձգում է իր նախատեսնված մեկնումը, որպեսզի ներկա գտնվի այդ գործի լուծմանը:

Գրգռելով հանդիսատեսների հետաքրքրութունը, դրամատուրգը նրանց հետ իր խաղը հասցնում է այն աստիճանի, որ ստանց սրել է երկիմաստութեան ակնարկում է պոռաջադրված խնդրի անլուծելի լինելը: Պսելդոլուսը դիմում է հանդիսականներին՝ «դուք կասկածում եք, որ այդպիսի սխրագործութուններ ևս խոստանում եմ միայն նրա համար, որպեսզի ձեզ զվարճացնեմ, մինչև պիեսը խաղացվի... Ես դեռ չգիտեմ, թէ ինչպէս եմ կատարելու իմ խոստումը, բայց այդ կատարվելու է»: Պսելդոլուսը թողնում է բեմն այն հաշվով, որպեսզի ընդմիջմանը «ուզմական կարգավորման բերի իր հնարամտութունները»:

Ընդմիջումից հետո՝ Պսելդոլուսի հուզումնալի-հանդիսավոր արիան է: Պլանը պատրաստ է: Այդպիսի դեպքերում Պլավտուսը սիրում է ստրուկների բերանը դնել բարձր ողբերգական ոճ ունեցող պարողի: Արիան լեցուն է «ուզմական» փոխաբերութուններով, արխաիկ բառերով: Պսելդոլուսը ճառում է իր «տոհմի», «համաքաղաքացիների», իրեն սպասող «փառքի» մասին: Բայց ո՞րն է պլանը. մենք դեռ չգիտենք... Բեմում հանդես է գալիս նոր դեմք՝ մակեդոնացի զինվորի գլուխահակ Հարպագը («ավաղակ»), և կարիք է զգացվում մտածած «պլանը» փոխել: Պսելդոլուսն իր դերի գագաթնակետին է: Նրա համար մի առանձին դրժվարութուն չէ հիմաքացնել ծանրամիտ սուրհանդակին, իրեն ներկայացնելով իբրև կավատի ստրուկը: Նրա խելքն այնքան է կտրում, որ դրամն անձանոթ մարդուն չի հանձնում, բայց զինվորի կնիքը տալիս է: Տեսարանը աւրված է այնպիսի հումորով, որ հանդիսատեսը, բնտեղացած լինելով «պատահմունքի» դերին, հաճուքով ներում է խոստացած «պլանի» փոխարինումը պատահական հանդիպման ճարպիկ օգտագործութեամբ: Պսելդոլուսն իր կողմից պատրաստ է «պարծենկոտի» դեր խաղալ, հավատացնել, որ նա իրօք «պլան» ունեւր, և «փիլիսոփայել» Պատահմունքի աստվածուհու հզորութեան վերաբերյալ: Վերամբարձ-պարողիկ ոճով

նա Կալիփորնին հաղորդում է իր հաջողության մասին: Այս պայմաններում օգնականն իրոք որ հարկավոր է. նա իրեն պետք է Հարպագրի տեղը դնի: Կալիփորնի ընկերներից մեկն իր վրա է վերցնում ճարել համապատասխան մարդ և 5 մին: Անհրաժեշտ ժամանակամիջոցը լցվում է պիեսի գործողության հետ անչլուսվունը շունեցող զավեշտական տեսարաններով. հանդիսատեսները առաջ հանդես է գալիս մի տղա, որը դանդաղվում է իր կյանքի ծանրության մասին՝ կավատի տանը, այնուհետև՝ «խոհարարի» անորոշ դեմքը, որին Բալլիոնը վարձել է տոնական ճաշի համար: Այժմ գործողությունն արագորեն է ծավալվում: Պսեվդոլուսի կողմից նյութվող զավերի մասին կավատին նախազգուշացրել է Կալիփորնի հայրը, բայց Պսեվդոլուսի արժանի պարտնյոր՝ կեղծ Հարպագր, նրա մեջ կասկած չի հարուցում և Ֆենիկիսին հասցնում է Կալիփորնին: Բալլիոնն իրեն այն աստիճան վստահ է զգում, որ պարտավորվում է, Պսեվդոլուսի պլանն իրագործվելու դեպքում, Սիմոնին վճարի 20 մին և նվիրաբերի ստրիուհուն. հենց այդ ժամանակ հանկարծ վերադառնում է իսկական Հարպագր: Բալլիոնն սիմոնին սկզբում նրան ընդունում են իբրև Պսեվդոլուսի կողմից փոխարինված անձավորություն, բայց շուտով համոզվում են, որ Պսեվդոլուսն իր խոստումը կատարել է: Կավատն ստիպված է դիմելորին վերադարձնել նրա կանխավճարը և քսան մին վճարել Սիմոնին: Պիեսի վերջում կանոնավալային տիպի տեսարաններ են: Պսեվդոլուսը, թունդ հարբած, հազիվ ոտքերի վրա կանգնելով, պարում է անպատշաճ մի պար, համով պատմելով ուրախ խնջույքի և Կարիփորնի ու Ֆինեկիսի սիրային ուրախությունների մասին: Հանդիպելով Սիմոնի հետ, նրանից նա ստանում է խոստացած քսան մինը և գոչելով «վա՛յ պարտվածներին» ձերուներն տանում է որդու խնջույքին:

Ոչ մի վերապատմում ի վիճակի չէ պատկերացում տալ այդ գրավիչ կատակերգության հրավառ ուրախության մասին: Անսպասարամությունը միանում է արտահայտիչ միջոցների առատություն. զավեշտական էֆեկտներին ի սպաս դրած բառախաղերի հարստությունը անհազորդելի է մի այլ լեզվով: Եվ դրա հետ միասին «Պսեվդոլուսի» վերլուծությունը դրսևորում է՝ սյուժեն վարելու մեջ մի շարք անհարիր դրություններ:

Մենք արդեն նշել ենք էքսպոզիցիայի կրկնությունը, Պսեվդոլուսի ժամանակից վաղ խնդիրքը՝ օգնական ճարելու մասին:

Նկատի առնված մոտիվները մնում են առանց հետևանքի. այսպես, Կալիֆոնը, որի ներկայությունը մենք սպասում էինք պիեսի վերջում, այլևս չի երևում: Շատ տեսարաններ, ներառյալ և Բալիիոնի փալլոն արիան նրա առաջին մուտքի ժամանակ, գործողությունն առաջ չեն շարժում: Որոշ հետազոտողներ այդ համարում են՝ հունական բնագրի գործողության ընթացքի մեջ Պլավտուսի կողմից կատարած «կոնտամինացիայի» և ընդմիջարկումների հետեվանք: Այժմ մեզ համար ավելի հետաքրքրական է հարցի մյուս կողմը: Պլավտուսը հաճախ ավելի գնահատում է առանձին տեսարանի և մոտիվի էֆեկտավորությունն ու զավեշտական ուժը, քան նրանց տեղը ամբողջի կոմպոզիցիայի մեջ: Ուրախ տեսարանը, ուշագրավ մոտիվը, ցաշտուն դեմքի մատուցումը՝ ինքնանպատակ են դառնում: Պիեսների խիստ արխիտեկտոնիկա հազվադեպ է պատահում Պլավտուսի մոտ, նա սովորաբար դրանից նահանջում է դեպի մասերի ավելի ազատ համակցման կողմը:

Ազատ կոմպոզիցիան, որի վրա շարված են առանձին տեսարաններ, կարելի է իլուստրացիայի ենթարկել «Ստիքոս» կատակերգությանը (200 թ.): Անտիկ հաղորդման համաձայն, այդ կատակերգությունը «Նդրայրներ» վերտառությանը (չփոփել նույննուն պիեսի հետ, որը հիմք է ծառայել Տերենտիուսի «Նդրայրներ» պիեսին). Մենանդրոսի երկու պիեսներից մեկի փոխադրությունն է: Եվ իսկապես, «Ստիքոսի» սկզբում մենք գտնում ենք տիպիկ մենանդրոսական մոտիվներ և կերպարներ: Երկու քույր ամուսնացել են երկու նդրայրների հետ: Ամուսինները վաղուց հեռացել են իրենց քայքայված գործերը կարգի բերելու համար և իրենց մասին որևէ տեղեկություն չեն հաղորդում. հավատարիմ կանայք համբերությանը սպասում են նրանց վերադարձին, շնայած, որ հայրը երկուսին էլ դրդում է նորից ամուսնանալ: Ծերունու համար ամուսնությունն ինդրում կարևորը դրամական կողմն է: Երիտասարդ կանայք հանդես են գալիս սրպես այն հայացքի կրողներ, որ ամուսնությունն անձնական կապ է, անկախ ունեցվածքային պայմաններից: Ամուսինները վերադառնում են մեծ հարստությանը, բայց այն տեսարաններում, որոնք ծավալվում են այդ դեպքի շուրջը, կանայք արդեն որևէ մասնակցություն չեն ունենում: Գործը պեսաք է ավարտվի ընտանեկան տոնակատարությանը, սակայն վերջին արարվածը պատկերում է մի այլ զուգահեռ տոնակատարություն՝ ստրուկների խրախճանային մի խնջույք. այդ ստրուկներից մեկի անունից էլ պիեսն ստացել է իր անունը: Կատակերգու-



գությանը, որի ճանկերումն է հերոսուհին, Պլավտուսը խորամանկության զո՛ւ է դարձնում Ֆիլոկոմասին հսկող և կարծես թե նրան հարևան տանը տեսած՝ ստրուկին: Պիրգոպոլիսիկի համար այլ խնդիր է պատրաստված, այդ կազմում է կատակերգության երկրորդ մասը: Ճարպիկ հեաներաների օգնությամբ զինվորի մեջ համոզմունք են առաջացնում, որ նրա վրա ուժգին կերպով սիրահարվել է հարևանի (իրականում՝ վաղեմի ամուսրի) երիտասարդ կինը, և որ նա պատրաստ է բաժանվել զզվելի ծեր ամուսնուց: Պիրգոպոլիսիկը շտապում է ազատվել՝ հարձից, որի ներկայությունն իր տանը անհարմար է դառնում, և Ֆիլոկոմասին արձակում է. վերջինս դառնապին հրաժեշտի աեսարան է խաղում: Նրան նվեր է տրվում Պալեստրիոնը՝ Պլեվսիկի նախկին ստրուկը. նա պատահաբար դառնվում էր Պիրգոպոլիսիկի - ձեռքին և բոլոր ինտրիգների հոգին էր: Այնուհետև զինվորն ուղևորվում է հարևանի տունը՝ երևակայական իր երկրպագուհու հետ աեսակցության, բայց այնտեղից վերադառնում է անողբաբար ջարդված. անտիկ սովորույթը վիրավորված ամուսնուն իրավունք էր վերապահում է՛լ ավելի անողոք պատժի ենթարկել, և միայն ստորանալու դնով Պիրգոպոլիսիկին հաջողվում է խուսափել դրանից:

Գազանի անցքով առաջին ինտրիգը միանգամայն անպետք է երկրորդի համար, որն օգտագործում է զինվորի սիրալին թուլությունները, և ինքնուրույն էպիլոգ է կազմում: «Պարծենկոտ զինվորի» համար իբրև աղբյուր՝ նախերգանքում անվանված է հունարեն «Պարծենկոտ» կատակերգությունը, առանց մատնանշելու հեղինակին: Արդյոք Պլավտուսն ինքն է երկու ինտրիգները միավորել երկու պիեսների «կոնտամինացիայի» կարգով, թե այդ միավորումը գտել է հենց «Պարծենկոտում»՝ հայտնի չէ: Ըստ էության ուրախ ֆարս լինելով, այդ կատակերգությունը, սակայն, ունի և իր «ոեկոնյորը»: Զինվորի հարևան Պերիպլեկոսմենը, մի ուրախ և սրտաբաց ծերուկ, որը խուսափում է ընտանեկան կասպանքներից և հովանավորում է երիտասարդների արարքները, կյանքի արվեստի վերաբերյալ հելլենիստական հայացքների կրողն է: Հոմեակական հանդիսատեսի համար այդ դեմքը, համենայն դեպս, հետաքրքրություն էր ներկայացնում իբրև նորույթ:

Ավելի լուրջ, երբեմն նույնիսկ բարեպաշտ-բարոյախոսական երանգով հյուսված է աղջկա ազատագրման և կավատի խաչառուակության թեման «Պարսն»-ում, որը Դիոխիլոսի կատակերգու-

Յլուններից մեկի վերամշակումն է: Այդ պիեսի կառուցվածքը շոշափման շատ կետեր ունի էվրիպիդեսի ուշ ողբերգությունների հետ: Գործողությունը տեղափոխված է հեռավոր Կիրենան՝ հունական դադուսը Աֆրիկայի հյուսիսում: Այստեղ ապրում է մի ազնիվ ծերուկ՝ ավենացի վտարանդի: Մի անգամ փոթորիկն ալյատեղ է բերում երկու աղջիկ. նրանք փրկություն են որոնում հարևան վեներայի սրբավայրում իրենց տիրոջից, մի կավատից, որը նրանց Սիցիլիա էր տանում վաճառքի: Նրանց պաշտպան են կանգնում և սրբավայրի պատկանելի քրմուհին և ծեր ավենացին, և կավատին շատապ հետապնդող պատանին, որ սիրահարված էր աղջիկներից մեկի վրա: Մինչ այդ ստրուկներից մեկը ծովից որսում է մի ճամբրուկ, այդ աղջկանը պատկանող իրերով: Շամբրուկի սեփականություն մասին վեճ է ծագում, որը շիշեցնում է Մենանդրոսի «Հաշտարար դատարանի» նմանօրինակ տեսարանը, և ծերուկը, հրավիրվելով այդ գործի դատավոր, աղջկա մեջ ճանաչում է մի ժամանակ իր հափշտակած դստերը: Իբրև Աթենքի քաղաքացուհի նա ամուսնանում է երիտասարդի հետ:

Զանազան շփոթությունների և յլուրիմացությունների ազդյուր ծառայող երկնամանակների մտախիով կառուցված է «Մենեխմները» («Երկվորյակները»): «Նոր» կատակերգության ուրիշ շատ պիեսների պես «Մենեխմների» սյուժեն սկզբնավորվում է հեքիաթից: Այդ երկու եղբայրների մասին մի հեքիաթ է: Եղբայրն ուղևորվում է կորած եղբորը որոնելու և նրան ազատում է շար վհուկի կախարհանքից: Նորատիկական կատակերգության մեջ հմայչկան բոլոր տարրերը, հարկավ, վերացված են: Մնացել է միայն երկու երկվորյակ եղբայրների ապշեցուցիչ նմանությունը: Նույնիսկ նրանց անունները նույնն են. նրանցից մեկի՝ Մենեխմի անհետանալուց հետո, երկրորդը վերանվանվել է Մենեխմ՝ առաջինի անունով: Վհուկն ստացել է իր կենցաղային մարմնապետը կովարար կնոջ կերպարում, այն «օժիտավոր կանանցից» մեկի, որոնք հաճախ պատկերվում են «նոր» կատակերգության մեջ: Նրանք ձգտում են գերիշխել ամուսինների վրա, իսկ ամուսինները հանգստություն են որոնում հետերանների շոշապատում: «Մենեխմների» գործողությունը կատարվում է այն օրը, երբ երկրորդ Մենեխմը երկար տարիների որոնումներից հետո հասնում է այն քաղաքը, ուր ապրում է առաջինը, մի ժամանակ անհեռացածը: Ուրախ և դիմամիկ այդ պիեսը արտոք տեմպով շարում է զավեշտական սիտուացիաների մի շղթա, հիմնված երկու եղբայրների միմյանցից տարբեր-

յու անհնար լինելու վրա, և մեկը մյուսի հետեից այդ շղթայի մեջ էն անցնում կատակերգական ինվենտարի սովորական դիմակները՝ հետերան ու պարասիտը, ստրուկը, խոհարարն ու բժիշկը, կինն ու ծեր աները, մինչև որ, վերջապես, երկու Մենեխմոսների հանդիպումը չի հանգեցնում ավարտական ճանաչմանը: Առանձին դիմակներից ամենից ընդարձակ մշակված է որևրամոլ պարասիտի դեմքը, բայց նա ևս դուրս չի գալիս տիպական կարիկատուրային գծերի սահմաններից: «Մենեխմոսները» վերամշակել է Շեքսպիրը՝ «Մխալների կատակերգություն» մեջ: Շեքսպիրը բարդացրել է թե սյուժեն, թե կատակերգության հոգեբանական կողմը:

Շեքսպիրի մուծած փոփոխությունների թվին պատկանում է և երկրորդ զույգ երկնմանակների հանդես գալը. իրարից շտարբերվող երկվորյակ-հերոսներին նույնքան միմյանց նման երկվորյակ ստրուկներ: Այդ կրկնակի զարձնելը թեև պղծված է Պլավտուսի մի ուրիշ կատակերգությամբ՝ հիմնված, ինչպես և «Մենեխմոսները»՝ երկնմանակի մոտիվի վրա, բայց միանգամայն տարբեր ըստ ոճի և ըստ կառուցվածքի: «Ամփիտրիոն» կատակերգությունը դիցաբանական սյուժե ունի: Համաձայն առասպելի, Հերակլեսը Ալքմենայի որդին է Չևսից, որը նրան մոտենում էր նրա ամուսին Ամփիտրիոնի կերպարանքով: Պլավտուսի մոտ Յուպիտեր (Չևս) — Ամփիտրիոնին զուգընթաց մենք գտնում ենք Մերկուրիոսին (Հերմեսին), որը Ամփիտրիոնի ստրուկ՝ Սոսիոսի կերպարանքն էր ընդունել: «Ամփիտրիոնի» նախերգանքում պիեսը բնութագրված է իբրև «տրագիկոմեդիա»՝ ողբերգության և կատակերգության խառնուրդ: Այդ պատճառաբանվում է նրանով, որ, ըստ անտիկ դրական տեսության, գործողության մեջ մասնակցում են ինչպես աստվածներ ու արքաներ, այնպես էլ ստրուկներ. բայց իրականում խառնումն ավելի հեռուն է գնում, քանի որ գործող անձանց կազմի մեջ եղած տարբերությունն անդրադառնող է դրամայի ամբողջ կառուցվածքի վրա, և իբրև միակ զավեշտական դիմակ մնում է ստրուկի դեմքը: Ծաղրածուական տեսարանները հերթագայում են լուրջերի, նույնիսկ պաթետիկների հետ: Այդ կատակերգության մեջ աստվածները խաբում են մարդկանց: Քանի դեռ խաբուվյալներ տարածվում է Սոսիոս ստրուկի կամ նույնիսկ Ամփիտրիոնի վրա, այն մեկնաբանվում է զավեշտական ուղղությամբ: Դրա փոխարեն միանգամայն լրջությամբ է մատուցված գլխավոր զոհի՝ համեստ և սիրող Ալքիմենեի կերպարը: Նա իդեալական «կին-ամուսին» է, բուրրովին նման չէ կատակերգության սովորական կանանց: Կասկա-

ձի ենթարկվելով ամուսնու կողմից, նա բացատրւմ է ամուսնու մեղադրանքները վիրավորված անմեղութեան արժանապատգու-  
Յլամբ: Ընտանեկան դրամաշի հանգույցը լուծվում է միայն այն  
ժամանակ, երբ Ալքմենեն ծնում է երկորյակ—մեկ Յուպիտերի  
որդին, մյուսը՝ Ամփիտրիոնից: Յուպիտերը, որն իր ձեռքումն է  
պահում ինարիզի բոլոր թելերը, երևան է գալիս, ինչպես սղբեր-  
դություններում, իր աստվածային փառահեղութեամբ և բա-  
ցատրում է իրերի իսկական դրուֆյունը, որից հետո ամուսինների  
միջև խախտված համաձայնութիւնն անհապաղ վերականգնվում է:  
«Ամփիտրիոնի» սյուժեն հետագայում օգտագործեցին Մոլիերը և  
գերմանական պոետ Կլաչտեր:

Մենք արդեն մատնանշել ենք, որ զավեշտականը հուզող դրու-  
թյամբ փոխարինելու, հանդիսատեսի գութը շարժող կերպարներ  
ստեղծելու ալոպիսի տեղեկեցներ հատուկ էր «նոր» կատակերգու-  
թյանը: Պլավտուսը մեծ ուշադրութիւն չէր դարձնում այդ կատե-  
գորիայի պիեսներին, բայց համապատասխան տարատեսակու-  
թիւն այնուամենայնիվ ներկայացված է նրա մոտ ևս:

«Ընկեցիկ և գտած երեսայի» վերաբերյալ թեմային, որը տար-  
բեր դուզորդութիւններով հանդես է գալիս Պլավտուսի շատ կա-  
տակերգութիւններում, ամբողջութեամբ նվիրված է «Գզրոցը»  
Մինանդրոսի «Նոնուլքակցուհիների» փոխադրութիւնը: Ունեվոր  
քաղաքացին իր կնոջ մահից հետո ամուսնանում է այն կնոջ հետ,  
որին երիտասարդ հասակում դայթակղել և թողել է: Ծնողների  
որոնում են իր ժամանակին նետած իրենց արտամուսնական  
աղջկանը, և գտնում են շնորհիվ նրա մոտ խաղալիքներով թողած  
գզրոցի: Աղջիկը դաստիարակվել է կալատուհու մոտ, բայց իր հո-  
գեկան մաքրութեամբ հմայել է. ենթարկվելով իր ազատ գագայ-  
մունքին, նա անձնատուր է լինում իրեն սիրող երիտասարդին, որի  
հետ հարսնախոսում են նրա հոր առաջին օրինական կնոջից  
աղջկանը: Ճանաչվելով իր ծնողների կողմից, նա ամուսնանում  
է իր սիրածի հետ: Այդ կատակերգութիւնը, համառոտված և փո-  
փոխված ըստ երևույթին Պլավտուսի կողմից, մեզ է հասել  
ընդ որում, խիստ փրցացած միժակում, և այնուամենայնիվ լատի-  
ներեն վերամշակման և վատ պահպանված լինելու պայմաննե-  
րումն էլ երևում են Մինանդրոսի աշխարհահայացքի և արվեստի  
ղծերը՝ առանձին դեմքերի նրբին անհատականացման բնութագիրը,  
խոր գագայմունքի ցուցադրումը, մարդասիրական վերաբերմունք  
դեպի հետերաները, շքավորութեան և հասարակական արհամար-

հանքի զոհերը: Զվարճալի տեսարանների լիակատար բացակա-  
թյամբ Պլավտուսի երկերի շարքում այդ պիեսը հատուկ տեղ է  
գրավում և զժրխասարքուր անհայտ է, թե ինչպիսի հաջողություն  
ունեցավ այն հռոմեական բեմում: «Գղորցի» թեման բազմիցս  
կրկնվել է նոր ժամանակի գրականության մեջ, բնդհուպ մինչև  
Ա. Ն. Օսարովսկու «Անմեղ մեղավորները»:

Սովորական տիպից զգալիորեն տարբերվում է Պլավտուսի  
և մի ուրիշ «հուզիչ» կատակերգությունը՝ «Գերինները»: Այդտեղից  
միանգամայն վերացված է սիրային մոմենտը: Այդպիսի շարժիչ  
ուժերն են՝ մայրական զգացմունքը, բարեկամությունը, ինքնա-  
զոհաբերությունը: Հարուստ ծերունի Հեգիոնը, որի կրտսեր որդուն  
մի ժամանակ հափշտակել են, մտահոգված է թշնամու ձեռքը դե-  
րի ընկած՝ ավագ որդու ճակատագրով: Նա սխտեմատիկաբար  
գնում է գերի թշնամիներին, հույս տածելով գտնել մի այնպիսի  
գերի, որին հնարավոր լինի փոխել որդու հետ: Վերջապես նրա  
ձեռքն է ընկնում համբավավոր երիտասարդ Ֆիլոկրատը Տինդար  
սարուկի հետ: Հանդիսատեսներին նախերգանքից արդեն հայտնի  
է, որ Տինդարը Հեգիոնի կորած որդին է, և ստրկատիրական նա-  
խապաշարումներին դժվար չէին թվալ, որ ստղուկը ազնիվ հատ-  
կությունների տեր մարդ լիներ: Հեգիոնը մեզմ է վարվում այդ  
գերիների հետ, ենթադրելով ստրուկին հայրենիք սալարկել փո-  
խանակման համար բանակցություններ վարելու: Սակայն այդ  
երիտասարդներն արդեն իրենց դերերը փոխել էին և ազատվում  
է ոչ թե Տինդարը, այլ Ֆիլոկրատը: Գերիներից մեկի անզգուշու-  
թյան պատճառով կեղծիքը բացվում է. հավատարիմ Տինդարի  
հանդուգն ինքնազոհությունը բխվում է Հեգիոնի սխալալ վրի-  
ժառույթյան հետ, և գազազած՝ ծերունին իր անծանոթ որդուն զա-  
տապարտում է տաժանակիր աշխատանքի քարհանքերում: Ֆիլո-  
կրատը շնորհացավ իր ստրուկին. նա վերադառնում է, բերելով իր  
հետ ոչ միայն Հեգիոնի գերություն մեջ գտնվող որդուն, այլ նաև  
սպիտակ ստրուկին, որը միաժամանակ հափշտակված Տինդարին  
վաճառել է իր հորը: «Իժբաղդ-երջանիկ» Հեգիոնը ձեռք է բերում  
իր որդիներին: Գերիների մասին թեմայով պիեսը ակտուալ հետա-  
քրքրություն կարող էր ներկայացնել անընդհատ պատերազմների  
ժամանակաշրջանում: Այնուամենայնիվ այս «հուզիչ» կատակեր-  
գության մեջ նաև բուֆոնային տարր է մտցված, որի կրող է գարձ-  
ված պարասիտ էրզասիլի դեմքը:

Մադրաժուական տեսարաններ կան նաև «փողի տուպրակ»

(«Գանձ») կատակերգութեան մեջ. այդ պլամուտեան յետերտուարի ամենալուրջ կատակերգութեանն է, որը սակայն չի պատկանում «Տուղիչ» պիեսների կարգին: Յուկլորային պատկերացումն այն վնասի մասին, որը մարդուն կարող է հասցնել հանկարծակի նրա վրա թափված հարստութունը, այստեղ հիմք է ծառայել հոգեբանորեն մշակված կերպար ստեղծելու համար: Չքալոր, ազնիվ ծերունի էվկլիտոնը օջախում ոսկու գանձ գտավ, որը հորել էր նրա պապը, և այդ գլուտը նրան հանեց հոգեկան հավասարակշռութունից: Նա դիշերները չի քնում, ամբողջ օրերով տանից դուրս չի գալիս, յուրաքանչյուր մարդու մեջ կողոպտիչ է տեսնում և ամենաչնչին ծախսից վախենում է, որպեսզի չկարծեն, իբր թե նա հարստացել է: Էվկլիտոնի աղջկա հետ նշանագրվում է հարուստ արդեն ոչ-երիտասարդ նրա հարևան Մեզազորը. նա վախենում է հարուստ օժիտով կանանց կամակորութունից և շռայլութունից և փիլիսոփայում է անտիկ ուսուցիչների ոգով այն թեմայի մասին, որ հարուստների ամուսնութունները չքավոր աղջիկների հետ օգտակար են ընտանիքի ամրութեան և հասարակական հակասութունները մեղմացնելու համար: Հարսանիքի պատրաստութունները պահանջում են կողմնակի մարդկանց ներկայություն, և էվկլիտոն շտապում է թաքցնել իր գանձը տնից դուրս: Նրան հետևում է Մեզազորի եղբորորդի Լիկոնիդին պատկանող ճարպիկ ստրուկը, և գողանում է փողի տոպրակը: Էվկլիտոնին հայտնի չէ, որ նրա աղջիկը ըստ ան ըստ սպասում է ծնելու. գիշերային տոնակատարության ժամանակ նրան բռնաբարել է ինչ որ մի երիտասարդ: Լիկոնիդն էլ հենց այն երիտասարդն է, որը բռնաբարել է էվկլիտոնի աղջկան. նա գիտե իր զոհին և մտահոգված է հորեղբոր նշանագրութեամբ: Այն ժամանակ, երբ թեղակորույս էվկլիտոնը բեմի վրա մի կողմից մշտան է նետվում և փնտրում է իր գանձը հափշտակումից, նրան ներկայանում է Լիկոնիդը իր խոստովանութեամբ: Չալվեշտական դիալոգ է ծագում. Լիկոնիդը էվկլիտոնի ցնցված վիճակը մեկնաբանում է իբրև հետևանք իր արարքի, իսկ էվկլիտոնը Լիկոնիդի բացատրութունն բնեկայում է իբրև ոսկով լիքը տոպրակը գողանալու խոստովանութուն: «Այն քոնը չէր, չէ որ դու գիտեիր, տրեմն չպետք է դիպչեիր»: «Սակայն, երբ արդեն դիպել եմ, ավելի լավ է թող ինձ հասնի»: Չեռագրերում պիեսի վերջին մասը չի պահպանվել. նա ընդհատվում է այն տեսարանում, ուր Լիկոնիդն իր ստրուկի մոտ երևան է բերում փողի տոպրակը: Այն, ինչ որ մեր տեքստում չկա, լրացնում է անտիկ վերապատմումը: Լիկո-

Երդն ամուսնանում է էվլիլիոնի աղջկա Հետ, իսկ ծերուկը, եւ ստանալով իր փողի տուպրակը, նվիրում է աղջկանն ու փեսային: «Ես գիշեր ու ցերեկ հանգիստ չունեի», — ասում է մի ֆրագմենտում, — «այժմ ես կքնեմ»: Այդ վերջավորությունը միանգամայն համապատասխանում է ֆուկլորային պատկերացմանը. աղատվելով գանձի ծանրությունից, ճարգը վերականգնում է կորցրած հավասարակշռությունը: Այսպիսով, ժլատությունը ներկայացված է ոչ թե որպես բնավորության մշտական դիժ, այլ որպես ինչ որ անցողիկ մի բան, յուրատեսակ պսիխոզ: Սակայն, պիեսում կան առանձին դժեր, որոնք հակասում են այդ կոնցեպցիային և էվլիլիոնի ժլատությունը դարձնում են ժառանգական պատալսգրի երեվույթ: Շատ հնարավոր է, որ այդ գծերը, որոնք մեկուսացած են պիեսի նախերգանքում և ստրուկների ծագրածուական դիալոգում, իրենցից ներկայացնում են մի հավելում՝ մոտմված Պլավտուսի կողմից, և որոնք խեղաթյուրում են կատակերգության հեղինակի միտումը: Սակայն, ով էլ որ լինի այդ գծերի հեղինակը, որոնք ժլատի կերպարը դարձնում են «բնավորություն», հատկապես դրանց էր պատկանում գրական փայլուն ապագան: «Փողի տուպրակը» հիմք ծառայեց Մոյլերի հռչակավոր «ժլատ» կատակերգության համար և դրանով իսկ շեղակի կերպով ժլատության կհասիկ պատկերմանը ռուսական գրականության մեջ: Պուշկինի և Գոգոլի կողմից: Այնուամենայնիվ անտիկ էվլիլիոնը հիմնովին տարբեր է իր հաջորդներից հենց միայն շնորհիվ նրա, որ որևէ չափով շահամուլ, կուտակման հերոս չէր<sup>6</sup>:

Պլավտուսի գրական դեմքի մասին դատողությունը անխուսափելիորեն կապված է նրա պիեսների՝ հունական բնագրերի հանդեպ ունեցած՝ հարաբերության հարցի հետ: Որքանով որ ոչ մի բնագիր չի պահպանվել, այդ հարցի պատասխանը դառնում է հույժ դժվարին և կարող է սղվել միայն ամենաբնականուր ձևով

<sup>6</sup> Մարքոս քաղվածք է բերում մեր թ. 1 դ. հռոմեական դիանական Պլինիոս Ավագից՝ «գրանից է իր սկիզբն առնում ժլատությունը... աստիճանաբար այն բարբարվել է մուլեգնորեն, այդ արդեն ժլատություն չէ, այլ ոսկու ծարավ է» (Պլինիոս Ա. Բնապատմություն, գիրք 33, դ. 14): «ժլատությունը, — ավելացնում է Մարքոսը, — ամուր պահում է գանձը, թույլ չտալով շրջանառության միջոց դառնալու, իսկ արժաստիքությունը պահպանում է նրա դրամական հույզին, նրա մշտական ձգտումը դեպի շրջանառությունը (Քաղաքանո, քննադատության շուրջը, 1932, էջ 190—191):

այն տեղեկութիւններէ համաձայն, որոնք մենք ունենք նորատափ-  
կական կատակերգութեան մասին:

Ամենից առաջ ուշադրութիւն է գրաւում բնագրերի բնաբու-  
րչաւը: Ուշագրով է, որ Մենանդրոսի այն կատակերգութիւնները,  
որոնք մեզ հայտնի են թեկուզ հատվածորեն և որոնք անտիկ շըր-  
ջանում այդ պոետի երկերից ամենից շատ հռչակվածների թվին  
էին պատկանում, ինչպես օրինակ «Միջնորդ դատարանը» կամ  
«Կտրած ծամը» չեն փոխադրել ոչ Պլավտուսը, ոչ ուրիշ հռոմեա-  
կան պոետներ: Բարոյա-փիլիսոփայական պրոբլեմատիկան, սո-  
վորական բնատանկան բարոյախոսութեան քննադատութիւնը, տրա-  
դիցիոն տիպաժի արտասուէր մեկնաբանութիւնը, վառ-զավեշ-  
տական մոմենտների բացակայութիւնը, — Մենանդրոսի լավագույն  
կատակերգութիւններէ այդ բոլոր առանձնահատկութիւնները, —  
դրանք, ըստ երևույթին, քիչ գրավչութիւն ունենին հռոմեական թա-  
տերական հասարակութեան համար: Պլավտուսը, համենայն դեպս,  
խուսափում է սուր պրոբլեմներից և ոխկ չի անում օպոզիցիա  
կազմելու իր հանդիսատեսների բարոյական և մանավանդ կրօնա-  
կան պատկերացումներին: Դրան կարելի էր հասնել երկու ճանա-  
պարհով՝ կամ ռեպրատուարից բոլորովին հանելով պրոբլեմային  
պիեսները, կամ համապատասխան վերամշակմամբ, և կարելի է  
կարծել, որ Պլավտուսն օգտագործում էր թե մեկ և թե մյուս մեթո-  
դը:

Զնայած առանձին «հուզիչ» պիեսների առկայութեան, Պլավ-  
տուսի թատրոնն ամբողջութեամբ առած դրույթ ունէր դեպի ծիծա-  
ղելին, ծաղրանկարը, բուֆոնադան, ֆարսը: Այդ արտահայտվում  
է տիպաժի մշակման մեջ: Հունական կատակերգութիւնը կարո-  
ղանում էր տարբերակել իր տիպաժը, նրան անհատական երանգ-  
ներ հագորդել: Պլավտուսը զերտդասնում է վառ և խիտ գույները:  
«Ագաս» հետերաների (շատ վառ պատկերացված «Բաքոսական-  
ներում») և «Կովարար» կանանց տրադիցիոն դիմակները զավեշ-  
տորեն ավելի սուր էին և աշխարհայացքոն ավելի մոտ էին հռո-  
մեական հասարակութեանը, քան այդ կերպարների «հուզիչ» վա-  
րիանտները մարդասիրական տենդենցներով պիեսներում: Պլավ-  
տուսի սիրած դեմքը՝ ստրուկը, կատակերգութեան ամենադինամիկ  
դիմակն էր, որն ամենից քիչ էր քաշվում իր արարքներից, բառե-  
րից և շարժումներից, պահանջ առաջադրելով ազատներին պատ-  
կանելի և պատշաճ վերաբերմունքի մասին: Ստրուկը ա միայն  
ինտրիգի կրողն է, այլև խեղկատակային տարրի կենտրոնը: Հան-

գիսատեսին նա զվարճացնում է խեղկատակութեամբ և բարձր ոճի ծաղրանմանութեամբ, «օրիլիստիաչելով» և երգումով, բեմի վրա վազոցով և մոլեզիին շարժումներով, վերջապես, նրանով, որ նրա վրա տեղում են կամ յուրաքանչյուր յուրեք կարող են տեղալ ծեծեր:

Ավելի խիստ էսթետիկական պահանջների բարձրունքից ավելի ուշ ժամանակի հոռմեական քննադատութեանը (օրինակ Հորացիուսը) կշտամբում էր Պլավտուսին ծաղրանկարային լինելու և կերպարների թերի լինելու համար: Պլավտուսի նպատակն էր՝ ամեն մի տեսարանով, ֆրազով, շարժուձևով անընդհատ ծիծաղ առաջացնել:

Անտիկ թատրոնում իրարից զանազանվում էին երկու կարգի կատակերգութեաններ՝ «շարժում» (motoria), գրգռված, որը պահանջում էր դերասանի ուժերի լարում, և «կանգում», (stataria). ավելի հանդարտ: Ծարժուն կատակերգութեան համար բնորոշ էին «վազող» ստրուկի, պարասիտի, կավատի, գազազած ծերունու՝ դերերը: Պլավտուսին հատուկ էր «շարժուն», գինամիկ տիպի վրձնական գերակշռութեանը: Ընդ որում Պլավտուսը կողմնորոշվում է դեպի ավելի վաղ և «ստորին» ձևի կատակերգութեանները:

Երաժշտա-լիրիկական տարբը, որը հատուկ էր հինհունական դրամային, «նոր» կատակերգութեան մեջ գրեթե վերացված էր: Երգեցիկ խմբի դերը վեր էր ածվել ինտերմեդիանների՝ դորժողութեանների ընդմիջումներին: Գերասանների արիաները, թեպետ միանգամայն չէին անհետացել, սակայն, դատելով բառ ֆրագմենտների, գրեթե չէին պատահում լավագույն հեղինակների մոտ: Հոռմեական վերամշակումները կատակերգութեանը վերագործնում են նրա կորցրած երաժշտա-լիրիկական կողմը, բայց ոչ թե իբրև խմբերգային պարտիաներ, որոնք հազվագեպ բացառություններ էին կազմում, այլ դերասանների արիաների («կանտիկումների»), մոնոդիանների, դուետների և տերցետների ձևով: Պլավտուսի կատակերգութեանը կառուցվում է իբրև դիալոգի հերթապալանություն ունեցող խաղի և արիայի հետ և հանդիսանում է յուրատեսակ օպերետո: Պլավտուսի կանտիկումները, լինելով բազմազան իրենց շափերով, հետևաբար և երաժշտական կառուցվածքով, որոշ նմանություն ունեն հելլենիստական մոնոդրամայի հետ: Միանգամայն հնարավոր է, որ կատակերգական խաղի զարգացումը միմյանց երաժշտական մենախոսութեան հետ արդեն իր օրինակներն ուներ հունական կատակերգութեան որևէ «ստորին»

ստրատեսականների մեջ: Հոռոմեական կատակերգութեան մեջ այդ դառնում է թատերական սկզբունք, որի համապատասխան վերամշակվում են այլ կառուցվածք ունեցող հունական պիեսները: Պլավտուսը վարպետորեն տիրապետում է ամենաբարդ լիրիկական ձևերին և դրանք միջոց է դարձնում ամենազանազան զգացմունքներ և տրամադրություններ արտահայտելու համար: Սիրային զնդումները մենախոսությունների և դուետների ձևով, սերենադան, սիրահարված պատանու և խաբված կնոջ վշտահարությունը, ամուսնական գծուկությունները և ստրուկների լեզվակոխվելը, զրգիռնու սարսափը, հուսահատությունն ու հրճվանքը, միայնակության տանջանքներն ու խնջույքների խրախճանքը, — այս բոլորը պարուրվում է կանտիկոմի մեջ: Բնորոշ է, որ կանտիկոմները հաճախ պարունակում են՝ փիլիսոփայելու տարր, դատողություններ և խրատներ: Երաժշտական կողմը (մենք այժմ կասեինք՝ «ոտմանսի») ձևը) հոռոմեական լսարանի համար մեղմացնում էր մտորումների և զգացմունքների նորությունն ու արտասովորությունը, որոնք բեմում հանդես էին բերում հունական պիեսների գործող անձինք: Արիստոտելի ձևը հաճույքով ընտրվում է նաև ողբերգական ոճի ծաղրանմանության համար, այն ռազմական փոխաբերությունների համար, որոնցով Պլավտուսի մոտ բացատրվում է ստրուկը՝ կատակերգական խաղի այդ ստրատեգը (լավագույն օրինակներից մեկը՝ «Բաքոսականներ») կատակերգության մեջ ստրուկ Քրիսալիսիան է, որը ծաղրանմանեցնում է Տրոյայի մասին թեմայով ողբերգական մոնոդիան): Եստ ղեպքերում կանտիկը ինքնուրույն ամբողջություն, ընդմիջարկած արիա է հանդիսանում և գործողությունն առաջ չի շարժում:

Դեպի կատակերգության ավելի արխաիկ ձևերը վերադարձ է հանդիսանում և այն ազատ կոմպոզիցիան, որի մասին մենք արդեն նշել ենք առանձին պիեսները վերլուծելիս: Մասերի ինքնուրույնությունն ի վնաս սյուժետային խիստ համակցության է՝ ավելի է ուժեղանում կոնտամինացիան՝ իբրև զավեշտականության ուժեղացման միջոց՝ գործադրման հետևանքով: Կոնտամինացիան կարող է արտահայտվել և առանձին ինտրիգների միավորման, երկու պիեսների միասնաբար միաձուլման, և որևէ տեսարան մի պիեսից մյուսը փոխադրման մեջ: Բնագրերի մասին տեղեկությունների բացակայության պայմաններում՝ Պլավտուսի առանձին պիեսներում կոնտամինացիայի առկայությունը ճշգրիտ պարզաբանման չի ենթարկվում. այդ փաստի մասին վկայում է հոռոմեա-

կան անկէլի ու ժամանակի կատակերգագիր Տերենտիուսը, որը, իբր պիեաներում դիմելով կոնստամբինացիայի մեթոդին, այդ եղանակն արդարացնում է, վկայակոչելով Նեվիուսի և Պլավտուսի պոետիկական պրակտիկան:

Բնագրերի գործողութեան ներգաշնակութեանն ու հետևողականութեանը տուժում էին նաև նրանից, որ հունական կենցաղի որոշ գծեր անհասկանալի և օտար էին հռոմեացիների համար: Աթենքում, օրինակ, թուլատրելի էր համարվում ամուսնութեանն իր արեանակից քրոջ հետ, եթե նա ուրիշ մորից էր: Հունական կատակերգութեան համար հազվագեպ չէր, որ աղջիկը, որի համար տառապում էր երիտասարդ հերոսը, դուրս էր գալիս նրա հոր արտամուսնական աղջիկը, և այդ հանգամանքն արգելք չէր ծառայում սիրահարվածների միանալուն: Այդպիսի ամուսնութեանը հռոմեացիների մեջ վրդովմունք կառաջացնէր: Հռոմեական պոետն ստիպված էր լինում ջնջել ամբողջ էպիլոգներ, հանել առանձին դերեր, թերութեաններ ստեղծելով գրամայի կառուցվածքում կամ լրացնելով գրանք կողմնակի նշումով, և այդ իր հերթին մղում էր կոնստամբինացի դիմելու:

Կատակերգութեանների գործողութեանը կատարվում է Հունաստանում, ամենից հաճախ՝ Աթենքում, բայց Պլավտուսը հունական կենցաղի գծերն ազատորեն փոխարինում է հռոմեականով: Նրա երկերում մշտապես հանդես են գալիս հռոմեական տերմիններ՝ մագիստրատների, պետական հիմնարկների, իրավական հասկացողութեանների համար, ինչպես և հռոմեական կրոնական պատկերացումներ, աշխարհագրական և տոպոգրաֆիկ տեղական անուններ: Սակայն, այդ հռոմեականացումը ավելի շատ վերաբերվում է առանձին մանրամասնութեաններին, քան ընդհանուր կենցաղային նկարին, որը մնում է հունական: Հռոմեական գծերի մուծումը երկչակ ֆունկցիա ունի. այն՝ պիեսը մոտեցնում է հանդիսատեսների սովորական պատկերացումներին, բայց դրա հետ միասին, կարող է ծառայել նաև անմիջականորեն զավեշտական նպատակների, իբրև բեմական իլուզիայի դիտակցական այն խախտումներից մեկը, որոնց մենք բազմիցս հանդիպել ենք առանձին կատակերգութեանները վերլուծելիս:

Պլավտուսի կատակերգութեանն զգալիորեն տարբերվում է նորատառիկական դիալոգը վարելու եղանակներից: Պլավտուսի դիալոգը բուֆոնային բնույթ ունի. նա լեցուն է սրախոսութեաններով, բառախաղերով, հիպերբոլաներով, շի խուսափում կոպիտ կա-

տակից: Արտակարգորեն գունեղ լինելով լեզվի հարստությամբ և ճկունությամբ, այդ դիալոգը փառլամ է բառախաղի, բուֆոնային բառաստեղծագործման և բաղմապիսի հնչյունային ֆրեզուրների վարպետությամբ: Պլավտուսի զավեշտական պաշարի մեջ խոսքի զավեշտն առաջին տեղերից մեկն է գրավում: Խոսքի՝ իրրև զավեշտական տավալորության ինքնուրույն գրգռիչ՝ այդպիսի դերը Պլավտուսին վերստին մոտեցնում է կատակերգության ավելի վաղ էտապների հետ: Մենանդրոսն այլ ճանապարհով էր գնում, ձգտելով վերարտադրել առօրյա լեզվի բնական և անբռնազբոսիկ հատկությունները: Պլավտուսն իր լեզվական նյութը քաղում է ամենուրեք՝ սկսած արխայիկ հանդիսավոր արարողական ու իրավաբանական ֆորմուլներից և վերամբարձ պոեզիայի լիզվից և վերջացրած պրոֆեսիոնալ խոսակցություններով ու փողոցի բառապաշարով: Հոմեակիան քննադատությունը նշում էր Պլավտուսի լեզվական անհամեմատելի վարպետությունը: Վարրոնը, առավելություն տալով հետագայի պոետներին՝ սյուժեն կառուցելու և բնավորությունները կերակրելու վերաբերյալ, Պլավտուսի կատակերգությունները շքերազանցված էր համարում լեզվի տեսակետից: Ավելի պատկերավոր արտահայտվել է Վարրոնի ուսուցիչ, մեր թ. ա. II դ. հոմեակիան գիտնական՝ էլիոս Ստիլոնը՝ «եթե Մուսաները ցանկանային լատիներեն խոսել, նրանք կխոսեին Պլավտուսի լեզվով»:

Իր բնագրերի մեջ Պլավտուսի կատարած փոփոխություններն, այսպիսով, տանում են մի ուղղությամբ: Մենանդրոսի և նրա ժամանակակիցների երկերը Պլավտուսը վերամշակում է ավելի արխայիկ մասսայական թատրոնի ոճով: Այն հարցի մասին, թե ինչ թատերական տրագիցիայի էր հետևում նա այդ փոփոխությունները կատարելիս, կարծիքները բաժանվում են: Հոմեակիան գիտնականների խուլ մասնանշումներից կարելի է եզրակացնել, որ Պլավտուսն ինչ-որ գծերով նրանց հիշեցնում էր սիցիլիական կատակերգագիրներին, մասնավորապես՝ էպիհարմին: Ժամանակակից հետազոտողները փորձում են Պլավտուսի ժողովրդական կապից հետագոտողները փորձում են Պլավտուսի ժողովրդական թատրոնի տարրերը կապել ֆլիակների հարավ-իտալիկական խաղերի, օսկա-հոմեակիան ատելանի, հելլենիստական դրամայի «ստորին» ձևերի հետ: «Նոր» կատակերգության ղուգակցումը ժողովրդական ծաղրածուական թատրոնի հետ Պլավտուսի յուրահատկությունն է կազմում, իսկ թերևս ոչ միայն Պլավտուսի, այլև ամբողջ վաղագույն հոմեակիան կատակերգության, որը մեզ հայտնի է միայն նրա պիեսներով:

Հոռմեական բեմի պայմանները բացատրում էին կատակերգու-  
թյան մեջ անմիջական քաղաքական կամ սոցիալական երգիծանքի  
հնարավորությունը: Քաղաքական ուղղակի ակնարկներ Պլավտուսի  
մոտ արտակարգորեն հազվադեպ են պատահում: Նրա կատակեր-  
գությունը հանդես էր գալիս օտարերկրյա զգեստավորմամբ, և կա-  
տակերգության կենցաղային կողմը ընկալվում էր իբրև հունական  
թեթևամիտ բարքերի նրբագրգիռ պատկեր: Դատարկապորտ երի-  
տասարդ խնջուչքարարների և նրանց պարասիտների միջավայրն  
անծանոթ էր Պլավտուսի ժամանակվա հոռմեական կենցաղին:  
Պրոֆեսիոնալ վարձկան-զինվորների հետ հոռմեացիները հանդի-  
պում էին միայն իրենց հակառակորդների մոտ: Հոռմեական իրա-  
կանությունից նույնքան էլ հեռու էր գտնվում կատակերգության  
ստրուկների վարքը: Ստրկատիրական հասարակության համար  
այդ փափուկ հարցի նկատմամբ Պլավտուսն առանձնակի զգուշու-  
թյուն է պահպանում. պատկերելով ստրուկների հարսանիքը կամ  
խնջուչքը, նա շտապում է այդ ազատություններն արդարացնել,  
մատնանշելով օտարերկրյա սովորույթների տարբերությունը հոռ-  
մեականից: Հետագայում երբ հոռմեական թեմատիկայով կատա-  
կերգություն ստեղծվեց, «տիրոջից ավելի խելոք» ստրուկի դեմքը  
հանվեց: Եվ դրա հետ միասին, ուրիշի կենցաղի թաղանթի տակ  
հոռմեական հանդիսատեսը բախվում էր այնպիսի թեմաների հետ,  
որոնք նրա համար ավելի շատ արդիական էին դառնում կապված  
հարստության աճի և նահապետական ընտանիքի հիմքերի քանդ-  
վելու հետ: Այնպիսի հարցեր, ինչպիսին են պճնանքը, կանանց  
զուգբային վիճակը, բաժինքը՝ քննարկվում էին Հոռմում և որոշ  
դեպքերում նույնիսկ օրենսդրական նորմավորման փորձերի առար-  
կա էին դառնում: Այդ նույն պրոբլեմներն էլ քննարկվում էին նոր-  
ատտիկական կատակերգության մեջ: Նրա պատասխանները եր-  
բեմն չափազանց արմատական էին լինում հոռմեական մասսաշա-  
կան հանդիսատեսի համար, բայց զգուշ մեկնաբանությամբ, շե-  
ղոքացված հունական զգեստով և զավեշտական դիմակով, զրանք  
նրա համար կարող էին արդեն հետաքրքրություն ներկայացնել:  
Կոտակիման ծարավի դատապարտումը, պճնանքի և օֆտավոր-կա-  
նանց դեմ ճառաբանությունը, բացասական պատկերումը վաշխա-  
նություն, որն, ըստ Մարքսի\* խոսքերի զրկում էր «ժողովրդական  
ատելությունը» — այս բոլորը շատ կենսահույզ էին Հոռմի համար:

\* Капитал, т. III, Изд. 8-ое, 1936, стр. 527.

Բայց դրանով չի սահմանափակվում Պլավտուսի կատակերգության լուսավորական նշանակությունը: Զգուշավոր և մատչելի ձևով նա բաց էր անում կենսական առօրյայի ավելի կուլտուրական աշխարհը, ավելի բարդ մտքերի և զգացմունքների աշխարհը, լեզու էր ստեղծում՝ բազմազան հույզերի արտահայտության համար, մասնավորապես ստեղծում էր սիրո լեզու: Հռոմեացի-հայթոհների արհամարհանքով էին վերաբերվում հունական բարքերին, «իրեն հույնի պես պահել» (pergraecari) նշանակում էր՝ «անառակություն անել», բայց հռոմեացիներն խոստովանում էին հույների կուլտուրական գերազանցությունը և նոր ծագող կուլտուրական պահանջների համար պատասխան էին որոնում նրանց մոտ: Հունական դեմքերը միաժամանակ պիտանի էին կառնավալա-ֆարսալին պատկերման համար և նրա համար, որպեսզի կյանքի ավելի նրբին ձևերի կրողը լինեն:

Պատահական չէ, որ հռոմեական պոետներն՝ առօրյա կյանքի, նորատիկական կատակերգության՝ հունական թատրոնին էին դիմում: Այդ ժանրը, սակայն, ձևակերպվեց արդեն պոլիսային Հունաստանի քայքայման ժամանակաշրջանում, հելլենիստական ժամանակաշրջանի շեմքին: Երբեմն նրա պրոբլեմատիկան վաղաժամ մանակաշրջանի շեմքին: Երբեմն նրա պրոբլեմատիկան վաղաժամ էր լինում III դ. վերջի և II դ. սկզբի Հռոմի համար: Հռոմեական հասարակության համար անհարազատ էր իրականության հոգնած, սկեպտիկ ընկալումը, որը հատուկ էր լինում «նոր» կատակերգությանը, պատահուների քմահաճույթի առաջ խոնարհվելը, մասնավոր կյանքի պատկերումը՝ իբրև անհատի հոգեկան հատկությունների արտահայտության կարևորագույն ոլորտ: Հունական պիեսների տոնը, վերջապես, չէր համապատասխանում մասսայական հանդիսատեսի էսթետիկական ունակություններին. այդ հանդիսատեսը դաստիարակվել էր ծաղրածուական, ժողովրդական թատրոնով: Ուստի «նոր» կատակերգության նյութը կարիք էր զգում՝ ընտելանալ: Բայց, դրան զուգընթաց, հռոմեական բեմի պահանջներին էր մեղ կահարմարեցնելու: Միակողմանի կլինի, եթե հռոմեական վաղ կատակերգության մեջ տեսնենք միայն հունական բնագրերի «կոպտացում»: Իհարկե, Պլավտուսը Մենանդրոսի համեմատությամբ շատ է «կոպիտ». նա կործանում է ներդաշնակ արխիտեկտոնիկան, պարզեցնում է զաղափարներն ու կերպարները, խստորեն ուժեղացնում է բուֆոնային մոմենտները: Բայց, դրան զուգընթաց, նա իր պիեսների մեջ մտցնում է կենսուրախ եռանդի և լավատե-

սության այնպիսի մի շիթ, որին Մենանդրոսն արդեն ընդունակ չէր:

Պլավտուսը գիտեր իր հասարակությունը և իր բեմը: Նրա պիեսները շնորհակալ նյութ էին դերասանի համար և երկար ժամանակ հաջողութեամբ էին օգտվում: Նրանք վերստին բեմի արժանացան XV դարում, իտալական հումանիստների «գիտական» և պալատական կատակերգության մեջ, և այնուհետև հիմք դարձան բազմազան փոխարկումների համար: Շեքսպիրը, Մոլյերը, Լեսինգը, դանիական կատակերգագիր Հոլբերգը, շոտսելով արդեն բազմաթիվ երկրորդական գրողների մասին, զբաղվում էին Պլավտուսի կատակերգությունների վերականգնումներով կամ թարգմանություններով: Ռուս գրողներից Պլավտուսով առանձնապես հետաքրքրվում էր Ա. Ն. Օստրովսկին, որի արխիվում գտնվել է կենդանության ժամանակ շրջապարակված «էշեր» կատակերգութեան թարգմանությունը. այդ՝ փոքրասիական հույն բանաստեղծ Գեմոսիլի երկերից մեկն էր, վերամշակված Պլավտուսի կողմից:

#### 4. ԷՆՆՆՈՒՍԸ ԵՎ ՆՐԱ ԳՊՐՈՅԸ: ՏԵՐԵՆՏԻՈՒՍ

Նրկորդ Պոնիկյան պատերազմի վերջնալը՝ հոռմեական պատմության շրջադարձային կետերից մեկն էր. Հռոմն իտալիական քաղաքականությունից անցնում է միջերկրածովյան քաղաքականության, առաջ է շարժվում դեպի արևելք, դեպի հելլենականության երկրները: Եռշոր հողատիրության և առևտրա-վաճառական կապիտալի արագ աճը խստորեն փոխում է տնտեսական և սոցիալական հարաբերությունների պատկերն Իտալիայում: Մերձեցումը Հռոմական կուլտուրայի հետ ընթանում է արագ սեմպերով, և պայքար է բորբոքվում հելլենոֆիլների և հոռմեական հին կարգերի կողմնակիցների միջև: Այս բարդացած պայմաններում գրականությունն սկսում է նոր դեր խաղալ:

Մինչ այդ հոռմեական գրականությունը զարգանում էր տարեքայնորեն. այժմ սկսում են զնահատել այն իբրև իդեոլոգիական ներգործության միջոց, իբրև պրոպագանդայի զենք: Այն օրինակը, որ ցույց տվեց Հաննիբալը, որն իր հետ հույն գրողներ էր շրջեցնում, Հռոմի առաջ ցուցադրեց գրական նշանակությունն արտաքին քաղաքականության նպատակների, արտասահմանյան հասարակական կարծիքը կազմակերպելու համար: Թշնամու հետքերով հոռ-

մեացիները ուր դրին իրենց քաղաքականության գրական պրոպագանդայի ուղին: Այդ նպատակով Ֆարիուա Պիկտորը կազմում է հոմեական պատմության առաջին շարադրությունը և հրատարակում է այն հունարեն լեզվով: Հունարեն լեզվով իր արշավանքների մասին գրում է նաև այդ ժամանակաշրջանի ամենահայտնի հոմեական գործիչ՝ Սկիպիոն Ավագը: Այդ մի նոր տիպի գործիչ էր, լայն մտահորիզոններով և հոմեական տրադիցիայի համար արտասովոր մեթոդներով: Սկիպիոնը և նրա խմբավորումն սկսում են կազմակերպել հոմեական գրականությունը, շրջապատել իրենց գրողներով, խթանելով նրանց ստեղծագործությունն իրենց համար գրողներով, խթանելով նրանց ստեղծագործությունն իրենց համար հարկավոր ուղղությամբ: Խմբավորումը հելլենոֆիլական էր և հովանավորում էր հոմեական գրականության ավելի խորացած հելլենականացումը:

Այդ նոր էտապն սկսվում է Քվինտուս Էննիուսի (239—169) բազմակողմանի գործունեությամբ: Էննիուսը ծնվել էր Կալաբրիայում, նա իտալիկա-հունական խառը կուլտուրայի մարդ էր: Նա հունական լուրջ կրթություն էր ստացել, ծանոթ էր ոչ միայն գրականության հետ, այլև հարավային Իտալիայում տարածված արևմտահունական մտածողների փիլիսոփայական սիստեմաների՝ պլուրալիզմի պատկանության, էմպիրիկիստիկոսի ուսմունքի հետ: Երկրորդ Պունիկյան պատերազմի ժամանակ նա ծառայում էր հոմեական զորքի մեջ և 204 թ. Հռոմ եկավ, ուր ղեղավում էր դասավանդությունը և պիեաներ բեմադրելով: Սկիպիոնական խմբակը հանձնեց նրա գտավ իր պոետին և փառաբանողին:

Էննիուսը խստորեն քննադատում է իր նախորդներին, հոմեական առաջին պոետներին՝ ձևի կոպտության, դեպի ոճական մշակումը ոչ-բավականաչափ ուշադրության, անկրթության համար: Նրանցից ոչ ոք փիլիսոփայություն «երազումն էլ նույնիսկ չի տեսել»: Էննիուսի ծրագիրն էր՝ հոմեական գրականության մեջ մտցնել հունական ձևի և գաղափարական բովանդակության սկզբունքները, վերականգնել այն՝ հունական պոետիկայի, ճարտասանության և փիլիսոփայության հիմքի վրա: Իրեն սեֆորմատոր ղեկավարում էր, կրթիուս Անդրոնիկի և Նեվիուսի պես, աշխատում էր ղեկավարել բնագավառներում և հոմեական գրականությունը հարցատացնում է նոր ժանրերով:

Էննիուսի ամենանշանակալի երկը՝ «Աննալներ» պատմական էպոսն է, որը 18 գրքով ընդգրկում է Հռոմի ամբողջ պատմությունը, սկսած Էննիուսի Տրոյայից փախչելուց մինչև պոետի ժամանա-

կակիցները, նրա արեստոկրատական հովանավորողները: Պոեմի ներածութեան մեջ շարադրվում է մի ինչ-որ «երազ»: Էննիուան իրեն տեսնում է Մուսաների լեռը տարված, և այնտեղ նրան երկվում է Հոմերոսը: Հոմերոսի բերանն են դրվում պոլիթազորական սամուռները հոգիների տեղափոխութեան (մեթեմպսիխոզի) մասին և նրա սեփական հոգու մասին պատմվածքը, զուրս է գալիս, որ նրա հոգին այժմ բնակութիւն է հաստատել Էննիուսի մարմնի մէջ: Այստեղից պարզ է, որ Էննիուսը ցանկանում է տալ մի պոեմ հոմերոսյան ոճով, դառնալ երկրորդ, հոմեակական Հոմերոս:

Էննիուսը չէր կարողանում իրեն հաշիվ տալ այն մասին, որ նրա «Աննալները», ուր հաջորդաբար շարադրվում են հոմեակական պատմութեան դեպքերը, խորապես տարբեր են հոմերոսյան էպոսից: Էննիուսի «հոմերասականութեան» ամենից առաջ ձևական բնույթ ունի և հանդիսանում է հին հունական պոեմների ոտանաձորների ձևի և առանձին ոճական և պատմողական եղանակների վերարտադրություն, հոմերոսյան երանգավորման կիրառումը, ինչպէս այդ հասկանում էին Հոմերոսի հելլենիստական մեկնաբանները: Այդ ուղղութեամբ կարեորագույն քայլը՝ հոմեակական էպիկական արագիցիայում հաստատված սատուանական ոտանաձորից հրաժարվելը և հոմերոսյան պոեմների բանաստեղծական տաղաչափութեան դիմելն էր: Էննիուսը ստեղծեց լատինական հեկզամետրը, որն այնուհետև դարձավ հոմեակական էպոսի ոտանավորի պարտադիր ձևը: Լատինական տաղաչափութեանը հեկզամետր հաղորդելը ոտանավորի մեծ վարպետութիւն էր պահանջում: Էննիուսը հաջողութեամբ կատարեց այդ խնդիրը: Նա այնուհետև էպոսի համար ստեղծում է հանդիսավոր արխայիկ ոճ հոմերոսյան ֆորմուլների, էպիտեանների, համեմատութիւնների օգտագործմամբ, բայց չի արհամարհում և հնչնակրկնութեան հոմեակական տրագիցիոն եղանակը: Էննիուսի այդ ոճը նույնպէս իր կնիքը դրեց հոմեակական էպոսի հետագա զարգացման վրա, ընդհուպ մինչև «էնեականը»: Հոմերոսի օրինակով «Աննալները» շարագրութեան մեջ կիրառվում է նույնպէս օլիմպիական պլան, տեսարաններ աստվածների մասնակցութեամբ:

Տաղաչափականացրած խրոնիկայի ցամաքութեան հետ Էննիուսի մոտ հերթագայում էր ուժգին, պատկերավոր, երբեմն նույնիսկ հուզականորեն ալեկուծութեան հասնող պատմողականութիւնը: Պոեմում գերակշռում էին ռազմա-պատմական թեմաները, այդ պատկերում էր Հոմի աճը և փոռարանում էր նրա գործիչներին:

Որքան մտանում էր արդիականության շարադրությունը ավելի ու ավելի էր ընդարձակվում և անցնում էր մեծարանքի հեղինակի հովանավորներին: Առանձին անհատներին մեծարելը, որը հիշեցնում էր հելլենիստական պալատական պոեզիան, դժգոհություն էր առաջացնում պահպանողական շրջաններում, բայց այդ լիանգարեց պոեմի վիթխարի փառքին: Ռեսպոնդիկական ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում հոռոմեացիներն էննիուսին համարում էին «երկրորդ Հոմերոս»: Վերդիլիոսի «էնեականի» հանդես գալով «Աննալները» կորցրին հոռոմեական էպոսի իրենց նշանակությունը. դրա հետևանքով էննիուսի պոեմն ամբողջությամբ չի պահպանվել և մեզ հայտնի է միայն քաղվածորեն և շարադրմամբ:

Տրագմենտար վիճակում մեզ հասել են էննիուսի և այլ երկերը: Իրև պրոֆեսիոնալ դրամատուրգ նա մշակում էր հունական ողբերգությունները և կատակերգությունները: Կատակերգությունները վատ էին հաջողվում բարձր ոճի վարպետին և շուտով մոռացվեցին. ողբերգությունները երկար ժամանակով մտան հոռոմեական թատրոնի ռեպերտուրը: Էննիուսը սիրում էր պատկերել կրքի, խելագարության, հերոսական ինքնազոհության պաթետիկան: Բնագրերն ընտրելիս նա առավելապես կողմնորոշվում էր դեպի էվրիպիդեսը, շոտանալով մյուս ողբերգուներին: Հոռոմեական հանդիսատեսը էննիուսի մշակմամբ ծանոթանում է այնպիսի ողբերգությունների հետ, ինչպիսիք են՝ էսքիլոսի՝ «Նվմենոները», էվրիպիդեսի՝ «Մեդեան», «Իփիգենիա», «Մենալիպեն», «Ալեքսանդրը»: Էվրիպիդեսի համար բնորոշ ռացիոնալիստական ուղղությունը պահպանել է և էննիուսը. նույնիսկ սակավ և պատահական հատվածներից երևում է, որ նրա ողբերգություններում արտահայտվում էին զանազան ազատամիտ մտքեր՝ մարդկային կյանքի մեջ աստվածների շփոթման, նախազոհակությունների կեղծ լինելու մասին: Էվրիպիդեսին՝ «բեմի փիլիսոփային» և անկեղծ լինելու մասին: Էվրիպիդեսի նախապատվություն տալը հատի սուբեկտիվ պոետին այդպիսի նախապատվություն տալը բնութագրում է էննիուսի ողբերգությունների դուլքն իրև լուսաբնութագրում է էննիուսի ողբերգությունների հաջողությունը վկայում է վորական, իսկ այդ ողբերգությունների հաջողությունը աճի մասին: Էն-Հոմոնում անհատական տեղեկեցների նշմարվող աճի մասին: Էն-նիուսն իր ոտանավորները «բոցավառ» է անվանում. դրանց մեջ հոռոմեական ողբերգությունը դանում է իր ոճը:

Էննիուսը չի սահմանափակվում էպոսի և դրամայի բնագավառում: Նրա գործունեության լուսավորական կողմն արտահայտություն դառավ մի ամբողջ շարք դաստիարակչական երկերում,

որոնք ժողովրդականացնում են հունական փիլիսոփայությունը: Փա հռոմեացիներին ծանոթացնում է արևմտահունական մտածողների էթիկական և բնափիլիսոփայական սիստեմների հետ իր «Էպիհարմ» դիդակտիկ պոեմում՝ ռացիոնալիստական բացատրություններ է տալիս ժողովրդական կրոնին, թարգմանում է էվգեմների «Սրբազան գրանցումը»: Էննիուսին գրավում էին նույնպես գրավիչ-դիդակտիկ բնույթի թեթև ժանրերը ևս: Այդ կարգին էր պատկանում, օրինակ «Մատուբաներ» («Նստունուրդ») վերտառությունը կրող ժողովածոյն, ուր ժողոված էին զանազան թեմաներով մանր բանաստեղծություններ, առակներ, անեկտոզներ, դիալոգիկ տեսարաններ, ուր դիդակտիկական հյուսվում էր գրավիչ շարադրություն հետ, իսկ որոշ դեպքերում էլ ընդունում էր անձնական բանավեճի սրվածություն: «Մատուրա» (սպառնի՝ «սատիրա») տերմինը գրականության մեջ սկզբնապես հանդես գալու ժամանակ դեռ այն նշանակությունը չունեի, որը նրան հատկացվեց հետագայում:

Էննիուսը բարձր էր գնահատում իր գրական նշանակությունը և իր ուսանավորներին անմահություն էր վերագրում: Նրա պատմական դերն այն էր, որ նա բարձրացրեց հռոմեական գրականության անշատումը մասսայից: Էննիուսը կրթված վերնախավի ռճական ձևերը, բարենորոգեց բանաստեղծական լեզուն: Դրա հետ միասին նրա գործունեության մեջ երևան է զալիս գրականության անշատումը մասսայից: Էննիուսը կրթված վերնախավի պոետն էր, որը սպասարկում էր հելլենիստական կուլտուրան բնագրկող արիստոկրատիային:

Էննիուսը դպրոց ստեղծեց: Դրան պատկանում էին Էննիուսի եղբոր որդի, «գիտնական» ողբերգու պոետ՝ Պակուլիուսը (220—130) կատակերգագիր՝ Յեցիլիուս Ստացիուսը (մահացել է 168 թ.): Յեցիլիուսն իր վերամշակումների համար ընտրում էր զլիսավորապես Մենանդրոսի պիեսները և հեռացավ կոնտամինացիայի սկզբունքից, հռոմեական կատակերգությունն այդպիսով մոտեցնելով նրա հունական օրինակներին: Սակայն Էննիուսի գրական ծրագրի իսկական կենսագործողը կատակերգության վերաբերյալ Տերենտիուսն էր:

Անտիկ կենսագիրների հաղորդման համաձայն՝ Պուբլիուս Տերենտիուսը (մոտավորապես 195—155 թ. թ.), Աֆեք (Աֆրիկացի) մականունով, ծագումով Կարթագենացի էր: Նա Հռոմ էր ընկել իբրև աֆրիկական ստրուկ և պատկանում էր սենատոր Տերենտիուս

Նուկանին: Տերը հետաքրքրվեց շնորհալի ստորուկով, նրան կրթու-  
թյան տվեց և ազատագրեց: Տերենտիուսը լինում էր նշանավոր  
երիտասարդուժյան շրջանում և մոտ էր կարթագենի ապագա,  
նվաճող Սկիպիոն Կրտսերին և նրա բարեկամ Գալուս Լելիուսին:  
Տերենտիուսի գրական հակառակորդները նույնիսկ լուր էին տա-  
րածում, որ աֆրիկացի ազատագրված ստրուկն անվանական է,  
զր նրա կատակերգությունների իսկական ստեղծողները Սկիպիոնը  
և Լելիուսն են, որոնց համար, շնորհիվ իրենց սոցիալական դիրքի,  
անհարժար էր հանդես գալ իբրև բեմական հեղինակներ: Այդ  
լուրերի դեմ, որոնք հաճելի էին նրա համբավվող հովանավորող-  
ների համար, Տերենտիուսն առանձնապես եռանդով շէր պաշտ-  
պանվում, և այդ առասպելը թափանցեց սերունդներին: Հռոմեա-  
կան յուրը և քաջատեղյակ հեղինակները դրան վերաբերվում էին  
ինչպես մտացածին հերյուրանքի: Տերենտիուսի գրական գործու-  
նեությունը երկար չի տևել: 166 և 160 թվերի արանքում նա բեմա-  
դրել է վեց կատակերգություն. դրանք բոլորն էլ լիովին պահպան-  
վել են: 160 թ. նա ճանապարհորդություն է ձեռնարկում դեպի  
Հունաստան, այդ ժամանակ էլ վախճանվում է:

Էնիուսի պես, Տերենտիուսը Սկիպիոնների խմբավորման  
գրողներից էր: II դ. 60-ական թվականներին այդ խմբավորումն  
ազդեցիկ էր: Նա պայքար էր մղում առևտրա-վաշխատական կա-  
պիտալի արտաքին քաղաքականության ազդեցիկ ձգտումների  
դեմ, պահանջում էր իտալիկական գյուղացիներին ողորմություն  
տալ, ջանում էր կանխել սոցիալական հակասությունների սրումն  
Իտալիայի ներսում: Իդեոլոգիական ոլորտում նա հովանավորում  
էր հունական այն ուսմունքները, որոնք քարոզում էին՝ սոցիա-  
լական խաղաղություն, դեպի բոլոր մարդիկ մարդասիրության  
հիման վրա փոխադարձ համաձայնություն, շահամոլ մտադրու-  
թյուններից հրաժարում: Նորատիկական կատակերգության «մար-  
թյուններից հրաժարում» տեմպենցներն այժմ պատեճ ժամանակին էին, և  
Տերենտիուսը դառնում է դրա հռոմեական մոնետիկը:

Տերենտիուսի կատակերգությունները պատկանում են նույն  
«օպերատային» ժանրին, ինչ որ էին Պլավտուսի երկերը, դրանք  
նույնպես «նոր» կատակերգության հունական պիեսների վերա-  
մշակումն էին, բայց և դադափարապես և ոճականորեն՝ դրանք  
խիստ տարբեր են Պլավտուսի կատակերգություններից: Այդ ար-  
տահայտվում է արդեն բնագրերի ընտրության մեջ: Տերենտիուսի՝  
վեց կատակերգություններից՝ չորսը («Անդիսուսի», «Խնքն իրեն

պատժող», «Ներքինի» և «Նղբայրներ») հիմնված են Մենանդրի գործերի վրա, իսկ մյուս երկուսը («Սկեսուրը» և «Տորմինը»)՝ Մենանդրի քիչ հայտնի հետևորդ՝ Ապոլոդոր Կարիստացու պիեսների վերամշակումն են: Մենանդրի մրցակիցներ՝ Փիլեմիոնը և Դիֆիլոսը՝ Տերենտիուսի մոտ ներկայացված չեն. հռոմեական պոետը դիմում է «նոր» կատակերգության ամենից լուրջ տարատեսակության ներկայացուցիչներին: Հռոմեական մյուս կատակերգագիրների պես, Տերենտիուսն էլ ոչ թե թարգմանում, այլ վերամշակում է հունական պիեսները, բայց նա ջանում է պաշտպանել իր բնագրերի խիստ արխիտեկտոնիկան, բնավորությունների հաջորդական վարումը և լուրջ տոնը:

Տերենտիուսի լուրջ ոճի իլուստրացիայի համար վերցնենք նրա «Սկեսուր» (165 թ.) պիեսը, որը պատկանում է «հուզիչ» կատակերգության տիպին: Գործողությունը, ինչպես սովորաբար, կատարվում է Աթենքում երկու տների միջև, որոնցից մեկը պատկանում է Լահետին, իսկ մյուսը՝ Փիզիպին, հարևան տանն ապրում է Բաքիդա հետերան:

Տրադիցիոն նախերգանքը՝ հանգիսատեսներին դիմումը՝ ոչ մի տեղ Տերենտիուսի համար էքսպոզիցիոն նպատակների չի ծառայում: Էքսպոզիցիան արվում է ներածական տեսարաններում, բայց երբեմն ինքնուրույնություն է պահպանում այն առումով, որ դրա համար հանդես է բերվում հատուկ դեմք, որը ականջ է դնում և սիտուացիայի ելքի մասին պատմելն ուղեկցում է ռեպլիկներով և գործողության մեջ այլևս չի մասնակցում: «Սկեսուրի» մեջ իբրև աչքպիսի դեմք հանդես է գալիս հետերան, Բաքիդայի ընկերուհին: Նրա դիալոգը պիեսի հերոս Պամֆիլի ստրուկ Պարմեոնին հետ պարունակում է էքսպոզիցիան: Պամֆիլը, Լահետի որդին, ջերմազին սիրում է հետերա Բաքիդային և երգվել է հավատարիմ լինել նրան: Հոր պահանջով նա ամուսնացել է Տիրդիպի աղջկա, Տիրումենայի հետ, բայց այդ ամուսնությունն սկզբից մնացել է անվանական: Երիտասարդը շարունակում է այցելել առաջվա ընկերուհուն և հույս էր տածում, որ վիրավորված Փիլումենան ինքը կհեռանա իրենից: Բայց, այն ժամանակ, երբ Փիլումենան հեզությունը տանում է Պամֆիլի վարքը, Բաքիդան սկսեց ավելի վառ վերաբերվել նրա հետ, և Պամֆիլի զգացմունքները փոխվեցին. նա ստանություն զգաց զեպի հետերան, մոտեցավ Փիլումենային, որին սիրեց և որի մեջ իրեն մոտիկ հոգի գտավ: Մի առ ժամանակ հետո Պամֆիլն ստիպված եղավ բացակայել

Աթինքից: Նրա բացակայութեամբ Փիլումինան ինչ որ ատելություն է տածում զեպի սկեսուր Սոսորատային և սկսում է խուսափել նրանից, վերադառնում է ծնողների տուն:

Հանդիսատեսը թերևս տրամագիր է Փիլումենայի հեռանալը բացատրել սկեսրոջ ծանր բնավորութեամբ, բայց արդեն մոտակա հաջորդ տեսարանները համոզում են, որ Սոսորատան բացի կին է, որը շարունակ ստիպված է տանել ամուսնու անտեղի հանդիմանությունները: Նա աշխատում է ամուսնուն հավատացնել, որ ինքն անմեղ է հարսի վերաբերյալ, բայց իզուր՝

Ամուր նստել է գլխում.

Որ բոլոր սկեսուրները անարգար են:

Հանելուկը լուծվում է վերադարձած Պամֆիլի մենախոսության մեջ: Կնոջ և մոր միջև ծագած թշնամանքով անհանդստացած, նա շտապում է Փիլիպի տունը և հանդիպում է Փիլումենայի ծննդաբերությանը: Դեռ ամուսնանալուց առաջ Պամֆիլի կնոջը մի ոմն անհայտ բռնաբարել է: Նրա մայր Միրինեն, որը բոլոր շքրջապատողներից թաքցրել էր գործի եղելությունը, ներառյալ և Փիլիպից, աղերսանքով գիմում է Պամֆիլին շխտառակել զժրաղդ Փիլումենային, եթե նույնիսկ շցանկանա նրան ետ վերցնել: Ամուսնությունից անցել է արդեն յոթ ամիս, և այդ ամուսնությունից անցած շիմացողները որևէ վատ բան չեն կասկածել: Երեսնան, իհարկե, պեաք է նեատել, բայց չէ որ այդ հոր իրավունքն է: Պամֆիլը խոստանում է չվիճարկել իր հայրությունը: Այնուամենայնիվ նա գտնում է, որ անհրաժեշտ է ամուսնությունը լուծել և հաղթահարել Փիլումինային տածած սիրո զգացմունքը:

Պամֆիլի գրությունն զժվարությունն աճում է՝ շքրջապատի բարյացակամ վերաբերմունքի պատճառով. նրանք ամեն կերպ ջանում են վերացնել երևակայական խոչընդոտները և համաձայնություն վերականգնել ամուսինների միջև: Փիլումենայից հրատարակելու համար միակ պատշաճավոր պատճառարանությունը հարսի և Սոսորատի միջև եղող գժտությունն է, և որ որդիական սերն ստիպում է նախապատվություն առ մորը, և ոչ թե կնոջը: Բայց բարի Սոսորատեն պատրաստ է ամուսնու հետ հեռանալ հայր բարի Սոսորատեն պատրաստ է ամուսնու հետ հեռանալ հայր: Մյուս կողմից, Փիլիպն իմանում է գաղտնի ծննդաբերության մասին և վրդովվում է: Փիլումենայի հեռանալը նա վերագրում է Միրինեի ինտրիգներին, որը չէր սիրում Պամֆիլին՝ Բաքիդայի հետ առաջվա

կապի համար և, նրա կարծիքով, այժմ հույս է տածո՞ւմ նորածին թոռից ազատվել, որպեսզի այնուհետև Փիլումենային անշատի շամուսնուց: Երկու ձեռունիները, կահեան ու Փիղիպը, պահանջում են, որպեսզի ոչ մի բանում մեղք չունեցող երեխան ճանաչվի, և Պամֆիլի համար անհնարին այդ հեռանկարը նրան վերջնակա- նապես ղինաթափ է անում: Նա բարձր է համարում ժամանակա- վորապես թաքնվել՝ առանց հոր՝ երեխային շին ընդունի ընտանի- քը: Ծերերը Պամֆիլի անհատականալի վարժունքը կարող են բա- ցատրել միայն Բաքիդայի ազգեցությունը և նրան կանչում են բանակցությունների: Գուրս է գալիս, որ այդ հետերան ան- շահամոլության և ազնվության մարմնացումն է: Նա հաճույքով պատրաստ է օգնել իր նախկին բարեկամի ընտանեկան էրջան- կությունը և ուղևորվում է նրա կնոջն ու զոքանչին հավաստիաց- նելու, որ Պամֆիլի հետ իր հարաբերությունները վաղուց խզված են: Բայց ի՞նչ օգուտ կարող է լինել այդ արաստովոր այցելու- թյունից, հետերայի հանդես գալուց մի ընտանիքում, ուր նրա հավաստիացումները ոչ ոքի հարկավոր չեն և միայն արգելք են ծառայում մտածված պլանն իրագործելուն:

Պիեսի ընթացքում, Միրինի տրտունջների մեջ, միայն մեկ անգամ սարդում է կոնֆլիկտը լուծելու ուղիների վերաբերյալ մի ահնարի՝ Փիլումենային բռնաբարողը խլել է նրա մատանին: Այ- ժըմ, վերջին արարվածում, հանդես է գալիս Բաքիդան, և նրա մա- տին այդ մատանին է: Այցելությունը, որ կատարվել էր, որպեսզի վերացվի երեակալական խոչընդոտը, բերում է իսկական լուծման:

Գուրս գալով Փիղիպի տանից, Բաքիդան անհապաղ ստրուկին ուղարկում է հայանելու Պամֆիլին, որ իրեն նվիրած նրա մասա- նին Միրինեն ճանաչել է. այդ Փիլումենայի մատանին է: Մի ան- գամ երեկոյան Պամֆիլը վաղում է Բաքիդայի մոտ այդ մատանի- ով, որը վերցրել էր մի աղջկանից, որին բռնաբարել էր: Եվ նա իսկապես Փիլումենայի ծնած երեխայի հայրն է: Այսպիսով, Ապոլոգորը մշակել է իր ապագա կնոջը բռնաբարող ամուսնու մասին սյուժեն՝ Մենանդրոսի «Հաշտարար դատարան»-ի սյուժեն, կոնֆլիկտի նույն լուծմամբ՝ ազնիվ հետերայի միջոցով: Եզրա- փակման տեսարանում երջանկությամբ արբեցած Պամֆիլը իր փրկարար Բաքիդայի հետ նրբազեղ հաճոյախոսություններ է փո- փանակում: Փիլումենայի գաղտնիքը պետք է պահպանվի: Մերուկ- ները կարող են մնալ իրենց համոզմանը, որ Միրինեն հավաստա- ցել է Բաքիդայի երդումներին և հաշտվել է փեսայի հետ: Եվ

Ճիշայն հետաքրքրությունն բորբոքվող ստրուկ Պարմենտերը շարունակում է զարմանալ, թե ինչու իր հազդոդուսն այդ աստիճանի հարող էր ուրախությունն պատճառել Պամֆիլին:

«Սկեսուրի» նախերգանքից մենք իմանում ենք, որ այդ պիեսը երկու անգամ տապալվել է: Առաջին բեմադրության ժամանակ (165 թ.) հասարակությունը չի ցանկացել դիտել այն, հետաքրքրվելով բոտնցքամարտիկներով և լարախաղացներով: Երբ «Սկեսուրը» երկրորդ անգամ է բեմադրվել (160 թ.), առաջին արարվածից հետո հանդիսատեսները փախել են գլադիատորներին դիտելու: Միայն երրորդ բեմադրության ժամանակ (նույն 160 թ.) պիեսը հաջողություն է ունեցել: Եվ իսկապես, եթե հանդիսատեսներն սղասում էին զավեշտական վառ տավալորություններ կամ սովորական ծաղրածուական դեմքեր, ապա «Սկեսուրը» չէր կարող նրանց չհիասթափեցնել: Այն ժամանակ, երբ Պլավտուսի յուրաքանչյուր տեսարանը հետապնդում է որոշակի զավեշտական էֆեկտի, Տերենտիուսի մոտ «ծիծաղելի» շատ քիչ բան կա: «Սկեսուր»-ում ոչ մի զավեշտական կերպար չկա, ստրուկների մասնակցությամբ սակավաթիվ տեսարանները մտցնում են թեթև հումորիստական մոմենտ, որը բուֆունադայի շի փոխվում: Այստեղ ինտրիգ չկա. գործողության զարգացումը բխում է պերսոնաժների բնավորություններից: Պիեսը ցանկանում է հանդիսատեսի մեջ կարեկցություն առաջ բերել դեպի սովորական, ոչ-վատ մարդկանց, որոնք խճճվել են դժվարին իրադրության մեջ: Մեր արդի տերմինալոգիայի տեսակետից «Սկեսուրը» ավելի շուտ նման է «դրամայի», քան «կատակերգության»:

Տերենտիուսը տվել է ինտրիգի կատակերգության և սովորական տիպը. այն վարում է ճարպիկ ստրուկը («Անդրոսուհին», մասամբ՝ «Ինքն իրեն պատժողը») կամ պարասիտը («Ֆորմիոնը»), բայց ինտրիգն ընթանում է առանց խեղկատակության կամ շափազանց պարզ պարտնյորի պրիմիտիվ հիմարացմամբ: Այսպես, «Անդրոսուհին» («Անդրոսացի աղջիկը») կառուցված է երկու խորամանկների մենամարտի վրա: Այդ, մի կողմից, ծերունի հայրն է, որը ցանկանում է որդուն ամուսնացնել հարուստ հարեվանի աղջկա հետ, մյուս կողմից՝ այդ որդու ստրուկը, որը պեսոբլանի աղջկա հետ, մյուս կողմից՝ այդ որդու ստրուկը, որը պեսոբլանի սօգնի իր տիրոջն ամուսնանալու սիրած չքավոր աղջկա հետ: Հակառակորդները հմտորեն միմյանց համար կեղծավորություն և խաբելու ցանցեր են լարում և հերթականորեն իրենց սեփական առատ խորամանկության զոհն են դառնում: Կոնֆլիկտը լուծ-

վում է «Ճանաչումով»։ դուրս է գալիս, որ այն աղջիկը, որին սիրում է երիտասարդը, նույն հարեանի վաղուց կորած աղջիկն է։ Բայց երկրորդ աղջիկն էլ, նշանված լինելով, առանց փեսացուի չի մնում։ Նրա հետ ամուսնանալու համար երազում էր մի այլ երիտասարդ, որը հուզմունքով հետևում էր հիմնական ինտրիգի ուղրապատ ընթացքին։

Իր դիմակները Տերենտիուսն ամենից հաճախ մատուցում է «մարդասիրական» մեկնաբանություններով։ Տերենտիուսի անտիկ մեկնաբան Գոնատուսը (մ. թ. IV դ.) նկատում է, որ «Սկեսուրում» դուրս են բերվում «բարյացազամ սկեսուր և զոքանչ, համեստ հարս, կնոջ վերաբերմամբ մեղմ ամուսին, դրա հետ միասին նվիրված որդի, բարի հետերա»։ «Մարդասիրական» վարիանտում Տերենտիուսը նկատում է ընկճված, անարդարացիորեն մեղադրվող «կնոջ»՝ Սոսարատեսի կերպարը։ այգպիսին է Սոսարատան նաև «Ինքնիրեն պատժողը» կատակերգության մեջ, և նույնիսկ «օժիտավոր կին» նավաստարատան՝ «Ճորմիտն»-ից իրեն պահում է խիստ արժանապատվությամբ, չդիմելով տրադիցիոն «լեզվակովություն»։ Նույն կերպով մեկնաբանվում է «հետերայի» կերպարը։ Անշահամու Բաքիդայի կողքին կարելի է դնել հեղահամբույժ Ֆաիդային «Ներքինի»-ից. երկուսի սերն էլ հիմնված է իսկական համակրանքի վրա։ Թե մեկը, թե մյուսը՝ անպաշտոն սիրո աշխարհի նրբագեղ ներկայացուցիչներն են, որոնք կատարելապես տիրապետում են բարձր հասարակության վարվելակերպին։ Բայց դրանք պրոֆեսիոնալ հետերաներ են։ Է՛լ ավելի ջերմ երանգներով պատկերվում է չքավոր աղջիկների զղացմունքը, որոնք ազատորեն սիրել են, այն աղջիկների, որոնց եղրափակիչ «Ճանաչումը» պետք է հասցնի հասարակության կողմից ընդունված ամուսնություններ։ Առանց ծաղրանկարային շափաղանցություն մատուցվում են և բացասական տիպական դիմակները, ինչպես օրինակ պարծենկոտ և վախկոտ զինվորը («Ներքինի» կատակերգությունը)։ Տերենտիուսի վերամշակումների մեջ երևում է բնութագրելու այն արվեստը, որով փայլում էր Մենանդրոսը։

Տերենտիուսը համարյա միշտ հանդես է բերում միանման դիմակների զույգ կրողներ, տարբեր բնութագրությամբ։ Այսպես, «Սկեսուրում» պարզ և բարի Սոսարատեսի կողքին պատկերված է ավելի խարդավանական Միրինեն, բարեսիրտ, բայց զործոնյա Լահետի կողքին՝ խոռովկան և կամազուղի Փիդիպը։ Այսպիսով Մենանդրի այդ սիրած եղանակն անցել է նրա հետևորդներին,

Ն Տերենտիուսը զուգահեռ դեմքերի է դիմում նույնիսկ այն ժամանակ, երբ նա հունական բնագրում այդ շի գտնում (երկրորդ երիտասարդի դեմքը՝ «Անդրասուհում»):

«Նոր» կատակերգության ամենատարածված թեմաներից մեկը հոր և որդու միջև կոնֆլիկտն է երիտասարդության սիրային ճրապուրանքների հողի վրա: Մենանդրոսն այդ կոնֆլիկտը վեր է քարծրացնում մինչև ընտանեկան կարգերի և դաստիարակության պրոբլեմի մակարդակը, և նրա պրոբլեմատիկան անցնում է Տերենտիուսին: «Ընքն իրեն պատժողը» (163 թ.) կատակերգության մեջ պատկերված է այնպիսի հայր, որն իրեն պատիժ իրեն ինքնաճանադրման է ենթարկում, որ իր խիստ վարժունքով որդուն հասցրել է տանից փախչելու: Դուրս է դաշխ, սակայն, որ այդ ձեռունին ավելի սրտառու է, քան նրա հարևանը, մի շոր գործարար, խոսքով ազատամիտ, որը չի կարողացել իր ընտանիքում փոխադարձ վստահություն ստղծել: Դաստիարակության պրոբլեմն իր ամբողջ ծավալով դրված է «Նղբայրենը» կատակերգության մեջ (160 թ.):

Խստարարո, խնայող, հին աթենական բարբի տեր Դեմեասը օրն իր կյանքն անց է կացնում անդադրում աշխատանքի մեջ՝ իր գյուղական հողամասում, երկու որդի ունի՝ էսքինը և Քտեսիփոնը: Ավագ որդուն՝ էսքինին որդեգրում է Դեմեասի եղբայր ամուլի Միքիոնը, որը սիրում էր քաղաքի կյանքը և նրա հարմարությունները: Դեմեասի և Միքիոնի ճաշակների և բնավորությունների տարբերության համապատասխան էլ երիտասարդները տարբեր դաստիարակություն են ստանում: Դեմեասը հին սկզբունքներին՝ սարսափով ազդելու կողմնակից է, Միքիոնը, լինելով ազատ դաստիարակության կողմնակից, ջանում է իր սանի մեջ զարգացնել ներքին արժանապատվության զգացմունք, և իր հարարերություններն էսքինի հետ շրջապատում է անկեղծության մթնոլորտով, ներողամտորեն վերաբերվելով նրա երիտասարդ ձգտումներին: Ծիշտ է, էսքինը, ամաշում է իր հոգեհորը պատմել, որ միացել է չբավորացած ընտանիքի մի աղջկա հետ և սպասում է երեխայի, բայց այդ ազնիվ սեր է, որը երիտասարդը մտադիր է ավարտել ամուսնությունից: Քտեսիփոնն էլ է սիրահարվել, նրա սիրածը կիթար նվագող է. նրան պետք է խլել կավատից, բայց որովհետև Քտեսիփոնը վախենում է հորից, այդ ծառայությունը նրան մատուցում է էսքինը, ուժով խլելով աղջկանը տիրոջից: Հանրային խաչատառակությունը հուզում է ամբողջ շրջապատին: Հուզված է

էսքիւի հարսնացուի ընտանիքը, բայց առանձնապէս ետում է Դեմեաւը, որը դրա մեջ տեսնում է ներողամիտ դաստիարակութեան կործանարար հետեանքը: Ալեկի է սրվում նրա հիասթափութեանը: Իր պարզվում է, որ կիթար նվագող աղջիկը փախցված է փոքր որդու համար, որին ինքն է դաստիարակել խիստ սկզբունքներով: Մյուս կողմից, Միքիտնի ազատամտութունը հեշտութեամբ վերացնում է ծագած բոլոր դժվարութունները. նրա համար ամուսնութունը դրամական գործարք չէ, և նա խոչընդոտ չի տեսնում. Էսքինի և անօթիտի ամուսնութեան գործում: Հեկկեհիստական փիլիսոփայութեամբ ղեկավարվող Միքիտնի սխտեմը, այսպիսով, ընդհանուր բարորութեան է հասցնում: Դեմեասի սխտեմը տապալվում է, զղվանք է առաջացնում նրա սեփական որդու մեջ: Դեմեասը և Միքիտնի այլ լույսի տակ են պատկերվում պիեսի վերջում: Դեմեասը, ծաղկելով եղբոր ներողամտութունը, սկսում է ընդհանուր համակրանք գրավել, գիմադրելու անընդունակ Միքիտնին ստիպում է ամուսնանալ Էսքիտնի հարսնացուի տարիքավոր մոր հետ և ապացուցում է, որ Միքիտնի սխտեմը հիմնված է թուլութեան և շափազանց երես տալու վրա. ղավակներին խելացի խորհուրդ միայն ինքը՝ Դեմեասը՝ կարող է տալ: Այս անսպասելի ֆինալն արդեն Տերենտիուսին իրեն է պատկանում. ըստ անտիկ մեկնաբանի հաղորդման, նա այստեղ հեռացել է Մենանդրի բնագրից: Հոսմի համար Մենանդրոսի «Ներաչայնի» տեղեկանքն անընդունելի էր, և հոռոմեական պոետը կարիք է զգացել որոշ շահով փոխհատուցել Դեմեասին՝ խստութեան սկզբունքի ներկայացուցչին: Տերենտիուսի պիեսի բարոյախոսութունն, ակներև, այն է, որ Դեմեասի և Միքիտնի սկզբունքները միակողմանի են, և քուղիդ գիծն ընկած է ինչ-որ մեջակողմ:

Հունական պիեսների Տերենտիուսի մշակման մեթոդների մասին մենք ավելի ենք իրազեկ, քան Պլատոնի աշխատանքի եղանակի մասին: Այստեղ մեզ օգնութեան են հասնում Դանատուսի ցուցմունքները, որը նշում է Տերենտիուսի կարևորագույն շեղումներն իր բնագրից, և հեղինակի իրեն վիպագութունները իր կատարակերպութունների նախերգանքներում:

Նախերգանքները գրեթե բացառապէս նվիրված են գրական բանավեճի: Տերենտիուսն ստիպված էր բախվել ուժեղ օպորտյունի հետ, որը ելնում էր Յեցիլիուսի դպրոցից: Երիտասարդ պոետին հանդիմանում էին բնագրերի հետ ազատորեն վարվելու գլխավորապէս կոնտամինացիայի համար, լուրեր էին տարածում:

«ս իբր թե նա ինքը չէ իր կատակերգությունների հեղինակը: Նա-  
խերդանքները, որոնց մեջ Տերենտիուսը պատասխանում է իբր  
հակառակորդներին, իրենցից ներկայացնում են հոռմեակամ  
գրական քննադատության ամենավաղ վավերագրերից մեկը: Ե-  
ճառ ուշագրավ են այդ ժամանակվա հայացքները ստեղծագոր-  
ծության ինքնուրույն լինելու մասին. հունարենից թարգմանված  
պիեսը դիտվում է որպես ինքնուրույն երկ, բայց օգտագործելն  
այն, որը լատիներեն վերամշակման է ենթարկվել, համարվում էր  
«գողություն», գրական պլագիատ:

Տերենտիուսը պաշտպանում է կոնտամինացիան, վկայակո-  
չելով Նեվիուսին, Պլավտուսին և էննիուսին, և ուղղակի անվանում  
է այն պիեսները, որոնցից օգտվել է հիմնական ֆարսուլան հարս-  
տացնելու համար: Այսպես, «Անդրոսուհին» կազմված է Մենան-  
դրոսի կատակերգություններից՝ «Անդրոսուհուց» և «Պերինթոսու-  
հուց», Մենանդրի «Ներքինի»-ի մեջ մայցված են դեմքեր նույն հե-  
ղինակի «Շողոքորթ»-ից. «Եղբայրները» հիմնված են Մենան-  
դրի վրա, բայց այն տեսարանը, ուր էսքինը խում է աղջը-  
կանը կավառից, վերցված է Գիֆիլոսից: Սակայն Տերեն-  
տիուսը կոնտամինացիան այնպես է անցկացնում, որպեսզի  
այն շխտագարի սյուժեի ամբողջականությունը և բնավորույուն-  
ների հաջորդականությունը: Ծշգրտորեն չհետևելով հունական  
պիեսի գործողության ընթացքին, նա պահպանում է հաջորդակա-  
նորեն զարգացող դրամայի կառուցվածքային տիպը և հենց գրա-  
նով վերարտադրում է բնագրի ոճը:

Դիմամիկ մոմենտը, միանգամայն աննշան լինելով վաղ պի-  
եսներում («Անդրոսուհի», «Սկեսուր», «Ինքն իրեն պատժողը»),  
հետագայում ուժեղանում է («Ներքինի», «Յորմիտն», «Եղբայր-  
ներ»): Հեղինակն, ըստ երևույթին, անհրաժեշտ է համարել որոշ  
զիջում անել հասարակության սովորություններին և ճաշակին: Ի-  
լուզիայի խախտումը, որ հաճախ է Պլավտուսի մոտ, Տերենտիու-  
սի պիեսներում վերացված են: Նրա պիեսներում գործողության  
ժամանակ չեն դիմում հասարակությանը, չի լինում հոռ-  
մեական և հունական կենցաղային գծերի խառնում: Երբ Տերեն-  
տիուսը հունական պիեսներում հանդիպում է տեղական սպեցի-  
ֆիկ գծերի, նա կամ բոլորովին բաց է թողնում այդ կամ փոխա-  
րինում է որևէ չեղոք մոմենտով, բայց ոչ սպեցիֆիկ հոռմեակա-  
նով:

Իր հումեական նախորդների համեմատությամբ Տերեն-

տիւար զգալիորեն պարզեցրել է կատակերգութեան երաժշտական ֆողմը: Բարդ լիրիկական պարտիաներ, որոնք սիրում էր Պլալտուար, Տերենտիուսի մոտ արդեն չենք հանդիպում, այդ ամէլի մոտենում էր մենանդրոսյան կատակերգութեան խիստ ձևին. «Իրաւօրը վարելիս Տերենտիուսը խուսափում է ծաղրածութունից և կոպտութունից: Մենանդրոսի օրինակով նա հետևում է առօրյա լեզվի ոճին, և դրա համար հակառակորդները նրան հանդիմանում էին «ցածրանալու» մեջ: Տերենտիուսի լեզուն՝ հոմերական կրթված հասարակութեան լեզուն է, որը «մաքուր» լատիներենի նորմա է դառնում:

Ըստ անտիկ մեկնարան էվանտիուսի (V դ. մ. թ.) նկատողութեան Տերենտիուսի կատակերգութեանները աչքի են ընկնում հիանալի չափի զգացումով՝ «նրանք չեն բարձրանում՝ ողբերգութեան, բայց և չեն իջնում մինչև միմի գոհակութունը»:

Ուշադրութեան արժանի է Տերենտիուսի դրամատուրգիայի մի առանձնահատկութունը: Ինչպես մենք գիտենք անտիկ կատակերգութունը հանդիսատեսի համար գաղտնիք չէր ստեղծում: Այն, ինչ որ գործող անձանց հայտնի էր դառնում միայն եզրափակիչ «ճանաչումից» հետո, հասարակութեանը հաղորդվում էր արդեն նախապես, նախերգանքում, և կատակերգութունը այնպես էր կառուցվում, որպեսզի գործող անձանց սխալ ուղիները ղվարճացնեն հանդիսատեսին: Առաջին անգամ Տերենտիուսի մոտ ենք մենք նկատում շեղումն այդ դրամատուրգիական տրագիկիայից: Նրա բոլոր պիեսները, բացի «Ճղբայրներից», իրենց մեջ պարունակում են «ճանաչելու» մոմենտը, այնինչ Տերենտիուսը հրաժարվում է էքսպոզիցիայից նախերգանքում, հանդիսատեսին թողնում է անտեղյակ այն մասին, ինչ որ դեռ հայտնի չէ գործող անձանց իրենց, և խթանում է նրանց հետաքրքրութունը դեպի հանգուցի լուծումը: Իրերի իսկական դրությունն աստիճանաբար է միայն բացատրվում, իսկ այնպիսի պիես, ինչպիսին «Սկեստրոն» է, հանդիսատեսն ընդհուպ մինչև վերջին գործողութունը տվյալներ չունի, որ հնարավորություն տա ֆինալը նախագուշակելու: Այդ հողմից Տերենտիուսի եզանակները մոտենում են նորերոպական դրամայի տեխնիկային: Անհայտ է, թե ում է պատկանում այդ նորմոմոթությունը, արդե՞ք Տերենտիուսին իրեն, թե նորատուրկական կատակերգութեան հետագա ներկայացուցիչներին: Տերենտիուսի հիմնական օրինակը՝ Մենանդրոսը՝ այստեղ չէր կարող ազդելու ծառայել, քանի որ Մենանդրոսը՝ այստեղ չէր հրաժար-

վում է քաղաքացիներին նախերգանքից և, դատելով պահպանված հատվածների հիման վրա, հաճույքով էջ զրան դիմում:

Տերենտիուսի հանդարտ և լուրջ կատակերգութունները մեծ հաջողություն չէին ունենում հոմեական բեմում: Նրան նայում էին իբրև Մենանդրոսի հոմեական զուգահեռ, բայց խոստովանվում էին, որ նա չի կարողացել բարձրանալ մինչև իր ատաղիական օրինակի գեղարվեստական մակարդակը: Կեսարն, օրինակ, նշում է Տերենտիուսի «ուժի» բացակայությունը և նրան անվանում է «կիսա-Մենանդրոս»: Նրան պիտավորապես զնահատում էին որպես ոճաբանի՝ լեզվի նրբագնդության և մաքրության համար: Հոմեական դպրոցի հետաքրքրությունը դեպի Տերենտիուսի ոճական արվեստը մեզ համար փրկեց ոչ միայն նրա սեփական երկերը, այլև դրանց մի շարք անտիկ մեկնաբանությունները: Իր ոճական օրինակ լինելու արժեքը Տերենտիուսը պահպանում էր և Միջին դարերում: X դարում գերմանական միանձնուհի Կրոտվիտան կազմում էր պիեսներ աստվածաշնչի թեմաներով, ընդ որում վերարտադրելով Տերենտիուսի ոճը. ընդօրինակությունը նպատակ ուներ փոխարինել ընագիրը, վանական ընթերցանությունից զուրս մղել կուսպաշտական հեղինակի սիրաչին կատակերգությունները: Հետագա եվրոպական դրամայում Տերենտիուսի պիեսների սյուժեները համեմատաբար հազվադեպ էին վերանորոգվում: Մոլիերը օգտագործել է «Փորմիտը» «Սկապենի արարքների» համար, իսկ «Նղբայրները»՝ «Ամուսինների դպրոցի» համար: Տերենտիուսը հետաքրքրական էր առաջին հերթին իր արխիտեկտոնիկայով. նորատիկական կատակերգության դրամատիկական տեխնիկան եվրոպայում հայտնի էր Տերենտիուսի պիեսներով միայն: Նրա գերն առանձնապես նշանակալի էր XVIII դարում, բուրժուական դրամայի ձևավորման ժամանակաշրջանում: «Արցունքաբեր» կատակերգության, «լուրջ» զավեշտական ժանրի տեսաբանները մասնանշում էին Տերենտիուսին, իբրև իրենց նախընթացի (Գիգո), իսկ Լեսինգը «Համբուրգյան դրամատուրգիայում» տվեց, «Նղբայրների» ընդարձակ վերլուծությունը, համարելով այն օրինակելի կատակերգություն:

## 5. ՔԱՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՐԾԸ ՀՈՍՄՈՒՄ

Համում, ինչպես և Հունաստանում դրամատիկական ներկայացումները կապված էին պաշտամունքի հետ: Դրանք «խաղերի»

տեսակներից մեկն էին, որոնք կազմակերպվում էին տարբեր տնտեսական տարրությաններին ժամանակ: Բեմական խաղերին զուգընթաց, տրվում էին կրկեսային (գլխավորապես ձիաբշտայններ, կապքերի մրցաբշտայններ, որոնց միանում էին և մարմնամարզական մրցումներ, ինչպես օրինակ՝ վաղք, ըմբշամարտ, բնույթամարտ և այլն) և գլադիատորական խաղեր: Կանոնավոր բնույթ ունեին ամեն տարվա «պետական խաղերը», որոնց թիվը զգալիորեն աճեց III դ. վերջին: Դրանք գրեթե բոլորն իրենց կազմի մեջ ընդգրկում էին դրամատիկական ներկայացումներ:

«Հռոմեական» (սեպտեմբերին), «պլեբեյական» (նոյեմբերին), «Ասպրունյան» (հոկտեմբերին), «Մեգալիսական» (Մեծ աստվածամոր պատվին, ապրիլին) խաղերի ժամանակ բեմադրվում էին սղերիզուսներ և կատակերգուսներ: Ֆլորայի (ապրիլի վերջին) խաղերի ժամանակ, որոնք ամենամյա դարձան 173 թից, տրվում էին միմական ներկայացումներ, որոնք թույլատրվում էին նաև մյուս խաղերի ժամանակ: Միմը դեռ երկար ժամանակ մնում էր գրականությունից դուրս, բայց իբրև թատերական ժանր այն սկսեց Հռոմում արմատավորվել III դ. վերջից, միմերը խաղացվում էին և ինքնուրույնաբար և իբրև ինտերմեդիա: Հռոմեական բեմում շարունակում էր պահպանվել և հինավուրց ատելլանան: Եղբերգության ներկայացումից հետո սովորաբար ներկայացվում էր կարճ «եղրափակիչ պիես» — ատելլանա կամ միմ: Արխիի տրագիցիան պահանջում էր, որպեսզի տոնական օրը ուրախությամբ ավարտվի:

II. դ. սկզբից մինչև ուսպուրիկական ժամանակաշրջանի վերջը՝ ամենամյա պետական խաղերի քանակը գրեթե չավելացավ, բայց դրանց տեղությունը խիստ աճեց: «Հռոմեական» խաղերն, օրինակ, ուսպուրիկայի վերջին կատարվում էին 16 օր (սեպտեմբերի 4—19), «պլեբեյականներն» դրողեցնում էին 14 օր (նոյեմբերի 14—17). բնույթնուր անամբ բեմական ներկայացումներին տարեկան ընկնում էր 48 օր, ընդ որում ներկայացումները գնում էին վաղ առավոտից մինչև երեկո: Կանոնավոր խաղերին, սակայն, միանում էին, արտահերթական պետական կամ մասնավոր խաղերը: Խաղերը կազմակերպվում էին մերթ որպես ֆիատարումն մագիստրատի կողմից աստվածներին տրված ուխտի, մերթ հանուն տաճարների և այլ շենքերի օժանդակ, վերջապես, հալթական երթերի և համբավավոր անձանց թաղման ժամանակ: Ռեսպուբլիկայի վերջին հարյուրամյակում փարթամ խաղերի կազմակերպումը՝ ժողովրդականությունը և նրա բերելու միջոցներից

մեկը, ընտրովի պետական պաշտոնների սանդուխքով առաջ շարժ-  
վելու գեներ էր դարձել: Հանդեսների քանակն ու փարթամությունը  
էլ առավել աճեցին կայսրության ժամանակաշրջանում: Խաղերին  
հաճախելը ձրի և հանրամատչելի էր: Մասնավոր խաղերը կազ-  
մակերպվում էին կազմակերպողների հաշվին. պետականները  
գտնվում էին մագիստրատների տնօրինության ներքո և ֆինանս-  
ավորվում էին գանձարանից, բայց խաղերի փարթամությունն  
աճելով, պետությունից բաց թողնվող միջոցներն արդեն անբա-  
վարար էին դառնում, և մագիստրատներն ստիպված էին լինում  
գումարներ ծախսել իրենց միջոցներից: Այդ ծախսերը, սակայն,  
մեծ ավելցուկով ետ էին բերվում, երբ մագիստրատը աչնպիսի  
պաշտոնների էր հասնում, որոնք իրավունք էին տալիս պրովին-  
ցիաները կառավարելու:

Բեմական ներկայացումների ծրագիրը, պիեսների ընտրու-  
թյունը, դերասաններ վարձելը, խաղի համար շենքի կահավորումը,  
քանի դեռ մշտական թատրոն չկար, — այդ բոլորն ամբողջությամբ  
ընկած էր խաղերի կարգադրիչի վրա: Հասկանալի է, որ  
գործնականում մագիստրատն ինքն անձնապես չէր մտնում այդ  
բոլոր մանրամասնությունների մեջ, այլ համաձայնության էր գա-  
լիս որևէ անտրեպրենյորի հետ: Տերենտիուսի բոլոր կատակերգու-  
թյուններն, օրինակ, բեմադրել է անտրեպրենյոր Ամբրիլիուս Տուր-  
պիոնը ընդ որում ինքն էր խաղում գլխավոր դերերը: Չվարանն-  
ելով առանձին անհաջողություններից, նա համառորեն հասարա-  
կությանը ծանոթացնում էր երիտասարդ պոետի երկերի հետ:

Հռոմեական բեմական խաղերը, գոնե Պլավտուսի և Տերեն-  
տիուսի ժամանակներում, պոետիկական մրցման բնույթ չունեին,  
բայց աչքի ընկած դերասանական խումբը մագիստրատից ստա-  
նում էր որոշ պարզև: նշանակալի չավով այդ կախումն ուներ  
աչն ընդունելությունից, որը ցույց էին առելիս պիեսին հանդիսա-  
տեաները, և Հռոմում արագորեն տարածվեց կրկայի սովորույթը:

Թատերական շենքն սկզբում ժամանակավոր բնույթ ուներ:  
Հրապարակում կառուցվում էր թատերաբեմ, իսկ հասարակությունը  
նր խաղը դիտում էր կանգնած: II դ. սկզբին սկսեցին բեմի առաջ  
հրապարակից տեղ առանձնացնել սենատորների համար, և ան-  
վանի հանդիսատեսները կարող էին նստել բազկաթոռներին,  
որոնք բերում էին ստրուկները տներից: Մշտական թատրոն կա-  
ռուցելու փորձերը, սակայն, բախվում էին պահպանողականների

գլխավորութեանը: Հունաստանը նվաճող Լ. Մումֆրուն անաշին անգամ իր հաղթախաղերի համար (146 թ.) կառուցեց լրիվ թատրոնական շէնք, հանդիսատեսների տեղերով, բայց դրանք ժամանակավոր փայտե շէնքեր էին, որը խաղից հետո քանդում էին: Մեր թ. ա. 55 թվին միայն Հռոմն ունեցավ իր անաշին քարաշէն թատրոնը, որը կառուցեց հայտնի զորավար Գնետու Պոմպեոսը: Հռոմեական թատրոնները կառուցվում էին հունականի օրինակով, բայց որոշ շեղումով: Հանդիսատեսների տեղերը բարձրանում էին շարքով օրինաւորալից վերև և ուղիղ կիսաշրջան կազմում. սակայն, օրինաւորան էլ հանդիսատարհի մի մասն էր և այն առանձնացված էր սենատորների համար: Հանդիսատեսներին տեղավորելու այդ «գասային» սկզբունքը հետագա զարգացում ստացավ մ. թ. ա. 67 թվին, երբ Ռոսցիուսի օրենքով օրինաւորալից վերև անաշին 14 շարքը հատկացվեց երկրորդ արտոնյալ դասի՝ հեծյալների համար: Ինչպես և հելլենիստական ժամանակի հունական թատրոնում, դերասանները խաղում էին բարձր էստրադայի վրա, բայց հռոմեական էստրադան ավելի ցածր և ավելի լայն էր հունականից և կողքից սանդուխտներով միանում էր օրինաւորալի հետ: Այդ կառուցումը հիշեցնում է հարավիտալիկական ֆլիալիների բեմը, որը, հավանորեն, իր հետքերն է թողել իտալիկների, իսկ այնուհետև նաև հռոմեական թատրոնի օրինակով հռոմեական թատրոնում մտցվեց վարագույրը, որն ի տարբերութեամբ ժամանակից իջեցվում էր ներքև ներկայացումն սկսելիս և բարձրացվում էր վերև՝ վերջանալուց հետո: Մեխանիկական սարքավորումն այդ ժամանակ զգալիորեն լծել էր, համեմատած V դ. ատալիկական թատրոնի հետ: Առաջվա պես թատրոնն առանց տանիքի էր, բայց անաշին դարում արդեն արևից պաշտպանվելու համար փոստ էին ծիրանագույն կտավ:

Հռոմեական թատրոնում հաստատվեց իր տրադիցիաները: Այսպես, արիանների («կանտիկոմեների») կատարումը բաժանվում էր դերասանի և հասուկ «երգչի» միջև, ընդ որում, դերասանը սահմանափակվում էր պանտոմիմայով, իսկ «երգչին» բաժին էր ընկնում ամբողջ վրկալ մասը, որը կատարվում էր սրինգների հնարակցութեամբ: Հռոմեական դերասաններն սկզբում սահմանափակվում էին շպարվելով և միայն II դարի վերջին սկսեցին չորձադրել հունական տիպի դիմակներ:

Ողբերգութեանները և կատակերգութեանների կանայցի դերե-

ըը, ինչպէս և հուշների մոտ, կատարում էին տղամարդիկ. դերասանուհիները ելույթ էին ունենում միայն միմեքում: Դերասանների սոցիալական գրովելունը բարձր չէր: Դերասանական արհեստը հռոմեական քաղաքացու համար «անպատւութիւն» էր համարվում. նա կարող էր մասնակցել ֆոլկլորային ատելլանայի սրողների խաղին, բայց դերասանութունն, իբրև պրոֆեսիա, կապված էր քաղաքացիական մի շարք իրավունքներից զրկվելու հետ:

## 6. ՊՐՈՉՍ: ԿԱՏՈՆ

Այն պրոֆեսիոնալ գրողները, որոնց գործունեության հետ մինչև այժմ ծանոթացանք, աշխատում էին բացառապես պոեզիայի բնագավառում: Էննիուսի «Եվզեմերը»՝ այդ ժամանակվա հելլենականացված հռոմեական գրականութիւնի միակ պրոզայիկ երկն էր: Պրոզայիկ խոսքի արվեստը բաժին էր մնում ավագանուն և չէր անցնում գրականութիւնի մեջ: Պերճախոսութեամբ հռչակված քաղաքական գործիչները չէին հրապարակում իրենց ճառերը: Հռոմեական պատմագրութիւնը և հրապարակախոսութիւնը սահմանափակվում էր արտաքին քաղաքականութիւնի պրոպագանդայի պահանջներով և հելլենիստական լսարանին դիմում էր հունարեն լեզվով: Ուստի բնորոշ է, որ Հոմերի առաջին ականավոր արձակագիրը եղել է պահպանողականների շրջանից: Այն ժամանակ, երբ հելլենոֆիլ խմբավորումը դիմում էր հռոմեական ծագում չունեցող գրողների ծառայութիւնը, պահպանողականների պարագլուխ Կատոնը գերադասեց անձնապես գործել իբրև իր դրույթների գրական պրոպագանդիստ:

Մարկուս Պորցիուս Կատոնը (234—149) ծագում էր աննշան տոհմից և հռոմեական արիստոկրատիայի շրջանում «նորմարդ» էր, որն առաջ էր քաշվել շնորհիվ իր անձնական ծառայութիւնների: Նրա ամբողջ գործունեութիւնի միջով յուրատեսակ հակասութիւն է անցնում. պաշտպանելով հին հռոմեական կյանահակասութիւն է անցնում. ազատ մանր սեփականաւորներին եղանակը, որի հենարանը ազատ մանր սեփականաւորներն էին, Կատոնն ինքը գործնականում արդեն տիպիկ ստրկատեր էր: Բոլորովին շոտարկելով տնտեսական բեկման պլանտատոր էր: Բոլորովին շոտարկելով տնտեսական բեկման դեմ, որն ընկած էր հռոմեական հասարակութիւնի սոցիալական և կուլտուրական փոփոխութիւնների հիմքում, նա պայքարում էր առաջ փոփոխութիւնների առանձին արտահայտութիւնների՝ Սկիպիոն Ալազի կողմից կիրառվող քաղաքականութիւնի նոր մեթոդի,

պերճանքի, կենցաղի հելլենականացման դեմ: Այդ պայքարն աչքի չէր ընկնում իր հետևողականութեամբ և առավելապես ուղղված էր առանձին անձնավորությունների դեմ: Կատոնը դատի էր տալիս նորիլիտատի ակնաւոր ներկայացուցիչներին. 184 թվին կատարելով «ցենզորի» պարտականություններ, նա շատ մարդկանց վտարեց սենատորական դասից՝ ոչ-հռոմեական կյանքի եղանակի համար: Մերության հասակում նա մտաեցավ իր հակառակորդների հետ Սկիպիոնների խմբից՝ իտալիական մասն սեփականությունը պաշտպանելու հողի վրա: Այդպիսի երկդիմությունն էլ բնորոշում է Կատոնի կուլտուրական քաղաքականությունը, ելնելով հույների կուլտուրական ազդեցության դեմ, գործնականում նա ենթարկվում է այդ ազդեցությանը և նույնիսկ ընդունում է որոշ, ոչ շահագնաց խորացված հունական կրթության հետ ծանոթ լինելու օգտակարությունը:

Իննելով գործնական և գործունյա, Կատոնն ըմբռնում էր, որ Ֆրիթության հին հռոմեական սիստեմը, որը վեր էր անվում կարգաւու գրեկ կարողանալու և արարողական ու իրավաբանական ֆորմուլաների ծանոթության, արդեն չի բավարարում տնտեսական և քաղաքական պահանջներին: Բայց հունական գիտությանը դիմելու սխիսարեն, նա առաջարկում է հռոմեական գործչին անհրաժեշտ գիտելիքների իր սեփական սիստեմը, և կազմում է մի ամբողջ շարք ձեռնարկներ, պրակտիկ գործունեության տարբեր ձևերի համար: Գյուղատնտեսությունը, բժշկագիտությունը, ճարտասանությունը, ռազմական գործը, իրավագիտությունը, — այս բոլորն ընդգրկված է Կատոնի աշխատություններում: «Իմ որդուն՝ Մարկուսին» տրակտատը պարունակում է յուրահատուկ մի էնցիկլոպեդիա՝ խրատների հինավուրց ձևով: Անտիկ դրողներն այդ տրակտատից պահպանել են մի շարք բնորոշ աֆորիզմներ՝ «Ծուլությունը՝ մայրն է արատների», «Գնիր ոչ թե այն, ինչ հարկավոր է, այլ ինչ որ անհրաժեշտ է, — ինչ որ հարկավոր չէ, այն միշտ մի ասով շահագնաց թանկ է», «Առարկան տիրապետիր, խոսքերն իրենք կզան»: Ըստ Կատոնի՝ բառերը հոսում են հույների բերանից, իսկ հռոմեացիների սրտից: Կատոնի կարծիքով՝ հռետորը «ընտիր մարդ է խոսքի վարպետությունը»: «Ընտիր մարդու» հատկություններին են վերաբերվում, բացի ողջամիտ և պահպանողական մտածելակերպը, նաև եկամուտները բազմացնելու և օգուտ քաղելու ունակությունը: «Հողագործության մասին» Կատոնի տրակտատը, միակ

ամբողջութեամբ մեղ հասած նրա այդ երկը, այդ կողմից ստրկատիրական հասարակութեան գլուղատնտեսական էկոնոմիկայի մի կլասիկ վավերագիր է:

Կատոնի ոճարանական արվեստը ամենից շատ նկատելի է նրա ևառեճում, որոնք նա պահել և ծեր հասակում մշակել է: Պահպանված ֆրագմենտները վկայում են նրա ուժեղ, ցայտուն և հասարատ լեզվի, համարձակ բառատեղծման, իտալիկական պերճախոսութեան եղանակների գործադրման մասին, միայն, սակայն հունական հեռուրական արվեստի երկերը կարգացած լինելու հետ: Այդ ճառերից շատերը հեղինակը մտցրել էր իր պատմական աշխատութեան մեջ, որի վրա աշխատում էր իր կյանքի վերջին տարիներին:

Կատոնի «Սկիզբները» (Origines) սկզբնավորում են հռոմեական պատմագրութեանը լատիներեն լեզվով, որքանով հռոմեական առաջին պատմաբանները գրում էին հունարեն: Հռոմեական պատմութեան միակ շարագրութեանը լատիներեն լեզվով էնիլուսի «Աննալներն» էին, որի՝ առանձին անձնավորութեաններին մեծարելու գրույթին Կատոնը թշնամարար էր վերաբերվում: Նա չէր ցանկանում «աննալիստ լինել զեպքերը տարեցտարի շարագրելու իմաստով, որոնք նրան աննշան էին թվում: Կատոնի խնդիրն է՝ նախնիքների սովորութեանի նկարագիրն ու զովարանելը: Նրա պատմագրականութեան համար բնորոշ են երկու մոմենտ: Նախ՝ Կատոնն մոլգականութեան համար բնորոշ էր ուշագրութեանը չէր սահմանափակում Հռոմով և շարագրում է իտալիկական տարբեր համայնքների ծագումը (այստեղից էլ՝ «Սկիզբներ» վերնագիրը). նա ջանում էր լուսնային մատնել առանձին գործիչների անունները և հատուկ անունները փոխարինում էր պաշտոնի մատնանշումով՝ «կոնսուլ», «տրիբուն»: Սակայն, այդ լուսնային հեղինակի անձնավորութեան վրա չէր տարածվում: Չդիմելով շինծու ճառերի մեթոդին, որ սովորական էր հույն պատմաբանների համար, Կատոն իր պատմութեան մեջ մտցնում էր իսպախ իր ճառերը: Շարագրութեանը հասցվում է մինչև հեղինակի մահվան տարին: Իտալիկների համայնքների պատմութեան համար Կատոնն ստիպված էր զմեղու հունական աղբյուրներին. հունական կրթութեան հակառակորդը դրանից օգտվում էր ոչ միայն լայնորեն, այլ նույնիսկ ավելորդ վստահութեամբ:

Հունական կուլտուրական ազդեցութեան դեմ Կատոնի օպոզիցիան տապալվեց հենց իր սեփական գործունեութեամբ: Հելլենոֆիլ արխատոկրատիայի շրջաններից ծնունդ առած առասպելը Կատոնին

պատկերում է որպես իդեալական հոմեացի, հոմեական բոլոր  
«քաջարիությունների» մարմնացում, և ավելացնում է, որ ձեր հա-  
սակում Կատոնը փոխեց իր բացասական վերաբերմունքը դեպի  
հունական կուլտուրան:

---

## ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳՍՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳՍՐԻ ՀՌՈՄԵՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Մեր թ. ա. II դարի երկրորդ կեսից Հռոմը թլակոխում է սոցիալական սուր պայքարի, իսկ այնուհետև նաև քաղաքացիական պատերազմների շրջանը: Ստրուկոնների ապստամբությունը (136 և 104 թ. թ.), Գրակոսների ղեկավարած շարժումը՝ հօգուտ պետական հողի վերաբաժանման (133 և 121 թ. թ.), արխատոկրատական ռազմական հրամանատարության խայտառակ տապալումը II դ. վերջին, «դաշնակիցների պատերազմը» (91—88 թ. թ.), որը հռոմեական քաղաքացիության իրավունք բերեց իտալիկներին, քաղաքացիական պատերազմը (87—82 թ. թ.) և Սուլլայի արխատոկրատական ղեկատարության (82—79 թ. թ.), ստրուկոնների վիթխարի ապստամբությունը Սպարտակի ղեկավարությամբ (73—71 թ. թ.), «Կատիլինայի դավադրությունը» (63 թ.), երեք գործիչների («արխոմվիրատ»)՝ Պոմպեոսի, Կեսարի և Կրասոսի դաշինքի փաստական ղեկատարությամբ հաստատելու համար (60 թ.), քաղաքացիական պատերազմը Կեսարի և Պոմպեոսի միջև և Կեսարի ղեկատարության (49—44 թ. թ.), նոր քաղաքացիական պատերազմը Կեսարի սպանությունից հետո և պայքարը նրա հաջորդներ Սևտոնիոսի և Օկտավիանոսի միջև — սբանք են II և I դ. դ. սոցիալական պայքարի ամենանշանավոր մոմենտները, որոնք կորցիալական պայքարի ամենանշանավոր մոմենտները, որոնք կորցնում են հաստատուն հասցրին ռեպուբլիկական կարգերը Հռոմում և հաստատեցին հռոմեական կայսրությունը (մեր թ. ա. 30 թ.):

Հռոմեական պետական կառուցվածքի պոլիսային ձևը հակասության մեջ մտավ վիթխարի ստրկատիրական պետության պահանջների հետ, մի պետություն, որը կարիք էր զգում ավելի լայն սոցիալական բազայի, քան «հռոմեական քաղաքացիներին» ամբողջ-

չահանութիւնն էր: Կալվաժատիրական խոշոր տնտեսութեան ամբ հետեանքով հողազրկից մանր գյուղացիութիւնը, որն ի վիճակի չէր մրցելու ստրկատիրական հողատիրութեան հետ: Գյուղացիական հողատիրութեան վերականգնման նպատակով պետական հողերի վերաբաժանման վերարեբաշխումների առաջարկած նախագծերի անհաջողութիւնը պահպանեց պոլիսային սխառեմի մասին հին հայացքների պարտութեամբ պետական հողն իրենց տիրակալների մասնավոր սեփականութիւնը հայտարարուեց:

Հստակապէս ստրկատիրական հասարակութեան միջավայրում շերտավորումը հուշ նշանակալի շափերի հաւասարում: Ստրկատիրական վերնախավը՝ սենատորական դասը տիպիկ օլիգարխիա էր ներկայացնում: Նա իր մենաշնորհն էր դարձրել քաղաքական ղեկավար պաշտոնները, որոնք միաժամանակ լայն հնարավորութիւններ էին բացում ռազմական ավարտի յուրացման և պրովինցիաները կողոպտելու համար: Արդեն II դարում նրա շարքերում բարոյական քայքայում առաջացավ: Տրոհվելով մի շարք մանր, միմյանց հետ թշնամացած խմբավորումների և կիլիկաների, այդ վերնախավը համերաշխ էր միայն մի բանում, այն է՝ իր դասակարգի արկի սակավ «անվանի» ներկայացուցիչներից սահմանադատուիլու ձգտման և ճնոր մարդկանց» իր միջավայրը շրջապատելու մեջ: Սենատական «նորիլիտեաթի» և երկրորդ ցենզային դասի՝ հեծյալների միջև էական տարաձայնութիւններ կային: Ուստի օպոզիցիայի խնդիրն էր՝ թուլացնել սենատի նշանակութիւնը և քաղաքական կյանքի ծանրութեան կենտրոնը վախճարել ժողովրդական ժողովը: Կազմվեց երկու պարտիա՝ սենատական («օպոսիմատներ») և «ժողովրդական» («պոպուլյարներ»): Բայց օպոզիցիոն շերտերի շահերը տարատեսակ էին, և նրանց միջև առաջացած կոալիցիաները ժամանակավոր բնույթ էին ունենում:

Ստրկատիրական դասակարգի մյուս բևեռումն էր գտնվում այսպէս կոչված «պրոլետարիատը»\*, այսինքն հողազրկված անարտադրողական խավերը, որոնք ապրում էին նորիլիտեաթի վշրանքնե-

\* Անտիկ «պրոլետարիատ» տերմինը համապատասխանում է արդի «լուսնային-պրոլետարիատին»: Այդ առթիւ Մարքսը քաղում է «Միսմոնդիի դիպոկ նկատողութիւնը՝ հստակապէս պրոլետարիատն ապրում էր հասարակութեան հաշվին, մինչդեռ արդի հասարակութեան ապրում է պրոլետարիատի հաշվին» («Քրիստոսի 18»-ի 2-րդ հրատ. առաջաբանը. Տօպ., տ. XII, I, 1936, ցր. 313

քով և ողորմություններով, ընտրության ժամանակ իրենց Հայները տալիս էին նրանց, մարդկային նյութ էին մատակարարում վարձու բանակների համար կամ արիստոկրատիային ծառայող հելուզակախմբի համար: Այդ ապագասակարգայնացած մասսաները, իրենց, Թևկուզ և փոքր բաժինն էին պահանջում այն եկամտանե-  
րից, որոնք կորցրած էին ստրուկների և պրովինցիաների բնակչու-  
թյան շահագործումից:

Ինչպես մատնանշում է Մարքսը, «...հին Հռոմում դասակար-  
գային պայքարը տեղի էր ունենում միայն արտոնյալ փոքրամաս-  
նության ներքում, ազատ հարուստների և ազատ աղքատների  
միջև, մինչդեռ բնակչության վիթխարի արտադրողական մասսան՝  
ստրուկները՝ լուի պասսիվ պատվանդան էին ծառայում այդ պայ-  
քարողների համար»<sup>7</sup>: Եվ հռոմեական հասարակության գրությունն  
առավել ևս բարդ էր, քանի որ այդ «պատվանդանը» ժամանակ  
առ ժամանակ սկսում էր ուժգնորեն տատանվել:

Վերնախավի հարստանալու և անարտադրողական բնակչու-  
թյունը պահելու համար նոր նվաճումներ էին պահանջվում: Հռո-  
մեական ռեսպուբլիկայի քայքայումն ընթանում էր տենդագին  
էքսպանսիայի, Ասիայի հելլենիստական պետությունները զավթելու  
և զեպի հյուսիս՝ Գալլիա ու Գերմանիա առաջ շարժվելու ֆոնի վրա:  
Այժմ հարկ եղավ գյուղացիական բանակը փոխարինել վարձկան-  
ների պրոֆեսիոնալ բանակով, որը հեշտությամբ զործիք էր դառ-  
նում զորավարների ձեռքին, որոնք իրենց զինվորներին առատորեն  
վարձատրում էին ռազմական ավարով, դրամով և հողով: Արիստո-  
կրատիան ստիպված էր հաշտվել այն դրության հետ, որ զորա-  
վարները կազմում էին սեփական բանակներ, ստանում էին մի  
վարները կազմում էին սեփական բանակներ, ստանում էին մի  
շարք տարիների լիազորություն և դառնում էին ինքնուրույն տիրա-  
կալներ: Ռեսպուբլիկական կարգերը միառժամանակ զեռ կանգուն  
էին շնորհիվ զորավարների միմյանց հետ մրցակցության, բայց  
էին չի նորոգվել զորավարների միմյանց հետ մրցական հեռանում էր ակ-  
տիվ քաղաքական պայքարից: Այդ սոցիալական խումբն էր համար

Հռոմեական հասարակության վերնախավի և նրա ապագասա-  
կարգայնացած ստորին խավերի միջև ընկած լայն միջնաշերտը,  
որը հռոմեական հզորության երբեմնի հենարանն էր, քաղաքացիա-  
կան պատերազմների ծավալվելու հետ միասին հեռանում էր ակ-  
տիվ քաղաքական պայքարից: Այդ սոցիալական խումբն էր համար

\* Маркс и Энгельс, Соч., т. XIII, 1, 1936, стр. 313.

նշանակալի օգուտներ շէր սպասում այս կամ այն պայքարող կողմից և վտանգի էր ենթարկում իր փոքրիկ կարողութիւնը, եթէ ակտիվորեն պաշտպաններ այն կողմին, սրբ պայքարում պարտութիւն կկրեր: Որոշ քաղաքական կոնսերւատիւզմը, դեպի անցյալը դիմադարձ լինելը և սարսափն ապագայից, դեպի արագիցիոն դարերով սրբագործված, պետական կառուցվածքը չհաղթահարված վստահութիւնը՝ զուգակցվում էին այստեղ ակտուալ քաղաքական վեճերի հանդեպ անտարբերութեան հետ: Այդ ինդիֆերենտիզմն առանձնապես նկատելի է դառնում ռեսպուբլիկայի վերջին տասնամյակներում:

Պոլիսային հարաբերութիւնների քայքայման և ռեսպուբլիկական կարգերի կործանման պայմաններում՝ Հոռմի իդեոլոգիական կյանքը բարդանում է: Հելլենականացման վերաբերյալ հարցի շուրջը եղած կոլտուրական պայքարը անցյալ էր դարձել: Տրադիցիոն իդեոլոգիայի և փոփոխված սոցիալական հարաբերութիւնների հակասութիւնները պարզորոշութեամբ դրսևորվեցին Գրակոսների ժամանակ: Հոլի վերարաժանման մասին Տիբերիուս Գրակոսի օրինագիծը, իրավաբանորեն լինելով անբասիր և հին հոռմեական իրավական պատկերացումներին համապատասխանող, սեփականատերերի մեջ վրդովմունք առաջացրեց իբրև «անարդարացի»: Սեփականութեան հարաբերութիւններն արդեն չէին տեղավորվում հին իդեոլոգիական շրջանակներում: Ստրատիբական վերնախաւին այժմ խիստ կերպով իրար հակադրում էր «գրված իրավունքը» և «արդարութիւնը» կամ բնական իրավունքը, և «բնական իրավունքի» նորմերը հիմնավորում է հոռմեական ուսմունքներով: Քաղաքացիական իրավունքի» և ժողովուրդների իրավունքի դուալիզմն արդեն անհետանում է. հելլենիստական իրավական սկզբունքները, որոնք ընկած էին «ժողովուրդների իրավունքի» հիմքում, թափանցում են ներհոռմեական հարաբերութիւնների մեջ և բերում են հոռմեական իրավունքի նոր վերամշակման («պրետորյան իրավունքը»)՝ զարգացած ստրատիբական հասարակութեան պահանջներին համապատասխան: Հին հոռմեական աշխարհայացքի արխաիկ «ֆորմալիզմը» վերջնականապես հաղթահարվում է:

Այդ պրոցեսում հարկ կա առանձնակի նշել հոռմեական իդեոլոգիայի երկու ճյուղերի նշանակութիւնը, որոնք նոր մտավոր հոսանքների աղբյուր դարձան հոռմեական հասարակութեան մեջ:

Այդ հունական փիլիսոփայությունը և հունական նարտասանութունն էին:

II դարի առաջին կեսին այդ գիտցիպլինները դեռ վտանգավոր նորմոծություններ էին համարվում: Այսպես, 161 թվին փիլիսոփաները և ճարտասանները վտարվեցին Հռոմից: Երբ 155 թվին իբրև ղեկավաններ Հռոմ եկան աթենական փիլիսոփայական դպրոցների ղեկավարները և հանդես էին գալիս հանրային դաստիարակություններով, ծերունի Կատոնը միջոցներ ձեռք առավ, որպեսզի սենատոն շտապ լսի այդ ղեկավաններին և շերկարացնի նրանց Հռոմում մնալը: Սակայն, տրագիցիոն բարոյախոսության վերահաս քայքայումը պետութայն մեջ և ընտանիքում՝ հետաքրքրություն բարձրացրեց ղեկի հունական փիլիսոփայական ուսմունքները: Հունական հասարակության հոմոֆիլորեն տրամադրված վերնախավին ընդառաջում էր այդ հետաքրքրությունը և իր տեսությունները հարմարեցնում էր հռոմեական նորիլիտետի կարիքներին: Հույն պատմաբան Պոլիբիոսը (մոտավորապես 201—120 թ. թ.), որը մի շարք տարիներ (167—150 թ. թ.) ապրել էր Հռոմում՝ իբրև պատանդ և մոտ էր Սկիպիոն Կրտսեին, դարձավ հռոմեական աշխարհակալության առաջին տեսարանը: Հռոմի հաջողությունները նա բացատրում էր հռոմեական պետական կարգերի կատարելությունը, որտեղ իբր թե պառաճ կերպով միախառնված են կառավարման բոլոր երեք ձևերը (մոնարխիա, արիստոկրատիա և դեմոկրատիա), որոնք սահմանել է հունական պետական դիտության տեսությունը: Ըստ Պոլիբիոսի, պարզ, անխառը կառավարման ձևերը անխուսափելիորեն վերասերվում են, փոխանցվում են մեկը մյուսին և դառնում են մշտական, խստորեն կանխորոշված շրջապատւյառում, իսկ միախառը ձևը, իրագործված կանխելով Հռոմում, ստեղծում է իդեալական պետական հավասարակշռություն և անասանորեն հաստատուն է: Այդ ուսմունքով հռոմեական նորիլիտետը տեսական հիմնավորում ստացավ այն տրագիցիոն պետական կառուցվածքի համար, որին նա պահանջան էր կանգնած: Սկիպիոն Կրտսեի շրջանում կապ էր հաստատվում հունական դիտության ու փիլիսոփայության և հռոմեական ավագանու իդեոլոգիական պահանջների միջև: Այդ նպատակի համար պետանի փիլիսոփայական սիստեմ ստեղծեց Պանեթիոսը (մոտավորապես 180—110 թ. թ.), այսպես կոչված «միջին Ստոալի» հիմնադիրը: Այդ էկլեկտիկ փիլիսոփայությունը, լինելով ստոիկության և Պլատոնի ու Արիստոտելի ուսմունքների միավորում, մեղ-

մացնում է հինավուրց Ստոաչի խիստ բարոյախոսությունը: «Կատարյալ» իմաստունի տեղը գրավեցին իմաստության և առաքինության «ձգտող» հոգու արսիտոկրատները: «Ինքնարափ» անհատի խստորեն ինդիվիդուալիստական կոնցեպցիան և դեպի հաչեցողության ձգտումը վերացվեցին այդ փիլիսոփայությունից: Պանեթիոսը ելնում է մարդու, իբրև անհատ հասկացողությունից. անհատը կապված է տիեզերական ամբողջության հետ և «բնական» սոցիալական բնադր ունի: «Առաքինությունը» արտահայտվում է՝ դեպի ընդհանուր բարօրությունն ուղղված գործունյա կյանքի մեջ: Հելլենիստական փիլիսոփայության Հռոմի համար հարմարեցված վարիանտը, աչպիստով, աչքի է ընկնում դրական, լավատես կենսազգացմամբ և իրեն մեջ չի պարունակում կյանքից վերանալու հոգնածության տարրեր: Պանեթիոսի հետևորդները նրա սխտեմում գիտական հիմնավորում էին գտնում այն քաղաքացիական «քաջարիությունների» համար, որոնք տրադիցիոն կերպով հռոմեական արիստոկրատի հատկությունն էին համարվում: Հռոմեական տերությունը, որն ընդգրկել էր հույներին հայտնի ամբողջ կուլտուրական աշխարհը, տիեզերական, կոսմոպոլիտ պետության իդեալի մարմնացումն էր: Հռոմի էքսպանսիան արդարացում է գտնում նրանում, որ համաշխարհային միասնական պետությունը կենսագործում է երկրի վրա բնականության աստվածային միասնությունը: Իր գործունեությամբ ծառայել այդպիսի պետությանը, իրեն զոհել նրա համար՝ բարոյական պարտականություն է. բայց, իշխանություն ունեցողները, որոնց ուղղված է Պանեթիոսի ուսմունքը, պետք է գիտակցեն նաև իրենց պարտականություններն ստորադրյալների հանդեպ՝ խնայեք պարտվածներին, կարեկցել ստրուկներին, պետք է տոգորվեն ձգտմամբ դեպի իմաստությունն ու առաքինությունը: Մտավոր և քարոզական այն դարգացումը, որ պահանջում է այդ ուսմունքը, հռոմեացիներն անվանում էին «մարդկայնություն», humanitas:

Սկիպիոն Կրտսերի համախոհները, վախեցած գլուղացիության հողազրկումից, առևտրա-վաշխառուական կապիտալի աճից և արիստոկրատիայի բարոյական քայքայումից, այդ փիլիսոփայության մեջ գտնում էին իրենց քաղաքականության հիմնավորումը: Դրա հետ միասին, անհատին մասնանշելով այն կապերը, որոնք նրան միավորում են տիեզերական աստվածային ամբողջության հետ, ստոիկն այդ ամբողջության սխտեմի մեջ մտցնում էր՝ համամարդկային բնության հետ հավասարապես և անհատական բնու-

իշունք. իբրև տիեզերական բանականության արտահայտություն: Պանեթիոսի մոտ անհատն ստանում է իր իրավունքները: «Իրավագիտության» տարրերից մեկը կազմում է՝ «բնդհանուրի օգտագործումն իբրև ընդհանուր, սեփականինը՝ իբրև սեփական»: Սրանից դործնական, անմիջական եզրակացություն է արվում մասնավոր սեփականության անձեռնմխելի լինելու մասին, և հույն փիլիսոփան իր հոտմեական պատվիրառուներին պատրաստակամ՝ տեսական պատճառարանություններ էր մատակարարում Գրակքոսների ազդարային օրինագծի դեմ: Պանեթիոսի ուսմունքը, թեև ոչոված լինելով հոտմեական օպտիմատների պահանջներով, նրանց փիլիսոփայությունը դարձավ և հանձինս սենատական պարտիաչ՝ վերջին համբավվոր իդեոլոգ՝ Յիցերոնի գտավ իր ժողովրդակալնացնողին: Սակայն՝ ստոյցիզմի հասարակական նշանակությունը Հոտմում՝ չի սահմանափակվում նորբիտետի համար փիլիսոփայություն ստեղծելով. այլևի խստաբարո ուղղության ստոիկ Բլոսիոսը Տիրերիոս Գրակքոսի տեսական ղեկավարն էր: Ստոայից անմիջապես հետո Հոտմ ներթափանցեցին և այլ փիլիսոփայական սխտեմներ: Ռեսպուբլիկայի վերջին տասնամյակներում աճող հասարակական անտարրերության համար բնորոշ է կլիկական ուսմունքի տարածվելը, որը փայլուն արտահայտություն գտավ Լուկրեցիուսի փիլիսոփայական պոեմում և զգալի կնիք դրեց կայսրության սկզբի գրականության վրա: Մյուս կողմից, ռեսպուբլիկայի անկման ժամանակը բարենպաստ հող էր ստեղծում կրոնա-միստիկական տրամադրությունների համար, որոնցով գունավորված է Պանեթիոսի հաջորդ և աշակերտ Պոսիպոնեսի (135—51) սխտեմը:

I դարում հոտմեական ալազանու շրջաններում փիլիսոփայության հետ ծանոթ լինելը արդեն բարեկրթության հատկանիշ էր համարվում: Նրիտասարդները հաճախ իրենց ուսումն էր համարում էին մեկնելով Աթենք փիլիսոփայական դպրոցներում պարսպելու համար: Բայց ըստ էության փիլիսոփայությանը բշերն են զբաղվում: Այն մտավոր զարգացումը, որ պահանջում էր նոր կոպտորան, հասնում էին ճարտասանության ուսուցմամբ: Ճարտասանությունը Հոտմում ակտուալ դարձավ իր սրկու ֆունկցիաներով՝ և որպես պերճախոսության տեսություն և որպես ստրկատիրական հասարակության էթիկայի հիմունքների հանրամատչելի լուսարանություն: Սոցիալական պայքարի սրվածություն ստաջանալու կապակցությամբ արտակարգորեն բարձրա-

ցավ ժողովրդական ժողովի ու դատարանների դերը, և հենց դրանով էլ հոկտոբրական ճառի քաղաքական նշանակությունը: «Գրված իրավունքի» տրադիցիոն նորմերից հեռանալը պահանջում էր դատողություններ անել դատարանում արդարացի և անարդարացի լինելու մասին, բմբռնել մարդկային վարքագծի մոտիվները: Ճարտասանական դպրոցը խոսելու արվեստ էր սովորեցնում բազմապիսի թեմաների շուրջը՝ սկսած փիլիսոփայության և բնագիտության տեսական պրոբլեմներից մինչև ընթացիկ դատական պրակտիկայի կոնկրետ հարցերը: Ուստի ճարտասանական ուսուցումը արիստոկրատական կրթության անհրաժեշտ քաղաղրիչ մասը դարձավ: Այն կատարվում էր հունական օրինակներով. հետո միայն դիմում էին լատիներեն ճառեր կազմելուն: Երկու լեզվի գործածությունը ճարտասանությունը մատչելի էր դարձնում միայն համեմատաբար նեղ շրջանի համար: Ի հակակշիռ այդ արիստոկրատական տրադիցիայի՝ «ժողովրդական» պարտիան առաջ քաշեց «լատինական ճարտասաններ», որոնք իրենց ուսուցումը հիմնում էին բացառապես լատիներեն օրինակների վրա: Թե ինչ քաղաքական նշանակություն էր տրվում ճարտասանությունների իբրև դաստիարակության սիստեմի և մասսաների վրա ազդեցության զենքի, երևում է նրանից, որ 92 թվին նորփիտեաք հալածանք ձեռնարկեց «լատինական ճարտասանների» դեմ. սակայն, այդ անհետևանք մնաց:

«Լատինական ճարտասանների» շարժման հուշարձանը այսպես կոչված «Հերենիուսին ուղղված ճարտասանություն»-ն է, որը պատկանում է անհայտ հեղինակի՝ պոպուլյարների պարտիայից և կազմվել է 89 թ. անմիջապես հետո: Այդ մեղ հասած հելլենիստահոմեական ճարտասանական սիստեմի առաջին ընդարձակ շարադրությունն է: Սխալմամբ վերագրված լինելով Յիցեռոնին, այդ տրակտատը պահպանվել է նրա երկերի թվում:

Փիլիսոփայությունից և ճարտասանությունից անմիջապես հետո Հոմոմում սկսում է զարգանալ գիտությունը: Ըստ հելլենիստական ֆիլոլոգիայի օրինակի՝ ստեղծվում է հոմեական ֆիլոլոգիան, հրատարակվում և մեկնաբանվում են հինավուրց տեքստերը: Առանձնապես բեղմնավոր էր Մարկուս Տերենտիուս Վարոնի (116—27) գիտական գործունեությունը: Նրա գրչին են պատկանում հսկայական քանակությամբ տրակտատներ՝ լեզվի, գրականության և Հոմոմ հնությունների վերաբերյալ: Հոմեական վաղ գրականության մասին տեղեկությունները, որոնք մենք հանդի-

սրում ենք հետագա հեղինակների մոտ, գլխավորապես վարրո-  
նից են սկիզբ առնում. նրան էլ մենք պարտական ենք Պլավտուսի  
գրական ժառանգության ֆիքսացիայի համար: Ստոիկյան փիլիսո-  
փայությունը հիման վրա գիտական բնույթ է ստանում և հոռմեա-  
կան իրավագիտությունը:

Մեր թ. ա. I դարում Հռոմն արդեն կանգնած է իրեն ժամա-  
նակակից հունական կուլտուրայի մակարդակին և նույնիսկ ազ-  
դում է նրա վրա, առաջագրելով նրան իր պահանջները: Հելլե-  
նիստա-հոռմեական կուլտուրայի ծագող միասնությունը մեծապես  
աչքի է ընկնում գեղարվեստական ճաշակի բնագավառում: II դ.  
վերջից Հռոմը հելլենիստական արվեստի կենտրոններից մեկն է:  
Հռոմի արվեստի մեջ արտացոլումն են ստանում հելլենիստական  
ամենատարբեր ոճերը՝ սկզբում Պերգամի և Ռոդոսի հույակապ-  
պաթետիկ ոճը, իսկ այնուհետև ատտիկական դպրոցի պարզ, որոշ  
չափով խիստ զծերի մաքրությունը և ալեքսանդրիական արվեստի  
նրբագեղ թեթևությունը:

Ոճերի բազմազանություն և պայթյալ մենք գտնում ենք և  
գրականության ոլորտում: Քննության առնվող այս շրջանում նրա  
դարձացումը բնութագրվում է երեք հիմնական մոմենտներով:

1) Գրականությունը դադարում է օտարածին ծիլ լինելուց,  
սրբ վարանումով հանդես էր գալիս օտարերկրյա թեմատիկայով:  
Նա արդիականության բնույթ է ընդունում, և գեղարվեստական  
խոսքը բաղաբական պայթյալի գենը է դառնում: Համապատաս-  
խանորեն փոխվում է հոռմեական գրողի սոցիալական դեմքը.  
դրանք արդեն հոռմեացիներ, հաճախ համբավվող քաղաքական  
դործիչներ են: Ճարտասանական դպրոց անցած հոռմեական ավա-  
դանու միջավայրում սկսում է հակում դարձանալ դեպի գրական  
դիլետանտությունը:

2) Գերակշռում են պրոզայի ժանրերը, և գրական պայթյալը  
մղվում է գլխավորապես պրոզայի ոճի հարցերի շուրջը: Մեր թ. ա.  
I դարը՝ հոռմեական պրոզայի ծաղկման ժամանակաշրջանն է:  
Այդ ժամանակ ստեղծվում է Հռոմի կլասիկ գրական լեզուն,  
այսպես կոչված «ոսկե» լատիներենը:

3. Հոռմեական գրականության զարգացումը տանում է դե-  
պի հելլենիզմի գրականության հետ ավելի մերձեցում, սկզբում  
հելլենիստական պրոզայի տարբեր ճյուղավորումների հետ, իսկ  
ունսպուրլիայի վերջին տասնամյակներում և ալեքսանդրիական  
պոեզիայի հետ:

Հոռմեական գրականության տրադիցիոն պերիոդիզացիայի տեսակետից մեր այս քննության առնվող ժամանակամիջոցներն զգրկում է «արխարիկ» ժամանակաշրջանի վերջը և «ոսկե դարի» սկիզբը: «Արխարիկ» ժամանակաշրջանի վերջին վերաբերող հուշարձանները պահպանվել են միայն Ֆրագմենտներով. «ոսկե դարի» սկզբի վերաբերյալ մենք արդեն ունենք բազմաթիվ ամբողջական երկեր՝ հոռմեական գրեթե բոլոր աչքի ընկնող գրողներից:

## 2. ՄԵՐ Թ. Ա. II ԵՎ I Դ. ՍԱՀՄԱՆԱԳԻՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրական այն բեկումը, որով հավերժանում է II դ. վերջը՝ ամենից առաջ դրսևվորվում է թեմատիկաչի ակտուալացման մեջ: Քաղաքական արդիականությունը զբաղան շարադրության թեմա է դառնում, և Հոռմում երևան է գալիս հրապարակախոսություն: Հոռմեական պետական գործիչները դադարում են բավարարվել այն գրական արտադրանքով, որ մատակարարում էին նրանց այլ միջավայրից ելածները, և իրենք են դիմել վերջնում: Նրանք հանդես են գալիս պարսավագրերով, քաղաքական հաշվետվություններով՝ մեծուարների կամ ինքնակենսագրության ձևով. սովորույթ է դառնում ձառերի հրապարակումը: Գայոս Գրակոսն իր բարենորոգությունների ծրագիրը շարադրում է «նամակի» ձևով, Սուլլան կաղմում է իր կյանքի պատմությունը: Այսպիսով սրված սոցիալական պայքարը հիմնովին փոխում է հասարակության վերնախավի վերաբերմունքը դեպի գրական աշխատանքը: Արագորեն աճում է պատմագրությունը, սրի մեջ հրապարակախոսական խնդիրները միահյուսվում են գեղարվեստականի հետ: Անտիկ պատմագրության մեջ սովորություն դարձած «ձառեր» մտցնելու եղանակը՝ հրապարակախոսական լայն հնարավորություններ էր ստեղծում, և հոռմեական պատմաբաններն ազատորեն անցյալն էին փոխադրում իրենց ժամանակի քաղաքական լուրերգները: Գրա հետ միասին, անտիկ պայմաններում պատմությունը այնքան գիտություն չէր, որքան գեղարվեստական պատմողականության տեսակներից մեկն էր, և, շարադրության գրավչության նպատակով, հնարավոր էր համարոթ որոշ շափով հնարումներ անել: Ռեսպուբլիկայի առաջին երկու դարերը, որոնց մասին ճշգրիտ տվյալներ սակավ են պահպանվել, առանձնապես հարմար հող էին հանդիսանում հնարումներով գունավորված պատմելու համար, և պլերեյների պայքարը պատրիկ-

ների հետ պատկերվում էր արդիական կյանքից փոխ առնված գույներով:

Ակտուալացում, հոտմեական կյանքին մոտեցում՝ նկատվում է և պոեզիայի բնագավառում:

Այդ բեկումը ամենից քիչ ազդել է ողբերգությամբ վրա, որը պահպանում էր իր տրագիցիոն թեմատիկան: Հոտմեական ողբերգութան վերջին կլասիկը՝ Ակցիոան է (ծնվել է 170 թ., վախճանվել է 90 թ. հետո): Նրա դրամաներն աչքի էին ընկնում պաթետիկովթյամբ և ճարտասանորեն մշակված ճառերի ու «խոսքի մարտերի» առատությամբ: Կինելով վերամբարձ ոճի վարպետ, Ակցիոանը, սակայն, թանկ էր գնահատում և արտաքին գործողությունը, էպիզոդների հարստությունը, բեմադրվյալն փարթամությունը: Սա էլնում է հունական ողբերգությունների սյուժեներից և ինքնուրույնորեն վերամշակում է դրանք: Այնուամենայնիվ Ակցիոանի մոտ ևս զգացվում է արագ կերպով բաբախող Հոտմի քաղաքական կյանքը: Հաճախ պատկերվում են «տիրաններ» և նրանց զլխին եկող պատիժը: Հոտմեական թեմայով «Բրուտոս» ողբերգությունը պատկերում էր թագավորական իշխանության անկումը և ռեսպուբլիկայի հաստատվելը: Բեմադրվելով II դ. 30-ական թվականներին, երբ հոտմեական ամբողջ քաղաքականության փաստական ղեկավարը Ալիպիոն Կրոսերն էր, այդ պիեսը խիստ ակտուալ էր, և իր ակտուալությունը նա չէր կորցրել 90 տարի հետո, երբ բեմադրվեց կեսարի սպանության թվին: Ակցիոանի ողբերգությունները երկար ժամանակ պահվում էին հոտմեական թատրոնի ռեպերտուարում, բայց նրանից հետո ողբերգությունը կորցնում է իր առաջատար ժանրերից մեկը լինելու նշանակությունը և դառնում է «գիտնական» դիլետանտների սիրած գրական մարզանք:

Հոտմեական թեմատիկայի թափանցելը կատակերգության մեջ՝ այդ ժանրը որոշ փոխակերպման է ենթարկում: «Պալլիատան»՝ թիկնոցի կատակերգությունը՝ փոխարինվում է «տոգատա»-յով (comoedia togata)՝ պարեգոսի կատակերգությամբ, ուր գործում են ոչ թե հույները, այլ հոտմեացի պերսոնաժներ, տեղական հանդերձանքով և լատինական անուններով: Գործողությունը կատարվում է Իտալիայում, բայց ամենից հաճախ ոչ թե Հոտմ քաղաքում, այլ լատինական փոքր քաղաքներում. լատին արհեստավորների խանութիկների («տաբենաների») առաջ (դրանից էլ ծագում է մի ուրիշ անունը — comoedia tabernaria, «տաբե-

Յուշի կատակերգութիւն»): Պարեգոտի կատակերգութիւնը շատ կողմերով հարում է պալլիատային, բայց գործողութեան տեղափոխելը իտալական հողը՝ տիպաթի և սյուժեների փոփոխութիւններ առաջացրեց: Հոռոմեական բարբերը թույլ չէին տալիս տիրոջ հանդեպ հաղթութիւն տանող ստրուկ դուրս բերել, և այդ պատճառով վերացվում էր հունական կատակերգութեան ամենատարածված սյուժեներից մեկը: Մի շարք փոփոխութիւններ կապված է այն դրութեան հետ, որ Խտաշիայում կանայք ավելի քիչ էին փակված կյանքի եղանակ վարում, քան Հունաստանում: Վերնագրերից («Նորթ աղջիկ», «Տաւր», «Մորաբուրբեր», «Հոր մահից հետո ծնված աղջիկ», «Իրավաբանուհի» և այլն) և ֆրագմենտներից երևում է, որ տղատայում մեծ տեղ է հատկացված կանանց պերսոնաժներին, և դրանք մեծ մասամբ ոչ թե հետերաներ, այլ քաղաքացուհիներ են՝ մանր քաղքենուհիներ իրենց ընտանեկան և կենցաղային կոնֆլիկտներով: Սերը փոխադրված է ազատ քաղաքացիների ոլորտը և մատուցվում է լատինական փոքրիկ քաղաքի կենցաղային հարաբերութիւնների ֆոնի վրա: Սիրահարների սոցիալական անհավասարութիւնը, ծնողներին հակառակ ամուսնութիւնը, անարդարացի ընտանեկան կասկածները—տողայի կատակերգութեան սովորական թեմաներն են. այդ կատակերգութիւնը շարունակում է Տերենտիուսի «Հուզիչ» կատակերգութեան գիծը: Գործողութիւնը ավարտվում է, իհարկե, առաքինութեան և ընտանեկան հաշտութեան հաղթանակով: Ըստ Սենեկայի կարծիքի, տղատաները «աչքի են ընկնում լըջութեամբ և ողբերգութեան ու կատակերգութեան միջև միջին տեղն են բռնում»: Ըստ երևույթին դրանք մոռանում էին այն ժանրին, որը նոր ժամանակներում «ընտանեկան դրամա» անունն է ստացել: Ֆրագմենտներում խոշոր քաղաքական դեպքերի վերաբերյալ արձագանք չկա: Տողատայի պոետներից ամենից հռչակավորը Աֆրոնիուսն էր (II դ. վերջը), բայց մեզ հասել են և այլ հեղինակների ֆրագմենտներ (Տիտինիուս, Ատտա): Ծողատայի ծաղկման ժամանակը II դ. վերջը և I դ. սկիզբն է, Գրակրոնների և Սուլլայի ժամանակաշրջանը:

I դ. սկզբից հետաքրքրութիւնը դեպի լուրջ դրաման թուլանում է: Հոռոմեական մասսայական հանդեսների սխտեմը հարմարվում է ապագա առկարգայնացած և անսկզբունք լումպենարիւնատրիատի ճաշակին, նա կազմում էր հանդիսատեսների հիմ-

նակն կոնտինգենտը: Սիրված հանդեսներ են դառնում գլադիատորական խաղերը: Իբրև ֆարսի տեղական ձև՝ ստեղծվում է գրականորեն մշակված ատելլանան՝ մշտական դիմակների կատակերգությունը. դա բեմադրվում էր ողբերգություններից հետո: Իբրև եզրափակման պիես: Ատելլանայի, ինչպես և տոգատայի համար բնորոշ է իտալիկական թեմատիկան, բայց թեքումով՝ դեպի ստորին խավերը: Գործողությունը կատարվում է ստորին խավերում (գյուղացիներ, ստրուկներ) և հասարակության տակնաքների շրջանում (ոճրագործներ, պոռնիկներ): Մշտական դիմակները հանդես էին դալիս տարբեր իրադրություններում. օրինակ, Մակիուսը՝ «գինվորի», «պանդոկապետի», նույնիսկ «աղջրկա» գերում ծերուկ Պապուսը՝ իբրև «ճողագործ» կամ «տապալված թեկնածու ընտրությունների ժամանակ»: Ատելլանան պահպանում էր կառնավալային խաղի գծերը նրա կոպիտ էրոտիկայով, որկրամոլությամբ և ծեծկոտոցով, բայց դրա հետ միասին ավելի շատ քաղաքական աղատություն էր թույլ տալիս իրեն, բան լուրջ դրաման: Ատելլանայում ծաղրի էին ենթարկվում հասարակության վերնախավերը՝ իրենց հունական կրթությամբ և փիլիսոփայական տեսություններով, բայց իր ամբողջությամբ այն չէր բարձրանում անսկզբունք ֆարսի մակարդակից:

Ինեսպուրիկական ժամանակաշրջանի վերջերին գերակշռող բեմական ժանրը հելլենիստական միսն է դառնում, որն այնուհետև հռոմեական բեմում տիրապետողն էր կայսրության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Պոետիկական թեմատիկայի ակտուալացման ամենացատուն վավերագիրը, սակայն, II դ. վերջում հռոմեական սատիրան էր, հռոմեական առաջին պոետիկ ժանրը, որին ճշգրիտ համապատասխանող ժանր չկար հունական պոեզիայում:

«Սատիրա» (ավելի ճիշտ՝ «սատուրա», «խառնուրդ») տերմինին մենք արդեն հանդիպել ենք իբրև էննիուսի կիսադատարակչական, կիսազբաղչական ոտանավորների ժողովածուի վերնագիր: Նույնպիսի տիպի ժողովածու այնուհետև հրատարակեց և Պակուվիուսը: Դիմակագերծման ժանրի իր հետագա նշանակությունը սատիրան ստացավ Լուցիլիուսի ստեղծագործության մեջ:

Գայուս Լուցիլիուսը (վախճանվել է 102—101 թ.) հռոմեական առաջին պոետն է, որ եղել է անմիջականորեն ստրկատիրական առաջին պոետն է, որ եղել է անմիջականորեն ստրկատիրական վերնախավից, բայց նրա կենսագրությունը վկայում է հին արիստոկրատական էթիկայի արդեն քայքայման և ինդիվիդուալիս-

տական տենդենցների աճի մասին: Լինելով խոշոր սեփականա-  
 տեր, Կալվածքների տեր Խաղիայի հարավում և Միցիլիա-  
 յում, արքիստոկրատական տոհմային կապեր ունեցող մարդ՝  
 Հուցիլիուսը խուսափում է պետական պաշտոններից, որոնք  
 նրա առաջ բաց կաննին սենատի դոնորը, և բավարար-  
 վում է «հեծյալի» ցենզով: Նա ցանկանում է «Լուցիլիուս  
 մնալ» և չի համաձայնվում իր անկախությունը փոխարի-  
 նել որևէ բարիքի հետ: Ամուսնությունը նա մերժում է, հա-  
 մարելով այն ծանր բեռ: Լուցիլիուսի աշխարհայացքը ձև-  
 կերպվում էր փիլիսոփայական ավղեցությունների տակ. նա  
 անձնական հարաբերություններ էր պահում աթենական փի-  
 լիսոփաների հետ, սկեպտիկական «նոր Ակադեմիայի» պա-  
 քազուխ Կլիտոմաքոսը Լուցիլիուսին նվիրեց մի արակատա,  
 որի մեջ շարադրում էր դպրոցի հիմնադիր Կառնևադի հա-  
 յացքներն իմացաբանության վերաբերյալ: Քաղաքական ձգտում-  
 ները և կուլտուրական շահերը նրան քաշեցին Սիլիպիոն Կրտսերի  
 շրջապատը, որի հրամանատարության ներքո նա ծառայում էր  
 Նումանտիայի պաշարման ժամանակ (Իսպանիայում 134—133 թ.):  
 Բաժանելով սիլիպիոնյան խմբակի հայացքները, Լուցիլիուսը խիստ  
 վերապով ելույթներ էր ունենում մյուս քաղաքական խմբավորում-  
 ների ներկայացուցիչների դեմ:

Լուցիլիուսի ստեղծագործությունը հարում էր այն «լուրջ-  
 թիծաղելի» սատիրական ժանրին, որը գործադրվում էր հանրա-  
 մատչելի-փիլիսոփայական գրականության մեջ: Պարոդիան, յամ-  
 քազրությունը, դիատրիբան, ուղերձը, սատիրական պատմողակա-  
 նությունը Մենիպի ժանրով, Լուցիլիուսի ոճի բաղադրիչ տարրե-  
 րն են: Վերացական թեմաների շուրջը դատողությունները միա-  
 ձուցվում են անեկդոտների, մանր տեսարանների, կենդանի դիա-  
 լոգների հետ: Որոշ բանաստեղծություններ պատմողական հենք  
 ունեն՝ աստվածների ժողովը, ճանապարհորդությունը, խնջույքը,  
 փակ առանձին տեսարաններ հաճախ հիշեցնում են «նոր» կատա-  
 կերգության և միմի տիպական սիտուացիաները: Բայց դրա հետ  
 միասին Լուցիլիուսի ստեղծագործությունը ծնունդ է առել երկ-  
 րորդ դարի վերջի փոթորկալի պայմաններից և քաղաքական ու  
 փուլտուրական պայքարի դեմք է ծառայում: Պոետը ձգտում է ոչ  
 թե դեպի վերացական, տիպականացնող մեկնաբանությունը, այլ  
 պատկերում է անհատներին, իր ժամանակակիցներին՝ իրենց  
 տեսլ անուններով: Լուցիլիուսի ամենաբնորոշ առանձնահատկու-

Մյուսը անտիկ ըննադատները տեսնում էին առանձին անձնավորություններին մերկացնելու և ծաղրելու ուղղության մեջ և այդ կողմից նրան մոտեցնում էին «հին» կատակերգությունը: Լուցիլիուսի սատիրայի մյուս առանձնահատկությունը, որն այդ սատիրային տարբերում է հանրամատչելի-փիլիսոփայական գրականությունից, բացառապես ոտանավորի ձևի օգտագործումն է: Լուցիլիուսն սկսեց յամբագրության և կատակերգության յամբա-մեծասար շափերով, բայց այնուհետև կանգ առավ հեկզամետրի վրա:

Քաղաքական, բարոյա-փիլիսոփայական կամ կենցաղային լեմատիկա, լեմայի մշակումը «լուրջ-ծիծաղելի» ոճով, շեշտը դնելով առանձին անձնավորություններին ծաղրելու վրա, ոտանավորային, առավելապես հեկզամետրային ձև — սրանք են Լուցիլիուսի «խառը բանաստեղծությունների» («Սատուրների») հատկանշական գծերը. դրանք հիմք հանդիսացան հռոմեական «սատիրայի» սամբոլջ ժանրի համար:

Լուցիլիուսը շատ է գրել: Անտիկ աշխարհին ծանոթ էին նրա «սատուրների» 30 գիրք, և դրանցից պահպանվել է մոտավորապես հազար ֆրագմենտ: Սակայն, այդ ֆրագմենտները շատ չնչին են հիրենց մեծությունը և քիչ դեպքերում կարելի է շատ թե քիչ հավանական պատկերացում կազմել ամբողջի մասին: Այսպես, սատիրաներից մեկը յուրահատուկ գրական ծրագիր էր պարունակում: Լուցիլիուսը մասսաների համար չի գրում, նրա դիդակտիկան ուղղված է վերնախավային շերտերին և նկատի ունի նրանց կրթության միջին աստիճանը: Նա չի ուզում իրեն ընթերցող ունենալ ոչ «գիտնականագույններին», ոչ էլ «տղետներին»: Այդ սատիրան կառուցված է դիալոգի ձևով. գրուցակիցը Լուցիլիուսին խորհուրդ է տալիս զիմել ավելի անմեղ պատմական էպոսի թեմատիկային, բայց պոետը մերժում է այդ թեմաները, իբրև իրեն անձնական հակումներին՝ անհամապատասխան. նա ուզում է գրել «սրտից»: Լուցիլիուսը նույնքան բացասաբար էլ վերաբերվում է դիցաբանական սյուժեներին: Ինչպես այդ սովորաբար հանրամատչելի-փիլիսոփայական գրականության մեջ էր, նա ծաղրում է ողբերգությունների դիցաբանական հրեշներին և հաճույքով պարոդիայի է ենթարկում իր ժամանակակից Ակցիուսի ոճը: Մի այլ սատիրայում նա փառարանում է փիլիսոփայությունը, որը մարդուն ազատանա փառարանում է փիլիսոփայությունը, որը մարդուն ազատանա փառարանում է նախապաշարումներին և կրքերին:

Սատիրաներն ըստ բովանդակության հույժ բազմազան են:



մօլին և վատնիչին: Այդ սատիրան, որը հիշեցնում է Մենիպի-  
ոճը, դրվել է սկիպիոնյան խմբավորման քաղաքական թշնամի  
Լուպոսի մահվանից անմիջապես հետո (մոտավորապես 123 թ.):

«Բարձր» ժանրերի, ողբերգության և էպոսի հակառակորդ  
լինելով, Լուցիլիուսը խուսափում է բարձր ոճից և աշխատում է  
մոտենալ ասորյա խոսակցությանը: Հռոմի հաջորդ սատիրիկ Հո-  
բացիուսը Լուցիլիուսի ոճը համարում էր անփուլթ և իր նախոր-  
դին կշտամբում է շափազանց արագ աշխատանքի և ձեր ոչ-  
բավականաչափ հղկելու համար: Իբր թե Լուցիլիուսը «մի ժամում  
թեւադրում էր երկու հարյուր տող մի ոտքին կանգնած»: Այնուա-  
մենայնիվ Լուցիլիուսը երկար ժամանակ բազմաթիվ գրական եր-  
կերպագուներ էր գտնում, որոնք գնահատում էին նրա ոճը, կրթո-  
ւթյունն ու սրամտությունը: Սակայն նրա ստեղծած սատիրա-  
կան ժանրը շուտով չունեցավ ականավոր շարունակող: I դ. առա-  
ջին կեսին սատիրաներ կազմելով էր զբաղվում հուշակավոր հոտ-  
մեակիան գիտնական Մարկուս Տերենտիուս Վարունը, բայց դրանք  
Լուցիլիուսի ոճի երկեր չէին: Վարունը «Մենիպյան սատիրաներ»  
էր գրում, դրանց համար բնորոշ ոտանավորների և պրոդայի խառ-  
նուրդով, ուր դերակշռում էին վերացական թեմաները, որոնք հա-  
ճախ ֆանտաստիկ պատմողական շրջանակի մեջ էին գրվում:

Ակտուալ-քաղաքական թեմատիկան, որն իրենով որոշում էր  
Լուցիլիուսի սատիրաների դեմքը, ամենից շատ լիակատար գեղար-  
վեստական արտահայտություն գտավ հռոմեական պերճախոսու-  
թյան մեջ, որի արագ աճը մեր քննության առնված այս շրջանի  
կարևորագույն երևույթն էր: Հռոմեական սեպուլքիկայի կրիզիսի  
պայմաններում քաղաքական պերճախոսությունը վիթխարի նշանա-  
կություն ստացավ, բայց այնլի պակաս դեր չէր խաղում և դա-  
տական ճառը, որքանով դատական պրոցեսները հաճախ ցայտուն  
արտահայտված քաղաքական բնույթ էին ունենում: Պերճախոսու-  
թյան մեջ իրենց արտացոլումն էին գտնում հռոմեական հասարա-  
կության ինչպես ժողոված էթիկան, այնպես էլ փոխված իրավա-  
բանքում: Ըարտասանական ուսուցման զարգացող պահանջը  
հասցրեց այն բանին, որ հռոմեական պերճախոսությունն սկսեց  
վերահասուցվել հունականի եղանակով: Յիցերունը, որն իր «Բրու-  
տոս» տրակատաում պատկերել էր հռոմեական պերճախոսության  
պատմությունը, 137 թվի Կոնսուլ էմիլիուս Լեպիդուս Պորցինուսին  
համարում է հռոմեական առաջին հետորը, որի մեջ նկատելի են  
«հունական փայլ», պարբերական խոսք և գեղարվեստական ոճ»:

Մ գ. վերջի խոշորագույն հետորներ համարվում էին Գրակոս  
հղբայրները, մանավանդ նրանցից կրտսերը՝ Գայոս Գրակոսը:  
Յրիու Գրակոսներն էլ հունական պերճախոսության ուսուցիչների  
աշակերտներ են եղել: Գրակոսների ոգեշունչ պաթետիկայում,  
որոնցից շնչին հատվածներ են միայն պահպանվել, արդեն նկատ-  
վում է կողմնորոշում դեպի ասիականությամբ ոճը, նրա հակիրճ  
ոթիմավորված ֆրազներով: Սովորաբար Գայոս Գրակոսին նույն-  
իսկ ուղեկցում էր սրինգ նվագողը, որը նրան տոն էր տալիս ճառի  
ժամանակ: Բուռն ոճին համապատասխանում էր և բուռն ժեստի-  
կուլացիա: Հելլենիստական ժամանակի հույն հետորներին հա-  
տուկ ձևամոլությունը հոմեացիներն այնուամենայնիվ չէր հաս-  
նում: Նգանց պերճախոսությունը մնում էր որպես մասսաների վրա  
ուեալ ներգործություն և բացի այդ իր երկարատև տեղական արա-  
գիցիան ուներ:

### 3. ՅԻՅԵՐՈՆ

Հռոմեական և հունական կուլտուրաների սինթեզը, որը նա-  
խապատրաստվել էր Հռոմի երկարատև հելլենականացման պրո-  
ցեսով, գրական մարմնացում ստացավ Մարկոս Տուլլիոս Յիցերո-  
նի (106—43) բաղմակողմանի ստեղծագործության մեջ: Լինելով  
փաստաբան, քաղաքական գործիչ և փալլոն գրող, հռոմեական  
աեսպուլտիկական կարգերի վերջին նշանակալի իդեոլոգ, որն այդ  
կարգերը հիմնավորում էր հունական քաղաքական տեսությունների  
օգնությամբ, Յիցերոնը դրա հետ միասին պերճախոսության խոշո-  
րագույն վարպետն էր և նրա գործունեությունը հիմնաքար դար-  
ձավ լատինական պրոզայի ամբողջ հետագա զարգացման համար:  
Քրքև ոճաբանական օրինակ, իբրև հետագա սերունդների մեջ ըն-  
դունված հետորական խոսքի կլասիկ՝ Յիցերոնի նշանակությունը  
նպաստեց նրա հարուստ գրական ժառանգության համեմատաբար  
լավ պահպանվելուն նույնիսկ այն ժամանակաշրջաններում, երբ  
ցիցերոնականության գաղափարական կողմը հետաքրքրություն չէր  
շարժում: Հիստոնիկոս ճառ, ճարտասանության և փիլիսոփայության  
մասին մի շարք արակտատներ, վերջապես, մոտավորապես 800  
նամակ — այսպիսին է մեզ հասած Յիցերոնի երկերի կազմը, որն  
փր ծավալով դերադանցում է այն բոլորը, ինչ որ պահպանվել է  
հռոմեական գրողներից որևէ մեկից (եթե հաշվի չառնենք քրիստո-  
նեական հեղինակներին, որոնք արդեն Միջին դարերի սահմա-  
նազխին էին գտնվում): Այդ իմպոզանտ ժառանգությունը հեռա-

Ջոր կերպով լիակատար չէ,— անտիկ ժամանակներին ծանոթ էին մինչև 150 ճառ, մեղ չհասած փիլիսոփայական երկեր և նամակներ,— այնուամենայնիվ, շնորհիվ բազմաթիվ ինքնակենսագրական արտահայտություններին և նամակների առատությանը, այդ թվում նաև մոտիկ բարեկամներին գրած նամակներին, Յիցերոնը հանդիսանում է հին աշխարհի մեզ լավ հայտնի դեմքերից մեկը:

Սենատական պարտիայի ապագա պարագուխը «նոր մարդ» էր հռոմեական ավագանու համար: Մարկուս Տուլլիուս Յիցերոնը, որ ծնվել է 106 թ. հունվարի 3-ին մեր թ. ա., ծագում է հեծյալների դասից և լատինական Արպին քաղաքիցն էր: Սակայն ծնողները մայրաքաղաքում կապեր ունեին, որոնք հնարավորություն էին տալիս մուտք գործել ազդեցիկ գործիչների մոտ, օպորտունիզմի և Սենատոնիսի մոտ: Ցանկանալով իրենց ավագ որդի Մարկուսին և կրտսեր որդի Քվինտուսին պատրաստել պետական գործունեության համար, ծնողները տեղափոխվեցին Հռոմ: Մայրաքաղաքի հովանավորների խորհրդով տղաները կրթություն ստացան հույն ուսուցիչների մոտ: Այդ դպրոցում Յիցերոնը լավ ծանոթացավ հույների կլասիկ գրականության հետ՝ Հոմերոսի, գրամայի և հեռուորների հետ:

Ըստ հռոմեական սովորույթի՝ քաղաքական կամ փաստաբանական կարիերայի համար պատրաստվող երիտասարդն անցնում էր գործնական «վարժություն ֆորումում», այսինքն լսում էր հոնէտորներին և ծանոթանում էր իրավունքի հետ, ներկա լինելով որևէ խոշոր մասնազեռի իրավաբանական կոնսուլտացիաներին: Այդ բնագավառում Յիցերոնի ղեկավարը զառամյալ Սկելիուսն էր, մեկը սկիպիոնյան խմբակի կրտսեր անդամներից. նրա առաջինի եղհետո Յիցերոնն անցավ մյուս Սկելիուսյի մոտ, որն առաջինի եղբոր որդին էր: Թե մեկ, թե մյուս Սկելիուսն գտնվում էին Պանեթոսի փիլիսոփայության ազդեցության տակ: Յիցերոնի մեջ էլ Սեոսի փիլիսոփայության արթնացումը դեպի փիլիսոփայությունը: 88 թվին հետաքրքրություն արթնացավ դեպի փիլիսոփայությունը: Միհրդատի հետ պատերազմի ժամանակ՝ հռոմասիրտրեն արամազրված՝ աթենական փիլիսոփայական դպրոցների ղեկավարները փախան Հռոմ, և Յիցերոնը հնարավորություն ունեցավ լսելու Փիլոնին, այսպես կոչված «նոր Ակադեմիայի» պարագլխին: Փիլիսոփայության տեսական հարցերում Փիլոնի սկեպտիկական դիրքը և դեպի էկլեկտիկական հակվածությունը՝ իր հոգուն մոտ ընդունեց

Երիտասարդ Հոռմեացիին, որին փխլիստիայութեան մեջ հետաքրքրում էր առավելագույն էթիկան, ինչպես և «դիպլեկտիկան», այսինքն՝ վեճի և պատճառաբանութեան արվեստը: Դրա հետ միաժամանակ Յիցերոնը մարզվում է հունարեն և լատիներեն ֆիլիտիկձառեր («գեկլամացիաներ») կազմելու մեջ, հորինում էր պոեմներ, շափածո և արձակ թարգմանություններ էր անում հունարենից, ի միջի այլոց, նա թարգմանեց Արատոսի աստղարաշխական պոեմը՝ նա հնարավորություն չունեց գործնական հետազոտությամբ զբաղվելու, քանի որ 80-ական թվականների սկզբի ազգամիջյան կոնֆլիկտների պատճառով դատարաններն անգործունեության էին մատնված:

Իր փաստաբանական գործունեությունը Յիցերոնն սկսեց 80-ական թվականների վերջերից, Սուլլայի դիկտատուրայի օրոք: Քաղաքացիական պատերազմին նախորդող շրջանում բազում հայտնի հետաորներ ոչնչացան, և Հռոմի ֆորումում փայլում էր երիտասարդ օպտիմատ Հորտենսիուսը, որը Յիցերոնից միայն Տարտով էր մեծ, նա պերճախոսության «ասիական» ոճի ներկայացուցիչն էր: Այդ ոճին էլ հետևում էր Յիցերոնն իր առաջին ճառերում, այդ տարիներում լինելով Հորտենսիուսի ախոջանը և քաղաքական հակառակորդը: Արիստոկրատական դիկտատուրան տոնահարում էր «հեծյալների» շահերը և քաղաքական ազդեցությունները, Յիցերոնը սերտորեն կապված էր «հեծյալների» հետ՝ ուստի, որոշ առումով, օպոզիցիա էր հանդիսանում նորփլիտեաի դեմ և հակված էր որոշ տուրք տալու դեմոկրատական պարտիային: Արդեն մեզ հասած առաջին ճառում (Եփինկցիուսի համար, 81 թ.), արտասանված քաղաքացիական պրոցեսում՝ գույքային հարցի շուրջը, մենք հանդիպում ենք հարձակումների ընդդեմ նորփլիտեաի, որն ի շարն էր գործ դնում իր իրավունքներն ու ազդեցությունը: Յիցերոնի խոշոր հաջողությունը Սեկուստուս Ռոսցիուսի համար պաշտպանողական ճանն էր (80 թ.): Սուլլայական «պրոսկրիպցիաների» (հակառակորդներին՝ օրենքից դուրս հայտարարելը) ժամանակ սպանվել էր հարուստ քաղաքացի Ռոսցիուսը: Ազգականները, թշնամության մեջ լինելով նրա հետ, օգտվեցին խառը պայմաններից, որպեսզի Սուլլայի ֆավորիտ, ազատված ստրուկ Բրիստոգոնի միջոցով, հետին թվով սպանվածի անունը զցեն պրոսկրիպցիոն ցուցակի մեջ և տիրանան նրա գույքին: Ռոսցիուսի օրինական ժառանգ հանդիսացող որդու դեմ, որը մի քիչ հիմարավուն էր, նրանք մեղադրանք հարուցեցին իբրև հայրասպանի: Գործը

հեշտ գործ չէր: Քրեական նորմալ դատարանները հենց նոր էին վերականգնվել, և հասարակական կարծիքը խիստ որոշումներ էր պահանջում. բացի այդ, պրոցեսի ելքով շահագրգռված էր այնպիսի ազդեցիկ անձնավորություն, ինչպիսին Քրիստոֆոն էր: Հայտնի հետաորներից և ոչ մեկը իր վրա չէր վերցնում մեղադրյալի պաշապանությունը: Նրիտասարգ Յիցերոնի համար հարմար առիթ էր ներկայանում փաստաբանական հռչակ ձեռք բերելու: Նա մերկացրեց Քրիստոֆոնի մոլթ արարքները և ցույց տվեց, որ սպանությունը, ամենից հավանական է, կատարել են այն մարդիկ, որոնք այնուհետև զբանից օգուտ են կորզել: Դրա հետ միասին, շոշափելով Սուլլային անձնապես, նա տվեց սուլլայական ոեծիմի զսպված, բայց ուժեղ քննադատությունը: Մեղադրյալն արդարացվեց:

Ռոսյիտաի գործում հանգուցն ելուզթից հետո, Յիցերոնի համար Հոմմում մնալը կառոզ էր վտանգավոր թվալ: Հաջորդ տարին իր եղբայր Քվինտուսի հետ նա ուղևորվում է երկարատև ճանապարհորդության Հունաստան և Փոքր Ասիա, օգտագործելով այդ ժամանակն իր ճարտասանական և փիլիսոփայական կրթությունը ևրացնելու համար: Նրա վրա հսկայական տպավորություն թողեց Ալեկսը, այն քաղաքը, որտեղ «ուր ոտք ես դնում՝ պատմական վայր ես ընկնում»: Նա այստեղ լսում էր Անախոքոս Ասկալոնացուն, Փիլոնի հաջորդին «նոր Ակադեմիան» ղեկավարելու գործում: Յիցերոնի, իբրև ոճարանի, ձեավորման համար մեծ նշանակություն ունեցավ Ռոդոս այցելելը և Ռոդոսի հայտնի պերճախոսություն ուսուցիչ Ապոլոնիոս Մոլոնի մոտ պառապելը. նրա հետ Յիցերոնը հնարավորություն էր ունեցել ծանոթանալու դեռ Հոմմում: Դեմոկրատիկ Ռոդոսը հելլենիստական պետություններից միակն էր, ուր պահպանվել էր քաղաքական պերճախոսությունը, և Ռոդոսի հետաորական դպրոցը միջին տեղն էր դրավում «ասիականի» և «ատտիկականի» միջև: Յիցերոնի համար հարկավոր էր այստեղ վերաստիղոնել նրա համար, որպեսզի ոճի և հետաորական ձևերի «ասիական» սովորություններից կտրվի: «Նրկու տարուց հեռու, — գրում է նա հետագայում «Բրուտոս» տրակտատում, — ես վերադարձա ոչ միայն ավելի հղկված, այլ գրեթե միանգամայն փոխված»:

Հոմմ վերագառնալուց հետո (79 թ.) Յիցերոնի փաստաբանական գործունեությունը նրա անունը լայնորեն հռչակեց, և, բանի նա հասնում էր այն նվազագույն տարիքին, որն օրենքը նկատի

էր առնում պետական պաշտոններ գրավելու համար, նրան ընտրում էին այդ պաշտոնին:

76 թվին քվեստորի (ֆինանսների վարչութիւնի ղեկավար) պաշտոնին ընտրվելով, 75 թվին նա անցկացրեց Սիցիլիայում և իր անկաշատութեամբ լավ հիշատակ թողեց պրովինցիալի բնակչութեան մեջ: Երբ 71 թվին սիցիլիացիները ցանկացան դատական պրոցես հանրուցել Վերրես կուսակալի դեմ, որը կողոպտել էր իրենց պրովինցիան, նրանք դիմեցին Յիցերոնին, խնդրելով հանդես գալ որպէս մեղադրող: Այստեղ նորից մեծագործը քաղաքական գործ էր առաջանում, որը քննվելու էր 70 թվի սկզբին երկու սեսիայով: Թեև դատավորները սենատական դասին էին պատկանում, և Վերրեսի պաշտպանը հռչակավոր Հարսենիոսն էր, սակայն Յիցերոնի հավաքած մեղադրական նյութն այնքան ծանրակշիւ էր, որ Վերրեսն արդեն առաջին սեսիայից հետո դերադատեց գործը վերջնական դատորոշման չհասցնել և, օգտվելով իր հոռմայեցու քաղաքացու իրավունքից, ինքնակամ վտարանդի դարձավ: Սակայն, Յիցերոնն իր նյութը հրատարակեց Վերրեսի դեմ հինգ ճառի ձևով, որոնք հավանորեն նախատեսնված էին երկրորդ (իրականում չկայացած) սեսիայի համար, և դրանք հրատարակեց այն երկու ճառի հետ միասին, որ արասանել էր պրոցեսի նախնական ստադիայի ժամանակ: Իրենց սուր ծայրով ուղղված լինելով օպտիմատների օլիգարխիայի դեմ, այդ ճառերն արտակարգորեն վառ պատկեր են տալիս պրովինցիաների դիշատիչ կառավարման, ամենահզոր կուսակալների կամայականութեան, հոռմեական ավագանու ներսի փոխադարձ երաշխիքի մասին: Քայքայված նորիլիտետին Յիցերոնը հակադրում է տաղանդավոր և եռանդուն «նոր մարդկանց»: Այդ վերջին մոմենտի ուժգին ընդգծման մեջ պարզորեն երևում են և անձնական մոտիվներ, որոնցով զեկավարվում էր փառասեր հեղինակը: Վերրեսի դեմ ճառերի հրատարակման ժամանակ դեմոկրատական պարտիային հաջողվեց որոշ ռեֆորմներ անցկացնել, որոնք վերականգնեցին մինչ-սուլլայական պետական կարգերը, բայց Յիցերոնը բոլորովին էլ դեմոկրատ չէր, և սենատի տիրապետութեան հարցում նրան ամենից շատ անհանգստացնում էր նորիլիտետի վակիլաձութեւնը. արդեն մի քանի տասնամյակ էր, որեւէ «նոր մարդու» հնարալորութիւն չէր տրվել բարձր պաշտոն գրավելու: Օպտիմատների դեմ էր ուղղված Յիցերոնի նաև առաջին քաղաքական ճառը, արտասանված արդեն ոչ թե դատարանում, այլ ժողովրդական ժողովում 66 թվին, երբ հե-

դինակը պրետորի (դատական մարմնի ղեկավարի) պաշտոն էր վարում: Գործը վերաբերվում էր Պոմպեոսին արտակարգ լիազորություններ հատկացնելու՝ Փոքր-Ասիայում պատերազմի համար: Արիստոտիրատիան վախենում էր նման լիազորություններից, բայց այդ հանգամանքը համապատասխանում էր «Տեծյալների» ցանկություններին, որոնք հետաքրքրված էին իրենց ֆինանսական դործառնություններով Արևելքում: Գնեռա Պոմպեոսին զորավար նշանակելու մասին ճառում Յիցերոնը, այսպիսով, պաշտպանում էր ֆինանսական դործարարներին, բայց այդ նորիլիտետի հանդեպ նա օպոդիցիայի վերջին գործողություններից մեկն էր: Նոր հողաբաժինների և պարտքի պարտավորագրերի վերացման պահանջառաջադրող մասսայի արմատականացումը նրան մղում էր պահպանողականների բանակը, նրա քաղաքականության նպատակը դառնում է սենատի և Տեծյալների միջև բլոկ, «դասերի համաձայնություն» ստեղծելը: Այդ պարագայում ժողովրդականություն վաճելու Յիցերոնի անձնավորությունը հարմար շիրմա է դառնում ավազանու համար: Նորիլիտետի պաշտպանությամբ, անհանգիստ 63 թվին, նա կոնսուլ է ընտրվում, անշեղորեն պաշտպանում է սեփականատերերի շահերը և այսպես կոչված «Կատիլինայի դավադրությունը» ճնշելու համար «հայրենիքի հայր» հորջորջումն ստացավ: Յիցերոնի անձնական դերը նրա կոնսուլության ժամանակվա դեպքերի մեջ անշափ ուռցրել է հենց ինքը: Հեռավա երկերում նա անընդհատ ինքնազուլությամբ անդրադառնում է 63 թվի իր «ժառանգություններին», մի հանգամանք, որն արտասովոր է նույնիսկ այդ կողմից չափազանց լիբերալ անտիկ բարքերի համար: Նա պատմաբաններ և պոետներ է որոնում, որոնք նկարագրելին իրեն «գործերը» իսկ այնուհետև, արժանի հետևորդներ չդանելով, ինքն է պոետներ հորինում «ժր կոնսուլության մասին» և «Ժր ժամանակի մասին»: Այդ պոետները մեզ չեն հասել, և դրանցից գրեթե ոչ ոք քաղվածքներ չի բերում, բացի հեղինակից իրենից: Կոնսուլի պաշտոնում եղած ժամանակ՝ Յիցերոնի արտասանած ճառերից ամենից շատ հոչակ են վաչելում Կատիլինայի դեմ շորս ճառը:

Յիցերոնը միաժամանակ Հոմերի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը դարձավ, բայց այդ երկար շտեկ: Շուտով փաստական իշխանությունն անցավ «տրիումվիրներին»՝ Պոմպեոսին, Կեսարին և Կրասոսին. Յիցերոնին վտանգավոր մեղադրանք էր սպանում և Կատիլինայի որոշ կողմնակիցներին ապօրինի մահապատժի հա-

մար: նա ինքն իրեն կոոցրեց և, բավականաչափ օգնութիւն չստանալով օպտիմատների շրջանի իր նոր բարեկամներից, 58 թվին ուղևորվեց վտարանդության: Այդ ժամանակվա նամակները վիայում են նրա լիակատար բնկեմածության մասին: Ճիշտ է, արդեն 57 թվին նա վերստին վերադարձավ Հոմ, բայց տրիումփիւրները իրենց համաձայնութիւնը տվին միայն այն պայմանով, որ Յիցերոնը չի բնդիմանալու նրանց ծրագրերին: Սեսաթուսի համար ճառը (56 թ. սկիզբը) տակավին յուրակերպ քաղաքական մանիֆեստ էր, որի մեջ հեղինակն իր համակրանքն էր արտահայտում շափավոր օպտիմատների և տրագիցիոն պետական կառուցվածքի վերաբերյալ, բայց այդ ճառը տհաճութիւն աաշացրեց Պոմպեոսի և Կեսարի մեջ: Յիցերոնի ազատութիւնը սահմանափակվեց: «Եթե ես խոսում եմ պետական գործերի մասին այն, ինչ որ պետք է, — գրում է նա 56 թ. ապրիլին իր բարեկամ Ատտիկին, — ինձ խելագարված են համարում, եթե այն, ինչ անհրաժեշտ է՝ ստորաքարշ, եթե լոտմ եմ՝ ճնշված և գերի»: Մտերմական նամակներում Յիցերոնը բացելբաց խոստովանում է իր քաղաքական պլանների լիակատար խորտակումը: Մոտակա ժամանակների իր փաստաբանական գործունեութիւնը ըստ էութիւն տրիումփիւրների ձեռքին գործիք է դառնում, դառնում է նրանց ազնւանների պաշտպանը դատական պրոցեսներում, և եռանդապին նվիրվում է գրական աշխատանքի, ուր նա իրեն ավելի ազատ էր զգում և հնարավորութիւն էր ստանում որոշ շափով արդարանալու հասարակական կարծիքի առաջ: Այսպես, «Հնետորի մասին» (55 թ.) մեծ դիւլոգում, չնայած թեմայի ժամանակակից հարցերից համեմատաբար հեռու լինելուն, հեղինակի քաղաքական դրուձթներն ամեն քայլափոխում իրենց զգացնել են տալիս: 54 թ. Յիցերոնն սկսում է աշխատել «Ատուրյան մասին» տրակտատի վրա, որի մեջ փառաբանում է հոմեանական պետական կարգերը. նրա անկման պատճառները հեղինակը տեսնում է ավազանու բարոյապես քայքայվելու մեջ և գծում է, ոչ առանց ավտոպորտրետի, արիստոկրատական ռեսպոնդիկայի իդեալական գործչի կերպարը: Յիցերոնը միայն 51 թվին վստահացավ այդ տրակտատը լույս աշխարհ հանել, նրբ վերջնականապես նշմարվեց Պոմպեոսի դաշինքը նորիլիտետի հետ:

51 թվին Յիցերոնը Կիլիկիա (Փոքր Ասիա) պրովինցիան ուղարկվեց պրոկոնսուլի պաշտոնով: Այդ պոստում նա նույնպիսի անշահասիրութիւն երևան բերեց, ինչպես իր ժամանակին Սիցիլիայում, և որոշ հեղինակութիւն ձեռք բերեց զորքի մեջ. մի քանի

Հեռնական ցեղերի հարգիլուց հետո զինվորները նրան «իմպերա-  
 տոր» հռչակեցին (պատվաւոր տիաղոս, որը հատկացվում էր հռո-  
 մեական զորավարին ռազմական խոշոր հաջողութուններից հետո):  
 Նա Խաւրիա վերադարձավ 50 թ. վերջին, Կեսարի և Պոմպեոսի  
 միջև հարաբերութւոյնների խզման և քաղաքացիական պատերազ-  
 մի նախօրյակին: Թե մեկ, թե մյուս կողմը ցանկանում էր նրան  
 իր շարքերը դրավել: Յիցերոնը երկար ժամանակ տատանվում էր,  
 և, իրար հետ թշնամացած պարտիանների միջև միջնորդութւան ան-  
 հաջող փորձերից հետո, միայնով օպտիմատներին և գնաց Հու-  
 նաստան Պոմպեոսի մոտ. թեև անձնապես չէր վստահում նրան և  
 չէր հավատում նրա գործի հաջողութւանը: Փարսալի մոտ Պոմ-  
 պեոսի պարտութւոյնը (48 թ. օգոստոսի 9-ին) Յիցերոնին դրդեց  
 հրաժարվել հետագա պայքարից: Նա վերստին Խաւրիա վերադար-  
 ձավ, և Կեսարը հեշտութւամբ հաշտվեց նրա հետ: Սակայն, Կեսա-  
 րի դիկտատուրայի տարիներին Յիցերոնի համար քաղաքական  
 գործունեութւոյնը փակված էր. նա երբեմն միայն ճանձրով հան-  
 դես էր գալիս Կեսարի առաջ հօգոտ նախկին պոմպեոսականների:  
 Իրա փոխարեն շատ բեղմնավոր է նրա այդ ժամանակվա գրական  
 գործունեութւոյնը: Հռոմեական պրոզայում սկսեց տարածվել այս-  
 պես կոչված «ատտիկականութւան» ոճը, և նոր ուղղութւանը պատ-  
 կանում էին Յիցերոնի երիտասարդ բարեկամներից շատերը, այդ  
 թվում նաև Բրուտոսը, հետագայում Կեսարին սպանողը: «Ատտի-  
 կականների» հետ բանակովին են նվիրված տրակտատներ՝ «Բրու-  
 տոսը», ուր շարադրվում է հռոմեական պերճախոսութւան պատ-  
 մութւոյնը, և «Հոնտորը» — ոճի կատարելութւան մասին: Ծար-  
 տասանական երկերին հետևեցին մի շարք փիլիսոփայական  
 տրակտատներ: Հռոմեական գրականութւոյնը տակավին գրեթե չու-  
 ներ գեղարվեստական փիլիսոփայական պրոզա, և Յիցերոնն իրեն  
 նպատակ դրեց լրացնել այդ բացը: Կարճ ժամանակում նա հրա-  
 պարակում է մի ամբողջ շարք երկեր, որոնք ընդգրկում են իմացա-  
 քանութւան, մետաֆիզիկայի և էթիկայի տարբեր հարցերը և  
 հռոմեական հասարակութւանը ծանոթացնում են հելլենիստական  
 փիլիսոփայութւան կարևորագույն ուղղութւոյնների հետ:

Կեսարի սպանութւոյնից հետո (44 թ. մարտի 15-ին) Յիցե-  
 յոնի համար նորից քաղաքական ակտիվութւան ժամանակաշրջան  
 է սկսվում: Սենատական պարտիայի գլուխն անցնելով, նա ակ-  
 տիվ և որոշ ժամանակ հաջող պայքար էր մղում Անտոնիոսի դեմ,  
 որն իրեն Կեսարի հաջորդն էր համարում, և ի հակակշիռ նրան

պաշտպանում էր Կեսարի քրոջ որդի Օկտավիանոսին: Այդ պայքարի գրական հուշարձաններն են՝ Անտոնիոսի դեմ ուղղված «Փիլիպիկները», որն իր վերնագիրն ստացել է Փիլիպոսի դեմ ուղղված Դեմոսթենեսի ճառերից. այդ 14 ճառերը — գրված են մեծ թափով և կրքոտությամբ, զրանք հոռմեական ռեսպուբլիկականության վերջին նշանակալի վավերագրերն են: Երբ Օկտավիանոսը հաջողվեց Անտոնիոսի հետ և նրա հետ դաշն կնքեց (այսպես կոչված երկրորդ «տրիումվիրատ»), Յիցերոնն Անտոնիոսի պահանջով մացվեց հենց առաջին պրոսկրիպցիոն ցուցակի մեջ: 43 թ. դեկտեմբերի 7-ին Անտոնիոսի ազնեաները հարձակվեցին և սպանեցին Յիցերոնին: Անտոնիոսը կարգադրեց Յիցերոնի կտրած գլուխը ցուցադրել հոռմեական Ֆորումի հեռուորական ամբիոնի վրա:

Իր պետական գործունեությամբ Յիցերոնն անհաջողակ և անհեռատես էր: Հոռմի քաղաքացիական պատերազմում նրա միջնախավային «ճամաձայնողական» գիրքի պատմականորեն դատապարտված լինելուն միանում էր նրա անձնական անպետքությունը ղեկավար քաղաքական դերի համար, ղեպի որը նա միշտ հավակնում էր: Ամենապատասխանատու մոմենտներում լինելով անլքձուական, անչափ փառամոլ և հեշտությամբ ժամանակավոր տրամադրությունների ենթարկվող, նա հաճախ կորցնում էր քաղաքական ռեալականության զգացումը և վատ էր ձանաչում մարդկանց: Վերացական դեհորիսյոցություն շղարշը բնորոշ է նրա ամբողջ գործունեության համար: Իր անսական աշխատություններում Յիցերոնը հանդես է գալիս իբրև անտիկ հասարակության ամենալավ ժամանակների իդեոլոգիայի վերջին ներկայացուցիչ. նա լավատեսորեն է գնահատում մարդկային «բնության» հնարավորությունները և անհատի բաղմակողմանի զարգացումը բարերար է համարում հասարակության համար: Ըստ Յիցերոնի համոզման, պոլիսային քաղաքացիականությունը միանգամայն համատեղելի է առանձին քաղաքացու լայն ինքնուրույնության հետ, հատկապես այդ համոզմունքը, որը որոշ չափով անժամանակ էր նրա դարաշրջանի համար, հսկայական հետաքրքրություն շարժեց Ռենեսանսի և Լուսավորության իդեոլոգների մեջ ղեպի Յիցերոնի հայացքները:

Յիցերոնն իր ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկն էր, բայց նա ինքնուրույն մտածող չէր, ասենք, ինքն էլ չէր վերագրում իրեն փիլիսոփայական ինքնուրույնություն: Նա իր տրակտատները կոմպիլացիա էր համարում, ուր նրան պատկանում էր ոճական ձևակերպումը միայն: Նրա փիլիսոփայական և ճարտա-

սանական աշխատությունները ամենից հաճախ դիալոգիկ ձև ունեն և կառուցված են Արիստոտելի դիալոգների տիպով: Դիալոգի հյուսմանը սովորաբար նախորդում է հեղինակի ներածությունը, որը բացատրում է տրակտատի խնդիրները: Հակադիր տեսակետները շարադրվում են երկար կապակցված ճառերի ձևով: Գործողությունը փոխադրված է Հոմերի միջավայրը: Դիալոգի պերսոնաժները — կամ սկիպիոնյան շրջանի դեմքեր են, կամ I դ. սկզբի գործիչներ, Ֆիցերոնն ինքը և նրա բարեկամները: Փիլիսոփայական տրակտատներում հաճախ շարադրվում են տարբեր դպրոցների հայացքները: Հանդես է գալիս էպիկուրականը, ստոիկը, վերջապես, Ակադեմիայի հետևորդը, որին պատկանողների թվին հեղինակը համարում էր իրեն: Այնուամենայնիվ Ֆիցերոնը հետևողական կողմնակից չէր որևէ փիլիսոփայական սիստեմին՝ էկլեկտիկ է: էկլեկտիկ տենդենցները, որ հատուկ էին II—I դ. դ. հունական փիլիսոփայության ուղղություններից շատերին, Ֆիցերոնի մոտ ավելի մեծ չափով են աջտահայտվում, քան նրա հույն ուսանողների մոտ: Տեսական հարցերում հետևելով «նոր» Ակադեմիային, գործնական էթիկայի բնագավառում, նամոտենում է ստոիկներին, մանավանդ Պանեթիոսին: Խիստ բացասական դիրք նկատվում է էպիկուրի փիլիսոփայության հանդեպ, որը հոմեական պետական գործչին վանում է իր ապաքաղաքականությամբ: Քանի որ հելլենիստական մտածողների գրեթե բոլոր բնագիր երկերը կորած են, Ֆիցերոնի ընդարձակ վերապատմումները շատ դեպքերում հիմնական կամ նույնիսկ միակ աղբյուրներ են հանդիսանում ծանոթանալու համար, թե զանազան փիլիսոփայական պրոբլեմներն ինչպես էին մեկնաբանվում առանձին դպրոցներում, իսկ շարադրության դյուրըմբեռնելիությամբ և ոճի նրբագեղությամբ, հասկանալի է, իրենից շատ ետ էր թողնում հելլենականության պրոֆեսիոնալ փիլիսոփաներին: Պակաս կարևոր չէ Ֆիցերոնի ծառայությունը նաև լատիներեն լեզվով փիլիսոփայական տերմինոլոգիա ստեղծելու գործում, և հոմեական փիլիսոփայական պրոգնոզի համար արտակարգորեն բարենպաստ հանգամանք էր, որ նրա օրորոցի մոտ կանգնած էր այնպիսի ոճաբան, ինչպիսին Ֆիցերոնն էր:

Իմացաբանության մեջ Ֆիցերոնն ընդունում է Ակադեմիայի սկեպտիկական հայացքները, ժխտելով գիտելիքների արժանահավատությունը և գտնելով, որ պետք է բավարարվել հարցերի հավանական լուծումով միայն (այսպես կոչված «պրոբաբիլիզմ»,

probabilis — «հավանական»): Այդ դրույթն ազատում է որևէ սամունքի խստորեն հետևելու անհրաժեշտությունից և էկլեկտիկական լայն հնարավորություններ է բաց անում: Սկեպտիցիզմը գործնականում կոնսերվատիզմ է դառնում: Այսպես, օրինակ, աստվածների մասին հարցում («Աստվածների բնության մասին» տրակտատը), Յիցերոնը հերքում է աստվածների գոյության այն ապացույցները, որոնք բերում էին էպիկուրականները և ստոիկները, բայց իր եզրակացություններին տալիս է ոչ թե ավերաստական, այլ ազնուստիկական ձևակերպում միայն, — աստվածներ գոյություն ունեն, թե ոչ՝ հայտնի չէ, բայց անհրաժեշտ է պահպանել պետական կրոնը: Բնորոշ է, որ Յիցերոնի մոտ սկեպտիկական տեսակետի ներկայացուցիչը պոնտիֆիկների գերագույն քրմական կոլեգիայի անդամն է: Ստրիատորական հասարակության իդեոլոգիական հիմքերի համար տեսական կասկածը ամենափոքր վտանգ անգամ չի ներկայացնում: Այնուամենայնիվ, այստեղից մի գործնական եզրակացություն է բխում՝ առաքինությունը աստծուց չէ, այն՝ մարդու սեփականությունն է: Յիցերոնն ավելի վճռական դիրք է գրավում գերբնականի վերաբերմամբ. նա բացեիբաց ժխտում է ամեն կարգի հրաշքներ, նախագուշակություններ, գուշակություններ («Գուշակության մասին»), նախատեսության գաղափարը («Օրհասի մասին»): Ի հակակշիռ ստոիկների բացարձակ դետերմինիզմի նա պաշտպանում է կամքի ազատության և իր գործողության համար մարդու լիակատար պատասխանատվության սկզբունքը: Առաքինությունը մեր մեջ բնածին է իբրև երաշխիք, որը կարիք ունի զարգանալու և կատարելագործվելու բանականության օգնությամբ: Մարդկային բնությունը փշացած չէ, և առաքինությունը այն է, որ բանականորեն և անշահախնդիր ծավալվեն բնական հակումները («Բարձրագույն քարիքի և բարձրագույն շարիքի մասին»): Գործնական էթիկայի հարցերը Յիցերոնը քննության է առնում իր երկերից շատերում («Տուակոպանումի դրույցները», «Կատոն ավագը», «Էկլիոս» և այլն), բայց ամենից լիակատար «Պարտականությունների մասին» տրակտատում: Այդ տրակտատը, կազմված որդու խրատելու հին հռոմեական ձևով, շարադրում է Պաննիոսի էթիկան և հաստատվում է բազմաթիվ օրինակներով՝ վերցված Հռոմի արդիականությունից և իրեն Յիցերոնի պետական փորձից: Առանձնակի ինտենսիվությամբ բնոգծված է մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը՝ «պետությունները զխավորապես

հիմնված են այն նպատակով, որպեսզի պահպանեն մասնավոր սեփականությունը»։ զեմոկրատները, որոնք նախագծում են հողի վերաբաժանում կամ պարտքերի վերացում, «սասանում են պետության հիմքերը», ոչնչացնելով համաձայնությունը քաղաքացիների միջև և խախտելով նրանց բնական իրավունքները։ Փիլիսոփայություն, աշխարհով, տեսական բազա է դառնում քաղաքականության համար։ Յիցերոնն իրեն զգում է որպես ժառանգ սկիպիոնյան խմբակի տրադիցիաների, Պուլբրիոսի հայացքների և միջին Ստոալի։ «Պետության մասին» գիալոգում վերարտադրվում է հոմեական «խառը» կարգերի կատարելության մասին Պուլբրիոսի ուսմունքն ուղղուններով հիմնված Պանեթիոսի ուսմունքի վրա։ Գլխավոր գործող անձը. հեղինակի հայացքների կրողը, Սկիպիոն Կրտսերն է։ Այդ դիալոգը, որը պահպանվել է ոչ լիակատար, գեղարվեստական ուժեղ երանգավորում ունի և վերջանում է Պլատոնի «Պետության» նման, յուրակերպ «առասպելով», աշխպես կոչված «Սկիպիոնի երազով», տիեզերական տարածությունների երանելիության պատկերով, որն սպասում է իզեալական պետական գործչին։ Բնական իշավունքի ստոիկյան տեսությունն ընկած է «Օրենքների մասին» անավարտ գիալոգի հիմքում. կարծես թե այդ «Պետության մասին» տրակտատի շարունակությունն է կազմում և մի փորձ է հոմեական իրավունքի տարրեր ձյուղերի սիստեմատիկ շարադրության։ Յիցերոնի փիլիսոփայական երկերն ամբողջությամբ չեն պահպանվել։ Հին ժամանակ մեծ տպավորություն էր գործում մեզ հասած «Հորտենսիսիս»-ը, որով սկսվում էր փիլիսոփայական տրակտատների մի ամբողջ սերիա, և որը մտածել էր Յիցերոնն իր կյանքի վերջին տարիներին։ Այդ մի կոչ էր փիլիսոփայությունն ուսումնասիրելու ըստ Արիստոտելի «Պրոտրեպտիկ»-ի, և կազմված էր համոզմունքի մեծ ուժով և պայծառ գեղարվեստական ձևով։

Իբրև պերճախոսության տեսարան Յիցերոնը չի բավարարվում ճարտասանության դպրոցական կանոններով։ Երիտասարդ ժամանակ նա ցանկացավ կազմել ճարտասանության ձեռնարկ՝ հունական դասագրքերի ոճով, բայց այդ աշխատությունն անավարտ թողեց։ «Հեռտորի մասին» գիալոգում պերճախոսության խնդիրների ավելի լայն ըմբռնում ենք գտնում։ Պերճախոսության մասին զրույցը քաղաքական գունավորում ունի։ Այն փոխադրված է 91 թիվը, քաղաքացիական պատերազմների բռնկման անմիջականորեն նախորդող ժամանակը։ Յիցերոնի տեսակետով, այդ

տեսպուրլիկայի ամենալավ ժամանակների վերջին օրերն են: Գործող անձինք են՝ սենատական պարտիայի պարագլուխները, որոնք հավաքվել են քննարկելու քաղաքական դրուժյունը, նախատեսնելով ապագա «պետության դժբախտությունները»: Պերճախոսության և քաղաքականության այդպիսի կապը պատահական չէ, քանի որ «ամեն մի ազատ ժողովրդի մեջ, մանավանդ խաղաղ և հանգիստ պետություններում, միշտ ծաղիկ և տիրապետել է պերճախոսությունը»: Յիցերոնի համար հոնտորն ամենից առաջ պետական գործիչ է, և ոչ թե դատական պատրվակադորձ կամ դպրոցական ղեկավար: Հոնտոր պատրաստելու ծրագրի մեջ, ուստի, բացի դպրոցական ճարտասանությունից, մտնում է գիտելիքների այն հանրագումարը, որն անհրաժեշտ է քաղաքական գործչի համար: Այդ գիտելիքների ծավալը որոշելու վերաբերյալ Յիցերոնը հակադրում է երկու տեսակետ, որոնց կրողները դիպուկի զլխավոր մասնակիցներ՝ նախորդ սերնդի հռչակավոր հոնտորներ՝ Կրաստսը և Անտոնիոսն են: Անտոնիոսը, լինելով տրագիցիոն տեսակետի ներկայացուցիչը, հոնտորի խնդիրները սահմանափակում է դատական և քաղաքական թեմաներ ունեցող հասարակական ճառերով: Կրաստսը, որի բերանով խոսում է Յիցերոնն ինքը, ավելի բարձր նպատակներ է դնում և նշում է հոնտորական կրթության ծրագիրը, հիմնված փիլիսոփայության ուսումնասիրության վրա: Կատարյալ ճառերը նրանք են, որոնք մասնավոր հարցը բարձրացնում են ընդհանուր սկզբունքների մակարդակին: Որպեսզի ըմբռնվի վարքագծի պրոբլեմները, — իսկ հոնտորն ստիպված է միշտ այդ անել նույնիսկ դատա-քաղաքական հարցերի նեղ ոլորտում, — որպեսզի տիրապետվի վիճաբանության և յուրաքանչյուր մտքի բազմակողմանի զարգացման արվեստը, որպեսզի, վերջապես, ճառը հարմարեցվի լսարանին ու մոմենտին, այդ բոլորի համար հարկավոր է էթիկա, տրամաբանություն և հոգեբանություն, այսինքն՝ փիլիսոփայական կրթություն: Որպեսզի կարողանալ ճառը զարդարել համապատասխան օրինակներով, պետք է ծանոթ լինել պատմությանը և պոետիկական գրականությանը: Կատարյալ հոնտորը՝ բարձր կուլտուրայի և լայնածավալ գիտելիքների տեր մարդ է: Այս պայմաններում՝ պերճախոսության սահմանափակումը դատա-քաղաքական թեմատիկայով իմաստազրկվում է, և այն դառնում է պրոզաիկ խոսքի համայնապարփակ մի արվեստ: 91 թվին վերագրվող դիպուկի մասնակիցները բոլոր ժամանակ վերապահություն են անում,

որ նրանք պատկերում են իդեալը, որին ոչ ոք տակավին չի հասել, բայց որը միանգամայն հասանելի է, և ընթերցողը հույժ Թափանցիկ ակնարկներից հեշտությամբ կռահում է, որ իդեալը արդեն նվաճված է և այն մտքմնացել է հեղինակի անձնավորության մեջ:

Յիցերոնը սահմանափակ չափով է միայն ֆիքսված ճարտասանական «կանոնների» կողմնակից հանդիսանում: Ճառի տիպը, ըստ նրա կարծիքի, կախումն ունի այն պայմաններից, որ այն արտասանվում է, և ուստի թույլատրելի է համարում բազմազան երանգներ: Այս կետում իր կյանքի վերջում Յիցերոնը խիստ ընդիմադրության հանդիպեց, որը ելնում էր հռոմեական «ատտիկականներից»: Նրանք հռետորից պահանջում էին ոճական կայունություն, որն արտացոլի խոսողի բարոյական անհատականությունը (այսպես կոչված «էթոս»), հանձնարարում էին, որ ճառը լինի հասարակ, պարզ և հաստատուն: «Բրուտոս» և «Հնետոր» արակտատներում հակաձառելով ատտիկականներին, Յիցերոնը առաջ է քաշում հակառակ պահանջը՝ կատարյալ պերճախոսությունը պահանջում է միակերպ տիրապետել ճառի այն բոլոր տիպերին, որոնք հաստատել է տրադիցիոն ճարտասանական տեսությունը: Հնետորի առաջ երեք խնդիր են ծառայած՝ ապացուցել իր դրույթները, հաճույք պատճառել ունկնդրողին, ներգործել նրա կամքի վրա, և այս խնդիրներից յուրաքանչյուրին համապատասխանում է հիմնական երեք «ոճերից» մեկը. հանդարտ «քնքույշ» («ցածր») ոճը պիտանի է համոզելու համար. «միջին» ոճը, որն ստեղծել է ատիստական պերճախոսությունը, աչքի է ընկնում նրբագեղությամբ. «վեհապանձ» ոճի պաթետիկ ուժը գրավում և հուզում է ունկնդրողին: Հնետորական տակտի գործն է ըստ պահանջի օգտվել բոլոր երեք ոճերից, բայց հնետորի ամենարժեքավոր հատկությունը՝ «վեհապանձ» ոճին տիրապետելն է, և Յիցերոնն ատտիկականների պատճառաբանությունները կասեցնում է մատնանշելով Դեմոսթենեսին. ատտիկական պերճախոսության մեծագույն ներկայացուցիչը հատկապես հուզված, «հզոր» ճառի վարպետ էր: Նույնը «ատտիկականների» դեմ էր ուղղված Յիցերոնի և մի ուրիշ ոճաբանական պոստուլատը՝ «առատության» (copia) պահանջը: Բովանդակության տեսակետից «առատությունը» մտքի բազմակողմանի, ավարտված ծավալումն է: Մեր թվ. I դարի ճարտասան Կվինտիլիանը, համադրելով Դեմոսթենեսին և Յիցերոնին, մատնանշում է, որ առաջինից՝ «ոչինչ չի կարելի կրճա-

տել», Երկրորդին՝ «ոչինչ չի կարելի ավելացնել»: Հորդացող շարադրումն իր կողմից պահանջում է արտահայտիչ միջոցներէ հարստութիւն և բազմազանութիւն: Յիցերոնը մեծ նշանակութիւն է սալիս «ատտիկականների» կողմից ժխտվող հետտրական ռիթմին. «Հետտոր» տրակտատում մենք գտնում ենք պրոզայի ու ռիթմի տեսութեան ամենարնգարձակ շարադրում, մասնավորապես նախադասութեան և նրա առանձին մասերի (կոլոնների) ռիթմիկ վերջավորութեան (կլաուզուլաներ):

Յիցերոնի հետտորական գործնականը չէր անջատվում նրա ոճաբանական տեսութիւններից: Ճառի «առատութեան» սկզբունքը իրական մարմնացում ստացավ պարբերութեան ռիթմա-շարահյուսական միասնութեան մեջ: Յիցերոնը պարբերական ճառի լավագույն վարպետն էր Հռոմում: Նրա պարբերութիւնը խստորեն բալանսավորված է՝ կոլոններն ըստ շարահյուսական և ռիթմական կառուցվածքի փոխադարձաբար հավասարակշռված են: Այն ժամանակ երբ «ասիականները» ձգտում էին մանրամասնութիւնների հարուստ դրվագավորման, Յիցերոնը՝ մասի արտահայտիչ եռանդը երբեք չի անջատում ի վնաս պարզութեան և ամբողջի ուժի: Յանկանալով հնարավոր շփով լիովին ծավալել միտքը և կապել այն սկզբունքային աշխարհայացքային գրույթների հետ, նա շարունակաբար դիմում է բարոյա-փիլիսոփայական կամ քաղաքական բնույթի «ընդհանուր տեղերի» օգտագործմանը: Այդ կարգի դատողութիւններ հաճախ հանդիպում են նույնիսկ դատական ճառերում, դրանով մկայելով հոմերական իրավունքի նախկին ֆորմալիզմից ազատագրվելու մասին: Այսպես, այն ճառը, որ արտասանվել էր (63 թ.) ի պաշտպանութիւն հուլիս պոետ Արքիոսի, որը մեղադրվում էր ապօրինի կերպով հոմերական քաղաքացու իրավունք յուրացնելու մեջ, կենտրոնական տեղը դրվում է ոչ թե իրավաբանական պատճառարանութիւնը, այլ լայնածավալ «շեղումը» պոետիայի նշանակութեան մասին: Յիցերոնի ոճաբանական եղանակների ամբողջ սիստեմը լիակատար համապատասխանութեան մեջ է գտնվում նրա աշխարհայացքի հետ, որի համար այդ սիստեմը լիովին համապատասխան արտահայտութիւն է ստեղծում: Իրա հետ միասին այնտեղ հիանալի կերպով արտացոլված է այն դոկտրինյորական մոմենտը, որով աչքի է ընկնում Յիցերոնի դիրքն իր ժամանակի սոցիալական պայքարում: Առանձնապես այդ նկատելի է քաղաքական ճառերում, փարթամորեն գունագարդված «ընդհանուր տեղերի» հետևում հա-

ճախ թաքնվում է կոնկրետ բովանդակության ազբատութիւնը, որոշ քաղաքական գծի բացակայութիւնը: Մտքի շարժումը փոխադրինվում է անտիկ պերճարտութեան համար սովորական «ամպլիֆիկացիայով» («մեծացումով», այսինքն փրոնութեամբ) դեպի գովարանութեան կամ հայհոյանքի կողմը, ճանր դառնում է շատագոյնութեան կամ «ինվեկտիվ» (հարձակում):

Իր տեսական աշխատութիւններում ընդգծելով «վեհապանծ» ոճի և ունկնդրողի վրա հուզական ներգործութեան նշանակութիւնը, Յիցերոնը մատնանշում էր այն բնագավառը, ուր նրա հետադարձական տաղանդը դրսևորվում է ամենամեծ ուժով: Այդ ընդունում էին և ժամանակակիցները: Երբ հարկ էր լինում, որ դատական պրոցեսներում Յիցերոնը հանդես գար այլ պաշտպանների հետ, դերերը սովորաբար բաժանում էին այնպես, որպէսզի նրան բաժին ընկնի եզրափակիչ պաթետիկ մասը: Բացառանշու-թիւնները, աղերսանքը, ուղեկցված բուռն շարժումներով, աստ-վածներին դիմելը, ֆիկտիվ ճառերը՝ դրված ալլեգորիկ պերսո-նաժների բերանը (օրինակ՝ «հայրենիք», Կատիլինայի դեմ առա-ջին ճառում), — անտիկ հետադարձական պաթետիկայի այս ամբողջ շինանոցին Յիցերոնը տիրապետում էր կատարելապես և զգեստա-վորում էր այն զեղեցիկ հանգամանակով: Բարեկամական նա-մակներում նա նույնիսկ մի քիչ ծաղրում է իր սեփական հան-դիսավոր ոճով խմբավորացիա կատարելու ընդունակութիւնը: Սակայն, նրա արվեստը բոլորովին էլ չի սահմանափակվում միայն այդ ոլորտով: Բազմազան «ոճերի» պոստուպատը Յիցերոնը իրագործել է, և նա կարողանում է մի ճառի տեսութեան ըն-թացքում փոփոխել տոնը, հերթադասել պաթոսը՝ կատակի հետ, կրքոտութիւնը՝ պարզութեան և հանդարտութեան հետ: Պարզ «ցածր» ոճով կազմած ճառերը, կամ ճառերի մասերը, աչքի են ընկնում պատկերի կենդանութեամբ, սրամտութեամբ, բանավեճի լնայթողութեամբ: Հետտորն առանց դժվարութեան ուրվագծում է հակառակորդի դավեշտական դիմանկարը: 62 թվի համար կոն-սուլ ընտրված Մուրենայի պրոցեսում (63 թ.) իբրև մեղադրող հանդես եկան այդ ընտրութիւններին տապալված իրավաբան Սուպիկիուսը և իր բարբերի խստութեամբ հայտնի Կատոն Կրտսերը, որը գիտակ էր ստոիկյան փիլիսոփայութեան: Յիցերոնը ծաղրում է իրավաբանների պեղանութիւնը և ստոիկյան փիլի-սոփայութեան վերացական խստաբարոյութիւնը: Շնորհալի, բայց ցովի բարբի տեր Յելլուսի համար սրամիտ և նրբագեղ ճառում

(56 թ.) Յիցերոնը տալիս է իր արտաքսման պատճառ եղող հայտնի կեսաբազկան Կլոդիուսի և նրա քույր Կլոդիայի, որն իր սկանդալներով և սիրային արկածներով պակաս հայտնի չէր Հռոմում, — հեգնակծական-սպանիչ բնութագիրը: Երկրորդ «Փիլիպիկան» (44 թ.)՝ ցայտուն ինվեկտիվա է, որն անարգում է Անտոնինոսին:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ Յիցերոնի հոեաորական երկերն այն ձևով, ինչպես մենք դրանք կարդում ենք, իսկապես նրա արտասանած ճառերի ճշգրիտ գրանցումները չեն: Սղագրական գրանցման մեթոդները Հռոմում արդեն հայտնի էին, բայց հեղինակը, հրապարակելով իր ճառն, իբրև զեղարվեստական երկ կամ հրապարակախոսական պարսավագիր, շատ թե քիչ վերամշակման էր ենթարկում այն: Սենատական պարոխիայի համար բանդաներ կազմակերպող Միլոնի գործի առթիվ արտասանած ճառը (52 թ.) հրատարակվեց միանգամայն փոփոխված ձևով, և վտարանդուսթյան մեջ գանվող Միլոնն իբր թե նկատել է, որ նա ստիպված չէր լինի ճաշակել Մասիլիայի (Մարսելի) ոստրենները, եթե Մարկուս Տուլիուսը դատարանում ասեր նույնը, ինչ որ հրապարակած երկումն է գրել: Որոշ զեպրերում («ճառը» միայն գրական ձև էր. Վերբեսի պրոցեսի երկրորդ սեսիայի համար ճառերը կամ երկրորդ «Փիլիպիկան» իրականում երբեք չեն արտասանվել):

Յիցերոնի ոճական արվեստի օրինակներ են հանդիսանում նաև նրա նամակները: Նա կարողանում է իր ոճը բազմազան դարձնել նայած հասցեատիրոջը, և թղթակցի անձնավորությունն ամեն անգամ ոճական նոր երանգներ է ստեղծում: Յիցերոնը գրում էր հեշտ ու արագ, և չնայած նրա մեծաքանակ թղթակցություններին, նամակներից շատերը զգալի շափերի են հասնում: Նրա պահպանված նամակների շորս ժողովածուները («Քվինտուս եղբորը», «Ատտիկին», «Բրուտոսին» և «Նամակների» խառը ժողովածուն՝ տարբեր հասցեներով) պարունակում են 774 նամակ, բայց այդ՝ անտիկ ժամանակ հրատարակածի կեսից ավելին չի կազմում: Այդ ամբողջ թղթակցությունը վերաբերվում է Յիցերոնի կյանքի վերջին քսանհինգ տարուն, այսինքն այն ժամանակին, երբ նա արդեն հայտնի մարդ էր, և հասցեատերերը պահում էին նրա նամակները: Անփոխարինելի լինելով հռոմեական ռեսպուբլիկայի վերջին տասնամյակների համար իբրև պատմական աղբյուր, Յիցերոնի նամակներն արժեքավոր են նաև նրանով, որ

գրանցում են հեղինակի գեմքը՝ անտիկ պայմանների համար  
Վիանգամայն արտասովոր լիակատարությունը: Այդ անշուքյամբ  
տուանձնապես ուշագրավ են Տիտուս Պոսպոնիուս Ատտիկին ուղ-  
ղած նամակները: Այդ Ֆինանսական խոշոր գործարարը, Յիցերո-  
նի ամենամոտ բարեկամն ու նրա երկերի հրատարակիչը՝ նրա  
անդավաճան խորհրդատուն էր կենսական բոլոր հանգամանքնե-  
քում, և Յիցերոնը հիմք ունենալով ռեալականության իր սեփա-  
կանության զգացումն անբավարար համարելու, միշտ օգնություն  
էր որոնում բարեկամի զգաստ և գործնական դատողություննե-  
քում: Դատելով այն անկեղծությամբ, որով նա արտահայտվում է  
Ատտիկին ուղղած նամակներում, այդ նամակագրությունը նա-  
խատեսնված չի եղել հրապարակման համար, այդ բանը չի կա-  
ռելի ասել Յիցերոնի շատ ուրիշ նամակների մասին: Անտիկ գրա-  
կանության մեջ նամակը դեռ վաղուց հաստատվել էր իբրև յու-  
րահատուկ ժանր, որն ուներ իր առանձին ոճական օրենքները, և  
Նամակի ձևը հաճախ միայն գրական եղանակ էր ծառայում: Եղ-  
բորը հասցեագրված նամակներից մեկն ըստ էության մի տրակ-  
տատ է պրովինցիաները կառավարելու մասին: 44 թվին Յիցե-  
րոնն ինքը հրապարակելու պատրաստեց իր նամակների ոչ-մեծ  
մի ժողովածու: Այդ գործում նրան օգնում էր նրա գրական քար-  
տուղար ազատագրված ստրուկ Տիրոնը: Յիցերոնի մահից հետո,  
Տիրոնը շարունակեց հավաքել նրա նամակները, և Տիրոնի նյու-  
թերը մասամբ մեզ հասած ժողովածուների հիմքը կազմեցին:

Ավելի քիչ հետաքրքրական են Յիցերոնի պոետիկական փոր-  
ձերը: Ինչպես ժամանակի գրեթե յուրաքանչյուր կրթված մարդ,  
նա որոշ չափով տիրապետում էր տաղաչափությանը, բայց պոե-  
տիկական շնորք նա չուներ, և նրա բանաստեղծությունները՝  
ինքնուրույն և թարգմանական՝ ոճական մարզանքների մակարդա-  
կից ավելի չեն բարձրանում: Իր ընդհանուր աշխարհահայացքու-  
թին դրույթի համապատասխան Յիցերոնը «կլասիցիստ էր»: Հու-  
մեական պոեզիայի նոր հոսանքներին, որոնք կողմնորոշվում էին  
գեպի ալեքսանդրիական դպրոցը, նա վերաբերվում էր թշնամա-  
բար և գերադասում էր հին պոետներին՝ Էննիուսին, Պակովիու-  
սին, Ակցիուսին:

Լատիներեն պրոզայի լեզուն Յիցերոնը ոչ միայն գեղարվես-  
տական հղման է ենթարկում, այլև հաղորդում է նրան արտասո-  
վոր ձևովություն, բարդ մտքերի բազմազան երանգներ արտա-  
հայտելու ընդունակություն: II դարի գրական լատիներենին հա-

տուկ էին քերականական սիստեմի բազմաթիվ տատանումներ, շարահյուսութեան անճոռնիություն, բառապաշարի խայտարհություն, օտար բառերի (գլխավորապես հունարեն) լայն գործածություն, Յիեցրոնի լեզուն աչքի է ընկնում գիճերենցացված բառապաշարի մանրակրկիտ ընտրանքով, քերականական նորմերի խստությունը, և պարբերությունների սահուն և վճիտ կառուցվածքով:

Անտիկ քննադատությունը շատ բարձր էր գնահատում Յիցերոնի դերը լատիներեն պրոզայի ոճն ստեղծելու մեջ, և նրա լեզուն էապես այսպես կոչված «կլասիկ» լատիներենի նորման է կազմում:

Հին հռոմեական ոչ մի դրող այնպիսի նշանակություն չէ ունեցել եվրոպական կուլտուրայի պատմության համար, ինչպիսիքն ունեցել է Յիցերոնը: Ռեսպուբլիկայի վերջին տարիների և կայսրության սկզբի գրական գործիչները, ճիշտ է, որ զսպված վերաբերմունք ունեին դեպի նա. ցիցերոնյան պերճախոսության բնույթը՝ ժամանակակիցներն անբակտելիորեն կապում էին նրա կոմպրոմիսային քաղաքական դիրքի հետ, և Յիցերոնի անձնավորությունն իր բոլոր բացերով դեռ չափազանց կենդանի էր հիշողության մեջ: Բայց հաշտող սերունդի համար այդ մոմենտներն արդեն կոոցրել էին իրենց սրությունը, և Յիցերոնը ճանաչվեց որպես հռոմեական պրոզայի մեծագույն վարպետ, որի անունը պերճախոսության հոմանիշ դարձավ: Նույնիսկ հույն քննադատները, որոնք սովորաբար անտեսում էին հռոմեական գրականությունը, բացառություն էին անում Յիցերոնի համար: Այլ լույսի տակ էր ընկալվում հուլակալոր հուստորի և անձնավորությունը, որն այժմ պատկերացվում էր որպես հռոմեական ազատության վերջին կայուն պաշտպանը: Ճարտասանական դպրոցը ոճաբանության արվեստն ուսուցանում էր ելնելով Յիցերոնից, կազմվում էին նրա երկերի մեկնաբանություններ և դպրոցական ձեռնարկներ: Իր այդ նշանակությունն ամբողջությամբ Յիցերոնը պահպանեց և քրիստոնեության հաղթանակից հետո: Ուստի Յիցերոնի երկերը մեզ են հասել շատ բազմաթիվ ձեռագրերով: Սակայն, ցիցերոնականության ամենափարթամ ծաղկումը վերաբերում է Վերածնության դարաշրջանին: Անհատի ինքնուրույնության աճը, անձնական ապրումների արժեքի գնահատումը, պայքարը սխոլաստիկայի դեմ, Վերածնության այդ բոլոր տենդենցները տեսական բազա գտան այն գրողի երկերում, որը միաժամանակ ան-

հատորեն գունավորված ոճի շքերագանցված օրինակ էր ճանաչվում: Ցիցերոնի նամակները, որոնք բազմակողմանիորեն դասվորում էին հեղինակի անձնավորութունը, այդ առնչությամբ պակաս հետաքրքրություն չէին ներկայացնում, քան նրա փիլիսոփայական երկերը: Ցիցերոնի լեզվի հիման վրա ստեղծվում է «նոր-լատիներեն» հումանիստական պրոզան, որը վիթխարի դեր է խաղացել Մվրոպայի ժողովուրդների ազգային պրականութունների ձևավորման գործում: Ցիցերոնի գաղափարական ազդեցությունն այդ ժամանակ հազիվ թե հաշվառքի ենթարկվի: Նրա երկերը, որոնք հայտնի էին յուրաքանչյուր կրթված մարդու, խթանում էին միտքը գրականության ու գիտության ամենաբազմազան բնագավառներում: Ըստ Կոպեռնիկոսի վկայության, համընդունված տիեզերաբանական պատկերացումները՝ երկնային լուսատուների երկրի շուրջը պտտվելու վերաբերյալ նրա հայացքները ամբրապնդվեցին այն պահին, երբ նա Ցիցերոնի մոտ գտավ հանրապետական հայացքի գոյության մատնանշում՝ անտիկ աստղաբաշխ Հիկետի ուսմունքը լուսատուների անշարժության և երկրի շարժման մասին: Հասկանալի է, որ Ցիցերոնի ազդեցությունը եվրոպական մտքի վրա նշանակալի շափով պետք է վերագրել նրա գաղափարական աղբյուրներին՝ չպահպանված հելլենիստական փիլիսոփաներին, որոնց ժողովրդանակացնողն է նա, բայց դրա հետ միասին որոշ դեռ էին խաղում նրանց ուսմունքների և այն կողմերը, որոնք թելադրված էին Հռոմի իդեոլոգիական պահանջներով: Այսպես, բարձրացող բուրժուազիայի իդեոլոգներին դրավում էր միջին Ստոայի սոցիալական փիլիսոփայությունը, որը հիմնավորում էր անհատի անձնական և դուշբային ինքնուրույնության գուգակցումը քաղաքացիական պտրտականութունների հետ: Այդ ուսմունքն ստեղծել էին հույն փիլիսոփաներն այն հասարակության շահերի համար, որին պատկանում էր Ցիցերոնը, և Ցիցերոնի մոտ այն հետադաս զարգացում և մեկնաբանում ստացավ՝ կիրառվելով կոնկրետ քաղաքական պայմաններում: Անգլիական, մասամբ և ֆրանսիական, Լուսավորության բարոյախոսական փիլիսոփայությունը շատ բանով պարտական է Ցիցերոնին: Հելլենիստական սիստեմների նրա շարադրություններն են մատնանշում ամենատարբեր փիլիսոփայական ուղղությունների ներկայացուցիչները՝ և դեիսաները, և սկեպտիկները, մանավանդ ավտոնոմ բարոյականության վրդմնակիցները: Ցիցերոնի ուշագիր ուսումնասիրության հետքեր

հարելի է գտնել Լոկկի, Թոլանդի, Յոմի, Շեֆտսերբիի, Վոլտերի, Դիրզոյի, Մաբլիի և XVII—XVIII դ. դ. եվրոպական շատ ժառանգների մոտ: Բուրժուական ռևոլուցիաները, հարուստը աչալով քաղաքական պերճախոսությունը, առաջ քաշեցին Յիցերոնի, իբրև հոնտորական օրինակի, նշանակությունը, և Յիցերոնից օգտվելը շատ նկատելի է Փրանսիական ռևոլուցիայի հոնտորների, օրինակ՝ Միրարոյի և Ռոբեսպիերի ճառերում:

#### 4. ՕՊՈՋԻՅԻԱՆ ԸՆԳԳԵՄ ՅԻՅԵՐՈՆԻԶՄԻ: ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՎԵՐՋԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊՍՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեական ռեսպուբլիկայի վերջին տասնամյակները՝ ռեսպուբլիկական հին իդեոլոգիայի քայքայման ժամանակաշրջանն էին: Չափավոր պահպանողական դիրքը, որի վերջին տեսաբանը Յիցերոնն էր, I դարի 50-ական թվականներին սրղեն այն համակրանքը էր վաչելում Հռոմի միջին խավերի մեջ, ինչպես նախկին ժամանակներում: Ռեսպուբլիկական հիմնարկությունների կործանման, ընտրությունների ժամանակ սիստեմատիկ օբտրուզիաների, կառավարման կարևորագույն օրգանների անգործության պայմաններում՝ կորչում էր հավատը դեպի տրագիցիոն պետական կարգերի անասանությունը և նույնիսկ նպատակահարմարությունը, ընկնում էր հետաքրքրությունը դեպի քաղաքական կյանքը: Հասարակական անտարբերությունը բազմազան արտահայտություն էր ստանում. այն երևան էր գալիս և ինչպես էպիկուրյան փիլիսոփայության տարածման մեջ, որը կոչ էր անում «իմաստունին» հեռանալ պետության կառավարման գործից, այնպես էլ միստիկական տրամադրություններում՝ սպասելով «աշխարհի վերջին», հրապուրվելով աստղագուշակությամբ և կախարհություններով: Ոմանց ապոլիտիզմին ղուզընթաց, ուրիշների արմատական գործողությունների ձգտումը՝ ստեղծված փախուղուց բռնի էլքի որոնման արտաայտությունն էր:

Աշխարհայացքային շրջադարձը, կապված ռեսպուբլիկայի քայքայման հետ, արտացոլում գտավ և գրականության մեջ: Պրոզայի բնագավառում մենք տեսնում ենք խիստ ռեալիստ ցիցերոնիզմի դեմ, պոեզիայի բնագավառում՝ դպրոց է ստեղծվում, որը ոգեվորվում է ալեքսանդրիականների էսթետիկական սկզբունքներով:

Պերճախոսության մեջ նոր ուղղությունը հանդես է գալիս «աստիկականության» դրոշի տակ, իբրև «ասիականության» հա-

կադրութիւն: Այն ժամանակ, երբ Յիցերոնը հոետորից պահանջում էր կարողանալ տիրապետել տարբեր ոճեր, հարմարվել յարանին և մոմենտի պայմաններին, հոմեական ատտիկականները ընդունում էին միայն պարզ անարվեստ ոճ, մտքերի ճշգրիտ արտահայտութիւն, խոսքի մեջ հոետորի բարոյական անձի մարմնացում: Յիցերոնի արհեստական կեցվածքին նրանք հակադրում էին այլ կեցվածք, խիստ գործարար և անխնա ուղղամտութիւն կեցվածքը: Այդ տեսակետից Յիցերոնի պերճախոսութիւնը ներկայանում էր ճոռոմ և սեթեթ, ճապաղ «ասիականութիւն», շնորհիվ միևնույն մտքի հաճախակի կրկնութիւն, «քնքշացրած» այնպիսի զգացմունքային էֆեկտների օգտագործմամբ, ինչպիսին հոետորական ութմն էր: Իր հերթին Յիցերոնը ատտիկականների ոճը «ցամաք և անարյուն» էր համարում: Հոմեական ատտիկականների լոզունգը սեղմ և խտացած պերճախոսութիւնն էր, որը խուսափում էր փարթամ դրվագներից, ֆրազի ութմիկ կառուցումից, և նրանք իրենց համար ոճական օրինակ էին համարում Լիսիոսի և Թուկիդիդեսի, մինչստեղծատեսչան այդ վաղագույն ատտիկական ժամանակաշրջանի հեղինակների երկերը: Ատտիկական ուղղութիւնն էին պատկանում սենատական պարտիայի երիտասարդ գործիչներից շատերը, այդ թվում և Մարկուս Բրուտուսը, հետագայում Կեսարին սպանողը:

Ատտիկական պերճախոսութիւնը հաջողութիւն չունեցավ հոմեական ֆորումում և շուտով մոռացվեց: Նրա անմիջական ազդեցութիւնը չեն պահպանվել, բայց ատտիկականութիւնը մոտ ոճական դրույթներ մենք գտնում ենք Կեսարի և Մալցուտիուսի պատմական աշխատութիւններում:

Բազմակողմանիորեն օժտված Կայոս Հուլիոս Կեսարը (100—44) փայլուն ոճաբան էր և, շնայած պետական և ռազմական լարված աշխատանքին, նույնիսկ արշավանքների ընթացքում, ժամանակ էր գտնում գրական աշխատանքի համար: Նրա պերճախոսութիւնը բարձր էին գնահատում և ժամանակակիցները և հետագայ հոմեական քննադատութիւնը: Կեսարն իր ճարտասանական կրթութիւնն ստացել էր սկզբում Հոմոմում, իսկ այնուհետև Ռոդոսում նույն Ապոլոնիոս Միլոնի մոտ, որի մոտ պարապել էր և Յիցերոնը: Բացի դրանից Կեսարը ծանոթ էր տակավին երիտասարդ գիտութիւն՝ հոմեական քերականութիւն հետ և սիրում էր հաճախ պարծենալ ֆիլոլոգիական իմացութիւնը: Իր ոճաբանական սկզբունքները նա պարզութեան էլ չպահպանված «Մարկուս»

Տուլիուս Յիցերոնին անալոգիաների մասին» տրակտատում, գրված գալլական պատերազմի ժամանակ, հավանաբար Յիցերոնի «Հռետորի մասին» տրակտատին ծանոթանալուց հետո: Անալոգիստների՝ լեզվի մեջ քերականական միակերպության («անալոգիայի») կողմնակիցների և անոմոլիստների՝ որոնք կողմնակից էին գործածական լեզվին նրա բոլոր զեղումներով և հակասություններով («անոմալիստներով»), միջև տեղի ունեցող վեճի ժամանակ Կեսարը բռնեց անալոգիստների կողմը. սակայն, նա հնարավոր չէր համարում կամայականորեն նոր ստեղծումներ կատարել հանուն «անալոգիայի» և առաջարկում էր հետևել այն միակերպությանը, որն արդեն կիրառվում է գործածական լեզվի մեջ: Հազվադեպ և արտասովոր բառերը, արխաիզմները և նեոլոգիզմները, այն քերականական ձևերը, որոնք շեղվում են միակերպ տիպից, — այդ բոլորը պետք է վերացվեն լեզվի միջից: «Բառերի ընտրությունը՝ սկիզբն է ամեն մի պերճախոսության»: Այսպիսով Կեսարը հանդես է գալիս պաշտպանելու պարզ, բայց «մաքուր» լեզուն, իր մաքրախնդրության մեջ շատ ավելի հեռուն գնալով Յիցերոնից: Հենքն այդպիսի ոճն անվանում էին «նրբագեղ», և գտնում էին, որ Կեսարը հասել է խոսքի ապշեցուցիչ նրբագեղության, որին նա առանձնապես ձգտում էր» (Կլիմախիլիան):

Կեսարից պահպանվել է երկու աշխատություն — «Նոթեր գալլական պատերազմի մասին» և «Նոթեր քաղաքացիական պատերազմի մասին»: Գալլական պատերազմի մասին նոթերում հեղինակը յոթ գրքում պատմում է իր ռազմական արշավանքի մասին Գալլիայում, որը նա նվաճեց և միացրեց հռոմեական պետությանը, և իր արշավանքի մասին Գերմանիա և Բրիտանիա: Յուրաքանչյուր գիրքը նվիրված է մի տարվա ղեկավարին և «Նոթերն» ամբողջությամբ ընդգրկում են մեր թ. ա. 58—52 թ. թ.: Շարադրությունն աչքի է ընկնում արտակարգ պարզությամբ և առաջին հայացքից կարող է թվալ անարվեստ, բայց այդ անարվեստականությունը միանգամայն գիտակցական է: Աշխատությունը ջատագովական նպատակներ է հետապնդում: Գալլիայում Կեսարի գործունեությունը բազմաթիվ կշտամբանքներ էր առաջացրել, և նրա քաղաքական հակառակորդները այդ հանգամանքն օգտագործում էին նրա դեմ հանելու հասարակական կարծիքը: «Նոթերը» պետք է արդարացնեն հեղինակի գործողությունները: Խիստ մտածված շարադրությամբ նա ընթերցողին ներշնչում է այն միտքը, որ պատերազմը Գալլիայում բացարձակապես ուղղված էր Հռոմի

և նրա հետ դաշնակից ցեղերի օրինական շահերի պաշտպանու-  
թյանը: Իր գործողությունների նպատակահարմարությունը Կեսա-  
րը հիմնավորում է հասարակ և պարզ պատճառաբանություննե-  
քով, հմտորեն հարմարեցված միջին հոռմայեցու քաղաքական և  
կրոնական պատկերացումների մակարդակին, նրա, որի համար  
դեպի հյուսիս գտնվող երկրները տակավին միանգամայն անհայտ  
աշխարհ էին: Շարադրած փաստերի վերաբերյալ Կեսարը ջանում  
է խուսափել ուղղակի ստից, բայց հաճախ ազդում է լռելու մեթո-  
դով: Անհաջողությունների մասին, հին ժամանակ համընդունված  
միջազգային իրավունքի նորմաների խախտման մասին նա բոլո-  
սովին չի հիշատակում կամ խոսում է խու՛շ շատ ուշադիր ըն-  
թերցման համար միայն հասկանալի ակնարկներով: Ընդ  
որում, Կեսարի անձնավորությունն, իհարկե, դրսևորվում է շատ  
զրավիչ լույսի տակ. նա հիասքանչ հրամանատար է, եռանդուն,  
առնական, որն արագորեն կողմնորոշվում է ամենաբարդ դրու-  
թյուններում, ուշադիր է դեպի ստորադրյալները. դրա հետ միա-  
սին, նա հեզ, ներողամիտ մարդ է, որը երբեմն միայն ստիպված  
է լինում խիստ միջոցների դիմելու ուխտագրուժ թշնամու հան-  
դեպ: Գործարար տոնով շարադրելու նպատակն է ընթերցողի  
մեջ լիակատար օրեկտիվության տպավորություն ստեղծել: Այդ  
նպատակով էլ ընտրված է «Նոթերի» դրական ձևը: «Նոթեր» (co-  
mentarii) կոչվում էին այն երկերը, որոնք հավակնություն շու-  
նեին գեղարվեստական հղկվածության, հում նյութի ժողովածու  
էին առանց որևէ ճարտասանական գունավորման: Իր մասին հե-  
զինակը բոլոր ժամանակ խոսում է երրորդ դեմքով: Երբեմն  
միայն, օրինակ՝ աշխատության եզրափակիչ մասում, երբ պա-  
հերվում է Ալեզիայի՝ գալլական անկախության վերջին պատվա-  
քի՝ անկումը, Կեսարն իրեն թույլ է տալիս ավելի բարձր ոճական  
տոնի անցնել: Բայց չնայած ամբողջ դիտավորյալ պարզության՝  
«Նոթերի» հստակ և կոնկրետ շարադրությունը վկայում է Կեսարի  
դրական արվեստի մասին, յուրաքանչյուր սիտուացիայի էական  
գծերը մի քանի շարիխներով պատկերելու կարողության մասին:  
Պատմական մեծ հետաքրքրություն են ներկայացնում գալլերի և  
գերմանների հասարակական կարգերի նկարագրությունները.  
դրանք օգտագործել է էնգելսն իր «Ընտանիքի, մասնավոր սեփա-  
կանության և սլետոսի ծագումը» աշխատության մեջ տոհմա-  
տիրական համայնքը բնութագրելու համար: Այժմ Կեսարի աշխա-  
տությունը սովորաբար այն առաջին սկզբնաղբյուրներից մեկն է

ծառայում, որի ընթերցանությանը դիմում են լատիներեն սովորելու ժամանակ: «Վարդցական» տեքստ լինելու այդ դերը «Նոթերին» է բաժին ընկել շնորհիվ նորանց լեզվի մաքրության, դյուրամբանելիության, ճշտության և բովանդակության պատմական նշանակության, որովհետև դրանք հանդիսանում են երեք երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի պատմության համար հնագույն գրական հուշարձան:

Զատագովական նպատակներն է՛լ ավելի ցայտուն են հանդես գալիս Կեսարի հաջորդ՝ «Նոթեր քաղաքացիական պատերազմի մասին» երկում: Շարադրությունը տարվում է նույն ռժովինչ որ առաջին նոթերում. նա պետք է ընթերցողին համոզի, որ քաղաքացիական պատերազմը կատարվել է բացառապես Կեսարի հակառակորդների մեղքով և որ նա ինքը բոլոր ժամանակ խաղաղ նպատակներ է ունեցել և միայն պաշտպանել է ռեսպուբլիկայի և ժողովրդի ոտնահարված իրավունքները: Այդ երկի վրա Կեսարն աշխատել է իր կյանքի վեջին տարում և չի ավարտել այն: Այդ երկում նկարագրվում են միայն մինչև 49—48 թ. թ. դեպքերը:

Կեսարի մեծուարները շարունակեցին նրա մարտական զինակիցները: Արլուս Հարտիուսը գալլական պատերազմի մասին յոթ գրքին ավելացրեց ութերորդը, նվիրված 51—50 թ. թ. դեպքերին, և այդպիսով, լցրեց բացը առաջին և երկրորդ «Նոթերի» միջև: Քաղաքացիական պատերազմի մասին «Նոթերի» շարունակությունն են կազմում «Ալեքսանդրիական պատերազմի մասին», «Ֆրիլիական պատերազմի մասին» և «Սպանական պատերազմի մասին» անունիմ տրակտատները (հնարավոր է, որ այդ երեք տրակտատներից՝ առաջինը կազմած լինի նույն Հարտիուսը):

Մի ժամանակ Կեսարի աշխտակիցների թվին էր պատկանում Գալոս Սալլուստիուս Կրիսպուսը (մոտավորապես 86—35 թ. թ.):

Մոված սարինական մի փոքրիկ քաղաքում, անհայտ և ոչ-հարուստ մարդ՝ Սալլուստիուսը՝ երիտասարդ հասակից ձգտում էր քաղաքական կարիերայի և սկսեց այն «ժողովրդական» պարտիայի շարքերում, իբրև սենատական արիստոկրատիայի և մասնավորապես Ցիցերոնի հակառակորդ: 50 թվին նա վտարվեց սենատից անվաշել կյանքի պատրվակով, և այդ հանգամանքն առավել ևս նրան մոտեցրեց կեսարականների հետ: «Նամակ կեսարին պետության մասին» գրության մեջ Սալլուստիուսը կոչ է է անում Կեսարին գլխավորելու պայքարը «նոր լիտետի կլիկի»:

դեմ հանուն «հոմեական պլերսի ծանր ստրկութիւնից ազատագրման» և ուրվագծում է հոմեական պետական կարգերէ բարենորոգման նախագիծը:

Սալլուստիուսը բոլորովին էլ չի համակրում դեմոկրատիային և վախենում է հողագրկված մասսաներից, որոնք անառակացեան անգործութիւնից և պարսպութիւնից: Նա կողմնակից է սենատի գերիշխանութեան, բայց ընդլայնած սոցիալական բաղաչի վրա, միջին կարողութեան տեր խավերին ռեսպուբլիկայի հրամանատարական դիրքերը ներգրավելով: Պլերսի ապագասուկարգչութիւնը և պլուտոկրատների անշնորհութիւնը, որոնք իրենց մենաշնորհն էին դարձրել մագիստրատուրաները և փակել էին դրանց մուտքը այլ խավերից ելած տաղանդավոր մարդկանց համար, — Սալլուստիուսի ելակետային մոմենտներն էին գոյութիւն ունեցող կարգերի քննադատութեան համար: Սակայն, այսօր նաև փիլիսոփայական հիմնավորում է ստանում «շահամոլութեան» և «քաջարիութեան» հակադրման մեջ: Հետեւելով Պլատոնին, Սալլուստիուսը այդ հակադրութիւնը պատկերում է իբրև ոգու և մարմնի հավերժական դուալիզմի արտահայտութիւն: Շահամոլութիւնը ոգու ամենատիտերիմ թշնամին է, և Սալլուստիուսը դիմում է Կեսարին կոչ անելով «ոչնչացնել փողի ազդեցութիւնը»: պլուտոկրատիայի դեմ պայքարի կոնկրետ քովանդակութիւնը, սակայն, ընդամենը հանգում է միայն հարուստների մենաշնորհը պետական և դատական պաշտոններից վերացնելուն: Հարստութիւնը քաջարիութեան ախոյանը շպետք է լինի «քաջարիութեամբ ձեռք բերված» հարստութիւններին «Նամակի» հեղինակը միանգամայն դրականորեն է վերաբերվում: Ճեղքել նորի լիտետի կաստայական փակվածութիւնը, ապահովել միջին խավերի քաղաքական ազդեցութիւնը, իսկ մյուս կողմից՝ հոմեական պրոլետարիատի շեղոքացում և նրա հեռացումը քաղաքական պայքարից, — սրանք են բարենորոգութեան այն հիմնական գծերը, որի կենսագործումը Սալլուստիուսը սպասում էր Կեսարից:

Քաղաքացիական պատերազմին Սալլուստիուսը մասնակցում է Կեսարի զորքերի հետ: Վերադարձվելով սենատ, նա ստացավ պրետորի պաշտոնը, իսկ 46 թվին նշանակվեց Աֆրիկայի պրովինցիայի կառավարիչ: Այդ պաշտոնում նրա գործունեութիւնն սուղեկցվում էր ոչ պակաս շահասակութիւններով, քան հոմեական մյուս կուսակալների մոտ, և Սալլուստիուսը Հոմեական վերադարձով հակայական հարստութեամբ, որը, նա հավանո-

քեն վերագրում էր «քաջարիությանը ձեռք բերվածները» կատեգորիային: Կեսարի քաղաքականությունը, սակայն, նրան հիասթափեցրեց: Կեսարը հակված չէր հենվելու այն միջնախավերի վրա, որոնց մասին մտահոգված էր Սալյուստիոսը. մյուս կողմից Սալյուստիոսը մնում էր որպես ռեսպուբլիկական և անվստահությանը էր վերաբերվում Կեսարի միապետական ձգտումներին: Այդ շփոթվածության հուշարձանն է Կեսարին ուղղած նոր «Նամակը», որը լեցուն էր քնդհանուր ֆրաղներով և մշուշապատ ակնարկներով, բայց արդեն գուրկ էր կոնկրետ քաղաքական առաջարկություններից: Կեսարի մահից հետո Սալյուստիոսը պայքարող կողմերից ոչ մեկին չհարեց: Նա գեղադասեց հեռանալ պետական կյանքի անմիջական մասնակցությունից և իր ձեռք բերած հիասքանչ վիլլաների և պուրակների մենության մեջ իրեն նվիրեց պատմագրական աշխատանքի: Իր այդ վճիռը Սալյուստիոսը պատճառաբանում է նրանով, որ Հոմերի պետական կյանքում արդեն տեղ չի մնացել «քաջարիության» համար, մինչդեռ պատմաբանի գործունեությանը նա կարող է օգուտ բերել քաղաքացիներին:

Սալյուստիոսը ընթերցողներին հավաստիացնում է իր շարադրության լիակատար անաշու լինելու մասին և հաճույքով անկաշառ դատավորի և խիստ բարոյախոսի դիրք է ընդունում: «Իմ ոգին,— գրում է նա,— ազատ է ստանձին քաղաքական պարտիաների հուշեսոցից և վախից»: «Անպարտիականության» այդպիսի հավակնությունը հիմնավոր է միայն այն իմաստով, որ հոռետեսորեն տրամադրված հեղինակը չի խնայում իրար դեմ թշնամարար տրամադրված խմբակցություններից և ոչ մեկին: Քրականում, սակայն, նրա բոլոր աշխատությունները համակված են միասնական քաղաքական տենդենցով. նա հանդես է գալիս որպես հոռմեական նորիլիտետի մերկացնող: Դրա հետ միասին Սալյուստիոսը՝ լուրջ դրող է փիլիսոփայական թեքումով: Նրա պատմական երկերում գեղարվեստական և հրապարակախոսական կարգի առաջադրանքները միահյուսվում են հոռմեական պատմության ընթացքը իմաստավորելու և ռեսպուբլիկայի քայքայման պատճառները բացատրելու ձգտման հետ:

Հելլենիստական պատմագրության համար բնորոշ լարված դրամատիզմը նա միացնում է շարադրման հանդիսավոր և խիստ Ահի հետ. այդ շարադրումը կողմնորոշվում է դեպի Թուկիդիդեսի

ոճը և փորձում է ընդհանրացումներ կատարել I դարի փիլիսոփա և պատմաբան Պոսիդոնիսի ոգով:

Իր պատմագրական գործունեությունը Սալյուստիուսն սկսեց առանձին մենագրություններով: Պատմական շարագրության այդ տեսակի հանդեպ անտիկ հասարակությունն առանձնակի գեղարվեստական պահանջներ էր ներկայացնում: Այստեղ հարկավոր էր ոչ այնքան հաջորդական շառագրություն, որքան զեպքերի համախմբում՝ ըստ հնարավորության մի կենտրոնական դեմքով, գործողության հուզիչ ընթացքով և հետաքրքրական ֆինալով: Սալյուստիուսի առաջին մենագրությունը՝ «Կատիլինայի դավադրությունն» էր (կամ «Պատերազմ Կատիլինայի դեմ»)՝ նվիրված մոտիկ անցյալի զեպքերին: Կենտրոնական դեմքը Կատիլինան է: Շարագրությունն սկսվում է նրա բնութագրությամբ և ավարտվում է նրա հերոսական մահվան մասին պատմությամբ: Բայց Կատիլինան նկարագրված է հոսանքի և հասարակության բայթայման ֆոնի վրա, որպես այդ բայթայման արդյունք: Սալյուստիուսը պատմափիլիսոփայական ուճով տալիս է Հռոմի պատմության սխեմատիկ ուրվագիծը, օգտորդվելով Պլատոնի՝ կատարյալ պետության աստիճանական վատթարացման պրոցեսի մասին տեսությունից: Հին Հռոմի իդեալական կարգերն սկսեցին այլասերվել Կարթագենին հաղթելուց հետո՝ շնորհիվ փառամոլության, իսկ այնուհետև շահամոլության աճի: Այլասերման վերջին աստիճանը տիրանների հանդես գալն է, և Սալյուստիուսը Կատիլինային նկարագրում է այնպիսի գրծելով, որոնք հիշեցնում են տիրանի կերպարը Պլատոնի «Պետությունն» մեջ: Բայթայումն ընդգրկել էր հռոմեական հասարակության բոլոր խավերը, բայց շարիքի արմատը պլուտոկրատական օլիգարխիայի տիրապետության մեջ է: Ապագանված նորփիլիսոփայի շարքերից է ելել Կատիլինան: Ընդհանուր ֆոնի նկարագրման հետ զուգընթաց, ընթերցողի առաջ կանգնում են և առանձին կերպարներ: Այդ նպատակին են ծառայում ճառերը, նամակները, վարպետորեն կերտված բնութագրությունները: Դավադրության էտապները ծավալվում են ինչպես դրամայի արարվածներ, մի քանի հիմնական պերսոնաժներով: Հեղինակի համար անհամակրելի Յիցերոնի դեմքը թողնված է առանց որևէ լուսաբանման: Պատմելու ամենաուժեղ մոմենտներում Սալյուստիուսը հանդես է բերում այլ անձնավորություններ: Առանձնակի ուշադրությամբ նա կանգ է առնում երկու գործիչներին՝ Կեսարի և Կատոն Կրտսերի կեր-

արարների վրա, որոնց նա իր ամենանշանավոր ժամանակակից-  
ներն է համարում, «մարդիկ, որոնք օժտված են մեծ քաջարիու-  
թյամբ, բայց տարբեր բնավորությամբ»: Այդ երկու դեմքերի հա-  
մեմատական բնութագիրը՝ Սալյուստիուսի մենախոսության լա-  
վագույն էջերից մեկն է: Այն կառուցված է այնպես, որ հակա-  
ռակորդներից յուրաքանչյուրին վերագրված է այն առավելու-  
թյունները, որոնք պակասում էին մյուսին: Կեսարի, որպես գործ-  
չի, կազմակերպչի, առաջնորդի, բարձր հատկություններին հա-  
կադրված է Կատոնի բարոյական անհողորդ ամբողջունը: Բա-  
րոյական ամբողջան բացակայությունն, այսպիսով, այն կշտամ-  
բանքն է, որը Սալյուստիուսը նետում է իր նախկին կուռքին: Իր  
ռեսպուբլիկական մտքերը նա արդեն դնում է Կատոնի և ոչ թե  
Կեսարի բերանը: Այնուամենայնիվ Սալյուստիուսը ջանում է իր  
հովանավորության տակ առնել Կեսարին, որին մեղադրում էին  
Կատիլինայի շարժմանը դադտնարար աջակցելու մեջ: Հնարավոր  
է, որ «Կատիլինայի դավադրության» մասին մենագրությունը բա-  
նակափվ է պարունակում Յիցերոնի մեզ չհասած մեմուարների  
դեմ, որոնք հրատարակվել էին նրա մահվանից հետո, ուր շարա-  
դրված էին 63 թ. դեպքերի դադտնի կողմերը: Համենայն դեպս,  
Սալյուստիուսի շարադրումը խստորեն գունավորված է սուբեկտիվ  
սիմպատիաներով և ազատ չէ փաստական աղավաղումներից, թեև  
հեղինակը ջանում է ցույց տալ իր անաչառությունը և արժանույն  
հատուցանել նույնիսկ ատելի Կատիլինային:

Որոշ չափով ավելի հեռավոր անցյալն է մեզ տանում Եր-  
կրորդ մենագրությունը՝ «Յուգուրթայական պատերազմը»: Հիմ-  
նավորելով այդ թեմայի բնտրությունը, Սալյուստիուսը մասնա-  
նշում է, որ «այն ժամանակ նոր էր սկսվել պայքարը նորիլիտեոի  
մեծամտովյան դեմ»: Եվ իսկապես, արիստոկրատ գործիչների  
վարքը նումիդիական թագավոր Յուգուրթայի դեմ պատերազմում,  
որը տևեց 111-ից մինչև 116 թիվը, հարմար նյութ էր ցույց տա-  
լու համար հոռոմեական ավազանու օրինազանցությունը, շահամո-  
լությունը և կաշառակերությունը: Պատերազմի ընթացքը շա-  
քադրվում է կապված Հոռոմում պարտիաների պայքարի հետ:  
Նորիլիտեոն՝ նույնիսկ հանձինս իր լավագույն ներկայա-  
ցուցչի՝ անկաշառ, բայց մեծամիտ Մեսսուրի՝ անընդունակ եղավ  
պատերազմն ավարտելու. Հոռոմի ժողովրդի իսկական հերոսը  
դիմոկրատական զորավար Մարիուսն էր: Գեղարվեստական կա-  
ռուցման եղանակներով երկրորդ մենագրությունը շատ է հիշեց-

նում առաջինը: Ուշագրավ է, սակայն, որ Սալյուստիոսն հոտմեական հասարակության զարգացման իր սխեմայի վերաբերյալ կարծիքը փոխեց: Հին Հռոմի իդեալական կարգերի մասին այլևս չի խոսում: Կարթագենի կործանմանը նախորդող ժամանակաշրջանի քաղաքացիական խաղաղությունն արդեն մեկնաբանվում է իբրև արտաքին թշնամուց վախենալու հետևանք: II դարում նորի-նիսեոսի որոշ ներկայացուցիչներ արտահայտվում էին կարթագենի պահպանման օգտին, ցանկանալով խրտվիլակ դարձնել այն՝ Հռոմում դասակարգային պայքարը կասեցնելու համար: «Պոնիկիացիներից սարոսափի» բարերար ներգործության գաղափարն այժմ ընկալում է նաև Սալյուստիոսը:

Երկու մենագրություններին էլ կցված են փիլիսոփայական ներածականներ, որոնց մեջ հեղինակը բացատրում է իր կարծիքը հոգեկանի և մարմնականի դուալիզմի մասին: Մարմնական սկզբունքի դերակշռությունը մարդուն դատապարտում է կախման արտաքին հանգամանքներից, նրան դարձնում է պատահմունքի զոհ: Ուլու մարդը, — իսկ իսկական պետական գործիչը հենց այդպիսին պետք է լինի, — բարձրանում է պատահականություններից և կառավարում է դրանք:

Սալյուստիոսի վերջին երկը «Պատմությունն» է: Այդ արդեն մենագրություն չէ, այլ Հռոմի պատմության որոշ ժամանակաշրջանի հաջորդական շարադրությունն է: Անտիկ պատմաբանները հաճախ պատմությունն սկսում են այն մոմենտից, մինչև ուր իր աշխատությունը հասցրել է ականավոր նախորդներից մեկն ու մեկը. (Քսենոֆոնի «Հունաց պատմությունը»): Այդպես էլ վարվեց է Սալյուստիոսը: Սա սկսեց Սուլլայի մահվանից (78 թ.), ուր իբրև շարադրությունը վերջացրել էր պատմաբան Սիսեննան, և հրապարակեց հինգ զիրք, սոսնք ընդգրկում էին 78—67 թ. թ.: Այդ աշխատությունն ամբողջությամբ չի պահպանվել. դրանից մեզ հասել են միայն ճառերի ու նամակների ընտրանքներ և ֆրագմենտներ: Սալյուստիոսն արդեն ինքն իրենից չի ծածկում դասակարգային պայքարը հին Հռոմում: Այժմ Հռոմի պատմությունը նրան պատկերանում է իբրև պլերսի և ավազանու միջև անվերջ գծաու-թյուններ, որոնք երբեմն միայն արտաքին վտանգի մոմենտին մարում են: Այդ գծաու-թյունների մեջ նա անսնում է մարդկային «բնության» վատ հատկություններ. այդ «բնության» վերաբերյալ հայացքը ավելի ու ավելի մռայլ և հոռետեսական է դառնում: Սալյուստիոսի աշխարհայացքի մեջ նոր տեղաշարժեր, հավա-

նարար, առաջացրին Կեսարի սպնությունից հետո հանդես եկած քաղաքացիական պատերազմների ծավալվելը և «երկրորդ տրիովփիրատի» կառավարությունը:

Սալյուստիոսի աշխատություններն անտիկ պատմագրության ամենաաչքի ընկնող հուշարձաններն են: Կինելով խորամուխ և ինքնուրույն պատմաբան, որը ձգտում է իմաստաժողելու դեպքերը, գեղարվեստական դիմանկարի գերազանց վարպետ, Սալյուստիոսը դրա հետ միասին յուրահատուկ ոճաբան է: Ինչպես և բոլոր ատտիկականները, նա հեռանում է Յիցերոնի ներդաշնակ պարբերությունից և ութմավորված խոսքից: Հեղինակի յուրացրած անհոգորդ բարոյախոսի դիրքին միանգամայն համապատասխանում է՝ սեղմ, ուժեղ, որոշ չափով արխաիկացրած լեզուն, բառապաշարային փոխառումներով Կատոն Ավագից: Բայց այդ «սալյուստիոսական սեղմությունը», որը դարձվածք է դարձել, բոլորովին էլ չի խուսափում ճարտասանական պաֆոսից և ամբողջովին երհներանգված է էֆեկտավոր հակադրություններով: Արխաոկրատական պատմագրությունը փորձում էր վարկարեկեց Սալյուստիոսին, մատնանշելով ազահության մերկացնողի խոսքի և գործի միջև եղած ակնառու հակասությունը, ակնարկելով այն վիթխարի հարստությունը, որ բերել էր իր կողոպտած պրովինցիալից: Սալյուստիոսի երկերի գրական արժանիքները, սակայն, կասկած չէին հարուցում, և ճարտասանական դպրոցը նրան լատիներեն պրոզայի կլասիկներից մեկը, հռոմեական պատմագրական ոճի յուրատեսակ Թուկիդիդես էր համարում: Սալյուստիոսի զգալի ազդեցությամբ հետագայում ձևավորվեց մի այլ հռոմեական պատմաբանի՝ Տակիտոսի՝ ոճը:

Շատ ավելի հանրամատչելի բնույթ ունեւ Կորնելիուս Նեպոսի (ծնվել է, հավանորեն, II դ. վերջին, վախճանվել է 32 թ. հետո) գործունեությունը. նա հեղինակ է թեթև ընթերցանության համար բազմաթիվ պատմական գրքերի: Այսպես, նա հռոմեական հասարակության համար երեք գրքով կոմպիլացիա է արել «երոնիկան»՝ ընդհանուր պատմության համառոտ շարադրումը, այն չափով, որ չափով այդ պատմությունը հայտնի էր անտիկ գիտնականներին: Պահպանվել է «Հռչակավոր մարդկանց մասին» նրա աշխատության մի մասը, որը պարունակում է օտարերկրյա զորավարների մի շարք կենսագրություններ և հռոմեական երկու պատմաբանի՝ Կատոնի և Յիցերոնի նամակագրություններից մեկը:

հայտնի, ֆինանսիստ Ատտիկի կենսագրությունները և վերջինս կազմած խրոնոլոգիայի և տոհմաբանության վերաբերյալ մի քանի մենագրությունները: Նախատեսված լինելով գրավիչ ընթերցանության համար, այդ կենսագրություններն ընթերցողին շեն ձանձրացնում մանրամասնություններով: Դրանք շատ համառոտ կենսագրություններ են, մանր գծերի և անեկզոտների հաղորդումով, որոնք բնութագրում են պատկերվող անձնալորությանը, լայն հասարակության համար օտարերկրյա բարքերի բացատրություններով և բարոյախոսական պարզ դատողություններով: Հեղինակն առատաձեռնորեն երփներանգում՝ գովաբանում կամ կշտամբում է: Պատահում են պատմական սխալներ, նույնիսկ կոպիտ սխալներ. Միհրդատի կենսագրության մեջ, օրինակ, խառնել է այդ անունը երկու կրողներին և միացրել է կենսագրական մի ամբողջության մեջ: Նեպոսի ոճը կարող է օրինակ ծառայել կլասիկ ժամանակաշրջանի միջին մակարդակի հոմեական պրոզայի համար, և իր դյուրամբեռնելիության շնորհիվ նեպոսն օգտագործվում էր նոր ժամանակի դպրոցում, իբրև լատիներեն սկզբնական ընթերցանության հեղինակ. ավելի խստապահանջ գեղարվեստական մոտեցման՝ նեպոսի ոճը չի բավաբարում:

## 5. ԼՈՒԿՐԵՅԻՈՒՍ

Ինչպես արդեն հիշատակել ենք, Հռոմում պոլիսաչին իդեոլոգիայի քայքայման սիմպտոմներից մեկը էպիկուրյան փիլիսոփայության տարածումն էր: էպիկուրյան պրոսպագանդայի նշանակալի լինելու մասին վկայում է արդեն այն հանգամանքը, որ էպիկուրյաններն էին առաջին փիլիսոփայական դպրոցը, որը լատիներեն լեզվով գրական գործունեություն զարգացրեց, այսպիսով, դիմադառնալով դեպի ավելի լայն լսարանը: Հավատարիմ իրենց դպրոցի սկզբունքներին, էպիկուրյանները գրում էին պարզ, առանց ճարտասանության և առանց գեղարվեստականորեն շաբաղբելու հավակնության:

Երբ Ցիցերոնը դիմեց իր փիլիսոփայական աշխատանքին, լատիներեն արդեն գոյություն ունեին մի շարք էպիկուրյան աշխատություններ, իսկ էպիկուրի փիլիսոփայությունը բազում ականավոր կողմնակիցներ ուներ, որոնց գրավում էր ուսմունքի այս կամ այն կողմը: Հեծյալների դասից գործադար մարդկանց համար, որոնք խուսափում էին պետական պաշտոններից, օրպեսզի

ազատ լինեն ֆինանսական գործառնությունների մեջ, էպիկուրականությունը հարմար շիրմա, «փիլիսոփայական» հիմնավորում էր քաղաքական գործունեությունից հրաժարվելու համար (Տիտուս Պոմպոնիուս Ատտիկ): Կեսարի հստակ միտքը ձգտում էր դեպի մատերիալիստական փիլիսոփայությունը, որը հետևողականորեն ժխտում էր սնտոփապաշտությունները և նախապաշարումները, որոնց հետ տրամադիր էին հաշվի նստել մյուս փիլիսոփայական դպրոցները: Բայց առանձնապես հաճույքով էպիկուրյան «անխողովության» մեջ հանգստություն էին որոնում միջին խավերի ներկայացուցիչները, որոնք հոգնել էին քաղաքացիական պատերազմից և քաղաքական պայքարի հեռանկար չունենալուց:

էպիկուրականության կենտրոնն Իտալիայում կիսահունական Կամպանիան էր: Նեպոլի մոտ գտնվում էր I դարի 50—60 թվականների էպիկուրյան ուսմունքի ամենաակախավոր պրոպագանդիստներից մեկի՝ Սիրոնի դպրոցը: Կամպանիայում և Հռոմում ծավալվում էր հունական պոետ և փիլիսոփա Փիլոդեմոսի բեղմնավոր գրական գործունեությունը: Սիրոնի և Փիլոդեմոսի դպրոցում սովորել են կայսրության անցնելու ժամանակվա հոմեական դրականության ներկայացուցիչներից շատերը, այդ թվում հոմեական պոեզիայի ապագա ռահվիրա Վերգիլիոսը, թեոբեմա նաև Հորացիոսը:

Մեր թ. 79 թվին Վեզուվի ժայթքման ժամանակ Պոմպեի հետ լավայով ծածկված Հերկուլանոմի պեղումներից երևան բերվեց մի ամբողջ էպիկուրյան դրադարան՝ անխաչած և տակավին դեռ չվերծանված փաթեթների մեծ քանակություն, որը Կամպանիայի էպիկուրականության նյութական հուշարձան է:

էպիկուրականությունը Հռոմում գտավ իր պոետին: Այդ՝ «Բնության մասին» (կամ ինչպես սովորաբար թարգմանում են, պատճենահանելով լատիներեն վերտառությունը, «Իրերի բնության մասին» — «De rerum natura») հիանալի պոեմի հեղինակ Տիտուս Լուկրեցիուս Կարուսն է (ծնվել է մոտավորապես 98 թ., մահացել է 55 թ.):

Լուկրեցիուսի մասին կենսագրական տեղեկությունները արտակարգորեն սուղ են: Մենք ոչինչ չգիտենք նրա ծագման, կրթություն, կյանքի ուղու, էպիկուրյան ուսմունքի մյուս ներկայացուցիչների հետ ունեցած կապի մասին: Ըստ քրիստոնեական գրող Հիերոնիմի խրոնիկայի ոչ լիովին արժանահավատ հաղորդման՝ Լուկրեցիուսը տառապում էր պարբերական խելագարու-

Յայմը, որն իբր թե «սիրային խմիչքի հետևանք էր, և իր կյանքին վերջ է տվել ինքնասպանությամբ: Նրա պոեմը, որը վերջնական հղիում չէր ստացել, այնուհետև հրատարակեց Յիցերոնը: Հեղինակը մտադիր էր իր երկը ձոնել նշանավոր Մեմփուսների տոհմի ներկայացուցիչներից մեկին, բայց այդ ձոնումն անց է կացված պոեմի ոչ բոլոր մասերում. Լուկրեցիուսը կամ իր նախապիծք վախճանին չի հասցրել, կամ հրաժարվել է սկզբնական մտադրությունից: Պոեմը հրատարակվեց անավարտ լինելու բազմաթիվ հետքերով, կրկնություններով, առանց հղվման և շաբադրման թերություններով:

Փիլիսոփայական տրակտատի համար ընտրելով դիդակտիկ պոեմի ձևը, Լուկրեցիուսը վերականգնում է էննիուսի լուսավորական տրադիցիան, որն իր հերթին սկիզբ էր առնում հին սիցիլիացիների փիլիսոփայական պոեմներից: Էպիկուրի հետևորդի համար շարադրման բանաստեղծական ձևը որոշ չափով անսպասելի է: Լուկրեցիուսն ինքը փորձում է արդարացնել այդ հանրամատչելիության պահանջներով՝

Այնքան, որքան ուսմունքը մեր

Մտալլադույն է միշտ թվում՝ ով ծանոթ չէ նրան,  
Եվ ատելի է ամբոխին, ապա կուզեմ այդ ուսմունքը  
Քեզ ներկայացնել, պիեթիական քաղցրահնչյուն,  
Համեմելով այն պոեզիայի քաղցր մեղրով:

Բայց իրականում Լուկրեցիուսի պոեմը միայն փիլիսոփայական տրակտատ չէ, վերածած ոտանավորի և «մեղրաշաղախված» էպոեզիայով: Այդ՝ մի իսկական գեղարվեստական երկ է, որն իր պարզորոշ և կոնկրետ աշխարհատեսողությամբ նոր էջ է բաց անում անտիկ գրականության մեջ և տոգորված է բարձր պաֆոսնում: Լուկրեցիուսը հանդես է գալիս ոչ թե որպես գիտնական և նատեսաբան, այլ որպես լուսավորիչ, կրքոտ մարտիկ կրոնի և նատեսաբանի դեմ, գիտական-մատերիալիստական աշխարհապաշարումների դեմ, գիտական-մատերիալիստական աշխարհայացքի նախադուռակ: Մարդկությունն ազատագրել նրա վրահանրացած նախապաշարումներից, աստվածների և մահվան սարսափից՝ այս է Լուկրեցիուսի պոեմի խնդիրը: Նա շարադրության առարկա է դարձնում ոչ թե «լայելքի» և «անվրդովության» էթիկան, էպիկուրի ամբողջ փիլիսոփայության այդ վերջնանպատակը, այլ՝ սիստեմի բնագիտական մասը, ուղղված աշխարհը և հանգերձյալ կայնքը աստծու կողմից կառավարելու հավատի դեմ: Ինչպես մենք գիտենք, էպիկուրի ուսմունքը

ձեականորեն անթիստական չէ: Աստվածներ գոյություն ունեն, բայց երանելի կյանք են վարում «միջաշխարհային տարածություններում» և որոնք անշուք շունեն աշխարհի պրոցեսի հետ, որը կատարվում է ըստ մեխանիկական օրենքների: Այդ տեսակետն էլ ընդունում է Լուկրեցիուսը: Իր ժամանակի քաղաքական դեպքերի մասին Լուկրեցիուսը երբեք չի հիշատակում, դերադասելով մտքով փոխադրվել անցյալը, առանձնապես երկրորդ Պունիկյան պատերազմի զարաշրջանը՝ փառաբանված էնեիդայի պոետիկական տաղանդով: Նա իր վերաբերմունքը ոչնչով չի արտահայտում ակտուալ քաղաքական պայքարի վերաբերյալ: Էպիկուրյան այդ ինդիֆերենտիզմը, սակայն, արմատացած է արդիականությունից խորապես անբավարարված լինելու մեջ: Լուկրեցիուսն արդիականության մասին ընդհանուր արտահայտություններով է խոսում, բայց իրենց տոնի մոալությունը դրանք չեն զիջում արդեն մեզ հայտնի, թեպետև ավելի ուշ Սալյուստիուսի ուրվագծերին: Ագահությունը, փառամոլությունները պայքարը, իշխանության ծարավը, պատրաստ լինելն ամեն տեսակի ոճրագործությունների և աննպատակ արյունահեղության— իր ժամանակի հասարակության բնորոշ գծերն էին, որ պատկերել է Լուկրեցիուսը: Էպիկուրի լուսավորական փիլիսոփայությունը, լինելով մատերիալիստական՝ բնության մեկնաբանության վերաբերյալ, մնում էր խորապես իդեալիստական՝ հասարակական երևույթների վերաբերյալ: Սոցիալական շարիքի արմատը Լուկրեցիուսը դիտում էր մարդկանց կեղծ կարծիքների մեջ, իսկ այդ կեղծ կարծիքներից ամենավտանգավորը՝ մահից սարսափելն է, որը բխում է հոգու անդրշիրիմյան կյանքի մասին կրոնական պատկերացումներից: Համաձայն էպիկուրի, մարդիկ ձգտում են հարստությունների, պատիվների և այլ երևակայական բարիքների՝ վախենալով զրկանքներից, իսկ զրկանքներից վախենալն այլ բան չէ, քան մահից սարսափելու նրբացած ձևը: Այդ սարսափի հաղթահարումը՝ բնության մատերիալիստական բացատրության հիման վրա՝ պետք է վերացնի անպետք ձգտումների ու մանր կրքերի աղբյուրը և բաց անի մարդկանց առաջ անվրդով կյանքի հեռանկար:

Պոեմը կազմված է հեկզամետրներով: Այն բաղկացած է վեց գրքից և ամեն մեկը սկսվում է հատուկ ներածականով: Ամենից ծավալունն առաջին գրքի ներածությունն է, որը ներածություն է և

ամբողջ պոեմի համար Պոետիկական տրագիցիաների հաստատուն լինելու համար՝ անտիկ գրականության մեջ արտակարգ կերպով հատկանշական է այն փաստը, որ այն պոետը, որը նպատակ է դրել հերքելու աշխարհի աստվածային կառավարման մասին պատկերացումները, անհնար էր համարում տրագիցիոն կերպով աստվածության շղիմելը երկի սկզբում: Բնության մասին պոեմի որպես հովանավորող աստվածություն կուկրեցիտան ընտրել էր Վեներային, որին նա փառաբանում է մեծ ոգևորությամբ, իբրև աշխարհի ուժի ստեղծագործողի: Այդ ընտրությունն առավել ևս տեղին էր, քանի որ Վեներան՝ պոեմի նվիրաբերությանն արժանացած Մեմֆիտաի տոհմական աստվածությունն էր համարվում: Թայց այդ դիմումից անմիջապես հետո պոետն ազդարարում է իր երկի գրույթի հակակրոնական լինելու մասին.

Անկարգ կերպով քարը էր գալիս

Մարդկանց կյանքը երկրի վրա կրոնի ծանր բեռի տակ,

Քինչև որ էպիկոսը չբացեց բնության բոլոր գաղտնիքները,

Վրդ՝ իր հերթին կրոնն այսօր տրորված է մեր կրնկի տակ,

Մեզ էլ ահա հաղթանակը երկինք հասցրեց:

Կրոնը ոչ միայն մոլորությունների, այլև ամեն կարգի ոճրագործությունների աղբյուրն է. նա խավարն է, «հոգու մոռացությունը», որը պետք է ցրել էպիկոսի ուամունքի վառած պայծառ լույսի օգնությամբ:

Կուկրեցիտաը հետևողականորեն ծավալում է աշխարհի մեխանիկական պատկերը, որ մշակել էր անտիկ մատերիալիստաֆան միտքը: Բնության գիտակցված օրինաչափության հպարտ պաֆոսով նա հաստատում է հետազոտության հիմնական սկզբունքը՝

Ոչնչից՝ ոչ մի բան չի ստեղծվում:

Մատերիան հավերժական և անխորտակելի է: Ըստ բնական օրենքների, առանց աստվածների միջամտության, մի տեսակ առարկաները փոխարինվում են ուրիշներով՝ բնության հավիտենական պաուզոսի մեջ.

Մի խոսքով, չի կորում ոչ մի բան, ինչ թվում է թե անհետ կորել է,

Քանի որ բնությունը ծնում է մեկը մյուսից

Եվ որն է ծնունդ տեղի չի ունենում առանց մեկ ուրիշի մահի.

Անսահման թվով մանր մարմնիկները, ատոմները և անսահման դասարկ տարածությունը սպառում են բնությունը, որն է

երրորդ էութիւն, բացի մատերիայից և դատարկութիւնից, բնութեան մեջ գոյութիւն չունի:

Երկրորդ գրքում բացատրվում է, թե սկզբնական մարմինների՝ ատոմների հավիտենական շարժումից ինչպես է ծագում աշխարհի բազմազանութիւնը և նրա մշտական նորոգումը: Մեր ընկալմանը մատչելի ամեն մի իր իրենից ներկայացնում է բազմազան ատոմների զուգակցութիւն, բայց այդ զուգակցութիւնները հավիտենական չեն. հավիտենական միայն սկզբնական մարմիններն են: Մնվում և կործանվում են անսահման քանակութեամբ աշխարհներ, որոնց շարքում մեր երկիրն ու մեր երկիրքը այդ անթիվ-անհամարութիւն մեջ միայն միավոր են կազմում: Եվ արդեն դիտվում է մեր աշխարհի կառուցման հատկանիշները երկիրն սկսում է նվազել՝

Ահա և խեղճ ձեր մաճկալը օրօրում է իր գլուխը հառաչանքով,  
Ավելի ու ավելի նա տեսնում է անբերիութիւնը ձանր աշխատանքի.  
Երբ անցյալի հետ ներկան է նա համեմատում ժամանակի՝  
Ապա միշտ էլ փառարանում է իր ծնողներին վիճակված բախոր:  
Մշտեցան էլ հրք դիտում է վտիտ վազերն իր թուզակազմ՝ անիծում է  
Չարաբաստիկ դարն իր այս, և այդ ժամին նա ողբում է խիտ դառնագին՝  
Ու անընդհատ տրտնջում է՝ որ լիացած ժողովուրդը բարիքներով,  
Կյանք էր վարում անհոգութեամբ հին ժամանակ դո՛ւ լինելով շատ քիչ  
բանով:

Քեպտո հողն այն ժամանակ իբրև բաժին էլի քիչ էր ինչպէս այժմ.—  
Չի հասկանում, որ ամեն ինչ կամաց-կամաց ձերանում ու զառամում է  
Ու հողնաթանջ կանքի ուղուց այն հեռավոր՝ գերեզման է իշնում մահի:

Շարագրելով աշխարհների բազմաթիվ լինելու և նթանց անխուսափելի կործանման մասին ուսմունքը, Լուկրեցիուսն ընդգրկածում է այդ մտքերի նոր լինելը՝ համընդունված պատկերացումների համեմատութեամբ: Եվ իսկապես, անտիկ աշխարհի առօրյա գիտակցութեան և նույնիսկ մի շարք փիլիսոփայական տեսութիւնների համար երկնային լուսատուները ատվածային կարգի բարձրագույն էակներ էին, և դրանց հավասարեցնելը մահկանացուներին՝ ռևոլուցիոն գաղափար էր: Բայց Լուկրեցիուսն, ըստ երևուցիին, նույնիսկ չի գիտակցում այդ ուսմունքի ամբողջ ռևոլուցիոնութիւնն իբրև հարված անտրոպոցենտրիզմին, այն հայացքին, որը մարդուն տիեզերքի կենտրոնն էր համարում:

Երկրորդ գիրքը պարունակում է հոգու և ոգու մասին ուսմունքը: Լուկրեցիուսը «հոգին», իբրև կյանքի կենտրոն, տարբերում է «ոգուց» («խելքից»), գիտակցութեան կենտրոնից, բայց

մատնանշում է դրանց ամենասերտ փոխադարձ կապը: Անտիկ մատերիաիզմը հոգին և ոգին ընդունում է որպես ռեալականություն և ջանում է դրսևվորել դրանց նյութական բնությունը իբրև մարդու մարմնի մի մասը: Գրանք ծնվում են մեր մարմնի հետ միասին և նրա հետ էլ մահանում են: Անդրշիրիմյան կյանքի մասին կրոնական պատկերացումների հերքումը՝ կոչրեցիուսի համար արտակարգորեն էական մոմենտ է, և պոետը դրա վրա կանգ է առնում շատ մանրամասնությամբ, կարծես թե ցանկանում է՝ բազմազան պատճառարանությունների հսկայական քանակով՝ ճնշել ընթերցողի սպասվող դիմադրությունը: Երբորդ գրքի եզրափակիչ մասում հեղինակը մոտենում է ամբողջ ուսմունքի կենտրոնակետին. եթե հոգին մահանում է մարմնի հետ և մահվանից հետո այլևս որևէ զգացողություն չի լինելու, ապա մահը մեզ հետ որևէ առնչություն չունի. քանի մենք կենդանի ենք՝ մահ չկա, երբ վրա է հասնում մահը՝ մենք չկանք: Մահից սարսափելն առաջացել է կոպիտ սնտիապաշտություններից, բնության օրենքները չհասկանալուց, շխարհանալուց օգտագործել կյանքը և հեռանալ նրանից խնջուլքից կշտացած հյուրի պես: Մեր մարմինը և հոգին կազմող նյութերի պաշարը հարկավոր է ապագա սերունդների համար, և այն գիտակցությունը, որ բնության հավերժական կյանքի ֆոնի վրա առանձին առարկաները անխոստափելիորեն անցողիկ են, առաջին նախադրյալն է փիլիսոփայական «անվրդովության» հասնելու համար:

Չորրորդ գիրքը՝ զգացողությունների և ընկալումների բացատրությունն է տալիս, ելնելով ուսմունքից ատմների մասին, որոնք անչափում են մարմիններից և թափանցում են մեր զգացողական օրգանները: Գրքի վերջում քննության է առնվում սիրո հարցը: Էպիկուրիզմը միանգամայն հետևողականորեն դատապարտում է բուռն կիրքը, որը խախտում է հոգու անդորրը և կեղծ պատրանքներ է ստեղծում սիրածի արժանիքների մասին. կոչրեցիուսն ամբողջովին հետևում է իր դպրոցի ուսմունքին, սակայն, սիրահարվածի անպատու տառապանքների պատկերման մեջ մտցնում է սուր դառնության տարր:

Հինգերորդ գիրքը նվիրված է մեր աշխարհի ծագմանը: Տիեզերքի նպատակահարմարության տեսությունների հետ բանավեճում ընդգծվում են այն անկատարելությունները, որոնք մերժում են աշխարհն ստեղծելու մեջ աստվածային գիտակցական ուժերի մասնակից լինելու միտքը: Անցնելով կենդանի արարածների ծագ-

ման պրոցեսին, Լուկրեցիուսը դրանց ստեղծումը վերագրում է երկրի երիտասարդ շրջանի կենսական սաղմերի հարստությանը: Երկիրը բազմաթիվ տեսակների կենդանիներ է ստեղծել, բայց բոլորը չէ, որ կարողացել են հարմարվել կյանքին և շարունակել իրենց տեսակը: Գրքի վերջին բաժինը կուլտուրայի պատմությունն է: Մարդկային կուլտուրան տակավին երիտասարդ է և դեռ կատարելագործվում է: Նրա զարգացման շարժիչ ուժը՝ «կարիքը», պահանջն է. մարդն արվեստներ է սովորում բնությունից, բնդ որում օգտագործելով իր բնական տվյալները: Այսպես, բնական աղաղակները լեզվի հիմքն են դարձել՝

Այդ բոլոր կարիքն է ցույց տվել մարդկանց և բնատուր ժխտը,  
Այդ է սովորեցրել շարժումը դեպ առաջ աստիճանաբար:

Լուկրեցիուսը նկարագրում է «հողածին մարդկանց անտառային ցեղի» գաղանաբարո կյանքը և այնուհետև առաջացած նյութական կուլտուրայի աճը, հասարակական հաստատությունների՝ ընտանիքի, համայնքի, թագավորական իշխանության, սեփականության, օրենքների զարգացումը: Բայց էպիկուրականի վերաբերմունքը դեպի կուլտուրան՝ երկյակ է: Որևէ իլուզիա չըստեղծելով նախնական մարդկանց կյանքի պայմանների մասին, նա կուլտուրայի մեջ միայն «պրոգրես» չէ, որ տեսնում է: Ազահուստունը, փառամոլությունը, իշխանասիրությունը՝ այս բոլորը կուլտուրայի բացասական կողմերն են: Եթե նախնադարյան մարդիկ կոտորվում էին սննդի պակասությունից, ապա մենք կոտորվում ենք դրա շահագրանց առատությունից. նախնադարյան մարդիկ, միայնակ թափառելով, հաճախ վայրի գազանների կերակուր էին դառնում,

Սակայն դրա փոխարեն էլ շրջանների տակ չէր կործանում բուրավոր մարդ  
Պատերազմը մի օրում միայն:

Մարդկության ամենամեծ սխալը, վերջապես, կրոնն է: Նա ծագել է երազների աղդեցություն տակ, բնության օրինաչափությունները կեղծ ըմբռնելուց և բնության անհասկանալի երևույթների սարսափից:

Անհասկանալի և սարսափելի թվացող այդպիսի երևույթների բնական և դիտական բացատրությունը տրվում է վեցերորդ գլխուրում: Այստեղ խոսքը որոտի, կայծակի և այլ օդերևութաբանա-

կան պրոցեսներ, երկրաշարժների և հրաբուխների ժայթքման, մագնիսի ազդեցության, բնության հազվագեպ երևույթների, վերջապես, հիվանդությունների և համաճարակների մասին է: Թուկի-գիդեսի հաղորդման վրա հիմնված՝ Աթենքի ժանտախտի ցայտուն նկարագրությամբ ավարտվում է պոեմի տեքստը: Էպիկուրի բնափիլիսոփայության շարադրումն, ըստ էության, հասցված է իր վերջին: Պակասում է միայն ձևական եզրափակումը, որը, հավանորեն, հեղինակը չի հասցրել գրելու:

Լուկրեցիուսն ինքը չէր ստեղծել այն գաղափարները, որոնք ալդպիսի մոլեգնությանը պատկերել է իր երկի մեջ: Նա միայն շարադրում է էպիկուրի ուսմունքը, վերջինս էլ իր հերթին վերամշակել էր Դեմոկրիտի ստեղծած մեխանիստական մատերիալիզմի սիստեմը: Ինչպես էպիկուրի բոլոր հետևորդները, նա գրեթե մի ստովածացրեց իր ուսուցչին, փառաբանելով նրան իր պոեմի մի բանի գրքերի ներածականներում: «էպիկուրը... մեծագույն հույն լուսավորիչն է, և նա արժանի է Լուկրեցիուսի գովասանքներին», նկատում է այդ առթիվ Մարքսը\*: Բայց անտիկ մեծ մատերիալիստների գրական ժառանգության ճակատագիրն այնպես դասավորվեց, որ Դեմոկրիտից ոչինչ ամբողջական մեզ չի հասել, իսկ էպիկուրից շատ քիչ բան է հասել: էպիկուրյան ֆիզիկայի միակ շատ թե քիչ լիակատար շարադրությունը պահպանվել է Լուկրեցիուսի պոեմում, և այդ կարևորագույն աղբյուր ծառայեց նոր գիտության և փիլիսոփայության համար, սկսած վերածնության ժամանակից, յուրացնելու անտիկ մատերիալիզմի ժառանգությունը: Բնության օրենքների անխախտության սկզբունքը, որոնք կախված չեն որևէ աստվածային ուժից, թելեոլոգիական մեկնաբանությունների բացառումը, մատերիայի հավերժական և անխախտելի լինելը, ատոմիստական կոնցիպցիան, աշխարհների բազմաթիվ լինելը, ֆիզիկականի և պսիխիկականի միասնությունը, հարմարվածի ապրելը, կուլտուրայի պատմության մեջ զարգացման սկզբունքը — սրանք անտիկ մտքի ժառանգության միայն հիմնական, ամենից շատ նշանակալի մոմենտներն են, որոնք արտացոլվեցին «Բնության մասին» պոեմում:

Բայց Լուկրեցիուսը միայն փիլիսոփա չէ, նա պոետ է, «թարմ, խիզախ, աշխարհի պոետիկական տիրապետողն» է ըստ

\* Различно между натурфилософией Демокрита и натурфилософией Эпикура. Соч., т. I, М., 1938, стр. 53.

Թարբսի արտահայտության<sup>22</sup>: Թեմայի բնույթը պահանջում էր փիլիսոփայական պատճառաբանության խիստ և ճշգրիտ ոճ: Եվ, դրա հետ միասին, Լուկրեցիուսի երկը աչքի է ընկնում պոետիկական պատկերման իր վիթխարի ուժով: Այդ ուժը դրսևորվում է ոչ միայն այն ժամանակ, երբ շարադրման ընթացքում հեղինակին հարկավոր են բնության հզոր երևույթների պատկերներ, այլև այն իլուստրացիաներում, որոնցով նա ուղեկցում է վերացական դրույթները: Այսպես, ատոմների շարժման բացատրությունը արվում է փոշու հատիկների կերպարանքով.

Գիտիր ահա՝ ամեն անգամ, երբ արեգակի լույսն է թափանցում,  
Մեր տները և ճեղքում է խավարն իր շողերով.

Դու կտեսնես դատարկության մեջ մարմիններ բազում-մտնր առկայծելիս,  
Տրոնք ետ ու առաջ են թռչկոտում, լույսի պայծառ շողողատում:  
Կարծես նրանք հավերժական այդ պայթարի պատերազմում ու մարտերում  
էրար բռնում, հարվածում են շոկատներով՝ շունենալով հանդիստ-գազար,  
Կամ միացած, կամ առանձին մի կողմ թռչում միշտ անընդհատ հանդգնաբար:  
Կարող ևս դու պարզաբանել պատկերներից այս անդադրում, թե իրեն  
Սկզբնական ինչպես են միշտ թռչկոտում դատարկության մեջ անսահման:

Անսահման մանր մարմինների մեխանիկան զգայական կոնկրետություն է ստանում տեսանելի աշխարհի կերպարանքներում: Իսկ որպեսզի բացատրի, թե շարժվող ատոմների ամբողջականությունն ինչու է մեզ անշարժ թվում, Լուկրեցիուսը տալիս է շարժամբ լեցուն խայտացող հոտերի կամ դինվորական գորա շարժերի պատկերներ, որոնք, սակայն, հեռվից դիտողին մի հոծ անշարժ բիծ են թվում: Ծառ հնարավոր է, որ անտիկ ատոմիստիկան ֆիզիկայի այս կամ այն դրույթներն իրենք ծագել են նման զգայական պատկերների հիման վրա, բայց, մյուս կողմից, վերացական սկզբունքները պատկերելու անհրաժեշտությունը Լուկրեցիուսին ստիպում է նոր հայացքով դիտել աշխարհը, զննել մանրամասնությունները և, վերացնելով անտիկ պոետիկայի սովորական դիցաբանական ասոցիացիաները, բնական երևույթները հանդես բերել զեղարվեստական նոր համադրությամբ: Բնության պարնանային արբեցումը և փոթորիկը ծովի վրա, ամպերի շարժումը և քամու թափը, արեգակի ծագումը և թռչունների շուն, վայրի գազանների կատաղությունը և երինջի անսփոփ արտաբնությունը կորցրած հորթուկի համար, թատրոնական շենքի վրա բարձրացված վարագույրի ծածանումը և Կիրելայի քրմերի մոլեզնած հրզ-

\* Соч., т. I, стр. 462.

փությունը — այդ բոլորը գրավում են Լուկրեցիուսի ուշադրությունը, և այդ բոլորի համար նա պայծառ և թարմ գույներ բացում:

Պոետիկական տեսողության սրության հետ՝ նա օժտված է տեմպերամենտի ուժով և զգացողության խորությամբ: Լուկրեցիուսի դատողությունները՝ սնոտիապաշտության դեմ բանականության հաղթանակի մասին՝ ջերմագին համոզվածությամբ են շնչում և ներծծված են ցնծագին պաֆոսով: Անծայրածիր աշխարհների և նյութի հավերժական շարժման պատկերները վեհապանծ վերելքի մթնոլորտ են ստեղծում:

...Տես ու դեն են փախչում սարսափները հոգու, ետ են բացվում պատերն Աշխարհի, և տեսնում եմ ես ընթացքն իրերի՝ անսահման տարածության մեջ:

Այդ բոլորն իմ մեջ ինչ-որ հիացք է ծնում և սարսափ սրբազան:

Արդեն անտիկ քննադատությունը նշում էր «Բնության մասին» պոեմի «վերամբարձ» բնույթը: Այդ նրա հիմնական, բայց ոչ միակ տոնն է: Լուկրեցիուսի, ինչպես և ռեսպուբլիկայի վերջհռոմեական էպիկուրականներից շատերի համար, «իմաստունների ուսմունքով կառուցված լուսավոր տաճարներն» անցնելը, փախուստ էր սուր կերպով զգացվող սոցիալական փախուղուց: Մենք նրա մեջ կդռնենք և երգիծաբանի դառր հեղնանք և թախծալի, երբեմն հիվանդագին զգացողականություն: Անլրդովության փիլիսոփան հակումն է դրսևորում դեպի տապնապալի, հուզիչ, նույնիսկ ամառապալից կերպարները և վեցերորդ պոբի վերջում, նկարագրելով «աթենական ժանտախտը», տալիս է մարդու տկարության ցնցող պատկերը:

Իբրև գրող Լուկրեցիուսը հեռու էր կանգնած հռոմեական պրակտիկության մեջ եղած նոր հոսանքներից: Արխաիստ և էնիիուսի երկրպագու լինելով, նա գրում է հինավուրց ոճով, երկարաշունչ ֆրազներով, շտուսափելով «հոմերոսական» էպիտետներից ու համեմատություններից և հին հռոմեական հնչնային կրկնարկներից: Արխաիկացնող լեզուն պոեմին որոշ հանդիսավորության բնույթ է հաղորդում: էպիկուրյան ֆիզիկան բանաստեղծորեն արտահայտելը հեշտ գործ չէր, և Լուկրեցիուսը հաճախ գանդատվում է «մայրենի լեզվի աղքատության» առթիվ, որ լեզվի մեջ բացակայում են անհրաժեշտ տերմիններ փիլիսոփայական հասկացություններ արտահայտելու համար:

Չնայած բովանդակության գծարտությանը, «Բնության մասին»

սին» պոեմի գեղարվեստական արժանիքներն ապահովեցին նրա հանաչումն անտիկ հասարակության կողմից: Հաջորդ սերնդի պոետները Լուկրեցիուսից սովորեցին աշխարհի գեղարվեստական քննալումը միահյուսել փիլիսոփայական բովանդակության հետ: Նրանից հաճախ քաղվածքներ էին անում, ուսումնասիրում էին նրան, ծանոթագրում էին: Նույնիսկ քրիստոնեական հեղինակները, շնայած էպիկուրի «անաստված» ուսմունքի վերաբերյալ իրենց ամբողջ թշնամանքին, օգտվում էին Լուկրեցիուսի նյութից անտիկ կրոնի դեմ բանավիճելու և բնագիտական բացատրությունների համար: Լուկրեցիուսի հետ ծանոթությունը չընդհատվեց մինչև կարոլինգների ժամանակները և ապահովեց պոեմի պահպանումը IX դ. ձեռագրերում: Ավելի ուշ միջնադարում Լուկրեցիուսը մոռացվեց և վերստին «հայտնագործվեց» միայն XV դարում: Հումանիստներին առավելապես նա հետաքրքրում էր, որպես խոսքի արվեստագետ: Նրա հակակրոնական դրույթը բազմաթիվ կշտամբանքների էր արժանանում եկեղեցու ներկայացուցիչների կողմից, և պոեմի հրատարակություններին ընդհուպ մինչև XVIII դ. կցվում էր առաջաբան, «ապոլոգիա», որն արդարացնում էր աթեիստական երկի հրապարակումը նրա դրական արժեքով: Սակայն, արդեն XVI դ. վերջից գիտության զարգացումը վերանորոգեց անտիկ մատերիալիզմի տրադիցիան: Լուկրեցիուսով հրապուրվում էր Զորդանո Բրունոն, որը նորից առաջ քաշեց տիեզերքի անսահմանության և աշխարհների բազմաթիվ լինելու մասին ուսմունքը:

Լուկրեցիուսի պոեմի բովանդակության վերաբերյալ հետաքրքրությունն առավել ևս բարձրացավ ատոմիզմի վերածնությունը XVII դ. (Բեկոն, մանավանդ Գասենդի), իսկ XVIII դ. ժատերրալիզմի դարաշրջանում Լուկրեցիուսը դարձավ ամենատիրված անտիկ հեղինակներից մեկը:

## 6. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱԿԱՆՌԻՓՅՈՒՆԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊՈՆՁԻԱՅՈՒՄ: ԿԱՏՈՐԱԼՈՒՄ

II դարի վերջից պոեզիան կորցրեց այն առաջատար նշանակությունը, որը նա ուներ նախորդ ժամանակաշրջանի գրական շարժման մեջ: Ինչպես իր ժամանակ Հունաստանում, փիլիսոփայական-ճարտասանական կուլտուրային անցնելը սկզբնական շրջանում կենսագործվեց պրոզայի վճռական գերակշռությամբ, պրոզան փոխարինեց պոեզիայի կարևորագույն իդեոլոգիական

Ֆունկցիաները: Լուցիլիուսից հետո երկար ժամանակ խոշոր պոետներ հանդես չեկան: Հռոմեական գրականության հին բանաստեղծական ժանրերը՝ պատմական էպոսն ու դրաման՝ էպիգոնների բաժին կամ պոեզիայի արիստոկրատ սիրողների ոճաբանական մարզանքների ասպարեզ դարձան: Պահպանողական ուեսպուրիկանիզմը խրախուսում էր այդ արխայիկ ուղղությունը, բայց այդ զգալի պտուղներ չէր տալիս: Լուկրեցիուսը միակ ակադեմիկոս տաղանդն էր արխայիկների շարքում:

Իրան հակակշիռ՝ ուեսպուրիկայի քայքայումն ավելի ու ավելի էր մոտեցնում հելլենիստական աշխարհայացքին և ոճական ձևերին: Հելլենիստական գրականությունը Հռոմ էր ներթափանցել և ավելի վաղ շրջանում, բայց դիսավորապես իր այն ճյուղերով, որոնք ամենից սերտորեն էին զուգվում պոլիսային ժամանակաշրջանի կլասիկ գրականության հետ (կատակերգություն, պերճաստեղծություն, դիատրիբա և այլն): Այժմ ձգտում էր դրսևորվում դեպի ալեքսանդրիական պոեզիան: Ապոլիտիզմը, սահմանափակ շրջանի ուղղված «գիտնականությունը», մասնավոր կյանքի թեմատիկայի և անձնական զգացմունքների կողմը թեքվելը, ձևի պաշտամունքը, — ալեքսանդրիական ուղղության այս բոլոր գծերն այսուհետև ընկալող գնահատողներ են գտնում Հռոմում: Կատիներեն լեզվով սկսում են հանդես գալ սիրային էպիգրամներ և գիտադիցաբանական պոեմներ, միմիչամբեր և իդիլիաներ, նույնիսկ դիդակտիկ նոտանավորներ: Ալեքսանդրիական տիպի «դիտնաֆիլոսոֆիկ» ոտանավորներ: Այդ ալեքսանդրիականությունը սպեցիֆիկ դունավորում է ստանում շնորհիվ այն հանգամանքի, որ Հռոմի նամար այդ մի ժամանակաշրջան էր, երբ սուբեկտիվ «ես»-ը առաջին անգամ պոետիկական թեմա է դառնում: Հռոմը՝ սուբեկտիվ զգացմունքների պոեզիա դեռ չուներ: Նախորդ ժամանակաշրջանի տրագիցիոնիզմը թույլ չէր տալիս անհատի որևէ չափով զգալի մեկուսացում և զուտ սուբեկտիվ ապրումների գրական արտահայտություն: Կտրուկ և ինքնուրույն Լուցիլիուսն արդեն խախտեց այդ օրենքը, բայց սուբեկտիվ թեման գրական քաղաքացիության արխայատար իրավունք ստացավ միայն հռոմեական ալեքսանդրիզմի մեջ: Առաջին անգամ երևան գալով այն պայմաններում, երբ անտիկ հասարակությունը վաղուց արդեն փոշիացել էր, ընդ որում ամենալարված քաղաքական, իդեոլոգիական ճգնաժամի և դեպի տրագիցիոն արժեքները հարգանքը կորցնելու ու

ապագայի վերաբերյալ հավատի բացակայության հանգամանքներում, սուբեկտիվ թեման մատուցվում է անտիկ գրականության մեջ տակավին չեղած սրությամբ, բայց իր ներքին բովանդակությամբ անհատը հանդես է գալիս արտակարգորեն սահմանափակված, գրեթե ամայացած:

Հոռմի արևքսանդրիականության ծաղկումը վերաբերում է Յ դարի 50-ական թվականներին, երբ այդ ուղղության կողմնակիցները գրական ասպարեզ են դուրս գալիս համախմբված: Պոեա և քերական Վալերիուս Կատոնը՝ դպրոցի զաղափարական պարագլուխը, այնուհետև պոեա և հետոր՝ «ատտիկական» Կալվան, Յիննան, Կատուլլուսը — նոր խմբավորման ամենաականավոր մասնակիցներն էին. այդ խմբավորման մեջ մտնում էին մեծ քանակությամբ երիտասարդ պոետներ, մեծ մասամբ հյուսիսային Իտալիայի բնակիչներ (այսպես կոչված «ցիզալպիական Գալլիա»): Յիցերոնը նրանց անվանում է «նոր պոետներ» (poetae novi, կամ հունարեն՝ neoterói) և մի անգամ նրանց ծաղրական «էքֆորիոնյան երգիչներ» մականունն է տալիս, խափար և «գիտնական» էքֆորիոն Քալիզազու անունով, որին արևքսանդրիականները իրենց օրինակներից մեկն էին համարում: Ժամանակակից գիտական գրականության մեջ ընդունված է «նոր» դպրոցը «նեոտերիկներ» անվանել:

Նեոտերիկները հանդես եկան մի գրական ծրագրով, որը կրկնում էր Կալիմաքոսի սկզբունքները: Նրանք հրաժարվեցին խոշոր ձևերից՝ էպոսից ու դրամայից, և մշակում էին մանր ժանրեր՝ էպիլիտա, էպիգրամ, էլեգիա: «Գիտնական» լինելու հավանություն ունենալով, նրանք արևքսանդրիականների հետևությամբ ընարում էին հաղվաղեպ առասպելներ, քիչ հայտնի վարիանտներ, իրենց երկերը հագեցնում էին ակնարկներով, թաքնված քաղվածքներով, և այլ հեղինակներից փոխառումներով: Նման քաղվածքները դիտվում էին որպես գրական հաճոյախոսություն, որպես ոճաբանական վարպետության ճանաչում այն հեղինակի, որից արվում էր քաղվածքը, բայց այդ բոլորը հասկանալ ու գնահատել կարող էր միայն նրբավարժ, երկու գրականություններին էլ՝ ինչպես հունական, այնպես էլ հռոմեական՝ լավ ծանոթ ընթերցողը: Դիցաբանական սյուժեներ ընտրելիս նեոտերիկները գերապատվություն էին տալիս այնպիսի առասպելներին, որոնց մեջ կարելի էր տեսնել պաթետիկա և նույնիսկ սիրային կրքի պաթոզոգիա զարգացնել: Այդ տեսդեմքը հռոմեական պոետներին մո-

աւեցնում է արդեն ոչ այնքան Կալեմաքոսի, որքան ալեքսանդրիական պոեզիայի հետագա ներկայացուցիչների հետ: Այդ ժամանակ Հոմոմոս ապրում էին մի քանի ականավոր ուշ-հելլենիստական պոետներ, ինչպես օրինակ Սրքիոսը (որի պաշտպանութեան համար Յիցերոնն արտասանեց իր ճառերից մեկը), մի շարք անգամ արդեն հիշատակված Փիլոգեմեոսը, վերջապես, Պարֆենիոսը, որն իրրե վերի Հոմո էր ընկել Միհրդատի հետ պատերազմի ժամանակ: Այդ հույն գրողների հետ կենդանի կապ էր պահպանվում, և մասնավորապես Պարֆենիոսը՝ նեոտերիկների կրտսեր սերնդի գրական ուսուցիչն էր: «Գիտական» երկերի հետ զուգընթաց նրանք մշակում էին մանր գրական ձևերը՝ բուպեական զեղումները, որոնք կոչվում էին՝ «ամանրունք» (nugae) և «զվարճաչիք»: Ինչպես թեթև, այնպես էլ «գիտական» ոճի ժամանակ հսկայական նշանակություն էր տրվում ձևի մանրակրկիտ հղկմանը: Նեոտերիկները ձգտում էին լատիներեն ոտանավորի շարահյուսապիթմական կառուցվածքը մոտեցնել հելլենիստական նորմաներին և հոմեական պոեզիան հարստացրին մինչ այդ անհայտ բանաստեղծական շափերով:

«Գիտական» բովանդակության և ձևական հղկման հանդեպ այդպիսի պահանջկոտության պայմաններում՝ գրական երկի պատրաստումը շատ ժամանակ էր խլում: Յիննան մի փոքրիկ պոեմի վրա աշխատում էր իննը տարի. ուղունելով այդ աշխատության ավարտումը, Կատուլլոսը նրան հավերժական փառք էր խոստանում, մինչդեռ արխաիստների շտապ կազմած ծավալուն պատմական էպոսները, Կատուլլոսի կարծիքով, նույնքան արագորեն էլ մոռացության են դատապարտված: Էննիուսի էպիգոններին, զանազան տեսակի «աննալներ» կազմողներին, նեոտերիկներն իրենց հիմնական գրական հակառակորդներն էին համարում և կրկնում էին Կալեմաքոսի ծագըր՝ կիլիկական ոճի «փափրիկ» երկերի հանդեպ: Այդ բանակոչվում նրանք չէին խնայում և էննիուսին իրեն, որպիսի հանգամանքը մեծ տհաճություն էր պատճառում հին հոմեական պոեզիան սիրող՝ Յիցերոնին, որն ինքնահռչակման նպատակով բազմիցս պատմական պոեմներ էր հորինել էննիուսի օրինակով:

Նեոտերիկները հաճախ այն միտքն էին արտահայտում, որ իրենց երկերը «դարեր կապրեն». իրականում այդ ճակատագրիև արժանացավ նրանցից մեկը միայն, որին ժամանակակիցներն էլ համարում էին այդ դպրոցի ամենատաղանդավոր ներկայացուցի-

չր: Այդ՝ Գայոս Վալերիոս Կատուլլոսն էր (ծնվել է մոտավորապես 1 դ. 80-ական թ. թ., վախճանվել է մոտավորապես 54 թ.):

Կատուլլոսը Վերոնացի էր: «Յիզալպիական Գալլիայի» այն մասը, որին պատկանում էր Վերոնան, տակավին չէր մտնում Իտալիայի կազմի մեջ և «պրովինցիա» էր համարվում, բայց Կատուլլոսի հայրը Հոտմի հետ կապեր ունեցող ունեոր մարդ էր, և որդին հնարավորություն ունեցավ մուտք գործել Հոտմի անվանի հասարակության մեջ: Երիտասարդ «պրովինցիացին» դեպի քաղաքական հարցերը սկզբում միանգամայն անտարբեր էր, իր ժամանակը նա անց էր կացնում խրախճանք՝ անող երիտասարդության շրջանում և շփվում գրական շրջանների հետ: Նրա անձնական կյանքի նշանակալի դեպքը կապված էր ծանր սիրային ապրումների հետ. նա սիրում էր մի կնոջ, որը նրա բանաստեղծություններում հանդես է գալիս հնարովի «Լեսբիա» անունով: Անտիկ հաղորդման համաձայն, այդ կեղծ անվան տակ թաքնված է ոմն Կլոդիա, և բազմաթիվ մանրամասնությունները թույլ են տալիս Կատուլլոսի հերոսուհուն նույնացնելու կեսարական-տրիբունի բուլբերից մեկի, ամենայն հավանականությամբ այն Կլոդիայի հետ, որը հայտնի է Յիցեռոսի ճառերից և նամակներից և, որին Յիցեռոսը բնութագրում է որպես «համընդհանուր ընկերուհի» և որպես «ոչ միայն ականավոր, այլև համբավավոր»: Կատուլլոսի ապրելակերպը մեծ ծախսեր էր պահանջում և, իր խաբխրված գույքային դրուժյունն ուղղելու նպատակով, նա 57 թվին միանում է պրետոր Մեմիուսի շքախմբին (թերևս նրա, որին հասցեագրված էր Լուկրեցիուսի պոեմը), որն իբրև կուսակալ ուղևորվում էր Բիթինիա: Այդ ուղևորությունը, որի ժամանակ Կատուլլոսն այցելեց Տրոյայում մահացած իր եղբոր դերեղմանը, որոշ նյութ մատակարարեց նրա պոեզիայի համար, բայց ցանկալի հարստություն չբերեց պոետին: Հոտմ վերադառնալուց հետո (56 թ.) Կատուլլոսը, նեոթերիկ խմբին պատկանող մյուս պոետների թվում, հանդես եկավ մի շարք բանաստեղծություններով՝ ուղղված Կեսարի և նրա արբանյակների դեմ: Կատուլլոսի հակակեսարականությունն սկզբունքային բնույթ չունեւր, և գործը վերջացավ Կեսարի հետ հաշտությամբ (55—54 թ.), վերջինս միշտ ջանում էր իր կողմը գրավել տաղանդավոր մարդկանց: Դրանից հետո Կատուլլոսը շուտով վախճանվեց:

Կատուլլոսի գրական ժառանգությունը կազմված է երեք մասից: Մի կողմից, «պիտական» ոճի խոշոր երկերն են. մյուս կողմ-

մից՝ մանր բանաստեղծութիւնները, «կատակները, որոնք իրենց հերթին տարաբաժանւում են երկու կատեգորիայի. դրանք բովանդակութեամբ իրար մոտ են, բայց տարբերւում են շնո՞վ և տաղաշափական ձևով. մեկը՝ էլեգիկ երկտողերով կազմված բանաստեղծութիւններն են (էպիգրամներ, էլեգիաներ) և մյուսը՝ ալյսպես կոչված, «պոլիմետրերը», այսինքն՝ բազմազան տաղաշափական կառուցվածքի բանաստեղծութիւնները: «Պոլիմետրերի» շարքում գերակշռող տեղ են զբաղում «տասնևմեկոտնյա»-ները (կամ «Ֆալեկյան տողը»)

Մենք կապրենք, կըսիրենք իմ սիրած անգին:

Դրան զուգընթաց հանդիպում են և ուրիշ շափեր՝ տարբեր ձևերի յամբեր, սապֆոյական տուն և այլն: Կատուլլուսի էրկերի մեզ հասած ժողովածուն այնպես է ներդաշնակված, որ նրա սկիզբը «պոլիմետրերն» են կազմում, իսկ վերջը՝ էպիգրամները. կենտրոնում գետեղված են մեծ բանաստեղծութիւնները: Հեղինակը, իհարկէ, ամենից շատ նշանակութիւն էր տալիս իր «գիտական» երկերին, բայց նրա հետագա համբավը հիմնված էր գլխավորապես մանր ձևի բանաստեղծութիւնների վրա:

Կատուլլուսի «պոլիմետրերը» աչքի են ընկնում խիստ կերպով արտահայտված սուբեկտիվ գունավորումով: Յերտաքին աշխարհը պոետին հետաքրքրում է ոչ թե ինքնին, այլ որպես միայն սուբեկտիվ հուշեր արթնացնող, որոնց դինամիկան ևս լիրիկական թեմա է ծառայում: Աշխարհայացքային-վերացական պորբեմներն այստեղ բացակայում են, հին հռոմեական հայրենասիրութիւնից հետք անգամ չի մնացել, քաղաքական թեմատիկան սուրանձնական հարձակումների բնույթ է ընդունում: Լիրիկական բանաստեղծութիւնը, նույնիսկ մանրագույն կենցաղային կամ կենսագրական կարգի իրական կամ ֆիկտիվ դեպքը, ամենից հաճախ մատուցվում է որպես մանր, բայց իբր թե հեղինակի ապրած դեպքի դինամիկ սեպիցիա: Ընկերը հայրենիք է վերագործել: անսպասելի զարմանք, հանդիպման հաճույքի կանխաճաշակում, ցնծութիւն: Խնջույքի բաժակակիրը գողացել է թիկնոցը. բնտիք հայհոյանք, վերադարձնելու պահանջ, պատժի սպառնալիք: Կատուլլուսը նույնիսկ որոշ շափով ցուցամոլութիւն է անում «ոտանավորիկներ» հյուսելու հեշտութիւն և հանկարծակի հորինման առիթների պատահականութիւն վերաբերյալ: Օբեկտիվ արժեքների շափանիշը նշանակալի շափով նա կորցրել է: Հիմնա-

կանը՝ այդ զգացմունքների աղմկալի թրթռումն է, կենսազգացողութեան ֆիզիկական հաճույքը: Բիթիւնիայից վերադարձին Կատուլուան ինքնուրույն ճանապարհորդութեան կատարեց. մենք իզուր կապասեինք «Ճանապարհորդական տպավորութեաններ», տեսածի օրեկտիվիզացիա, սակայն, պոետը պատկերում է ուղևորման տրամադրութեանները և տուն վերադառնալու զգացմունքները.

Տե՛ս, ահա փշեց ասքը դարնան:

.....

Հե՛յ, Կատուլուա, թող դաշտերը փայլեցան,

Թող հարավային Նիկիո արտերը:

Մենք թուշում ենք ասիական քաղաքներ.

Ո՛հ, ինչպես է սիրոս հայրենյալ թափառումների ցանկութեանը:

Ոնց են շտապում ոտքերս դեպ ուղին ուրախ...  
և այլն:

Վերադառնալուց հետո Կատուլուաը դիմում է հարազատ վայրերին՝

Քեզ տեսնելուց շատ եմ ուրախ, շատ երջանիկ.  
եվ Բիթիւնի և Փյունի ապար թողած,  
Այս հրաշք է, քո կյանքովն եմ նորից շնչում:  
Ինչ քաղցր է տագնապ ու հոգս մի կողմ նետել  
եվ աշխատանքը մոռացած հանգստանալ  
Մարմնով հոգնած թափառումից, վերադառնալ  
եվ սիրելի մահճակալիդ մահճում ննջել:

Ո՛չ անձնական բնույթի բանաստեղծութեաններ այստեղ համեմատաբար հազվադեպ են և շնչին բացառությամբ ծիծաղաշարժ-երգիծական բնույթ ունեն:

Անտիկ լիրիկական տրագիդիային համապատասխան Կատուլուաի «պոլիմետրերը» գրեթե միշտ ուղղված են որնէ մեկին՝ բարեկամներին կամ թշնամիներին, սիրած կնոջը, անշունչ առարկայի, վերջապես, հեղինակին իրեն՝ «Կատուլուան»: Սակայն, դիմումը երբեմն սոսկ ձև է դառնում, և Կատուլուաի բանաստեղծութեաններն այդ դեպքում մոտենում են Նոր ժամանակի պոեզիային հատուկ «մենավոր» լիրիկային:

Էլեգիական շափի մանր բանաստեղծութեանները՝ էպիգրամներն ու կարճ էլեգիաներն ավելի հանդարտ տոն են պահպանում: Անձնական լիրիկային զուգընթաց այստեղ արդեն ավելի հաճախ են պատահում նկարագրա-երգիծական ուրվագծեր: Բայց անձնա-

կան զգացմունքներն պատկերման մեջ ևս նկատելի է տարբերությունը «պոլիմետրերից»։ այնտեղ գերակշռում էին ըօպեական բեակցիաներն իրենց անմիջական գոյացմամբ, մինչդեռ էպիգրամներում ծանրության կենտրոնը փոխադրված է երկարատե հոգեվիճակների վրա, որոնք պոետը պասսիվ կերպով արձանագրում է և որոնց մասին նա արդեն կարող է մտորել։ Այդ տարբերումները, սակայն, ժանրագոյացման պարտադիր օրենքների բնույթ չունեն։ առանձին դեպքերում հանդիպում են ինչպես զգալի դինամիկ գունավորումով էպիգրամներ, նույնպես և ավելի նկարագրական ոճի «պոլիմետրեր»։ Բայց թե այնտեղ, թե այստեղ Կատուլլուսը մնում է որպես խիստ սուբեկտիվ պոետ՝ թեմաների միակերպ շրջանով։

Կարևորագույն թեմաներից մեկը՝ սիրայինն է. այդ առաջին հերթին Լեսբիայի սիրո մասին ոտանավորներն են։ Պահպանված ժողովածուի մեջ դրանք ղետեղված են մյուս բանաստեղծությունների հետ մեջընդմեջ, բայց ըստ էության ավարտված ցիկլ են կազմում։ Իր սիրածի համար Կատուլլուսի ընտրած ծածկանունը պետք է հիշեցնի Սապֆոյին (Lesbia — (լեսբուհի))։ Եվ իսկապես, այդ ցիկլը կարծես սկսվում է Սապֆոյի անտիկ ժամանակ հոշակավոր բանաստեղծության թարգմանությամբ. այդ բանաստեղծության մեջ պատկերվում է սիրային խելագարության սիմպտոմները։ Այն, ինչով Սապֆոն դիմում էր ամուսանացող ընկերուհուն, Կատուլլուսը, Լեսբիային տեսնելով, փոխանցում է իր ապրումներին՝

Պարապոթյունը, սիրելի Կատուլլուս, թույն է քեզ համար։

Պարապոթյունն զգացմունքի մոլեգնության է դրդում քեզ։

Պարապոթյունը և՛ արբանեք և՛ քաղաքներ երջանիկ

Շատ է կործանել։

Սապֆոյական տունը, որը Կատուլլուսն այստեղ վերարտադրում է՝ հետևելով բնագրին, նա մի անգամ ևս օգտագործում է այն բանաստեղծության մեջ, որը բովանդակում է վերջնական հրաժարումը սիրուց՝

Իր գաղանխմացներին թող նա վստահի,  
Որ երեք հարյուրին մեկից է փարվում,  
Հոգով չի սիրում ոչ ոքի, բայց ամենքի  
Լյարդն է այրում։

Իսկ իմ սիրո մասին թող նա մոռանա.

Սիրտս է ցամաքել նրա պատճառով,

Փաշտի ծաղիկ պես զուժանով տրորված՝ մահացու։

Այս երկու բանաստեղծութիւնները կարծես երիզում են ցիկլը: Նրանց միջև սիրային զեղումներ են: Սիրածին նվիրված այգպիսի ցիկլեր հաճախ հանդիպում են և հելլենիստական պոեզիայում, բայց Կատուլլուսի համար այդ կենցաղի այլ միջավայր և այլ զգացմունք է: Հունական պայմաններում պոետի սիրածը լավագույն դեպքում կիսապրոֆեսիոնալ հետերա, «պաշտոնական հասարակութունից դուրս» կին է: Հոսմում կնոջ դրութիւնը միշտ էլ ավելի ազատ է եղել, իսկ ընտանեկան խիստ բարձրի անկումով, որը վրա հասավ ռեսպուբլիկայի վերջում (գոնե բարձր հասարակութւյան մեջ), ստեղծվում է յուրատեսակ զգացմունքների էմանսիպացիա: Կատուլլուսը սիրում էր ականավոր տիկնոջ, ընդ որում ամուսնացած, այնուհետև այրիացած\*: Նրա սերը ձգտում է բարձրանալ հասարակ զգացողական հակումի մակարդակից, բայց անտիկ մարդու տակավին նոր և մշուշապատ այգ զգացմունքի համար պոետը համապատասխան բառեր և կերպարներ չունի: Նա խոսում է «բարեկամութւյան հավիտենական դաշն կրնքելու մասին» (մի տերմին, որ փոխ էր անուված միջազգային հարաբերութիւնների բնագավառից), այն մասին, որ կեսբիային սիրում էր «ոչ թե ինչպես ուամիկն իր ընկերուհուն, այլ այնպես ինչպես հայրը սիրում է իր որդիներին և փեսաներին», նա փորձում է սահմանադեղ սիրո երկու տեսակ՝ «սերը» (անտիկ տրագիցիոն իմաստով, այսինքն զգացողական հակումը) և «բարեհաճութիւնը»: Կենսազգացողութւյան այգպիսի նորութւյան պայմաններում, Կատուլլուսի լիրիկան ազատ է մնում տրագիցիոն շատ դրոշմներից և սիրանչին պոեզիայի և ֆուլկլորի նույնիսկ սովորական մոտիվները թարմ նշանակութւյան են ձեռք բերում և մատուցվում են ինքնօրինակ զուգակցութիւններով: Բնորոշ է, որ կեսբիայի կերպարը տրվում է առանձին շտրիխներով միայն, որոնք ամբողջական նկար չեն ստեղծում. պոետն զբաղված է գլխավորապես իրենով և իր զգացմունքներով: Սենտիմենտալութւյան և հեղինանքի, պաֆոսի և խրատաբանութւյան, շոգոքորթութւյան և դուրսբորբոքութւյան՝ արագ հերթագայութւյամբ ծավալվում են բանաստեղծութիւններ՝ սիրուհու ճնճուկի, ճնճուկի մասվան,

\* «Եթե ազատ քաղաքացիների և քաղաքացուհիների միջև իսկապես սիրային հարաբերութիւններ կին տեղի ունենում, — գրում է էնգելսն անտիկ սիրո մասին, — ապա այգ կատարվում էր միայն ամուսնական անհավատարմութւյան հոգի վրա» (Ընտանիքի, մասնավոր սեփականութւյան և պետութւյան ծագումը՝ 1932, էջ 88):

անհամար համբույրների ծարավի մասին: Դրանք Կատուլլուսի  
այն երկերն են, որոնք առանձնակի հուշակ էին վաշելում հին  
դարերում ու Նոր ժամանակներում և մեծ քանակությամբ ընդօրի-  
նակություններ և փոխադրումներ առաջ բերին Ռենեսանսի ու հե-  
տագա դարերի «նրբակիրթ լիրիկայում»: Հետագայում կատակի  
էնտլեթ ունեցող տոները փոխարինվում են ավելի մուսլ տոների,  
և հիմնական մտտիվը դառնում է զգացմունքների անհարիրու-  
թյունը, տոնելությունը դեպի նա, որը չի կարողացել արժանավա-  
յել արձագանքել խոր սիրուն, և անընդունակությունը մեղմելու  
ավելի բորբոքվող զգացմունքը՝

*ես քեզ բարեկամ չեմ լինի, թեկուզ վերստին համեստ դառնաս դու  
Բայց չսիրել քեզ չեմ կարող, թեկուզ ոճրագործ էլ լինես դու:*

Իր սեղմ արտահայտչությամբ անթարգմանելի մեկ դիստիխի  
մեծությամբ էպիգրամը, որը նույնպես մեծ ուղղնանս է գտել  
համաշխարհային գրականության մեջ, ամփոփում է զգացմունք-  
ների բաժինը. «Ես ատում եմ և սիրում: Դու կհարցնես՝ ինչու եմ  
այդպես անում: Զգիտեմ, բայց զգում եմ, որ այդպես է կատար-  
վում, և սոսկալի տանջվում եմ»: Կատուլլուսն իր մեջ ապարդջուն  
հերպյով հոգեկան ուժ է որոնում, որպեսզի հաղթահարի այդ ան-  
հարիրությունը, որը նրան մինչև Ֆիդիկական հիվանդության է  
հասցնում: Աղոթքի հիշ ձևով նա դիմում է ասավածներին խնդրե-  
լով խնայել իրեն և հանուն իր մարտի զգացմունքների հնարա-  
վորություն տալ «առողջանալու»:

Կատուլլուսի սիրային լիրիկայի պարզորեն անձնական բնույ-  
թը գայթակղում է նրա ոտանավորները քննել որպես «մարդկային  
դոկումենտներ» և օգտագործել դրանք հոգեբանա-կենսագրական  
առումով: Այդպիսի փորձեր կատարվել են վիպագրական ձևով.  
սակայն, հետազոտողները նույնպես զբաղվել են Կատուլլուսի  
«ոտմանը» վերականգնելու հարցով. նրանք բանաստեղծություննե-  
րը համակցում էին ենթագրական հերոսուհու՝ Կլոդիայի մասին  
կենսագրական տեղեկությունների հետ, հաստատում էին Կատուլ-  
լուսի և Կլոդիայի սիրային հարաբերությունների պատմությունն  
ու խրանուլագիան Բիթինիա ճանապարհորդելուց առաջ ու հետո և  
բանաստեղծությունները տեղադրում էին ըստ «ոտմանի» առանձին  
հտապների՝ սկսած առաջին վեհերոտ հույսերից և փոխադարձ  
սիրո երանելիությունից, այնուհետև խանդի, գժտությունների և  
հաշտությունների միջով՝ զեպի հետագա հոգեկան երկատումը և

վերջնական անշատումը: նման վերականգնումների կենսագրական արժեքն այնուամենայնիվ հույժ պայմանական է, առավել ևս, որ այդ խնդիրը, ինչպես ցույց է տվել փորձը, կարող է լուծվել տարբեր կերպով:

Կատուլուսի լիրիկայի երկրորդ հիմնական թեման՝ ծաղրն է, որը խիստ ու անողոք է, միշտ սուր ծայրով ուղղված որոշ անձնավորությունների դեմ, հին յամբագրաֆների ձևով: Նա խնքն իր ծաղրական բանաստեղծությունները անվանում է «յամբեր»՝ Հիովին նա մնում է հին յամբագրության տրագիցիայի շրջանակում նաև ծաղրելու և պարսավելու համար օրեկտներ ընտրելու իմաստով. գողություն, անառակություն, անմաքրասիրություն, ֆիզիկական արատներ և այլն՝ ահավասիկ այն հատկությունները՝ որոնք Կատուլուսը վերագրում է իր ծաղրած անձնավորություններին: Այդ տոնով էլ նա հարձակվում է Կեսարի և նրա ազենաներից մեկի՝ Մամուտուսի վրա: Արտահայտության միջոցներէ ամբողջ շափազանցվածությամբ հանդերձ, այդ հարձակումները զուրկ չէին ռեալ հիմքից, և, ըստ պատմաբան Սվետոնիուսի հաղորդման, Կեսարն ինքն ընդունում էր, որ «Վալերիուս Կատուլուսի ոտանավորիկները Մամուտուսի մասին՝ իր վրա հափտենական գրոշմ են դրել»: Մի շարք բանաստեղծություններ ուղղված են արխաիստ պոետների դեմ: Այդ նպատակով հորինվում են զվարճալի սիտուացիաներ: Այսպես, սիրած կինն իբր թե զժաման ժամանակ երգվել է, որ հաշտության դեպքում՝ Վեներային զոհ կմատուցի «ամենաանպետք պոետի» ոտանավորները (այսինքն, ակներև է՝ Կատուլուսի իրեն ստանավորները). հաշտությունը տեղի է ունենում, և այժմ խիզախորեն կրակն են նետվում... ոմն Վուլտրիուսի «Աննաները»: Կատուլուսի ծաղրական լիրիկան հաճախ մտանում է հտալիկական ֆոլկլորային «պարսավանքի» տիպին. մի անգամ նույնիսկ նա կարծես թե վերադարձրում է այդ ծեսը, կոչ անելով իր ոտանավորներին «շրջապատել» մի ոմն «անառակ կնոջ» և բուռն կերպով նրանից պահանջել վերադարձնելու յուրացրած տետրը:

Ֆոլկլորային ֆորմուլաների Կատուլուսը շատ հաճախ է դիմում: Այսպես, նրա ժողովածուում միակ «սեղանի» բանաստեղծությունը, որը լավ հայտնի է ոուս գրականության մեջ շնորհիվ Պուշկինի («Пьяной горечью Фалерна»), բնագրում վերջանում է երկու «կախարդման» ֆորմուլաներով՝ «զինու աղետ» հանդիսացող ջրին նա «վտարում» է ծոմապահների մոտ և կախարդանքը

«վավերացնում է» մատնանշելով այն, որ «այստեղ գտնվում է մա-  
քուր Բաքոսը»<sup>2</sup>: Պուշկինի թարգմանության մեջ այդ ֆուկլորային  
զծերը մեղմացված կամ բոլորովին բաց են թողնված, և բանաս-  
տեղծությունն ավելի «անակրեոնական» բնույթ է ընդունել:

Ինչպես որ պետք էր սպասել նեոտերրիկից, Կատուլուսը ար-  
տակարգորեն ուշադիր է ձևի նկատմամբ: Պոլիմետրերը ոճավոր-  
ված են այլ կերպ, քան էպիգրամները: Պոլիմետրերի դինամիկու-  
լիցունն արտահայտվում է արագ տեմպով, որի հետ մի քանի տո-  
ղերի ընթացքում թափվում են հարցեր, պատասխաններ, բացա-  
զանչություններ: Մտքերը կապակցվում են կարծես հանկարծա-  
կիտրեն զգացմունքների բուռն զեղման տպավորությունն են ստեղ-  
ծում: Լեզուն մտերմական-ազատավարական գունավորում ունի-  
շատ են՝ առօրյա կենդանի խոսքի, գավառաբանության, հուզա-  
կան-փաղաքշական, անվայել-կոպիտ խոսքերի տարրերը: Տոնի  
աֆեկտավորությունը բարձրանում է խիստ գույներով, շափազան-  
ցություններով, գրոտեսկային կերպարներով: «Անմիջական» ոճի  
այն բոլոր մոմենտները էպիգրամներում զգալիորեն թուլացված  
են, և գերակշռում է ավելի տրամաբանական կոմպոզիցիան, որի  
ժամանակ մտքի շարժումներն արտակարգ վարպետորեն հարմա-  
րեցված են էլոգիկ դիատրիխի ուրիշակ կառուցվածքին: Կատուլուսի  
«Կատակները», շնայած նրանց թվացող պարզությանը, մանր ձևի  
արվեստի վրա կատարած լուրջ աշխատանքի արդասիք են:

Բայց ոչ ձևական մեծավարպետությունը, ոչ զգացմունքների  
թարմությունն ու նորությունը չպետք է քողարկեն այն հանգա-  
մանքը, որ Կատուլուսի սուրբեկտիվ լիրիկան աշխարհայացքային  
լիակատար տրոհվածության արդյունք է: Կորցնելով հարգանքը  
ղեպի անցյալի իդեոլոգիական արժեքները, Կատուլուսը կյանքի  
որևէ նոր կենտրոն չի գտնում: Ուստի նրա սուրբեկտիվությունը  
զուրկ է համադրական դրույթից, փոշիանում է բույեական ռեակ-  
ցիաներում կամ անցնում է անկամ ինքնահայեցողության: Կա-  
տուլուսը կառչում է մտերմությանը, իբրև կենսական կարևորա-  
գույն հենարաններից մեկի: Անձնական վիշտը և անձնական  
հիասթափությունը՝ եզրոր մահը, դժբախտ սերը, բարեկամները  
և Բրական կամ երեակայական դավաճանությունը՝ նա ապշում է

<sup>2</sup> Անտիկ աների մոտ արձանագրություններ էին լինում ստորև  
բերվածի նման՝ «Այստեղ ապրում է հաղթական Էրակիտը, Զևսի որդին,—  
թող մոտք չունենա այստեղ շարսթյունը»:

արտակարգ հիվանդագին և սուր հոռետեսության նույն են առաջացնում նրա մեջ: Եւ երբ Կատուլլուսը հուսահատության այդ մոմենտին հանկարծ աղերսանքով դիմում է աստվածներին, յրանց ուժը զուտ բարոյական կարողի համարելով, մենք կապ ենք որսում նրա հոգեկան ավերվածության, որն ստեղծվել էր Հոմերի պոլիսային կարգերի քայքայմամբ, և այդ ժամանակաշրջանում աճել սկսող կրոնա-էթիկական շարժումների միջև:

Ավելի խոշոր երկերը առավելապես վերաբերվում են «գիտա-էլան» պոեզիայի կատեգորիային, առաջին հերթին ալեքսանդրյան ոճի պոեզիային: Այսպես, Կատուլլուսը թարգմանում է Կալիմաքոսի «Բերենիկեի մահը»: Ինչպես ցույց տվեց բնագրի վերջերս գտնված հատվածը, թարգմանությունը կատարված է հոմեական գեղարվեստական պրակտիկայի համար միանգամայն արտասու-ժյոր ճշգրտությամբ: Կատուլլուսը ջանում է լիակատարությամբ վերարտադրել բնագրի ուրիշ-շարահյուսական շարժումը, լատիներեն էլեգիկ դիստրիխին հաղորդել այն ճկունությունը, որը հատուկ էր այդ շափի հելլենիստական պոեզիային: Կալիմաքոսի թեմաներով գրված է նաև հետաքրքրական «Ատտիս» բանաստեղծությունը: Այդ մեղ փոխադրում է Կիրեևայի շվայտանքների միջոցորտը, որոնք նույն տարիներում անհանգստացնում էին Լուկրեցիուսի պոետիկ երեակայությունը: Գրգռված պոթետիկական և որոշ շափով վերամբարձ, «դիֆիրամբական» հանդիսավորությունը պոեզիայում յուրահատուկ «ասիականության» ոճ են ստեղծում, այդ ոճն էլ պաշտպանվում է հուզված «գալլիամբիկ»<sup>\*</sup> շափով: Փոքրասիական պաշտամունքի մոլեգնության և հելլենական սովորական կենսազգացողության միջև կոնտրաստը մշակված է հունական համայնքների քաղաքակրթված պայմանների և Փոյուգիայի վայրենի լեռնային պեյզաժի հակադրության ֆոնի վրա: Կարելի է հարց տալ՝ անտիկ պոեզիայի մեջ այդ հաղվադեպ պատկերներն արդյո՞ք հետևանք չեն հեղինակի բիթինական ճանապարհորդության: Բայց պոեմի կազմելու ժամանակի մասին որևէ տվյալներ չկան: Կատուլլուսի բարձրապաթոս ոճի ամենանշանակալի երկը, սակայն, «Պելեոսի և Թետիսի հարսանիք» երկն է՝ կազմված ավելի մոտիկից մեղ անձանոթ հելլենիստական ազդյուղների հիման վրա: Պոեմը, հասկանալի է, որ «գիտական» է, նրբագեղ դիցաբանական ակնարկներով, մեծ քանակությամբ

\* Կատուլլուսի գալլիամբի սխեման

հատուկ անուններով և բազմիցս զիցարանական տրադիցիոն վիշալախոշումներով, բայց կատուլլուսին այնուամենայնիվ «գիտականությունն» ավելի քիչ էր հետաքրքրում, քան պաթետիկան: Պատմողական մասը մշակվում է ժլատորեն, կարևորագույն հաղորդումները կամ իսպառ բաց են թողնվում, կամ հաղորդվում են հարևանցիորեն. հիմնական ուշադրությունը դարձված է տրամաբանությունների պատկերմանը, հոգեբանական պատճառաբանություններին, նկարագրություններին, պաթետիկ ճառերին: Ուշագրավ է պոեմի կոմպոզիցիան: Ակավում է այն արգոնավորդների արշավանքով և Արգոնավի կառուցումով: Բանից դուրս է գալիս, որ Արգոն (առաջին նավը) երբ ջուրն իջեցրին, ծովի հափերժահարսերը դուրս լողացին ջրի երեսը, որպեսզի դիտեն հրաշքը, և այդ ժամանակ Պելեոսը սիրահարվեց Թետիսին: Պոեմն անհատազ անցնում է հարսանեկան հանդեսի նկարագրությանը: Հարսանեկան նվերների շարքումն է ծիրանի գորգը, որի վրա պատկերված է Արիադնան՝ լքած Թեսեոսից նաքսոս կղզում և Բաքոսի կողմից ընդունված: Դրանով է բացատրվում Արիադնայի մասին երկար շեղումը (հեղինակն ինքն է «շեղում» անվանում), որն զբաղեցնում է ամբողջ էպիլիպի կեսից ավելին: Հելլենիստական պոեզիայի համար բնորոշ՝ կերպարվեստի արտադրանքների նկարագրությունն, ուղեկցված հոգեբանական բացատրություններով, իր հերթին միայն երիզավորումն է առասպելի պաթետիկ կամ հուզիչ էպիզոդների, մասնավորապես Արիադնայի և Թեսեոսի սիրո պատմության համար: Շեղման կենտրոնում գետեղված է միայնակ Արիադնայի վրդովված մենախոսությունը, որն իր ոճով մոտենում է ողբերգության մենախոսություններին և հարուստ է էֆեկտավոր ճարտասանությամբ: Շեղումից հետո հեղինակը վերադառնում է հարսանիքին: Զանց առնելով համատարածված մոտիվները, ինչպիսին օրինակ հռչակավոր «կովախընձորն» էր, նա ուշադրությունը կենտրոնացնում է քիչ հայտնի աստվածների դեմքերի վրա, որոնք ներկա են հյուրերի թվում: Նոր ընդմիջարկում. ճակատագրի աստվածուհիներն իրրև մարգարեացում ազդարարում են Պելեոսի և Թետիսի ամուսնության ծիլ՝ Արիլևսի ապագա վսեմության մասին: Եղրափակման մեջ որոշ հոռետեսական երանգ կա. աստվածները, որ մի ժամանակ այցելում էին մահկանացուների տոները, այժմ երես են թիքել ամեն տեսակի ոճրագործություններով իրենց արատավորած մարդկանցից: «Երիզավորման» կոմպոզիցիան, որի ժամանակ մի

թեման ընդմիջարկվում է երկրորդով, երկրորդը՝ երրորդով և այլն: հեղինակական պոեզիայի սիրած եղանակներից մեկն էր, որին մենք դեռ կհանդիպենք հոռոմեական գրականության մեջ: Նույն «երիզավորման» կոմպոզիցիային է դիմում Կատուլլուսը իր «գիտական» ոճի «Ալլիային» խոշոր էլեգիայում, ուր անձնական բնույթի մոտիվները՝ մտերմական ծառայությունը, սերը, եղբոր մահը՝ հյուսված են զիցարանական ասքերի հետ: Անձնական սիրո թեմայի միավորումը սիրային-զիցարանականի հետ, մի հանգամանք, որը հանդիպում ենք արդեն հեղինակական գրողներին երկերում, նախապատրաստում է սիրային էլեգիայի ժանրը: Այդ ժանրը լայն զարգացում ստացավ հոռոմեական պոեզիայում:

«Գիտական» ոճի զուգակցում ֆուլկլորային երգի եղանակներին հետ մենք գտնում ենք Կատուլլուսի էպիտալամներում (հարսանեկան հիմներում): Այդ էպիտալամներից մեկը, կազմված իրական հարսանիքի համար, իրենից ներկայացնում է մի լիրիկական ուղեկցում՝ հոռոմեական հարսանեկան ծեսին, նրա հաջորդական էտապներում: Մի ուրիշը կազմված է որպես երկու երգեցիկ խմբերի «մրցում»՝ հարսին պաշտպանող աղջիկների խմբի և փեսայի կողմը բռնած աղաների խմբի միջև: Հաղթում են, իհարկե, աղաները: Այդ բանաստեղծություններում նկատելի է ծանոթությունը էպիտալամների կլասիկ բանաստեղծուհի՝ Սապֆոյի հետ: Երկրորդ էպիտալամը հետաքրքրական է իրեն պոետիկական նոր շարահյուսության ստեղծման առաջին փորձերից մեկը. անցումն երկար բարդ նախադասություններից կարճ ֆրազների, որոնք միանում են կոնտրաստի կամ զուգահեռության սկզբունքով, Թեոկրիտոսի ձևով: Կատուլլուսի սկսած այդ բարենորոգությունն այնուհետև իր ավարտումն է ստանում Վերգիլիումով:

Կատուլլուսի և նեոտերիկական ամբողջ խմբակի ստեղծագործությունը գտնվում է արխայիկ պոեզիայի և Օգոստոսի ժամանակվա «ոսկե դարի» սահմանագծին: Նեոտերիկների բերած զգացմունքների աշխարհի հարստացումը և նրանց ձևական նվաճումները ընկալեց հոռոմեական «կլասիկ» գրականությունը: Բայց այդ «կլասիկ» գրականությունը ստվերով ծածկեց նեոտերիկներին, այդ թվում և Կատուլլուսին: Մեր թ. I—II դ. դ. Կատուլլուսի բանաստեղծությունները դեռ ժողովրդականություն էին վայելում: Այնուամենայնիվ նա «դպրոցական» դրող չգառավ, և ուշ անտիկ շրջանը լավ չէր ճանաչում նրան: Միայն երջանիկ պատահակա-

նությամբ է մեզ հասել այդ հիանալի պոետը: Կատուլլուսի հայ-  
րենի քաղաք Վերոնում պահպանվել էր հռչակավոր վերոնացու-  
րանաստեղծութունների մեկ օրինակը և XIV դ. սկզբին այդ օրի-  
նակը գտնվել է հին կուլտի մեջ: Կատուլլուսի ինտիմ սուրեկտի-  
ւիբիկան, որը հաճախ մոտենում է նոր Եվրոպայի լիրիկային, այդ  
ժամանակից հաստատուն տեղ գրավեց համաշխարհային գրա-  
կանության ժառանգության մեջ: Եվրոպայի խոշորագույն լիրիկա-  
կան պոետները ուշադրության տուրք էին տալիս Կատուլլուսի  
ստեղծագործությանը: Նրան սիրում և թարգմանում էր Պուշկինը,  
իսկ սովետական ժամանակաշրջանում Ա. Բլոկը մի քանի վա-  
հճեր նվիրեց Կատուլլուսի «Ատտիսի» մեկնաբանությանը:

---

ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՀՌՈՄԵԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գ Լ Ո Ւ Ե Ի

ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՆՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ (ՊԳՈՍՏՈՍԻ  
ԳՍՐԻՎ) ՀՌՈՄԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. «ՊԳՈՍՏՈՍԻ ԳՍՐԻՎ» ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՈՒ ԿՈՒՏՈՒՐԱՆ

Օկտավիանոս-Յոզուատոսի\* հիմնած կայսրության իրեն նպատակ էր դրել ռազմական դիկտատուրայի հիման վրա ստրկատիրական հասարակության կոնսոլիդացիան: Դիկտատուրան ուղղված էր ոչ միայն ստրուկների և հոմեական քաղաքացիության դեմոկրատական ստորին խավերի, այլև վերնախավերի մեջ եղած կենտրոնախույս տենդենցների դեմ: Օկտավիանոսն իշխանության հասաւ ստորին շերտերի օգնությամբ, որոնց նա ստիպված էր փոխհատուցել մի շարք արիստոկրատների գույքի բնագրավման և նշանակալի թվով միջին և մանր հողատերերի հողերը խելու հաշվին: Ամրապնդելով իր իշխանությունը, նա կտրուկ կերպով դարձավ վերնախավերի հետ մերձենալու կողմը, որպեսզի քաղաքականապես չեզոքացնի հոմեական «պրոլետարիատին», պահելով նրան, սակայն, իբրև պահեստի ուժ արիստոկրատական

\* «Յոզուատոս» անունը՝ սենատի կողմից հատկացրած Օկտավիանոսին 27 թ.՝ նշանակում է «վեհադանձ», բայց «սրբազանի» երանգով, որը գերադանցում է մարդկային կարգությունները և մտն է աստվածային կարգի ուժերին:

Ֆրոնդաչի դեմ: Հեշտ չէր որոնվող կոմպրոմիսային գծի գտնելը՝ վճռողական հաջողության Օկտավիանոսը հասավ նրանով, որ իր շուրջը համախմբեց Իտալիան, պաշքարելով հելլենիստական պրովինցիաների դեմ, ուր իշխում էր նրա ախոյան Անտոնիոսը: Իտալիայի տնտեսական առավելությունները, Արևելքի հաշվին հարստանալը՝ վտանգի տակ էր, և Օկտավիանոսն այստեղ կարող էր հենվել իտալիկական բնակչության ամենալայն շերտերի վրա: Կայսրության մեջ Իտալիան պահպանեց իր առաջնությունը: Այդ հիման վրա Օկտավիանոսը կարող էր համաձայնության գալ արիստոկրատիայի հետ: Մեր թ. ա. 27 թվին նա հրաժարվեց պարզորոշ դիկտատուրայից և ձևականորեն վերականգնեց «նեսպուրիկան», պահելով իր ձեռքում ռազմական գերագույն իշխանությունը և սահմանամերձ պրովինցիաների կառավարումը: Հռոմեական կայսրության մեջ ձևականորեն պահպանվեցին ռեսպուբլիկական օրգանները՝ սենատը, կոնսուլները և բոլոր հինավուրց պաշտոնները, Օգոստոսը միայն պրիեցեպս էր համարվում, այսինքն՝ պետության մեջ առաջին քաղաքացին: Սակայն շուտով զգացվեց, որ այդ «նեսպուրիկան» ձևերը չափազանց ճնշիչ են, և 23 թվին նոր ռեֆորմ կատարվեց. Օգոստոսը պլեբեյական տրիբունի իրավունքներ ստացավ, որոնք հնարավորություն էին տալիս, առանց հին տրագիցիաները խախտելու, միջամտել սենատական օրգանների կարգադրություններին և սենատի ձևական իրավասության սահմաններում կենսագործել միահեծանությունը: Արիստոկրատիայի դասային արտոնությունները խստորեն պահպանվում էին, բայց ռեսպուբլիկան միայն առերևույթ գոյություն ուներ:

Նույնպիսի երկվությունը էլ աչքի էր ընկնում նոր կարգերի իդեոլոգիան: Իտալիայի վրա հենվելու և ռեսպուբլիկայի արտաքին ձևերը պահպանելու ձգտումը կոնսերվատիվ լոզունգներ էր պահանջում: Ինչպիսի խորամանկ կոնսերվացիաներ էլ որ լինեին, հասկանալի է, չէին կարող ծածկել այն հանգամանքը, որ քաղաքական կարգերն արմատապես փոխվել են, և նոր ռեժիմի տեսաբանները ջանում էին ուշադրությունը շեղել պետական կառուցվածքի հարցերից, առաջին հերթին շեղտելով բարոյական ռեֆորմի անհրաժեշտությունը: Տակավին Պանեթիոսը, իսկ նրանից հետո էլ Յիցերոնը բարոյական մոմենտին ավելի պակաս նշանակություն չէին տալիս, քան օրենսդրականին: «Ի՞նչ շահ իզուր օրենքներից, եթե առաքինի բարքեր չկան», — բացազանջում է այժմ Հորացիուսը: Շատ նորմուդություններ անցնում են

կրոնական և շարոյական ռեստավրացիայի, «նախնիքների սովոր-  
քույթները» վերականգնելու նշանաբանի տակ: Հոռմի քաղաքա-  
կան և կրոնական անցյալի առաջ խոնարհվելը, հինավուրց, վա-  
ղուց ի վեր մոռացված պաշտամունքների և տոնակատարու-  
թյունների վերականգնումը՝ Օգոստոսի իդեոլոգիական քաղաքա-  
կանութիան հատկանշական գիծն էր: Պահպանողական շրջանները  
հնադարձ էին անցյալի այդ իդեալականացմանը, բայց արդիակա-  
նութիան վերաբերյալ ավելի շատ հոռետեսորեն էին տրամադր-  
ված: Մինչդեռ նույն պաշտոնական իդեոլոգիան պահանջում էր  
կայսրութիան կրոնական սրբազործում, Օգոստոսի կառավարումը  
դիակել իբրև մի ինչ-որ «ոսկե դար», որը վերջ դրեց քաղաքացիա-  
կան պատերազմներին, երկրի վրա հաստատեց «խաղաղություն»  
և «առատություն», և որն իր հերթին քաղաքացիներից պահանջում  
էր «առաքինություն»: Հելլենիստական արքաների պես Օգոստոսը  
հաճուքով ընդունում էր (Թեպետ պաշտոնապես դրանից հրա-  
ժարվում էր) իր անձի աստվածացումը, որպես «փրկչի», նոր  
Ապոլոնի, խավարի և շարութիան հաղթողի, որպես հարստություն-  
ներ և կուլտուրայի բարիքներ տվող մի նոր Մերկուրիուսի (Հեր-  
մեսի): Գայոս Հուլիոս Կեսարը, որի ժառանգն էր իրեն համարում  
Օգոստոսը (Օգոստոսը և բոլոր հետագա իմպերատորները «Կե-  
սար» տիտղոսն էին կրում), աստվածների կարգը դասվեց, և  
կայսրների պաշտամունքը, մահվանից հետո նրանց աստվածների  
կարգը դասելը, հոռմեական կայսրութիան իդեոլոգիական հիմքե-  
րից մեկը դարձավ:

Այդ լողունգներն ամեն տեղ չէ, որ անկեղծ ընդունելություն  
էին գտնում: Սարկատիրական դասակարգը վերջի վերջո հաշտվեց  
կայսրութիան հետ, որպես քաղաքացիական պատերազմներից  
դուրս գալու միակ միջոցի հետ, բայց այդ հաշտության պրոցեսը  
երկարատև ու բարդ էր: Կայսրն ստիպված էր պայքարել տար-  
բեր խավերից ելած օպոզիցիաների դեմ: Այդ օպոզիցիոն տրա-  
մադրություններն առանձնապես ուժեղ էին Օգոստոսի կառավար-  
ման առաջին կեսին, երբ նախկին վերնախավը դեռ հույսը չէր  
կորցրել վերադարձնելու կորսված քաղաքական իշխանությունը,  
միջին և մանր հողատերերը գրգռված էին զինվորներին բաժանե-  
լու համար հողերը բռնագրավելու դեմ, իսկ բանակը հաշիվ էր  
ներկայացնում իր մատուցած ծառայությունների համար: Սակայն  
Խտալիայի լայն խավերը, քաղաքացիական պատերազմների դրժ-  
վարին տասնամյակներից հետո, ծարավի էին հանգստի և այլ

էլք չէին տեսնում: Եգիպտոսի նվաճումը հսկայական ավար բերեց, որը գնում էր զորքի սահանջումն քննելի բավարարմանը: Իտալիայի և պրովինցիաների վարչական ու տնտեսական կարգավորման միջոցառումները, ռազմական հաջողությունները և կառավարման արտաքին փայլը նոր կարգերին որոշ ժողովրդականություն տվին, և Օգոստոսին, թեպետ ոչ սահուն, հաջողվեց կայունացնել հասարակական հարաբերությունները և օպոզիցիան ուղղել դեպի թեթև իդեոլոգիական ֆրոնդերություն ուղին, որը լուրջ վտանգ չէր հանդիսանում կայսերական ռեժիմի համար:

Օգոստոսի քաղաքականությունը՝ մասնավորապես ընտանիքի և ամուսնության բնագավառում, նրա ձգտումը հակադրել ընտանիքի քայքայմանը հռոմեական հասարակության ցենզային խափերում՝ զգալի դժգոհությունների առկա տվեց: Ռեսպուբլիկայի էությունման ժամանակաշրջանում ամուսնությունը, հարուստ երիտասարդների երկարատև կապերը կիսապրոֆեսիոնալ հետերաների հետ, ամուսնական անհավատարմությունը՝ արդեն կենցաղային երևույթ էին դարձել: Սակայն ստրկատիրական հասարակությունը, որ հիմնված էր լիիրավ ազատ քաղաքացիներին՝ ստրուկներին և օտարականներին հակադրելու վրա, միշտ շահագրգռված է «արյան մաքրությունը», և ստրկատիրական դասակարգն ամրապնդելու համար ստեղծված կայսրությունը չէր կարող այդ պրոբլեմը զանց առնել: Օգոստոսը շատ ժլատություն էր օտարներին հռոմեական քաղաքացու իրավունքներ տալիս և սահմանափակեց ստրուկների ազատագրումը: Այս վերջինն արդեն նշանակում էր միջամտել մասնավոր անձանց իրավունքներին, բայց Օգոստոսը դրանով շահմանափակվեց: Նա անցկացրեց մի շարք օրենքներ, որոնց մեջ ամուսնացածների համար հաստատվում էին գույքային և պաշտոնավարական արտոնություններ (մասնավորապես բազմազավակների) և դրանք սահմանափակեց ամուսնիների համար: Դրա հետ միասին նախատեսնված էր խիստ քրասային ամուսնություն: Ամուսնական անհավատարմությունը պատժվում էր գույքի որոշ մասի բռնագրավմամբ կամ արտաքսմամբ, և՛ որ անտիկ ժամանակ չլված բան էր, — օրենքի սանկցիաներն սպառնում էին և այն ամուսնուն, որը, գիտենալով իր կնոջ անհավատարմության մասին, նրա դեմ դատական հետապնդում չէր հարուցում. այդպիսի ամուսինը մեղադրվում էր ներքողամտություն և «կավատություն» համար: Մասնավոր կյանքի այդ սղմումը, որն անցնում էր նույնպես բարքերի հինավուրց

մարբութեան լողունդի տակ, համառ դիմադրութեան հանդիպեց: Սովորաբար իմպերատորին հլու-հնազանդ «նեսպուրլիկական» օրգանները՝ սենատն և ժողովրդական ժողովը, որոնցով անցնում էին օրինագծերը, ամուսնական հարցում կամակոր դուրս եկան: Յգոստոսն իր ռեֆորմներն անց էր կացնում աստիճանաբար միայն, բնակչութեան բողոքի դեպքում բազմիցս փոխում, մեղմում կամ հետաձգում էր ուժի մեջ մտցնելը. նա ստիպված եղավ ընդունել հեծյալների ամուսնութեանն ազատագրված ստրկուհիների հետ, մի հանգամանք, որ սկզբում նա մտադիր էր արգելել: Ինչպես կտեսնենք հետագայում, ամուսնական օրենսդրութեան շուրջը եղած պայքարը բազմակողմանի արտացոլումն է գտել Յգոստոսի ժամանակի գրականութեան մեջ:

Մեր թ. ա. 43 թվին Օկտավիանոսը կատարեց իր առաջին հեղաշրջումը, որն սկիզբ դրեց նշա տիրապետութեանն Իտալիայում: Ակցիոմի ճակատամարտից հետո (31 թ.) նրան հաջողվեց միավորել ամբողջ հռոմեական տերութիւնը, բայց նոր կարգերի վերջնական հաստատումը կարելի է համարել միայն 19 թվից հետո: Երկարատև կառավարումից հետո Յգոստոսը մեռավ մեր թ. 14 թվին. կայսրութիւնը կայուն էր, և արդեն ոչ ոք չէր էլ մտածում նեսպուրլիկական կարգերին վերադառնալու մասին:

Անցման տարիների իդեոլոգիական շարժումը բնորոշվում է հանգստութեան տենդենցով, կայունութեան ծարավով: Ինչպես էլ որ վերաբերվին ստեղծվող կայսրութեանը տարրեր հասարակական խմբավորումները, նոր կարգը հանդես էր գալիս որպես անհրաժեշտութիւն, — հարկ էր, որ յուրաքանչյուր ոք իր տեղը որոշեր ծագող սխտեմում: Եվ Յգոստոսի ախտիվ կողմնակիցները և պասսիվ կերպով նրա հետ հաշտվածները, բոլորն էլ իրենց դիրքերի ներքին հիմնավորում էին որոնում: Այդ ավյունը, սակայն, կարճատև եղավ: Հենց սկզբից արդեն հռոմեական պետութեան նոր ծաղկման առթիվ խրախճանքի տոներին սկսեցին միախառնվել հնազանդութեան, անուրջի և հողնաձուլութեան մոտիվներ և որքան ավելի հեռուն էր գնում, այնքան ավելի շատ էր զգալի դառնում կայսրութեան մահացուցիչ մթնոլորտը: Հռոմեական հասարակութիւնը կորցնում է այն բանի զգացումը, որ ինքը ընդունակ է կառավարելու իր ճակատագիրը և հաճույքով ունկնդրում նաև է կառավարելու իր ճակատագիրը և հաճույքով ունկնդրում է ամեն տեսակի զառանցանքների՝ աշխարհը ղեկավարող ծածուկ ուժերի մասին: Քաղաքացիական պատերազմներում և Յգոստոսի հաստատած «նոր դարում» տեսնում են հինավուրց «մար-

գարեությունների» իրագործումը: Կրոնա-միասնական հոսանքները, որոնք զարգացել էին ռեսպուբլիկայի կործանման ժամանակաշրջանում, այժմ պաշտոնապես խրախուսվում էին: Լայն հորձանքով տարածվում էին հեղինիստական հավատալիքները: Վհուկության մասին պատկերացումները, որոնք առանց այն էլ վերացված էին կրթված մարդկանց նեղ շրջանում միայն, հանդես են գալիս նոր ուժով, պարուրվելով արևելյան աստղագուշակության և կախարհության մեջ: Այդ հավատալիքները պաշտպանություն են գտնում նաև ուշ հեղինիստական գոհնիկ փրիստոփայության, օրինակ Պոսիդոնիսի ուսմունքի մեջ: Նրա ուսմունքն այն իմաստունի մասին, որը ազատ կերպով ենթարկվում է օրհասին և գիտակցորեն իր կամքն ուղղում է ճակատագրի կանխորոշվածը իրագործելու ուղղությամբ, միանգամայն պիտանի փրիստոփայություն էր կեսարիզմի համար: Օգոստոսը, անձնապես հակված լինելով զեպի իր ժամանակի սնտրիապաշտություններից շատերը, իրեն Ստոայի հետևորդ է համարում: Այնուամենայնիվ, նոր հանգամանքները շնորհակալ հող չէին հանդեսանում փրիստոփայական ստեղծագործության համար: Փրիստոփայությունը կամ դառնում է հին ուսմունքների մեկնաբանությունը (Սենեկայի արտահայտությամբ՝ «դառնում է ֆիլոզոֆիա»), կամ ներփակվում է մասնավոր կյանքի էթիկայի նեղ սահմաններում: Թե հստակապես մասսաները, որոնց նոր կարգերը հեռու էին պահում քաղաքական կյանքից, և թե վերնախավը, որի եկազորությունը ցանկանում էր գրավել և իսպառ դնել իրեն,—բոլորն էլ ձգտում են պարփակվել մասնավոր կյանքի ոլորտում: Այդ պարփակումը ամենատարբեր ձևեր է ընդունում—բացե ի բաց կյանքի հաճույքների հեռակից ընկնելուց մինչև ձգնավորակումն ինքնասահմանափակումը: Մեծ հաջողությամբ էին օգտվում ստոփիա-կլինիկական և նոր-պլուրազորական կարգի բարոյախոսական քարոզիչները, որոնք կոչ էին անում բարոյական կատարելագործություն: Հռոմայեցի Սեքստիուսը գործնական թեքումով սեփական փրիստոփայական սխառեմ ստեղծեց. իր ներքին աշխարհի վրա կատարվող ամենօրյա աշխատանքում անհատը պետք է մշակեր իր մեջ «համբերատարություն», ճակատագրի հարվածներին դիմադրելու ուժ: Պետական կարգերի փոփոխությունը Սեքստիուսը վերաբերվում էր պասսիվ տահնությունը. նա հրաժարվեց սենատորի կոչումից, որ առաջարկեց նրան Հուլիոս Կեսարը, իսկ

այնուհետև Հոռմից հեռացավ և հաստատուից Աթենքի ավելի ազատ պայմաններում:

Անցման ժամանակի կերպարվեստին հատուկ էր մոնումենտալուժյան ձգտումը: Իմպերատորի լայնածավալ շինարարական գործունեությունը թույլ էր տալիս նրան իր կյանքի վերջում ասելու, որ նա Հոռմն ընդունել է՝ կամից, իսկ թողնում է քարից: Իրեն Օգոստոսի և նրան շրջապատող գործիչների կառուցած տաճարները, պալատները, հանրային շենքերն ու կառուցվածքները (ինչպիսին «Օգոստոսի խաղաղության դոհասեղանն» էր մեր թ. ա. 13 թ.), այս կամ այն ձևով հոչակում էին Հոռմի և նրա տիրակալի վեհությունը: Այստեղ գերիշխում է «կլասիկական» ոճը, կողմնորոշումը դեպի V դարի ատտիկական կերպարվեստը: Նույնն էլ տեղի ունեւր քանդակագործության բնագավառում, որը հաճախ ընդօրինակում էր կլասիկ և նույնիսկ արխաիկ ժամանակաշրջանի Հունաստանի հուշարձանները: Հոռմեական կերպարվեստը, սակայն, տալիս է ավելի անհատականացված պորտրետականություն: Դիմանկարի հին հոռմեական տրադիցիան զուգակցվում է ժամանակի գաղափարներին համապատասխան անհատական գծերին բովանդակալից արտահայտություն հաղորդելու հետ: Պահպանողական թեքումը, Հոռմի անցյալի առաջ խոնարհվելը կյանքի է կոչում պատմական արձանագործությունը, հոռմեական պատմության գործիչների պատկերումը: Սակայն կլասիկական ոճը երկարատև չէր. արդեն Օգոստոսի ժամանակ նկատվում է որոշ ձգտում դեպի փարթամությունը, պաճուճանքը, վերացականը, որը հետագայում բնորոշ է դառնում կայսրության արվեստի համար: Ուշ-օգոստոսյան ժամանակի կենսազգացություն համար հատկանշական են թասերը կմախքների պատկերմամբ և արձանագրությամբ՝ «ձեռք բեր և օգտվիր» կամ «հրճվիր կյանքով, քանի կենդանի ես, վաղվա օրն անհայտ է»:

Նման պրոպեաներ դիտվում են նաև գրականության մեջ: Անցման ժամանակաշրջանը (մոտավորապես, մեր թ. ա. 40 և 15 թ. թ. ժամանակը) հոռմեական պոեզիայի ամենաբարձր ծաղկման ժամանակն էր, «ոսկե դարը»։ Օգոստոսի կառավարման երկրորդ կեսից սկսած արդեն նկատելի են անկման նշաններ:

Կենսազգացողության քաոսային թափփոխվածությունը, որը հատուկ էր Կատուլլուսի ժամանակին, իր տեղը զիջում է աշխարհայացքային խորացմանը: Դրականության մեջ այդ նշանավորվեց ռեակցիայով ընդդեմ ալեքսանդրիականության գաղափարազեր-

կույթյան, պաղատարական բովանդակութեան բարձրացմամբ, կլասիկ ոճին և ներդաշնակ ձևին վերադարձով: Ավելի խոր սուրեկտիվ ինքնագիտակցութեան զուգակցումը օրեկտիվ աշխարհայեացքի մասնավորելու ձգտման հետ, հելլենիզմի մանրազարդ արվեստի զուգակցումը հունական գրականութեան կլասիկ օրինակների խոշոր և պարզորոշ ձևի հետ՝ հոմոմեական պոեզիայի նոր ոճ են շտեղծում: Արտացոլելով հոմոմեական կայսրութեան ատոմակաճանցած անհատի աշխարհազգացողութիւնը, այդ պոեզիան շունեցաձև այն լայն ժողովրդական բնույթը, որով աշքի էր ընկնում հունական պոլիսի կլասիկ գրականութիւնը և իր առաջ այնպիսի ատուր ու խոր պրոբլեմներ չի դնում, ինչպես V դարի ատտիկական դրաման, բայց ներքին ապրումների լարվածութեամբ նա հաճախ ձայնակցում է արդեն նոր ժամանակի պոեզիային և, զեղարվեստական արժեքի իմաստով, ամենաաշքի ընկնող երևույթն է հետպոլիսյան ժամանակաշրջանի ամբողջ անտիկ գրականութեան մեջ: Վրասիկական ճաշակը, որ զարգացել էր կայսրութեան կենտրոնում, իր ազդեցութիւնն ունեցավ նաև հունական գրականութեան վրա: Հունական պոեզիայում նույնպես հնչում է «գիտական» հելլենիստական ոճից ետ նահանջելու կոչ, իսկ պրոզայում հաղթանակում է «ատտիկիզմը»:

Գրականութեան բովանդակութեան բարձրացման դրույթը գտնում էր և պաշտոնական աշակցութիւն: Օգոստոսը և նրա մերձակա օգնականները շահագրգռված էին, որպեսզի գրականութիւնը ուղղեն դեպի նոր կարգերի իդեոլոգիական հիմունքների պրոպագանդան: Օգոստոսի մտերիմ Մեկենասը իր շուրջն էր համախմբում պոետներին և ջանում էր նրանց հետաքրքրութիւնը հարկավոր ուղղութեան դարձնել: Այդ առումով նա որոշ հաջողութիւնների հասավ, թեպետ իմպերատորի որոշ ցանկութիւնները այնուամենայնիվ անկատար մնացին. այսպես, հռչակավոր պոետներից ոչ մեկը չհամաձայնվեց ստեղծել այնպիսի մի էպոս, որի մեջ փառաբանվեին Օգոստոսի «գործերը»: Մեկնասի խմբակը հոմոմեական պոեզիայի մեջ նոր շարժման կենտրոնն էր. նրան էին պատկանում դարաշրջանի ամենահռչակավոր պոետները՝ Վերգիլիուսը և Հորացիուսը: Դեպի նոր քաղաքական կարգերը ավելի անկախ վերաբերմունք մենք գտնում ենք այլ գրական խմբակներում: Դրանցից մեկը խմբավորված էր հռոջակավոր գորավար և հոետոր Մեսալայի շուրջը, մյուսը՝ Անտո-

նիտսին մտա պետական դործիչ, հետտը և պատմության Ասիական  
Պոլլիտնի շուրջը:

Հետաքրքրութիւնը դեպի գրականութիւնն արտակարգաբն-  
աճեց: Կայսրութիւնն, ըստ Վերգիլիուսի արտահայտութեան, «պա-  
րապութիւն ստեղծեց», և գրականութիւնը, մասնավորապէս պոե-  
զիան, սիրված գրադմունքներից մեկը դարձավ՝ ահաբիւք բազա-  
կան գործունեութեանից հետոյ վաճ հոռոմեական արիւտակրա-  
տիայի համար: Հորացիուսը մոտավորապէս մեր թ. ա. 15 թվին  
կարող էր կառակի ենթարկել պոետիկական դիւլետանտիզմը՝  
«մենք բոլորս՝ գիտնական և ոչ գիտնական մեջընդմեջ, ստանա-  
վորներ ենք դրում»: Պոեզիան, որին համեմատաբար տակաւին ոչ  
այնքան վաղուց վերելից էին նայում, այժմ փառաբանվում է, որ-  
պէս կուլտուրայի կրող, որպէս փառքի աղբյուր, պոետի օւ նրա  
հայրենիքի համար և անմահութեան աղբյուր նրանց համար, ում  
նա երգում է: Նույնիսկ, շնայած մեր շատ սուղ տեղեկութիւննե-  
րին նվազ նշանակութիւն ունեցող հեղինակների մասին, կարելի  
է Օգոստոսի ժամանակվա 50 պոետներից ոչ պակաս անվանել  
չխտակալ արդեն այն մասին, որ գրականութեան բոլոր հովանա-  
վորները, սկսած իմպերատորից, իրենց պարտքն էին հա-  
մարում մարդկել պոետիկական արվեստի մեջ: Երկրորդական  
պոետներից մեկը հայտնի էր նրանով, որ «առանձին հաճույքով  
իր երկերի մեջ մտցնում էր արեգակի ծագման և նրա մայրամու-  
տի նկարագրութիւններ»: Հանդես են գալիս և բանաստեղծուհի-  
ներ: Այսպիսի քանակութեամբ հեղինակների գոյութեան պայման-  
ներում զարմանալի չէ, որ անտիկ պոեզիայում բոլոր հայտնի  
ժանրերը ներկայացված են այս քննվող շրջանի հոռոմեական գրա-  
կանութեան մեջ: Աշխուժ գրական շփումը կազմակերպական նոր-  
ձև ստացավ «տեցիտացիաներում»՝ դեռ Հրատարակված երկերի  
հասարակական ընթերցանութիւններում: Ռեցիտացիաների նա-  
խաձեռնողը վերոհիշյալ Ասինիուս Պոլլիտնն էր: Այդ կապակցու-  
թեամբ սուր հետաքրքրութիւնը զարթեց դեպի գրական քննադա-  
տութեան հարցերը: Մանր պոետների հսկայական մեծամասնու-  
թիւնը մոտացվեց արդեն մոտակա սերունդների կողմից: Առաջա-  
տար դեմքերն շուտով ձանաչվեցին որպէս հոռոմեական պոեզիայի  
կրակներ և նրանց ստեղծագործութիւնը մեղ է հասել շատ ակե-  
լի մեծ լիակատարութեամբ, քան այդ տեղի ունի սեպուրիկական  
ժամանակի հեղինակների վերաբերմամբ:

Պակաս հետաքրքրութիւն չէր շարժում պերնախոսութեանը:

քայց խոսքի արվեստի այդ ճշուղի համար, որն այնքան նշանակալի դեր էր խաղում նախընթաց ժամանակաշրջանում, նոր կորգերը քիչ էին նպաստավոր: Կայսրության հաստատումով քաղաքական ճառը կորցրեց իր նշանակությունը, իսկ դատական պերճախոսության հնարավորություններն այնքան սեղմվեցին, որ հետոորները հազվադեպ էին հրապարակում դատարանում արտասանած ճառերը: Ինչպես և հելլենիստական Հունաստանում, հռոմեական պերճախոսությունն ընդունում է ճարտասանական ղեկկամացիայի, այսինքն ֆիլիտիվ, կյանքից հեռու թեմայով ճառի թնույթ:

Պոեզիայում դերիշխող կլասիցիզմին հակառակ՝ ճարտասանական պրոզան զարգացնում էր նյարդային, աֆեկտավորացրած ուճ. Յիցերոնի սահուն պարբերությունը փոխարինվում էր կարճ, ճշգրիտ ֆրազների առագ, հուզված հերթադաշտայնությամբ. առանձնապես զնահատվում էր արտահայտությունների սրությունը և էֆեկտավոր սեղմությունը (այսպես կոչված «սենտենցներ»):

Գոյություն ունեին երկու տեսակ ղեկկամացիաներ: Դրանք, նախ և առաջ, կոնտրովերսիաներն էին, իմպրովիզացված դատական ճառերը. հորինված կազտաներ էին շեղած, գրեթե «վիպական» դեպքերի համակցումներով, «տիրաններով» և «ծովահեններով», ընտանեկան դժտություններով և աղշիկներ հափշտակողներով. դրանք հիմք էին ծառայում իրավական կամ բարոյական նորմաների միջև, զգացմունքի և պարտականության, ձեռնարկ իրավունքի և իրավագիտակցության միջև հորինված կոնֆլիկտանց զարգացնելու համար: Մյուս տեսակը՝ սվաստրիաներն էին, այն մտաբանները, որոնք զրվում էին պատմական կամ (ավելի հազվադեպ) դիցաբանական դեմքերի բերանը որևէ սուր սիտուացիայում: Գեկկամացիաները կարծես թե ողբերգության մենախոսություններ կամ «խոսքի մրցումներ» էին՝ անջատված գրամատիկական գործողությունից և սովորաբար դիցաբանական ոլորտից հանձնարողային բնագավառը փոխադրված, բայց հեռու առօրյա կենսադի հարաբերություններից: Թեմաներն անցնում էին սերնդե սերունդ, հույներին՝ հռոմեացիներին: Հարկ չէր լինում ոչ սյուժեի սերունդ, հույներին՝ հռոմեացիներին: Մեծված թեման նորություն, ոչ մտքերի բովանդակալիցություն: Մեծված թեման բարահատուկ կերպով լուսաբանելու կարողություն, խոսքի փայլ, հետադարձական կատարման արվեստ — սրանք էին այն պահանջները, որոնք առաջադրվում էին ղեկկամատորին: Հռոմեական ղեկկամատորական արվեստի հետ մեր ծանոթությունը հիմնված է

Սենեկա Ավագի (հայտնի փիլիսոփայի հոր) ժողովածուի վրա՝ Արտակարգ հիշողութիւն ունենալով, այդ դեկլամացիաների սիրահարը իր ծերութեան տարիներում վերարտադրել է Օդոստոսի ժամանակի տարբեր հոետորների և ճարտասանութեան դասաւուների բազմաթիւ թեմաների մեկնաբանումները:

Կլասիկ ուղղութիւնը, որը հոտմեական գրականութեանը ավելի բարձր աստիճանի հասցրեց, ստեղծել էին այն գրողները: որոնք կրել էին ռեսպուբլիկայի կործանումը և դեպի նոր կարգերն ունեցած իրենց վերաբերմունքի մեջ մտցրել էին տառապանքով ձևոք բերած աշխարհայացքի եռանդն ու համոզվածութիւնը: Կայսրութեան պայմաններում աճած հաջորդ գրական սերունդը աչքի էր ընկնում դեպի շրջապատող աշխարհն ունեցած իր ավելի մակերեսային, «սպառողական» վերաբերմունքով: Գեկլամացիաներով հրապուրվելը՝ սկսվող անկման, կյանքի բովանդակութեան աստիճանի իջեցման սիմտոմն էր: Քննվող ժամանակաշրջանի երկրորդ կեսին ճարտասանա-դեկլամացիոն ոճը թափանցում է և պոեզիան, գրանով նախանշելով հոտմեական գրականութեան հետագա ուղիները կայսրութեան դարաշրջանում:

## 2. ՎԵՐԳԻԼԻՈՒՍ

Նեոտերիկներից դեպի «կլասիկ» ոճը գրական շրջադարձը լիակատար պարզորոշութեամբ գրսեւորվում է այն գրողի ստեղծագործութեան մեջ, որն ավելի շատ, քան որևէ մեկ ուրիշը, կարող է ծագող կայսրութեան իդեոլոգիական գրողակազմը համարվել: Այդ՝ Պուրլիուս Վերգիլիուս\* Մարոնն է, որը իմպերատորական Հոտմի ամենահռչակված պոետն է:

Վերգիլիուսի կյանքը տակաւին անտիկ շրջանում առասպելի նյութ էր դարձել: Դրա հետ միասին, հին կենսագիրները կենսագրական մի շարք ճշգրիտ տեղեկութեաններ ունեին, որոնք սկիզբ էին առնում Վերգիլիուսի ժամանակակիցներից, մասնաւորապէս նրա բարեկամ՝ էպիկական և ողբերգու պոետ Վարդիուսից: Համաձայն անտիկ կենսագիրների հաղորդման, Վերգիլիուսը եղել է հյուսիսային Իտալիայի ազատ բնակչութեան ստորին խաւերից: Նրա հայրը, լինելով անցյալում հայտնի շէ արհեստավոր թե օրա-

\* Վերգիլիուսն ձեր, որ ծագել է ուշ անտիկ ժամանակ և տարածվել է Միջին դարերում, ճիշտ չէ:

վարձու, կարողանում է իր գույքային դրուձյունը բարելավել և հողաբաժին է ձեռք բերում Մանտուա քաղաքի մոտերքը: Այստեղ էլ ծնվում է Վերգիլիուսը (70 թվի հոկտեմբերի 15-ին): Սկզբնական ուսումը նա ստանում է հարեան Կրեմոնոս, այնուհետև Մեդիոլանում (Միլանում)՝ հյուսիսային Իտալիայի կուլտուրական կենտրոնում, իսկ 50-ական թվականների վերջին տեղափոխվում է Հռոմ ճարտասանության և գիտությունների մեջ կատարելագործվելու: Փաստաբանական կարիերան, որի համար սովորաբար պատրաստվում էին ճարտասանական դպրոցի սաները, ձախողվեց: Վերգիլիուսը հռետորական ընդունակություններ չունեց և միայն մի անգամ է հանդես եկել դատավորների առաջ: Ինչպես հաղորդում է ժամանակակիցներից մեկը, պոետը խոսում էր դանդաղորեն և խոսքի եղանակով «գրեթե նման էր անգիտակ մարդու»: Դրա հետ մեկտեղ նա աչքի էր ընկնում արտակարգ ամոթխածությամբ և ավելի ուշ տարիներում, լինելով արդեն հրշակավոր պոետ, շփոթության մեջ էր ընկնում, երբ նա երևալով որևէ հանրային վայրում հետաքրքրվող բազմության ուշադրություն էր գրավում: «Բարձր հասակով, թխադեմ, շինականի կերպարանքով, թույլ առողջությամբ» — այսպես է նկարագրում Վերգիլիուսին անտիկ կենսագիրը (Պոնատը):

Վերգիլիուսի երիտասարդ տարիներն անցնում էին դադափարական երկակի ազդեցության տակ: Մի կողմից, նրան հրապուրում էր նեոտերիկական պոեզիան, և նա «նոր» ոճով լիրիկական բանաստեղծություններ էր հորինում: Դրանց շարքում մենք զբոսնում ենք լիրիկական զեղումներ, մտորումներ, ծիծաղաշարժ ոտանավորներ, խիստ հարձակումներ առանձին անձանց վրա: Վերգիլիուսը փորձում է մոտենալ Կատոլլուսի ոճին, մեջբերումներ է անում և փոփոխում է նրա ոտանավորները: Այդ պատահեկան ոտանավորները հրապարակվեցին արդեն պոետի մահվանից հետո և կազմեցին «Մանր բանաստեղծությունների» (Catalerton) մի փոփոքրիկ ժողովածու:

Երիտասարդ Վերգիլիուսի պոետիկական հետաքրքրությունների մասին մեր տեղեկությունները նշանակալիորեն ավելի լիակատար կլինեին, եթե միայն իսկապես նա լիներ «Մոծակ» և «Կիրխ» (ծովի թռչուն) «գիտական» էպիլիանների հեղինակ, որոնք հետագայում վերագրվում են նրան: Այդ երկու պոեմների իսկականությունը, սակայն, չափազանց կասկածելի է: Նույնիսկ շատ հնարավոր է, որ «Մոծակը» գիտակցաբար արված ֆալսիֆի-

էպոսիա է և հրապարակված է որպէս հռչակալոր հեղինակի պատանեկական երկ: Ուշ անտիկ ժամանակներում այդպիսի կեղծ վերգիլիուական բանաստեղծութիւնների քանակն է՛լ ավելի աճեց: Միւսինիսկ Catalepton ժողովածուում բոլորը չէ, որ անվիճելիորեն կարելի է վերդիլիուսինը համարել:

Մյուս ազգեցութիւնը էլնում էր այդ տարիներին լայնորեն տարածված էպիկուրյան դպրոցից: Այդ ազգեցութիւնը վերդիլիուսին դրոց հրաժեշտ տալ ճարտասանութիւնը և, բառ իր սեփական խոսքերի, «առադաստն ուղղել երանութիւնս նախահանգիստը, սլանալով դեպի մեծ Սիրոնոսի իմաստուն խոսքերը»: Հույս տածելով «կյանքն ազատագրել բոլոր նրան ծանրաբեռնող հոգսերից», նա պատրաստ էր դոհաբերելու նույնիսկ դեպի պոեզիան ունեցած իր հեռաբրբրութիւնը: Սիրոնոսի և Ֆիլոդեմոսի այդ նույն դպրոցն անցել է արդեն հիշատակված բանաստեղծ վարիուսը, որի հետ վերդիլիուսը սերտ «էպիկուրյան» բարեկամութիւն է հաստատում, այնուհետև, թերևս, Հորացիուսը, այսինքն՝ ապագա Օգոստոսյան կլասիցիզմի ամենաականավոր ներկայացուցիչները: Ռեսպուբլիկայի վերջնական կործանման փոթորկալից տարիներին երիտասարդ պոետները ձգտում էին ամբողջական և ավարտված աշխարհայացքի, հաղթահարելով նեոսերիկներին սուրբկալիվիզմն ու ֆորմալիզմը: Մասնավոր կյանքին անցնելու և քշով բավարարվելու էպիկուրյան քարոզը խոր հետք թողեց վերդիլիուսի ամբողջ հետագա ստեղծագործութիւն վրա: Նրան ավելի քիչ շոշափեց էպիկուրիզմի յուսավորական կողմը, բայց այնուամենայնիվ Լուկրեցիուսը՝ Կատուլլուսին զուգընթաց՝ նրա համար երկրորդ պոետիկական ուսուցիչ դարձավ:

«Գիտական» և զգացողական ալիքսանդրիականութիւնս և բնութիւնս դրկում հանդարտ կյանքի իղեալի զուգակցմամբ ստեղծվեց վերդիլիուսի առաջին նշանակալից երկը, նրա «Բուկոլիկաներ» ժողովածուն (մտտավորապէս 42—39 թ. թ.): Ինչպէս ցույց է տալիս հենց վերնագիրը, հոմեական պոետը վերարտադրում է Թեոկրիտոսի հովվական իդիլիաների ժանրը: Թեոկրիտոսի երկերի ժողովածուն, հրապարակված I դ., պարունակում էր տասը զուտ «բուկոլիկ» երկ և նույն քանակով բանաստեղծութիւններից էլ, այսպէս կոչված «էկլոգաներ»-ից\*, կազմված է վերդիլիուսի

\* Եկոգա — «չոկում», հատընտիր, այսինքն՝ աւանդին հրապարակված ու մեծ երկ (կամ երկի մաս):

ժողովածուն Լոռուի հայկական դրականության մեջ մտցնելով այնտեղ  
չներկայացված (զոնե սիստեմատիկորեն չներկայացված) բուլղո-  
յիկական ժանրը, Վերգիլիուսը դեռ հետևում է նեոտերիկների  
պոետիկական գծին, դեպի հելլենիստական պոեզիան կողմնորոշ-  
վելուն, բայց նրա վերաբերմունքը հովվական թեմատիկային  
դպարիորեն տարբերվում է Թեոկրիտոսի դրուլլներից: Օգտագոր-  
ծելով հովվական դիմապատկեր սիրային տառապանքի պոեզիայի հա-  
մար, Թեոկրիտոսը հովվին պատկերում էր հեղնանքի որոշ նրբե-  
քանգով, իր սանդձած տիպարի պրիմիտիվության հանդեպ հեղի-  
նակի կուլտուրական գերազանցության ընդգծումով: Վերգիլիուսը  
չունի հեղինակի և պերսոնաժի միջև այդ տարածության հեռավո-  
րությունը: «Բուկոլիկաները», որ հորինվել էին քաղաքացիական  
պատերազմի սուր մոմենտներից մեկում, արտահայտում էին փա-  
խուստը իրականությունից՝ «արկադիացիների», սիրուն և պոե-  
զիային անձնատուր եղածների, իզեալական աշխարհը: Այդ աշ-  
խարհը գերծ է այն արատներից, որոնց համար ռեսպուբլիկայի  
վերջի բարոյախոսները կշտամբում էին Լոռուի հասարակությանը,  
զերծ է հարստության և իշխանության ձգտումից, բայց նա  
ազատ է նաև քաղաքացիական պարտականություններից: Հեռու  
էինելով պոլիսային կապերից, «հովվիները»՝ մարմնացնում են  
մասնավոր կյանքի իզեալը և շատ շուտով — արդեն «Բուկոլիկա-  
ները» գրելու պրոցեսում — Օկտավիանոսի հավատարիմ կողմնա-  
կիցներն են դառնում, արտացոլելով պոլիսային մարդու անցումը  
կայսրության ժամանակի մարդուն: Վերգիլիուսն այդ աշխարհին  
վերաբերվում է լիակատար համակրությամբ, և պերսոնաժների  
պոետից բաժանող սահմանագծերը ջնջվում են: «Հովվիները» քաջ  
իրազեկ են Լոռուի գրական վեճերին, բարեկամությամբ կապված  
են նորագույն ուղղության պոետների հետ և արհամարհանքով են  
վերաբերվում գրական հնադավաններին: Դրան համոպատասխան-  
էլ հովվական կյանքի կենցաղային նյութը հոռոմեական պոե-  
տի համար ավելի քիչ դեր է խաղում, քան Թեոկրիտոսի հա-  
մար, և մատուցված է մեծապես ոչ պարզորոշ կերպով: Վերգի-  
լիուսը հոգ չի տանում սիտոսագիայի պարզության կամ կայու-  
ղիության մասին. գրեթե յուրաքանչյուր էլլոգալում կարելի է  
նույնիսկ գտնել թերասացություններ և հակասություններ: Պայ-  
ծական բերել թերասացություններ և հակասություններ: Պայ-  
ծականների իրական շինելը շեղում է աշխարհագրական շփոթու-

\* «Հովվիներ» այստեղ նշանակում է «Բուկոլիկայի» կողմնակիցներ: Մ. Թ.

Ֆյունով. «արկադիացիները» դուրս է գալիս, որ գտնվում են հյուսիսիտալիկական Մինչիոյի ափերին, և շատ դժվար է լինում տարբերել՝ որտեղ է վերջանում բուլղարիկական պոեզիայի տրագիցիոն Սիցիլիան ու Արկադիան և որտեղ է սկսվում Վերգիլիուսի համար հարազատ հյուսիսիտալիկական պեյզաժը: Պեճան ավելի մեծ արժեք է տալիս տրամադրություն միասնությանը, քան կենցաղի մանրամասնություններին: Առաջին պլանի վրա է մղվում բուլղարիկ երգի հուզա-պաթետիկական կողմը, ներքին ապրումի լարվածությունը: Տրամադրության ֆիքսումը չի պահանջում թեմայի ավարտված մշակում. 9-րդ էկլոգայում հատվածներ են մեջ բերվում «անավարտ» կամ «մոռացված» բանաստեղծություններից — այդ ուշադրավ փորձ է պոետիկական ֆրագմենտ մտցնելու, որն արտասովոր էր անտիկ ժամանակի համար: Վերգիլիուսի հովիվները միանդամաչն պայմանական ղեմքեր են՝ ցանկացած թեմայով նրբին և զգայուն ոտանավորներ արտասանելու համար, և իրականությունը կարող է ամենատարօրինակ դուրակ-ցույցությունների մեջ մտնել բուլղարիկական աշխարհի հետ:

Իրը և տիպիկ «գիտնական» պոետ, Վերգիլիուսն ամենալայն շափերով օգտվում է իր նախորդների պոետիկական նյութից: Որոշ էկլոգաներ՝ Թեոկրիտոսից և հելլենիստական մյուս հեղինակներից փոխ առնված քաղվածքներ, մոտիվներ, կերպարներ, առանձին արտահայտությունների գրեթե մոզաիկներ են: Սովորաբար նա պահպանում է հովվական մենախոսության կամ դիալոգի տրագիցիոն շրջանակը՝ ամենից հաճախ երգելու մրցումը, որի ժամանակ մրցակիցները կամ մեծ ոտանավորներ են արտասանում, կամ իրար երկատողեր ու քառյակներ են ուղղում: Այս ամբողջ հեռուն գնացող կախման հետ միասին, Վերգիլիուսն ըստ լիրիկական տրամադրության ինչ-որ նոր բան է ստեղծում: Ամենավաղ էկլոգներից մեկը և մեկն էլ ամենաուշից (2-րդ և 8-րդ) պատկերում են սիրահարված հովիվի տառապանքը: Շատ բան գրեթե բառացիորեն թարգմանված է Թեոկրիտոսի «Կիկլոպից» և մյուս իդիլիաներից, բայց, փոխ առնելով, Վերգիլիուսը հաճախ բնորոշ, փոփոխում և նյութը դասավորում է ըստ իրեն: Թեոկրիտոսի համար բնորոշ սիրո տառապանքի հեգնաբար մատուցումը փոխարինված է ապրումների լարված հուշով, զգացմունքների բարդ գեղգեղանքով, և սիրային ղեղումը փոխանցվում է ողբերգական պաֆոսի տոների: Ստացվում են լիրիկական մոնոդրամաներ «երիզային» կամպոզիցիայով: Թեոկրիտոսի համեմա-

տությամբ՝ ներքին զգացմունքի բարձր լարվածությունը, մյուս կողմից, դուրս է գալիս նեոտերիկների մերկ սուբեկտիվիզմի սահմաններին: Կատուլուաի համար արտաքին իրականությունն անհետացել է, Վերգիլիուսը նորից ձեռք է բերում այն, և ամենից առաջ բնությունն զգալու մեջ. պեղաժն ու արամադրությունը նրա համար մի ամբողջություն են կազմում: Բուկոլիկական աշխարհում Վերգիլիուսը կյանքի հաստատումն է որոնում և համապատասխանորեն լրացնում և վերամշակում է Թեոկրիտոսի թեմատիկան: Չբաժանած սիրո մասին վշտալի մենախոսությունը, բուկոլիկ մրցման կարգով հետևում է երջանիկ սիրո մասին երգը, որը վերամշակում է Թեոկրիտոսյան Սիմեփեի կախարդանքի, բայց այս անգամ բարեհաջող վերջավորություն (8-րդ էկլոգա). Դավնիսի կործանման համար ողբը փոխարինվում է ցնծություն: նրա աստվածացման առթիվ:

Սակայն պայմանական հովվական կյանքի մեջ մուտք է գործում ահտուալ պատմական իրականությունը: Դրա համար առաջին խթանողը եղավ կենսագրական կարգի փաստը: Երբ մոտավորապես 41 թվին Վերգիլիուսի փոքրիկ կալվածքը բռնագրավվեց Օկտավիանոսի զինվորների օգտին, պոետն ազդեցիկ գրական բարեկամների միջոցով հասավ իր իրավունքների վերականգմանը: Ժողովածուն հրատարակելիս առաջին տեղը զբաղեցրեց հիլոգայում ձեր հովվի փառաբանում է այն «աստվածային պատանուն», որը համընդհանուր խառնակության ժամանակ հողաբաժինը վերադարձնում է իրեն: «Փաղաքացիների գժտության» հանդեպ տածած դառնությունն ու զգվանքը թելադրում են այդ էկլոգայի երկրորդ հովվի կերպարը՝ նա վտարվում է իր հարազատ վայրերից: Ժամանակակից քաղաքական թեմատիկան, այսպիսով, մտնում է Վերգիլիուսի գեղարվեստական տեսադաշտը, շնախտելով տակավին բուկոլիկ կոլորիտը:

Այդ ուղղությունը հաջորդ քաջը մենք գտնում ենք հուշակավոր շորթորդ էկլոգայում: Այն ուղղված է Ասինիուս Պոլիոնին, 40 թվի կոնսուլին, Վերգիլիուսի հովանավորողներից մեկին և նրան բուկոլիկական պոեզիայի զբաղմունքների մեջ սգեշնչողին: Հեղինակը կոչ է անում հովվական Մուսային «երգել ամբելի կարևոր առարկաների մասին» և պատգամախոսի մշտնջապատ հանդիսավոր ոճով նախագուշակում է նոր դարագլխի գալուստը, այդ գիսավոր ոճով նախագուշակում է նոր դարագլխի գալուստը, այդ գիսաված է առաջիկա ընթացիկ 40 թվին ինչ որ մասնական ծնվելու հետ, դա լինելու է աշխարհի արագա տիրակալը, որը նկարա-

գրված է միաժամանակ մարդկային և աստվածային դժերով և իր հետ բերում է երկաթե դարի վերջը և ոսկե դարի սկիզբը: Այդ էկզոթան գրավում էր Վերգիլիուսի մեկնաբանների լարված ուշադրությունը թե հին և թե Նոր ժամանակ, և առաջացրել է հսկայական գրականություն: Անտիկ շրջանում արդեն նշմարվել էին մեկնաբանության երկու հիմնական գծեր՝ պատմական և դիցաբանական. այդ երկու տեսակետներն էլ մինչև այժմ շարունակում են իրենց կողմնակիցներն ունենալ: Առաջին մեկնաբանությունը Վերգիլիուսի բանաստեղծությունը հարմարեցնում է սպասվող մանկան ծննդյանը՝ այդ ժամանակվա հոռոմեական նշանավոր ընտանիքներից որևէ մեկում: Այդ ընտանիքի ավելի ճշգրիտ որոշման հարցում պատմական հայացքի կողմնակիցները տարակարծիք են և անվանում են տարբեր անուններ — Օկտավիանոսի, Անտոնիոսի, վերջապես էկլոգայի հասցեատիրոջ Ասինիուս Պոլլոնի, որի որդին հետագայում հանդես էր գալիս հավաստիացումով, որ բանաստեղծությունը գրված է իրեն պատվին: Երկրորդ ուղղության տեսակետից, չորրորդ էկլոգան պարունակում է իրերի նոր կարգի փառաբանումը՝ դիցաբանական մարգարեացման ձևով մարդ-աստծու ծնվելու մասին, որի հետ է կապված աշխարհի նորոգվելը. «մանուկն» իրական էակ չէ, և ոչ նրա, ոչ էլ նրա ծնողների համար հարկ չկա որոնել պատմական անուն: Այս վերջին հայացքի համար բերվում են բազմաթիվ նպաստավոր պատճառաբանություններ, բայց փիճելի հարցը դեռ չի կարող վերջնականապես լուծված համարվել: Հին քրիստոնյաները կարծում էին, որ էկլոգայում նախագուշակված է Քրիստոսի հանդես գալը, և եկեղեցին հարգանքով էր վերարժեքում կուսակառուցական պոետին, որպես բարձրագույն իմաստություն ունեցողի: Այդ հին քրիստոնեական մեկնաբանության մեջ ճշմարտության այն մասնիկը կա, որ Վերգիլիուսը իրեն «գիտնական» պոետ օդոագործել է փրկիչ-աստվածների մասին այն նույն հելլենիստական պատկերացումները, որոնցից հետագայում ստեղծվեց քրիստոնեությունը: Այդ էկլոգան, հավանաբար, գրված է 40 թվի վերջին, երբ Օկտավիանոսի և Անտոնիոսի միջև կնքված խաղաղությունը կարճատև հույսեր ծնեց հանգիստ ժամանակների գալստյան վերաբերյալ:

Յուրակերպ են վիցերորդ և տասներորդ էկլոգաները: Վեցերորդ էկլոգան հասցեագրված է Վարուսին, որը Վերգիլիուսին ծանուցություն մատուցելով նրա կալվածքի գործում, նրանից փառաբանումն էր սպասում որևէ էպիկական պոեմում: Վերգիլուսը

ձևափոխելով Կալիմաքոսի՝ արտահայտությունը, իրենից հեռացնում է էսյուսը՝ «հարկ է որ հովիվը գեր ոչխարներ օժնենա, բայց երգի ափելի նիհար երգեր»։ Պոեմի փոխարեն Վարուհին նաձոնում է ասքը կապված և ազատված Սիլենոսի մասին, որը հովիվներին վարձատրում է երգով (այդ ասքը՝ անտառի դեկ մասին է — անախի գուգահեռն է «благодарный леший» ուստական հեթիաթի, և ունի պարզ կենսագրական ակնարկ)։ Ասքը շրջանակ է ծառայում էլփոփոխի կատալոգաձև ոձով մի ամբողջ սերիա «դիտական» սյուժեներ մուծելու, և դրա մեջ հյուսված է Վերգիլիոսի գրական բարեկամ Կոռնելիոս Գալլուսի՝ դիցաբանական էպիկաների և սիրային էլեգիաների հեղինակի, գովաբանությունը։ Այդ նույն Գալլուսը հանդես է գալիս տասներորդ, վերջին էլլոգայում։ Գալլուսի սիրային տանջանքները պատկերված են թեոկրիայան Գալիսի տառապանքների նման. նա հանդատություն է որոնում բուկոլիկական կյանքում, բայց չի գտնում՝

Ամեն ինչին Ամուրն է հաղթում, մենք էլ Ամուրին ենթարկվենք։

Բուկոլիկական ֆիկցիայի նյութի վրա Վերգիլիոսն ստեղծեց նոր տիպի լիրիկա. համաշմարհային գրականության համար այդ է «Բուկոլիկաների» նշանակությունը։ Անմիջականորեն հոմեական սյուժիայի համար, բացի այդ, Վերգիլիոսի ժողովածուն ուներ ձևական մեծ նշանակություն։ Թեոկրիոսի դպրոցում Վերգիլիոսն ալթարեց նեոտերիկների սկսած լատինական հեկղամետրի ուիթմա-շաբահյուսական բարենորոգությունը։ Հինավուրց հոմեական պոեզիայի երկարաշունչ և խճճված պարբերությունները փոխարինվեցին կարճ նախադասություններով, պարզ մասերի հողավորումով, առանց ծանրաբեռնելու երկրորդական նախադասությունները, երգաձայն՝ երաշտական կատարման համար նախատեսված ստանավորի հստակ ընթացքով։ Վերգիլիոսով լատիներեն ստանավորը նույն գեղարվեստական մակարդակին հասավ որի վրա գտնվում էր պրոզան սկսած Յիցերոնի ժամանակից։

«Բուկոլիկաները» Վերգիլիոսին առաջ քաշեցին հոմեական պոետների առաջին շարքը, իսկ նոր քաղաքական կարգերն ընդունելու պատրաստակամությունը նրան մոտեցրեց ղեկավար վերնելու նախապիս։ Շուտով «Բուկոլիկաների» լույս տեսնելուց հետո, նա, իր հին բարեկամ Վարիուսի հետ, ընկնում է Մեկենասի շրջանը, աշխինքն՝ Բուտրիայի տիրակալ Օկտավիանոսի ամենամերձավոր

շրջապատը: Օկտավիանոսին և Մեկենասին է հասցեագրված Վերգիլիուսի հաջորդ երկը՝ «Գեորգիկ» («Երկրագործության մասին») դիդակտիկ պոեմը: Պոեմը դրա վրա աշխատել է յոթը տարի և ավարտել է 29 թվին միայն, արդեն Ակցիուսի ճակատամարտից հետո:

Այդ թեման համապատասխանում էր Վերգիլիուսի անձնական հակումներին և դրա հետ միասին ակտուալ էր: Իտալիական մանր հողատիրության վերականգնման և քաղաքի պարազիտալին դեռնգվածների մի մասի զրկումը հողից, քաղաքական չեղոքայման նպատակով՝ հարցը մի անգամ չէ որ առաջացել էր Հռոմում, իսկ ավերիչ քաղաքացիական կոիվներից հետո առավել ևս օրվեց: Նոր իշխանությունն այդ հարցում նույնքան անկարող դուրս եկավ, որքան և նախորդը, բայց հարցը քննարկվում և հուզում էր մտքերը: «Գեորգիկը» կազմված է չորս գրքից. առաջինը նվիրված է հողագործությանը, երկրորդը՝ ծառաբուծությանը և մասնավորապես խաղողի կուլտուրային, երրորդը՝ անասնապահությանը, չորրորդը՝ մեղուներին: Այդ նյութի դասավորման սովորական այն սխեման է, որը կիրառվում էր անտիկ գյուղատնտեսական տրակտատներում, ճիշտ է, մի քանի բաժինների դանցառումով (թռչնաբուծություն, այգեգործություն և այլն): Վերգիլիուսը մանրազնին կերպով ծանոթացել է հարցի գրականության հետ և օգտվել է բազմազան աղբյուրներից: Նա բոլորովին էլ չի ձգտում առարկայի լիակատար կամ նույնիսկ սխտեմատիկ քննությանը: Պոեմը, հասկանալի է, որ նկատի չունի գործնական նպատակների համար դասագիրք ծառայելու: Ագրոնամիկայով հետաքրքրվող կարող էր դիմել համապատասխան գրականությանը, որը մոտավորապես 37 թ. հարըստացել էր Մարկուս Տերենտիուս Վառոնի «Գյուղատնտեսության մասին» տրակտատով: Վերգիլիուսի դիդակտիկ խնդիրը ոչ այնքան ագրոնամիական դիսցիպլինի շարադրումն էր, որքան երկրագործական աշխատանքի բարոյական արժեքի քարոզը, նրա ուրախությունների ցուցադրումը, գյուղատնտեսական գործունեության՝ որպես կյանքի սպեցիֆիկ ձևի՝ փառաբանումը: Այդ ձգտումը՝ շարադրել մասնազիտական առարկան կապված ավելի քան հանուր աշխարհայացքային հարցերի հետ՝ տարբերում է Վերգիլիուսի «Գեորգիկաները» հելլենիստական գրականության նույնանման երկերից, որոնց մեջ սովորաբար գերիշխում է գիտնական էմպիրիզմի դրույթը: Պոեմի հունական վերնագիրը (Geor-

gica) փոխ է առնված նիկանդրոս Կոլիփոնացուց, բայց Վերգի-  
լիոսան իր երկն. անվանում է «Ասկրեական երգ», որը նա երգում  
է «Հոռմեական քաղաքներում». «Ասկրեական երգ» — նշանակում  
է երկ Ասկրայացի Հեսիոդոսի ոճով: Հեսիոդոսն այն հին հունա-  
կան պոետն էր, որին ամենից հաճույքով էին վկայակոչում ալեք-  
սանդրիականները, և նախկին նեոտերիկ Վերգիլիուսի ուղին դեպի  
չայն թափի պոեզիան գնում է Հեսիոդոսի միջոցով:

Էկլոգաներում գլուղական կյանքն ընկալվում էր նրա ամօժ-  
հանդստի տեսակետից. «Գեորգիկաներում» նա երեսը դարձնում  
է աշխատանքի կողմը: «Համառ աշխատանքն ամեն ինչ հաղ-  
թեց», — հնչում է այժմ, առաջվա՝ «ամեն ինչ հաղթում է սերը»  
արտահայտության փոխարեն:

Հայրն՝ ինքը ցանկացավ՝

Ուղին երկրագործի հանգիստ շինի, նա առաջինը վարպետորեն  
Հողը մշակեց, հույսով մահկանացուների սրտերը հուպեց,  
Քնկոտ քարացած արքայությունը միանգամայն մերժեց:

Աշխատանքի դերի մատնանշելը՝ Վերգիլիուսին մոտեցնում է  
Հեսիոդոսին: Բայց, այն ժամանակ երբ «Աշխատանքներ ու օրերի»  
հեղինակը տալիս էր գլուղացիության դաժան կենցաղի և սոցիա-  
լական ծանր դրուժայն պատկերը, Վերգիլիուսը շինական կյանքը  
պարուրում է իդեալիստական ուտոպիայի շղարշով, պատկերելով  
այն, որպես «ոսկե դարի» պահպանված մնացորդ: Հոռմեական  
կայսրության պոետը նշանակալիորեն զիջում է հին հունական  
ոսպոստիկն՝ աշխարհի սոցիալական հարաբերությունները բաց  
ձակատով դիտել կարողանալու հարցում: Նա իրավացիորեն նշում  
է, որ Հոռմի հզորությունն աճել է ազատ գլուղացիության հիման  
վրա, բայց նրա տեսադաշտից դուրս են մնում լատիֆոնդիա-  
լները, հողագրկումը, գլուղատնտեսության մեջ ստրկական աշխա-  
տանքը: Շինականներն իրենք շփտեն, թե որքան երջանիկ է  
նրանց կյանքը՝

Ո՛հ, հույժ երանություն — եթե միայն գիտենային իրենց երջանկությունը  
Կյուլի բնակիչները:

Հանգիստ, աշխատանքային և ապոլիտիկ շինական կյանքի  
պոզիվերգումը, իտալիկական գլուղացիության պրիմիտիվ բարբերի

• Հայրը՝ Յուպիտերն է:

և հավատալիքների իդեալականացումը՝ էպիկուրականի այդ երազանքները՝ զոգվում են կայսրության քաղաքական և իգեոլոգիական խնդիրների հետ, և էպիկուրականը նահանջում է կրոնապահպանողական ռեստավրացիայի իգեոլոգի առաջ: Վերգիլիտով պատկերմամբ շինականն անգիտակցաբար նույն կենսական երանության է հասնում, որը էպիկուրական իմաստունը գտնում է գիտելիքների գազաթներում:

Երջանիկ են նրանք, ովքեր իրերի պատճառը լավ են ըմբռնում,  
Նրանք, ովքեր անտարբեր են աղոթքների հանդեպ,  
Սարսափ, թե օրհաս, թե ժլատ Աքերոնի ժխորը նույնպես  
Ս.ս. ոտս են սփռում:

Այսինքն՝ էպիկուրը և Լուկրեցիուսը, բայց նաև

Բարեբախտ են նրանք, ում որ ծանոթ են աստվածները գյուղի՝  
Պանն ու Սիլվանը ձերբով և նիմֆերը՝ բույրերը գեղանի:

«Գեորգիկաներով» Վերգիլիուսը փոխարինում է իր մտածած բայց անորոշ ապագային հետաձգված, բնության մասին փիլիսոփայական էպոսը: Այդ երբեք չիրագործված երազանքին ծնունդ էր տվել Լուկրեցիուսի պոեմը, որով հրապուրվելը նկատելի է և «Գեորգիկաներում»: Բնության անսահման կենարար և կործանարար ուժերի՝ Լուկրեցիուսից ժառանգած պաթոսին միանում է նարար ուժերի՝ Լուկրեցիուսից ժառանգած պատկերավորմամբ և շունչ է փչանազարդված է գեղանկարչական պատկերավորմամբ և շունչ է հաղորդված զրան տրամադրության բազմազան երանգներով, որոնց մեջ է խորասուզվում գյուղատնտեսական գործունեության պրոցեսը. առանձնապես հետաքրքրական է կենդանիների պատկերումը և նրանց պսիխիկալի մարդկայնացումը:

Թեմայի մեկնաբանությունից աճում են բազմաթիվ «շեղումներ». զրանց մեջ է կենտրոնացած «Գեորգիկաների» իդեոլոգիական կողմը: Երկրագործական կյանքի իդիլիկ նկարագրությունները քաղաքական ավարտումն են ստանում առատ գովերգներում, շոսյված Օկտավիանոսի հասցեին: Իտալիայի, նրա բնության, բնակչության և պատմական գործիչների փառաբանումը՝ պոեմը կազմելու տարիներին առանձնակի սկիտալոգիայամբ էր հնչում, քանի որ Օկտավիանոսն իր շուրջն էր համախմբում Իտալիայի ուժերը կայսրության արևելյան մասի հետ պայքարելու համար. քա-



տոնապէս ճանաչվել էր: Հոռմը նորոգված Տրոյա էր համարվում: Ականավոր տոհմերը ջանում էին իրենց տոհմաբանությունը հասցընել էնեստին և նրա ուղեկիցներին: 1 դարի հայտնի գիտնական Վարրոնը նույնիսկ տրակտատ գրեց «Տրոյական ընտանիքներէ մասին»: Մասնավորապէս Հուլիոսների տոհմն իրեն կապում էր էնեստի որդի Ասկանիոսի հետ. պնդում էին, որ Ասկանիոսի երկրորդ՝ Էլոս անունը այնուհետև փոխվել է Յուլոսի: Հուլիոսները դուրս էին գալիս Վենետրայի (այսինքն՝ Ափրոդիտեի, էնեստի մոր), սերունդներ, և Հուլիոս Կեսարը դեմ չէր պաշտօն գեպրում վկայակոչել իր աստվածային ծագումը: Մշակելով էնեստի մասին ապքը, Վերգիլիուսը պոեմ էր տեղծում ոչ միայն հռոմեական կայսրութեան սկիզբներէ մասին, այլև Օգոստոսի նախնիներէ մասին:

Վերգիլիուսն իր աշխատութեանն անցալ «Գեորգիկաներն» ավարտելուց անմիջապէս հետո: 26 թվին գրական շրջաններում արդեն հայտնի էր, որ նա աշխատում է էնեստի մասին մեծ պոեմի վրա և էպոս է պատրաստում հռոմեոսյան օրինակով: Խնդիրը հեշտ չէր: Վերանորոգելով դիցաբանական մեծ էպոսը, Վերգիլիուսն, — ըստ անտիկ հասկացողութեան, — «մըրցման» էր դուրս գալիս Հռոմեոսի հետ: Այդ նշանակում էր լիակատար խզում ալեքսանդրիական սկզբունքներից: Հռոմեական գրական տրագիցիան պատմական էպոսը տալիս էր էնիխոսի ոճով, բայց այդ ժանրն էլ վարկաբեկել էին նեոտերիկները: Հարկ էր այնպիսի պոեմ ստեղծել, որը կողմնորոշված լինելով դեպի հռոմեոսյան ոճը, բավարարեր իդեոլոգիական նոր պահանջներին և նեոտերիկական էպիլիանների ժանյակակերպ հղկմամբ երես առած նուրբ ճաշակին: Սպեյիֆիկ դժվարութեաններ էին առաջանում ավանդութեան նյութի կապակցութեամբ: Կենտրոնական հերոսը կործանվող հայրենիքը թողած փախստական էր: Այդ կերպարը նրբին մեկնաբանում էր պահանջում, որպեսզի բացասական վերաբերմունք շտառացնի ընթերցողի մեջ: Հոռմի տրոյական ծագման մասին ավանդութեանը ակտուալ-քաղաքական սրութեան ունեւ. այդ հանգամանքը մատնանշում էին կայսրութեան կենտրոնն Արևելք տեղափոխելու կողմնակիցները: Տակալին Հուլիոս Կեսարը մտածում էր այն մասին, որպեսզի վերականգնի Տրոյան և մայրաքաղաք դարձնի այն: «էնեսականը» առասպելի իր մեկնաբանութեամբ պետք է հակահարված տար այդ տենդենցներին: Վերջապէս, այն պահանջում էր զգալի «գիտական» պրպտումներ,

Յանոթացում՝ ծավալուն դիցարանական և պատմա-հնարանական նյութին:

Ըստ անտիկ կենսագրի հաղորդման, Վերգիլիուսը նախօրոք մտածել էր պոեմի նախնական պլանը և կազմել էր նրա արձակ բովանդակությունը, բաժանելով նյութը 12 գրքի: Այնուհետև նա ժշակում էր պլանից վերցրած առանձին էպիզոդները, հաճախ այս կամ այն մասերը թողնելով անավարտ մինչև ամբողջ երկի վերջնական խմբագրությունը: Մի քանի տարվա աշխատանքից հետո միայն նա հնարավոր համարեց Օգոստոսի մոտ կարգավ շատ թե քիչ ավարտված գրքերից մի քանիսը: Մեր թ. ա. 19 թվին «էնեականը» պատրաստ էր սևագրությամբ, և հեղինակը նախատեսում էր ևս երեք տարի նրա հղիման համար, այն հաշվով, որպեսզի իր կյանքի վերջը անցկացնի փիլիսոփայական զբաղմունքներով: Մահն ընդհատեց այդ պլանը: Վերագառնալով Հունաստանում կատարած ճանապարհորդությունից, Վերգիլիուսը հիվանդացավ և ծանր վիճակում բերվեց Բրոնդիզի (ժամանակակից Բրինդիզի), ուր և վախճանվեց 19 թվի սեպտեմբերի 21-ին: Մահվանից առաջ նա ցանկանում էր այլևս անավարտ պոեմը, քսկ կտակի մեջ կարգադրություն էր թողել, որպեսզի իր գրական ժառանգությունից այն, որ չի հրատարակել ինքն անձամբ, ոչինչ չհրատարակվի: Օգոստոսը հակառակվեց դրան և հանձնարարեց պոետի բարեկամներին հրատարակել «էնեականը»: Հետմահու հրատարակությունների անտիկ պրակտիկային համապատասխան, հրատարակիչները ձեռնպահ մնացին որևէ շափով նշանակալի խմբագրական միջամտությունից: Վերգիլիուսի շնորհված հեղգամեթրները անփոփոխ թողնվեցին: Մնացին նաև մի շարք անհարիրություններ, մեծ մասամբ շնչին և աննկատելի, բայց երբեմն և այնպիսիները, որոնք շոշափում են սյուժեն վարելու հիմնական գծերը:

«էնեականի» սյուժեն բաժանվում է երկու մասի. էնեասը թափառում է, այնուհետև պատերազմում է Իտալիայում: Այդ մասերից յուրաքանչյուրին Վերգիլիուսը հատկացնում է վեցական գիրք: Պոեմի առաջին կեսը թեմատիկորեն մոտենում է «Ոդիսսեականին», երկրորդը՝ «Իլիականին»:

«էնեականի» հիմնական կոնցեպցիան պարունակվում է ներածական տողերում: «Ըն երգում եմ կոբլին ու այն մարդուն, որը ... շատ է նետվել ծով ու ցամաքներ... և շատ բան է կրել պատերազմում»: Այս ձևակերպումից անտիկ ընթերցողն արդեն տեսնում

էր հեղինակի միտումը՝ միավորել հոմերոսյան զուգգ պոեմներէ՝ Քեմատիկան: Էնեսար «փախստական է օրհասի կամքով»: «Օրհասի» այս մատնանշումը ոչ միայն Տրոյայից Էնեսարի փախուստի համար արդարացումն է ծառայում, այլև նշում է պոեմի շարժիչ ուժը, այն ուժը, որը հասցնում է այն բանին, որ Էնեսար հիմնում է

Քաղաք և կացիոմ փոխադրեց աստվածներին, որտեղից տոհմը լատինների նմ հայրերն Ալբա-Լոնգայի և ամբողջունները բարձրաբերձ Հռոմի:

Ի տարբերություն հոմերոսյան էպոսի, որը լիովին խորասուզվում է անցյալը, Վերգիլիոսը առասպելը միշտ միահյուսում է արդիականության հետ, և Էնեսարի փորձությունները՝ օրհասի պատրաստած հոմեակական մեծության բազմանշանակալից սկիզբն է միայն:

Ողիսեակի տարաբախտությունները առաջացան Պոսիդոնի զայրույթից. Էնեսարի թափառումները պաշտանավորված են «էլուշրադ Յոնոնայի ոխակալ զայրույթով»: Տրոյացիների դեմ Յոնոնայի (հունական Հերայի) թշնամանքը՝ հոմերոսյան սրագիցիան է, բարդացված հոմեակական քաղաքական պատճառաբանությամբ՝ Յոնոնան Կարթագենի, հոմեակցիների դարավոր թշնամու, հովանավորն էր: «Էնեականի» առաջին մասի համար կոմպոզիցիոն օրինակ ծառայեց նույն «Ողիսականը»: Վիպասացությունն սկսվում է Էնեսարի վերջին թափառումներով, և նախընթաց ղեպերը սերված են որպես հերոսի պատմածն իր արկածների մասին:

Երբ Էնեսան իր նավատորմիդով արդեն մոտենում է Իտալիային, նավարկման վերջին նպատակին, զայրացած Յոնոնան մի սոսկալի փոթորիկ է ուղարկում: Նավերը ցրված են ծովուհ մեկ, և հոգնատանջ տրոյացիները կանգ են առնում անհայտ ափերին: Տխուր անկարողությամբ, բայց հալատով լի ղեպի ապագան և պատրաստակամությամբ կրկու ճակատագրի ամեն մի հարված՝ ընթերցողի առաջ ծառանում է պոեմի հերոսը: Հենց այստեղ էլ պատմիչն ընդհատվում է Օլիմպոսի վրա կատարվող մի տեսարանով. Յուպիտերը բաց է անում Վենեբային Էնեսարի և նրա սերունդների ապագա ճակատագիրը, ընդհուպ մինչև Օդոստոսի ժամանակները և նախագծում է հոմեական տերության հզորությունն ու մեծությունը: Հետագա պատմելու ընթացքում օլիմպիական պլանը շարունակում է հերթազապել աշխարհիկ պլանի հետ, և մարդկային մղումները զուգորդվում են աստվածային

Ներքնչումներով: Յունոնայի համառ թշնամանքին հակադրված է Վենեթայի, հերոսի մոր, սիրող հոգատարությունը: Բախտն սկսում է ժպտալ էնեասին և նրա ուղեկիցներին: Նրանք գտնվում են Վեթիայում, ոչ հեռու կառուցվող կարթագենից: Այդ հզոր քաղաքը հիմնել է մի եռանդուն կին՝ Դիգոնա թագուհին, որը փախել է Տյուրոսից այն բանից հետո, երբ նրա սիրելի ամուսին Սիսեկին Գլխապարծրեն սպանում է Դիգոնայի եղբայր Պիգմալիոնը: Նա շերմագին կարեկցում է Տրոյայի դժբախտություններին, սրոնց մասին լուրն արդեն թուել տարածվել է ամբողջ աշխարհում: Դիգոնայի կառուցած Յունոնայի տաճարը զարգարվում է Տրոյական պատերազմի պատմությունից վերցված վառ և սրտառուչ տեսարանների պատկերներով: Դիգոնան հյուրասիրաբար հյուրընկալում է տրոյացիներին

Օրհասն անողոր դժբախտություն բազում ձերին համանման ինձ էլ և շնորհ  
արել:

Ու երկաք, շատ երկար նա ինձ շրջեցրել, վերջապես այստեղ է հանգստություն  
տվել:

Ծո վիշտ ու տառապանք այնքան շատ եմ կրել, որ տառապանքներին  
աշխատում եմ օգնել:

Նրա վրա առանձնակի տպավորություն է թողնում էնեասի ճակատագիրը: Երեկոյան խնջույցի պահին, զրուցելով էնեասի հետ, նա «իր մեջ սեր է ներծծում» և խնդրում է, որպեսզի էնեասը հանդամանորեն պատմի իր տաքարախտությունների մասին: Դիգոնայի էնեասին տածած սիրո այս էքսպոզիցիայով վերջանում է առաջին գիրքը: Իր ընդհանուր կառուցվածքով այն վերջապետում է «Ոգիտականի» 5—8 գրքերի սխեման՝ Ոգիտակի նախադրումը, Պոսիդոնի բարձրացրած փոթորիկը, փեակների երկիրը ժամանելը, Ալկինոյոս թագավորի սրտաբաց ընդունելությունը, այդ երկրում արդեն Տրոյական պատերազմի մասին երգելը, և խնդրելը պատմել արկածների մասին: Մենք զանց ենք անում պատմելու շատ մանրամասնություններ, որոնք նույնպես հիշեցնում են Հոմերոսին, սակայն վերգիլիուան օգտվում է զույգ պոեմների ամենատարբեր մասերի նյութից. փոխ են անվում տեսարաններ, մոտիվներ, առանձին արտահայտություններ: Բայց վերգիլիուայը հոմերոսյան նյութը մշակում է նույն մեթոդով, որը նա կիրառում էր Թեոկրիտոսի վերաբերյալ իր «Բուկոլիկանեթում»: «Փոխառումներից» նոր ամբողջություն է ստեղծվում, ուժեղանալով, Հոմերոսի էպոսին օտար, լիբիզմի և գործողության

սուրեկտիվ պատճառաբանվածութեան մոմենտներով: Հին հունական էպոսի նյութերի և Վերգիլիուսի դրանց վերամշակումներէ՛ աչդպիսի հարաբերակցութիւնը բնորոշ է «Էնեականի» բոլոր մասերի համար և նրա բովանդակութեան հետագա վերապատմումների ժամանակ մենք արդեն դրա վրա կանգ չենք առնելու: Էնեասի պատմելը դրավում է երկրորդ և երրորդ գրքերը:

Երկրորդ գիրքը նվիրված է Տրոյայի անկմանը: Այդ թեման («Իլիոնի կործանումը») բազմիցս արծարծվել է հունական պոեզիայում, բայց հարկ կար, որ Վերգիլիուսը տրագիցիոն ասքէլուսաբաններ տրոյացու տեսակետից և դեպքերի մասին պատմեր որպես մեկ անձնավորութեան՝ Էնեասի, ապրումները, որին ընդամին, ավանդութիւնը դեպքերին նշանավոր մասնակցութիւն չէ վերագրում: Պատմելը պետք է ցնցի «Տրոյայի տոռապանջները» սոսկալի և սրտառուշ տեսաբաններով, հուշներից վերցնի նրանց հաղթական փառքի պսակը և արդարացնի պոեմի հերոսի անձնական վարքագիծը: Գիրքն սկսվում է պատմելով «փայտե ձիու» մասին. տրոյացիները շեն հաղթվել բաց ձակատամարտում, նրանք նողկալիորեն խաբվել են: Հուշն Սինոնի, որը թողնված էր ձիու մոտ, գործողութիւններում և խոսքերում մարմնացած է տմենանուրբ ստի, խարդալանքի, երդմնազանցութեան արվեստը: Մարդկանց չսված ուխտադրժութեանը միանում է աստվածների՝ անգթութիւնը. կռուտանս քուրմը ուղում էր կոշ անել «դանայացիներից վախենալու նուշնիակ այն պահին, երբ նրանք դո՛հ են մատուցում», բայց և կռուտոնտին իրեն և նրա երկու որդիներին խեղդում են Աթենասի ուղարկած ծովային օձերը: Այդ աստվածային պատժից հետո տրոյացիների մոտ թերահավատութիւն չէ մնում՝ տոնական ցնծութեամբ նրանք օրհասական ձին քաղաք են մտցնում, իսկ զիշերն արդեն հուշները Տրոյա են մտնում: Գիշերային կովի էպիզոդը պարուրված է ողբերգական պաթոսի մթնոլորտով: Էնեասն իր շուրջն է հավաքում մի փոքրիկ ջոկատ.

Պարուսներին մի փրկութիւն կա՛ շերագէլ փրկութեան մասին:

Բայց ջոկատը ոչնչացված է. ա՛հ արդեն սպանվեց ծերունի՛ Պրիամոս արքան՝ Աքիլեսի մոլեգնած որդու հետ անփառունակ մարտում: Աստվածների կրկնվող ցուցմունքները, վերջապես էնեասին ստիպում են թողնել կործանվող քաղաքը: Նա ուսին բարձրացրած դուրս է բերում իր հայր Անխիսին, որը պահում է

Տրոյայի պենատները (տնային աստվածները)։ Էնեասին միանում են բազմաթիվ ուղեկիցներ։

Երրորդ գիրքը Էնեասի թափառումներն է։ Տրադիցիան այստեղ տալիս էր մի շարք անկապ ավանդույթյուններ Էնեասի կայանների և նրա կառուցած քաղաքների ու սրբավայրերի մասին։ Վերգիլիուսը համառոտեց այդ նյութը և ջանաց զարդարել այն գեղարվեստական նկարագրություններով և սրտառու տեսարաններով, որոնք բոլոր ժամանակ հիշեցնում են Տրոյայի դժբախտությունների մասին։ Էնեասի նավարկությունը համարվում էր միաժամանակյա Ողիսևսի թափառումների հետ և մասամբ հարմարեցված էր հենց նույն վայրերին, բայց Վերգիլիուսը տրոյացիներին անցկացնելով Սկիլլայի և Խարիբդայի, կամ կիկլոնների կղզու մոտից, չի կրկնում հոմերոսյան արկածները։ Թափառումների մեջ միասնության մոմենտ մտցնում է նրանով, որ որևէ նշանակալի կայանում իմաստուն երազ կամ պատգամախոս հերոսին որևէ նոր բան է հաղորդում ճանապարհի վերջնանպատակի մասին։ Այդ առումով երրորդ գիրքը չի համաձայնեցված «Էնեականի» մյուս մասերի հետ, ուր Էնեասը հենց սկզբից ուղղվում է Իտալիա։ Իգեոլոգիական կոնցեպցիայի համար բնորոշ է, որ Իտալիան համարվում է ոչ թե օտար երկիր, այլ «հինավուրց մայր», տրոյացիների նախահայրենիքը, ուր այժմ նրանք վերադառնում են։ Էնեասն իր պատմելը հասցնում է մինչև Սիցիլիա ժամանելը, ուր մահանում է ծերունի Անխիսը։ Սիցիլիայից Իտալիա ուղևորվելիս, հերոսը ընկնում է այն փոթորկի մեջ, որով սկսվում է պոեմի պատմելը։

Չորրորդ գիրքը, երկրորդին զուգընթաց, «Էնեականի» ամենաուժեղ և պաթետիկ մասերից է։ Այդ Դիդոնայի և Էնեասի սիրո վեպն է։ Հոմերոսյան էպոսը նշում էր սիրո մասին, բայց այն չէր մշակում։ Սիրո ապրումների պաթետիկական մտցնելով հեռանկան մեծ պոեմի մեջ, Վերգիլիուսը հետևում է Ապոլոնիոս Ռոդոսացու պոեմին, ընդ որում, զգացմունքը նա փոխադրում է ավելի բարձր ոլորտը, խորացնում է վերլուծությունը և ստեղծում ավարտված էպիլիպսի ողբերգություն։

Հպարտ Դիդոնա թագուհին «հերոսական» մակարդակի դեմք է։ Նա սիրել է Էնեասին նրա տառապանքների համար, բայց նա կապված է հավատարմության խոստումով իր հանգուցյալ ամուսնու հետ և տանջվում է բորբոքվող սիրո գիտակցությունից։ Զգացմունքի և պարտականության միջև պայքարը, զգացմունքի հաղ-

Քանակը և սիրային խելահեղութիւնը՝ նրա ողբերգութեան առաջին արարվածն է: Վերջապես, մրրկի ժամանակ, որին որս անելիս հանդիպում են Դիդոնան և Էնեասը, նրանք ապաստարան են գտնում քարայրում.

Երկիրը և Յունոնան ամուսնութիւն ստեղծող  
Նշան են տալիս. վառվեցին ճրագները և դաշինքին այդ վկա էր  
Եթերը լեռան, և լեռնահարսերը բարձր ժայռերին հեծեծում էին, —

ամուսնական ջահերի և ուրախալի բացադանչութիւնների փոխարեն: Շուտով վրա է հասնում բեկումը՝ աստվածները Էնեասին հիշեցնում են ճակատագրի հատկացված պատգամը, և նա պատրաստվում է հեռանալ Կարթագենից: Սիրո ողբերգական հանգուցի լուծումը Վերգիլիուսը մշակել է առանձնակի մանրակրկտութեամբ. զարգացող գործողութեան յուրաքանչյուր նոր էտապի հետ աճում են Դիդոնայի հոգեկան տանջանքները: Պատմողական մասերը միայն պարզաբանող ներածութիւններ են ծառայում հերոսուհու խոսքերի, մենախոսութիւնների և մտորումների համար: Առաջին զարմանքն ու հանդիմանութիւնը փոխարինվում են վիրավորված արժանապատւութեան հպարտ դգացմունքով, արհամարհանքով և ատելութեամբ. արժանապատւութիւնը շուտով կոխճրտվում է՝ Դիդոնան խոնարհ աղերսանքներ է հղում ուղևորվելը հետաձգելու մասին: Սկսած երևակայութեան ուժով նրան հետապնդում է մահվան միտքը, բայց երբ նա տեսնում է ծովում արդեն ուղևորվող տրոյացիների նավերը, նրան վերջին անգամ համակում է վրիժառու կատաղութեան բռնկումը և Էնեասի ու նրա սերունդների հասցեին մուկգին անեծքներով նա նախագուշակում է ժողովուրդների անհաշու թշնամանքը և ապագա վրիժառուի (Հաննիբալի) ծնունդը: Այնուհետև նա բարձրանում է խարույկի վրա. Կարթագենի թագուհին և հիմնադիրը՝ իր գործունեութեան մեծութեան հանգիստ գիտակցութեամբ, սրախողող է անում իրեն այն սրով, որը մի ժամանակ իրեն էր նվիրել Էնեասը:

Հինգերորդ գիրքը մեզ վերադարձնում է դեպի «մրցումը» Հոմերոսի հետ: Էնեասը վերստին ափ իջնելով Սիցիլիայում, խաղեր է կազմակերպում ի պատիվ Անխիսի մահվան տարելիցի: Այդ զուգահեռ «Ելիականի» 23-րդ գրքի՝ Պատրոկլեսի թաղման խաղերի հետ միանգամայն ակտուալ էր Օդոսսոսի ժամանակվա Հոմ-

մում: Իմպերատորն անվանի երիտասարդութեան մեջ մրցախաղեր էր արձատարացնում, համարելով դրանք «հինավուրց գովելի սովորույթներ», — և Վերգիլիուսը հռոմեական հայտնի տոհմերի նախահայրերին դուրս է բերում իբրև էնեասի նշանակած մրցախաղերի մասնակիցներ:

Շատ հետաքրքրական է վեցերորդ գիրքը: Նավարկելով Իտալիայի ափերով, էնեասը կանգ է առնում Կոմ քաղաքի մոտ: Այստեղ էր գտնվում Ապոլոնի հռչակավոր պատգամախոսը, իսկ այդտեղից ոչ հեռու անտիկ հավատը տեղավորում էր սանդարամետի մուտքը: Գուշակուհի Սիվիլլան նախագուշակում է այն պայքարի մասին, որն էնեասին սպասվում է Լայիոնում, իսկ այնուհետև նրան ուղեկցում է մեռյալների թագավորութունն իր հոր՝ Անխիսի հետ տեսակցելու համար: Զուգահեռ ստեղծելով «Ռդիսականի» 11-րդ գրքին (մեռյալների թագավորութեան այցելութեանը), «գիտնական» պոետը հին դիցարանութեան կերպարները միավորում է ավելի ուշ ժամանակի կրոնական և փիլիսոփայական ուսմունքների հետ: Էնեասի սանդարամետ «իջնելը» իբրև մի օղակ մտնում է անդրշիրիմյան աշխարհի «գաղտնիքների» մասին ապոկալիպսիսների («հայտնութունների») լայնածավալ շարքը և գրական աղբյուրներից մեկը ծառայեց Գանտեի հռչակավոր պոեմի համար: Վերգիլիուսի պատկերման մեջ միաձուլվում են պատկերացումների երեք շրջան. հռոմերոսյան մեռյալների թագավորութեան սովերների մասին, այնուհետև անդրշիրիմյան դատի մասին՝ Տարտարոսի («դժոխքի») հավիտենական շարձարաններով ոճրագործների համար և Ելիսեի («դրախտի») հավիտենական երանութուններով, և վերջապես՝ մահվանից հետո հոգիների «քավութեան» և նրանց նոր «մարմնացման» մասին: Այդ հնարավորութունն է տալիս ծավալելու տեսարանների մեծ բազմապիսիւթյան, գունավորված ամենատարբեր լիրիկական երանգներով և հազեցված ակտուալ իդեոլոգիական բովանդակությամբ: Գիրքն ավարտվում է լայնածավալ «հոգիների դիտումով». Անխիսը էնեասին ցույց է տալիս Հռոմի ապագա գործիչներին, այն ռազմական և քաղաքացիական փառքի կրողներին, որի մեջ հռոմեացիները տեսնում էին իրենց գերազանցութունը Հունաստանի ինգելեկտալ և դեղարվեստորեն ավելի բարձր կուլտուրայից:

Ավելի նուրբ ուրիշներն\* աշխույժ պղինձ կկուեն,  
Հավատում եմ՝ մարմարից կենդանի դեմքեր կկերտեն,  
Դատարաններում շատ ավելի պերճորեն կխոսեն,  
Երկնքի շարժումը նրանք հեշտութեամբ կորոշեն  
Լուսատուները ծնողոզ միշտ նախապես կգուշակեն.

Իսկ դո՛ւ, հոռմեացի,

Հիշիր, որ իշխանաբար ազգեր պետք է կառավարես,  
Արդ՝ այս է արվեստը քո — տապալվածներին խնայել,  
Գոռզներին տապալել և դնել պայման հաշտութեան:

Վերջում Անխիսը էնեասին և Սիվիլլային դուրս է թողնում՝  
«կեղծ անուրջների» դարպասներից. հեքիաթի թագավորությունը  
վերջացավ: «էնեականի» ընդհանուր կոմպոզիցիայում վեցերորդ  
գրքի նշանակությունն, ըստ երևույթին, այն է, որ հերոսը հա-  
ղորդակից լինելով տիեզերքի գաղտնիքներին և «դեպի ապագայի,  
փառքը սիրով բորբոքված», անհրաժեշտ «կոչում» ստացավ և  
արդեն կարող է իր միասիայի կենսագործմանն անցնել:

«Թափառումներին» հաջորդում են պատերազմները: Դրանց է  
նվիրված պոեմի երկրորդ մասը (7—12 գրքերը), կազմված իտա-  
լիկական ավանդությունների և հաղորդումների նյութի վրա՝  
իտալիկական հնությունների մասին և նախատեսնվում է «Իլիա-  
կանի» հոռմեական զուգահեռը լինել: Էնեասը յուրատեսակ  
Աքիլես է դառնում:

«էնեականի» իդեոլոգիական տենդենցը պահանջում էր, որ-  
պեսզի արոյացիների և իտալիկների միջև հակադրությունը հնա-  
րավոր չափով հարթվեր: Լատին արքան, որ իշխում էր Լացիու-  
մում, հանձին եկվոր էնեասի ճանաչում է պատգամաստությունը  
կանխորոշված իր դուստր Լավինայի փեսացուին և սիրահոժար  
ընդունում է տրոյացիներին: Եթե համաձայնությունը խախտվում  
է, ապա դրանում մեղավոր են Յունոնայի նյութած դավերը, որը  
շարժման մեջ է դնում դժոխքի ուժերը.

Երբ ընձ կարող բարձրացնեն ազերուել, Արերոննի կկառուցեն:

Յունոնայի սաղրանքով Ալլեկտո ֆուրիան բորբոքում է Լավի-  
նայի հետ նշանված Տրոնին՝ ուսույնների ցեղի արքային՝ և բա-  
խում է առաջացնում էնեասի օրդի Ասկանիոսի և Լատինների  
միջև: Լատինական կանայք, որոնց բաբոսական մոլեղություն է  
հասցնում նույն Ալլեկտոն, պահանջում են պատերազմ. նրանց

\* Ուրիշները՝ հույներն են:

գլխավորում է Տուռնին հովանավորող Ամաթա թագուհին և ծեր-  
կատինը հեռացվում է դեպքերի ընթացքին միջամտելուց: Հին-  
հուալիաչի մասին հնարանական և ազդագրական տվյալներով  
հարուստ յոթերորդ գիրքը վերջանում է այն ցեղերի և առաջնորդ-  
ների թվարկումով, որոնք ելնում են էնեասի դեմ (համ. «նավերի-  
թվարկումը» «Ելիականի» 2-րդ գրքում): Գրանց շարքում աչքի են  
ընկնում էտրուրիայից արտաքսված տիրան Մեդենտիոսն իր որ-  
դու՝ գեղեցիկ կավսի հետ և վոլսկերի հեծելազորի առաջնորդ  
օրիորդ Կամիլան, որը զուգահեռն էր կիլիկական «էֆիոպականի»  
Պենֆեսիլե ամադոնի:

Համախաղիկական պատերներին և ավանդույթյուններին  
փոխարինում են սպեցիֆիկ հոմեակականները: Ութերորդ գիրքն  
սկսվում է ապագա Հռոմի տեղը բռնող հնագույն բնակավայրերի  
իդիլիաչով: Այստեղ, պարզության և աղքատության մեջ, իշխում  
է ծեր հուչն Արկադիացի էվանդրոսը: Էնեասը, դաշնակիցներ  
որոնելով, դիմում է նրան: Էվանդրոսը նրա հետ մի փոքր շոկատ  
է ուղարկում իր որդի Պալլանսի գլխավորությամբ, իսկ ավելի  
լուրջ օգնության համար խորհուրդ է տալիս դիմել էտրուսկներին:  
Այս է Հռոմի խղճով սկիզբը, հենց այստեղ էլ պատկերվում է հա-  
ջորդող մեծությունը: Վեներայի խնդրանքը Վուլկանը (հույների  
Հեփեսոսը) էնեասի համար զենք է պատրաստում և վահանը  
ծածկում է ապագայի տեսարաններով — սկսած Հռոմի հիմնադրին  
կերակրող գայլից մինչև Ակցիոմի ճակատամարտը և Օգոստոսի  
հաղթական շքերթը (զուգահեռ «Ելիականի» 18-րդ գրքում Աքիլեսի  
զրահի պատրաստելուն):

Իններորդ գրքից սկսվում են ուղմական գործողությունները:  
Հոմերոսյան օրինակով դրանք բաժանված են մի շարք էպիկոդ-  
ների՝ յուրաքանչյուրում առանձին հերոսների գերակշռությամբ:  
Գլխավոր գործող անձինք զինվորական քաջարիության տեսակե-  
րից զանազան բնութագրություններ են ստանում: Վերգիլիուրը,  
հասկանալի է, որ չէր ցանկանում նսեմացնել իտալիկների դու-  
ցազնների քաջությունը, բայց էնեասին ավելի բարձր բարոյական-  
հատկություններ հատկացրեց: Էնեասի հաստատակամ և ազնիվ  
քաջարիությանը հակադրված են Տուռնի մոլի և անզուսպ անվեհե-  
րությունը և կատաղի «աստվածներին արհամարհող» Մեդենտիու-  
սի անհողորդ հանդարտությունը. Պալլանսը և կավսը հավասա-  
րապես իդեալական երիտասարդներ են: Գործողությունը զարգա-  
նում է այնպես, որ սկզբում հարձակման նախաձեռնությունը

պատկանում է իտալիկներին և միայն աստիճանաբար անցնում է արոյացիների ձեռքը: Էնեասի բացակայության ժամանակ Տուռնը պաշարում է արոյական ճամբարը — այդ կազմում է իններորդ գրքի բովանդակությունը: Դրա լավագույն էպիգոգնիերից մեկը՝ երկու արոյացի պատանիները՝ Նիսի և Էվտիալի գիշերային արտելքն է (համ. «Իլիականի» 10-րդ գիրքը), որոնք ուղևորվում են չուր տանելու Էնեասին: Պատանեկական փառքի ծարավը, պատանեկական հավատարմությունը և պատանեկական հերոսությունը հիասքանչ մարմնացում են ստացել երկու ընկերների կերպարներում, նրանց սխրագործություններում և կործանվելու մեջ: Կբոսեր էվրիալը սպանվում է նրա համար, որ չի ցանկանում անջատվել ընկերոջից, որն ուղարկվում էր վտանգավոր հանձնարարությամբ: Նիսը, բարեհաջող կերպով խուսափելով վտանգից, սպանվում է, որովհետև վերադառնում է հանուն ընկերոջ փրկության: Ճիշտ է, այդ խանդարեց Նիսին հանձնարարությունը կատարել, բայց անտիկ մարզն ընկերությունը՝ ամենակարևոր սոցիալական պարտականությունների հետ հավասարապես՝ միևնույն մակարդակի վրա էր դնում: Էնեասի վերադարձով (10-րդ գիրքը) սկսվում է Կատաղի ճակատամարտը, որի ժամանակ Պալլանսն սպանվում է Տուռնի ձեռքով, իսկ Լավան ու Մեգենտիուսը՝ Էնեասի ձեռքով: Հաջողությունն արդեն արոյացիների կողմն է: Պալլանսի թաղումը, տազնապի ենթարկված լատինների ազմական խորհուրդը, որի ժամանակ Տուռնի բոցավառ հերոսությունը հաղթանակող է դուրս գալիս՝ պաթետիկ հոետոր Դրանկի փոքրոգի պերճախոսության հանդեպ (թերևս Ցիցերոնի ծաղրանկարն է), Կամիլլայի սխրագործություններն ու մահը լցնում են տասնևմեկերորդ գիրքը: Ծաննեկրուերորդը հասցնում է Էնեասի և Տուռնի մենամարտին, որը պետք է որոշի պայքարի ելքը: Օլիմպական կոնֆլիկտը, վերջապես, լուծումն է ստանում: Յոնոնան հրաժարվում է Էնեասի դեմ տածած ատելությունից, բայց պահանջում է, որ արոյացիները միախառնվեն լատինացիների հետ, ընդունեն լատիններեն լեզուն և լատինական սովորույթները:

Քող հավերժ լինի և Լացիումը և սերունդները Ալբա-Լոնգայի թագավորական: Բաջարիությունը իտալիկական թող կուս գարձնի ճշողավորումը վեհ

համեականս

Ճրոյան կործանվեց, Քուլլ տուր ուրեմն՝ կործանվի անհետ և իր անունը

Իլիոնական, —

ասում է նա Յուպիտերին և ստանում է նրա համաձայնությունը՝ Մենամարտի եզրափակման տեսարանը կառուցված է Աքիլեսի և Հեկտորի մենամարտի օրինակով, հոմերոսյան պատմվածքի շատ մանրամասնությունների և առանձին արտահայտությունների կրկնումով ընդհուպ մինչև կշիռը, որը գտնվում է Յուպիտերի ձեռքին: Տուռը պարտված է. էնեասն արդեն պատրաստ է խնայել նրան, բայց նրա ուսին նկատում է սպանված Պալլանսի կապը և Պատրոկլեսի վրեժը առնող Աքիլեսի պես, իր սուգը խրոմ է հակառակորդի կերծքը:

Վերգիլիոսի գրական գործունեության մեջ հունական կլասիկ ձևերն ընթանում էին բովանդակության սոցիալական նշանակության բարձրացման հետ զուգահեռաբար: Թեոկրիտոսից նա քնաց դեպի Հեսիոդոս, Հեսիոդոսից դեպի Հոմերոս: «էնեականում» իդեոլոգիական տեղաշարժը, կապված կայսրությանն անցնելու հետ, ամենապայծառ գեղարվեստական արտահայտությունն է ստացել, և դրա հետ միասին «էնեականը» Օգոստոսի ժամանակվա հոմեոկական կլասիցիզմի ամենանշանակալի հուշարձանն է:

Վերգիլիոսի ընդունած աշխարհայացքային դրույթն արտահայտվում է ոչ միայն ակտուալ նշանակություն ունեցող առանձին լոգոնգների պրոպագանդայում, — նա թափանցում է պոեմի ամբողջ գեղարվեստական կառուցվածքի մեջ, որոշում նրա, որպես նոր տիպի մեծ էպոսի, առանձնահատկությունները:

էնիոսի «Աննալները» հոմեական պոլիսի պոեմն էր, էնեականը՝ Իտալիայի պոեմն էր: Իտալիկ ցեղերի թվարկումը, իտալիկական հնություն պատկերները, — այդ բոլորը մի նպատակի էին ծառայում՝ Իտալիան առաջ քաշել որպես հոմեական պետության կենտրոնական տերիտորիա: Հոմերոսը մատուցվում էր միայն ապագայի հեռանկարում: Իտալիայի փառաբանումը «Գեորգիկաներում» ակտուալ քաղաքական «շեղում» էր, «էնեականում» ալյն դառնում է գեղարվեստական միտումի կարևորագույն մոտմենտներից մեկը: Իտալիկական հայրենասիրությունը, որը դուրս է գալիս պոլիսային կամ ցեղական սահմանափակվածությունից, Վերգիլիոսի պոեմին նոր երանգավորում է հաղորդում, որը ծանոթ չէ հունական էպոսին: Եվրոպական կլասիցիզմի «ազգային» պոեմները այդ առնչությամբ հարում էին «էնեականին», որպես իրենց անսխիկ օրինակին:

Օգոստոսի իդեոլոգիական քաղաքականության հետ լիակատար համապատասխանությամբ «էնեականը» իդեալականացնում

է հոռմեա-խտալիկական հնությունը, նրա բարբերը և հավատա-  
լիքները: Այդ թեքումով էին պայմանավորված և թեմայի ընտրու-  
թյունն ու նրա մեկնաբանութեան բնույթը: Հրաժարվելով արդիա-  
կանութեան մասին էպոսից, Վերգիլիուսը ավելց պոեմ անցյալի  
մասին և ընդ որում, դիցաբանական պոեմ: Վերգիլիուսի, ինչպես  
և նրա բոլոր ժամանակակիցների տեսակետով, Տրոյայի կործա-  
նումը և էնեասի Իտալիա ժամանումը կասկածից զուրս պատմա-  
կան փաստեր էին, և պոեմի «դիցաբանականությունը»՝ օլիմպա-  
կան, «աստվածային» պլանի միացումն էր, բայց անտիկ հաս-  
քակությունը երբեք չէր հրաժարվում իրեն սրբագործող այդ դի-  
ցաբանական սիստեմից, թեպետև այդ սիստեմն արդեն դադարել  
էր իրական հավատալիքի օրեկա լինելուց: Հենց այն տարիներին,  
երբ Վերգիլիուսը ձեռնամուխ եղավ «էնեականի» վրա աշխատե-  
լուն, սկսեց հանդես գալ Տիտուս Լիվիուսի ծավալուն հոռմեական  
պատմությունը, որն սկսվում էր Հոռմի առասպելական սկզբնա-  
վորման շարադրումով: «Հին ժամանակներին թուլյատրելի է,—  
գրում է հեղինակն առաջաբանում,— սրբագործել քաղաքների  
սկիզբը, խառնելով աստվածայինն ու մարդկայինը: Եվ եթե սրև է  
ժողովրդի կարելի է թուլ տալ սրբագործել իր ծագումը և այն  
աստվածներին վերագրել, ապա հոռմեական ժողովուրդն այդ  
իրավունքը ձեռք է բերել իր ռազմական քաջարիությամբ»: Հինա-  
վուրց ավանդությունների վերաբերյալ այդպիսի հայացքն իբրև  
հայրենասիրական կարգի արժեք ընդունելու պայմաններում, հո-  
մերոսյան օրինակի պոեմը չէր դիտվում ինչ-որ արհեստական  
երևույթ: Վերգիլիուսը չի վարանում նույնիսկ «հրաշքներից» և  
հարկ չի համարում դրանք ռացիոնալացնել: Դրա հետ միասին  
առասպելը պոետին հետաքրքրում է ոչ թե ինքնին, այլ որպես  
հիմք ներկայի համար: Վերգիլիուսի հայացքը շարունակաբար  
տողոված է դեպի հոռմեական պատմության հետագան և դրա  
պատկերներն ընդհուպ մինչև հեղինակի ժամանակները, հաղորդ-  
վում են բազմազան մարդարեացումների և նախատեսումների  
ձևով (օրինակ՝ էնեասի վահանը. կամ Ելիսիեյում հոգիների դի-  
տումը): Առասպելի այդ համապատասխանությունն այժմեակա-  
նության հետ, պատմական հեռանկարի մոտժամն իբրև ապագայի  
հեռանկար՝ «էնեականի» կարևորագույն առանձնահատկությու-  
ններից մեկն է, որը խստորեն տարբերում է այն հոմերոսյան  
պոեմներից:

Հնության իդեականացումն արտահայտվում է նաև պոեմի

գործող անձանց բնութագրման մեթոդի մեջ: Վերգիլիուսը ելնում է հոմեակական «քաջարիության» իդեալից, ինչպես այն պատկերանում էր գոյացող կայսրության իդեոլոգներին: Այդ իդեալը, որը մոտենում էր ստոիկյան փիլիսոփայության «իմաստունին», մարմնացած է գլխավոր հերոսի կերպարում. առաքինությունը, շրջահայեցողությունը, դժառատությունը, ուղղամտությունը, քաջությունը, — այս բոլոր հատկությունները առկա են Էնեասի մեջ: Մյուս պերսոնաժները անհատականացված են առավելապես նրանով, որ նրանց մեջ պահասում է կատարելիության համար անհրաժեշտ զոհերից որևէ մեկը: Խիստ բացասական կերպարներ գրեթե չկան (այդ կատեգորիային պատկանող կարելի է համարել միայն խոսքի վարպետներին՝ Սինոնի և Դրանկի միանգամայն պատահական դեմքերը), և նույնիսկ «աստվածներին արհամարհող» Մեդենտիուսը օժտված է սիրով դեպի որդին, որպիսի հանգամանքը մեղմացնում է նրա անձնավորության կատարյալ փնջը: «Էնեականը»՝ իդեալական հերոսների պոեմ է, կենտրոնացված բնութագրությամբ, որը յուրաքանչյուր առանձին դեպքում առաջ է քաշում կերպարի որևէ հիմնական գիծը, վերացականորեն մտածված, բայց ցուցադրված բազմապիսի սիտուացիաներում՝ մյուս կերպարների կոնկրետ ֆունկցիայի:

Ուշագրավ է կենտրոնական հերոսի դեմքը: Էնեասն ավելի քիչ ակտիվ առնչություն ունի կյանքի հետ, քան, օրինակ, հոմեոսյան պերսոնաժները: Նրան «օրհասն է առաջնորդում», և այն բոլոր առավել կամ նվազ նշանակալից բաները, ինչ նա ձեռնարկում է, կատարվում է աստվածների կարգադրությամբ, և ոչ թե սեփական մղումով: Այդ յուրահատուկ պասսիվությունը՝ հոմեոսական «քաջարիության» նոր հատկությունն է: Օրհասին գիտակցության ենթարկվելու գաղափարը, որ առաջ էր քաշել ստոիկյան փիլիսոփայությունը, մասնավորապես Պոսիդոնիսը, այժմ գեղարվեստական մարմնացումն է ստանում հոմեոսական կայսրության պոեոսի մոտ:

...Գնանք, ուր ճակատագիրն է մղում ու մղում վերստին՝  
 Ինչ որ էլ լինի, ճակատագիրը կհաղթի, միայն կրել լինի հնարավոր:

Ենթարկվելով օրհասին, Էնեասը չի կարող

Ըստ իր գծագրումների

կյանք անցկացնի և աշխատանքն ըստ իր կամքի դատավորի:

Ի տարբերություն հոմեոսյան հերոսների, Էնեասը միշտ՝ իրեն զգում է պարտականության և պատմական միասնայի մարդ, շրջապատի և սերունդների հանդեպ պարտավորություն կրող:

Հնության պատկերը, որը ծավալում է Վերգիլիուսը, աչսպի-  
սով, ներթօնված է իր ժամանակի իդեաներով: Հոմերոսի պոեմ-  
ներն արժանացել են «Հին ժամանակների էնցիկլոպեդիա» ան-  
վանը. «էնեականի» վերաբերյալ, չնայած նրա պատմա-հնաբանա-  
կան գիտնականությանը, նման բնութագիրը միանգամայն անտեղի  
կլիներ: Նյուֆի թե ընտրությունը, թե լուսաբանությունը թելադր-  
ված են իդեալականացված պատկերավորում ստեղծելու ձգտմամբ  
և որպեսզի այդ պատկերավորման յուրաքանչյուր մանրամաս-  
նությունը սերտորեն կապված լինի ակտուալ-քաղաքական խն-  
դիրների հետ՝ կրոնի և բարոյականության բնագավառում: Ման-  
րամասնությունը երբեք ինքնանպատակ չի դառնում, չի ծածկում  
հեռանկարը, բայց աշխարհի գեղարվեստական ընկալումը ամ-  
բողջական է Վերգիլիուսի մոտ և զրա հետ միասին սահմանա-  
փակված է նրա իդեալականացնող տենդենցներով:

Հոմերոսյան էպոսի «հանդարտությունը», արտաքին մանրա-  
մասնությունների նկարագրությունը միանգամայն օտար է Վերգի-  
լիուսին: Արտաքինը նրան հետաքրքրում է գլխավորապես որպես  
ներքին՝ հոգեկան պրոցեսների, արամագրոթյունների, աֆեկտնե-  
րի գրգռիչ կամ ցուցանիշ: Բարձր զգացմունքների պաթետիկան՝  
«էնեականի» հիմնական տոնն է: Վերգիլիուսի գործող անձինք  
ամենից հաճախ հանդես են դալիս հուզական գրգռվածության մի-  
ճակում, և այդ՝ հերոսի բարոյական գեմքն արտացոլող՝ հուզա-  
կան աշխարհի գրսևորման միջոցներից մեկն էլ ուժեղ ու սեղմ  
ճառերը և մոնոլոգներն են ծառայում: Բարդ զգացմունքների պա-  
թետիկան նեոտերիկ էպիլիալում ետ էր մղում պատմողական  
կողմը. Վերգիլիուսն այդպես հեռու չի գնում: Պոեմ ստեղծելով  
հին հերոսների մասին, նա խուսափում է զգացմունքների շափա-  
զանց բարդությունից — նույնիսկ Գիդոնայի մասին էպիզոդում—  
նա տեղ է թողնում գործողության համար, բայց այնուամենայնիվ  
նրա էպոսը ցայտուն արտահայտված լիբո-դրամատիկական  
գունավորում ունի: Գործողության արամատիկական կոնցեպցիան  
և պաթոսի լարվածությունը տարբերում են «էնեականի» էպի-  
կական պատմողականությունը: Ոճաբանական միջոցների ամբողջ  
սխառեմն ուղղված է այն բանին, որպեսզի ցնցի ընթերցողին,  
ապշեցնի նրան սոսկալի և հուզիչ պատկերներով և յուրաքան-  
չյուր մասնակին մտածված է ամբողջի գեղարվեստական գործու-  
նեություն մեջ՝ նրա դերի տեսակետից:

«Էնեականն» ըստ կոմպոզիցիայի արտակարգորեն պարզ է:

Մեծ էպոսի վերանորոգման պրոբլեմը Վերգիլիուսը լուծեց այնպես, որ իր պոեմը կառուցեց էպիզոդներով, որոնցից յուրաքանչյուրն առանձին էպիլլա է կազմում և միաժամանակ որպես մաս մտնում է ընդհանուր կոմպոզիցիոն կառուցման մեջ: «Էնեականի» գրեթե յուրաքանչյուր գիրքը դրամատիկական ամբողջություն է ներկայացնում՝ հանգույցով, խոտորումներով և հանգույցի լուծմամբ, յուրակերպ մի էպիլլա է կազմում: Պոեմը կազմված է այդպիսի պատմվածքների շղթայից, որոնք միավորված են ոչ միայն սյուժետային հաջորդականությամբ, այլև ընդհանուր նպատակաւաչցութեամբ, որն ստեղծում է ամբողջի միասնություն: Այդ միասնությունը ճակատագրի կամքն է, որն էնեասին առաջնորդում է նոր թագավորություն հիմնելու լատինների երկրում, իսկ նրա սերունդներին առաջնորդում է աշխարհի վրա իշխելու: Պատգամախոսությունները և իմաստուն երազները, հրաշքներն ու հայտնությունները, որոնք ղեկավարում են էնեասի գործողությունները և նախագուշակում են Հոտի ապագա մեծությունը, — այդ բոլորն օրհասի, պոեմի շարժիչ ուժի, կամքի դրսևորումն են: Իդեոլոգիական և դեղարվեստական կողմերն ալյատեղ միաձուլված են անբաժան միասնությամբ:

Վերգիլիուսը վեհ տոնի հետևորդն է, փոլիաչանորեն խուսափում է այն բոլորից, ինչ կարող է «ստորին» թվալ: Այդ նրա պոեմի այն հատկություններից մեկն է, որն ստիպեց XVI—XVIII դ. դ. եվրոպական կլասիցիզմին «էնեականին» գերապատվություն տալ հոմերոսյան պոեմներից: Այդ արտահայտվում է և աստվածների հանդեպ վերաբերմունքի մեջ: Պոեմի իդեոլոգիական դրույթին համապատասխան Վերգիլիուսը պահպանել է տրագիցիոն թիմայական պլանը, բայց հոմերոսյան աստվածների համեմատությամբ Վերգիլիուսի աստվածները իդեալականացված են. հոտական պոետը վերացրեց այն կոպիտ և պրիմիտիվ գծերը, որոնք Հոմերոսի էպոսի «օլիմպական» տեսաբաններին հաճախ զավեշտական երանդ են հաղորդում: Էպոս, Վերգիլիուսի համար մեկ աստվածային ուժ կա — օրհասը, և Օլիմպոսի տրագիցիոն դեմքերի մտցնելը նույնիսկ որոշ հակասության մեջ է այդ հիմնական կոնցեպցիայի հետ: Շատ կողմերով շարունակելով Լուկրեցիուսի աշակերտ մնալ, Վերգիլիուսն իր պոեմի հիմքում դնում է օրհասի ստոիկյան բմբունամբ, որը գրեթե կայսրության պաշտոնական փիլիսոփայությունն էր դարձել:

Այսպիսով, «էնեականը» խորապես տարբերվում է հոմե-  
րոսյան պոեմներից, չնայած մոտիվների, սյուժետային սխեմա-  
ների, պոետիկ ֆորմուլաների բազմաթիվ փոխառումներին: Այդ էլ,  
ըստ անտիկ հասկացողության, հանդիսանում էր օրինակի հետ  
գրական «մրցակցությունը»՝ պահպանելով արտաքին նմանություն-  
ներ, ստեղծել ինչ-որ նոր բան: «Հոմերիզմները» պոեմին հաղոր-  
դում էին որոշ արխաիկ կոլորիտ, և հենց այդ նպատակով էլ  
Վերգիլիուսը հաճախ վերարտադրում է էնեոսուսի «Աննալների»  
մոտիվները և ոճական եղանակները:

Իր ձևով «էնեականը» հոմերական պոեզիայի ամենա-  
բարձրագույն նվաճումներից մեկն է: Սեղմ, ճշգրիտ ոճը, որն  
առանձին արտահայտությունները դարձնում է «պատկերավոր  
խոսք», միանում է սահուն և հնչեղ ոտանավորի բարձր կատա-  
րելիության հետ: Հինավուրց հոմեական հեկղամետրի ծանրա-  
կշռությունը վերջնականապես հաղթահարվեց: «էնեականի» շատ  
տողեր դարձան առօրյա արտահայտություններ: Վերգիլիուսի  
ստեղծած ոճը միակերպ հեռու է և «ասիականության» փարթա-  
մությունից, և «ատտիկականների» արհեստական պարզությունից-  
ամենամեծ էֆեկտների նա հասնում է՝ վարպետորեն բառազու-  
գակցման ճանապարհով՝ առօրյա բառերի և ֆորմուլաների արտա-  
հայտիչ հնարավորությունները դրսևորելու միջոցով: Վերգիլիուսի  
համար մեծ նշանակություն ունի «ձայնազրույթունը»՝ ձգտումը  
համապատասխանություն հաստատել տողի հենց հնչման և նրա  
բովանդակության միջև: Վ. Բրյուսովն «էնեականի» իր թարգմա-  
նության մեջ ջանում է պահպանել այդ ձայնազրույթունը, օրի-  
նակ, առաջին գրքում փոթորկի նկարագրությունը՝

Вслед карабельщиков крик прозвучал и скрипенье веревок.

Սակայն գեղարվեստական միջոցների սխտեմի այդպիսի  
սերտ կապը՝ լատիներեն բառերի հնչունության և նրանց նշանա-  
կության երանգների հետ, հեշտ չի հաղորդվում ուրիշ լեզվով և  
ոուսական ոչ մի թարգմանիչ դեռ չի կարողացել հաղթահարել այդ  
դժվարությունը:

Վերգիլիուսի գրական նորմությունները, հասկանալի է,  
որ տարբեր գնահատության էին արժանանում ժամանակակիցնե-  
րի կողմից, բայց շատ շուտով համընդհանուր ճանաչման արժա-  
նացան: Վերգիլիուսը «կլասիկ» դարձավ: Հոմեական ամբողջ

հետագա պոեզիան լեցուն է նրանից փոխառություններով, իսկ հոռոմեական դպրոցում նա այն հիմնական հեղինակն էր, որի օրինակները վրա լեզու և ոճ էին սովորում: Նրանից անսահման քաղվածքներ են անում և մեկնաբանում են նրան: Եթե Վերգիլիոսի երկերը պահպանված իսկ չլինեին, կարելի կլիներ դրանք գրեթե ամբողջությամբ վերականգնել քաղվածքներով: Նրա առանձին տողերից հաճախ կազմում էին նոր երկեր (այսպես կոչված «ցենտոններ») — «կարկատանային» պոեմներ): Վերգիլիուսը հոռոմեական այն սակավաթիվ պոետներից մեկն էր, որոնց երկերը թարգմանվել էին հունարեն լեզվով: Նա պակաս հարգանք չէր վայելում և քրիստոնյաների մոտ. դրա համար զգալի դեր խաղաց արդեն հիշատակված շորթորդ Էլլոգայի մեկնաբանությունը: Պոետը, որն իբր թե «նախագուշակել էր Քրիստոսին», բարձրագույն իմաստության կրող էր համարվում, և նրա երկերում որոնում էին խորմատու «այլաբանություններ»: Պոետիկական օրինակի և իմաստության աղբյուրի իր այդ նշանակությունը Վերգիլիուսը պահպանեց և Միջին դարերում: Նրա երկերը մեզ են հասել հսկայական քակուղիությամբ ձեռագրերով և մի քանիսը դրանցից վերաբերվում են դեռևս ուշ-անտիկ ժամանակներին: Վերգիլիուսի ազդեցությունը միջնադարյան լատինական գրականության վրա արտակարգորեն մեծ է, բայց այն նկատելի է և միջնադարյան էպոսում՝ ժողովրդական լեզվով: Պոետի անձնավորությունը առասպելի նյութ դարձավ («կախարդ» Վերգիլիուսի մասին), իսկ նրա բանաստեղծույթյունների տողերով գուշակություններ էին անում: Դանտեն անդրշիրիմյան աշխարհում ճանապարհորդելու համար իրեն ուղեցույց ընտրեց Վերգիլիուսին: Նա սիրված պոետ էր մնում Վերածնության և կլասիցիզմի դարաշրջաններում: Վերգիլիուսին «ընդօրինակելու» նշանաբանի տուր զարգանում էր այդ ժամանակի և՛ էպիկական, և՛ հովվերգական պոեզիան: Վերգիլիուսի պարոդիական «ըջտդարձումները» («տրավեստիաները») զավեշտական պոեմի հատուկ ճշույթ են կազմում. այդպիսին է, օրինակ, Ֆրանսիական պոետ Սկարոնի «Երջտդարձված Վերգիլիուսը» (1648 — 1653), իսկ մեզ մոտ Օսիպովի և Կոտեկնեցկու՝ «Վերգիլիուսյան էնեականը թարսած» (1791), և Կոռլյարևսկու՝ «Վերգիլիուսի էնեականը, շրջադարձված ուկրաիներեն լեզվով» (1798):

Գրական ճաշակների խիստ շրջադարձը, որ առաջացավ ուրմանտիզմի ժամանակվանից, փոխեց վերաբերմունքը Վերգիլիուսի հանդեպ, — նրան սկսեցին դիտել որպես կեղծ պաթոսի պոետի —

«արհեստական էպոս» ստեղծողի: Այդ հայացքը տարածվեց Գերմանիայում և մասամբ էլ Անգլիայում, սակայն, քիչ թափանցեց սոմանական երկրները (Իտալիա, Ֆրանսիա), ուր Վերգիլիուսը շարունակում է բարձր ընդունելությամբ օգտվել: Վերգիլիուսի շեղմ երկրպագու էր, օրինակ, Անատոլ Ֆրանսը («Սպիտակ քարի վրա»), և 1930 թվին Վերգիլիուսի ծննդյան երկուհարամյակի կատարումը նորից երևան հանեց այն վիթխարի դերը, որ նա խաղացել է ամբողջ արևմտակենտրոնական գրականության ձևավորման մեջ:

### 3. ՀՈՐԱՅԻՈՒՍ

Վերգիլիուսից որոշ չափով այլ ճանապարհով դարգացավ Օքստոտսի ժամանակի մի այլ պոետի՝ Բվինտուս Հորացիուս Ֆլակկի (մեր թ. ա. 65—8 թ. թ.) գրական գործունեությունը:

Հորացիուսը ծնվել է 65 թվի դեկտեմբերի 8-ին Իտալիայի հարավում, հինավուրց հռոմեական դադութ Վենուզիայում: Նրա հայրն ազատագրված ստրուկ էր, որն իր համար փոքրիկ կարողություն էր կուտակել: Ազատագրված ստրուկներին զավակներն իրավաբանորեն հավասարեցվում էին ազատածին քաղաքացիներին, բայց ստրկական ծագումը այնուամենայնիվ դիտվում էր որպես բիծ, որը վերջնականապես վերանում էր հաջորդ սերնդի ժամանակ, և սոցիալական այդ ոչ լիարժեքությունը անջնջելի հետք թողեց պոետի ամբողջ կյանքի ընթացքի և գրական ստեղծագործության վրա: Հայրը ձգտում էր սրտուն դաստիարակություն տալ, որը կարող էր նրան ավելի բարձր հասարակական շրջաններ մտցնել, և որդուն տարավ Հռոմ: Հորացիուսն անցավ այն ժամանակվա կրթության բոլոր առաջնականները, սկսած կրթիւնու Անդրոնիկի («Լատիններեն Ողիսականի») սկզբնական ուսուցումից մինչև Աթենքում փիլիսոփայությամբ զբաղվելը, ինչպես այդ սովորություն էր հռոմեական ավագանու համար: Այդ ժամանակ տարածված էպիկուրականությունը համակեց նույնպես և Հորացիուսին: Էպիկուրի շատ դրույթներին նա հավատարիմ մնաց իր ամբողջ կյանքի ընթացքում, թեպետև որոշ չափով հակված էր դեպի էլիեկտիկական և իրեն կապված չէր համարում որևէ դպրոցի դոգմաների հետ: Հորացիուսի փիլիսոփայական զբաղմունքներն ընդհատեց քաղաքացիական պատերազմը, սրն ստաշացավ Կեսարի սպանությունից հետո (44 թ.): Աթենք եկավ Բրուտուսը

կողմնակիցներ հավաքագրելու՝ ռեսպուբլիկական կարգերը պաշտպանելու և Կեսարի հաջորդների դեմ պայքարելու համար, և Հորացիուսը մտալ նրա բանակը, նա նույնիսկ ազատագրված ստրուկի որդու համար որոշ շափով անսպասելի ռազմական տրեբունի, այսինքն, լեգեոնի հրամանատարի պաշտոն ստացավ:

Յիլիպների մոտ Հակատամարտում (42 թ.) Բրուտուսի զորքը ցրվեց և փախուստի մատնվեց: Շատ տարիներ հետո հիշելով իր փախուստի մասին, Հորացիուսը շրջապատում է այն գրական սեմինիսցենցիաներով հունական լիբրիկայից և մատուցում է «վահանը կորցնելու» կերպարանքով, ինչպես այդ հանդիպում էր Արխիլոքոսի և Անակրեոնի բանաստեղծություններում:

Չեզ լքել սրբնայ փախուստի եմ դիմել,  
Մարտիկին տնվայել վահանս էլ նետել,  
Ամոթով, Յիլիպներ, թիկունք եմ դարձրել  
Քաջութուն կորցրած հովիտն եմ փոխել:

Պարտությունից հետո Հորացիուսը շարունակեց պայքարը: Նա, օգտվելով Բրուտուսի կողմնակիցներին հատկացված ներման շնորհումից, վերադարձավ Իտալիա՝ «փետրահան թևերով»: Նրա հայրենիք Վենուսիան ընկավ Կեսարի վետերաններին հատկացված քաղաքների շարքը: Հորացիուսի ժառանգական գույքը բռնագրավվեց: Ստրկատիրական հասարակությունն արհամարհանքով էր վերաբերվում վճարվող աշխատանքին, բայց որոշ սրբեկյալ պրոֆեսիաների համար բացառություն էր արվում: Հորացիուսն իր միջոցների մնացորդը գործադրեց, որպեսզի ընկնի Քվինտորական գրագիրների կոլեգիան (պետական ֆինանսների վարչություն), որը բավականաչափ հարգվից էր համարվում:

Ահավասիկ այդժամ գրված հանդուգն աղբատությամբ  
Սկսեցի ոտանավոր գրել ես—

պատմում է Հորացիուսը հետագայում:

Իր գրական գործունեության հենց սկզբից Հորացիուսը հանդես է գալիս որպես բովանդակալից պոեզիայի կողմնակից և որպես ոտանավորի վարպետ, տաղաչափության մեծ վարպետ: Նա օպոզիցիոն դիրք է բռնում ինչպես նեոտերիկների գաղափարազրկության, այնպես էլ հին Հոմեր պոետների առաջ, արխաիստական ստորաքաջություն դեմ, և կողմնորոշումը դեպի հուն կլասիկները նրա համար միջոց է ծառայում վերանորոգելու գա-

դափարական պոեզիան ավելի նրբազեղ և ավելի արդիական-  
ոտանավորային և ոճական պարուրմամբ: Հորացիուսի այդ գրա-  
կան որոնումները զողովում էին կլասիկական շարժման հետ, որը  
զլխավորում էին Վարիուսը և Վերգիլիուսը: Երկու ավագ պոետ-  
ներն էլ մասնակցություն ունեցան սկանակ տաղանդի ճակա-  
տագրի գործում և հանձնարարեցին նրան Մեկենասին, որը  
Հորացիուսին դարձրեց իր մերձավորներից մեկը (38—37 թ.), իսկ  
այնուհետև նաև փոքրիկ կալվածքի տեր՝ Սարինիական լեռներում:  
Այդ առատաձեռնությունները Հորացիուսին ազատեցին կարիքից-  
բայց նրա կախյալ վիճակը մի անգամ չէ, որ դառնում էր փա-  
փուկ, գրությունների աղբյուր, որոնցից նա միշտ դուրս էր գալիս  
կատարյալ տակտով և արժանապատվությամբ: Մեկենասի հետ  
մոտիկությունը Հորացիուսին մոտեցրեց Օգոստոսի շրջապատին,  
բայց պոետը ջանում էր ըստ հնարավորության հեռու լինել ար-  
քունիքից, իր սարինիական կալվածքը գերադասելով Հոմերից:  
Իրեն առաջարկված իմպերատորի քարտուղարի պաշտոնից նա  
հրաժարվեց: Նա վախճնվեց 8 թվի նոյեմբերի 27-ին, երկու ամիս  
ավել ապրելով իր բարեկամ և հովանավոր Մեկենասից:

Հորացիուսի վաղ ստեղծագործությունը հարձակողական-բա-  
նավիճական բնույթ ունի. կաղապարվում է այն յամբագրության  
կամ սատիրայի ձևով:

Յամբագրական բանաստեղծությունները վերաբերվում են  
30-ական թվականներին և կազմում են ոչ մեծ մի ժողովածու, որը  
մեզ է հասել «էպոդներ» վերտառությամբ: Անտիկ ժամանակ  
էպոդ էր կոչվում ոտանավորի տան ձևերից մեկը — երկտողանի,  
որի մեջ երկրորդ տողը առաջինից կարճ է: Այդպիսի տներ հա-  
ճախ հանգիպում ենք Արխիլոքոսի մոտ. հատկապես հունական  
յամբագրության այդ կլասիկին էլ իրեն համար օրինակ էր դարձ-  
րել երիտասարդ պոետը:

Հորացիուսի էպոդների կապը Արխիլոքոսի երկերի հետ կա-  
րելի է բնութագրել հեղինակի սեփական խոսքերով. Մեկենասին  
ուղղված ուղերձներից մեկում ասվում է.

Առաջինը ես ցույց տվի փարոսյան յամբեր կացիոմին.

Վերջինը եմ Արխիլոքից չափեւ ու ոճեւ վեճ-կարգիւ,

Բայց չեմ դիպել ոչ թեմաներին, ոչ էլ խոսքերին, որ կիսմբին  
հալածում էին:

Եվ իսկապես, էպոդներում «արխիլոքյան» են միայն տաղա-  
չափությունը և ազդեցիվ տոնը, միայնա՞ծ դիդակտիկայի որոշ

տարրի հետ: Բովանդակութիւնն ու ոճը վկայում են պոեթի բարձր կուլտուրայի մատին. նա ազատորեն օգտագործում է տարբեր դարաշրջանների գրական ժառանգութիւնը, բայց ստեղծում է միանգամայն ինքնուրույն և միաժամանակ սուր և գործոն երկեր:

Հորացիուան սկսում է քաղաքական պոեզիայով, հրաբորբոք բողոքով քաղաքացիական անվերջ պատերազմների դեմ (7-րդ էպոդ): Այն տարիներին, երբ Վերգիլիուսը 4-րդ էկլոգում «ոսկե դարի» դալ էր խոստանում, Հորացիուսը շատ ավելի հոռետեսորեն էր տրամադրված: Նա էլ է տալիս «ոսկե դարի» պատկերը, բայց ո՛չ Խալիսայում, այլ հեռավոր «երանության կղզիներում», ուր էլ մնում է փախչել կործանվող և դատաւարտված Հոմի քաղաքացիներին: Ուտոպիական սանտիմենտալութիւնը նա հետապնդում է դաժան ծաղրանքով: Երկրորդ էպոդը փառաբանում է գյուղական զբաղմունքների հրաշալիքները, բայց բանաստեղծութիւնն վերջում պարզվում է, որ այդ ամբողջ նորածե, հիասքանչ հոգին գրված է կեղծավոր և ագահ վաշխառուի բերան: Պարոդիայի «շրջադարձումները», զավեշտական պաֆոսի տարրը՝ ամբողջ ժողովածուին սպեցիֆիկ գունավորում է տալիս, տարածվելով նախ սիրային բանաստեղծութիւնների վրա: Այսպէս, 11-րդ էպոդում պարոդիայի է ենթարկվում սենտիմենտալ սիրային էլեգիան: Խիստ, գրեթե արխիլոքյան տոնով անեծքներ են հղվում գրական հակաուսիրդին. այդ շրջադարձված «պրոպեմպտիկոն» է (բանաստեղծութիւն բարի ճանապարհի ցանկութիւնն այն անձին, որը ճանապարհորդութիւն է գնում): Էպոդներում անձնական թշնամանքի մոտիվը մեծ դեր չի խաղում: Հորացիուսը գերադասում է այնպիսի հակաուսիրդներ ընտրել, որոնք հանրային վտանգ են ներկայացնում: Եվ թեմաների ընտրութիւնն և դրանց մեկնաբանութիւնն մեջ նկատվում է նեոտերիկների սուր եկեղծարարական մեջ նկատվում է նեոտերիկների սուր միջոցներից մեկը Հորացիուսը գործադրում է դիալոգի և մենախոսութիւնն զբաղմունքի կախարհի կամ նշանավոր անձանց վրա հարձակութիւնը համար, մանավանդ որ Հորացիուսը մտնելով Մեկենասի շրջապատը, դրանով իսկ հրաժարվեց որևէ օպոդիցիայից նոր կարգերի հանդեպ. նա իր յամբարգրական ծաղրանքը սահմանա-

վահում է սակավ-նշանակալի օքեկտներով (վճուկ, նորելուկ և այլն): Միայն Անտոնիոսի հետ պատերազմը նորից նրան ներշնչում է դիմել քաղաքական ստանալորի, և նրա պոեզիայում սկսում է երևան դալ Կեսարի (այսինքն Օկտավիանուսի) անունը: Վերջ ի վերջո պոեզը շուտով ստնով յամբագրությունից և դժվարությունից միայն 30 թվին ժողովածուի համար հավաքեց սասնելոթ բանաստեղծություն. ընդ որում, նա մտցրեց մի քանի բանաստեղծություններ էլ ոչ յամբագրական բնույթի. դրանք արդեն կազմում էին անցումն դեպի մտորումների լիրիկան:

Հորացիուսի, սրպես լիրիկական պոետի, ճանապարհին «էպոդները» առաջին քայլն էին դեպի խստորեն կլասիկ ոճը, բայց որոշ ծանրաբեռնվածությունը մանրամասնություններով տակավին հիշեցնում է գրեյու արխանդրիական եղանակը:

Հորացիուսն ավելի բեղմնավոր է երգիծանքի բնագավառում: 30-ական թվականների ընթացքում նա հրատարակեց երգիծանքների երկու ժողովածու — առաջինը՝ մոտավորապես 35—34 թ. թ., երկրորդը՝ մոտավորապես 30 թ., նույնտակ գնելով նորագեղ Լուցիլիուսի ժանրը էսթետիկական բարդացած պահանջներին համապատասխան: Բայց նրա երգիծանքների տարբերությունը Լուցիլիուսականից՝ չի վերածվում միայն լուկ ձևի հարցերի: Լուցիլիուսի երկերը հաճախ գունեղ արտահայտված քաղաքական պամֆլետների բնույթ էին ունենում և աչքի էին ընկնում խիստ անձնական սրվածությունը: Ինչպես մենք արդեն տեսանք, Հորացիուսը քաղաքացիական թեմաներից շուտով հեռացավ, բայց երգիծանքի ժանրը նրա համար նոր հնարավորություններ էր բաց անում, — նա իր ուշադրությունը կենտրոնացնում է մասնավոր վարքի ոլորտի վրա:

Ռեսպուբլիկայի կործանմամբ հարցերի այդ շրջանը առանձնակի ակտուալություն ձևոր բերեց, և անհատական երջանկության պրոբլեմը այսուհետև դառնում է Հորացիուսի ամբողջ պոեզիայի համար կենտրոնականը: Նա — էպիկուրի ուսմունքի ոգով — ստեղծում է ոչ-հարուստ, բայց կուլտուրական ստրկատիրոջ փիլիսոփայությունը, այն անձնավորություն, որը պատրաստ է հաշտվել քաղաքական նոր սիստեմի հետ, որքանով այդ վերջ դրեց քաղաքացիական պատերազմին և հնարավորություն է տալիս անհատին առանց տագնապի նվիրվել իր անձնական հակումներին և իր վրա աշխատելուն: Երջանկությունը, ըստ Հորացիուսի, «տակե մեջտեղումն է» (այդ արտահայտությունը նրան էլ պատկանում

է), քչով գտնանալու՝ որպես ներքին անկախութեան և ցանկութեան ներքին իշխելու աղբյուր, կյանքի բարիքներից անխռով և շափալոր հաճույք ստանալու մեջ է: Հորացիուսի պայմաններում՝ իբրև Մեկենասի մերձավորներից մեկի՝ այդ հարցերը ոչ միայն սկզբունքային, այլև անձնական սրութուն ունենին: Չափալորութեան և հանգստի փիլիսոփայութեանը երբեմնի ռեսպուբլիկականի մոտ պաշարի զենք են դառնում ներքին ինքնուրույնության համար: Ինչպիսի երջանկություն տանող կեղծ ուղիները, երևակայական բարիքների ետևից ընկնելը՝ Հորացիուսի երգիծանքի հիմնական օրհևտն են, այն ուղղված է ունայն ձգտումների, շահամոլութեան, պատվի ծարավի, սնտիստութեան, անհաստատութեան, նախանձի դեմ: Այդ արատների կրողները ոճրագործներ չեն, որպեսզի զայրույթի զգացմունք տուայցնեն, այլ ոչ-խելոք, մոլորութեան մեջ ընկած մարդիկ: Ուստի երգիծանքի տոնը զգալիորեն մեղմ է, համեմատած Լուցիլիուսի հետ, ծաղրանքը փոխաբիւղում է հեղնանքով, պոեար «ծիծաղելով է ասում ճշմարտութեանը»:

Իր երգիծանքները Հորացիուսն անվանում է «Ջրույցներ» և հետագայում բնորոշում իբրև «քրույցներ Բիոնի ոճով», այդպիսով մատնանշելով դրանց կապը դիատրիքների հետ: Եվ իսկապես, մի քանի երգիծանքներ (օրինակ՝ I, 1, 2, 3) կառուցված են որպես բարոյա-փիլիսոփայական թեմաներով դատողությունների ճակատագրից և շահամոլությունից դժգոհ լինելու մասին, բարեկամների հետ վարվեցողության մասին և այլն՝ հանրամատչելի փիլիսոփայական գրականությունից քաղած պատճառաբանությամբ: Դիատրիքայի բնորոշ առանձնահատկությունները, օրինակ՝ բանավեճը Ֆիկտիվ ընդգիծախոսի դեմ, վերարտադրում է և Հորացիուսը: Պոեար չի ընկնում վերացական շարադրման խիստ հետևողականութեան ետևից և այդ հենք է դարձնում հոռմեական կյանքի իրական անձնավորությունների և իրական դեպքերի մի ամբողջ կրթական ուրվագծումներ, դիմանկարներ, անեկդոտներ, ակնարկերիայի ուրվագծումներ, նա չի հրաժարվում (մանավանդ ավելի կուսմեր տալու համար: Եւ ժամանակակիցներին անձնապես ծաղրեվաղ ստադիաներում) և ժամանակակիցներին անձնապես ծաղրեվաղ ստադիաներում) և ժամանակակիցներին անձնապես ծաղրեվաղ ստադիաներում: Եւ ժամանակակիցներին անձնապես ծաղրեվաղ ստադիաներում և գերադասում է իր երգիծանքի զոհեր ընտրել կասկածելի վարկի տեր մարդկանց շարքից: Հորացիուսի ուրվագծումներն աչքի են ընկնում դիտողականությամբ և դիպուկ բնութայրման վարպետությամբ, բայց, նրա երգիծանքների զեղարվես-

տական գործողութեան մնջ ամենանշանակալի դործոնը, լեռնա- դատողութեանները գունազարդող ինտիմ-անձնական տոնն է: Փիլիսոփա-բարոյախոսի դպրոցական կերպարի փոխարեն, երգիծանքներում զրսեւորվում է իր կենդանի գծերով կոնկրետ անհատը, որը շափավորում և մարդկայնացնում է իդեալական «իմաստունի» վերացական սխեմատիզմը: Ամենաշատ զեղարվեստական ավարտվածութեամբ աչքի են ընկնում այն երգիծանքները, որոնց մեջ Հորացիուան ամենից շատ խոսում է իր մասին, իր ճաշակների և ձգտումների, իր կյանքի հանդիպումների մասին: Նա չի քաշվում իր «ստորին» ծագումից, հպարտութեամբ հիշում է ստրկութեանից ազատագրված հորը, որն ամբողջ ուժով հոգ էր տանում որդու մտավոր և բարոյական զարգացման մասին, և բուլբուլին չի ձգտում մոռացութեան տալ իր ռեսպուբլիկական անցյալը (I, 6): Դատապարտելով ուրիշների արատները, նա չի ծածկում սեփական բացերը և հեզնում է խիստ դատավորներին, որոնք իրենց աչքի գեղանք շեն տեսնում (I, 3): Նրա ձգտումների սահմանն է՝ մեկուսացած և անկախ կյանքը, հեռու քաղաքի աղմուկից և փառամոլութեաններին խաղից՝

Ահա թե ինչ էին իմ ցանկութեանները. մի փոքրիկ հողամաս,  
Մի այգի տան առաջ շատ մոտիկ, անընդհատ քըքա՛ն աղբյուրիկ,  
Դրան. կից մի գողտրիկ անտառիկ: Շատ ավել հասցրին  
Ասովածներն անմահ ինձ: Չեմ խնդրի այլևս այսուհետ ես կրեք  
Բացառյալ մի բանից՝ այդ տված պարզեներն ինձ համար պահպանեք:

Այս տողերով է սկսվում լավագույն երգիծանքներից մեկը (II, 6), իսկ ավարտվում է քաղաքի և դաշտի միան մասին հայտնի առակով, իբրև աղքատի անկախութեան առավելութեան իլուստրացիա: Փիլիսոփայական սխեմաների դոգմատիզմին Հորացիուսը բացասաբար է վերաբերվում և լիակատար իրավունքով սահմանադատվում է կինիկա-ստոիկյան գոհհիկ բարոյախոսներից, որոնք Հռոմում հանդես էին գալիս իրենց դիատրիբաներով: Բայց այդ բարոյախոսների քարոզը հաշվի էր առնում լայն խավերին, և, իսկապես, արձագանք էր գտնում այնտեղ, մինչդեռ Հորացիուսի հեզնական իմաստութեանը, նրա «պաշտպանյալ» հանգստի և շափավորութեան փիլիսոփայութեան հետ մատչելի էր կոլտուրական վերնախավի ընտրյալ ներկայացուցիչներին միայն, և նրա երգիծանքներն իրենք սկզբնապես նախատեսանվում

էին ոչ թէ հրապարակման, այլ միայն բարեկամների շրջանում  
ընթերցելու համար:

Գատողություն-երգիծանքին զուգընթաց հանդիպում է և  
պատմողական ձևը, որին դիմում էր նույնպես և Լուցիլիոսը: Հո-  
րացիուսը նորոգում է իր նախորդի սյուժեները՝ դատ (I, 7),  
անհաջող խնջույք (II, 8), ճանապարհորդություն (I, 5). Լուցի-  
լիոսը պատմում էր դեպի Սիցիլիա իր ճանապարհորդության  
մասին. ուղեգրությունների այդպիսի ձև էլ ընտրում է Հորացիու-  
սը («Ճանապարհորդություն Բրունդիզիում») և այդ լիրիկական  
շեղումներով երգիծաբանական պատմության մեջ անտիկ ընթեր-  
ցողը չէր կարող շտեմել «մրցակցություն» Լուցիլիոսի հետ: Որևէ  
անեկդոտ, զվարճալի դեպք, սուր խոսք՝ նյութ են տալիս կարճ  
պատմվածքների համար, որոնք հաճախ ծաղրանմանեցնում են  
էպոսի ոճը: Մտցվում են կատակերգության և միմի տիպական  
դեմքերը՝ պարասիտներ, ծաղրածուներ, ցանցառներ, հմաչողներ:  
Որոշ բանաստեղծություններ նույնիսկ պատմողական ձևի միմա-  
կան տեսարանների բնույթ ունենին. այդպիսին է, օրինակ, կենդա-  
նի և դինամիկ երգիծանքն աներես շաղակրատի հետ հանդիպե-  
լու մասին, մի ստահակ, որը ցանկանում է ներս սողոսկել Մեկե-  
նասի շրջապատը (I, 9):

Երգիծանքների երկրորդ ժողովածուն իր գեղարվեստական  
մեթոդով որոշ չափով տարբեր է առաջինից: Անձնական ուղղվա-  
ծությունը ավելի է թուլանում և շարադրանքն ընդհանրացած  
բնույթ է ընդունում: Բարդանում է նույնպես և կոմպոզիցիան:  
Երկրորդ դրբում գերակշռում է դիալոգիկ ձևը, ընդ որում, Հորա-  
ցիուսը սովորաբար սահմանափակվում է պասսիվ ունկնդրի դե-  
րով, իսկ դատողությունն ու պատմելը դրվում են այլ անձնակո-  
րության բերանը (հմմ. նման եղանակը էպոդներում): Գյուղական  
իմաստունը գովաբանում է կյանքի բարիքները փոքր կարողու-  
թյան պայմաններում և համեստ խնջույքի օգուտը (II, 2), խըն-  
ջույքների սիրահարը բաց է անում գաստրոնոմիական գիտության  
«գաղանիքները» (II, 4). կատակերգակ պոետ Ֆունդանիուսը  
պատմում է հարուստ նորեղուկի մոտ կատարված փառահեղ, բայց  
անհաջող ավարտված խնջույքի մասին (II, 8): Սատուռնալիաների  
անհաջող ավարտված խնջույքի մասին «շրջադարձված հասարակա-  
տոնականարությունների ժամանակ «շրջադարձված հասարակա-  
կան հարաբերությունների» իրադրությունը հնարավորություն է  
տալիս երգիծաբանին երգիծանքի օրեկտ դարձնելու. Հորացիուսի  
ստրուկն իմաստություններ լսելով ստոիկական քարոզչիչներից մե-

կի դննապանից, քննում է իր տիրոջ թուլությունները և ապացուցում, որ նա շարունակում է իր ցանկությունների և փոփոխական հակումների ստրուկը մնալ (II, 7): Մի այլ, նույնպես Սատուունալիաներին վերադրված, երգիծանքում՝ սնանկացած սպեկուլյանտ նորընծա ստոխլը հանգամանորեն բացատրում է իր դալրոցի պարադոքսային դրույթն այն մասին, որ բոլորը, բացի իմաստունից, հիմար են (II, 3): Իրեն հեռու պահելով «իմաստության» կրողից, Հորացիուսը բխցնում է երգիծանքի սուբեկտիվ սրությունը, բայց ըստ էության այն ավելի խիստ է դուրս դալիս և հաճախ նույնիսկ ավելի արդիական, քան այն ժամանակ, երբ շարադրությունը տարվում է հեղինակի կողմից: Եվ իր տոնով ավելի խիստ ու մռայլ է լինում այն երգիծանքը, որի գործողությունը տեղափոխված է, Մենիպի օրինակով, ստորերկրյա թագավորությունը (II, 5): Ողբեսւր գուշակ Տիրեսիասից ստանալով իր ճակատագրի մասին նախազուշակումը, դիմում է նրան եզրափակման հարցով՝ ինչպես վերականգնել կորած գուշքը, և Տիրեսիասը նրան խրատ է տալիս ժառանգություն սրաւու և անզավակ ծերուկների մասին հոգալու վերաբերյալ:

Երեք երգիծանք (I, 4, 10. II, 1) նվիրված են դրական թեմաների: Հորացիուսին հանդիմանում էին երգիծանքի շափազանց խստության, ժամանակակիցների անունները մարդկային բացերի իշխատարացիայի համար օգտագործելու մեջ: Գրականագետները ահաճութուն էին հայտնում այն առթիվ, որ նա հասարակական «ուցիտացիաներին» հանդես չէր գալիս և ծաղրում էին նրա ստեղծագործության դանդաղությունը: Վկայակոչելով Լուցիլիուսին և հին հունական կատակերգության կլասիկներին, Հորացիուսը պաշտպանում է արատների ազատ մերկացման երգիծաբանի իրավունքը և, դրա հետ միասին, նշում է իր գրական ծրագրի հիմնական գծերը: Երգիծանքը, ինչպես և կատակերգությունը, չի պատկանում վսեմ պոեզիայի ոլորտին և շատ կողմերով մոտենում է պրոզայի ոճին, բայց այդ պրոզայիկ Մուսան պահանջում է իր արվեստը, որի մեջ պոետի արժանիքները պետք է դուզակցվեն հեռուրի արժանիքների հետ իրենց սեղմությամբ, սրամտությամբ, հեզնանքի նրբությամբ: Լուցիլիուսը չի բավարարում այդ բոլոր պահանջներին. նա տառապում է շատախոսությամբ և ոճի անփթությամբ, որոնք առաջանում են ուսանալորների արագ և հեշտ գրելուց:



ներածական երգիծանքն արդեն ըստ էության հրածեշտ է հարձակողական-բանավիճական պոեզիայից. հեղինակը հավաստիացնում է, որ իր գրիչն այսուհետև ոչ ոքի չի կպչելու, բացի ինքնապաշտպանության նպատակից: Էպոդներում նշված անցումը դեպի մտորումների լիրիկան մի առժամանակ որոշեց պոետի ստեղծագործական հետաքրքրությունը: 23 թվին նա հրապարակում է երեք գրքով իր «Քանաստեղծություններ»-ը (Carmina)-անտիկ մեկնաբանները դրանք երբեմն օղա (ներբող) են անվանում, և այդ հունական անվանումը գործածական դարձավ Հորացիուսի մասին հետագա գրականության մեջ: Անտիկ «օղա» տերմինը չպետք է կապել միանգամայն պարտադիր հանդիսավոր պաթոսի մասին պատկերացման հետ, ինչպես այդ տեղի ունենի նոր ժամանակի «օղաիկ» ժանրում: «Օղան»՝ երգ, կամ երգի ոտանավորի ձևերով լիրիկական երկ է և, մասնավորապես, Հորացիուսի «օղա»-ները սովորաբար շատ հեռու են «վսեմ ոճից»: Իբրև գուսկլասիկական, Հորացիուսն իրեն համար օրինակներ է որոնում հին հունական լիրիկայում, բայց դրանք գտնում է ոչ թե Պինդարոսի հանդիսավոր պոեզիայում, այլ էոլիացիների մելիկայում:

Էպոդների արվեստիչական ոճից Հորացիուսն անցնում է մոնոդիկ լիրիկայի ձևերին: Նրա օրինակներն են այժմ՝ Անակրեոնը, Սապֆոն և առաջին հերթին Ալկյասը, և հոմեական պոետը իր գրական անմահությունը տեսնում է նրանում, որ նա «առաջինն է էոլիական երգը իտալիկական եղանակի վերածել» («Հուշարձան»):

«Էոլիական երգերը» հոմեական հողը փոխադրելը պետք է հասկանալ նույն կերպ, ինչպես և էպիդներում «փարոսյան չամբերի ցուցադրումը»: Դրանով Հորացիուսն ամենից առաջ նկատի ունի հոմեական պոեզիայի հարստացումը էոլիական լիրիկայի տողային և տնային ձևերով: 23 թվին հրատարակված ժողովածուն խաչտարզետ հերթադասությամբ պարունակում է բանաստեղծություններ, որոնք գրված են «ալկեական», «սապֆոյական», «ասկլեպիադական»՝ և ուրիշ տներով իրենց տարբեր վարիացիաներով, — ընդհանուր առմամբ տասնևերկու տնային ձև: Դրանք բոլորը միանգամայն նոր կամ գրեթե միանգամայն նոր էին Հոմերի

\* «Ասկլեպիադական» տունը կազմվում է «ասկլեպիադական» տողերի կրկնությունից ( — — — — — ) ուրիշ տողային ձևերի հետ գրանց դուպլիկատությունից:

համար\*, և դրանց հաղորդման մեջ դրսևորվում է այնպիսի տա-  
 ղաշափական վարպետություն, որը չգերազանցեց հոռմեական  
 հետազա պոետներից և ոչ մեկը: Այդ տակալին շոեսնված տա-  
 ղաշափական բազմազանությունն ընթերցողի առաջ կանգնում է  
 ժողովածուի հենց առաջին էջերից: Ժողովածուն բացվում է յու-  
 բահատուկ տնային զորահանդեսով, տարբեր տնային ձևի մի  
 շարք բանաստեղծություններով:

Վերարտադրելով էոլիական լիրիկայի տաղաշափական կա-  
 սուցվածքը և ընդհանուր ոճական տոնը, Հորացիուսը բոլոր մնա-  
 ցած կողմերով ընթանում է իր սեփական ուղիներով: Ինչպես և  
 էպոզներում, նա օգտագործում է զանազան ժամանակաշրջաննե-  
 րի գեղարվեստական փորձը և հաճախ ձայնակցում հելլենիս-  
 տական պոեզիային: Հին հունական ձևը հանդերձանք է հան-  
 դիսանում հելլենիստա-հոռմեական բովանդակության համար: Հո-  
 բացիուսը հին հունական լիրիկայից թարգմանություններ չունի: Մի  
 քանի օղաներ՝ համեմատաբար վաղագույններից՝ սկսվում են քաղ-  
 վածքով [այսպես, Ալկեսաից՝ «Ժամանակ է, որ խմենք», Կլեո-  
 վածքով [այսպես, Ալկեսաից՝ 1, 37], բայց այդ քաղ-  
 պատրայի մահվան առթիվ ոտանավորում 1, 37], բայց այդ քաղ-  
 վածքները մոտավորապես նույն ֆունկցիան ունեն, ինչպես մեր  
 ժամանակ էպիգրաֆը, և հետագայում բանաստեղծությունը զար-  
 գանում է միանգամայն ինքնուրույնաբար:

Հորացիուսի լիրիկան հազեցված է մտքով և այդ տեսակետից  
 միանգամայն հակադիր է իր հոռմեական նախորդ Կատուլ-  
 լուսի լիրիկային: Հորացիուսի երկերում միտքը և երևակայույնու-  
 նը գերակշռում են զգացմունքներին, և թեմատիկան անմիջական  
 նր սուբեկտիվ ապրումների ոլորտից շատ հեռու է անցնում: Արտա-  
 սուբեկտիվ ապրումների սխտեմում իրենց բունձ տեղով: Հորացիու-  
 կյանքի արժեքների սխտեմում իրենց բունձ տեղով: Հորացիու-  
 սը ելնում է մեկուսի փաստից կամ կոնկրետ իրադրությունից,  
 և բայց դրանք բխեցնում է անմիջական կենսական կոնտեքստից և  
 շրջապատում է խորհրդածություններով, որոնք ձևավորվում են  
 որպես հստակ կերպարների մի սերիա: Բովանդակալից պոեզիայի  
 ջատագույնը հակված է անտիկ լիրիկայում տրադիցիոն դիդակտիկ  
 դիրքն ընդունելու: Դրա հետ կապված են որոշ գծեր, որոնք որո-  
 շում են հորացիուսական օղայի սպեցիֆիկ կասուցվածքը:

Հորացիուսի բանաստեղծությունը գրեթե միշտ դիմումի ձև  
 ունի. պոետը հասցեագրում է որևէ երկրորդ անձի, և լիրիկական

\* Միայն սպեցիֆիկ տոնը հանդիսում ենք դեռևս Կատուլլուսի մոտ:

թեման ծավալվում է հեղինակի «ես»-ի և հասցեատիրոջ՝ «գու»-ի միջև: Մյուս ձևերը՝ մենախոսութունը կամ դիպուկը՝ պատահում են իբրև բացառություն (առաջին ժողովածուի 88 բանաստեղծություններից՝ ոչ ավել 6—7 դեպքից): Երբեմն Հորացիուսը դիմում է աստվածության, — այդ դեպքում սովորաբար մեր առաջ հանդես է գալիս հիմնը, — հաղվազեպ՝ անշունչ առարկայի, բայց ամենից հաճախ՝ մարդկանց, լինի այդ անձնապես անվանված անձնավորություն, կամ կոլեկտիվ («քնկերներ», «հոռմեացիներ»), կամ, վերջապես, վերացական «գու» (օրինակ՝ ժամանակակից հասարակության արատները մերկացնող բանաստեղծություններում): Թղաների գրեթե բոլոր հասցեատերերը իրական անձնավորություններ են, պոետի ժամանակակիցներ. բայց բնորոշ է, որ ոչ ոք, բացի Մեկենասից, չեն արժանանում մեկից ավելի դիմումի. դիմումն առաջանում է ոչ այնքան մտքեր և զգացմունքներ փոխանակելու ձգտումից, որքան գրական ձևի պահանջից, և երբեմն վեր է ածվում մի հասարակ նվիրման, որի նպատակն է հարգանք մատուցել հասցեատիրոջը: Ինչ վերաբերվում է հասցեատեր կանանց, որոնք կրում են հունական տարրեր անուններ, ապա այդ դեմքերի իրական լինելը միշտ անկասկած չի կարելի համարել: Եվ այնուամենայնիվ Հորացիուսը խստորեն պահպանում է ֆիկցիան, իբր թե նրա օդան նախատեսնված է այն անձնավորության համար, որին ուղղված է. դեռ ավելին, դիմումը երբեք հեռու վայրից «ուղարկելու» բնույթ չունի և այնպես է մատուցվում, որ կարելի է այն արտասանել կամ նույնիսկ քնարի հնչյունների տակ երգել հասցեատիրոջ ներկայությամբ, — այս կերպով պահպանվում է «էդիական երգի», Ալքեասի և Սապֆոյի լիրիկայի ոճը:

Հորացիուսի լիրիկայի մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դիմումը գրեթե միշտ իր մեջ պարունակում է ինչ-որ կամահայտնում կամ խորհուրդ: Պոետը ցանկություն է արտահայտում, մերժում է որևէ մեկի առաջարկը, աշխատում է ներգործել հասցեատիրոջ կամքի վրա: Կամահայտնումը նախատեսնված է նրա համար, որպեսզի կենսագործվի, և Հորացիուսի օդան ամենից հաճախ ուղղված է դեպի ապագան: Զուտ հայեցական մոմենտը, որը սովորական է նոր ժամանակի լիրիկական պոեզիայում և որը մենք արդեն հանդիպել ենք Կատուլլուսի մոտ, ամենից քիչ է բնորոշ Հորացիուսի օդաների համար:

Ըստ թեմատիկայի և ժանրային տարատեսակության օդաները հույժ բազմազան են: Դիմումներն աստվածներին՝ հորինված

անտիկ հիմնի բոլոր կանոններով, քաղաքական ուսանավորները  
և փիլիսոփայական խոհերը հերթագայում են՝ սիրային, խնջույքի,  
քնկերական լիրիկայի հետ, ծիծաղաշարժ ու մերկացնող երկերի  
և կենսական զանազան դեպքերի վերաբերյալ բանաստեղծու-  
թյունների հետ: Այս ամբողջ բազմաղանուվյան մեջ միաժամա-  
նակ հստակ կերպով առանձնանում են մի քանի հիմնական խրմ-  
բեր, որոնք ստեղծում են ժողովածուի յուրահատուկ դեմքը:

Այդ ամենից առաջ «Տորդորական» բանաստեղծությունները,  
խորհրդածությունների լիրիկան է: Հանդես գալով որպես լիրիկա-  
կան պոետ, Հորացիուսը չի հրաժարվում իսկական երջանկության  
պրոբլեմատիկայից, որը նրան զբաղեցնում էր երզիժանքներում:  
Հին հունական պոեզիայի գնումիկ ֆոնդի՝ էպիկուրյան փիլիսոփա-  
յության գրուլթների հետ միախառնվելուց ստացվում է յուրահա-  
տուկ զուպորդություն, որը դարերին է անցել իբրև «Տորացիու-  
սական իմաստություն»: Կյանքից անխուով օգտվելու իդեալը Հո-  
րացիուսի մոտ իր գրական կյանիկ արտահայտությունն է գտնում:  
Ժամանակի վազքի, տարվա եղանակների և լուսնի փուլերի փո-  
փոխություն, ծաղիկների թառամելու և մարդկային ճակատագրի  
հեղճեղուկության մեջ պոետը տեսնում է կյանքի կարճատևության  
հիշեցումը: Դալուկ մահը հավասարապես ծեծում է և աղքատնե-  
րի հյուղերը և հարուստների ապարանքները: Հարկ չկա մտահոգ-  
վել ապագայի մասին.

*Ընթացիկ օրը որսալ,  
ամեն բանից քիչ  
վաղվա օրվան հավատալ.*

Իսկապես ազատ և երջանիկ է միայն նա, ով օրն անցնելուց  
հետո կարող է ասել՝ «այսօր էլ ապրեցի», — և վաղվան օրը, ինչ-  
պիսին էլ որ լինի, չի կարող անցյալը՝ ո՛չ-անցյալ դարձնել:  
Խնջույքները, գինին, սերը — այս հաճույքները շպետք է արհա-  
մարհել, բայց և տանելի կյանքի հիմքը՝ հոգու անխոտվությունն  
է, հոգու, որը կարողանում է պահպանել բարեկեցության շափր և  
ժանր գրության ժամանակ հաստատունությունը: Հարստության  
ժարավր և պատիվների ձգտումը հավասարապես անօգուտ են:  
Բարձր դիրքն իր մեջ վտանգներ է թաքցնում՝

*Փոխարիկը հաճախ հսկա սոճիներն է ապանում,  
Բարձրարեքձ աշտարակի փլվածքը հույժ ծանր է լինում,*

Վիթխարի լեռներն են ամենից հաճախ իրենց գրավում  
Հարվածը կազմակի:

— այս հիշեցումը միանգամայն ժամանակին է Օգոստոսի օրը, որը նախանձով էր վերաբերվում ուրիշի ժողովրդականությանը: Հարստությունը լավ է միւշն այն ժամանակ, երբ կարողանում են նրանից օգտվել, բայց հարստությունների աճելով սովորաբար աճում են հոգսերն ու ազահությունը\*: Մինչդեռ փոքր կարողության տեր մարդու քունը խաղաղ է: «Ոսկե մեջտեղում», ցանկությունների կրճատման մեջ է երջանկության աղբյուրը, և Հորացիուսը հաճույքով նկարագրում է իր խաղաղ կյանքը սարինական կալվածքում:

Ըստ թեմաների շրջանի այդ մեղիտատիվ լիրիկան շփվում է դիտարկության հետ, բայց այն երբեք չի դառնում վերացական կամ հոգնեցուցիչ: Հասցեագրին ուղղված խրատական դիմումը մնում է նուրբ-քաղաքավարի զրույցի շրջանակներում. այդ զրույցն ավելորդ պահանջ չի ներկայացնում ոչ դեպի ուշադիր վերաբերմունքը, ոչ դեպի զրուցակցի ինքնասիրությունը, և պոետը կարողանում է զանազանակերպել իր սիրած մտքերի արտահայտության ձևերը:

Մերն ու գինին էլուիական լիրիկայի վաղեմի թեմաներն են: Հորացիուսը երբեմն ընդունում է սիրո և գինու երգչի դիրքը, բայց այդ կատարվում է առավելապես այն դեպքերում, երբ նա հարկադրված է մերժել իր հովանավորների առաջարկները, որոնք համառոտ են դրդում էին նրան նրպել «Օգոստոսի գործերը»: Հաճույքի փիլիսոփայությունը Հորացիուսի համար շարունակում է պահպանել իր «պաշտպանող» բնույթը: Ինչպես բնական է էպիկուրյանից սպասել, Հորացիուսի սիրային լիրիկան գուրս չի դալիս թեթև հրապույրների պոեզիայի սահմաններից: Նրա ժամանակակից հոռոմեական էլիգիկ պոետները ձգտում էին պատկերել խոր և ուժեղ սիրո զգացմունքները և բանաստեղծությունների ամբողջ զրքեր էին հրատարակում նվիրված միակ սիրածին, ցիկլեր, որոնց մեջ տեղ չկար մի այլ կնոջ անվան համար, բացի սիրո օբեկտից: Բոլորովին այլ է Հորացիուսը: Նա իր զգացմունքը պատկերում է որպես անցողիկ: Նրա ժողովածուում

\* Վուլգար տնտեսագետների հետ բանակովի ժամանակ Մարքսը հեղձորեն նկատում է՝ «Հորացիուսը, հետևաբար, ոչինչ չի հասկանում գանձ հավաքելու փիլիսոփայությունից... Պարոն Սենիորն այդ ավելի լավ է հասկանում»: Соу. т. XII, С. 1939, стр. 117—118.

Քերնում են բազմաթիվ կանացի դեմքեր, որոնք գրեթե անհատական գծեր չունեն, բայց բոլոր այդ երևակայական կիզիաները, Թիկեբրաները, Խլոենները իրենց պատվին ստանում են շատ քիչ քանակով բանաստեղծություններ, իսկ երբեմն հիշվում են մի անգամից ոչ ավել: Սուբեկտիվ զգացմունքների արտահայտման մեջ Հորացիուսի սիրային ներբողները շատ զուսպ են: Օգտվելով պլաստրապես արտաքին աշխարհի պատկերներով, Հորացիուսն ստեղծում է լիրիկորեն զվարթ սիտուացիա, որը ձեռք է բերում իր բացվելու ներքին շարժումը պոետի և՛ խորհրդածություններում, և՛ կամահայտնումներում: Հեղինակային «եսը» միշտ չէ, որ սիրային հույզի կրողն է: Հորացիուսը գերադասում է ուժեղ զգացմունքը ուրիշի մեջ գտնել: Իրրև կողմնակի դիտող, սիրային նախախորատկումների մեջ արդեն փորձառու, նա նկարագրում է այն փոթորիկները, որ սպասում են փոփոխական գեղեցկուհու անփորձ երկրպագուին, կրքի կործանիչ ներգործությունը առողջ, ամբակազմ իրաաստարդի վրա կամ վեներայի շար զվարճալիքները, որը լծակից է դարձնում այնպիսի մարդկանց, որոնք համապատասխան չեն իրար սշարտաքինով, ոչ հոգեկան հատկություններով: Հեղինակին իրեն վերագրվող սիրային աղբյուրները ամենից հաճախ գունավորված են թեթև հեգնանքով և խորասուզված են հորացիուսական կենսազգացման մթնոլորտը, որը, հազորդում է նրանց յուրահատուկ տոն, չնայած հին հունական և մանավանդ հելլենիստական սիրային պոեզիայի առանձին մոտիվների կրկնեղբայրները: Առաջին ժողովածուում միայն մի բանաստեղծություն է խոսում սիրո հետ կապված տառապանքների մասին, բայց այստեղ էլ մեր առաջ խանդի և ոչ թե սիրո շարժարանքներն են: Սենտիմենտալ սիրային էլեգիայի նորաձև թեմաներին Հորացիուսն արձագանքում է զավեշտական բանաստեղծություններով: Սերենադան (paraklausithyron) նրա մոտ պարողիական արտահայտություն է ստանում: Զուրկ չէ խորամանկ հեգնանքի շղարշից ու ժամանակներում փառաբանված Հորացիուսի սիրային բանաստեղծությունը (III, 9), գծավելուց հետո հանդիպման և հաշտվելու դիալոգիկ փոքրիկ տեսարանը. երեք զույգ-զույգ տներում ռեպլիկների սիմետրիկ հերթագայությունը անցնում է անցյալը, ներկան ու ապագան երկու սիրահարների, որոնք սիրո մեջ թեթև փոփոխություններ և հուզումներ են որոնում: Չափավոր բնույթով աչքի է բնկնում նույնպես և սեղանի լիրիկան՝ պոետը փառաբանում է «համեստ Քարոսին»:

Էպիկուրիականի համար ամենաշատ նշանակալի արժեքը բարեկամությունն է ներկայացնում: Բացեկամական ողջուններն ու սփոփանքը, խրատներն ու հորդորանքները այն լիրիկական յղորտն էին, որը սովորաբար զուսպ Հորացիուսի մոտ ավելի մտերմական կողորտ է ստանում: Հեղինակի համար բնորոշ լուրջի ու կատակի զուգակցումը, միջին գույների նրա արվեստը նպաստավոր հող է գտնում ընկերական լիրիկայի տաներում, և Հորացիուսի ամենից շատ նրբագեղ բանաստեղծություններից շատերը այդ բնագավառին են վերաբերվում: Այդպիսի բանաստեղծություններից մեկը (II, 7)՝ ներումն ստացած Պոմպեոս վարուսի՝ պոետի զինակցի Երուտոսի ռեսպուբլիկական բանակից հտալիա վերադառնալու առթիվ՝ թարգմանել է Պուշկինը («Աստվածներից ո՛րն ինձ վերադարձրեց»): Մի շարք օղաներ նվիրված են Մեկենասին, այդ թվում և այն հայտնի բանաստեղծությունը (II, 17), որի մեջ Հորացիուսը, վկայակոչելով աստեղային բարեկամությունը, որը կապում է նրա ճակատագիրը Մեկենասի ճակատագրի հետ, խոստանում է ավելի շապրել իր բարեկամից:

Առանձին կատեգորիա են կազմում բաղաբաղական և սոցիալական թեմաներ ունեցող օղաները: Պոետի հոմանավորները նրանից երկեր էին սպասում Օգոստոսի պատվին, բայց կայսրության հետ հաշտվելը Հորացիուսի մոտ տեղի էր ունենում ավելի դանդաղ, քան Վերգիլիուսի մոտ: Մենք արդեն տեսանք, որ իր վաղ ռեսպուբլիկական բանաստեղծություններից հետո Հորացիուսը մինչև 30-ական թվականների վերջը չէր շոշափում բաղաբաղական հարցերը և դրանց վերադարձավ միայն Անտոնիոսի հետ պայքարի ժամանակ, երբ այդ պայքարը իտալիական բնակչության համակրանքը Օկտավիանոսի կողմը դարձրեց: Ինչպես իր ժամանակին Ալքեասը, Հորացիուսը հոտմեական պետությունը պատկերում է իբրև մի «նավ», որին սպառնում է քամիների խաղալիք դառնալը:

Հուլիանք էիր դո՛ւ տաղնապ ինձ համար,  
Այժմ սեր դարձար՝ մտորմունք դժվար:

Կլեոպատրայի մահը արդեն նյութ է տալիս ցնձագին բանաստեղծության համար: Այսուհետև Օկտավիանոսը պատկերացվում է որպես մի առաջնորդ, որն Իտալիան դուրս բերեց բաղաբաղական պատերազմների փախուղուց և հոտմեական հասարակությունը փրկեց սոցիալական ցնջումների վտանգից:

խոսվություններից ես չեմ վախենում,  
Ոչ՝ սպանվելուց և ոչ էլ մահից, քանի դեռ երկիրն ամբողջ  
հեռարն ինքն է մեր հառավարում,

գրում է Հորացիուսը 24 թվին և հենց այստեղ էլ հիշում է Սպարտակի մասին: Նա փորձում է կաշարությունը մոտենալ երկու տեսակետից՝ ապոլիտիկ ստրկատիրոջ, մասնավոր մարդու տեսակետից, որը ցանկանում է անվրդով ճաշակել կյանքի բարիքները նոր կարգերի պաշտպանության տակ, և բարոյախոսի՝ որն ընկճված է հռոմեական հասարակության մեջ քաղաքացիական քաջարիության անկումով: Բայց թե մեկ և թե մյուս տեսակետի հետևողական կիրառումը կհակասեր պաշտոնական դրույթներին, որոնք պահանջում էին քաղաքացիական ակտիվություն և դրա հետ միասին սահմանափակում էին այդ ակտիվությունը: Ուստի Հորացիուսը հարկադրված էր արտակարգորեն զգուշ լինել քաղաքական ինքնաներին մերձենալիս: Մոտ անցյալի գեպերը՝ «հուր են, թաքնված խարուսիկ մոխիրների տակ», թեպետ ուսպուրլիկական արիստոկրատիայի հետ հաշտվելու Օգոստոսի բռնած կուրսը հնարավորություն է տալիս մի անգամ «Կատոնի հիստորանշ մահվան» մասին հիշատակությունը մտցնել այն բանաստեղծության մեջ, որը նվիրված էր պրինցիպսին և նրա ընտանիքին: Բայց Օկտավիանոսի գովարանություններն էլ 23 թ. ժողովածուում շատ գուսպ տոն ունեն, եթե համեմատելու լինենք դրանք այդ ժամանակի այլ հուշարձանների հետ, օրինակ՝ Վերգիլիուսի «Ֆեորգիկաների» կամ Հորացիուսի հետագա բանաստեղծությունների հետ: Օգոստոսը փառաբանվում է կապված նրա արտաքին և ներքին քաղաքականության այն լողունգների հետ, որոնք ընդունելի էին պահպանողա-ուսպուրլիկական թեքում ունեցող հռոմեական հայրենասերների համար: Հանդիսավոր, որոշ չափով «պինդարականացված» ոճով՝ տոկուն օղաների ցիկլում (այսպես կոչված «հռոմեական օղաներ»), III, 1—6) Հորացիուսը հանդես է գալիս որպես պահպանողական ոգով Օգոստոսի ազդարարած կրոնական և բարոյական ռեֆորմների պրոպագանդիստ: Իտալիայի առաջնությունը հելլենիստական արևելքի հանդեպ դիցաբանական սրբագործում է ստանում Յունոնայի մարգարեության մեջ, որը Հռոմին խոստացել էր աշխարհի վրա իշխանություն, պայմանով, որ Տրոյայի պատերը չպետք է վերականգնվեն: Կրոնական նորոգման պաշտոնական լողունգները կեղծ են հնչում ակեպտիկ Հորացիուսի բերանում, բայց բարոյական ռեֆորմի

բարոզը կապվում է պոետի համար սովորական՝ ցանկութիւնները սանձահարելու և ազահոսութիւն դեմ պայքարելու թեմաների հետ՝ էպիկուրյան մոտիվները մնջընդմիջվում են ստոիկյան «առաքինութեան» դավաբանութեան և ռազմական ոգու պրոպագանդայի հետ.

Գեղեցիկ ու բազր է մահը հայրենիքի համար:

Հինավուրց բարբերի և հին պարզութեան իդեալականացումը օտար չէ «քշով բավարարվելու» փիլիսոփային, և Հորացիուսի մեջ երբեմն արթնանում է երգիծաբան-բարոյախոսը, որը մտրակում է ժամանակակից արատները՝ անառակութիւնը, փափկակեցութիւնը և ազահոսութիւնը: Չարիքի հիմնական աղբյուրը կուտակման ծարավն է: Վիթխարի կալվածքները հիասքանչ սրայատներով և դեկորատիվ պարտեզներով՝ կրճատում են ցանքադաշտերի աւրածութիւնը և հողազրկում մանր հողատերերին՝

Դու պատրաստ ես քո բոլոր կիներանների

Հողը յւրացնել,

եվ կեղտոտ մանուկներով դժբախտ զույգին,

իրենց հայրերի աստուծու մտտ գաղթեցնել:

Այդպես չէր հին Հռոմում՝

Ամեն սր իր համար թեպետև շատ քիչ բան ուներ,

Բայց սեփականութիւնն ընդհանուրի անդադար ծաղկում էր:

Սկյութները, որոնք իրենց կյանքն անց են կացնում սալլում՝ վայրենի դոթերը, որոնք ծանոթ չեն հողի մասնավոր սեփականութեանը՝ կյանքի ավելի լավ եղանակ և ավելի մաքուր բարբեր ունեն՝ քան հռոմեացիք:

Բովանդակութեան բազմակողմանիութիւնն և իդեոլոգիական բարձր մակարդակ, ոտանավորի ձևերի նորութիւնը և բազմապիսիութիւնը, լիրիկորեն աշխույժ կերպարների գեղակերպութիւնը, ոճի սեղմ արտահայտութիւնը, որը քիչ բառերով զարգացնում է խոսքի կներգիայի մեծ հարստութիւնը—այսպիսիք են Հորացիուսի օղաների արժանիքները: Պոետը հասած այդ արվեստին ոճի կատարելագործման ուղիով աշխատանքով, անընդհատ ուսումնասիրելով լիրիկական պոեզիայի կլասիկներին. մեղուն, որը ջանասիրութեամբ հավաքում է ծաղիկների հյութը, այն պատկերն է:

որը Հորացիուսը գործադրում է իր ստեղծագործությունը բնութա-  
գրելու համար: Հրատարակելով իր Carmina-ների երեք զիրքը-  
ներածական բանաստեղծության մեջ նա դիմում է Մեկենասին,  
հույս հայտնելով, որ ինքը «լիրիկական պոետների շարքը կդաս-  
վի», այսինքն կդրվի հին հունական լիրիկայի հռչակված ներկա-  
յացուցիչների շարքին. ժողովածուն վերջանում է հռչակավոր  
«Հուշարձանով»՝

Հավերժական հուշարձան սղոծե՛կ կանգնեցրի:

Առաջինը կուպական երգերը ես փոխադրեցի

Իտալիկական եղանակի:

Զարգարի իմ գլուխը դեղձի պսակով,

Բարեհաճորեն պսակիր Մելպոմենեի դափնիով:

Ոսկերչորեն մշակված և մտքով հագեցած, բայց պուչներով  
ժլատ և որոշ շափով պաղ օղաները լիրիկան՝ ժամանակակիցների  
մոտ այն բնդունելությունը շգտավ, ինչպիսին որ սպասում էր  
հեղինակը: Այն համարում էին արիստոկրատական և ոչ բավա-  
կանաչափ ինքնուրույն: Հորացիուսը չի ծածկում իր հիասթափու-  
թյունը: Մի քանի տարի, շարունակ նա ջանում է հեռու մնալ  
Հռոմից, հրաժարվում է զուտ պոեզիայից և վերադառնում է իր  
«պուչյների» կիսափիլիսոփայական «պրոզայիկ Մուսային», բայց  
արդեն ոչ թե երգիծանքի բանավեճի ձևով, այլ դրական բովան-  
դակության գերակշռությամբ: 20-ական թվականներին լույս է  
տեսնում նրա «Նամականեր» գիրքը: Արձակ նամակները վաղուց  
անտի գործադրվում էին իրրե խրատական շարադրության ձևերից  
մեկը, բայց բանաստեղծական նամակներ նախորդ գրականու-  
թյան մեջ հանդիպում էին պատահական կերպով. Հորացիուսը  
նամակը դարձնում է գրական ժանր: Մի քանի բանաստեղծու-  
թյունների իսկապես որ նամակ են, բայց մեծ մասամբ նամակի  
կոնկրետ իրադրությունը միայն առիթ է մտքեր ու տրամադրու-  
թյուններ արտահայտելու համար: Փաստական կարգի հաղոր-  
դումներն միանգամայն չնչին տեղ են գրավում այստեղ: «Նամակ-  
ներն» ըստ թեմատիկայի հաճախ մոտենում են օղաների խորհրդ-  
դածություններին, բայց այդ նոր ժանրը առաջ է քաշում միան-  
գամայն այլ գեղարվեստական մոտեցում: Օղաների պլաստիկ  
ավարտվածությամբ իրադրությունը, իր հարուցած մտքերի հետ,  
անջատվում էր իր կենսական կապերից. նամակի ոճը մտցնում

է պատահական վայրկենական, անհատապէս ապրած մո-  
մենտ: Փիլիսոփայական ինժամների շուրջը դատողութիւնները  
ձուլւում են հեղինակի անձի ցուցադրման հետ բազմեւեւանդ կեն-  
սական իրադրութիւններում՝ կարվածքում, ուր նա անձնապէս  
զբաղւում է գյուղական աշխատանքներով, ճանապարհորդութեան  
ժամանակ, հշուրերը ընդունելիս, բնութիւնը նկատմամբ և զանազան  
հասակի ու սոցիալական դասիւնի — իմպերատորից մինչև սարու-  
կը — մարդկանց հանդեպ ռենցած վերաբերմութիւն մեջ: Մի շարք  
վայրկենական ուրվագծումներից կազմւում է կերպարը, ավելի հե-  
տաքրքրական, որքանով Հորացիուսը չի թաքցնում իր կենսազգա-  
ցութեան այն կողմերը, որոնք նրա անսակական դիրքերից «թուլու-  
թիւններ» են համարւում: Ինչպէս և երգիծանքներում, նա իրեն  
պատկերում է ոչ թէ որպէս ինչ որ կատարչալ իմաստուն, այլ  
միայն ձգտող, իր վրա աշխատող, բայց իմացող այն ուղին, որով  
պետք է դնալ: Նրա գրույթը գիտակցորեն էլիկիաիկական է՝

Հարց կտաս, թերև՝ ով է ինձ ղեկավարում և ինչ դպրոցի եմ պատկանում:  
Ուսուցչի խոսքերը կրկնելու դատապարտւած չեմ և չեմ էլ կրկնում,  
Սր կողմն էլ հողմը տանի՝ այնտեղ էլ արագորեն հշուր եմ վազում:

Բոլոր տատանումներով հանդերձ, գնպի առաքինութեան փի-  
լիսոփայութիւնը «հոռմեական օրաների» հեղինակը վերադա-  
նում է հաճույքի փիլիսոփայութեանը՝

Երբեմն գործին անձնատուր եղած, կյանքի ալիքների մեջ եմ խորատուզւում,  
Պահակ հազատարիմ արիութեան՝ նրան եմ աննկուն ուղեկցում.  
Մերթ էլ աննկատ դեպ Արիստիպի խրատներն եմ պանում —  
Չգտում եմ ինձ ենթարկել իր ու առարկա, և ոչ թէ նրանց ենթարկվել:

Հիմնականում այդ է Էպիկուրի ուղին: Հորացիուսը մնում է  
անտիկ մատերիալիզմի հողի վրա. աշխարհի աստվածային կա-  
ռավարման և հոգու անմահութեան գաղափարները, կախարդական  
և աստղագուշակական հավատալիքները, որոնք սկսել էին հուզի-  
ստիկ ժամանակակիցներին, նրա մեջ ամենաչնչին արձագանք  
անգամ չեն գտնում: Օրանների խորհումները գոնաւորվում էին  
լիբիկայի համար արագիցիոն կյանքի կարճատևութեան մոտիվ-  
ներով: «Նամակներում», ուր հեղինակն իրեն կապված չի դրում  
լիբիկական արագիցիայի հետ, մտքի այդպիսի տարրական քայ-  
լերը բացակայում են: Հորացիուսը ճգնաժողով չէ, բայց սերը, գի-  
նին և խնջույքները նրան չեն հրապուրում: Միայնութեան և գյու-

դրական կյանքի պարզություն մեջ նա որոնում է անդորրություն և հոգու ազատություն, ոչ-բանական ցանկությունների և կրքերի հաղթահարում: Մեկկենտսին ուղղած նամակում (1, 7) նա կիրթ կերպով, բայց հաստատորեն հայտարարում է, որ պատրաստ է հրաժարվել բոլոր պարգևներից, եթե դրանք սկսեն ճնշել նրա անկախությունը և ազատ անդորրը: Էպիկուրյան իդեալը, սակայն, պահանջում է որոշ կարողություն ունենալ, և ստրկատիրական հասարակության գործնական իմաստությունն՝ ստիպում է զիմել կոմպրոմիսների: Հորացիուսը չի նահանջում իր փիլիսոփայական աւուցիչներին հայացքներից, երբ ուրվագծում է հովանավորի վերարեմամբ կլիենտի վարքի կողերը (1, 17, 18), աչքալիսով արդարացնելով երբեմնի իր քնարած կյանքի ուղին:

Կայսրության պետական կառուցվածքը բոլոր դատողությունների լուելյան նախադրյալն է, բայց 23—21 թ. թ. ներքին քաղաքականության տագնապալից պայմաններում Հորացիուսը խուսափում է քաղաքական թեմաներից, հանդես գալով բացառապես մասնավոր կյանքի դաստիարակի դերում: Ինքնապատկերմանը նվիրված ժողովածուն վերջանում է գրքին ուղղված զիմումով, որի մեջ հեղինակը ներկայանում է ընթերցողին՝

Դեռ դու պատմիր, որ ես որդին եմ սուղ միջոցներով ազատված ստրուկի, Քնես համեմատ թևերս ընդարձակ ու լայն տարածած.  
Յրբան նվառանել իմ տոհմը ուզես՝ դու դրանով նրան շատ կողմատես.  
Հռոմի առաջին ուղմիկ մարդկանց ու նրանց տանը ցանկալի եմ ես:  
Հառակով ցածրիկ, վաղաժամ ճերմակ, պայծառ արեգակ խանդավառ սիրող:  
Արագ բռնկվող, նույնքան էլ արագ դեպ խաղաղություն հեշտութեամբ հակվող:  
Իսկ ով տարիքս քեզնից հարցնի՝ թող գիտենա նա՝ ապրել եմ ահա  
ես լիակատար քառասուն և չորս լրիվ գեկտեմբեր, այն պահից ի վեր,  
Երբ քնկեր դարձավ կյանքի բնթացքում մայրս՝ Կլպիդա, հարս Լուլի հետ:

«Նամակներ» գիրքը մի զգալի քաջ է անհատի ներքին կյանքը պատկերելու արվեստի իմաստով: Հորացիուսն ինքը հագիվ թե գիտակցելիս լինել իր ժողովածուի ամբողջ նշանակությունը. նա այդ ժողովածուն նույնիսկ պոեզիայի շարքը չէր դատում:

Բայց Հորացիուսի իբրև լիրիկական պոետի գործունեությունը տակավին ավարտված չէր: 17 թվին բացառիկ հանդիսաժողովումը կատարվում էին «գարավոր խաղերը»՝ «դարի նորոգման» տոնակատարությունը, այդ հանգամանքը պետք է նշանա-

վորեր քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանի վերջը և Հոռմի խաղաղ ծաղկման նոր դարադլիխ սկիզբը: Մանրակրկի մշակված բարդ հանգեսը, որի նմանը, պաշտոնական հայտարարության համաձայն «ղեռ ոչ ոք չի տեսել և երբեք այլևս չի տեսնի» և որին պետք է մասնակցեին Հոռմի ամենաականավոր մարդիկ, ավարտվում էր հիմնով, որը հանրագումարի էր բերելու ամբողջ տոնակատարությունը. հիմնը հանձնարարվեց Հորացիուսին: Պոետի համար այդ պետականորեն ձանաչումն էր այն տեղի, որ գրավում էր նա հոռմեական գրականության մեջ Վերգիլիոսի մահից հետո: Հորացիուսն ընդունեց հանձնարարությունը և հաջողությամբ կատարեց իր խնդիրը, պաշտամունքային պոեզիայի քարացած ֆորմոլաները դարձնելով բնության կենարար ուժերի փառաբանություն և հոռմեական հայրենասիրության ցուլց («Հորելյանական հիմն»):

Այժմ միայն, երբ Հորացիուսն արդեն պաղել էր դեպի լիրիկական թեմաները, նա դարձավ հանրահռչակ պոետ, հոռմեական լիրիկայի ձանաչված վարպետ: Այդ հանդամանքը նրա վրա նոր պարտականություններ էր դնում, մանավանդ, որ Օգոստոսը դիմում էր նրան նոր հանձնարարություններով: Անտիկ կենսագրության խոսքերի համաձայն իմպերատորը «գանում էր, որ Հորացիուսի երկերն ընդմիշտ կմնան, և, հորելյանական հիմնից դատ, նրա վզին փաթաթեց բանաստեղծություններ գրել ի պատիվ իր խորթ որդիներ Տիբերիուսի և Դրուզուսի՝ վինդելիկների դեմ տարած հաղթանակի և այդ նպատակով հարկավորեց Հորացիուսին, որպեսզի օգաների երեք գրքին, երկարատև ընդմիջումից հետո, միացնի շորթորդ գիրքը»: Այդ ոչ-մեծ ժողովածուն, հրատարակված մոտավորապես 13 թ., հին լիրիկական թեմաների վարիացիաներին ղուդրնթաց, պարունակում է իմպերատորի և նրա խորթ որդիների, Օգոստոսի արտաքին և ներքին քաղաքականության, նրա որպես խաղաղության և բարերախտության կրողի հանդիսավոր փառաբանությունները: Կայսրությունը վերջնականապես կայունացել էր, և օգաներում արդեն ռեսպուբլիկական իդեոլոգիայի հետք չէր մնացել: Աղոթքային դիմումն Օգոստոսին (IV, 5) ըստ իր տոնի մոտենում է այն արձանագրություններին, որոնք ի պատիվ իմպերատորի կանգնեցնում էին հունական համայնքներում, նրան փոխանցելով հելլենիստական «արքայական ձառերի» սովորական մոտիվները: Տիբերիուսի և Դրուզուսի հաղթանակների պատվին գրված բանաստեղծությունները կազմված են

Պինդարոսի դիֆիրամբների եղանակով: Այսպիսով, հեռանալով «էոլիական երգի» ոճից, Հորացիուսը այնուամենայնիվ պահպանում է նրա տաղաչափական կառուցվածքը և հրաժարվում է պինդարոսյան խմբային ներբողների արտաքին ձևը վերաբաղիչ լուսփոծներից: Պոեան այժմ արդեն գիտե, որ նրա ոտանավորներն անմահության են շնորհում, և Պինդարոսի պես փառաբանում է պոետիկ խոսքը որպես քաջարիության ամենաբարձրագույն պարգև:

Հորացիուսի կյանքի վերջին տասնամյակին է վերաբերվում նույնպես «Նամակների» երկրորդ գիրքը, նվիրված գրական հարցերին: Այդ կազմված է երեք նամակից: Առաջինը (մոտավորապես 14 թվին) ուղղված է Օգոստոսին, որն իր դժգոհությունն էր հայտնում այն առթիվ, որ նա մինչև այժմ ղեռ չի ընկել հորացիուսյան նամակների հասցեակիրների շարքը: Իմպերատորին ուղղված նամակը վերաբերվում է գրական քաղաքականության հարցերին: Հոմեական հասարակության որոշ մասի մեջ վարդանում էին արխախտական ճաշակներ, որոնք իրենց համար հենարան էին գտնում պաշտոնական իդեոլոգիայի պահպանողական թեքման մեջ: Հորացիուսը բանավիճում է հինավուրց հոմեական գրողների այդ խնկարկման դեմ և արդյունք չի սպասում գրաման վերածնելու փորձերից, որոնք, ըստ երևույթին, համակրում էր Օգոստոսն ինքն էլ: Հորացիուսը նույնքան բացասաբար է վերաբերվում նորածե պոետիկական դիլետանտիզմին: Այդ առանձնապես նկատելի է երկրորդ նամակում, կազմված առաջինից մի քանի տարի առաջ, տակավին մինչև ընդհատված լիրիկական ստեղծագործության վերադառնալը: Բայց Հորացիուսի տեսական հայացքների ամենալիակատար բացատրությունը գրականության և այն սկզբունքների վերաբերյալ, որոնց նա հետևում էր բանաստեղծական գործնական աշխատանքի ընթացքում, մենք գտնում ենք երրորդ նամակում («Նամակ Պիտոններին»), որը հետագայում՝ տակավին անտիկ ժամանակներում՝ «Պոեզիայի գիտություն» (Ars poetica) անունը ստացավ:

Հորացիուսի բանաստեղծական նամակը չի հանդիսանում տեսական հետազոտություն, ինչպիսին իր ժամանակին Արիստոտելի «Պոետիկան» էր, և չի հենվում որևէ խոր փիլիսոփայական հիմքերի վրա: Հորացիուսի աշխատությունը վերաբերվում է «նորմատիվ» պոետիկաների տիպին, որոնք պարզնակում են դոգմատիկ «կարգադրություններ», ելնելով որոշ գրական ուղղություն:

նից: Ըստ անտիկ մեկնաբանի հաղորդման, Հորացիուսի տեսա-  
կան աղբյուրը եղել է Նեոպտոլեմոս Պարիոնացու տրակտատը.  
որին նա հետևում է նյութի դասավորման և էսթետիկական հիմ-  
նական պատկերացումների հարցում: Պոեզիան ընդհանրապես,  
պոետիկ երկը, պոետը — Նեոպտոլեմոսի շարադրման այս ընթաց-  
քը պահպանեց և Հորացիուսը: Բայց հոմեռական պոետը նպա-  
տակ չի դնում սպառիչ տրակտատ տալ: «Նամակի» ազատ ձևը  
նրան հնարավորություն է տալիս կանգ առնել միայն մի քանի  
շատ թե քիչ ակտուալ հարցերի վրա՝ Հոմոսում գրական ուղղու-  
թյունների պայքարի տեսակետից: «Պոեզիայի գիտությունը»՝  
Օգոստոսի ժամանակի հոմեռական կլասիցիզմի կարծես թե տե-  
սական մանիֆեստն էր:

Իր գործունեության հենց սկզբից Հորացիուսը պայքար էր  
մղում զաղափարազուրկ ուղղությունների դեմ, որոնք պատվաս-  
տում էին միայն ձևական-ոճաբանական նվաճումներ: Իրրև տե-  
սաբան, նա դատապարտում էր «անբովանդակ ստանավորները և  
հնչեղ դատարկարանությունները» և ընդգծում բովանդակու-  
թյան առաջատար նշանակությունը. «խմաստությունը՝ ճշմա-  
րիտ գրական արվեստի հիմքը և աղբյուրն է»: Ինչպես Յի-  
ցերոնը հեռուորի, այնպես էլ Հորացիուսը պոետի համար փիլի-  
սոփայական կրթություն է պահանջում: Փիլիսոփայությունը տա-  
լիս է այն «կյանքի և բարքերի նմուշը», որը պահանջում է դեպի  
վերացական նորման կողմնորոշված հոմեռական կլասիցիզմի՝  
իդեալականացնող բնութագրության համար («էնեականի» մասին):  
Դրա հետ միասին, Հորացիուսն ընդունում է նեոտերիկների  
առաջ քաշած պոետիկ երկի երկարատև և մանրակրկիտ հղման  
լրջունդը: Հարկ է, որ գրվածքը

մի տալը տարի պահել առանց ցուցադրման,

մինչև այն վերջնականապես հասունանա: Զեյ վերաբերյալ ան-  
տարբերությունը այն թերությունն է, ինչով տառապում էր հին  
հոմեռական գրականությունը: Իդեալն է՝ «օգտակարը խառնել հա-  
ճելիի հետ»: Դրա համար էլ Հորացիուսն իրեն համար տեսական  
ղեկավար է ընտրում Նեոպտոլեմոսին, որը պոեզիային ինչպես  
ուսուցման, այնպես էլ զվարճացման նշանակություն էր վերա-  
գրում և տեխնիկական հմտություն ձեռք բերելը պոետի համար  
Նույնքան անհրաժեշտ էր համարում, որքան և տաղանդը: Նա  
ձշում է նաև այն օգուտը, որ պոետն ստանում է լուրջ քննադա-  
տությունից:

«Պոեզիայի գիտության» էսթետիկան՝ կլասիցիստականն է։ Երկը պետք է լինի պարզ, ամբողջական և ներդաշնակ։ Տարաշափությունը, շեղումները, նկարագրական էքսկուրսները, շինծուությունը — այս բոլորը՝ գեղեցկության կանոնի խախտումն են։ Չհիշատակելով անուններ և ստղություններ, Հորացիուսն իբրանավեճն ուղղում է և՛ նեոտերիկների դեմ, և՛ հռոմեական պոեզիայում ծագող ասիական-դեկլամացիոն ոճի դեմ, և՛ արխայիկանացնող ատտիկականների դեմ։ Բայց միայն գեղեցկությունը բավական չէ, եթե դրան չի միանում հուզական հագեցվածությունը, — այդ զուգակցության հասնելը հռոմեական կլասիցիզմի հիմնական գեղարվեստական խնդիրն է։ Պետք է անբաղար սովորել հունական պրակնության կլասիկներից. «հունական օրինակներին մի բաժանվեք ոչ ցերեկ, ոչ գիշեր»։ Սակայն, անհրաժեշտ պայմանն այն է, որ օրինակների արվեստն ինքնուրույնորեն յուրացվի, և ոչ թե ընդօրինակվի. եթե այդ պայմանն իրագործված է, ապա հին թեմայի ինքնուրույն մշակումը Հորացիուսին թվում է ավելի նշանակալից պոետիկ հաջողություն, քան պրակտության մեջ միանգամայն նոր նյութ մտցնելը։

Ինչպես Վերգիլիուսի, այնպես էլ իր սեփական դրույթներին համապատասխան, Հորացիուսը «հիանալիորեն կատարված» է համարում, եթե «բառերի վարպետորեն զուգակցումը հին բառը նոր դարձնի», դրանով այդ բառի մեջ նոր հնարավորություններ կհայտնաբերի։ Բայց Հորացիուսը նախազգուշացնում է լեզվական պուրիզմից, նոր բառերից վախենալուց, լեզվական շափից դուրս նորմավորումից, որը հաշվի չի առնում կենդանի լեզվի զարգացումը։

Առանձին պոետիկական ժանրերից Հորացիուսը մանրամասնորեն կանգ է առնում միայն դրամայի վրա։ Նրա հաստատած կանոնը նախատեսնում է կլասիկ տիպի ողբերգությունը։ Հետագա ժամանակի տենդենցները՝ երգչիկ խումբը դործողությունից կտրելու, պատմողական կողմն ուժեղացնելու և ուժեղ տեսողական էֆեկտների վերաբերյալ՝ Հորացիուսը ժխտում է։ Հելլենիստական տեսություններից է սկիզբ առնում այն հայտնի կանոնը, որ ողբերգությունը հինգ արարված պետք է ունենա. հետագայում այդ դարձավ եվրոպական կլասիցիզմի հիմնական նորմերից մեկը։

Եվրոպական կլասիցիզմի նորմատիվ պոետիկայի համար «Նամակներ Պիտոնների» երկը պակաս կանոնական նշանակու-

Քյուն շուներ, քան Արիստոտելի «Պոետիկան»: Բուալոյի «Պոետի-  
կական արվեստը» (L'art poétique, 1674) վերարտադրում է Հո-  
բացիուսի նամակի ոչ միայն տրադիցիոն վերտառությունը, այլև  
շարադրման ամբողջ ընթացքը, նյութի նույն դասավորութիւնով,  
մանրամասնութիւնների բազմաթիւ փոխառումով, որոնք հաճախ  
տրվում են գրեթէ բառացի թարգմանութիւնով:

Շատ շուտով Հորացիուսը «կլասիկ» ճանաչեց: Ինչպես նա  
ինքն այդ նախատեսնում էր («Նամակներ» I, 20) նրա երկերը  
դարձան հոմեական դպրոցի ընթերցանութիւնի և մեկնաբանու-  
թիւնի առարկա: Այնուամենայնիւ ուշ անտիկ ժամանակի համար  
Հորացիուսը ներքնապես օտար պոետ էր: Նրա փախուստը քաղա-  
քից, ներքին կյանքի մեջ խորասուզվելը, իր անձի մանրակրկիտ  
ուսումնասիրութիւնը — նախագուշակներ էին այն տրամադրու-  
թիւնների, որոնք հետագայում լայն տարածումն ստացան և ին-  
տենսիվ դարձան: Բայց այդ տրամադրութիւնները ուշ անտիկ  
անհատի համար ւերտորեն հյուսված էին կրօնական որոնումնե-  
րի հետ, որոնք Հորացիուսին բոլորովին չէին շոշափել: Նախա-  
տեսնված լինելով նրբակերտ գնահատողի համար, Հորացիուսի  
պոեզիան, իր «պաշտպանողական» էպիկուրյան դրուժնով,  
իր ժողովրդականութիւնով չէր կարող հավասարվել վերգիլիուսի  
երկերին, որոնք ընթերցողին և մատչելի և մոտ էին: Հորացիուսի  
Նշանակութիւնն այն է, որ նա, կանգնած լինելով նոր դարաշրջանի  
շեմքին, մի դարաշրջան, որն ավելի մեծ հետաքրքրութիւնով էր  
վերաբերվում մարդու ներքին աշխարհին, մնում էր անտիկ մտ-  
տերի արժանի հողի վրա և պահպանեց անցյալում մշակված օպ-  
տիմիստական-աշխարհային աշխարհայացքը: Այդպիսի գու-  
գակցութիւնը կարող էր գնահատվել շատ ավելի ուշ ժամանակ:  
Նշանակալի գրական հեանորդներ նա ունեցաւ միայն երգիծանքի  
բնագավառում: Անտիկ ժամանակաշրջանի վերջում Հորացիուսին  
ծանոթ լինելը նվազում է: Հեղինակն ինքը «Հուշարձանում» իր  
գրական անմահութիւնը շափում էր հոմեական պետութիւնի հա-  
վերժականութիւնով, բայց իրականում, նրա փառքի ամենամեծ  
ծաղկումը դեռ առջևն էր: Կարոլինգների ժամանակներից սկսած,  
հետաքրքրութիւնը դեպի Հորացիուսն աճում է: Նրա երկերի մեզ  
հասած 250 միջնադարյան ձեռագրերը՝ այդ հետաքրքրութիւնի ար-  
ձանն են: Վաղ միջնադարի ժամանակաշրջանում Հորացիուսի  
բարոյա-փիլիսոփայական երկերը՝ նրա երգիծանքները և մանա-  
վանդ նամակները՝ ավելի մեծ ուշադրութիւն էին գրավում, քան

լիրիկան: Իր հետ նոր գնահատական բերեց Ռենեսանսը: Հորացիուսը հումանիզմի օրորոցի մտա գոնվեց, երբ ծնունդ առնող բուրժուական անհատն իրեն հակադրում էր եկեղեցական աշխարհայացքին: Պետարբքան արդեն Հորացիուսին գնահատեց ոչ միայն որպես «էթիկական», այլ նաև որպես լիրիկական պոետի: Իրև նոր աշխարհազգացութեան լիրիկ արտահայտիչ, Հորացիուսը Վերածնութեան սիրած պոետը դարձավ, Վերգիլիուսի հետ զուգընթաց, իսկ հաճախ և ետ մղելով նրան: Տպագրութեան գլուտից հետո ոչ մի անտիկ հեղինակ այնքան անգամ չի հրատարակվել, ինչքան Հորացիուսը: Նրա ժառանգութեանը հակայական քննադատութեամբ հետևողներ և վերերգողներ առաջացրեց, ինչպես լատիններն, այնպես էլ ազգային լեզուներով, և մեծ դեր խաղաց նորեվրոպական լիրիկայի ձևավորման մեջ: Հորացիուսական իմաստութեանը աթեիստների ավետարանն է դառնում. Պետրոս I-ի սիրելի Լեֆորարը մահից առաջ կարգադրեց, որ իր համար կարդան Հորացիուսի ներբողը (II, 3) իրև մահվան մաղթանք: Հորացիուսի թեմաներն ու մտտիվները ուսական պոեզիայի մեջ են մտնում Կանտեմերի հետ, հանդիպում են Լոմոնոսովի, Դերժավինի, Պուշկինի, Դելվիգի, Մաշկովի մտտ, շխտելով արդեն ավելի փոքր նշանակություն ունեցող բազմաթիվ գրողների մասին: Սակայն Հորացիուսին յուրացնելու բնույթը նոր ժամանակ միակերպ չէր և նրա ստեղծագործութեան տարրեր կողմերը օգտագործվում էին զանազան դրական ուղղությունների կողմից: Այնտեղ, ուր XVIII դ. «անակրեոնիկան» գտնում էր անդորրութեան և հաճույքի հոգնած փրիստոփայություն, երիտասարդ բուրժուակիայի գրողները գնահատում էին սեալիստական և երգիծական թարմ շիթը: Որպես զեղարվեստագետ, որպես մտածող, որպես գրականութեան տեսարան Հորացիուսը մի շարք դարերի ընթացքում դմալլված երկրպագուներ էր գտնում, բայց հաճախ էլ խիստ դատապարտութեան էր հանդիպում: Դարերի ընթացքում նրա երկերի ճակատագիրը վերարտադրում է պոետի գրական դեմքը նրա ստեղծագործութեան բոլոր հակասութեաններով:

#### 4. ՀՌՈՄԵՍԱԿԱՆ ԷԼԵԳԻԱՆ

Պաշտոնական իդեոլոգիային և դրական կլասիցիզմին, որի ներկայացուցիչներն էին Վերգիլիուսը և Հորացիուսը, օպոզիցիա էր հանդիսանում մի այլ պոետիկական հոսանք. այդ հոսանքը շատ կողմերով զոդվում էր նեոտերիկների հետ և սիրային էլե-

գիտ էր մշակում: Հոռոմեական պոեզիայի այդ ճյուղավորումը կայսրութեան դոյաջման շրջանում արագորեն ծաղկեց և նույնքան արագորեն թառամեց; իրեն հուշարձան թողնելով շորս ականալոթ պոետներին՝ Գալլուսի, Տիրուլլուսի, Պրոպերտիուսի և Օվիդիուսի երկերը: Այդ հեղինակներից միայն ամենավաղագույնը՝ Գալլուսը մեզ չի հասել: Հոռոմում իր գոյությունը կարճատև պահպանած սիրային էլեգիան հետագայում շատ նշանակալի ճակատագիր ունեցավ, որպես եվրոպական սիրային լիրիկայի կարևորագույն անտիկ աղբյուրներից մեկը: Հոռոմեական էլեգիայի հետ անթիվ թելերով միացած են լատինականացնող միջնագարջան վազանտների («Սափառական պոետներին») և պրովանսալյան տրուբադուրների սիրային զեղումները, հոռոմնիստների լիրիկան և XV—XVII դ. դ. պոեզիան — բնդհուպ մինչև Գյոթեն, Բատյուշկովը և Պուշկինը: Օգոստոսի ժամանակներում էլեգիայի ծաղկումը նշանակալի չափով կապված է այն հանգամանքի հետ, որ սիրային հակումը օպոզիցիայի համար քողարկում է դառնում բնգեմ պաշտոնական իդեոլոգիայի, հիմնավորում՝ մասնավոր կյանքին անցնելու համար:

Հոռոմեական էլեգիայի համար բնորոշ է պոետիկական տեսադաշտի սահմանափակվածությունը. այդ սպառվում է մոտիվներով և սիտուացիաների փոքր շրջանով:

Սերը կենտրոնական կենսական այն զգացմունքն է, որը գոեթե տեղ չի թողնում մյուս հույզերի, մասնավանդ սոցիալական կարգի հույզի համար: Բայց էլեգիկ պոետի սերը գծված է, վշտայի. նա ծանր «սարկոսթյան» մեջ է դաժան «տիրակալուհու» ձեռքին և միայն մեծագույն դժվարությամբ կարող է վարթեցնել և ամրապնդել նրա բարեհաճությունը, մասնավանդ, որ օրիորդը հարուստ երկըրպագուներ է որոնում, իսկ սիրահարված պոետը նրան ոչինչ չի կարող առաջարկել, բացի մինչև մահ հավատարմությունից և հավիտենական փառքից իր ոտանավորներում: Իր տխուր ճակատագրի վրա փորձելով Ամուրի բոլոր քմահաճույքները, մանրամասնորեն ուսումնասիրելով տենչանքի ոլորապատույտ ուղիները, պոետը դառնում է «սիրային արվեստի» վարպետ, «տիրո գաստիարակ»: Ոտանավորներում նա զեղում է իր զգացմունքները, բաժանում է ուրիշների հետ իր փորձը. աշխարհի ամբողջ բնկալումն ընթանում է սիրային կարտի տեսանկյունով:

Այդ կենսական գրույթը բոլորովին էլ չի բխում որևէ կենցաղային իրականությունից: Այն կենսագրական ստակավ ավյալները

որը կա մեր տրամադրութեան ասկ հոռմեական էլեղիկ պոետների վերաբերելու, խիստ հակասութեան մեջ են գտնվում սիրահարված պոետի կերպարի հետ, ինչպէս նրանք նկարագրում են պոետին իբնեց երկերում: Այդ կերպարը գրական ֆիկցիա է, որը չի ենթարկվում կենսագրական մեկնաբանութեան: Հոռմեական պատմութեան որոշ էտապի հասարակական տրամադրութիւնները փոխադրելով սիրո ոլորտը, էլեղիան ստեղծում է սիրային հարաբերութիւնները մի ուտոպիկ աշխարհ, զարմանալիորեն հակադիր այն կենցաղային իրականութեան, որի ֆոնի վրա իբր թե ծավալվում են:

Սիրահարված պոետը, «սիրո ուտոպիչը», ծանր «ղինվորական ծառայութեան» մեջ է գտնվում Ամուրի մոտ:

Ամեն սիրահար զինվոր է, Ամուրն էլ ունի ճամբար.

Դու հալատա ինձ, ո՛հ Աստիկ, զինվոր է ամեն սիրահար,—

գրում է Օվիդիուսը: Ամեն մի զինվորական ծառայութեան, օրինակ կայսրին, հովաստրապես և ամեն մի քաղաքացիական գործունեութեան, նրա համար անհնարին է: Պոետի կյանքն անցնում է սիրային տոչորման և սրտի սիրածին «ծառայելու» մեջ. նա զիշերներ է անցկացնում նրա շեմքին և աղիողորմ սիրենադներ է երգում, ծառերի կեղևներին իր սիրածի անունն է փորագրում: Դրա շնորհիվ նրա ամբողջ ստեղծագործութիւնը նվիրված է սիրուն: Սիրային թեմատիկայի սկզբունքային բացատրութիւնը իրագործվում է շատ պարզ եղանակով. կողմնակի թեմաներով ամեն մի բանաստեղծութեան սրէէ հավելում է ստանում, որը գեթ արտաքուստ այդ բանաստեղծութեանը կապում է պոետի սիրային կյանքի հետ: Երբ Պրոպերցիուսն ուղում է նկարագրել հէնց նոր կառուցված Ֆերի նախահանգիստը, նա բանաստեղծութեանն սկսում է հեռեկայ խոսքերով՝ «Դու հարցնում ես, ինչու ուշացա»: Նավահանգստի գեղեցկութիւնը պատճառաբանութեան է դառնում ժամանակին տեսակցութեան չգնալու:

Պոետի սերը, որը նրա կյանքի կենտրոնն է դարձել, իհարկէ, թեթևամիտ՝ սիրո մի առարկայից մշուսին անցնող՝ զգացմունք չէ: Հռոմեական էլեղիկ պոետն իր բանաստեղծութիւնները նվիրում է միայն մեկ, իրական կամ երևակայական, սիրածի, որն ամբողջովին տիրապետել է նրա սիրտը: Եթէ այդ սիրածը իրականում գոյութեան ունեցող զեմք է, պետք է նրան կենցաղային պլանում պատկերացնել որպէս շատ թե քիչ բարձր ոճի կիսա-

պրոֆեսիոնալ հետերա, բայց նա պոետիկ կեղծանուն է ստանում, որը նրան դուրս է բերում կենցաղի շրջանակից: Պրոպերցիուսը և Տիբուլուսը դրա համար օգտագործում են աստվածների անունները (Նեմեսիս) կամ նրանց էպիտետները (Դելիա, Կինֆիա — Արտեմիս աստվածուհու էպիտետները): Օվիդիուսն իր սիրածին (հավանորեն՝ երեակայական) հատկացնում է հինհունական բանաստեղծուհի Կորիննայի անունը: Էլեգիկ պոետը վաղանցուկ հրապույր չի որոնում. նա երագրում է հաստատուն կապի կամ նույնիսկ ամուսնական կապի մասին: Սերը հավիտենական է — գոնե մինչև ոտանավորների հաջորդ ժողովածուն, որը կարելի է արդեն նվիրել նոր սիրածին: Այդ չի նշանակում, որ մի կնոջ փառաբանող գրքուկը չի կարող պարունակել մի ուրիշ կնոջ հասցեագրված սիրային բանաստեղծություններ, բայց այդ ուրիշն անունով չի հիշատակվի՝ այդպես է հռոմեական էլեգիայի գրական պայմանականությունը:

Պոետներն իրենք բոլորովին էլ չեն թաքցնում, որ իրենց երկերը ֆանտազիա են: Վտարված Օվիդիուսի հավաստիացումները, որ «նրա Մուսան կատակասեր է, իսկ կյանքը համեստ», որոշ շափով անարժանահավատ կարելի է համարել, ընդունելով որպես ինքնարդարացման փորձ: Սակայն, Պրոպերցիուսն էլ իր էլեգիաներն անվանում է «կեղծ երկեր», «մտացածին»: Սիրային ապրումը, եթե նույնիսկ կենսագրական հիմք ունի, այնուամենայնիվ պատկերվում է խիստ քճաղաբոված ձևով, հունական և հռոմեական սիրային պոեզիայի հարուստ ժառանգության օգտագործմամբ: Պոետը կրողն է դառնում այն իդեալականացված սիրո, որը սովորաբար դուրս էր բերվում առասպելի, ֆոլկլորային «հովիվների» կամ զավեշտական: դիմակների ոլորտը: Հռոմեական պոետները մասնավորապես լայնորեն օգտագործում են սիրո պատկերումը կատակերգության մեջ: Սիրահարված պոետի կերպարը շատ բանով հիշեցնում է կատակերգության «երիտասարդին», սիրահարված կնոջ կերպարը պահպանում է ազահ «հետերայի» մի շարք գծերը: Ստեպ-ստեպ առկայծում են և այլ զավեշտական դիմակներ՝ «երիտասարդի» առելի ակոսյան՝ «գինվորը», աղջկա շար ոգի՝ «կավատը»: Հռոմեական էլեգիայի առանձնահատկությունն այն է, որ այդ յուրահատուկ ոճազարդումը փոխադրվում է անձնական սիրային լիրիկայի բնագավառը, որ սերը կենսական առաջատար սկզբունքի, աշխարհագրացության հիմք դառնում:

էլեգիական ժանրը թելադրել էր արեքսանդրիական պոեզիան, որը էլեգիական «նուրբ» ոտանավորն օգտագործում էր որպէս սուքեկտիվ զգացմունքների արտահայտման առավելագուշն միջոցի: Հռոմեական պոետներն իրենց կապում են հելլենիստական էլեգիայի հետ, և Պրոպերցիուսը Կալիմաքոսին և Ֆիլիտին՝ համարում է իր օրինակները: Բայց Կալիմաքոսը սիրային էլեգիայի ցիկլեր չէր կազմում, և Կալիմաքոսին «հետեւելը» պետք է ըմբռնել միայն որպէս բնոճանուր ժանրերին և ոճաբանական դրույթներին հետեւում: Դրանք, նախ, խոշոր պատմողա-դիցարանական էլեգիաներ էին, որոնց մեջ պոետի սուքեկտիվ զգացմունքները կամ իսպառ չէին պատկերվում, կամ հանդես էին գալիս որպէս շքանակում սիրային առասպելների ցիկլի համար (օրինակ Անտիմաքոսի «Լիզա»-յի մեջ՝ մահացած սիրածի մասին հիշողութունները): Երկրորդ տարատեսակը՝ մանր բանաստեղծութուններն են էլեգիկ չափով, էպիգրամներ՝ նվիրված պոետի սիրային, զգացմունքներին: Ոչ մեկը, ոչ էլ մյուսը հռոմեական տիպի ճշգրիտ անալոգիա չեն, որը տարբերվում է պատմական էլեգիայից իր խտորեն արտահայտված «սուքեկտիվ» բնույթով՝ պոետին որպէս սիրո կրող ներկայացնելով, իսկ էպիգրամից տարբերվում է՝ իր մեծութեամբ և, որ ամենակարեւորն է, սիրային զգացմունքի յուրահատուկ ոճազարգումը: Հռոմեական տիպը, կարծես թե, երրորդ տարատեսակն է, որը ներկայացված չէ հելլենիստական պոեզիայի պահպանված հուշարձաններում:

Հռոմեական էլեգիկ պոետների անմիջական նախորդը Կատուլլուսն է, և եսրիային ուղղած իր բանաստեղծութուններով՝ Կատուլլուսն էլ է ջանում իր սերը վեր բարձրացնել առօրյայի մակարդակից, և նրա խոշոր բանաստեղծութուններէ շարքում կան լիապես «սուքեկտիվ» բնույթի էլեգիաներ: Այնուամենայնիվ Կատուլլուսի մոտ ևս բացակայում է հռոմեական էլեգիայի յուրահատուկ դիմը՝ սիրահար պոետի կերպարի բնորոշ ոճազարգումը և սիրային ապրումների որպէս կյանքի կենտրոնի մատուցումը:

Հռոմեական էլեգիայի ծագումը վերաբերում է I դ. 40—30-ական թվականներին, մոտավորապես այն ժամանակին, երբ Վերգիլիուսը «Էկլոգներում» խորացնում էր հովվական սիրո զգայնական կողմը: Սիրահար էլեգիկ-պոետի դիմակը իրականութունից՝ սիրո և պոեզիայի ուսուպիական աշխարհն անցնելու նույնպիսի մի փորձ է, ինչպէս և Վերգիլիուսի սիրահար պոետ-հովվի դիմակը: Նա մարմնացնում էր մասնավոր մարդու հենց նույն կյանքի

ի դեպքը և կենսական դրույթի առերևույթությունը էր ստեղծում պոլիտային քաղաքացիների համար սովորական պետական գործերին մասնակցելուց դուրս, հեռու հարատու թղթների և մեծարանքների ձգտումից: Ծնունդ առնելով ռեսպուբլիկայի կործանման ժամանակաշրջանի հասարակական դեպրեսիայից, էլեգիական դիմակը միաժամանակ ծառայում էր նոր կարգերից բավարարված չլինելն արտահայտելու համար: Կայսրության ամբաստանողում նա կորցրեց իր այժմեականությունը: Հոռոմեական էլեգիայի սերը անտիկ մարդու կարճատև ուտոպիան էր. բայց այդ ուտոպիայում սերը հասարակ հրապուրյի մակարդակից վեր բարձրացավ և կենսական արժեքի նշանակություն ձեռք բերեց:

Հոռոմեական էլեգիայի հիմնադիրը Գայոս Կոռնելիոս Գալլուան էր (մեր թ. ա. 69—26 թ. թ.), Օգոստոսի դպրոցական ընկերը, որը հետագայում պետական բարձր պաշտոններ էր զբաղում և զրկվելով կայսրի ողորմածությունից վերջ ավելի իր կյանքին: Այդ Գալլուսը, որի անվանը մենք արդեն հանդիպել ենք Վերգիլիոսի էկլոգներում, պատկանում էր նեոտերիկների կրտսեր սերունդին և լատիներենի էր թարգմանել էվիթորիոս Նալկիդացու «գիտական» բանաստեղծությունները: Պահպանվել է Պարթենիոսի կազմած և Գալլուսին նվիրված սիրային ասքերի մի ժողովածու, որը կարող էր պիտանի նյութ ծառայել էպոսում և էլեգիայում օգտագործելու համար: Ըստ երևույթին զիցաբանական գիտնականությամբ էին հագեցված սիրային էլեգիայի և այն ցիկլերը, որոնք Գալլուսը հորինում էր ի պատիվ ոմն Լիկորիդայի (միմական դերասանուհի Կիթերիդայի կեղծանունն է): Հետագա քննադատությունը Գալլուսի ոճը «ղաժան» էր համարում: Էլեգիական ժանրի վարպետներ համարվում էին Տիրուլուսը և Պրոպերցիուսը:

## 5. ՏԻՐՈՒՐՈՍ

Ալբիոս Տիրուլուսը ծնվել է, հավանորեն, մեր թ. ա. 50-ական թվականներին: Տիրուլուսի բանաստեղծությունների հրատարակությունը հին ժամանակներում կցված մի կենսագրական համառոտ նշումից հայտնի է, որ նա պատկանում էր «հեծյալների» ցենզային դասին: Մի անգամ պոետն ինքը նշում է, որ իր հոգային տիրապետությունները պակասել են համեմատած իր նախնիների ունեցածի հետ, բայց այդուհանդերձ Հորացիուսը նրան հարուստ մարդ է անվանում: Տիրուլուսը մոտ էր իր ժամանակի

ամենահայտնի հետորոններից և պետական գործիչներից մեկին՝ Մեսալա Կորվինի հետ և իբրև մերձավոր անձնավորութուն ուղեկցում էր նրան 30 թվի ակվիտանական արշավանքի ժամանակ: Այդ արշավանքի ժամանակ Տիրուլուսը ինչ որ բանով աչքի ընկավ և արժանացավ պատվավոր «գլխավորական պարզենների» քաջության համար: Մեսալայի արևելյան արշավանքի ժամանակ Տիրուլուսը նույնպես ուղեկցում էր նրան, բայց ճանապարհին հիվանդացավ և մնաց Կորկիրա կղզում, ինչպես ինքն է պատմում իր լավագույն բանաստեղծութուններից մեկում (I, 3): Մեսալայի և նրա գրական խմբակի հետ պոետն իր մոտկութունը պահպանեց մինչև կյանքի վերջը (մեռավ մեր թ. ա. 19 թ.):

Կողմնակի աղբյուրներից քաղած կենսագրական տվյալները լիովին չեն համընկնում այն պատկերացման հետ, որը կարող է ստեղծվել նրա էլեգիաների հիման վրա: Պոետն իրեն պատկերում է շատ ավելի աղքատ և ոչ-մարտական, քան իրոք եղել էր: Էլեգիական ոճազարդման կարիքը հասցնում է իրականության վերաձևավորման, ֆիկտիվ ավտոպորտրետ ստեղծելուն:

Ակտուալ, մանավանդ քաղաքական հարցերը Տիրուլուսը զանց է առնում լուսնյամբ: Հակառակ իր ժամանակի բոլոր պոետների Օգոստոսի անունը նա ոչ մի անգամ նույնիսկ չի հիշատակում, չի հիշատակում նաև այնպիսի պատմական դեպքերի մասին, որոնք ընդունված էր գրականության մեջ փառաբանել, ինչպես օրինակ Ակցիոմի ճակատալծարտը կամ պարթևների դեմ տարած հաղթանակը: Ժամանակակից դեպքերը Տիրուլուսի տեսադաշտն են ընկնում միայն այն բանաստեղծութուններում, որոնք նվիրված են իր հովանավոր Մեսալայի կյանքի հանդիսավոր դեպքերին: Առօրյա թեմատիկայի այդպիսի սխտեմատիկ անտեսումը չի կարող պատահական լինել և, համենայն դեպս, վկայում է Տիրուլուսի զսպված վերաբերմունքի մասին՝ Հռոմեական պետության մեջ կատարված քաղաքական հեղաշրջման վերաբերյալ: Այդ առավել ևս հավանական է, քանի որ Մեսալան ինքը, թեպետև Օգոստոսին մի շարք նշանակալի ռազմական ծառայություններ էր մատուցել, իր հոգու մեջ մնում էր ռեսպուբլիկական և հրաժարվում էր նոր, կայսրության ստեղծած քաղաքացիական պաշտոնների ընդունելուց:

Տիրուլուսն իրականությունից անցնում է երազանքների բնադավառը: Նա երազում է խաղաղ գյուղական կյանք, որպես ինչ

որ կորցրած դրախտ, հեռու ժամանակակից տաղնապներից և հուզմունքներից. արդիականը միշտ մատուցվում է բացասական նշանով, պատերազմի և հարստութուն կուտակելու ձգտմամբ: Իդեալը՝ «անդորր կյանքն» է, փոքրիկ ունեցվածքով, քչով բավարարվելը, անտարբերություն դեպի հարստությունը, փառքը, և պատիվը, որոնք «զինվորի» սիրահար երիտասարդների տրագիցիոն ախտյանի՝ բաժինն են: Տիրուլուսի հայացքը հաճույքով ուղղվում է դեպի անյայլը, դեպի «ոսկի դարը», դեպի բարքերի և հավատալիքների իդեալականացված պարզությունը: Իյուզական կյանքի պատկերը իդիլիկ երանգ է ընդունում, որը Տիրուլուսին դարձնում է հարազատ XVIII դ. պոետների համար: Նա սիրում է պատկերել գյուղական տոնակատարությունները, հինավուրց ծեսերը: «Առաքինությունը» այն գծերից մեկն է, որը Տիրուլուսը մտցնում է իր ինքնարնութագրության մեջ, բայց այդ շատ հեռու է Օգոստոսի սերմանած պաշտոնական քաղաքացիական առաքինությունից: Հոռմի պետական պաշտամունքները միայն մեկ անգամ են հիշատակվում հանդիսավոր բանաստեղծության մեջ, կապված Մեսալայի հետ, մինչդեռ կարծես դիտմամբ ընդգծվում է հետաքրքրությունը դեպի կրոնի պրիմիտիվ ձևերը, դեպի Հոռմ թափանցող արևելյան հավատալիքները: Տիրուլուսի «առաքինությունը» բաղադրիչ մասն է նույն ավտոպորտերտի, որի մեջ մըտնում են աղքատությունը, զզվանքը պատերազմից, գյուղական կյանքի ծարավը: Այդ ֆոնի վրա ոճագարդվում է սերը, ավելի հաճախ՝ սիրո մասին երազանքը: Իրականության և երազանքի միջև կոնտրաստը վշտալի տոն է ստեղծում, որը բարձրանում է մինչև պաթոսի, երբ սիրածի կերպարին հատկացվում են ժամանակակից բոլոր բացասական գծերը:

Սերը, գյուղական կյանքի իդիլիկ պատկերները, առաքինությունը, զզվանքը պատերազմից և ազահությունից, սակավատեությունը — այս թեմաներով՝ հավաքված առաջին ժողովածուի առաջին ծրագրային բանաստեղծության մեջ՝ սպառվում է Տիրուլուսի մոտիվների աշխարհը, և պոետը տարբեր կերպով կրկնում է դրանք իր էլեգիաներից յուրաքանչյուրում: Ելնելով որևէ ելակետային սիտուացիայից, նա ծավալում է իր սիրած թեմաների ամբողջությունը, ընթերցողին անց է կացնում մի ամբողջ շարք տրամագրությունների միջով, միացված որևէ առաջատար մոտիվով, շարունակաբար շեղվելով նրանից և վերստին նրան վերադառնալով: Տիրուլուսն անցումների վարպետ է. դրանք երբեմն

զուտ ասոցիատիվ անբջիւն սահող երևույթականութիւն են ստանում, և այդ ոճը լիովին համապատասխանում է պոետի ամբողջ ստեղծագործական երազական բնույթին:

Տիրուլուսին պատկանում են բանաստեղծութունների երկու ժողովածու: Առաջինի, հավանաբար, հրատարակված 27 թվից անմիջապես հետո, կենտրոնական դեմքը Դելիան է: Այդ կիրք իրականութեան մէջ դոյութիւն է ունեցել և կյանքում կոչվելիս է եղել Պլանիա, բայց Դելիայի կերպարում անտիկ «սիրածի» տիպական գծերը գերակշռում են անհատական բնութագրութեանը, և նույնիսկ այն կենցաղային շրջապատը, ուր Տիրուլուսը մտնում է իր հերոսուհուն, փոխվում է էլեգիայից էլեգիա, իսկ երբեմն էլ մեկ բանաստեղծութեան սահմաններում, այնպես որ այդ շրջապատի պատկերման իրական լինելը նշանակալի կասկածներ է առաջացնում:

Այդ առաջին ժողովածուում առանձնապես նկատելի է Տիրուլուսի էլեգիայի կառուցման «սահող» բնույթը:

Պոետը ցանկանում է իր վիշտը խեղդել գինու մէջ. Դելիան փակված և խստորեն պահվում է: Մաքերը նրան են ուղղված, և Տիրուլուսն իրեն պատկերացնում է նրա դռան առաջ, սպասում է դռանը, ազերսում է նրան («սիրենադայի» մոտիվներ), Դելիային խրատ է տալիս, թե ինչպես խաբել պահակներին: Վեներան ինքն է պահպանում հավատարիմ սիրահարների կյանքն ու անձեռնմխելիութունը: Պատահական անցյալները թող չհամարձակվեն հաշտեցնել սիրահար զուգին (պարողիա հոռոմեական օբեկներին ոճի): Եթե նույնիսկ որեէ մեկը բերանից խոսք թոցնի, ամուսինը չի հավատալու. այդպես խոստացել է կախարդը, կատարելով կախարդական ծեսը, բայց այդ ծեսը իրական է միայն Տիրուլուսի վերաբերյալ: Անսիրտ բան կլինի ուղեորվել պատերազմի, երբ հնարավորութուն կա տիրանալու Դելիային: Թող ուրիշները սխրագործութուն անեն, Տիրուլուսի համար բավական է գլուխական ազդատիկ կյանքը ընկերուհու հետ: Էլ ինչի՞ է պետք հարստութունն ու պճնանքը, եթե երջանիկ սեր չկա: Մի՞թե նա զայրացրել է Վեներային: Նա պատրաստ է քալել իր անգիտակցական մեղքը ամենաստորացնող ապաշխարանքով (արևելյան ծեսով): Իսկ նա, ով ծիծաղում է նրա դժբախտութեան վրա, ինքը կկրի աստվածութեան զայրույթը և երբեէ ձեռք կբերի սիրահարված ծերուկի զգվելի դեմքը: «Իսկ ինձ ներքի, Վեներա, իմ հոգին քեզ է ծառայում հավիտենական հավատար-

մությամբ: Ինչո՞ւ ես այրում, անողորմ, քո սեփական հունձը» (1, 2): Կամ՝ Դելիան անհավատարիմ է: Ես ապարդյուն հույս էի տածում, որ կարող եմ տանել այդ գծաությունը: Մինչդեռ, եբբ դու հիվանդ էիր, ես քեզ առողջացրի իմ ուխտերով և սրբազոր-ծություններով: Ես երազում էի քեզ հետ միասին գյուղական կյանքի մասին, այն մասին, որ դու կլինես իմ տան լիակատար տիրուհին, երեակալում էի, թե ինչպես մեզ կայցեի Մեսալան: Այդ հույսերը ցրվեցին: Ոչ գինին, ոչ մի ուրիշ սեր չեն կարող վերացնել կարոտը: Թող անիծյալ լինի կավատուհին, որ Դելիայի համար հարուստ սիրեկան գտավ: Պարզենք ոչնչացնում են սե-րը, և աղքատ բարեկամը ավելի լավ է հարուստից: Իսկ դու, որ այժմ գերադասվել ես ինձնից, ինքդ կկրես իմ ճակատագիրը, և դու էլ արդեն արխան ունես (1, 5):

Միայնակ, հիվանդ Տիբուլուսը պառկած է Կսրկիրում. տեն-դային փոփոխությամբ մեկը մյուսի հետևից ծագում են տարբեր պատկերներ՝ վախն օտարության մեջ մեռնելուց, հիշողություն-ները վատ նախազգացումների և նախագուշակությունների մասին մեկնելու ժամանակ, դովաբանումը ոսկե դարի ի հակադրություն արդիականության իր կործանման հաղարավոր ճանապարհներով, վերստին մտքեր վաղահաս մահվան մասին, պատկերներ դրախտա-յին երանության նրանց համար, որոնք սիրահարված են մեռել, Տարտարոսի շարշարանքներ՝ բարին շիամեցողների համար, հայ-րենիքում մնացած Դելիայի համեստ ընտանեկան կյանքը և երազ-ներ երջանիկ հանդիպման մասին, երբ Տիբուլուսը հանկարծակի հայրենիք վերադառնա (1, 3):

Երկրորդ ժողովածուն, նվիրված արդեն ոչ թե Դելիային, այլ շահամոլ Նեմեսիսին, աչքի է ընկնում հուզմունքով. սերը մոռյլ հոռետեսական կոլորիտ է ձեռք բերում:

Տիբուլուսի առանձին մտփիվները մեծ մասամբ քիչ են ինքնու-րույն և անտիկ սիրային պոեզիայի «ընդհանուր տեղերն» են ներ-կայացնում, բայց դրանց միացման վրա դրված է հեղինակի յու-րահատուկ անհատականանության կնիքը: Հազվադեպ հոգալով սյուժետային սիտուացիայի կաշտնության մասին, նա տոնի և տրամադրության միասնություն է պահպանում: Տիբուլուսը հաղ-թահարում է «գրականականությունը» և հոռմեական պոետներից քչերից մեկն է, որ չի ցուցադրում իր «գիտնականությունը»: Անդ-լի թափանցկությամբ և մաքրությամբ, բառերի խիստ ընտրու-թյամբ Տիբուլուսը հիշեցնում է Կեսարին և անտիկ քննադատու-

Սյունը նշում էր նրա բանաստեղծությունների «հղիվածությունն»  
ու «նրբագեղությունը»:

Հին ժամանակների հրատարակություններում Տիրուլուսի երկու գրքին միացված էր մի երրորդ գրք, որը պարունակում էր դանազան հեղինակների նյութեր, կապված, ըստ երևույթին, Մեսալայի շրջապատին պատկանելու հետ: Այդ գրքի երկու վերջին բանաստեղծությունները պատկանում են Տիրուլուսին: Այդ գրքն սկսվում է էլեգիաների ցիկլով, որ գրել է Տիրուլուսի հետևորդ Լիգդամբը (հավանորեն, կեղծանուն է): Հետաքրքրական է կարճ բանաստեղծությունների մի ցիկլ (III, 13—18), որոնց հեղինակը Մեսալայի ազգականուհի Սուլպիցիան է: Դեպի անհամբավ երիտասարդը՝ հոմեական արիստոկրատուհու տաժած սիրո առանձին մոմենտների այդ ֆիքսացիան նյութ է ծառայել գրական մշակման համար պրոֆեսիոնալ պոետի կողմից և կազմում է մի այլ ցիկլ (III, 8—12), որը թերևս պատկանում է Տիրուլուսին:

## 6. ՊՐՈՊԵՐՅՈՒՄ

Մեզմ, որոշ շափով մելախոնիկ Տիրուլուսի հակապատկերն է ներկայացնում կրակոտ Սեխաուս Պրոպերցիուսը (ծնվել է մոտավորապես 49 թ., մահացել է 15 թ. մեր թ. ա.): Այդ պոետի կյանքի մասին հայտնի է միայն այն, ինչ որ ինքը հարկ է համարել հաղորդել իր մասին: Ըստ երևույթին, որոշ շափով նա երիտասարդ էր Տիրուլուսից, ծնվել է Ումբրիայում, Ասիսում քաղաքում (Assisium — այժմյան Ասիգի), վաղ զրկվել է հորից: Պրոպերցիուսի ազգականները մասնակցում էին քաղաքացիական պատերազմին Օգոստոսի հակառակորդ Լյուցիուս Անտոնիոսի (եռուպետ Մարկուս Անտոնիոսի եղբոր) կողմից, և ընտանիքը տուժեց վետերաններին հողաբաժիններ տալու ժամանակ: Սակայն Պրոպերցիուսը կապեր ուներ հոմեական արիստոկրատիկ տոհմերի հետ, ընդ որում այնպիսիների, որոնք հետագայում, մեր թ. I դարի կեսերին նշանակալի դեր էին խաղում կայսրների դեմ սենատական օպոզիցիայի մեջ: Մեր թ. ա. 20 թվի սկզբին Պրոպերցիուսին մենք հանդիպում ենք Հռոմում, արիստոկրատիկ և գրական երիտասարդության շրջանում: Նրա բանաստեղծությունների առաջին գիրքը լույս տեսավ Տիրուլուսի առաջին գրքի հրատարակելուց առաջ:

Այդ ժողովածուն վերնազրվեց «Կինթիա» (Cynthia) անունով,

որը կեղծանունն է ոմն Հոստիայի: Այստեղ արդեն երևում են պրոպերցիոսական ոճի հիմնական տռանձնահատկությունները: Երկտասարդ պոետը հարում է էլեգիայի «գիտնական» ուղղությանը, որի ներկայացուցիչը Կոռնելիուս Գալլուսն էր: Նրա անհատական զեղումներին միանում է դիցաբանական, հաճախ սակավ հայտնի նյութի օգտագործումը, և պոետի սերը ոճազարդվում է հերոսական կերպարների ֆոնի վրա: Հելլենիստական վարպետների օրինակով (Կալիմաքոսի և ուրիշների) Պրոպերցիուսն իր էլեգիական ստեղծագործությունը հակադրում է էպոսի ոճին. նսցանկանում է միայն սիրո պոետ լինել, իսկ «Միմներմոսի ոտանավորը սիրո մեջ ավելի ուժ ունի, քան Հոմերոսը»: Հատկապես Պրոպերցիուսի համար սերը դառնում է կյանքի այն կենտրոնը, որը հոսմեական էլեգիային իր յուրահատուկ կոլորիտն է հաղորդում: Կինթիան է առաջին, միակ և հավերժական սերը և պոեզիայի միակ աղբյուրը. առանց նրա ոտանավորներ չկան: «Շանը» սերը դեպի անհասանելի, քմահաճ և անհաստատ Կինթիան պատկերված է իրրև մի զգացմունք, որը ամբողջովին համակել է պոետին և նրան անկամ տառապանքների դատապարտել: Պրոպերցիուսը հազվագեպ է խոսում իր ուրախությունների մասին. նրա հիմնական թեմաներն են՝ տենչանքի տանչանքները, զայրույթի և խանդի պոռթկումը, հավատարիմ երկրպագուի մինչև մահ — նույնիսկ մահվանից հետո — համբերատար հնազանդությունը, մոտալուտ մահի սպասումը: Այդ սիրո մեջ դեպքերը բազմաթիվ չեն և միակերպ են՝ խոռովելն ու հաշտվելը, խոսյանի հանդես գալը, անջատում, բարեկամների միջնորդություն:

Փողովածուն կազմված է մտածված. բանաստեղծությունները զետեղված են կոնտրաստի սկզբունքով կամ կազմում են մանր ցիկլեր: Ներածական էլեգիան, որն սկսվում է «Կինթիա» բառով, նկարագրում է «խելակորույս» և «հիվանդ» հեղինակի հոգեկան վիճակը. այդ կարծես հիմնական տոն է տալիս ամբողջ գրքին: Հաջորդ բանաստեղծությունները ծանոթացնում են հերոսուհու հետ. պճնասիրության և կոսմետիկայի դեմ նախազգուշացման ձևով փառաբանվում է Կինթիայի բնական գեղեցիկությունը, նրա բանաստեղծական և երաժշտական շնորքը: Մշակելով հելլենիստական սյուժեն այն մասին, թե ինչպես պոետը վերագառնալով ուշ խնջույքից իր սիրածին քնած է դառնում տանջալից սպասումից հետո, նրա կերպարի այդ կողմերին միացնում է հավատարմության, համեստության, բայց նաև սնոտիապաշտության գծեր:

Մի շարք դիմումները բարեկամներին, որոնք փորձում են այս կամ այն միջոցով բաժանել սիրահարին Կինթիայից, լրացնում են պոետի ծանր «սարկոսթյան» պատկերը. նրա համար կյանքն անհնարին է առանց «անողոք տիրուհու»: Երկու բանաստեղծություններ, որոնք հասցեագրված են էպիկական պոետ Պոնտիկին և հակադրում են էլեգիան ու էպոսը, շրջանակ են ծառայում ցույց տալու սիրո համար բանաստեղծական խոսքի հզորությունը. Կինթիան, մտադրվելով հեռանալ ախոյանի հետ, մնում է Հոմոմոմ, հրապուրված Պրոպերցիուսի ոտանավորներով:

Առաջին ժողովածուի էլեգիաները ամենից հաճախ բարեկամներին կամ Կինթիային ուղղված դիմումի բնույթ ունեն, բայց հանդիպում են նաև մենախոսություններ՝ գանդառներ անտառի մենություն մեջ կամ անապատային ծովափին, ուր իբր թե ընկե՞ր է նավը, որը տանում էր հեղինակին նրա սիրո առարկայից: Բնորոշ է, որ մենություն լիրիկայի համար Պրոպերցիուսը հարկ է համարում յուրահատուկ սիտուացիաներ ստեղծել: Պրոպերցիուսի լարված և պաթետիկ էլեգիան իր մեծությամբ զգալիորեն կարճ է, քան Տիրոլուսինը, շնայած դիցաբանական օրինակներով և համեմատություններով նրա ծանոթեռնվածությունը, Պրոպերցիուսը խուսափում է շեղումներից և չի հեռանում էլպիեոսային սիտուացիայից: Սուր և խոր ապրումներ պատկերելու համար նա ստեղծում է դժվարացված, զրգոված պայծառորեն տեմպերամենտային ոճ, հարուստ համարձակ կերպարներով և բառերի զուգակցությամբ, հատու, անսպասելի անցումներով: Իրականությունից նա չի հեռանում երազանքի բնագավառը, ինչպես Տիրոլուսը, նա մնում է հոմեոկական արդիականությանը կառչած, բայց դրան արձագանքում է սիրո բանաստեղծի դիրքերից: Առաջին գիրքը պարունակում է նաև ուղղակի քաղաքական հարձակում, կսկծալի հիշողություն այսպես կոչված «պերոզինյան» պատերազմի մասին, ուր սպանվեց Օգոստոսի դեմ կռվող Պրոպերցիուսի ազգականներից մեկը:

Էլեգիաների երկրորդ գրքում, որը պարունակում է 27—25 թ. թ. բանաստեղծությունները, Պրոպերցիուսը շարունակում է գանազան կերպով հանդես բերել Կինթիայի թեման: Ապրումները դառնում են ավելի բազմազան և բարդ. հանդես են գալիս ավելի շատ ախոյաններ, Կինթիան անհավատարիմ, թեթևամիտ և շահամոլ է, իսկ երբեմնի հավատարիմ սիրահարը արդեն դարձել է բողոք հանդիպած գեղեցկությունների երկրպագու: Է՛լ ավելի են

ուժեղանում ողբերգական պաթեաիկայի տոները: Պոետն ընկնում է Մեկենասի խմբակը, այսինքն այն պոետներին շրջանը, որոնք ընդունել են նոր կարգը: Արդեն հանդիպում ենք հարգալից հիշատակումներ Օգոստոսի մասին: Այնուամենայնիվ նրա ամուսնական օրինագծերի դեմ Պրոպերցիուսը միանգամայն որոշակի բանավեճ է մղում և հեզնում է հինավուրց առաքինությունը վերականգնելու փորձերը: Կյանքը հանուն սիրո հակադրվում է Օգոստոսի ներքին միջոցառումներին և նվաճողական քաղաքականությունը: Մեկենասի առաջարկած Օգոստոսի պատմին էպիկական պոեմ գրելու աշխատանքից Պրոպերցիուսը կտրականապես հրաժարվում է: Այդ գրքի երկու էլեգիաները մեծ ժողովրդականություն ստացան նոր ժամանակ՝ Ամուրի նկարագրությունը նրա ատրիբուտների մեկնաբանությամբ (II, 12) և պատմվածքն այն մասին, թե ինչպես Ամուրներին բազմությունը բռնել է գիշերը թափառող պոետին և շղթայակալ տուն է տարել՝ նրան սպասող ընկերուհու մոտ (II, 29): Ժողովածուի ներածական և եզրափակման բանաստեղծությունները գրական ծրագիրն են պարունակում՝ շարունակելով հոռմեական նեոտերիկներին և Գալլուսի տրագիցիաները, պոետը ներշնչվում է իր սիրուց և ընթանում է էլեգիայի հելլենիստական վարպետների՝ Կալիմաքոսի և Ֆիլիտի ուլիով:

Այդ գրողներին հավատարիմ լինելու մասին Պրոպերցիուսը հայտարարում է և երրորդ գրքում (մոտավորապես 22 թ.), Պարգորեն կրկնելով Հորացիուսին, որը դրանից փոքր ինչ առաջ լույս ընծայեց օղաների իր ժողովածուն, որը վերջանում էր «Հուշաբձանով»: Պրոպերցիուսը պնդում է, որ ինքն է առաջինը Խուալիա փոխադրել Կալիմաքոսի և Ֆիլիտի պոեզիան (III, 1), և որ նրա բանաստեղծություններն ավելի հավերժական են, քան բուրգերն ու տաճարները (III, 2): Կալիմաքոսի պես, նա իրեն տեսնում է Մուսաների լեռը տարված, ուր Ապոլոնը և Կալիոպեն արգելում են նրան աշխատել էպոսի վրա և առաջարկում են մնալ սիրային պոեզիայի սահմաններում (III, 3): Այնուամենայնիվ, այդ ժողովածուն նախապատրաստում է նոր թեմաների անցնելը: Պրոպերցիուսը մնում է սիրո բանաստեղծ, շարունակում է հեզնորեն վերաբերվել այն աղմուկին, որը բարձրացված էր իբր թե հայրենասիրական նպատակների շուրջը՝ պարթևական արշավանքի առթիվ, բայց Կինթիայի կերպարն արդեն առաջատար դեր չի խաղում, և նրա անունը հազվադեպ է հանդիպում: Նախկին ոճով բանաստեղծությունների հետ զուգընթաց պատահում են վերացական դատու-

զուժյուններ՝ տենչանքի ուժի, շահամու սիրտ մասին՝ առանց  
ցայտուն սուրեկտիվ տոների, կամ էլեգիաներ, որոնց մեջ սիրա-  
յին մոտիվը լոկ ավելցուկ է միանգամայն կողմնակի թեմատիկա-  
յի և, ընդ որում, Մեկենասի առաջարկներէ ոգով թեմաների՝  
Ակցիումի ճակատամարտի փառաբանմանը կամ Իտալիայի գովա-  
բանութեանը: Հաճախ խոսվում է սիրուց ազատվելու ցանկութեան  
մասին: Պրոպերցիուսի առաջ հարց գրվեց այն մասին, որ նա  
իրբև էլեգիկ պոետ պաշտոնական իդեոլոգիայի համար օգտակար  
կլինի, եթե հետեւելով իր ուսուցիչ Կալիմաքոսին, կտա «Պատճառ-  
ները» (Aitia), հոմեական զուգահեռ՝ էլեգիական «գիտական»  
բանաստեղծույթուններ հոմեական պետական պաշտամունքի  
տոների և ծեսերի մասին: Պրոպերցիուսը հնարավոր չհամարեց  
մերժել այդ առաջարկը, և երրորդ գիրքն ավարտվում է ըստ ձևի  
արտակարգորեն խիստ՝ Կինթիայից, այսինքն սիրային պոեզիա-  
յից, հրաժարումով:

«Գիտական» պատմողական էլեգիաների ցիկլ ստեղծելու գա-  
ղափարը շիրականացավ: Պրոպերցիուսի վերջին ժողովածուն,  
հրատարակված բավականաչափ երկարատև ժամանակից հետո,  
ոչ վաղ 16 թ., բացվում է մի բանաստեղծութեամբ, ուր պատմվում  
է հոմեական «Պատճառներ» գրելու ծրագրի խորապահման և սի-  
րային թեմատիկային վերադառնալու մասին: Պրոպերցիուսն ազ-  
գարարում է իր բարի մտադրութեաները՝ «հոմեական Կալիմա-  
քոս» դառնալ և երգել Հոմի պատմական և պաշտամունքային  
արժանիքները, բայց նրան ընդհատում է աստղագուշակը, նախա-  
գուշակելով միտումի լիակատար անհաջողութեան: Պրոպերցիու-  
սը ձեռնամուխ է եղել մի գործի, որին նա ընդունակ չէ, մինչդեռ  
նա դատապարտված է սիրտ ստրուկ մնալու: Գիրքը երկակի բնույթ  
ունի, պարունակելով իր մեջ և գիտա-գիցարանական և սիրային  
էլեգիաներ: Գիտական նյութները մշակված են բավականաչափ  
դժգույն: Պոետն իրեն հարազատ ուղորտում է զգում միայն այն  
ժամանակ, երբ պատմում է թշնամու առաջնորդի վրա սիրահար-  
ված Տարպեայի դավաճանութեան մասին (IV, 4): Գիցարանական  
էլեգիաներին է հարում նույնպես Ակցիումի հաղթանակի մասին  
հույժ շողորրոթով բանաստեղծութեանը (IV, 6): Բայց սիրային  
էլեգիաներն էլ արդեն նախկին բնույթը չունեն: Պրոպերցիուսը  
հեռանում է սենտիմենտալ ոճազարգումից. այլևս «սիրահար  
պոետը» չկա: Գեղեցկուհիների հրապուրանքները մոայլ նկարա-  
զարդում են ստանում կավատների խրատներում (IV, 5), երկըր-

պագոններից փող կորզելու յուրակերպ ղեկավարութեան մեջ: Հին դրոշմների փոխարեն հետաքրքրական փորձ է կատարվում սիրաշին պոեզիան հարստացնելու ամուսնական սիրո պատկերմամբ: Պրոպերցիուսն այստեղ շարունակում է Կատուլլուսի սկսած գիծը, բայց այդ թեմային նա մերձենում է կնոջ զգացմունքի, հավատարիմ ամուսնական սիրո զգացմունքի կողմից, որն իր հերթին պահանջում է տղամարդու հավատարմություն: «Ամեն սեր էլ մեծ է, բայց ամենաբարձր օրինական ամուսնուն տաժած սերն է»: Ազնվացրած զգացմունքի կրողը կինն է դառնում: Պերսոնաժները վերցվում են հռոմեական արդիականությունից, և հեղինակը նրանց համար պարզ և անկեղծ տոներ է գտնում: Միայնակ կնոջ տաքնապալից զգացմունքները հնչում են հռոմեացի կնոջ նամակում ուղղված արշավանքի զնացած ամուսնուն (IV, 3): Հարություն է առնում և Կինթիայի կերպարը որպես հավատարիմ ընկերուհի, որը տառապում է իր երկրպագուի թեթևամտությունից: Դերերն այսպիսով փոխվում են: Մահացած Կինթիայի սովերն այժմ երևում է պոետին, հանդիմանելով նրան անսիրտ և անհավատարիմ լինելու համար. բայց նա պոետին ներում է նրա համար, որ ինքը լեռկար ժամանակ թաղավորել է նրա ոտանավորներում, և նախագուշակում է շուտով վերամիանալ մյուս աշխարհում, Ելիսիայի դաշտերում, ուր նա իբրև պարզ և իր անարատ կյանքի բնդունված է առասպելների հռչակավոր հերոսուհիներին հավասարակես (IV, 7): Մեղմ վշտով համակված, Կինթիայի խոսքն առանց պաթոսի է և մեծապես հարուստ կենցաղային մանրամասնություններով: Բայց Կինթիայի հետ ունեցած հարաբերությունների այդ իդեականացմանը զուգընթաց մենք գտնում ենք դրանց քննարկումը նաև կենցաղա-զավեշտական գծով: Հիշատակված բանաստեղծությունը ժողովածուում անմիջականորեն հետևում է մեկ ուրիշը, արդեն զավեշտական բնույթի: Դրա սկիզբը ծաղրանմանն ցնում է «գիտական» էլեգիանների ոճը: Պրոպերցիուսը ցանկանում է բացատրել այն խաչտառակութեան «պատճառը», որն անցած գիշեր անհանգստացրել է հարևանների խաղաղ քունը: Կինթիան, լինելով կասկածելի ընկերակցության մեջ, ուղեորվել է իր պաշտամունքային «հրաշքներով» հռչակավոր Լանտիում հին քաղաքը, իսկ Պրոպերցիուսը, օգտվելով նրա բացակայությունից, զվարճանում է ոչ պակաս կասկածելի ազջիկների հետ: Բայց տունակատարությունը ձախողվում է, հերոսին տանջում են նախազգացումները, և իսկապես՝ անսպասելիորեն վերադառնում է Կին-

Յիան, «զանխեր արձակում» և դաժանորեն պատժում իր ախոյաններին և թեթևամիտ ընկերոջը (IV, 8):

Ամուսնական սիրո իր փառաբանությամբ Պրոպերցիուսը ստեղծեց այնպիսի գեղարվեստական երկեր, որոնք համապատասխանում էին իմպերատորի քաղաքականությանը, ընտանեկան բարբերի խստության վերաբերյալ նրա դրույթին: Այդ տեսակետից առանձնապես հատկանշական է ժողովածուի եզրափակիչ բանաստեղծությունը, վախճանված մատրոնա Կոունելիայի՝ Օգոստոսի խորթ աղջկա՝ դուստրանությունը, որը դրված է հենց նրա բերանը, որպես պաշտպանողական ճառ անդրշիրիմյան դատարանում:

Ի տարբերություն իր ժամանակակից պոետների մեծամասնության, Պրոպերցիուսը չի ձգտում ներդաշնակ ձևի: Ամեն մի նոր ժողովածուով նրա ոճը ավելի ու ավելի դժվարամարս է դառնում: Հուզված պաթետիկան և պատկերներով հագեցվածությունը զարգանում են ի վնաս մտքերի կապակցության և դուրս են գալիս սովորական շարահյուսության շրջանակներից: Տրամաբանական կապերի բացակայությունը հասնում է մինչև այնտեղ, որ հրատարակիչները երբեմն տատանվում են առանձին բանաստեղծության սահմանները որոշելու մեջ, երբ դրանք խառնված են ավանդական ձեռագրերում: Ոճի այդ բնույթը, զուգակցված սրտը չափով ծանրաբեռնված «գիտականություն», Պրոպերցիուսին դարձնում էր համեմատաբար դժվարամտաշելի հեղինակ: Անտիկ քննադատությունը հաճախ գերապատվություն էր տալիս ավելի նրբագեղ և ներդաշնակ Տրոպուսին, բայց Պրոպերցիուսի պաթետիկ ուժը և արտահայտիչ լինելը բազմաթիվ երկրպագուներ էին գտնում ինչպես հին, այնպես էլ նոր ժամանակներում:

## 7. ՕՎԻԴԻՈՒՍ

Պրոպերցիուսի շորթորդ գիրքը վկայում էր արդեն այն հասարակական տրամադրությունների թուլանալու մասին, որոնք դրանից քառորդ դար առաջ ծնունդ տվին հռոմեական էլեգիայի սպեցիֆիկ աշխարհագրացությանը: Այդ ժանրի ավարտողը և դրա հետ միասին կործանողը՝ Հուսիս էլեգիկ պոետների շարքում ամենակրոտները՝ Պուբլիուս Օվիդիուս Նազոնն էր (մեր թ. ա. — 43 թ. մինչև մ. թ. 18 թ.): Այս փալտուն և գեղգեղուն պոետի գրական գործունեությունը մենք թևակոխում ենք Օգոստոսի կառավարման

երկրորդ կեսը, այն ժամանակաշրջանը, երբ «ոսկե դարի» ստեղծագործական ուժերը արդեն սկսում են սպառվել:

Վտարանդիություն ժամանակի «Կշտալի բանաստեղծություններում» (Tristia, IV, 10) Օվիդիուսը պատմում է իր կյանքի պատմությունը: Նա ծնվել է 43 թ. մարտի 20-ին Սուլմոն քաղաքում և պատկանում էր մի հինավուրց հեծյալական տոհմի: Հայրը իր երկու որդիներին՝ պոետին և նրա վաղուց մահացած ավագ եղբորը նախապատրաստել էր փաստաբանական գործունեության ու պետական պաշտոն վարելու համար և տակալին մանուկ հասկում նրանց ուղարկել էր Հռոմ պերճախոսություն սովորելու: Քաղաքական պայմանների փոփոխումով «Ֆորումում մարզվելը» արդեն կորցրել էր այն նշանակությունը, որն ուներ Ցիցերոնի երիտասարդական տարիներին: Հետորակա հիմնական նախապատրաստումը այժմ կատարվում էր ճարտասանական դպրոցում, «ղեկլամացիաներով»: Ըստ ժամանակակից Սենեկա Ավագի խոսքերի, Օվիդիուսը լավ ղեկլամատոր էր համարվում, բայց ղեկլամացիայի տրամաբանական կողմը՝ իրավաբանական ապացույցումները և սխաեմատիկ շարադրումը՝ միշտ նրան ընկճում էին, և նա ավելի հաճույքով արտասանում էր սվաստրիաներ, քան կոնարտիկոսիաներ: Նրա ղեկլամացիաները դեռ այն ժամանակ արձակ բանաստեղծությունների տպավորություն էին թողնում: Օվիդիուսը հավատացնում էր, որ պրոզան նրան երբեք չէր հաջողվում և հակառակ իր կամքի ոտանավոր էր դառնում:

Հաճախ էր ինձ հայրս ասում՝  
«զատարկ գործ ևս դու ձեռնարկում,  
իրենից հետո Հոմերոսն էլ շատ մեծ գոչք է արդյոք թողել»,  
Ազգված իմ հոր այս խոսքերից՝ հրաժարվեցի Մուսաներից,  
Հեկիոնը մի կողմ թողի, ազատ գրել սկսեցի,  
Սակայն բառերն իրենց կամքով՝ «ոտ» են դառնում խիստ շափերով:  
Այն, ինչ գրում էի արձակ՝ ոտանավորի էր վերածվում:

Իր ուսումն ավարտելով Հունաստան և Փոքր Ասիա կատարված տրագիցիոն ճանապարհորդությամբ, Օվիդիուսը Հռոմ վերադարձավ, որպեսզի սկսի իր պաշտոնավարական կարիերան, բայց շուտով գրանից հրաժարվեց, հազիվ անցնելով դատարանական և աստիճանական բնույթի ցածր պաշտոններից: Աշխարհիկ զվարճալիքները և գրականությունը նրան շատ ավելի էին գրավում, քան սենատ բնկնելու հեռանկարը, և նա ունեւոր մարդու անկախ կյանք էր վարում, շրջելով Հռոմի բարձր հասարակության և պոետներին

շրջաններում: Օվիդիուսն առանձնապես սերտորեն կապված էր Մեսելայի գրական շրջապատի հետ, բայց նա կապ էր պահում և Մեկենասի խմբի պոետների, մանավանդ Պրոպերցիուսի հետ:

Օվիդիուսի գրական գործունեության մեջ կարելի է նշել երեք էտապ՝ սիրային պոեզիա (մոտավորապես, մինչև մեր դարի սկիզբը), գիտա-գիցարանական պոեզիա և, վերջապես, վտարանդիության ժամանակի ոտանավորներ:

Օվիդիուսը վաղ է սկսել ոտանավորներ գրել: Նա իր առաջին ելույթն սկսել է սիրային էլեգիաներով, որոնցից հետագայում կազմվել է հինգ գիրք: Մեզ հասած «Սիրային բանաստեղծությունների» (Amores) ժողովածուն՝ երեք գրքով՝ իրեն հեղինակի կազմածի համառոտած վերահրատարակությունն է: Ըստ էլեգիական տրագիցիայի ժողովածուն ունի իր հերոսուհին. Օվիդիուսը նրան Կորիննա է անվանել, բեովթիական հին բանաստեղծուհու անունով (մոտավորապես 500 թ.), որը մշակել էր տեղական ասքեբը իր հայրենիքի բարբառով: Սակայն բանաստեղծություններից զշերն են անմիջականորեն Կորիննային ուղղված, և միանգամայն վերացականորեն մատուցված այդ կերպարի դերը հանգում է այն բանին, որպեսզի պերսոնաժ ծառայի մի քանի տիպական տրագիցիոն սիտուացիաների համար: Օվիդիուսի էլեգիաները նշանակալի շափով կրկնողություններ են Կատուլլուսից, Տիրուլուսից, Պրոպերցիուսից, հույն էպիգրամիստներից: Վերստին հանդիպում ենք սերենագայի, կավատի խրատների, շահամու գեղեցկուհիների և զինվոր-ախոջանների, բայց Օվիդիուսն զեպի իրականությունն ու գրական նյութը ունեցած իր այլ վերաբերմունքով և ոճաբանական եղանակներով տարբերվում է իր հոմեական նախորդներից: Պոեթը, աճած լինելով կայսրության մթնոլորտում և արբեցած «ոսկի Հոմերի» արտաքին փալլով, ծանոթ չէ արդի կյանքի նկատմամբ եղած անբավարարվածության այն զգացմունքին, որով անցել էր նախորդ սերնդի գրողների մեծամասնությունը: Նա իրեն շնորհավորում է, որ «ծնվել է հատկապես այժմ», և միակը, որի հետ նա համաձայն չէ կայսրության իդեոլոգիական քաղաքականության մեջ, այդ՝ անցյալի առաջ պաշտոնական խնկարկումը և հինավուրց առաքինությունների վերածնության լոզունգն է. Օգոստոսի ամուսնական օրենսդրությանը Օվիդիուսը չթաքցրած հեզմանքով է վերաբերվում: «Սիրահար պոետը» հանդես է գալիս առանց կտրվելու արդիականությունից, ոչ թե գյուղական իդիլիայի կամ առասպելի ֆոնի վրա, այլ Հոմերի աշխարհիկ կյանքի

և հոտմեական փողոցի պաշմաններում: Այդ հանգում է Շանրի ցածրացմանը»: էլեգիայի իդեալականացրած սերը կոպտացվում կամ հեզնական խաղի առարկա է դառնում: Տիրուպուսին և Պրոպերցիուսին հակառակ՝ Օվիդիուսը հավակնություն չունի լուրջ և խոր զգացմունք նկարագրելու: Համաձայն իր կենսագրության մեջ եղած սեփական բնութագրման՝ նա միայն «սիրային գրգռնքի կատակասեր երգիչ» է:

Օվիդիուսի մյուս նշանակալի տարբերությունն իր նախորդներից այն է, որ նա պոեզիայի մեջ է փոխադրում դեկլամացիոն («ճարտասանական») ոճի սկզբունքները: Այդ ամենից առաջ արտահայտվում է մի թեմայի անվերջ վարիացիաների մեջ: 46 տողից բաղկացած մի ամբողջ էլեգիա (I, 9) կառուցված է այն մտքի «խաղերի» վրա, որ սիրահարը Ամուրի մոտ ծառայության մեջ եղող զինվոր է: Այդ միտքը տրված է հենց առաջին տողում, իսկ այնուհետև ծավալված է բազմաթիվ համեմատություններում: Օվիդիուսը հաճախ վերցնում է ավելի վաղ պոետներից որևէ մեկի նշած մոտիվ և ընդլայնում այն դեկլամացիոն մշակման օգնությամբ ու հասցնում մինչ մեծ բանաստեղծության: Կատուլլուսի հուսալքված «ատում և սիրում եմ»-ը կայտառ-կատակի ծախսում է ստանում, իսկ նույն Կատուլլուսի «ճնճղուկի մահը» ուռչում է մինչև մի մեծ էլեգիայի՝ Կորիննայի վախճանված թուփակի մասին. այդ կազմված է ճարտասանության բոլոր կանոններով և ծաղրանմանեցնում է դամբանական ճառի պաթոսը:

Դեկլամացիոն ոճը գերակշռող դարձավ կայսրության ժամանակաշրջանի գրականության մեջ և Օվիդիուսի ստեղծագործությունը այդ տեսակետից հոտմեական պոեզիայի դարգացման նոր էտապ է բաց անում: Բայց Օվիդիուսը, չնայած իր կայտառ վերաբերմունքին դեպի գրական նյութը, որևէ շափով օպոզիցիա չի զգում նախորդների հանդեպ: Նա լայնորեն օգտագործում է նրանց թեմաները, մտքերը, նույնիսկ արտահայտությունները, գովեստներ է շնայում նրանց հասցեին, առանց ուղղությունների խտրության: Տիրուպուսի մահվանը նվիրված էլեգիան (III, 9) ժողովածուի լավագույն բանաստեղծություններից մեկն է: Օվիդիուսի փայլուն գրական տաղանդն արդեն իրեն զգացնել է տալիս այդ առաջին փորձերում: Հնարամտորեն վարիացիաներ կատարելը, սրամտությունը, առանձին հոգեբանական դիտումների նրբությունը, կենցաղի կենդանի նկարագրողումը — այսպիսիք են «Սիրային բանաստեղծությունների» գրական արժանիքները: Դրան միանում

են ոտանավորի արտակարգ դյուրամատչելիությունն ու կոկիկ լինելը, որոնց մեջ Օվիդիուսը հումեական պոետների շարքում շունի փրկն հավասարը: Դրա հետ միասին ժողովածուին հատուկ են և թերություններ, որոնք տարբերում են պոետի և ամբողջ հետագա գործունեությունը, այն է՝ բովանդակության շնչին լինելը, միօրինակությունը և շափի զգացողության բացակայությունը, հեղինակի ինքնասիրահարությունը. բայց Սենեկա Ավագի խոսքերի նա «հրաշալի կերպով գիտեր իր թերությունները, բայց սիրում էր դրանք»:

Իր հաջորդ ժողովածուում Օվիդիուսը վերջնականապես հրաժարվում է «սիրահար պոետի» մաշված դիմակից: «Հերոսուհիները» (այլ կերպ՝ «Նամակներ») դիցաբանական հերոսուհիների նամակներ են իրենցից հեռու գտնվող ամուսիններին կամ սիրահարներին: Օվիդիուսն այսպիսով վերադառնում է սիրային-դիցաբանական էլեգիային, բայց ոչ թե պատմողական եղանակով, այլ իբրև սիրահարված հերոսուհիների սուրբկտիվ զեղումներ. նամակը միայն ձև է հանդիսանում լիրիկական մենախոսության համար: Դիցաբանական պերսոնաժի մենախոսությունը, ինչպես և նամակը ճարտասանական դեկլամացիայի ձևեր էին, բայց պոեզիայի համար այդպիսի նամակները նորություն էին: Տասնհինգ հերոսուհիների անուններից զրաժ տասնհինգ նամակները Օվիդիուսին հնարավորություն են տալիս փայլելու վարիացիայի արվեստով: Ըստ էության բոլոր նամակներն էլ միևնույն թեմային են վերաբերվում՝ անջատում, կարոտ, միայնակություն, խանդի տանջանքներ, դառնագին հիշողություններ դժբաղտ սիրո սկզբի մասին, մտքեր մահվան մասին, աղաչանք վերադառնալու մասին, — յուրաքանչյուր նամակը հյուսված է անընդհատ կրկնվող այդպիսի մոտիվների սերիայից և զրա հետ միասին անհատականացված է պերսոնաժի բնավորության և անջատումն ստեղծող պայմանների տարբերության համապատասխան: Համեստ Պենելոպան և կրքով այրվող Փեդրան, սանտիմենտալ Էնոնան և վրեժխնդիր Մեդեան, բռնի անջատված Բրիսեիդան և լքած Դիդոնան դանազանակերպ են ապրում իրենց զգացմունքները:

Դեկլամացիոն ոճը, որին հետևում է Օվիդիուսը, ստեղծված էր բարդացած հոգեկան պայքարի և սլաթետիկ կոնֆլիկտների խոսքի մեջ մարմնանալու համար: Այդ բնագավառում պոետը մեծ վարպետ էր: Իբրև սիրո հոգեբանության գեղարվեստական գրականություն, «Հերոսուհիները» իրենից նշանակալի գրական երևույթ է

ներկայացնում և արժանի հռչակ է վաչելում: Նկարագրողն և պատմողական կողմը ենթարկված է հոգեբանական խնդիրներին: Բնության նկարագրությունները ֆուն են ստեղծում արամադրության համար, իսկ առասպելի սյուժետային կողմը շարադրվում է այնպես, ինչպես այն պետք է հանդես գար խանդավառ սիրահարված հերոսուհու տեսակետից: Իր նյութն Օվիդիուսը քաղում է զանազան աղբյուրներից: Նա օգտագործում է Հոմերոսին (Պենիթրոպե, Բրիսեիդա), ողբերգությունը (Դեանիրա, Մեդեա, Փեդրա), հելլենիստական պոեզիան, Կատուլլուսին (Արիադնա), Վերգիլիուսին (Դիդոնա), կերպարվեստի հուշարձանները, բայց սյուժեները վերամշակում է յուրակերպ. այսպես, Բրիսեիդայի սիրային դրաման հորինվում է Հոմերոսյան էպոսի աննշան ակնարկներից: Իրենց հոգեկան կերպարներով Օվիդիուսի դեմքերը շատ հեռու են էպոսիկամ ողբերգության վսեմ կերպարներից: Այդ դրաջուն գեղեցկուհիները գրեթե միշտ եղիշտ և անճարակ են, և Օվիդիուսի Դիդոնան, օրինակ, միանգամայն դուրի է այն հերոսական գծերից, որոնցով ոչ այնքան վաղուց օժտել էր նրան Վերգիլիուսը: Նամակ զբող հերոսուհիները, իհարկե, տիրապետում են դեկլամացիոն արվեստի բոլոր եղանակներին: Դիցաբանական ոլորտը ծառայում է միայն նրա համար, որպեսզի ավելի ուշ ժամանակի զգացմունքները դուրս բերի կենցաղի շրջանակից և ազատի նրբերանգավոր հեղինական անպարկեշտությունից, որով Օվիդիուսն ուղեկցում է ժամանակակից կյանքի պատկերները:

Ժողովածուն հետևորդներ ունեցավ: Հռոմեական պոետներից մեկն անմիջապես սկսեց հորինել «Նամակների» հասցեակիրները պատասխանները: Հետագայում «Հերոսուհիներին» միացվեցին երեք դուրս նամակներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է հերոսի նամակը և հերոսուհու պատասխանը: Պարիսի սիրային բացատրություններին, ուր գործի են դրված գալթակղեցնելու ամենափորձված արդումենտներ, հետևում է դեռ տատանվող Հեզիոնի պատասխանը. նա սկսում է վիրավորված արժանապատվության տոնով, իսկ վերջացնում է բանակցությունները իր սրտակիցների միջոցով շարունակելու առաջարկով: Սիրո բացատրության մի այլ վարիանտ մենք հանդիպում ենք Կալիմաքոսի հուշակավոր էլեգիկ վիպակի հերոսներ Ակոնտիոսի և Կիդիպայի նամակներում: Անշատման թեման մշակված է Հերոլի և Լեանդրի նամակներում, որոնք նույնպես սկիզբ են առնում հելլենիստական աղբյուրներից: Լեանդրն ամեն գիշեր լսում էր Հելեսպոնտոսը Հերոլի հետ:

տեսակցելու համար, բայց մի քանի օր նրան պահում է փոթորի-  
վր: Նամակները համակված են ողբերգական վերջավորության  
նախադգացումներով՝ կեանքը կխեղդվի ալիքներում, նրա դիակը  
կտարվի Հերոզի ափը, և վերջինս ծովը կնետվի, գրկելով իր փե-  
սացունին: Զուգը նամակներն աչքի են ընկնում որոշ շատախոսու-  
թյամբ, բայց ոճով այնքան մոտ են Օվիդիուսին, որ նրա հեղի-  
նակ լինելը չպետք է որևէ կասկած հարուցի. դրանք, հավանորեն,  
կազմված են զգալիորեն ավելի ուշ, քան հիմնական ժողովածուն:

«Հերոսուհիների» վրա աշխատելու ժամանակաշրջանին է վե-  
րաբերվում մեզ չհասած «Մեդեա» ողբերգութունը, որի մասին  
անտիկ քննադատութունը արտակարգ գովեստով է արտահայտ-  
վում: Օվիդիուսի «Մեդեան» և Վարիուսի «Տեխստը» (նույնպես  
չպահպանված) հոմեոսական ողբերգական պոեզիայի լավագույն  
երկերն էին համարվում:

Հենց սկզբից անտիկ հոմեոսական էլեգիային հատուկ էր սի-  
յու ուլտրոսում «ուսուցողական» դերի հավակնությունը. Օվիդիուսը  
դրանից հետևողական եզրակացություն է անում և սիրո երգչի  
գործունեությունն ավարտվում է «դիդակտիկ» երկերով: Օվիդիուսն  
այստեղ ևս գնում էր սեփական ուղիով, զարգացնելով այն, ինչ որ  
Նախորդների մոտ լուի սաղմնային վիճակում էին: «Սիրո գիտու-  
թյունը» (*Ars amatoria*, մեր թ. ա. 1 թ.—մեր թ. 1 թ.) պարոդի-  
կա-դիդակտիկական պոեմ է էլեգիայի ոտանավորային ձևով  
(իսկական դիդակտիկ պոեմները հորինվում էին հեկզամետրնե-  
քով): Իբրև հմուտ «ձեռնարկ» կազմող, Օվիդիուսն ամենից  
առաջ հայտնում է առարկայի հետ իր ծանոթ լինելու մասին և  
տալիս է իր «գիտություն» կլասիֆիկացիան: Այն կազմված է երեք  
մասից. ահներև կերպով ծաղրանմանեցնելով ճարտասանական  
ձեռնարկներին, որոնք սկսվում էին «գտնելու» մասին հարցով,  
Օվիդիուսն իր առաջին մասին հատկացնում է նույն վերնագիրը—  
սիրո առարկայի «գտնելը»: Երկրորդ մասն է՝ ինչպես հասնել  
սիրո, երրորդը՝ ինչպես այդ սերը պահել: Խրատները տրվում են  
սկզբում տղամարդկանց համար (գիրք 1—2), այնուհետև կանանց  
համար (գիրք 3): Պարզամիտ և միակերպ «գիտություն» շա-  
քադրումը աշխուժացված է էֆեկտավոր սենսենցներով, դիցա-  
բանական պատմություններով, կենցաղային տեսարաններով,  
բայց երբեք չի բարձրանում «չարաձևի սիրո» մակարդակից, ա-  
հանավոր և կիսապրոֆեսիոնալ հետերաների միջև ժամանակա-  
վոր կապերից:

Օվիդիոսւի հեգնական դիտողականութիւնը և նրա ծաղրանմանեցման տաղանդն իրենց համար ամենաշնորհակալ նյութ են գտնում սիրալին հարաբերութիւններէ հասկապես այդ ոլորտի «դիդակտիկ» մտտեցման մէջ:

Նույն հատակա-խրատական տոնով է կազմված երկրորդ «դիդակտիկ» պոեմն արդէն հակառակ թեմայով՝ «Սիրո ղեմ ճար» (1—2 թ. թ. մ. թ.), միջոցներ գտնել օգնելու նրան, ում սերը անհույս է: Երրորդ պոեմից՝ կոսմետիկայի մասին միայն սկիզբն է պահպանվել:

«Դիդակտիկ» պոեմներով ավարտվում է Օվիդիոսւի գործունեութեան առաջին շրջանը: Նա գտնում է պատմողական ժանրին, ուր ծավալում է պատմողի իր փայլուն տաղանդը, որն արդէն զբաւորվում էր «Սիրո գիտութեան» դիցաբանական շեղումներում: Նոր գիծը նշանակում էր նույնպէս անցումն ալիքի լուրջ «գիտական» թեմաների: Համարու, նովելիստական պատմողականութեան վարպետ լինելով, Օվիդիոսւն ընտրում է «կատարողական» պոեմի ձևը, որը միավորում էր մեծ քանակութեամբ թեմատիկորեն իրար մոտ ասքեր: Այդ կարգի երկեր ալեքսանդրիական պոեզիայում հաճախ էին հանդիպում (Կալիմաքոսի «Պատճառները», Էրոտոսթենեսի, Նիկանդրոսի և ուրիշների պոեմները): Միաժամանակ Օվիդիոսւն աշխատում էր երկու գիտապատմողական կատարողակերպ աիպի պոեմների վրա՝ այդ «Սեռամորֆոզներ» («Կերպարանափոխութիւններ») և «Ճաստեր»-ն («Ամսարան») էին:

«Կերպարանափոխութեան» թեման մեծ տեղ է գրավում բոլոր ժողովուրդների դիցաբանութեան մէջ: Այդ առասպելներից մեծ քանակութեամբ ունենին և հույները. շատ ղեպքերում զրանք տեղական, սակավ տարածված ասքեր էին: Հելլենիստական «գիտական» պոեզիան զրադվում էր զրանք հավաքելով: Էրատոսթենեսի «Կատաստերիզմները», ոմն Բեոսի (Boios, կամ ոմն կին Բիոն) վերագրվող «Թուշունների ծագումը», զանազան կարգի կերպարանափոխութիւնների մասին համապարփակ պոեմներ, որ կազմել էին Նիկանդրոսը և Պարթենիոսը, կարող են օրինակ ծառայել այդպիսի դիցաբանական ժողովածուների, որոնք թեմատիկ օրինակ են ծառայել Օվիդիոսւին: Դրանց զուգահեռ կային և պոզաիկ ժողովածուներ, դիցաբանութեան մասին տրակտատներ, որոնք ասքերի հսկայական նյութ էին մատակարարում շատ քիչ սխտեմատիկ շարադրութեամբ:

Օվիդիուսի «Մետամորֆոզները» հեկզամետրներով պոեմ է, կազմված 15 գրքից. դրանց մեջ հավաքված է երկու հարյուրից ավելի սուքեր, կերպարանափոխության ֆինալով: «Մետամորֆոզներ» անունը վերարտագրում է Պառթենիոսի աված վերնագիրը: Օվիդիուսը մտածել էր տալ ոչ թե սուքերի ժողովածու, այլ կապակցված ամբողջություն, «չբնդհատվող պոեմ», որի մեջ առանձին պատմվածքները շարված լինեն միասնական թելի վրա: Այդ ամենից առաջ խրոնոլոգիական թելն է: Պոեմը սկսվում է աշխարհի ստեղծագործությունից, որն առաջին «կերպարանափոխությունն» է, նախասկզբնական քաոսի կերպարանափոխումը տիեզերքի, դեպի պատմական ժամանակները, ընդհուպ մինչև նորագույն պաշտոնապես ընդունված «մետամորֆոզը»: Հուլիոս Կեսարի գիսաստղի «կերպարանափոխվելը»: Նյուլթի խրոնոլոգիական դասավորության առերևույթությունը պահելը հնարավոր էր միայն պոեմի սկզբում (աշխարհի ստեղծագործություն, շոքս դարեր, ջրհեղեղ և այլն) և նրա եզրնափակիչ մասում, Տրոյական պատերազմի ժամանակից: Ասքերի հիմնական մասսան հարմարեցված էր որևէ ժամանակի և միշտ չէ, որ նեղքին կապ էր պարունակում առանձին ավանդությունների միջև: Կոմպոզիցիայի մեծ արվեստ էր պահանջվում, որպեսզի այդ անշատ-անշատ նյութից ամբողջական պատմություն ստեղծվեր: Օվիդիուսն ամենաբազմազան եղանակներ է դիմում: Նա ասքերը դասավորում է մերթ քստ ցիկլերի (արգոսական, թեբեական առասպել, արգոնավորդներ, Հերակլ, Էնեասը և նրա սերունդները), մերթ միավորում է սյուժեապես մոտիկ կամ կոնտրաստային պատմվածքները, մերթ, վերջապես, օգոտագործում է շրջանակային մեթոդը, մտցնելով սրուշ ավանդություններ ուրիշների ներսը սրպես գործող անձանցից օրևէ մեկի պատմվածքի կամ որպես արվեստների հուշարձանների պատկերների նկարագրություն: Այդ կերպով հաստատված ավանդությունների կապն աշխուժանալով երբեմն զուտ արտաքինապես է լինում: Բայց Օվիդիուսը ձգտում է հենց պատմությունների խաչադրվածության և բազմազանության: Նրա ամբողջ գործունեության միջով անցնող վարիացիաների որոնումը արտահայտություն է գտնում և «Մետամորֆոզների» միտումի մեջ՝ արտահայտություն է գտնում և «Մետամորֆոզներ» միտումի մեջ՝ միաշաբաթի ֆինալով հսկայական քանակությամբ ավանդությունների միաշարման մեջ: Վարիացիաների առումով ամենամեծ դժվարություն էր ներկայացնում կերպարանափոխության վերջին գործությունը, բայց Օվիդիուսն այդ խնդիրը հեշտությամբ լուծեց:

Սակայն, հիմնական ուշադրությունը նվիրված է ոչ թե ֆինալին, այլ ֆինալը նախապատրաստող պատմվածքին: Պատմվածքները վարիացիայի ենթարկելով ըստ մեծության, շարադրման ընդարձակության, տոնի և տրամադրության, Օվիդիուսը խուսափում է միակերպությունից և, առատաձեռնորեն վատնում է ներկերի հրահայական հարստությունը, միշտ մնալով կենդանի և գրավիչ: Արտասովոր հեշտությունը նա հերթագայություն մեջ է դնում տխուր և ուրախ, հուզիչ և սարսափելի, վեհապանծ և ծիծաղաշարժ պատկերներ: Սերը հանդես է գալիս ամենատարբեր տեսանկյունով, թեպես սիրային թեմաները բոլորովին էլ միակը չեն: Կալիմաքոսի «Հեկադաչի»-ց անմիջապես հետո Օվիդիուսը նկարագրում է աղքատ և առաքինի ծերունի գույգի (Ֆիլեմոնի և Բավկիդաչի) իգիլիկ կյանքը, բայց չի հրաժարվում և մարտական տեսարաններից և տալիս է ճակատամարտերի քանդակագործորեն ավարտված պատկերներ: Որոշ դեպքերում նա վերադառնում է իր նախորդ երկերին հատուկ դեկլամացիոն տեխնիկային և գոծող անձանց բերանն է դնում դրամատիկական մենախոսություններ (Մեդեա) և նույնիսկ ամբողջ «խոսքամարտեր» (Այաքսի և Ոդիսեասի վեճը Աթիլեսի գեների մասին): Այս ամբողջ բաղմազանության լինթացքում գերակշռում է կարճ, լարված և հուզականորեն գունալորված պատմողական ոճը: Առասպելը նրբագեղ նովելա է դառնում: Էֆեկտավոր շարադրված բաղմաթիվ ասքերից մատնանշենք մի քանի ամենից հայտնիները. դրանց թվին են պատկանում՝ չորս դարերի, ջրհեղեղի, Դափնիսը լավրի ծառի\* փոխակերպվելը (գիրք I), առասպելն Արեդակի որդի՝ Ֆանտոնի մասին, որը հորից խնդրում է նրա կառքը և քիչ է մնում երկիրն այրի (գիրք II), Նարցիսի մասին, որը մերժում է էյսո հավերժահարսի սերը, բայց սիրահարվում է իր սեփական պատկերի վրա (գիրք III), Պիռամի և Ֆիսբայի դժբախտ սիրո մասին նովելը, որը մեծապես տարածվեց հվրոպական գրականության մեջ (գիրք IV). ասքը Նեոբեի մասին, որը պարծենում էր իր զավակներով և կոռցրեց նրանց գոռոզ գովեստի համար (գիրք VI). Կեփալի և Պրոկրիդաչի խանդոտ սիրո մասին (գիրք VII). Դեդալի և Իկարի դժբախտ թռիչքը, Փիլեմոնի և Բավկիսի իգիլիան (գիրք VIII). Օրփեոսի և էվրիդիկեսի ասքի մասին, Օրփեոսի պատմած սիրային առասպելները (գիրք X), Բեիկի և Հալկիոնայի հավատարիմ սերը (գիրք XI):

\* Այստեղից էլ լավրի ծառը՝ հայերեն դափնի ծառ:— Մ. Խ.

Միցարանական կերպարները «Մետամորֆոզներում» նույնպիսի «ցածրացման» են ենթարկվում, ինչպես և «Հերոսուհիներում»: Այդ առանձնապես նկատելի է աստվածներին նկարագրելու մեջ: Նրանք կազմակերպված են հումեոսիկան ձևով. երկնքում պալատներ կան հզոր աստվածների համար և տեղեր կան, ուր «պլերան» է ապրում: Աստվածային դեմքերի վարքը միանգամայն համապատասխանում է հոմեոսիկան նրբաճաշակ հասարակության բարքերին. բամբասանքներն ու սիրային արկածներն են նրանց հիմնական ժամանցը: Յուպիտերը, կատակերգության ամուսնու պես, իր արարքները կատարում է խանդոտ կնոջից գաղտնի և լավ գիտե, որ «վեհովյունը և սերն իրար չեն սագում»:

Պոեմի վերջին մասերում Օվիդիուսը հունական ասքերից անցնում է իտալիկականի և հոմեոսիկանի: Եզրափակման գիրքը, ի միջի ալլոց, պարունակում է Պյութագորոսի ուսմունքի շարադրումը՝ հոգիների տեղափոխության մասին, որը «կերպարանափոխությունների» յուրահատուկ փիլիսոփայական հիմնավորումն է:

Հոմեոսիկան առասպելներին է հատկապես նվիրված «Ճաստերը»: Օվիդիուսն իր առաջ այն խղիբը դրեց, որի վրա իր ժամանակ սկսել էր աշխատել Պրոպերցիուսը, այն է՝ ստեղծել հոմեոսիկան պաշտամունքի՝ ինչպես հին հոմեոսիկան, այնպես էլ հետագայի հելլենականացվածի՝ ավանդությունների և ծեսերի մասին թի շարք պատմողական էլեգիաներ: Այդ երկը պետք է համակված լիներ պաշտոնական իդեոլոգիայի ոգով, մի իդեոլոգիա, որը պոետն առաջ ժխտում էր, և Օվիդիուսը մտածում էր նվիրել այն Օգոստոսին: Իբրև թե, որը պետք է կապել առանձին ասքերը, նա ընտրեց հոմեոսիկան օրացույցը (այստեղից էլ վերնագիրը): Յուրաքանչյուր գիրքը նվիրված է մի առանձին ամսի և սկսվում է այդ ամսի անվան գիտա-քերականական մեկնաբանությամբ: Օրացույցի կարգին հետևելը հաճախ հեղինակին տանում էր դեպի նրան քիչ ծանոթ աստղաբաշխության բնագավառը, բայց մյուս կողմից, հնարավորություն էր տալիս մտցնել համաստեղությունների ծագման մասին առասպելներ: «Ճաստերի» հիմնական բովանդակությունը՝ հոմեոսիկան տոների հետ կապված ասքերն են: Հունական ծագում ունեցող առասպելները և իտալիկական ֆոլկլորը այստեղ հերթապալտում են հոմեոսիկան պատմությունից քաղած պատմվածքների հետ, որոնք վերցված են ինչպես առասպելական, այնպես էլ ավելի ուշ ժամանակից, ընդհուպ մինչև ժամանակա-

կից դեպքերը: Առանձնապես ընդգծված են այն օրերը, որոնք հիշատակելի են հայսերական տան համար: Որոշ դեպքերում «Ֆաստերի» ասքերը կրկնում են «Մեռամորֆոզների» սյուժեները՝ այդ օրինակների վրա պարզորոշ երևում է այն տարբերությունը, որ կա էպիկական պոեմի շարադրման և էլեգիական պոեմի հուզված, անհարթ ոճի մեջ: Չնայած հինը փառաբանելու ցանկությանը, Օվիդիուսին ավելի լավ հաջողվում են զվարճալի սիրային թեմաները: Առանձնապես հայանի է բնարարության մասին պատմվածքը, որ կատարել է հոռմեական վերջին թագավոր Տարկվինիուսի որդին Լուչյա Լուկրեցիայի վերաբերմամբ. սակայն այստեղ ևս Լուկրեցիան պատկերված է ոչ թե որպես հին հոռմեական մատրոնա, այլ Օվիդիուսի սիրային պոեզիայի երկչոտ «հերոսուհիների» ոճով: Հոռմեական հնաբանների երկերից քաղած գիտական նյութն աշխուժացնելու համար, Օվիդիուսը դիմում է Կալիմաքոսի եղանակներին՝ աստվածները, Մուսաները, վերջապես, պատահաբար հանդիպած զրուցակիցները անհրաժեշտ գիտական բացատրություններ են աալիս հեղինակին:

Օվիդիուսը գրեթե ավարտել էր «Մեռամորֆոզները» և «Ֆաստերը» մինչև կեսն էր հասցրել, երբ մեր թ. 8 թվին Օգոստոսը նրան արտոց կայսրության հեռավոր ծայրամասը՝ Սև ծովի ափի Տոմի (կամ Տոմիս, այժմյան Կոնստանցա) քաղաքը: Աքսորման պատճառներն անհայտ մնացին: Պոետը մեղադրվում էր «Սիրո գիտության» անբարոյական բնույթի համար, որ այդ երկն ուղղված է ընտանեկան կյանքի հիմքերի դեմ, բայց դրան միանում էր մի ուրիշ, ավելի կոնկրետ և, ըստ երևույթին, ավելի կարևոր պատճառ, որի մասին Օվիդիուսը բազմիցս հիշատակում է մշուշապատ արտահայտություններով: Նրա ակնարկումներից կարելի է եզրահանել, որ նա ականատես է եղել (իրը թե պատահաբար) մի ինչ-որ ոճրագործության, որ այդ ոճրագործությունը քաղաքական բնույթ չի ունեցել, բայց շոշափում էր Օգոստոսին և այդ ոճրագործության մասին հիշեցումն անգամ հավասարազոր էր կայսրի վերքերը թունավորելուն: Հետազոտողները նշում են, որ նույն 8 թվին անբարոյական կյանքի համար արստրվել է Օգոստոսի թոռ Յուլիա Կրոսերը: Եթե Օվիդիուսը որեէ կերպ խառն էր այդ գործին, ապա իմպերատորը կարող էր նրա վարքը կասկել նրա գրական գործունեության հետ, — բայց այդ բոլորը լուկ հիպոթեզներ են:

Օվիդիուսին հասած կատաստրոֆը նրա համար միանգամայն

անսպասելի էր: Հուսահատված նա այրեց «Մետամորֆոզների» ձեռագիրը, և եթե պոեմը պահպանվեց, ապա շնորհիվ բարեկամների մոտ եղած պատճենների: Նրա պոեզիայի բովանդակությունը այժմ դառնում է ձևկատարից դանդաղաները և Հոտմ վերադառնալու մասին աղերսանքները: Ծանապարհին, որը տեղեց մի քանի ամիս, նա կաղմում է «Վշտալի բանաստեղծությունների» (Tristia) առաջին գիրքը էլեգիական շափով: Մի գեղեցիկ էլեգիայում (1, 3) նկարագրում է Հոտմում անցկացրած վերջին գիշերը. մյուսները պատմվածքներ են պարունակում ձանապարհի ձախորդությունների, փոթորկալի նավարկման մասին, գիմումների կնոջը և բարեկամներին, որոնց չի էլ համարձակվում անունով հիշատակել: Տոմիս ժամանելուց հետո գրում է երկրորդ գիրքը, մեծ, հույժ շողորորթի ու մի նամակ ուղղված Օգոստոսին, որտեղ Օվիդիոսն արդարացնում է իր գրական գործունեությունը, վկայակոչում է անցյալի պոետների օրինակը, որոնք ազատորեն շարագրում էին սիրային թեմաները, և հավաստիացնում է, որ իր պոեզիան մեծ մասամբ ֆիկցիոն է եղել, որը որևէ շափով չի արտացոլել հեղինակի անձնական կյանքը: Օգոստոսն անզրոգվելի մնաց: «Վշտալի բանաստեղծությունների» հաջորդ երեք ժողովածուները (10—12 թ. թ.) վարիացիայի են ենթարկում մի քանի հիմնական թեմաներ, ինչպիսին են՝ գանգատ Ալյոս-թիայի խիստ կլիմայի, բարեկամների անհավատարմության վերաբերյալ, իր հավատարիմ կնոջ փառաբանումները, երախտապարտություն նրանցից, ով բարեկամական զգացմունք է պահել դեպի վտարանդին, խնդիր բարեխոսության մասին, ալլ աքսորվելու ուղարկելու մասին, փառաբանումը պոեզիայի, իրեն միակ սփոփանքի տխուր կյանքում: 4-րդ գրքի եզրափակման բանաստեղծության մեջ Օվիդիոսը պատմում է իր ինքնակենսագրությունը: Հետաքրքրական է Պուշկինի կարծիքը Tristia-յի մասին՝ «Tristium գիրքը..., մեր կարծիքով բարձր է Օվիդիոսի բոլոր մյուս երկերից (բացի «Կերպարանափոխություններից»): Հերոիզները, սիրային էլեգիաները և հենց Ars amandi պոեմը, նրա աքսորման երեսկայական պատճառը, զիջում են պոնտական էլեգիաներին: Այս վերջիններում ավելի շատ է ճշմարիտ զգացմունքը, ավելի պարզամտություն, ավելի անհատականություն և ավելի քիչ սառը սրամտություն կա: Որքան պայծառություն օտար կլիմայի և օտար երկրի նկարագրության»

մեջ, որքան կենդանութիւն մանրամասնութիւններում: Եվ որպիսի՜ սի՛ թախիժ Հոռմի մասին: Որպիսի՜ հուզիչ գանգատներ»<sup>\*</sup>:

«Պոնտական նամակների» շորս դբքում (12—13—16 թ. թ.) Օվիդիուսն արգեն անվանում է իր հասցեակիրներին: Երբեմն, մանավանդ ավելի ուշ նամակներում, նա հանդես է բերում համեմատարար ավելի կայտառ երանգներ, կարծես թե նա հարմարվել է պայմաններին, հարգանքների հավաստում է ընդունում շրջապատողներից, տեղական գիտական բարբառով բանաստեղծութիւններ է հորինում կայսերական ընտանիքի պատվին: Այն նամակը (III, 2), որի մեջ ծերուկը պատմում է Օրեստեսի և Պիլյազգայի ավանդութիւնը, Պուշկինի համար օրինակ ծառայեց ծեփունի գնչուի պատմվածքի համար Օվիդիուսի մասին: Ուսուցանողն էր անհամար ճարտասանական փայլը մարում է:

Վտարանդիութեան տարիներին են վերաբերվում և մի քանի այլ երկեր՝ մշտնապատ ակնարկներով լեցուն «Երիս» պարսավապիրը, ուր անեծքներ են ուղղվում ինչ-որ անհավատարիմ բնկերոջ հասցեին, ձուկ որսալու մասին սկսած մի դիդակտիկ պոեմ և մի շարք շպահականված բանաստեղծութիւններ: Ենթադրութիւն կա, որ «Հերոսուհիներ» ժողովածուի զույգ նամակները կազմված են այդ նույն տարիներին:

Օգոստոսի մահվանից (14 թ.) փոքր ինչ առաջ Օվիդիուսի մեջ վերադառնալու հույս առաջացավ: Երբ կայսր դարձավ Տիրերիուսը, պոետը փորձեց իր վրա դարձնել նոր գահաժառանգ Գերմանիկուսի ուշադրութիւնը, վերջինս որոշ շափով առնչութիւն ունեւր գրականութեան հետ: Նա սկսեց վերամշակել իր անավարտ «Յաստերը» այն առումով, որպէսզի նվիրաբերի նոր հովանավորին, բայց վերամշակումն առաջին գրքից այն կողմը շանցավ: Այդ անավարտ ձևով էլ (վեց գիրք, որոնցից առաջինը կրկնակի խրմբագրութեամբ) «Յաստերը» հետագայում հրատարակվեցին, արդեն հեղինակի մահից հետո. նա վախճանվեց վտարանդիութեան մեջ մեր թ. 18 թվին:

Իր ժամանակակիցներից շատերին զիջելով հանդերձ ստեղծագործութեան խորութեամբ և ինքնուրույնութեամբ, Օվիդիուսը թեթեւ ձևի հրաշալի վարպետ էր: Անտիկ քննադատութիւնն ընդունում էր նրա բարձր շնորհալիութիւնը, բայց հարկ էր համար-

\* Соч. Изд. Акад. Наук СССР, т. IX, ч. I, Л., 1928, стр. 325.

րուս նշել, որ «նա երես էր տալիս իր շնորքին, փոխանակ կառավարելու այն»: Ընթերցողների շրջաններում նա անհապաղ հաստատուն ժողովրդականությունն ձեռք բերեց: Այդ շնվազեց և Միջին դարերում: «Մետամորֆոզները» «հեթանոսական բիրլիա» էր համարվում, յուրահասուկ գերիմաստություն մի աղբյուր, որի համար կազմվում էին այլաբանական մեկնաբանություններ: «Գերագանց դոկտոր» (doctor egregius) Օվիդիուսի սիրային պոեզիան ոգեցորում էր լատինականացվող լիրիկան և պրովանսալյան տրուբադուրներին.— «Միրո բանաստեղծությունները» և «Միրո գիտություն» հեղինակը սիրո լեզու էր սովորեցնում միջնադարյան եվրոպային: Վերգիլիուսի պես, նա առասպելի նյութ էր: Սկսած Վերածնության ժամանակից Օվիդիուսի սյուժեները անթիվ վերամշակումների էին ենթարկվում, գրանցից կազմվում էին նովելներ, օպերաներ, բալետներ: Ռուս գրականության մեջ Օվիդիուսի կերպարը հավիտենապես կապված է Պուշկինի անվան հետ, որը սիրում էր իր աքսորվելը դեպի հարավ համեմատել Օվիդիուսի աքսորի հետ:

## 8. ՏԻՏՈՒՍ ԼԻՎԻՈՒՍ

«Էնեականում» իր լիակատար արտահայտությունը գտած կլասիկական ուղղությունը իր իդեոլոգիական և ոճական գրույթներով մոտենում է Օգոստոսի ժամանակի ամենանշանակալի արձակ հուշարձանը՝ Տիտոս Լիվիուսի (մեր թ. ա. 59 թ.—մեր թ. 17 թ.) պատմագրական աշխատությունը:

Լիվիուսն աճել է հին հռոմեական տրագիկաներով: Պատվիում քաղաքը (ժամանակակից Պադույան), ուր ծնվել և հետագայում սիրում էր ապրել պատմաբանը, հռչակված էր իր նահապետական բարբերով: Կեսարի և Պոմպեոսի միջև կռիվ ժամանակ Պատավիումի քաղաքացիները բռնեցին սենատի կողմը: Այդ համակրանքը ռեսպուբլիկայի հանդեպ Լիվիուսը պահպանեց իր ամբողջ կյանքի ընթացքում: Նա փառաբանում էր Պոմպեոսին, գրականորեն էր արտահայտվում Կեսարին սպանող Կատոսի և Բրուտոսի մասին և առկա էր թողնում այն հարցը, թե «ինչից պետությունն ավելի կշահեր՝ Կեսարի ծնվելուց, թե չծնվելուց»: Հնությունը սիրողի այդ որոշ շահով ծայրամասային ռեսպուբլիկականությունը չուներ, սակայն, քաղաքական սրվածություն, և Օգոստոսի ընդունած կրոնա-պահպանողական լիբերալ լիա-

կատար համակրանքով էր վերաբերվում: Իմպերատորն էլ իր հերթին բարյացակամ էր վերաբերվում պատմաբանի աշխատանքին, քննարկեալ նրան «պոմպեոսական» էր անվանում: Հին հռոմեական «քաջարիութեան» երկրպագուն ըստ էութեան արդեն կայսրութեան մարդն էր և քաղաքական կյանքին անձնապես չէր մասնակցում:

Իենպուբլիկայի ժամանակաշրջանում պատմագրութեանը քաղաքական և ռազմական փորձ ունեցող պետական գործիչներին բաժինն էր: Լիվիուսը՝ գրականագետ-պատմաբան է:

Իբրև գրականագետ, նա շարունակում էր ցիցերոնյան պրոզայի տրադիցիաները և բացասաբար էր վերաբերվում հռոմեական ատտիկականութեանը, մասնավորապես Սալուստիուսին. «Նամակ որդուն» աշխատութեան մեջ նա հանձնարարում էր կարգալ Յիցերոնին և Դեմոսթենեսին որպես արձակ ոճի լավագույն ներկայացուցիչների: Յիցերոնից հետո Լիվիուսը հանդես էր գալիս փիլիսոփայական և ճարտասանական բնույթի աշխատութեաններով, որոնք շուտով մոռացվեցին: Նրա գրական փառքը հիմնված է մոնումենտալ պատմական աշխատութեան վրա, որին հեղինակը դիմեց մեր թ. ա. 30-ական թվականների սկզբին և որի վրա աշխատեց շուրջ 45 տարի, ընդհուպ մինչև իր մահը: Այդ աշխատանքի արդյունքն էր 142 գիրք՝ «Քաղաքի հիմնադրումից», ամբողջ հռոմեական պատմութեան գեղարվեստական շարադրումը նրա նախասկզբից մինչև մեր թ. 9 թիվը:

Լիվիուսի աշխատութեան վիթխարի ծավալը պահանջ առաջացրեց համառոտած հրատարակութեանների: Արդեն I դարում սկսեցին հանդես գալ «քաղվածքներ»՝ առանձին գրքերի բովանդակութեան համառոտ թվարկումներ. անտիկ կուլտուրայի կործանման շրջանում դրանք դուրս վանեցին բնագիրը: Լիակատար աշխատութեանից մեկ հասել է միայն չորրորդ մասը՝ 1—10 գրքերը (առաջին «ղեկադան»), որը պատմութեանը հասցնում է մինչև երրորդ Սամնիական պատերազմը (293 թ.), և 21—45 գրքերը (երրորդ և չորրորդ «ղեկադաները» և հինգերորդի առաջին կեսը) երկրորդ Պունիկյան պատերազմից (218 թ.) մինչև Մակեդոնիայի գեմ հաղթանակը (167 թ.): Մնացածը հայտնի է քաղվածքներից, որոնք պահպանվել են զանազան կերպով և գրեթե բոլոր գրքերից:

Իբրև գիտական երկ, Լիվիուսի պատմութեանը չի կանգնած իր խնդրի բարձրութեան վրա: Լիվիուսը՝ պատմող է, բայց ոչ հետազոտող: Նրա աշխատութեանը կառուցվում է իբրև նախորդ պատմաբանների հաջորդումների գեղարվեստական վերապատ-

մում, առանց ինքնուրույնաբար վավերագրային նյութը մեջ բերե-  
լու: Աղբյուրների պատահական և անքննադատ մոտեցմանը միա-  
նում է կիվիտաի անբավարար պատրաստականությունը ռազմա-  
կան և քաղաքական հարցերում (այստեղից էլ ռազմական պատ-  
հերների որոշ նույնականությունը), անճշտությունը աշխարհա-  
գրական պատկերացումներում: Վերջապես, ըստ պատմական  
ղեկգրերի իմաստավորման խորություն, կիվիտան զգալիորեն զի-  
ջում է այնպիսի պատմաբանների, ինչպիսին են՝ Թուկիդիդեսը,  
Պուլլիուսը կամ նույնիսկ Սալյուստիուսը:

Հելլենիստական պատմագրությունը սովորաբար առաջ էր  
քաշում քմահաճ Թիխեի խաղը իբրև պատմության շարժիչ ուժ<sup>2</sup>:  
Հոմեհական հայրենասերի աշխարհազգացությունն ավելի ակտիվ  
է: Դեպքերի ընթացքը կիվիտաը որոշում է ժողովրդի և նրա բոր-  
ժիչների բարոյական հատկություններով: Անցյալը նրան պատ-  
հերանում է իբրև լավ կամ վատ «օրինակների» ամբողջություն,  
որոնք ցույց են տալիս՝ ինչը պետք է ընդօրինակել, ինչից՝ խու-  
սափել: Իր աշխատության ներածության մեջ կիվիտան ընթերցու-  
ղին հրավիրում է առանձնակի ուշադրություն դարձնել «բարբերի»  
աչխինքն՝ մասսաների և առանձին գործիչների բարոյական դեմքի  
վրա՝ հոմեհական պատմության զանազան շրջաններում: Նախնի-  
ների բարոյական բարձր հատկությունները, նրանց հայրենասե-  
րությունն ու ազատասիրությունը, արիությունը և անձնվիրու-  
թյունը, առաքինի և համեստ կյանքի եղանակը՝ ապահովեցին  
հոմեհական պետության աճը, բարբերի ապականությունը՝ քաղա-  
քացիական խռովությունների պատճառ դարձավ, այս է կիվիտաի  
պատմության ղեկավարող միտքը: Պատմիչ-պատմաբանը ժլատ է  
գառադությունների մեջ, բայց նրա ամբողջ շարադրությունը հա-  
մակված է հոմեհական ժողովրդի իդեալականացումով և հոմեհա-  
կան անցյալի խնկարկումով: «Հոմեհական քաջարիությունը» հա-  
կադրվում է մյուս ժողովուրդների բացասական հատկություննե-  
րին, հույների և զալկերի թեթևամտությանը, կարթագնացիների և  
էպրուսիների ուխտագրծությունը: Սիրարորոք վերաբերմունքը

<sup>2</sup> Այդ նույն տեսակետին է Օդոտտոսի ժամանակի մի այլ պատմաբան,  
որը մոտիկից հարակցում էր հելլենիստական աղբյուրներին և զուտպ էր վերա-  
բերվում «հոմեհական բախտի» արտաքին հաջողություններին, այդ հոմեհացած  
գալլ Տոքս Պամպոնոս էր. նրա ընդհանուր պատմությունը (բացառալ Հոմե-  
հականը) 44 գրքով մեզ է հասել սմն Հուստինի քաղվածքներով:

հին նկատմամբ, որով ջերմացված է Լիվիուսի պատմությունը՝ տարածվում է և հին հավատալիքների վրա: Այդ տեսակետից Լիվիուսն արգարացնում է դիցաբանական ասքերի մոլծուճը պատմական աշխատությունների մեջ: Միայլ տեղ, պատմելով «հրաշագործ նշանների» մասին, հեղինակը բացատրում է, որ ինքք համակվում է «հին սգով», երբ հինն է նկարագրում:

Բացառությամբ առաջին դրքի, որը նվիրված է թագավորական ժամանակին, Լիվիուսը պահպանում է հոմերական «աննալներին» տրագիցիոն դեպքերի տարեգրական շարադրությունը: Բայց տարեգրական խրոնիկայի ընդարձակությունը նա զուգակցում է առանձին պատմական դեպքերը պատմելու գեղարվեստական ամբողջականության սկզբունքի հետ: Հաջորդականորեն տարեցտարի շարադրելով Հոմի պատմությունը, Լիվիուսը դեպքերը բաժանում է կարճ, ավարաված էպիզոդների. յուրաքանչյուր այդպիսի էպիզոդը կազմում է գեղարվեստական մի ամբողջություն, որն ունի գործողության իր հիմնական կրողները, իսկ գործողությունը պարզորեն մասնատված է և չի ծանրաբեռնված ավելորդ մանրամասնություններով: Նկարագրական տարրը Լիվիուսի մոտ նշանակալի տեղ չի դրավում: Հիմնական ուշադրությունն ակնբախ կերպով ուղղված է պատկերելու մարդկային արարքները, որոնց մեջ դրսևորվում են մարդկանց բարոյական հատկությունները և հոգեկան շարժումները: Հելլենիստական պատմաբանների և նրանց հոմերական հետևորդների պես, Լիվիուսը ձգտում է դրամատիկական շարադրման, բայց արտաքին գործողության իրադարձություններում նա ջանում է ցույց տալ գործողանձանց աֆեկտների փոխարինվելը: Մասաներին, օրինակ, նա գրեթե միշտ հանդես է բերում հուզված վիճակում: Պատմական գործիչների բնութագրությունը կազմված է մի քանի հիմնական, կարևորագույն գծերից, որոնք ընդունակ են ընթերցողի վրա ուժեղ ազդեցություն թողնել: Այդ բոլորը լիովին զուգակցվում է կլասիկական ուղղության գեղարվեստական դրույթների հետ և մոտիկից հիշեցնում է «էնեականի» ոճը:

Հայրենասիրական և գեղարվեստական առանձնահատկություններով է որոշվում նյութի և՛ ընտրությունը և՛ լուսարանում: Լիվիուսը պատմում է պատերազմի, ժողովրդական հուզումների, սենատում և ժողովրդական ժողովում բախումների մասին: Անցյալի կուլտուրան և կենցաղը, իրենց արխաիկ առանձնահատկու-

թշուհներով, շին գրավում պատմիչի ուշադրութիւնը, գիտա-հնարանական նյութը տրվում է միայն հարեանցիորեն:

Ռեսպուբլիկայի վերջին դարի տարեգրութեանը հին Հռոմի սոցիալական պայքարը պատկերում էր խիստ մոդեռնականացրած դուշներով, արդիական պարտիական լոզունգները փոխադրելով անցյալը: Լիվիուսը դյուրահավատութեամբ վերարտադրում է այդ արադիցիոն շարադրումը, բայց ջանում է մեղմացնել սուր անկշունները և, չնայած ակներև համակրանքին արիստոկրատիայի հանդեպ և «ամբոխին» հակակրելուն, իր պատմութեանը շատ ավելի բարեգութ բնույթ է հաղորդում:

Պատմելու հուզական ոճը պաշտպանվում է նաև երով: Հասկանալի է, որ Յիցերոնի և Դեմոսթենեսի երկրպագուն, մեծ նշանակութիւն է տալիս գեղարվեստական պատմադրութեան անտիկ ժամանակի այդ անհրաժեշտ տարրին: Լիվիուսի աշխատութեան մեջ ճառեր շատ կան, բայց այնուամենայնիվ նրանք չեն շղարշում պատմողական կողմը: Դրանք ծառայում են պատմական պերսոնաժների բնութագրման համար, ինչպես նաև քաղաքական իրադրութիւնները և այս կամ այն հասարակական խմբավորման տեսակետները պարզաբանելու համար: Այդ ճառերը, հարկավ, Լիվիուսն ինքն է կազմել: Բոլոր ժամանակաշրջանների պատմական գործիչները ոչ միայն Լիվիուսի ոճով են խոսում, այլև նրանց արտահայտած մտքերն ու զգացմունքները հատուկ են Օգոստոսի ժամանակին: Սակայն Լիվիուսի կարեւորագոյն պերճախոսութեանը զուրկ չէ գրական արժանիքներից, հեղինակը համոզեցուցիչ պատճառարանութեան և հետորական պաթոսի շնորք ունի: Ծառերն իրենց գեղարվեստական ուժով չեն զիջում պատմողականութեանը, և դրանք քիչ չափով չեն օժանդակել Լիվիուսի աշխատութեան գրական հաջողութեանը:

ՌՃԻ բնագավառում Լիվիուսը հետևում է խոսքի «առատութեան» սկզբունքին, որը հաստատել էր Յիցերոնը: Պատմական երկերի համար Յիցերոնն առաջադրում էր շարադրման մեղմ և համաչափ հոսունութիւն: Լիվիուսն այդպես էլ անում է: Չրնկնելով «գեկլամացիոն» եղանակի էֆեկտների ետևից, նա հանգամանորեն ծավալում է իր մտքերը երկար, երբեմն նույնիսկ չափազանց երկար, պարբերութիւններով:

Առաջին գրքերը, նվիրված հին Հռոմին, փոքր ինչ գունավորված են արխայիկացնող լեզվական կոլորիտով: Լիվիուսի գրական հակառակորդն ատտիկականների բանակից՝ Ասինիուս Պալիոնը,

նրա լեզվի մեջ գավառականության տարրեր էր գտնում: Մյուս անտիկ քննադատների դատողություններն ավելի բարեհաճ են. Կլիմաքիկանն, օրինակ, փառաբանում է Լիվիուսի «փայլվող մարրությունը» և «կաթնամեղրածորությունը» և նրան Հերոդոտի հետ է համեմատում:

Լիվիուսը տակավին կենդանության ժամանակ գրական հռչակ ստացավ: Նրա պատմությունն ասպարեզից դուրս մղեց բոլոր նախկին տարեգրիչներին և ռեսպուբլիկական ժամանակաշրջանի մասին հիմնական աղբյուրը դարձավ:

Հին Հռոմի փառաբանողը անձեռնմխելի հեղինակություն մնաց և հումանիստների համար: Գանթեն ասում էր նրա մասին. «Լիվիուսը, որը չի մոլորվում»:

Գեո Մաքիավելլին (1465—1527) «Պատողություններ Տիտուս Լիվիուսի առաջին դեկադայի մասին» իր աշխատության մեջ լիափատար հավատով կրկնում էր այն սուսպեկները, որոնք հաղորդում էր հռոմեական պատմաբանը: Սկսած XVII դ. վերջից պատմական քննադատությունը երևան է հանում Լիվիուսի աշխատության գիտական թերությունները, բայց նա դեռ երկար ժամանակ գեղարվեստական պատմագրության օրինակ էր մնում: Հռոմեական ռեսպուբլիկայի վեհապանձ կերպարները, որոնք մտել են նոր եվրոպական գրականության մեջ, հիմնված են Պլուտարքոսի կենսագրությունների և Լիվիուսի պատմության վրա:

## ՀՌՈՄԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԹԵ ԴԱՐՐ

### Ի. ՀՌՈՄԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՏՈՒՐԱՆ ՄԵՐ Թ. Ի Դ.

Օգոստոսի ստեղծած կաշարության կառուցվածքը («պրինցիպալ») իր հիմնադրի մահից հետո շարունակվեց 200 տարուց ավելի, ընդհուպ մինչև III դ. ձգնաժամը: Ռազմական դիկտատուրան միակ պետական ձևն էր, որի մեջ անտիկ հասարակությունը, քայքայվելով ստրկության հակասություններից, պոլիսալիս սիստեմի անկումից հետո, կարող էր շարունակել իր գոյությունը: Արդեն Օգոստոսի անմիջական հաջորդների օրոք կայսեր փառասական իշխանությունն նշանակելիորեն մեծացավ, բայց ոչ ոք մտքովն էլ չէր անցկացնում ռեսպուբլիկական կարգերին վերադառնալու մասին: Օպոզիցիա էր առաջացնում որոշ կայսրների բացորոշ դեսպոտիայի անցնելու փորձերը միայն: «Ազատությունը վերադարձնելու» լոզունգը, որ նետվում էր այդ ժամանակ սենատական արիստոկրատիայի օպոզիցիոն շրջանների կողմից, չէր շոշափում, սակայն, կայսրների ռազմական դիկտատուրայի սկզբունքը և վեր էր ածվում նրա ձևերի և մեթոդների մեղմացման հարցին:

«Կառավարության նյութական հենարանը, — գրում է Էնգելսը հռոմեական կաշարության մասին, — զորքն էր, որն ավելի շատ նման էր արդեն լանդսկնեխտների բանակին, քան թե հինհռոմեական գյուղացիական զորքին, իսկ բարոյական հենարանը՝ ընդհանուր համոզմունքն էր, որ այդ գոյությունից ելք չկա, որ եթե ոչ այս կամ այն կայսրը, ապա այնուամենայնիվ ռազմական տի-

բազմաթիվյան վրա հիմնված կայսերական իշխանությունը անխուսափելի անհրաժեշտություն է»<sup>2</sup> :

Օգոստոսի ազգականները՝ Հուլիոսները և Կլավդիոսները դինաստիայի առաջին կայսրների կառավարումը (Տիրերիոսը՝ 14—37. Կալիգուլան՝ 37—41. Կլավդիոսը՝ 41—54. Ներոնը՝ 54—68) ընթանում էր պալատական ինտրիգների և արյունալի հետապնդումների պայմաններում, որոնք կայսրների կողմից հարուցվում էին ընդդեմ սենատական օպոզիցիայի: Պալատական ինտրիգներին մասնակցում էր նույնպես և բանակը, մասնավոր հանձին «պրոլետարական» կայսերական գվարդիայի:

Ֆլավիոսների դինաստիայի ժամանակ (Վեսպասիանոս 69—79. Տիտոս՝ 79—81. Դոմիցիանոս՝ 81—96) հռոմեական հին արխատոկրատիան արդեն ջախջախված էր. սենատը համալրված էր իտալիկական և պրովինցիալ ավազանիով, որոնցից այնուհետև ելնում են և կայսրներն իրենք, բանակը վերակառուցված է ավելի խիստ դասակարգային սկզբունքով: Կայսրի և սենատի միջև համաձայնությունը խզվելով Դոմիցիանոսի օրոք վերանորոգված դեսպոտական տենդենցներով, երկար ժամանակով վերստին վերականգնում է Ներվայի (96—98) և Տրայանոսի՝ (98—117) կառավարման ժամանակից. ըստ պատմաբան Տակիտուսի արտահայտության նրանց հաջողվեց «պրինցիպատը համատեղել ազատության հետ» («ազատություն» տերմինը պետք է հասկանալ վերևում հիշված իմաստով. Տրայանոսի օրոք կայսրի փաստական իշխանությունը՝ նրա նախորդների համեմատությամբ՝ էլ ավելի ուժեղացավ): Ստորին խավերի հուզումները, հասկանալի է, չէր ընդհատվում, բայց հազվադեպ էր բացահայտ ձևեր ընդունում, և միայն նվաճված ժողովուրդների ապստամբությունները ժամանակ առ ժամանակ խանդարում էին կայսրության «ներքին խաղաղությունը»:

Արտաքին փառլի տեսակետից, մեր թ. I դարը հռոմեական պետության ծաղկման ամենարտաբնական կայսրությանն էր: Տերիտորիալ մի շարք նոր նվաճումներ կատարվեցին: Այսուհետև Հռոմին են պատկանում Հունոսի և Դանուբի վրայի երկրները, Բրիտանիան, Աֆրիկայի ամբողջ հյուսիսային առափնյան: Իտալիան այդ ժամանակ մնում է միջերկրածովյան առևտրի կենտրոն

\* Фр. Энгельс, Бруно Бауэр и раннее христианство. Соч., т. XV, М., 1935, стр. 606.

Այսպիսով իր տնտեսական առաջնությունը: Կայսրության իրար կողմնից Հոռոմ են հոսում մթերքներ, դրամ, ստրուկներ, կուլտուրական ուժեր: Վերջ տալով պրովինցիաների երբեմնի գիշատիչ շահագործմանը՝ կապալառուների և տարեց-տարի փոխարինվող մագիստրատների կողմից՝ կայսրությունը հաստատեց պրովինցիայի բնակչության համար զգալիորեն ծանր սիստեմատիկ շահագործում կայսերական պաշտոնյաների միջոցով, որոնք Հոռոմի համար հարկեր ու բնատուրքեր էին քանում: Եվ այնուամենայնիվ պրովինցիաների վիճակն սկսեց բարվորվել: Գերազանցորեն կարգավորված ճանապարհների սիստեմը կենտրոնը կապում է տերության ամենահեռավոր անկյունների հետ: Առևտրական հարաբերություններ էին պահպանվում նույնիսկ այնպիսի հեռավոր երկրների հետ, ինչպիսին էին Հնդկաստանն ու Չինաստանը, որտեղից Իտալիա էին ներմուծվում պերճանքի առարկաներ, թանկագին բարեր, մետաքս: Հոռոմի համար, ճիշտ է որ այդ միայն պասսիվ առևտուր էր, բայց արևմտյան պրովինցիաների հետ Իտալիան, գլխավորապես նրա հյուսիսային մասը, ակտիվ առևտուր էր վարում, արտահանելով գինի, ձիթապտղի յուղ, արդյունագործական արտադրանքներ: Կայսերական գանձարանը մտնող վիթխարի միջոցները հնարավորություն են ստեղծում շինարարական մեծ գործունեություն ծավալել: Հոռոմի հաճախակի հրդեհների, մանավանդ 64 թ. մեծ հրդեհը, հավելյալ խնամ ծառայեցին փարթամ շինարարական աշխատանքների համար:

Սակայն, չնայած առերևույթ նոր ծաղկմանը, շատ շուտով սկսեցին երևան դալ ստրկատիրական սիստեմի վերահաս քայքայման սիմպտոմները: Այն պրոցեսների տեսակետից, որոնք անդրադարձան հռոմեական գրականության վրա, մեզ այստեղ դիտարկելու հետաքրքրում է Իտալիայի դրությունը, բայց հատկապես հենց Իտալիայում տնտեսական անկման նշաններն ամելի իրիտա են դրսևորվում: Խոշոր տնտեսությունների կողմից մանրերի կլանելը, որն սկսած Գրակոսների ժամանակից հռոմեական պետական գործիչների մեջ տագնապ էր առաջացնում, շրջահատվեց նաև կայսրության շրջանում: Կեսարի և Օգոստոսի վտերաններին հողեր բաժանելը և մանր սեփականատերերին պաշտպանելու մյուս միջոցառումները միայն դանդաղեցնում, բայց չէին կասեցնում հողատիրության համակենտրոնացումը: Այդ պրոցեսի արդյունքներն էին՝ գյուղական վայրերի հետագա անմարդաբնակ

դառնալու (մանավանդ միջին և հարավային Իտալիայում) և խոշոր քաղաքներում պարազիտային տարրերի աճը: Մյուս կողմից՝ լայնածավալ և ցրված լատիֆունդիաներում ստրուկների անազատ աշխատանքը արդեն չէր կարողանում ուղեկցվել ախրոջ մշտական վերահսկողությամբ և անշահավետ էր դառնում գյուղատնտեսության այն բոլոր բնագավառներում, որոնք որևէ չափով ուշադիր խնամք և ինֆենտարի հանդեպ հոգաատար վերաբերմունք էին պահանջում: Ցանքադաշտերն անմշակ էին մնում կամ արտավայրեր էին դարձվում:

Գյուղատնտեսական տրակտատներում նշվում են ստրկական աշխատանքի անբավարար արտադրողականությունը: Աշխատում էին այդ բարձրացնել ստրուկների վիճակի մեղմացման միջոցով, փոխադրելով նրանց կիսաստրկական վիճակի, որն ինքնուրույն տնտեսավարության հնարավորություն էր ստեղծում: Դրան զուգընթաց տարածումն է ստանում մանր հողարածիները վարձակալության տալն ազատ քաղաքացիներին: Այդ մանր վարձակալները, կոլոնները, այնուհետև հաճախ կախյալ վիճակի մեջ էին ընկնում կալվածքի տիրոջից: Այսպիսով, երկու կողմից կիսակախյալ հողագործ դասակարգ էր ստեղծվում: Կոլոնները «միջնադարյան ճորտերի նախորդներն էին»\*: Ի դարում կոլոնային հարաբերությունները դեռ նոր էին նշմարվում, բայց փաստն ինքը վկայում է այն մասին, որ ստրկատիրական սիստեմը արդեն հասել է իր տնտեսական հնարավորությունների սահմանին:

Ոչ պակաս նշանակալի հետևանքներ ունեցավ մի այլ հանգամանք: Իտալիան բավարար սոցիալական բազա չէր հանդիսանում կայսերական իշխանության պաշտպանության համար: Արդեն I դ. կեսին կայսրներն անհրաժեշտ էին համարում ընդլայնել պրովինցիայի բնակչության քաղաքացիական իրավունքները: Իտալիայի թուլությունն առանձնապես խիստ զրևեարվեց խոտովությունների ժամանակ, որոնք հետևեցին Ներոնի վախճանվելուն: (68—69 թ. թ.): Այդ ժամանակից պրովինցիայի բնակիչներին սկսում են լայնորեն բանակի մեջ զբաղվել, իսկ պրովինցիական ավագանու վերնախավը թափանցում է սենատը: Պրովինցիաների տեսակարար կշռի աճումով՝ սկզբում արևմտյան, որոնք տնտեսապես և կուլտուրապես ձգտում էին դեպի Իտալիա, իսկ այնուհետև նաև արևելյան, վերանում են նրանց տնտեսական զարգաց-

\* Фр. Энгельс. Происхождение семьи, частной собственности и государства, Соч., т. XVI, 1. 1937, стр. 126.

ման համար արհեստականորեն կառուցված արգելակները: Պրովինցիաները անտեսապես ավելի ինքնուրույն են դառնում, կայսրության առանձին մարզերի միջև փոխանակությունը թուլանում է, իսկ այդ կասեցնում էր Իտալիայի՝ որպես միջերկրածովյան առևտրի կենտրոնի բարեկեցությունը: Պրովինցիաների բարձրացումն առանձնապես նկատելի է դառնում II դ.: Ադրիանուսի ժամանակից (117—138) Իտալիան արդեն կորցնում է իր անտեսական առաջնությունը: «Օտարերկրացիների», ոչ-քաղաքացիների, շահագործումը միշտ՝ ստրուկների շահագործման զուգընթաց եղել է ստրկատիրական սիստեմի երկրորդ հիմքը: Այդ երկու հիմքերն էլ սկսեցին կործանվել:

«Հուլյների և հռոմեացիների մոտ մարդկանց անհավասարությունները շատ ավելի մեծ նշանակություն ունեին, քան որևէ հավասարություն: Հնադարյան մարդկանց անուպաման խելացնորություն կթվար, եթե ասեին, թե հուլյներն ու բարբարոսները, ազատներն ու ստրուկները, պետության քաղաքացիներն ու զրանց պաշտպանությանն ստատիլնաձնները, հռոմեական քաղաքացիներն ու հռոմեական հպատակները (այս բառի լայնապարփակ արտահայտություն) կարող են քաղաքական հավասար նշանակության ակնկալություն ունենալ: Այս բոլոր տարբերությունները, բացի ազատների և ստրուկների միջև եղած տարբերություններից, հռոմեական կայսրության օրով հետզհետե վերացան. դրա հետ միամեկական կայսրության օրով հետզհետե վերացան. դրա հետ միապետության համար, որի հիման վրա զարգացավ հռոմեական ամենակատարյալ ձևակերպությունը, որ մեզ հայտնի է»<sup>\*</sup>:

Հինավուրց քաղաքացիական անհավասարությունների այդ ոչնչացումը, սակայն, զուգակցվում էր զուլքային տարբերությունների խորացման և ամբողջ բնակչության քաղաքական լիակատար իրավազրկության հետ: «Բնակչությունն ավելի ու է՛լ ավելի էր բաժանվում երեք դասակարգի, որոնք կազմվում էին ամենաբազմազան տարբերից և ազգություններից՝ հարուստներ, որոնց շարքում քիչ չէին ազատագրված ստրուկներ (տես Պետրոնիոս), խոշոր հողատերեր, վաշխառուներ, կամ մեկը և մյուսը միասին, ինչպես քրիստոնեության քեռի Սենեկան էր. չքավոր ազատներ՝ Հոմերոս նրանց կերակրում և զվարճացնում էր պետությունը, իսկ

\* Տր. Էնգելս, Անտի-Մյուրինգ, 1932, էջ 133:

պրովինցիաներում իրենց էր թողնվում հողալու իրենց մասին. վերջապես, ստրուկների հսկայական մասան: Պետութւյան, այսինքն՝ կայսրի հանդեպ, առաջին երկու դասակարգերը գրեթե նույնպես իբրևազուրկ էին, ինչպես և ստրուկներն իրենց տերերի հանդեպ: Առանձնապես Տիրեբրուսից մինչև Եկրոն ժամանակաշրջանում սովորական երևույթ դարձավ, որ հարուստ հողատերերին մահվան էին դատապարտում նրա համար, որպեսզի զավթեն նրանց ունեցվածքը\*:

Հասարակական վերնախավի կազմն էլ փոխվեց: Հին նորիլիտեար մահանում էր. նրա կործանումն արագացավ այն արյունալի հետապնդումներով, որոնք որոշ կայսրների ժամանակ հարուցվում էին սենատական արիստոկրատիայի դեմ: Նախկին արիստոկրատիայի տեղը գրավում էին սենատորական նոր տոհմեր, որոնք հավաքադրվում էին իտալիկական քաղաքների ավագանուց և պրովինցիաներից: Այդ միջավայրում հողատեր մահանաւորները և խոշոր հարուստներն այնուամենայնիվ շատ չէին: Հողատիրութւյան համակենտրոնացումը, կայսերական բռնագրավումները և պրովինցիաների կողոպտման օգնութւյամբ երբեմնի հեշտ հարստանալու եղանակների անհետացումը՝ աղքատացնում էին վերնախավային դասը: Նույնը տեղի ունեւ երկրորդ արտոնյալ դասի՝ հեծյալների վերաբերյալ, որոնք վերասերվել էին կայսերական սաշտոնեութւյան և է՛լ ավելի զգալի շափերով համալրվում էր պրովինցիայի բնակչութւյամբ: Կայսերական Հռոմի համար բնորոշ երևույթ է դառնում այսպես կոչված կլիենտուրյան նշանակալի շափերով զարգացումը. փոքր ինչ ունեւր մարդիկ, երբեմն ծագումով նույնիսկ վերնախավային դասերին պատկանող, մտնում են ազդեցիկ կամ հարուստ մարդու շրախումբը, դառնում նրա «կլիենտները»: Կլիենտները զանազան կատեգորիաների էին լինում: Ստորին և քանակապես առավել բազմաթիւը պարտավոր էր շնչին վարձատրութւյամբ ամեն առավոտ ներկայանալ և «ողջունել» իր պատրոնին, իսկ այնուհետև ուղեկցել նրան հանրային ելույթների ժամանակ: Այնինչ զգալի հարստութւյուններ էին կուտակվում մի այլ խավի՝ առևտրական և ֆինանսական դործարանների մոտ, որոնք հաճախ ելնում էին ազատագրված ստրուկների միջավայրից: Կլիենտի և հարուստ, ազատագրվածի

\* Фр. Энгельс, Бруно Бауэр и раннее христианство, Соч., т. XV 1935, стр. 606.



«Քնական պատմություն» — 37 գրքով) անբննադատ կոմպիլիացիա է վիթխարի քանակությամբ գրքերից, որ կարդացել էր անխոնջ հեղինակը: Սենեկայի «Քննագիտական հարցերում» (Quaestiones naturalis) բնության հետազոտությունը դիտվում է իբրև աստվածիմացության մի զենք, և շարադրությունը շաղախված է մեծ քանակությամբ բարոյախոսական գատողություններով. մինչդեռ հիշատակված երկու աշխատություններն էլ հոռմեական մատենագրության ամենանշանակալի բնագիտական երկերն են, որոնցից հետագայում միջնադարյան Արևմուտքն իր գիտելիքներն էր քաղում բնության մասին:

«Կախարդանքի» տարբեր ձևերը գրեթե համընդհանուր բնությունելության էին արժանանում, և I դարի պոեզիան լեցուն է «մոգական» գործողությունների նկարագրություններով: Քննության առնվող այս ժամանակաշրջանի հենց սկզբին է վերաբերում աստղագուշակության մասին ոմն Մաքսիմուսի պատկանող դիպակտիկան պոեմը: Հեղինակն իր երկը նվիրել է Տրեբիրուս կայսրին, որն ինքն էլ հրապուրվում էր աստղագուշական «քաղդեական արվեստով»: Ոչ պակաս ժողովրդականություն էին վայելում արևելյան պաշտամունքները և միստերիաները, սրոնք հետաքրքրվողների համար «բաց էին անում» մյուս աշխարհի գաղտնիքները և անդրշիրիմյան երանություն էին խոստանում: Այդ պաշտամունքները, տրադիցիոն կրոնի և կայսրների պաշտոնական պաշտամունքի հետ զուգընթաց սկսում են պետականորեն ճանաչվել և Հռոմի կրոնական կյանքում ամենաակտիվ գործոններն են դառնում, մասնավորապես միջավայրում և Հռոմի հասարակության ստորին խավերի մեջ: Փիլիսոփայությունը ոչ միայն չէր պայքարում անոտիապաշտության դեմ, այլ նույնիսկ խրախուսում էր: Ստոիկությունն իր պարտժամբ քիչ չէր պարտական «կախարդանքներին» և կրոնի՝ սիրաշահելուն: Ե՛լ ավելի խիստ արտահայտված կրոնական բնույթ ունեւր նեոպլատոնականությունը: Հռոմեական փիլիսոփաները ավելի ու ավելի էին հեռանում տեսական հարցերից, սահմանափակվելով իրենց գործնական բարոյախոսության բնագավառով, իսկ այստեղ սիստեմների, մասնավորապես Ստոալի և էպիկուրի ուսմունքի միջև, տարբերությունը շնչվում էր: Սենատի հետ կայսրների պայքարի ժամանակաշրջանում ողու ամբողջական և կյանքի բարիքներն արհամարհելու պատրաստակամության ստոիկա-էպիկուրյան իդեալը օպոզիցիոն երանդ ուներ և հոռմեական արխատկրատիայի

համար ծառայում էր որպես պասսիվ դիմադրության փիլիսոփայություն: Այդ ժամանակ իշխանությունը կասկածանքով էր վերաբերվում փիլիսոփաներին: Ավելի ուշ, երբ կայսրների և սենատի փոխ համաձայնություն հաստատվեց, փիլիսոփաները կայսրության ջատագովներ դարձան և մշակում էին իսկական «Իրապետի», պետության ծառայի տեսությունը: Փիլիսոփաների բարոյական քարոզը, սակայն, վարկաբեկվում էր բարոյախոսների անվայել կյանքի եղանակով:

Դրա փոխարեն շտեմնված ծաղկման է հասնում ճարտասանական կրթությունը: Ճարտասանական ուսուցումը իր սաներին տալիս էր ոչ-հարուստ այն գաղափարների պաշարը, որի կարիքն զգում էր կայսրության վերնախավի մահերեսային կուլտուրան և սովորեցնում էր նրբագեղություն շարադրել սովորական մտքերը: Կայսրության ամբողջ արևմտյան մասում, որի համար կուլտուրայի լեզուն լատիներենն էր (ի տարբերություն հելլենականացած Արևելքի), լատինական ճարտասանական դպրոցի օգնությամբ հաստատվում էր միասնական կուլտուրական որոշ մակարդակ. այդ մակարդակն էին նկատի առնում բազմաթիվ կոմպիլացիաները՝ ձեռնարկները, տեղեկատուները, որոնք կազմվում էին անտիկ գիտության բոլոր բնագավառների վերաբերյալ: Ինքնուրույն հետազոտական աշխատանք մենք գտնում ենք միայն ֆիլոլոգիայի բնագավառում: Ֆիլոլոգիան սպասարկում էր դպրոցի կարիքները, հրատարակելով և մեկնաբանելով հոմերական գրականության կլասիկներին: Ինքնուրույն աշխատանք նկատվում էր հրեմն տեխնիկական դիսցիպլինաների ոլորտում և, վերջապես, իրավագիտության մեջ: Իրավաբաններն, ըստ էնդելսի խոսքերի, «քանչևցած էին նոր կարգերով, որովհետև դասային բոլոր տարբերությունների համահարթումը նրանց հնարավորություն էր տալիս ամբողջ լայնությամբ մշակելու իրենց սիրած մասնավոր իրավունքը. դրա փոխարեն նրանք էլ կայսրների համար կազմում էին ամենանազկալի պետական իրավունքը, որպիսին երբեից գոյություն է ունեցել»<sup>2</sup>:

Առվեստի համար բնորոշ էր արտաքին փայլի զուգորդումը ներքին բովանդակության աղքատության հետ: Ստեղծվում են փիլիսոփայի ճարտարապետական կառուցումներ, հաղթանակի սյու-

<sup>2</sup> Ф. Энгельс. Бруно Бауэр и раннее христианство, Соч., т. XV, 1935, стр. 607.

ներ և կամարներ, հսկայական արձաններ, ինչպիսին Ներոնի ավելի քան երեսուն մետրանոց արձանն էր, որը պատկերում էր նրան արեղակի աստծու ատրիբուտներով: Սովորական է դառնում ձրդտումը դեպի զղայական էֆեկտները, մանրամասնությունների ծանրաբեռնվածությունը, վառ գույների առատությունը, քանդակագարդերով ծանրաբեռնվածությունը, թատրոնա-ֆանտաստիկ փարթամությունը: Ամբողջի և նրա մասերի միջև ներդաշնակ հարաբերակցությունը, որ հատուկ էր կլասիկ ոճին, դրա հետ կորչում է և գեղարվեստական ընդհանրացման ուժը թուլանում: Որոշ առումով կայսրության արվեստն այնուամենայնիվ առաջադիմություն է հանդես բերում համեմատած նախորդ ժամանակաշրջանների հետ: Առանձնապես այդ նկատվում է եզակին պատկերելու ոլորտում: Նկարչական և քանդակագործական դիմանկարը հասնում է անհատական արտահայտչականության տակավին չեղած աստիճանի: Մեծ կենսականությամբ աչքի են բնկնում նույնպես որոշ մանր տեսարաններ առօրյա կենցաղից: Գեղարվեստագետի ուշադրությունը ավելի հաճախակի բևեռվում է անշունչ բնության առարկաների, լանդշաֆտի, կենդանիներ պատկերելու վրա: Մեկուսի ժայռոտ վայրը, ծովափնյա պեյզաժը, վիլլան, ալգին՝ պատկանում են I դարի արվեստի սիրած թեմաների թվին: Պաթետիկ հուզվածության հետ, այսպիսով, հերթագայում է հաճելի անդորրը: Այդ բոլորը մեզ համար առավել ևս հետաքրքրական է, քանի որ գրականության մեջ կատարվող պրոցեսների հետ բաղձաթիվ համանմանություններ է ներկայացնում:

Օգոստոսի մահվանից (14 թ.) մինչև Տրայանուսի կառավարման վերջի (117 թ.) ժամանակաշրջանն ընդունված է անվունել «հռոմեական գրականության արծաթե դար»: Նրա կենտրոնը մնում է ամբողջ կայսրության կուլտուրական կենտրոն՝ Հռոմ քաղաքը, որն իր ճաշակներն է թելադրում նույնիսկ հունական աշխարհին: Նա արդեն Հունաստանի համեմատությամբ իրեն հետամնաց չի զգում, և հռոմեական գրականությունը առավելապես հենվում էր հռոմեական տեղական տրագիգիայի վրա, ազատագրվելով անմիջական հունական ազդեցությունից:

Կայսրության հաստատվելուց հետո Հռոմի հասարակական կյանքում առաջացած փոփոխությունները ամենից առաջ արտահայտվեցին գրականության քաղաքական թեմատիկայի տեսալուծար կռիվ վրա: Քաղաքական թեման կորցնում է այն նշանակությունը, որը նա ուներ ռեսպուբլիկայի վերջին դարում և Օգոստոսի

ժամանակներում և գրեթե բոլորովին մահանում կայսրների և սե-  
նատի միջև պայքարի վերջանալուց հետո, փոխակերպվելով պրին-  
ցեպսի «գործերի» շոդորորթող փառարանության: Կայսրության  
գրականությունը ձգտում է հզոր թոխչքների և վերամբարձ պաթոսի-  
բայց, որևէ շափով նոր և նշանակալի բովանդակության բացակա-  
շության պայմաններում, այդ տանում է միայն դեպի ճարտասանա-  
դեկլամացիոն ոճի տիրապետությունը: Ճարտասանությունը, թա-  
փանցած լինելով պոեզիայի մեջ արդեն Օգոստոսի ժամանակ (Օվի-  
դիուսը և նրա շրջանը), շոշափում է գրականության բոլոր բնագա-  
վառները, առաջին հերթին բարձր ոճի գրականությունը: Այդ գրա-  
կանության երկերը շատ դեպքերում հեռու են ակտուալ հարցե-  
րից և թեակոխում են ֆանտաստիկայի բնագավառը: Մեր այժմյան  
ճաշակի տակետից դրանք տափակություններ են և համակված  
են կեղծ պաթոսով. այդ հերոսների վերամբարձ կեցվածքի և  
նրանց նպատակների օբեկտիվորեն չնչին լինելու միջև եղած հա-  
կասության արդյունք էր: Ինչպես և կերպարվեստի մեջ, նկատե-  
լի է պաթետիկ տեսարաններով ծանրաբեռնվածություն: Երկերն  
էրենք հորինվում էին ավելի առանձին էֆեկտավոր մասերը դեկ-  
լամացիոն կատարման, ըսն ամբողջի գեղարվեստական գործու-  
նեության համար:

Հարկ է առանձին հիշատակել դրամայի դեկլամացիոն բնույ-  
թը: Այդ ժամանակ թատրոնը գրեթե միանգամայն կարվում է  
գրականությունից: Նրա մեջ իշխում է խաղի հանդիսատեսային  
փարթամության և զգայական արտահայտության ետեից ընկնելը:  
Թատրոնական ներկայացումը երբեմն իր մեջ է ներթմոսում ամֆի-  
թատրոնի արյունարբու տեսարանի տաղրերը, թույլ տալով իսկա-  
կան սպանություն, խաչելություն, այցում կամ գազանների հոշո-  
տում: Թատրոնական հիմնական ժանրերն են՝ միմը, ատելանան,  
պանտոմիմը (բալետ): Լուրջ դրաման, իբրև բեմական ժանր,  
մահանում է և դառնում դուռ պրական ժանր, նախատեսնված  
ընթերցանության, բայց ոչ խաղի համար:

Մյուս կողմից, հասարակական կյանքի աճող բովանդակա-  
զբեկությունը գրական հետաքրքրությունը փոխարկում է երկյակ  
ուղղությունը՝ մասնավոր կյանքի և առանձին մարդու ներքին  
աշխարհի թեմատիկային: Կենցաղային պատկերները, մասնավոր  
կյանքից դեպքերը, վիլլաների, խնջույքների, հանդեսների, գրական  
մրցությունների նկարագրությունները I դարի հոմոեական գրա-  
կանության մեջ մեծ տեղ են գրավում: Անտիկ հասարակության

պատմութեան մեջ դժվար է նշել մի ժամանակաշրջան, որը կեն-  
ցադով մեզ նույնքան լավ ծանոթ լինի, որքան Հոռմեական կաշս-  
րութեան ժամանակը, մանավանդ I—II դ. դ. վաղ կաշսրութեան  
ժամանակը: Հատկանշական է այդ տեսակետից նամակներ  
բովանդակութեան փոխվելը: Յիցերոնի նամակները առաջնակարգ  
կարեորութիւն ունեցող պատմական աղբյուրներ են, Պլինիոս  
Կրտսերի նամակները, որն աչքի ընկնող պետական դիրքեր էր դրա-  
վում II դ. սկզբին, ավելի շատ նշույթ են մատակարարում կուլտուրա-  
լի և կենցաղի, քան քաղաքական պատմութեան համար: Գրական  
ժանրերը, իդեալականացված կամ երգիծական-մերկացնող ձևով  
Ֆիքսելով կենցաղի մանրամասնութիւնները, այժմ ապրում են  
իրենց ամենաբարձր վերելքը. նույնիսկ լողունք է նետվում՝ չգու-  
նավորված-ճշմարտացի նկարագրել կյանքը և գրականութիւնը  
նատուրալիստական անկեղծութեամբ մերկացնում է հոռմեական  
հասարակութեան աստուր: Կաշսրութեան գրականութիւնը (ինչ-  
պես հունականը, այնպես էլ հոռմեականը) ավելի բարձր աստի-  
ճանի է հասնում նույնպես գրական դիմանկարի արվեստի  
իմաստով, այսինքն՝ պայծառ անհատական բնութագրութեան,  
ինքնազննման ընդունակութեան և ապրումների վերլուծութեան  
իմաստով: Բայց անախի գրականութիւնը այդ արվեստին է հաս-  
նում արդեն ստրկատիրական հասարակութեան քայքայման սկզբի  
էտապում, երբ անհասի ներքին կյանքն ինքը կամ խամբում է,  
կամ գունավորվում է կրօնական երանգներով, իսկ հոռմեական  
գրողների կենցաղային ուրվագծումները մեր առաջ բաց են անում  
ապագայագուրկ դասակարգի պատկերը, մի դասակարգ, որը ամուր  
կատաշտ է նշույթական բարիքներին և պորտաբույծ գոյութեան  
առավելութիւններին, բայց անընդունակ է կուլտուրական նոր  
արժեքների ստեղծագործութեան մեջ:

Ուստի, չնայած նշված առաջադիմական մոմենտներին, հոռ-  
մեական գրական մակարդակը իջնում է, և առանձին փայլուն  
բացառութիւնները չեն փոխում ընդհանուր պատկերը: Դրա փո-  
խարեն շատ մեծ է գրականութեան քանակական աճը: Դիլետան-  
տիզմը, որի աճը հարկ եղաւ նշել արդեն Օգոստոսի օրոք, շարու-  
նակում է ընդգրկել հոռմեական վերնախավի ավելի ու ավելի լայն  
շրջաններ: Գրեթէ բոլոր կաշսրները հանդես էին դալիս գրական  
ներկերով շափածո կամ արձակ: Առավել ևս ավագանու փա-  
ռասիրութիւնը սպաստան էր որոնում գրականութեան մեջ, քանի  
որ բավարարութիւն չէր գտնում պետական գործունեութեան

«ահմանափակ հնարավորություններում. նույնիսկ խոշոր պաշտոնական անձինք գտնում էին, որ իրենց գրական անդորրն սերունդների համար ավելի է արժանի փառքի, քան նրանց «ծառայությունը կայսրին: Հանրային ընթերցանությունները («ռեցիտացիաները») բազմաթիվ ունկնդիրներ և մասնակիցներ էին գրավում: Ռեցիտացիաներին միանում էին կայսրների կազմակերպած պաշտոնական «մրցությունները»: Սակայն կայսրությունը սիստեմատիկ խրախուսանք չէր ցույց տալիս գրականությանը և պրոֆեսիոնալ գրողի գրությունը հաճախ շատ դժվար էր լինում, եթե սեփական եկամուտներ չէր ունենում:

«Արժաթե դարի» բնորոշ առանձնահատկություններին է պատկանում, վերջապես, մեծ քանակությամբ պրովինցիալների հանդես գալը գրական գործիչների միջավայրում: Մասնավորապես Իսպանիան, հոռմեականացած արևմտյան պրովինցիաներից ամենահինը և կուլտուրապես ամենից աճածը, մի ամբողջ շարք նշանակալի գրողներ տվեց (Սենեկա, Լուկանուս, Բոլինտիլիանուս, Մարցիալիս և ուրիշներ):

«Արժաթե դարի» ներսում կարելի է տարբերել երկու շրջան՝

1) Հուլիոսների և Կլավդիոսների՝ սենատական օպոզիցիայի դեմ կայսրների ամենասուր պայքարի շրջանը — ճարտասանագեղկամացիոն ոճի ծաղկումը.

2) Ֆլավիոսների, Ներվայի և Տրայանուսի կառավարումը — կլասիկական բեկցիայի շրջանը:

## 2. «ՆՈՐ ՈՃԸ»: ՍԵՆԵԿԱ.

Օգոստոսի ժամանակի «գեղկամատորների» ստեղծած ոճը ամենամեծ չափով տարածումն ստացավ I դ. կեսին, Կլավդիուսի և Ներոնի օրոք: I դարի գրողները այն անվանում էին «նոր», «ժամանակակից» ոճ՝ ի տարբերություն Ցիցերոնի և նրա հետևորդների «հինավուրց» ոճի: Ցիցերոնի երկարաշունչ ճառերը, նրա փիլիսոփայական դատողությունները, խստորեն հավասարակշռված պարբերություններն այժմ թվում էին թորշոմած և տաղտկալի: Նոր ուղղության լողունգներն էին՝ «բուռն լինելը», «սրբնթացությունը», «ավյունավոր լինելը»:

«Ասիականության» գրական տրադիցիաները պարարտ հող գտան I դարի Հռոմում, նրա փայլի ծարավով, խրոխտ կեցվածքի և վառ-զգայական տպավորությունների ձգտմամբ: Տիբերիուսից

մինչև ներոնի ժամանակաշրջանի հասարակական անհանգիստ միջոցները էլ ավելի էր ուժեղացնում ձգտումը դեպի տֆեկտավորությունը: Դեկլամացիոն ոճը ծավալվում էր հատու հղիված ֆրազներով՝ մտքի՝ անսպասելի ընթացքներով (այսպես կոչված «սենտենցներով»), իմաստի կողմից ոչ միշտ բնական փոխաբերությունների կուտակմամբ, բայց լսողության համար հաճելի բառազուգորդություններով: Պոեզիայի և պրոզայի միջև սամանների ջնջումը, պոետիկական արտահայտության միջոցների թափանցումը պրոզայի մեջ, իսկ հետադարձաներինը՝ պոեզիայի մեջ — ամբողջ «արծաթե դարի» գրականության կարևորագույն առանձնահատկություններից մեկն էր: Նոր ոճի կողմնակիցները իրենց նվաճումները տեսնում էին՝ «սենտենցների սրամիտ համառոտության», «նկարագրությունների փայլի», «նրբագեղ և պոետիկ կոկոսության», խոսքի «զվարթ գեղեցկության» մեջ:

Տակիտուսի «Հռետորների մասին գիալոգում» ժամանակակից պերճախոսության պաշտպան Ապրուսը կշտամբում է Յիցերոնին, որ նա «սվգրների ժամանակ դանդաղկոտ է, պատմելիս՝ երկար, խոտորումների շափ շունի, դանդաղ է շարժվում, հազվադեպ է սգեորվում, — պարբերություններից քչերն են վարպետորեն և որոշ փայլով վերջանում»: Այդ ճառերում, — շարունակում է Ապրուսը, — կարծես չավարտված շնքի մեջ, պատերն ամուր և հաստատուն են, բայց հարկ եղած չափով հղկված չեն և հարկ եղած չափով չեն փայլում: Իսկ ես ուզում եմ, որ հռետորը, ինչպես հարուստ և փարթամ ապրող տնատերը, ոչ միայն ապրի տանիքի տակ, որը պաշտպանի նրան անձրևից ու քամուց, այլև ուրախացնի նաև աչքի հայացքը, որպեսզի այդ տանիքի տակ կարիքի համար անհրաժեշտ կահույք լինի, որպեսզի այդ կահավորման մեջ ոսկի և թանկագին քարեր լինեն, — առարկաներ, որոնց ձեռք վերցնելը հաճելի լինի և որոնցով կարելի լինի բաղմիցս սքանչանալ»:

«Նոր» ոճի լավագույն վարպետը I դ. կեսին՝ Լուցիուս Անենուս Անենկան էր (ծնվել է մեր թվարկության մի քանի տարի առաջ, մահացել է մեր թ. 65 թ.): Սենեկա Ավագի երեք որդիներից միջնակը՝ Լուցիուս Անենուս Անենկան ծնվել է Իսպանիայի Կորդոբ (ժամանակակից Կորդովա) քաղաքում, բայց մեծացել է Հռոմում: Նա կրթություն էր ստացել նոր ճարտասանության ոգով և ընդլայնել էր այն փիլիսոփայական զբաղմունքներով: Նեո-

պլուխագործական վեգետարյանութեան քարոզիչ Սոտինը, ստո-  
 իկ Ատտալը, որը քարոզում էր շքավոր և զուսպ կյանքի մասին,  
 ղեկավարող Ֆադիանը՝ Սեբասիուսի դպրոցի հետևորդը՝ երիտա-  
 սարդ Սենեկայի փիլիսոփայութեան ուսուցիչներն էին: Միայն հոր  
 հորդորումները նրան ետ կանգնեցրին վեգետարյանութեամբ հրա-  
 պուրվելուց, որը կասկածամիտ Տիրեբրուսի ժամանակներում  
 դիտվում էր որպես «ստարեկույտ սնտրիապաշտութիւն» և որպէս  
 անբարեմիտ մտածելակերպի ցուցանիշ: 30-ական թվականներին  
 Սենեկան զբաղվում էր փաստաբանական գործունեութեամբ և  
 բլեստորի պաշտոն ստանալով, բնկավ սենատ: Որպէս դատա-  
 կան հռետոր նրա հաջողութիւնները կատաղութիւն առաջացրին  
 Կալիգուլա կայսրի մեջ, որը չէր կարողանում տանել ուրիշի փառ-  
 քը: Կալիգուլան այն է հրամայում էր սպանել Սենեկային, բայց  
 մեղմացավ, երբ նրան հալաստիացրին, որ հիվանդոտ Սենեկան  
 առանց այդ էլ շուտով կմեռնի: Կլավդիուսի կառավարման սկզբին  
 կայսրուհի Մեսալինայի ինտրիգներով Սենեկան աքսորվեց Կոր-  
 սիկա անապատը (41 թ.), ուր անցկացրեց ութ տարի, զբաղվելով  
 գրականութեամբ և փիլիսոփայութեամբ: Մեսալինայի կենդանու-  
 թյան ժամանակ վերադարձի մասին բոլոր բարեսիրտութիւնները  
 անհետեանք էին մնում: Չօգնեց և Կլավդիուսի ազատագրված  
 ստրուկ աղղեցիկ Պոլիբիուսին, նրա եղբոր մահվան առթիվ, ուղղ-  
 ված շողորբով «միսիթարական» նամակը (մտաւորապէս 44 թ.):  
 Մինչդեռ Կլավդիուսի երկրորդ կին Ագրիպինան Սենեկային վե-  
 բադարձրեց արքայից, նրա համար պրետորի պաշտոն հաջո-  
 դացրեց (49 թ.) և նրան հանձնարարեց առաջին ամուսնութիւնի  
 իր որդու՝ ապագա կայսր Ներոնի դատարարակութիւնը: Ներոնի  
 գահակալութեամբ (54 թ.) Սենեկան հարստութիւնների և մեծա-  
 բանքների արժանացավ: Պրետորականների պետ Բուռուսի հետ  
 միասին նա կայսրութեան փաստական ղեկավարն էր Ներոնի կա-  
 ռավարման առաջին տարիներին: Այդ ժամանակը, որ նշանավոր  
 էր դեսպոտիկ ուժի մի թուլացմամբ, հռոմեական պատմագրութեան  
 մեջ է անցել որպէս երջանիկ «Ներոնի հնդամյակ»: Երիտասարդ  
 կայսրին հասցեակրված «Երառաւորյան մասին» տրակտատում  
 (55—56 թ. թ.) զարգացվում են մտքեր միահեծան կառավարողի  
 համար: 56 թ. Սենեկան կոնսուլութիւն ստացավ: Այն տարիներ  
 ին, երբ Սենեկան իշխանութեանը մոտ էր, նրա անձնական վար-  
 քը, սակայն, լուրջ կշտամբանքներ առաջացրեց: Նշում էին, որ  
 «իմաստունը» կարճ ժամանակում 300 միլիոն սեստերցի հաննով

(=15 միլիոն ոսկի ուսուրի) կառողջութիւնն է զիզել, որ նա ժառանգութիւններն ետևից է ընկել և վաշխառուական գործառնութիւններ է կատարում: Այդ մեղադրանքների դեմ Սենեկան հանդես է գալիս «Նըշանիկ կյանքի մասին» տրակտատով (58—59 թ. թ.), որի մեջ քննվում է փիլիսոփայի դեպի հարստութիւնը ունեցած վերաբերմունքի հարցը. այդ նույն թեմային նա վերադառնում է հետագայում «Բարեբարութիւնների մասին» տրակտատում: Կշտամբանքների մյուս աղբյուրը Սենեկայի ակտիվ մասնակցութիւնն էր պալատական ինտրիգներին և նրա ներդրած Վերաբերմունքը Ներոնի փշացած հակումների հանդեպ: Երբ Ներոնի հրամանով սպանվեց նրա մայր Ագրիպինան, Սենեկան կայսրի համար սենատին ուղղված գրութիւն կազմեց սպանվածի հասցեին ամեն տեսակի մեղադրանքներով (59 թ.): Վերջին տարիներում Սենեկայի ազդեցութիւնը Ներոնի վրա թուլանում է և Բուռուսի մահից հետո (62 թ.) միանգամայն վերանում:

Այդ ժամանակից նա իրեն հեռու էր պահում արքունիքից և խորասուզվեց լարված գրական գործունեութեան մեջ, բայց նրա գրութիւնն օրավուր ծանրանում էր Ներոնի ատելութեան աճելու հետևանքով: 65 թվին հարմար առիթ գտնվեց դատաստան տեսնելու Սենեկայի հետ. այսպես կոչված Պիսոնի դավադրութեան բացվելու կապակցութեամբ, նա կայսրից հրաման ստացավ իր կյանքին վերջ տալ անձնասպանութեամբ: Տակիտուսի պատմելով, Սենեկան այդ իրադրոճեց ոգու լիակատար արիութեամբ և մեծ առժանապատմութեամբ:

Սենեկայի ուսմունքի և նրա կյանքի միջև եղած հակասութիւնները, որոնք ժամանակակիցների աչքին էին ընկնում, լիովին արդարացնում են էնգելսի խիստ գնահատականը. «Այդ ստորիքը, քարոզելով առաքինութիւն և զսպվածութիւն, առաջին ինտրիգանն էր Ներոնի արքունիքում, ընդ որում գործը գլուխ չէր գալիս առանց սողալու. նա Ներոնից պարզներ էր կորզում փողեր, կալվածքներ, այգիներ, պալատներ և, քարոզելով ավետաբանական Ղազարոսի ազգատութիւնը, ինքը հենց նույն սոսակի հարուստն էր: Միայն այն ժամանակ, երբ Ներոնը պատրաստվում էր նրա կոկորդից բռնել, նա կայսրին խնդրեց իրենից ետ վերցնել բոլոր պարզները, քանի որ նրան բավական է և փիլիսոփայութիւնը»\*:

\* Фр. Энгельс, Бруно Бауэр и раннее христианство. Соч., т. XV, 1935, стр. 607.

Սենեկայի բազմաթիվ երկերը լիովին չեն պահպանվել: Մեզ հասած նրա գրական ժառանգությունը բաժանվում է երկու մասի՝ ֆիլիսոփայական երկեր [«Բարոյախոսական նամակներ Լուցիլիուսին», 63—64 թ. թ., «Ֆնագիտական հարցեր», 62—63 թ. թ. և մի շարք մանր տրակտատներ բարոյախոսական թեմայով] և պոետիկական երկեր (էպիգրամներ, «Դրամացում» երգիծանք և ողբերգություններ):

Սենեկայի փիլիսոփայական հայացքներն աչքի չեն ընկնում ոչ հետևողականությամբ, ոչ կայունությամբ: Նրա դատողությունները կենտրոնացած են հոգեկան կյանքի և զործնական բարոյագիտության հարցերի շուրջը: Փիլիսոփայությունը հոգու ճարն է. բնության ճանաչումը Սենեկային հետաքրքրում է առավելապես կրոնա-բարոյագիտական կողմից, իբրև միջոց բնության հետ միաձուլված աստվածության ճանաչման («ի՞նչ է աստվածը—տիեզերքի հոգին») և հոգին կեղծ սարսափներից մաքրելու համար, իսկ տրամաբանական հետազոտություններում նա միայն անպտուղ իմաստակություն է տեսնում: Փիլիսոփայության տեսական կողմը արհամարհելու հետևանք է կարևորագույն հարցերի վերաբերյալ տատանումը և սկզբունքային էկլեկտիզմը: Իրեն Ստոայի հետևորդների շարքը դասելով, Սենեկան անհրաժեշտ չի համարում խստորեն որոշ ուղղության հետևելու և շատ բան փոխ է առնում Ստոայի հակառակորդ էպիկուրից: Էպիկուրականությունը դեպի իրեն է հրապուրում շնորհագրկված պալատականին նրանով, որ տեսական հիմնավորում է տալիս անցմանը դեպի մասնավոր կյանքը («Հոգեկան հանգստության մասին» և «Անդորրության մասին» տրակտատները): Սենեկան, ինչպես և Հոմերի ամբողջ տիրոջ դասակարգը, բացի կայսրությունից, չի պատկերացնում այլ պետական կարգի ուսուցչական հնարավորությունը: Այն օրը, երբ հոմեալոգները դադարեն կայսրին հնազանդվելուց, նրա կարծիքով, կլինի ժողովուրդների վրա հոմեալոգիան տիրապետության վերջը:

Հնարավորություն չունենալով ակտիվորեն պայքարելու կայսերական կամայականության դեմ, հոմեալոգիան արիստոկրատները ներքին ուժ էին որոնում պասսիվ դիմադրության համար, և այդ հարցերին պատասխան է ծառայում Սենեկայի ուսմունքը:

Նրա փիլիսոփայության խնդիրն է՝ սովորեցնել ապրել և մեռնել, ներքին անկախություն և հոգեկան հանգիստ տալ, երբ պահպանվում են կյանքի այն ձևերը, որոնք սովորական են հո-

մեական վերնախավի համար: Տեսականորեն Սենեկան բոլոր մարդկանց հավասար է համարում՝ «Նրանք՝ ստրուկներ են: Ո՛չ մարդիկ են: Արանք՝ ստրուկներ են: Ո՛չ, ընկերներ են: Նրանք՝ ստրուկներ են: Ո՛չ, համեստ բարեկամներ են»: Իբրևանում, սակայն, նրա քարոզներն ուղղված են ստրկատիրական հասարակության միայն բարձր շրջաններին և միայն նրանց համար են պիտանի այն գործնական խորհուրդները, որոնք նա տալիս է: Սենեկան «ամբոխին» չի սիրում և խուսափում է նրանից: Ստոալի բարոյախոսական ուսմունքը հարմարեցնելով հոմեական արիստոկրատիայի պահանջներին, նա շատ բան մեղմացնում է և հաճախ կոմպրոմիսներ հանձնարարում: Առանձնապես բնորոշ է նրա վերաբերմունքը հարստության հանդեպ: Սենեկան զովաբանում է աղքատի բարբերի պարզությունը ու համեստ ուրախությունները և գույներ չի խնայում հարուստների գերհագեցածությունը նկարագրելիս: Պետք է, իհարկե, արհամարհել հարքստությունը, բայց այդ արհամարհանքը, ըստ Սենեկայի, ոչ թե հարստությունից հրաժարվելը կամ դեպի այն չձգտելն է, այլ միայն այն, որպեսզի կարողանալ նրանից հրաժարվել և շտառապել այն կորցնելուց: Իմաստունը «չի սիրում հարստությունը» բայց գերադասում է այն: Իր հոգին չի տալիս նրան, բայց՝ ընդունում է իր տունը: Տիրապետում է այն, բայց նրա ստրուկը չի դառնում»: Դեռ այլեկին, միայն հարստությանը արհելու պայմաններում կարելի է իսկական արհամարհանք արտահայտել դեպի այն: Իմաստունը ստիպված է կոմպրոմիսի դիմել իշխանություն ունեցողների հետ հարաբերությունների ժամանակ: Որպեսզի մեղմացնի բարոյախոսական սկզբունքների և նրանց կենսագործման միջև եղած ազդարակող հակասությունը, Սենեկան ստիպված է վիպակուշել մարդկային բնության թուլությունը, համընդհանուր մեղապարտությունը, կամ քողարկվել հպարտության կեցվածքով: Պատասիվ դիմադրության վերջին ապաստանը՝ մահն է, և մահը Սենեկայի մշտական թեմաներից մեկն է: Նրա համար իդեալական դեմքը արիստոկրատական օպոդիցիայի սիրած հերոս Կատոն Կրտսերն է, որը ռեսպուբլիկայի պարտիկուլյար պահին կամավոր մահ ընտրեց, և այդ, չնայած այն հանդամանքին, որ Սենեկան բոլորովին էլ չէր բաժանում Կատոնի քաղաքական հայացքները: Ամբողջ կյանքը պետք է նախապատրաստում լինի մահվան համար՝ «լատ է ապրում նա, ով չի կարողանում լավ մեռնել»: Հանուն դրա պետք է սովորել կրել դժվարություններ,

վտանգներ, զրկանքներ, շարշարանքներ, հանուն դրա կյանքը պետք է լինի «պատերազմ», «դիմադրություն» պայքար, կրթերի, թուգամորթությունների և գայթակղությունների դեմ: Եվ դադիատորի հերոսական կեցվածքը հաճախ Սենեկայի համար իլուստրացիա է ծառայում կյանքի փիլիսոփայական իդեալի համար:

Սենեկայի ուսմունքը փիլիսոփայական բովանդակության նորություն հավակնություն շունի: «Հոգու համար ձարը հներն են գաել. մեր գործը վճռելն է՝ ինչպես և երբ դործածել այն»: Դեպի կոմպրոմիսները Սենեկայի ունեցած հակման պայմաններում, բարոյախոսական տեսությունների գործնական կիրառումը կախումն է ունենում պայմաններից և առանձին մարդու հնարավորություններից՝ նրա բարոյական գոյացման մեջ: Այդ դրույթը հասցնում է անհատական հոգեկան փիճակի ավելի խորամուխ վերլուծությունը, հոգեկան փիճակ, որն ամեն անգամ յուրահատուկ «բժշկություն» է պահանջում: Անհատական խիղճը դեկավարելու մոմենտը մեծ տեղ է գրավում Սենեկայի բարոյախոսական ուսուցման մեջ, և հաճախ այդ ծավալվում է որպես երկու հոգիների ինտիմ զրույց: Անձնական տոնը, որը մենք գտնում ենք Հորացիուսի մոտ, առավել ևս նկատելի է դառնում Սենեկայի երկերում: Գիտակցական վերաբերմունքը իր և ուրիշների հոգեկան կյանքի նկատմամբ նա ավելի բարձր աստիճանի է հասցնում, չնայած, որ իմաստունի վերացական կերպարը և հոգու մասին վերացական պատկերացումները շարունակում են իդեալական մասշտաբ մնալ հոգեկան փիճակի կրասիֆիկացիայի և գնահատման համար:

Սենեկայի լավագույն երկը՝ որը, դրա հետ միասին, պարունակում է նրա հայացքների ամենից լիակատար շարադրությունը՝ «Բարոյախոսական նամակներ Լուցիլիուսին» ժողովածուն է (63—64 թ. թ.): Այդ խորհրդածությունների մի օրագիր է, որոնք ամբողջությամբ առած գործնական բարոյականության մի ամբողջ դասընթաց են կազմում: Հեղինակի ինքնապատկերումը կարճես թե պատասխան է ծառայում կատարելության ձգտող հասցեակրի հարցման համար: Նկարագրելով իրեն կյանքի տարբեր սիտուացիաներում, Սենեկան հասնում է այն բանին, որ խորհրդածությունները բնականորեն բխում են համապատասխան ապրումներից:

Ուրիշի հարցման պատասխանի նույն ձևն էլ մենք գտնում ենք «Հոգեկան հանգստության մասին» տրակտատում: Նա սկզբում է Սենեկային ուղղված մի ձառով ներքին հավասարակշռու-

թյունը կորցրած անհանգիստ հոգու չուրատեսակ խոստովանութեամբ. այնուհետև հետևում է գրուցակցի պատասխանը: Փիլիսոփայական դիալոգի կլասիկ տիպը Սենեկան չի օգտագործում: Իր, սովորաբար ոչ մեծ, բարոյախոսական տրակտատներում նա գերադասում է դիաբրիբայի և ֆիկտիվ օպոնենտի հետ բանավեճի ձևը: Նա չի ձգտում նաև շարադրման սիստեմատիկության և հաջորդականության: Անտարբեր լինելով դեպի տրամաբանական պատճառաբանությունը, հեղինակը այնքան չի ապացուցում իր դրույթները, որքան ներշնչում է ընթերցողին, զարգացնելով միևնույն միաջը տարբեր կողմերից և ներգործելով ավելի շատ կերպարներով, քան վերացական դատողություններով:

Իր ժամանակակիցներից շատերի պես, Սենեկան վառ դույներ է սիրում և նրան ամենից շատ հաջողվում են արասներքի, ուժեղ աֆեկտների, պատոլոգիկ վիճակների պատկերները: Նրա կարճ, սուր, պատկերավոր հակադրումներով հագեցված դարձվածքներում «նոր» ոճը ամենից ավարտված արտահայտություն ստացավ, և այդ ոճական արվեստի վրա էր հիմնված Սենեկայի հսկայական գրական հոշակը: Սակայն, գործն առանց ծաղրի չէր լինում. կալիգուլա կայսրն, օրինակ, Սենեկայի ոճն անվանում է «առանց կրի ավաղ»:

Ուժեղ աֆեկտների, շարշարանքների և մահվան պաթոսի պատկերմանը մենք հանդիպում ենք Սենեկայի նաև գեղարվեստական ստեղծագործության մեջ. նա իր պոետիկական գործունեության բնագավառ էր ընտրել ողբերգությունը: Մեզ հայտնի են նրա ինը ողբերգությունները:

Սենեկայի պիեսները հոմեոկական ողբերգության, ասենք էվրիպիդեսից հետո և ընդհանրապես ամբողջ անտիկ ողբերգության, լիովին պահպանված միակ հուշարձանն է: Այն առանձնահատկությունները, որոնք տարբերում են դրանք V դարի ատտիկական ողբերգություններից, միշտ չէ, որ պետք է դիտվեն որպես բացառապես Սենեկային կամ նրա ժամանակին պատկանող նորմոտություններ. դրանց մեջ խաշավորվել է հունական և հոմեոկական գրականության ողբերգության ամբողջ հետազոտ պատմությունը: IV դ. էվրիպիդեսյան ողբերգությունը արդեն թեքում է ստացել դեպի պաթետիկայի և ճարտասանության կողմը և սկսվել է հորինվել ոչ թե բեմի, այլ միայն, կամ առավելապես, ընթերցանության համար: Մեր թ. ա. I դարից ողբերգության այդ տեսակը թափանցում է Հռոմ: Օվիդիուսի «Մեդեան», օրինակ,

թատրոնի համար չէր նախատեսնված: Այդ նույն տիպին են պատկանում Սենեկայի ողբերգությունները: Դրանք գրված են ղեկլամացիոն ոճով, և պաթետիկ ղեկլամացիայի մոմենտը դրանց մեջ գերակշռում է գրամատիկական գործողությունը և բնավորությունների մշակմանը:

Հին հունական ողբերգության արտաքին ձևերն անփոփոխ էին մնացել՝ մոնոտոպներն ու դիալոգները ողբերգության համար սովորական ոտանավորների ձևերով հերթագայում են երգեցիկ խմբի լիրիկական պարտիաների հետ: Դիալոգում միաժամանակ երեք գործող անձանցից ավելի չեն մասնակցում, երգեցիկ խմբի պարտիաները — քառ հելլենիստական ժամանակ հաստատված սովորույթի — ողբերգությունը բաժանում են հինգ արարվածի: Մնացել էին և հին դիցաբանական սյուժեները, որ մշակել էին հունական ողբերգության կլասիկները: Սենեկան նորից կազմում է «Մեդեան», «Փեդրան», «Մոլեդին Հերկուլեսը», «Էդիպը» և այլն: Բայց գրամայի կառուցվածքը, հերոսների կերպարը, ողբերգականի բնույթը բոլորովին այլ բան են դառնում:

Իբրև Սենեկայի գրամատուրգիայի նմուշ վերցնենք նրա «Մեդեան» ողբերգությունը: Պիեան սկսվում է հերոսուհու մենախոսությամբ: Հենց սկզբից Մեդեան հանդես է գալիս որպես մռայլ կախարհորհի, պատրաստ ամեն մի տեսակ ոճրագործությունների: Գիմելով աստվածներին, նա կոչ է անում նրանց՝

Ում պիտ դիմի Մեդեան

Ամենից շատ օրինական. — մշտական գիշերի օրասին

Ու աշխարհին սավերների՝ աստվածներին զզվելի,

Եվ մռայլության արբային թագուհու հետ միասին՝

Ստրերկրյա գժոխի:

Նրա միակ միտքը վրիժառությունն է. դեռ որոշակի պլան չկա, բայց այս վրեժառությունը իր դաժանությամբ պետք է գերազանցի Մեդեայի առաջվա բոլոր շարագործությունները՝

աշխարհին անհայտ

Եվ կրկնի ու կրկրի համար այն սարսափելի

Մեխովում է ուղեղում:

Ոճրագործությամբ ձևաք բերված տունը

Պետք է թաղնվի նույնպես ոճիրով:

Սենեկան էքսպոզիցիա չի տալիս: Ընթերցողը կամ ունկնդիրը, իր համար նախատեսնում է սղբերգությունը, գիտե առասպելը, բայց գործող անձանց, գիտե գործողության ելքը և պիեսի սկզբին արդեն հերոսուհուն տեսնում է այնպես, ինչպիսին նա պետք է հանդես գա վերջում: Մեղեայի վրեժառու-վճռականությունը արդեն ծայրահեղ չափերի է հասել: Դեռ ավելին, Սենեկան քանի անգամ նրա բերանն է դնում երկիմաստ արտահայտություններ, որոնք ունկնդիրն ընկալում է որպես առաջիկա որդեսպանության ակնարկ, թեպետ խոսքի կոնտրաստում դրանք դեռևս այդ նշանակությունը չունեն: Օրինակ՝

և վերբեր, և սպանություններ,  
եվ անդամների մաս-մաս թաղտում,  
Դեռ աղջիկ էի, որ արել եմ ես.  
Այժմ զայրույթս ավելի սոսկալի է.  
Եվ ես իբրև մայր իմ զավակների  
Մեծ ոճիր անելու եմ արժանի:

Հեղինակն ավելի թանկ է գնահատում մենախոսության դեկլամացիոն ֆեկտը, քան նրա հոգեբանական արժանահավատությունը: Մեղեայի ներածական մենախոսությունը հետևում է երգեցիկ խմբի պարտիան՝ հարսանեկան երգը նորապսակների պատվին:

Երկրորդ արարվածը բացվում է Մեղեայի նոր մենախոսությունում: Հարսանեկան երգի հնչյունները հիշեցրին, որ Յասոնի ամուսնությունն իրականություն է դառնում: Նա խոսում է վրեժառուության մասին, բայց ոչ թե Յասոնի վերաբերմամբ, որին նա կցանկանար պահել իրեն ամուսին, այլ նորահարսի և նրա հոր վերաբերմամբ: Դայակի վեհերոս հորդորանքներին նա պատասխանում է Սենեկայի ոճի համար բնորոշ սենտենցներով՝ «Ճակատագիրը վախենում է քաջերից, վախկոտներին՝ ճմլում է»: «Քաջարիությունը միշտ տեղին է»: «Ով հույս չունի, ոչնչից չի հուսահատվի: Ճակատագիրը կարող է խլել մեր հարստությունը, ոգին խլել չի կարող»: Եվ նորից հեղինակի հույսը այն է, որ Մեղեայի կերպարի հետ ընթերցողը կապում է որոշ ասոցիացիաներ:

Դայակ՝

— Մեղեա՛...

Մեղեա՛

Շուտով այդպիսին կլինեմ:

Հայտնի է մի սկանափոր ֆիլլոզոֆի նկատողութիւնը՝ այս Մեղեան արդէն կարողացել է էլիտիպիզեսի «Մեղեան»:

Երկրորդ արարվածի հաջորդ տեսարանը՝ Մեղեանի և Կրեոնի դիալոգը հիշեցնում է էլիտիպիզեսի համապատասխան տեսարանը: Բայց հոռմեակաւ ողբերգութի Կրեոնը ձեռք է բերել «ախրանի» տիպիկական գծերը, իսկ Մեղեան դարձել է ճարպիկ փաստաբան: Վտարման համար նա մեկ օր հետաձգման իրավունք է ստանում: Ըստ Սենեկայի զավակները շէն վտարվում. սիրող հայրը միջնորդելով հաջողեցնում է նրանց մնալը: Խոտմբը երգում է Արգո նավի սրբապղծութեան մասին, որ առաջին անգամ հանդգնել է կտրել ծովը, և անսպասելիորեն վերջացնում է մի պատկերով, որով մեզ փոխադրում է հոռմեակաւ կայսրութեան պայմանները՝ նրա մինչ այդ շեղած լայնածալալ աշխարհագրական հորիզոնով.

Այս ու այն կողմ է դեգերում  
Նա մեր օրենքներին է ենթարկված.  
Մեզ պետք չէ Արգոն՝ Պալասի շինած՝  
Իր թիավարող վեհ արքաներով.  
Հորձանքը մատշելի է ամեն մակուշի,  
Վերացել են սահմաններ ամբողջ աշխարհի,  
Եվ պարսպները մեր քաղաքներին՝  
Այդ երկրներում՝ իրենց տեղերում  
Չեն թողել կանգնած աշխարհը քոչվոր:  
Սառն Արարսից հնդիկն է խմում,  
Էլրա-Հոնոսում ֆարսը լողանում:

Երգեցիկ խմբի վերջին խոսքերը՝ մարդարեութունն է՝

Տարիներ կանցնեն և դարեր հետո  
Թվկիանը կլօծի շգթան իրերի,  
Եվ կհայտնվի վիթխարի աշխարհը,  
Եվ նոր-նոր ծովեր Թիֆլսը բաց կանի,  
Եվ Ֆուլան աշխարհի ծայրը չի լինի:

Անդրովկիանոսյան երկրների հայտնագործման այս մարդարեութեամբ Կոլումբոսը դիմեց իր ճանապարհորդութեանը:

Երրորդ արարվածը վերստին սկսվում է մենախոսութուններիով: Հերոսուհուն համակած աֆեկտի արտաքին նշանները պատմելու համար, Սենեկան հաճախ օգտվում է դայակի դեմքից: Նրա մենախոսութունից մենք իմանում ենք, որ Մեղեան Բաքոսուհու պես,

Այս ու այն կողմ է դեղերում  
 Խեղագարի նշաններ դեմքին:  
 Կրակոտ դեմքով, նա հեռավոր է շատ խոր շնչում:  
 Աղմկում է, արքունք թափում, բարձրում է հանկարծակի:  
 Մոլեղնում է, աղեկոծվում նրա ներսում ամենայն ինչ:  
 Տատանվում է՝ թե ուր թեւի դայրույթ շնչող  
 Մանր հոգին իր աղմկող:  
 Սպառնում է, փրփրում է, զանգաավում է ու հեծեծում:

Մեղեացի մենախոսությունը երրորդ անգամ մեզ վերադարձնում է վրեժառություն թեմային: Նա ապարդյուն է մտախմբվել որոնում, որոնք կարողանան արդարացնել Յասոնին: Նրան մրբկապատում է ոչնչացման ծառավը՝

Այն ժամ ես միայն հանդիստ կգտնեմ,  
 Երբ ամենայն ինչ ինձ հետ կործանեմ:  
 Թող կորչի ինձ հետ բոլորն ահապետ:  
 Ո՛հ, ինչ քաղցր է կորչողի համար,  
 Իրեն հետ տանել մարդիկ անհամար:

Սենեկացի կոնցեպցիայի տարրերությունն էվրիպիդեսից պարզորեն դրսևորվում է Մեղեացի և Յասոնի դիալոգում: Էվրիպիդեսի Մեղեան ատում է նրան, ով խաբել է իր զգացմունքը: Սենեկացի Մեղեան փորձում է իրեն մոտ վերադարձնել Յասոնին և նրան հարստություն է առաջարկում: Էվրիպիդեսը Յասոնին պատկերել է որպես ստոր եսամոլ: Սենեկացի մոտ նա հոգնատանջ, վեհերոտ, իր մեղքն զգացող մարդ է: Զավակների մասին միայն է միայն, որ նրան դեռ կապում է կյանքին: Երբ նա մեքծում է Մեղեացի առաջարկը, վերջինիս վրեժառության պլանն ուղղվում է և նրա դեմ, և այժմ նա ընթացի, թե ինչով կարելի է Յասոնին ամենից ցավագին հարվածել:

Խումբը երգում է կանանց ատելության ուժը, երբ նրանց ամուսնական իրավունքները խախտվում են և հիշում է բոլոր արգոնավորդներին հասած դժբախտությունների մասին:

Զորբորդ արարվածը նվիրված է Մեղեացի մոգական գործողություններին: Մոգությունը այդ ժամանակի գրականության ամենատարածված «սոսիալի» թեմաներից մեկն էր: Ամբողջ արարվածը կազմված է երկու մենախոսությունից: Դայակը մանրամասնորեն պատմում է այն մասին, թե ինչպես Մեղեան թույն է պատրաստում, իսկ այնուհետև հերոսուհին երկարաշունչ մոպական

կախարդանքներ է արտասանում և երեխաների միջոցով թունա-  
վորված զգեստն ուղարկում է Յասոնի նոր կնոջը:

Խմբի կարճ երգը մի անգամ էլ է նկարագրում Մեդեայի  
շփոթված վիճակի արտաքին սիմպտոմները:

Վերջին տրամվածն է. ժամանում է բաները: Ի տարբերու-  
թյուն Սենեկայի մյուս ողբերգությունների, բաները մանրամասն  
պատմություն չի անուժ և սահմանափակվում է արքայազուտեր և  
նրա հոր մահվան մասին համառոտ հաղորդումով: Այս արարվա-  
վածում կենտրոնական տեղը պատկանում է Մեդեայի երկարու-  
շունչ մենախոսությանը: Նրա վրեժը, դեռ լիակատար չէ: Առաջին  
անգամ իր ամբողջ պարզորոշությանը ծառայում է որդեսպանու-  
թյան հարցը: «Այժմ Մեդեան՝ ես եմ»: Բայց սկսվում են տա-  
տանումները: Իր հակասական զգացմունքների լիակատար գի-  
տակցականությանը, Մեդեան մեզ բացատրում է, որ իր մեջ  
«մայրը» պայքարում է «կնոջ», «սերը» «զայրույթի» դեմ: Ահավա-  
սիկ հաղթանակում է «սերը»: Ինչ անել, երեխաներին Յասոնի՞ն-  
տալ: «Վերստին զայրույթն աճում է, ատելությունը եռում»: Մե-  
դեայի առաջ տեսիլքներ են առաջանում՝ վրեժառության աստվա-  
ծություններ, եղբոր սուվերը նրա հոշոտված մարմնի մասերով,  
և այս խելագար վիճակում Մեդեան սպանում է իր որդիներին  
մեկին:

Հունական կլասիկ ողբերգության մեջ սպանությունները կա-  
տարվում են բեմից դուրս: Այդ սահմանափակումը, որի մասին  
պնդում էր դեռ Հորացիուսը «Պոեզիայի գիտության» մեջ, Սենե-  
կայի համար գոյություն չունի: Մեդեան որդուն սպանում է իր  
մենախոսության ժամանակ: Եվ եթե այդ կատարվում է հերոսու-  
հու գիտակցության միագնման պայմաններում, հեղինակը հնա-  
րավորություն է ստանում սարսափի ստորարժանում տալու  
ներկայացնելով երկրորդ սպանությունը միանգամայն մտածված:

Յասոնը զինվորներով մոտենում է, և Մեդեային վերնդառ-  
նում է նրա գիտակցության պայծառությունը: Նա տանիք է  
բարձրանում, որպեսզի հանրաշնորհն ցույց տա իր «քաջարիու-  
թյունը», և, արքեյած Յասոնին պատճառած տանջանքներով, նրա  
ներկայությանը սպանում է երկրորդ որդուն և երկինք է թռչում  
հրեղեն օձերի վրա:

Եվրիպիդեսի «Մեդեայի» համեմատությանը, Սենեկայի ող-  
բերգությունը պարզեցված է: Հունական պիեսի գաղափարական  
կողմը՝ տրագիցիոն ընտանեկան բարոյականության քննադատու-

Սլոնը Սենեկայի համար արդիական չէր. այդ հարցերը նա վերացրել է, բայց չի փոխարինել որևէ այլ պրոբլեմատիկայով: Արտակարգորեն պարզեցված է և հերոսուհու կերպարը, նրա վերաբերմունքը ամուսնու և ղազակների հանդեպ: Այնտեղ ուր էլքիպիդեսն զգացնել է տալիս խաբված զրացմունքի և մայրական տառապանքների բարդ դրաման, Սենեկան ծանրության կենտրոնը փոխադրում է լքված կնոջ վրեժառու մոլեգնության վրա: Կերպարը դարձել է ավելի միատոն, բայց դրա փոխարեն նրա մեջ ուժեղացել են մոլեգնության հուզմունքի, գիտակցական մտասուլացության մոմենտները: Գործող անձանց քանակը պակասել, և պործողությունն ինքն ավելի պարզ է դարձել: Պաթետիկ մենախոսությունները և սոսկալի պատկերների ճնշումը ողբերգական սպառնալուծություն ստեղծելու համար հիմնական միջոցներն են:

Նշված առանձնահատկությունները բնորոշ են Սենեկայի ամբողջ դրամատիկական ստեղծագործության համար: Նրա ողբերգությունները պրոբլեմներ չեն դնում, կոնֆլիկտներ չեն լուծում: Հոտմեական կայսրության ժամանակի դրամատուրգը, նույն ինքը՝ ստոիկ-փիլիսոփան, աշխարհն զգում է, որպես կույր, անողորօք հասի գործողության ասպարեզ. այդ օրհասին մարդը կարող է հակադրել միայն սուբեկտիվ ինքնահաստատման վեհությունը, հողու աննկուն ամբողջունը, ամեն ինչ տանելու պատրաստակամությունը և, հարկ եղած դեպքում, ոչնչանալ: Պայքարի արդյունքը նշանակություն չունի և չի փոխում նրա արժեքը. այդպիսի դրուլքի պայմաններում դրամատիկական գործողության ընթացքը լոկերկրորդական դեր է խաղում և սովորաբար ընթանում է ուղղաձիգ, առանց ռետորագիաների և ոլորսպտույանների:

Սենեկայի փիլիսոփայական երկերը հնարավորություն են տալիս ճշտելու աշխարհի հանդեպ այդ վերաբերմունքը: «Հոգեկան հանգստության մասին» տրակտատում հարց է դրվում՝ հարկ է՞ս համար: Պատասխան՝ եթե նրանք քաջաբար են մահացել, չպետք է վշտանալ, այլ հենց իրեն նույն հաստատակամությունը ցանկանալ, իսկ եթե նրանք մահվան խնդրում արիություն չեն հանդես բերել, ապա նրանք այնքան արժեք չունեն, որպեսզի հարկ լինի վշտանալ նրանց մասին: «Ես չեմ ողբում ոչ ուրախացողին, ոչ արտասվողին. առաջինն ինքն է սրբել իմ արցունքները, երկրորդն արցունքներով հասել է այն բանին, որ նա արժանի չէ արցունքների»: Սենեկայի ողբերգական էսթետիկայում կարեկցությունը

երկրորդ պլանն է անցնում. այդ էսթետիկան գլխավորապես հեն-  
վում է հզորի և սոսկալի պաթոսի վրա: Սենեկան ընտրում է  
վաչքենի կրքերով, մուսլ հուսահատութեամբ, ոչ-մարդկային տա-  
ռապանքներով, ոչնչացման և ինքնոչնչացման ծարավով «սարսա-  
փելի» սյուժեներ: Ատտիկական ողբերգությունը, իր ծիսական  
ակունքներին համապատասխան, հաճախ ավարտվում էր երջանիկ  
վերջավորությամբ: Սենեկայի համար հաշոդ ելքն արդեն բացա-  
ռություն է, և այդ կողմից նրա ողբերգությունը մոտենում է Նոր-  
ժամանակի ողբերգությանը:

Սենեկայի կենտրոնական կերպարները վիթխարի ուժի և  
տենչի տեր մարդիկ էին, գործողության և տառապանքի կամքով,  
նահատակողներ և նահատակվողներ: Հունական դիցաբանու-  
թյան մշակ և տառապյալ, կինիկների և ստոիկների՝ սխրագոր-  
ծության սիրելի հերոս Հերակլեսը երկու անգամ գրավել է Սենե-  
կայի ուշադրությունը՝ «Մոլեգին Հերկուլեսում» (Էլիթիպիդեսի  
նույնանուն ողբերգության սյուժեով) և «Հերկուլեսն էտայում»  
(Սոֆոկլեսի՝ «Տրախինուհիների» սյուժեով): «Փեդրայում» նա ել-  
նում է ոչ թե Էլիթիպիդեսի մեզ հասած երկրորդ «Իպոլիտից», այլ  
նույնանուն առաջին ողբերգությունից, ուր Փեդրան գայթակղեցնող  
է, և ոչ թե զոհ: Ինչպես «Մեդեայում», Փեդրայի հենց առաջին  
երևան գալով ընթերցողը տեսնում է նրան համակամ կրքի ամ-  
բողջ պատկերը: Նա ինքը խոստանում է Իպիլիտին իր սերը, —  
այդ մի փայլուն պատկեր է, ուր օգտագործված են Օլիպիուսի  
«Հերոսահիներից» Փեդրայի նամակների մոտիվները: Թեսեսի  
վերադարձից հետո նա ինքը մեղադրում է խորթ որդուն սճրագործ  
մաադրությունների համար և միայն այն ժամանակ, երբ բերում  
են մասերի բաժանված Իպոլիտի դիակը, խոստովանում է իր զբո-  
ւարտությունը և անձնապան է լինում նրա դիակի մոտ: Մուսլ  
ողբերգություն է «Փիեստը»: Ատրեյը, վիրավորվելով իր եղբայր  
Փիեստից, երաղում է վրեժառության մասին: Առանց տատանվե-  
լու, սառը նախամտածված կերպով՝ եղբորը և նրա որդիներին նա  
գրավում է և կեղծ հաշտություն խաղում ծանր նախազգացու-  
ներով տառապող Փիեստի հետ: Այն մասին, ինչ որ կատարվում  
է զրանից հետո, երգիչիկ խմբին հաղորդում է ցնցված բաները:  
Ատրեյն իր սեփական ձեռքերով մորթել է իր եղբոր որդիներին  
զոհասեղանի վրա, խորովել նրանց մարմինը և այդ խնջուքում  
հյուրասիրել ոչինչ չկասկածող եղբորը: Եղբայրակաման տեսարա-  
նում արբեցած Ատրեյն իր վրեժը պսակում է, Փիեստի առաջ բաց

«անելով նրա դավակների ճակատագիրը: Ակզբում նա ցույց է տալիս նրանց կտրած գլուխները.

Ատեկյ՝

Չէ՛ս ճանաչում դավակներիդ:

Փիեօս՝

Եղբորս եմ ճանաչում ես:

Փիեօսը խնդրում է մարմինները թաղելու համար և միայն «այդ ժամանակ է իմանում ամբողջ ճշմարտությունը.

Ատեկյ՝

Ո՛րն է ոճրագործության շափը:

Ատեկյ՝

Ոճրագործությունը շափ ունի, բայց վրեժը Սահմաններ չունի:

Այդ դեպքերն հազվադեպ են ընդունակ լինում մեղմ զգացմունքների: «Տրոյացի կանայք»՝ մարտիրոսության այդ ողբերգությունը հերոսական մահի և քարացած տառապանքի, «վիշտը ճնշող ցավի» պատկերներ է տալիս: Միայն մայրական սերն է ընդունակ ճեղքել և անցնել տառապանքի այդ կեղևը, և այն տեսարանը, ուր Ռդիսեսը Անդրոմախից խլում է նրա որդուն, պատկանում է Սենեկայի ամբողջ դրամատուրգիայի ամենաուժեղ տեսարանների թվին: Ընդհանրապես այն դեպքերում, երբ պերսոնաժներն աչքի են ընկնում մեծ մեղմությամբ (սիրահարված Փեդրան, Փիեօսը), մենք հաճախ հանդիպում ենք հոգեբանական նորը ուրվագծերի:

Սենեկայի հերոսները միատուն և ստատիկ են: Բնավորությունները ոչ միայն չեն զարգանում դրամատիկական գործողության պրոցեսում, այլ նույնիսկ չեն էլ զբսևորում իրենց դրեկ նոր կողմը: Իրանք մատուցվում են միանգամից այն դժերի ամբողջ լիկատարությունը, որոնք հեղինակը հարկ է համարում հատկացրնել, և այն կեցվածքով, որը նրանք պետք է զբաղեն ամբողջ պիեսի ընթացքում: Հիմնական պերսոնաժները վեր են ածված մի քանի տիպերի: Գրեթե ամեն ողբերգության մեջ կա գերիշխող անբարտապան և դաժան «տիրան», որը գտնում է, թե իրեն ամեն ինչ թույլատրելի է: Հակառակ դեմքը՝ տառապալի և՛ պատրաստ շարժարանք և մահ ընդունելու: Մարտիրոսության մեջ բոլորը միակերպ հերոսական են՝ ազամարդիկ, կանայք, երեխաները.

Հեկտորի սրբի փոքրիկ Աստիանակաք ինքն իրեն նետոմ է աշտարակից «անվախ, կատաղի, հանդուգն» («Տրոյացի կանայք»):

Սենեկայի կանայք սովորաբար «տղամարդի հոգի» ունեն: Այդ վերաբերում է և հերոսուհիներին՝ փոթորկալի ապրումներ կրողներին: Սոֆոկլեսի «Տրախինուհիների» հեղ Դեյանիրան Սենեկայի մոտ («Հերկուլեսն էտայում») դառնում է Մեդեայի երկրորդ օրինակը: Հիմնական հերոսների հոգեկան վիճակը և միտումները դրսևորվում են սրիկ հավատարմատարի հետ զրույցի մեջ՝ սպասավորի, խորհրդատուի, մանավանդ հաճախ դայակի հետ (եվրոպական կլասիցիզմի ողբերգության ապագա մտերիմներն ու մտերմուհիները):

Սենեկայի հերոսների միատոնությունը լրացվում է դատուղական զիտակցականությամբ: Նրանք այնքան ապրումներ չեն ունենում, որքան պատմում են ապրումների մասին, կլասիֆիկացիայի ենթարկում դրանք: Այդ մենք արդեն տեսանք Մեդեայի վերջին մենախոսության մեջ: Մի այլ օրինակ կարող է ծառայել Կլիտեմեստրեի խոսքերն «Ագամեմնոնում»՝

Թախծի, վախի ձիրաններում խոցյտվում եմ ես անընդհատ,  
Կրծքիս մեջ խանդ է աղմկում մոլեգնած ու անհանդարտ,  
Կրկի լուծն է ծանրացած ամոթաբեր. ընդիմադիր:  
Խելքս անմար կրակների կաշկանդանքի արարելիքում,  
Եվ ուժասպառ իրեն կորցրած ամոթն է իմ մեջ աղմկում.  
Հուզված եմ ես այն ծովի պես, որին քամին ու հոսանք  
Մոխգնած՝ մղում ես տարբեր կողեր ջլատելու,  
Իսկ ալիքն էլ շփտե թե երկու ուժից որին է նա ենթարկվելու.  
Բաց եմ թողել արբեն ղեկը իմ ձեռքերից զատարկ ու լերկ,  
Ջալուր ու վիշտ, իմ հույս վսեմ, ուր եք տանում նավս անդեկ.  
Դե՛հ, ուր կուղեք, դուք ինձ տարեք, իմ նավը ես ձեզ եմ հանձնում:

Իր ամբողջ վերացականությամբ հանդերձ, այդ դեկլամացիոն ինքնավերլուծությունը ուշ-անտիկ գրականության նվաճումն էր: Ատտիկական մեծ ողբերգուհիների կերպարներն այդ տեսակետից ավելի պրիմիտիվ են Սենեկայի կերպարներից, բայց դրա հետ միասին ավելի լիարյուն և մարդկային են:

Դրամատիկական գործողության միադոնության և ստատիկ բնավորությունների միակողմանիության պայմաններում ողբերգության հետաքրքրությունը կենտրոնանում է առանձին պաթետիկ տեսարանների վրա: Կոմպոզիցիայի տեսակետից Սենեկայի ողբերգությունը արոհման տեղեկն է դրսևորում: Շատ դեպքերում

գործողութիւնը հիմնական մոմենտներն, առանձին սիտուացիաների է հանդում: Տեսարանների թիվը զգալիորեն պակաս է, քան ատարիակաւան ողբերգութեան մեջ, պակաս են նաև գործող անձինք: Յուրաքանչյուր պիեսում հեշտ է երևան հանել բազմը պաթոս ունեցող մի քանի տեսարաններ, մնացածը ծառայում է կապի, ողբերգութեան տրագիդիոն ձևի պահպանման: Համար: Այդ կապակցող մասերում հեղինակը հաճախ թույլ է տալիս գործողութեանն անհամադատասխան դրույթներ:

Կենտրոնական պարտիաներում մեծ տեղ են գրավում պաթետիկ մենախոսութիւնները (կամ երկար ճառերը) և սարսափների նկարագրութիւնները: Կախարդական ծեսը, մեռչալներին կանչելը, սանդարամեախ, մըրիկի, սպանութիւնների նկարագրութիւնը — առանց այս տարրերից որևէ մեկի, որոնք նախատեսնված են ցնցելու ամեն տեսակ «սարսափի» սովոր կայսրութեան ժամանակների հոմեակաւան ընթերցողին, ոչ մի ողբերգութիւն չի կարող յալա գնալ: «Էդիպը», որը միայն եզրափակման տեսարանում է նյութ տալիս հեղինակի ոճի մեջ պաթետիկայի համար, պարունակում է նույնիսկ երկու կախարդական տեսարան և երկու ժանտախտի մանրամասն նկարագրութիւն: Ուշադրով է, որ այդ նկարագրութիւնների մեջ հաճախ մտցվում է բնութագր մոռալ ֆոն: Բայց սարսափի տեսարանները չեն սահմանափակվում բանբերի նկարագրութիւններով կամ պատմելով ինչպէս մենք նշել ենք, սպանութիւններն ու անձնասպանութիւնները բեմ են դուրս բերվում: Այստեղ է վերջ տալիս իր կյանքին Յոկաստան՝ արդեն կույր էղիպի ներկայութեամբ, այստեղ են սպանում իրենց զավակներին Մեդեան և Հերկուլեսը, այստեղ է սրբախողող լինում Փեդրան և Թեստոսը հավաքում Իպոլիտի սակրները: Գիալոգում ուշադրաւ են կարճ ռեպլիկներով արագ փոխարկումը, ձեւավորված սուր սենտենցներով (տես օրինակները վերոհիշյալ քաղվածքներում), և ճարտասանորեն կառուցված «մրցման» տեսարանները:

Երգեցիկ խմբի պարտիաները մեծ մասամբ պահպանված են Հարաջիտաի լիրիկական շափերով, բայց առանց նրա ոտանավորի տան կառուցվածքի: Երգեցիկ խումբը հեղինակը տնօրինում է բավականաչափ ազատորեն՝ պաթետիկ դրամայի ներսում հանգրսախ մոմենտ տեսողծելու համար: Գիցարանական բովանդակութիւն ունեցող երգերին զուգընթաց մենք զանում ենք ավելի վերացական, հանրամատչելի-փիլիսոփայական թեմաների շուրջը:

խորհրդածույթյուններ՝ օրհասի ուժի, երկրային գոյութեան ունայնութեան, անդրշիրմյան կյանքի կասկածելի լինելու, հարբատութեան ու իշխանութեան հետ կապված շարքաշութեան և վտանգավորութեան, խաղաղ չքավոր կյանքի՝ երջանկութեան մասին: Նման մտքերը, որոնք երբեմն հիշեցնում են Հորացիուսին և Սենեկայի իրեն փիլիսոփայական երկերը, արտահայտվում են նաև գործող անձանց անունից (մանավանդ երկրորդականներին). այսպես, Իպոլիտի բերանն է դրված բնութեան գրկում՝ երանելի կյանքի մի ամբողջ ուտոպիա:

Շատ հաճախակի են հարձակումները արքաների և տիրանների դեմ: Հպատակները սարսափում են արքայից, բայց արքան էլ սարսափում է հպատակներից: «Հավատարմութեանը պաշտոնները չի մտնում»: Պաշտոնների պատերի ներսը բուն են դնում ուխտագրծութեանը, կեղծիքը, անստակութեանը: Միայն պաշտոններում կարող են տեղի ունենալ ողբերգութեան սոսկալի կրքերը (չէ որ առասպելի հերոսներն արքաներն են), մինչդեռ

Սուրբ է Վաներան հյուղում թշվառի,

Ստող կիրքը հասարակ մարդկանց

(դայակը՝ «Փեղրայում»):

«Տիրանների դեմ» երկար ճառերը ճարտասանական դեկլամացիայի առանձնահատկություններն էին, բայց այնուամենայնիվ կարող էին լիապես արդիականորեն հնչել, և դիցաբանական արքաների ոճրագործությունները իրենց բավականաչափ մոտիկ գուգահեռն էին գտնում Հոմերի կայսերական տոհմի մեջ: Սակայն ճշտել այդ ակնարկները դժվար է այն պատճառով, որ տեղեկություններ չկան առանձին ողբերգությունների հորինման ժամանակի մասին:

Թե այդ տիպի ողբերգությունը որքան դյուրութեամբ էր փոխանցվում հոմերական արդիականության, ցույց է տալիս «Օկտավիա» ողբերգությունը, կազմված Սենեկայի ոճով և որոշ ձեռագրերում պահպանված նրա դիցաբանական պիեսների հետ միասին: Այդ նվիրված է Կլավդիուսի դուստր և Ներոնի կին՝ Օկտավիայի զօրախա ճակատագրին. նա լքվել էր ամուսնուց, իսկ այնուհետև սպանվել նրա հրամանով իր օխոսյան Պոպեայի ինտրիգների հետևանքով: Ներոնը պատկերված է ինչպես ողբերգության տիպիկ «ափրան». այդ նպատակով հեղինակը մեղմացրել է

Պոպեայի դերը և ամբողջ նախաձեռնությունը վերագրել է Ներոնին: «Օկտավիան» պաթետիկական ուժով զիջում է Սենեկայի ողբերգություններին և աչքի է ընկնում է՛լ ալեկի պակաս դրամատիկական ամբողջականությամբ: Պիեսում երեք գլխավոր անձ են՝ Ներոնը, Օկտավիան և Պոպեան, բայց այդ անձինք ոչ մի անգամ իրար չեն հանդիպում և զրուցում են միայն իրենց հավատարմատարների հետ: Ներոնին զրգոյններից մեկի դերում հանդես է գալիս Սենեկան: Հեղինակին ծանր է Ներոնի կործանման պայմանները և այդ մասին խոսում է նախագուշակման ձևով: Այստեղից կարելի է հզորակացնել, որ ողբերգությունը գրված է արդեն 68 թ. հետո և գրել է Սենեկայի գրական հետեորդներից որևէ մեկը: «Օկտավիան» մեղ հասած միակ «պրետեքստատն» է, այսինքն՝ հռոմեական պատմական թեմա ունեցող ողբերգությունը:

Սենեկայի ողբերգությունները, իհարկե, պարուրված են «նոս» ոճի բոլոր էֆեկտներով: Տրագիկոն հանդիսավոր երկարաբանությունները հերթագայում են լակոնիկ սենտենցների հետ: Դեկլամացիոն պաթետիկան ստեղծվում է կրկնողությունների, դրադացիաների, շափազանցությունների ծանրաբեռնումով, հուզումնալի հարցերով և բացազանչություններով, փոխաբերություններով և համեմատություններով, փախառնված բնույթյան ամենահոր երևույթների բնագավառից:

Հեռազոտողների միջև վաղուց վեճ է գնում այն հարցի շուրջը, թե արդյոք բեմի համար են նախատեսված եղել Սենեկայի ողբերգությունները: Չափազանցություն կլինեք պնդել, որ դրանք չեն ենթարկվում բեմական կատարման, բայց դերասանական խաղի համար դրանք շնորհակալ նյութ չեն ներկայացնում, և մանրամասնություններից շատերը մեծապես նկատի են ունենում բնթերցողին կամ ունկնդրին, քան դիտողին:

Սենեկայի գրական շնորհալիության մյուս կողմը դրսևորվում է Կլավդիուս կայսրի մահվան առթիվ նրա երգիծանքում:

Երբ Կլավդիուսը վախճանվեց, նրա հաջորդը անհապաղ նրան աստվածների կարգը դասեց: Սենեկան, հարկադրված լինելով Ներոնի համար գովասանական ճառ կազմել ի պատիվ ննջեցյալի, իր արհամարհանքը Կլավդիուսի հանդեպ հեղեղեց երգիծանքում, որը ծաղրանմանեցնում էր աստվածացումը («ապոթեոզ»): Չեռագրերում այն վերնագրված է «Կլավդիուսի ապոթեոզ», բայց աղբյուրներից մեկն այդ անվանում է «Թրմացում» (Atocolocytosis, այսինքն՝ «Հիմար օձեղը», դրո՞ւմ՝ նշանակում է «գատարկագլուխ»),

հիմար), և, թերևս, այս վերջին վերնագիրը խսկականն է: Այդ երկը «մենիպյան երգիծանքի» ձև ունի, հերթագայում են պրոզան և ոտանավորը. բովանդակությամբ ևս այդ մոտենում է Մենիպի ծաղրանմանեցնող սյուժեներին, որքանով գործողությունը կատարվում է երկնքում, երկրի վրա և սանդարամետում: Կլավդիուսի զավեշտական լինելու հանգամանքը շփոթություն է ստեղծում աստվածների շարքում: Օլիմպական սենատի ծաղրանմանեցրած նիստում, որի համար օգտագործված են Մենիպի և Լուցիլիուսի դույները, որոշում է ընդունվում Կլավդիուսին արտաքսել երկնքի սահմաններից: Ճանապարհին, սանդարամետ անցնելու համար, պետք էր անցնել երկրով, և ընկնում է իր սեփական թաղման թափորին, որն ընդհանուր ուրախություն է առաջացրել. դատերի սիրահարի մահը դառնացրել է միայն որոշ պաշտոնյաների: Սանդարամետում նա հանդիպում է իր կործանած զոհերի բազմությունը, և այստեղ դատ է կատարվում Կլավդիուսի վրա հենց իր մեթոդով, այսինքն, լսելով միայն մեղադրող կողմը: Այդ սուր երգիծանքում ամեն մի խոսք նպատակին է խփում: Կլավդիուսի իբրև կառավարողի գործունեությունը, նրա ֆիզիկական և մտավոր թերությունները ամենադաժան ծաղրի են ենթարկվում:

Իր ժամանակակիցների վրա Սենեկայի ազդեցությունը շատ նշանակալի էր: Այնուհետև առաջացած կլասիկական և արխաիկական ոեակցիան մերժեց «նոր» ոճը, բայց Սենեկայի բարոյախոսական ուսմունքն իր նշանակությունը չկորցրեց և հետագայի անտիկ հասարակության համար: Քրիստոնեությունն ընդունեց ատոլիկյան էթիկայի մի շարք դրույթները և կայսրության արեմտյան մասի լատիներեն գրող հեղինակների մոտ հաճախ կարելի է հանդիպել համակրական քաղվածքների՝ Սենեկայից: IV դարում նույնիսկ հորինվեց գրագրություն Սենեկայի և Պողոս առաքյալի միջև: Դրա հետևանքով Միջին դարերում Սենեկան դիտվում էր որպես քրիստոնեությանը մերձավոր հեղինակ: Սենեկայի բարոյախոսական փիլիսոփայության բարձր գնահատականին մենք հանդիպում ենք և՛ նոր ժամանակ, օրինակ՝ XVIII դ. Դիդրոյի մոտ: Վերածնության ժամանակվանից մեծ նշանակություն ունեին նրա ողբերգությունները: Հումանիստական և ֆրանսիական կլասիցիզմի ողբերգությունները, ընդհուպ մինչև Կոռնելը, անտիկ ողբերգությանն են հարում նրա աչյն ձևով, որով ներկայացնում է Սենեկան:

Օգոստոսի մերձակա հաջորդները շատ թե քիչ անտարբեր էին վերաբերվում հոռմեական պոեզիայի նոր հոսանքներին: Ներոնի օրոք այդ փոխվեց: Սենեկայի սանը ոտանավորների սիրահար էր, ինքը պոեմներ էր հորինում և անձնապես ելույթներ էր ունենում ողբերգական արիաներ կատարողի դերում: Տիրակալի գրական հակումները բանաստեղծներին հույս էին ներշնչում կայսրի շնորհումների վերաբերյալ և առաջացնում էին պոետիկական աշխույժ արտադրանք: Փորձեր են կատարվում նորոգելու այն ժանրերը, որոնցով հանդես էին գալիս Օգոստոսի ժամանակաշրջանի հուշակալոր պոետները: Բուկոլիկ հեղինակները փառաբանում էին նոր «ոսկե» դարի գալուստը: Իր շարունակությունն է գտնում նաև հորացիուական տիպի լիրիկան: Բայց այդ ժամանակի ամենից նշանակալի երկերը Լուկանուսի էպոսը և Պետրոսի երգիծանքն էին:

Մարկուս Աննոուս Լուկանուսը (39—65) Սենեկայի կրտսեր եղբոր որդին էր. նա նոր-ձարտասանական ոգով փայլուն կրթություն ստացավ և ստոիկ-փիլիսոփա Կոննուտի աշակերտն էր: Պատանի հասակից նա ուշադրություն արժանացավ որպես պոետ և «ղեկավար»: Աթենք ուղևորվելով կրթությունն ավարտելու համար, նա ետ կանչվեց Ներոնի կողմից (60 թ.), որը նրան իր մերձավորների շարքը մտցրեց: Բայց Լուկանուսը երկարատև շարժանացավ կայսրի շնորհին: Անտիկ կենսագիրներից մեկի բացատրությամբ, երիտասարդ պոետի դրական հաջողությունները գրգռեցին Ներոնի նախանձը և նա Լուկանուսին արգելեց հանդես գալ պոետիկ երկերի ընթերցումով և դատարանում ճանկեր արտասանելով: Այդ բանը Լուկանուսին մղեց արիստոկրատական օպոզիցիայի բանակը: Նա մասնակցեց Պիսոնի դավադրությանը և, դատապարտվելով մահապատժի սեփական կամքով մահվան եղանակ ընտրելու իրավունքով, բացեց իր երակները:

Լուկանուսը բեղմնավոր պոետ էր: Մեզ հասել են նրա միայն կարևորագույն երկերը՝ անավարտ «Քաղաքացիական պատերազմի մասին» (կամ «Փարսալիս») էպոսը 10 գրքով՝ գրանցիչ առաջին երեքը լույս էին տեսել դեռ հեղինակի կենդանության ժամանակ: Պոեմի սյուժեն Կեսարի և Պոմպեոսի պատերազմն է, որը ռեսպուբլիկայի անկմանը հասցրեց: Լուկանուսը հաջորդաբար շարադրում է այդ պատերազմի հիմնական դեպքերը, սկսած Կեսարի

Ելույթից և Ռուբիկոնն անցնելուց, պատկերում է Փարսալի ճակատամարտը, Պոմպեոսի և Կատոն Կրտսերի մահը: Պոեմն ընդհատվում է Կեսարի Եգիպտոսում լինելու և ալեքսանդրիականների ապստամբության էպիզոդով:

Ըստ իգեոլոգիական և գրական ուղղութիւնյան Լուկանուսի պոեմը շատ կողմերով մտահնում է Սենեկայի երկերին: Այն կազմված է նույն պաթետիկ զեկլամացիոն ոճով, համակված նույն ստոիկյան գաղափարներով: Արդեն «էնեականում» հիմնական շարժիչ ուժը օրհասն էր, բայց վերգիլիոսն այնուամենայնիվ պահպանում էր անտիկ էպոսի տրագիցիոն դիցաբանական ապարատը: Լուկանուսը համարձակորեն իր կապերը խզում է այդ հոմերա-վերգիլիոսական տրագիցիայի հետ. նրա էպոսի գործողությունն ընթանում է առանց «օլիմպացիների» մասնակցութիւնյան: Գեպքերի ընթացքը կառավարում է «օրհասը», «ճակատագիրը»: Երբ պոեմում խոսվում է «աստվածների» կամ «բարձրյալների» մասին, նկատի է առնվում աշխարհի գերագույն ուժի վերացական հասկացողութիւնը, և ոչ թե հին դիցաբանութիւնյան կոնկրետ աստվածները: Պոեար հինավուրց աստվածներին որպէս գործող ուժերի բացառում է, բայց պահպանում է կանխանշումները, նախազգացումները, պատգամատեսութիւնները, աստղագուշակութիւնը, կախարդումը՝ այն բոլորը, ինչի մեջ ուշ-անտիկ գոեհիկ փիլիսոփայութիւնը տեսնում էր իրերի «տիեզերական համակրանքի» արտահայտութիւնը: Տրագիցիոն առասպելները նա հազվադեպ է օգտագործում և միայն իբրև հետաքրքրական հին ասքեր. այսպէս, օրինակ, նրան է պատկանում մեղ հայտնի Անթի մասին առասպելի շարագրութիւններից ամենարնգարձակը: Լուկանուսի նորմուծութիւնը հաջողութիւն չունեցավ: Անտիկ ընթերցողները որոշ չափով զարմացել էին էպիկական պոեզիայի համար սովորական «օլիմպական» պլանի բացակայութեամբ, և «Քաղաքացիական պատերազմի մասին» պոեմն այդ տեսակետից ավելի շուտ համարվում էր ոտանավորներով պատմութիւն, քան էպոս:

Հրաժարվելով հունական դիցաբանութիւնից, Լուկանուսն իրեն նորարար էր զգում: Նա հավակնութիւն ուներ սերունդների մեջ Հոմերոսի փառքին համահավասար փառք ունենալու, և վերգիլիոսի անունը լուսնային է մասնում: Հեղինակի կարծիքով «Փարսալիան» պետք է փոխարիներ «էնեականը» որպէս «հոմերական երգասացութիւն»՝ իսկական հոմերական սյուժեով: Այդ

լռելյան հակադրումն ունենր և իր քաղաքական կողմը. պատմելով զիցարբանական սկզբնալորման մասին, Վերգիլիուսը փառաբանում էր կայսրությունը որպէս հոռմեական մեծության գագաթնակետ, — կայսրության գոյացումը Լուկանուսին թվում է իսկական մեծ Հոռմի վերջը:

Անցյալի իդեալական Հոռմը, որն աշխարհը նվաճել էր իր քաղաքացիների քաջարիությամբ և հպարտ էր ազատությամբ ու օրինականությամբ, կործանվում է քաղաքացիական պատերազմում, — այս է Լուկանուսի հիմնական կոնցեպցիան: Պոեմը համակված է հին պատրիկական հպարտությամբ, ատելությամբ դեպի պլեբան ու օտարականները: Հեղինակը՝ կայսրության ժամանակների արիստոկրատական իդեոլոգիայի տիպիկ ներկայացուցիչն է. նա իդեալականացնում է հին Հոռմը, բայց կայսերական կարգերն անխուսափելի է համարում: Ռեսպուբլիկական ազատությունը պետք է խորտակվեր, քանի որ քաղաքացիական խռովությունների աղբյուր էր դարձել: Այդ օրհասն է. «ամեն մեծություն կործանվում է», և Լուկանուսը վկայակոչում է ստոիկների ուսմունքը «հրդեհների մասին», որոնց մեջ պարբերաբար խորտակվում է տիեզերքը: «Աշխարհի վերջը», որը հրաշք էր թվում քաղաքացիական պատերազմների ժամանակակիցներին, շարունակում էր հնչել Լուկանուսի շափազանցություններում: Նրա պոեմի հիմնական տոնը՝ անխուսափելի կործանման, ընդ որում տիեզերական մասշտաբի կործանման պաթոսն էր: «Փարսալիայի» հենց առաջին տողը շափազանցված է. «մենք երգում ենք պատերազմը, ավելի քան քաղաքացիական»: Այդ անօրեն պատերազմում սրբազործությունը՝ ոճրազործություն էր, հաղթանակ տանելն ավելի վատ էր, քան պարտություն կրելը: Գեկլամատոր-պոետը իր սյուժեում հավասարապէս շնորհակալ նշույթ է գտնում և շափազանցության պաթետիկայի բարձունքների և պարադոքսային հակադրությունների համար: Ամբողջ պոեմը լեցուն է այդպիսի պարադոքսներով: Այսպէս, Լուկանուսը մի անգամ մի ամբողջ տիրադ է տեղում այն մասին, թե ինչպիսի մեծ դժբախտություն է եղել Հոռմի համար ռեսպուբլիկական ազատությունը՝ եթե այն չլիներ, հոռմեացիները չէին զգա նրա կորուստը:

Այդ դրույթն ինքնին դեռ օպոզիցիոն չէ: Կայսրությունը գուցե վում էր ռեսպուբլիկական հանդերձանքով և իրեն կապում էր ոչ թե Կեսարի դիկտատուրայի, այլ «ռեսպուբլիկան» վերականգ-

նող Օդոստոսի հետ, որին Լուկանուսը չի դիպշում: Լուկանուսն իր էպոսի վրա սկսել էր աշխատել տակավին Ներոնի մերձակիցների մեջ եղած ժամանակ, և առաջին դիրքը գովեստներ է պարունակում կայսրի պատվին: Պոեմի հետագա մասերում հեղինակի տրամագրությունը խիստ կերպով փոխվում է: Նա հանդես է գալիս կայսրության դեսպոտիզմի, կայսրներին աստվածացնելու դեմ: Փարսալի ճակատամարտն այժմ նրան թվում է հոմեակահանգրություն պատմության շրջադարձի կետ, պետության և ժողովրդի կործանման սկիզբ: Սենեկայի հերոսների պես, նա խոսում է այն մասին, որ ազնվության համար տեղ չկա պալատներում, որ առաքինությունը և իշխանությունը անհամատեղելի են: Աղքատը թագավորից երջանիկ է: Բայց Լուկանուսի այդ օպոզիցիոնությունը խստորեն արտահայտված արիստոկրատական բնույթ ունի: Գեմոկրատիայի առաջնորդներին նա որոշ թշնամանքով է վերաբերվում. Գրակորոսները, Կատիլինայի հետ միասին, սանզարամետի «մեղապարանների» թվումն են դանվում, այնինչ Սուլլան, որը պոեմի սկզբում ցայտուն արտահայտված բացասական բնութագրություն է ստացել, ընկնում է «երջանիկ» նուվերների թվի մեջ: Բայց, որ ամենապլիսավորն է, հեղինակի վերաբերմունքը փոխվում է դեպի իր գլխավոր պերսոնաժները: Առաջինը գրքերում երկու հակառակորդներն էլ՝ Կեսարը և Պոմպեոսը՝ հավատարապես մեղավոր են ներկայացված:

Կեսարը և ոչ մեկին չի կարողանում ճանաչել ավագ,  
Պոմպեոսն էլ հավասարներ իրեն չի հանդուրժում կրքեր,  
Թե որն է ճիշտն այդ զենքերից — հարկ չկա գիտենալ...  
Հաղթողի հետ է աստված — պարտվողը Կատոնին սիրելի:  
Կան մարդիկ, որ ինձ բանաստեղծ շեն անվանում:

Հետագա գրքերում Լուկանուսի համակրանքը թեքվում է Պոմպեոսի՝ իբրև՝ ռեսպուբլիկայի պաշտպանի կողմը, իսկ Կեսարը ամեն մի սրբություն ոտնահարող մոռյալ շարագործի գծեր է ստանում:

Լուկանուսի կերպարները հիշեցնում են Սենեկայի ողբերգությունների հերոսներին և աչքի են ընկնում նույնպիսի միատնությունամբ: Կեսարը տիպիկ «տիրան» է, արյունոտ, սենզամիտ, երկերեսանի, արտվածներին, մարդկանց և մահը հավասարապես արհամարհող: Նրան միշտ հարկավոր են թշնամիներ և պատերազմ,

նա համընդհանուր սարսափ է ներշնչում և հրճվում է զրանով: Չնայած հեղինակի հակաիրանքին, Կեսարի կերպարը, որն իրեն ճակատագրից բարձր է զգում, զուրկ չէ որոշ վեհությունից: Պոմպեոսին Լուկանուսը հասկացրել է տառապող մարդու գծեր, լեցուն սանջալի՝ արժանապատվությամբ, դժբախտության պահին՝ ճակատագրին հնազանդությամբ և հպարտությամբ: Լինելով համընդհանուրի սիրեցյալ, նա վախճանվում է լիակատար ինքնազստմամբ, և նրա հոգին համարաբժվում է աստղագարդ բարձունքները: Մեննել կարողանալը Լուկանուսի համար ապրել կարողանալու նույնպիսի կրիտերիում է, ինչպես Սենեկայի համար, և «մահվան հանդես սիրո» մոմենտը պոետի ուշագրությունը գրավում է նաև էպիգրաֆիկ դեմքերը նկարագրելիս: Պոմպեոսից և Կեսարից դատ, մի կերպար կա, որ համեմատաբար մանրամասն է մշակված: Այդ Լուկանուսի իդեալական դրական հերոս Կատոն Կրոտոսն է, ստոիկյան փիլիսոփայության սկզբունքների անընկճելիորեն հաստատուն կրողը, Հոմերի մարմնացած խիղճը: Կատոնն այն պերսոնաժն է, որը մարանչում է Հոմերի, և ոչ թե Պոմպեոսի կամ Կեսարի համար, և որի շուրթերով կարող է խոսել հեղինակն ինքը:

Ստորացնելով Կեսարին և իդեալականացնելով Պոմպեոսին, Լուկանուսը միանգամայն խեղափոխում է հարաբերակցությունն այդ դեմքերի միջև և կորցնում է ռազմական գործողությունների ընթացքի իմաստավորման հնարավորությունը. գործողություններ, որոնք կազմում էին նրա էպոսի պատմողական մասը: Ասենք, նա զրան չի էլ ձգտում. նրա պերսոնաժները, ներառյալ նույնիսկ գործուն Կեսարը, հանդես են գալիս որպես օրհասի մարիոնետներ, և մարդկանց գիտակցական մտազրույթությունները դեպքերի զարգացման մեջ լուի ենթակաշական դեր են խաղում: Պոեմն ամբողջական գործողություն չունի: Հետևելով պատմական աղբյուրներին (գլխավորապես Լիվիոսին), Լուկանուսը մշակել է մի շարք առանձին էպիգրոֆներ, որոնք միշտ չէ, որ իրար հետ ներքին կապակցության մեջ են դրված: Նյութը ընտրելիս նա ելնում է պոթետիկ և սարսափելի լինելու գրույթից: Առօրյայի մակարդակի դեպքերն զուրս են մնում նրա պոետիկական հետաքրքրության տեսադաշտից:

Պոեմի միասնությունն ստեղծվում է ոչ թե պատկերվող նկարի ամբողջականությամբ, այլ հեղինակի՝ դեպի իր պատմության առարկան ունեցած սուրեկափվ վերաբերմունքի ցուցադրումով:

Յուրաքանչյուր էպիզոդն ուղեկցվում է հեղինակի մեկնաբանում-  
ներով: Պոետը դատողութուններ է անում, արտնջում, վրդովվում,  
իր պերսոնաժներին է դիմում խորհուրդներով, հորդորումներով,  
կշտամբանքներով: Լուկանուան իր կապերը միանգամայն խզում  
է անդեմ էպիկական պատմողականության տրագիցիայից, որը  
խուլացել էր հելլենիստական էպիկայում, բայց շատ նշանակալի  
չափով պահպանում էր Վերգիլիուսը: Հեղինակի դատողություննե-  
րը և հերոսների ճառերն այն ոլորտն է, ուր պոեմի դեկլամա-  
ցիոն պաթոսն ամենամեծ ուժի է հասնում, և այդ միջոցներն էլ  
ծառայում են գործող անձանց բնութագրման համար:

Ինչպես այդ բնական է ճարտասանական ոճի համար, Լու-  
կանուսը մեծ ուշադրություն է դարձնում նկարագրաբյուրեներին:  
Այստեղ մենք նկատում ենք սարսափելիի և պաթոլոգիայի շեշտը:  
Այդպիսին է վիթխարի նկարագրությունն այն փոթորիկի, որին  
հանդիպում է Կեսարը էպիրոսից Իտալիա նավակով նավարկելու  
փորձի ժամանակ: Սարսափներով բեռնվածությամբ աչքի է ընկ-  
նում նաև Փարսալի ճակատամարտից առաջ մեռելին կանչելու կա-  
խարդական մեծ տեսարանը, որը, հավանաբար, մտածված է  
իրրև էնեասի սանդարամետ իջնելու ղուպահեռ: Լուկանուսը հա-  
ճույքով նկարագրում է ամեն տեսակ տանջալից մահ, տալիս է  
համաճարակի, սովի, ծարավի, տարբեր օձերի խայթածից մա-  
հանալու նկարագրություններ: Մարտերի տեսարաններում նա  
երբեմն փորձում է շեղվել մի շարք մենամարտեր պատկերելուց  
և դրանք փոխարինել մասսայական բախումների, փախուստների  
պատկերներով կամ դիակների դաշտերի, ուր ամեն կողմից հոր-  
զում են վայրի պազաններն ու թռչունները: Այլ նկարագրություն-  
ներ թեքումն ունեն դեպի գիտական էկզոտիկան: Գրեթե յուրա-  
քանչյուր գիրքը պարունակում է աշխարհագրական կամ ազգա-  
գրական բնույթի որևէ էքսկուրս. Լուկանուսը տալիս է վայրերի  
աշխարհագրական ուրվագծեր, պատերազմի մեջ ներգրաված ժո-  
ղովուրդների ամբողջ ցուցակներ, իր էպոսի մեջ մտցնում է գի-  
տական մեծ տեղեկանք Նեկոսի ակունքների մասին: Այդ նյութն,  
ասենք, շատ հեշտ էր քաղել համապատասխան գիտական գրա-  
կանությունից, մասնավորապես Սենեկայի երկերից:

Սենեկայի ողբերգություններին զուգընթաց, Լուկանուսի էպոսը  
դեկլամացիոն-պաթետիկ ոճի կարևորագույն հուշարձան է հա-

մեական պոեզիայի մեջ: Այդ ուղղության բոլոր թերութունները առաջին հերթին իրականության իդեալիստական խեղաթյուրումը և արտահայտության միջոցների չափազանցությունը, առկա են նաև «Քաղաքացիական պատերազմի մասին» պոեմում: Բայց Լուկանուան ամենի նշանակալի տաղանդ է, քան Սենեկան: Նա աչքի է ընկնում համարձակ ֆանտազիայով, գույների հարստությամբ, գեղարվեստականորեն պատկերելու ընդունակությամբ: Դրա հետ միասին նա հոեատորական փայլուն շնորք ունի: Այդ բոլորը նրա պոեմի համար հսկայական հաջողություն էին ապահովում հռոմեական ընթերցողների շրջանում: Նույնիսկ «նոր» ոճի հակառակորդ Քվինտիլիանուսը նշում էր Լուկանուսի «խանդավառությունը» և «հուզումնալից լինելը», նրա «փայլուն սենտենցները», թեպետև ավելացնում էր, որ Լուկանուսը «ավելի արժանիք ունի, որ նրան հեռեեն հոեատորները, քան թե պոետները»: Այդ կարգի դատողություններն առաջացրին Մարցիալիսի ծաղրական էպիգրամը, որը կազմված է որպես մակադրություն Լուկանուսի երկերի հրատարակությանը.

Կան մարդիկ որ ինձ բանաստեղծ շնն անվանում

Ինձ բանաստեղծ է համարում այս առևտրականը, սրբ և ինձ վաճառում է:

Լուկանուսին մի շարքում էին դասում վերգիլիուսի և Հորացիուսի հետ, ընթերցում էին դպրոցում, մեկնաբանում էին: Այդ փառքը պոետին ուղեկցում էր և Միջին դարերի ընթացքում: Բայց Լուկանուսի պոեմն առանձնակի ուշադրությամբ էր օգտվում XVII—XVIII դ. դ., անգլիական և ֆրանսիական բուրժուական ուսուցիչների ժականակաշրջանում, երբ այն ընկալվում էր իբրև ոեսպուրիկականության և դեսպոտիզմի հանդեպ առեկության մանիֆեստ: Ֆրանսիական ուսուցիչի ազգային գլարդիայի թրերի վրա փորագրված էր Լուկանուսի տողերից մեկը:

Ստոիկյան փիլիսոփայությամբ հրատարվող արիստոկրատական շրջաններին մոտ էր կանգնած այդ ժամանակի մի այլ հայտնի պոետ, երգիծաբան Ավլուս Պերսիուս Ֆլակուսը (34—62). նա աշակերտել էր այն նույն փիլիսոփա Կոռնոտին, որի մոտ սովորել էր և Լուկանուսը. և փիլիսոփա դաստիարակի հետ սերտ բարեկամությունը, Պերսիուսի սեփական խոստովանությամբ, վճռական դեր է խաղացել նրա անձնավորության կազմակերպ-

ման մեջ: Լինելով համեստ և ամոթխած՝ նա ապահովված գրասերի խաղաղ կյանք էր վարում, մշտական շփման մեջ գտնվելու՞ ստորիկյան ուսմունքի ակնաւոր հետևորդների հետ: Պերսիուսը գրում էր քիչ և դանդաղ. մի փոքրիկ ժողովածու վեց էր գիծանքից, որ կազմեց նրա գրական փառքը, հրատարակվեց նրա մահվանից հետո՝ Կոռնուտի մասնակցութեամբ:

Պերսիուսն իրեն համարում է Լուցիլիուսի և Հորացիուսի շարունակողը: Ըստ անտիկ վկայութեան, նա իր երգիծաբանի կոչումն զգաց, երբ ծանոթացավ Լուցիլիուսի երկերի հետ, և նրա ժողովածուի առաջին-ծրագրային-երգիծանքն սկսվում է Լուցիլիուսից փոխ առնված բանաստեղծութեամբ: Այդ երգիծանքը նվիրված է գրական հարցերին: Այն ուղղված է բովանդակագրուի փաշտվեցրած պոեզիայի, փքուն դեկլամատորների և ալեքսանդրիզմի հետևորդների դեմ, իսկ ալեքսանդրիականութեանը ձրգտում էին բազում անվանի դիլետանտներ, այդ թվում և Ներոնը: Պերսիուսը նկարագրում է ոեցիտացիայի պատկերը. ահավասիկ պոետը, «նոր տողայով, ամբողջովին սպիտակազգեստ և մատին սաքոտնիկ, կարծես իր ծննդյան օրը լինի», կարդում է իր ոտանավորները, «կոտրտվելով և վավաշոտ աչքերը ոլորելով»՝ հասարակութունը («խոպոտ և վիթխարի Տիտուաներ») թվրտում է հիացմունքից, երբ պոեմները «թափանցում են և խոտու են ածում ներսը իրենց թրթռուն ոտանավորներով»: Իսկ զավաթն առաջին «ոբեէ մեկը մանիշակազույն թիկնոցն ուսերին, թլվատ կերպով խնթխնթացնելով որեէ նեխվածք, ատամների արանքից բամում է Ֆիլիդի, Իսիսիպիլի և այդ կարգի այլ տխուր պատմութեւններ, ինչպիսին որ կգտնվեն պոետների մոտ, աղավաղելով բառերն իր քնքշացրած արտասանութեամբ»: Մնացած մյուս երգիծանքները էթիկական բովանդակութուն ունեն — աղոթքի և մարդկանց ցանկութեւնների, փիլիսոփայութեան կենսական նշանակութեան, ինքնիմացութեան, իսկական ազատութեան, արտաքին բարիքներից օգտվել կարողանալու մասին: Կայսրութեան ժամանակի երգիծաբանը քաղաքական թեմաներ չի շոշափում, իրեն սահմանափակելով գրականութեան և անհատական բարոյականութեան հարցերով: Այդ նրան մոտեցնում է Հորացիուսին, բայց Պերսիուսի երգիծանքները զուրկ են այն անհատական-ինտիմ տոնից, որով գունավորված են Հորացիուսի երգիծանքները: Պերսիուսի մեջ անհատական տարրը չնչին է և օրգանապես կապված չէ դատողութեւնների հետ, որոնք կազ-

մում են նրա երգիծանքների հիմնական բովանդակությունը: Ինչպես և Հորացիուսը, նա սովորաբար սկսում է մասնավոր օրինակով կամ անձնական դիմումով, բայց այնուհետև անցնում է վերացական հարցերի քննարկմանը, ընդ որում խստորեն հետևում է ստոիկյան սկզբունքներին: Պերսիուսի էթիկական երգիծանքները իրենցից ներկայացնում են դիատրիքներ, փիլիսոփայական դեկլամացիաներ, որոնք Հորացիուսական օրինակով աշխուժացված են բաղմամբով նկարագրություններով, ուրվագծումներով, դիալոգներով: Ավագանու քնքշածությունը, նրա մեջ կենսական լուրջ հետաքրքրության բացակայությունը, վատ և շահամուլ ցանկությունները, ազահությունն ու պերճանքը, ժլատությունն ու սնտախապաշտությունը՝ սրանք են երգիծանքի հիմնական օրեկանները: Բայց, բացառյալ առաջինից, դրական երգիծանքից, Պերսիուսի ուրվագծումները փիլիսոփայական բնույթ ունեն, առանց հոռոմեական արդիականության պարզորեն կոնկրետ գծերի: Որոշակի անձնավորությունների վրա հարձակվելուց երգիծաբանը ձեռնպահ է մնում: Ստեղծվում է որոշ շարժվ վերացական-ուսուցողական տոն, որով մատուցվում է Ստոաչի դպրոցական իմաստությունը: Այս բոլորով հանդերձ Պերսիուսը լուրջ և անկեղծ գրող է և շատ հեռու է Սենեկայի արհեստական կեցվածքից: Էնգելսը, որը խիստ բացասական գնահատական է տալիս հոռոմեական կայսրության փիլիսոփաներին, և մասնավորապես Սենեկային (տես քաղվածքը 274—275 էջերում), Պերսիուսին զատել է որպես բացառություն: «Փիլիսոփաներից միայն շատ քչերն էին, ինչպես Պերսիուսն էր, որ հարվածում էին գոնե երգիծանքի մտրակով իրենց ալյասերված ժամանակակիցներին»<sup>\*</sup>:

Պերսիուսի ռճը յուրակերպ է: Կենելով կլասիցիստ իր համակրանքով, Պերսիուսը չի հավանում «նոր» ոճի սեփեթանքն ու «սենատենցների» ետևից ընկնելը: Անտիկ կենսագրի ասելով, նա «չէր հրապուրվում Սենեկայի շնորքով»: Այնուամենայնիվ «նոր» ոճը նրա վրա մեծ ազդեցություն ունեցավ: Խիստ և առնական արտահայտությունը ձգտման մեջ նա որոնում է ուժեղ, զգալնորեն պայծառ կերպարներ, բայց ոչ թե պաթետիկայի պլանում, այլ մտերմական «ստորին» ոճի բնազավառում: «Ցածր լինելու» մոմենտը համակում է բոլոր երգիծանքները, հաճախ անց-

\* Фр. Энгельс. Бруно Бауэр и раннее христианство, Соч., т. XV, 1935, 607.

նկելով վերամբարձ ոճի պարողիային: Ժողովածուն ուղեկցվում է «նախերգանքով», ուր հեղինակը, իբրև «կիսատղետ» իրեն հակադրում է պրոֆեսիոնալ պոետներին. «ես իմ շրթունքները չեմ ողողել ձիու աղբյուրում (ծաղրանմանողական թարգմանություն Սուսաների աղբյուրի — Շիպպոկրենի) և չեմ հիշում, կարծես թե դառանցել եմ երկզլխանի Պաոնասի վրա»: Ստացվում է յուրակերպ շրջադարձված «նոր» ոճ, դժվարացված, բեկբեկումներով, ամբողջովին պարուրված անսպասելի փոխաբերություններով և համեմատություններով: Վերացական տերմինները փոխարինվում են կոնկրետ բառերով: Խոստանալով երևակայական զրուցակցին ազատել նախապաշարումներից, Պերսիուսը ասում է, որ «հին տատիկներին կկորզի նրա թոքերից»: Այս արհեստական ոճը շատ է բարդացնում Պերսիուսի երգիծանքները հասկանալը, մանավանդ, որ հեղինակը դիտմամբ հատում է մի մտքից մյուսին անցնելը, պատկերները ձնշելով արագ տեմպի մեջ: Ուստի Պերսիուսի վրա հաստատվել է «մութ» հեղինակի, հոռոտական ամենադժվար ըմբռնելի պոետներից մեկի համբավը: Այնուամենայնիվ ժամանակակիցները նրա ժողովածուն հիացմունքով ընդունեցին: Երգիծանքների բարոյական բովանդակությունը նպաստեց նրանց ժողովրդայնությունը ուշ անտիկ ժամանակներում և Միջին դարերում, և դրանք մեզ են հասել բազմաթիվ ձևազրբերով, ծավալուն մեկնաբանություններով:

#### 4. ՊԵՏՐՈՆԻՈՍ

Միջնադարյան որոշ ձեռագրերում պահպանվել են հատվածներ մի խոշոր պատմողական երկից, որը անտիկ գրականության ամենատուշագրավ հուշարձաններից մեկն է եղել: Այդ երկի ձևազրբերը վերնագրում են Saturae («Երգիծանքներ») կամ հունական եղանակով՝ Satyricon («Երգիծական վիպակ») կամ, թերևս «Երգիծական վիպակներ»): Նոր ժամանակի գրականագիտական տրադիցիայում հաստատվել է «Սատիրիկոն» վերնագիրը: Պատմական և կենցաղային մատնանշումները, կուկանուսի պոեմի գրքերի դեմ գրական բանավեճի առկայությունը, ավյալների ամ-

\* Խիստ ասած՝ Satyricon երկնից ներկայացնում է հոգնակի թվի սեռական հոլովը. ևսակատար վերնագիրը պետք է հնչելիս լինել՝ «Ն գիրք երգիծական վիպակի [վիպակների]», (Ն-ը՝ գրքերի մեզ անհայտ թվին է, որից կազմված է եղել այդ երկը):

բողջ հանրագումարը, որոնք կարող են խրոնոլոգիական թվագրության հիմք ծառայել, հնարավորություն են տալիս այդ երկը վերագրել Ներոնի կառավարման վերջին տարիներին կամ Ֆլավիոսների դինաստիայի սկզբին: Ձեռագրերում հեղինակ է անվանված ոմն Պետրոնիուս Արբիա. այդ նույն անունը մենք հանդիպում ենք ուշ-անտիկ շրջանի հեղինակների «Սատիրիկոնից» արած քաղվածքներում:

Տակիտուսի «Աննալներում» հաղորդում կա Ներոնի ժամանակի մի հուշժ ցայտուն դեմքի մասին, որը կրում էր Գալուս (ըստ այլ աղբյուրների՝ Տիտուս) Պետրոնիուս անունը: Ըստ Տակիտուսի խոսքերի այդ Պետրոնիուսը «ցերեկին անց էր կացնում քնած, գիշերը՝ գործի և զվարճությունների մեջ. եթե ուրիշները փառքի են համնում իրենց բարի ձգտումներով, ապա նա այդ ձեռք էր բերել պարապուսթյամբ. նրան չէին համարում վատնող ու շռայլող, ինչպես այդ լինում է կյանքը խնջույքների մեջ անցկացնողների համար, այլ համարում էին՝ նորագեղ հաճույքների վարպետ: Նրա խոսքերի և արարքների անկաշկանդ և որոշ շափով անփուլթ ազատությունը անկեղծ ամփիջականության գրավիշ երանգն էր հաղորդում դրանց: Սակայն վաֆրիսիայի պրոկոնսուլի, իսկ այնուհետև և կոնսուլի պաշտոնում, նա եռանդ և գործարարություն հանդես բերեց: Այնուհետև վերստին ընկղմվելով արատների մեջ — կամ արատներին նամանցնելու, — նա ընդունվեց Ներոնի մերձակիցների ամենանեղ շրջանը, որպես նրբագեղուքյան արքիտո, և Ներոնը իսկական հաճույք և վայելք էր զգում միայն այն ճոխություններից, որոնք Պետրոնիուսի հավանությունն էին ստանում»: Այդ հանգամանքը գրգռեց Տիգելինուսի՝ կայսրի ամենակարող սիրեցյալի՝ նախանձը: Պիտոնի դավադրությունը հայտնաբերելուց հետո, Տիգելինուսը հոգ տարավ կասկածներ գրգռել իր ախոյանի դեմ և Պետրոնիուսը վճռեց կամովին մահ ընտրել: «Նա չէր շտապում բաժանվել կյանքից, — պատմում է այնուհետև Տակիտուսը, — և, բանալով իր երակները, մերթ փաթաթում էր զրանք, երբ ցանկանում էր, մերթ վերստին բացում: Նա գրուցում էր բարեկամների հետ, բայց ոչ լուրջ նյութի մասին, և ոչ էլ այն միտումով, որպեսզի ոգու արիության փառք վաստակի: Նա ունկնդրում էր ոչ թե հոգու անմահության կամ փիլիսոփայական ճշմարտությունների մասին դատողությունները, այլ թեթևամիտ պոեզիա և դատարկ ոտանավորներ: Ստրուկներին — ոմանց առատորեն պարգևատրեց, ուրիշներին

հրամայեց զանակոծութեամբ պատժել: Եւ կերակուր ճաշակեց, աչնուհետև բնին հանձնվեց, և նրա մահը, իրականում ստիպողական լինելով, նման էր բնական մահվան»: Իր կտակում Պետրոսնիւսը նկարագրում է Ներոնի անառակութունները և կտակն ուղարկում է կայսրին:

«Նրբագեղութեան արբիտրի» այդ անկաշկանդ-անկեղծ և պաշարյուն-արհամարհող կերպարանքը, այդ յուրակերպ անտիկ «ղեկղին», արտակարգորեն հարմար է գալիս այն պատկերացմանը, որ կարելի է կազմել «Սատիրիկոնի» հեղինակի մասին հենց երկի հիման վրա: Եվ որքանով տրագիցիան «Սատիրիկոնի» հեղինակ Պետրոսնիւսին «Արբիտր» մականունն է տալիս, պետք է միանգամայն հավանական համարել, որ այդ հեղինակը միևնույն անձնավորությունն է, որի մասին պատմում է Տակիրոսը: «Սատիրիկոնը» «մենիպայան երգիծանքի», պատմողականության ձևն ունի, ուր պրոզան հերթագայում է ոտանավորների հետ, բայց քստ էություն այն շատ հեռու է անցնում «մենիպայան երգիծանքների» սովորական տիպից: Այդ «ստորին» — կենցաղային բովանդակությունն ունեցող երգիծական վեպ է: Անտիկ գրականության մեջ այդ վեպը մեկուսացած է, և մենք չգիտենք, Պետրոսնիւսը նախորդներ ունեցել է, թե ոչ: Պատմագրական կապերի տեսակետից հուշ ճատկանշական է, որ Պետրոսնիւսը կենցաղային բովանդակությունն ունեցող վեպը կառուցում է որպես «շրջադարձում» հունական սիրավեպի, պահպանելով նրա սյուժետային սխեման և մի շարք առանձին մոտիվներ: «Վերամբարձ» ոճն ունեցող վեպը փոխադրվում է «ստորին» պլան, որը բնորոշ է անտիկ ժամանակի կենցաղային թեմաների մեկնաբանման համար: Այդ տեսակետից «մենիպայան երգիծանքի» ձևը, վերամբարձ ոճի պատմողականության ծաղրանմանության համար արդեն տրագիցիոն դարձած լինելով, պատահական չէր: Բայց «Սատիրիկոնը» գրական ծաղրանմանություն չէր՝ սիրավեպերը ծաղրելու իմաստով: Նրան օտար է և այն բարոյականացուցիչ կամ մերկացուցիչ դրույթը, որը սովորաբար բնորոշ էր «մենիպայան երգիծանքների» համար: «Շրջադարձելով» սիրավեպը, Պետրոսնիւսը ձգտում է միայն ընթերցողին զբաղեցնել իր նկարագրությունների անողոր անկեղծությամբ, որը հաճախ հեռու է անցնում այն սահմանից, որը պատշաճ էր համարվում լուրջ գրականության մեջ:

«Մատիորիկոնը» ծավալուն երկ է: Պահպանված հատվածներն սկսվում են 14-րդ (կամ, թերևս, 13-րդ) դարից և մինչև վեպի վերջը շին հասնում: Ամբողջի ծավալի մասին տեղեկություններ չկան: Այն մասում, որը մեզ հայտնի է, պատմվում է առաջին դեմքով, վեպի հերոս էնկոլպիուսի անունից: Սբա կուլտուրական հասարակության ապադասակարգացնացած, շրջմոլիկ և ոճրագործ դարձած ներկայացուցիչն է: Էնկոլպիուսը պղծել է տաճարը, կողոպտել է վիլան, սպանություն է կատարել, զլադիատոր է եղել: Ճակատագիրը նրան քաղաքից քաղաք, մի գժբարտությունից մյուսն է նետում, և մի վայրում ապրելով, նա գերադասում է դրանից հետո արգեն շերեալ նրանց, ում նա այնտեղ հանդիպել է: Այդպիսին է այդ կենցաղային «ստորին» հերոսը, սիրավեպերի իդեալական դեմքերի այդ լիակատար հակապատկերը: Ինչպես ենթադրվում է վեպում, էնկոլպիուսին հետապնդում է աստվածություն «ցասումը», ընդ որում այդ մի աստվածություն է, որը կապ ունի սիրո հետ, բայց այդ չի լինի արգեն ոչ էրոսը ոչ էլ Ափրոդիտեն, այլ ավելի «ստորին» կարգի աստված՝ Պրիպոսը: Սիրավեպերում միշտ սիրահարված զույգ կա. էնկոլպիուսին ուղեկցում է,— գոնե «Մատիորիկոնի» մեզ հասած մասերում,— կանաչիակերպ մի աղա՝ Հիտոնը: Այդ «զույգին» տարբեր էպիզոդներում միանում է որևէ երրորդ շրջմոլիկ, սրբ երեմն խախտում է էնկոլպիուսի և Հիտոնի փոխադարձ համաձայնությունը: Հիմնական պերսոնաժները ամեն տեսակի փորձանքների են ենթարկվում, իրենց «զեղեցկության» պատճառով, մերթ անջնտվում են, մերթ վերստին միանում: Փոթորիկ, նավարեկում, երևակայական ինքնասպանություն՝ վիպական արկածների այդ ապարատը առկա է և «Մատիորիկոնում»: Բայց այդ բոլորը սյուժեի կմախքն է միայն, որի շուրջը կենտրոնացված են մեծ քանակությամբ էպիզոդներ, որոնք կազմում են վեպի հիմնական հետաքրքրությունը: Հերոսներն ընկնում են բազմազան արարքների մեջ և պատահում են տարբեր պերսոնաժների. հեղինակը պատկերում է որջեր և գաղտնի պաշտամունքների շվաշտանքներ, տալիս է հրապարակների կամ մանր պանդոկների խայտառակության տեսարաններ, տանում է նավի ներսը և պատկերասրահը, դուրս է բերում կախարդուհիներ և կավատուհիներ, սիրային արկածներ որոնողների տուն, ժառանգություն որոնողներ, պորտաբույծներ և գողեր, ստրուկներ և ազատագրվածներ, նավատարիներ և զինվորներ, վերջապես ինտելիգենտ պրոֆեսիայի ներ-

կայացուցիչներ՝ փոքր քաղաքի ճարտասանության դասատու և անհաջողակ թափառական բանաստեղծ: Դրանք այն կերպարներն ու սխտուացիաներն են, որոնք սովորաբար հանդես էին դալիս անտիկ դրականության «ստորին» ժանրերում՝ անեկզոտում, նոփելում, ատելանայում, միմում: Դրանք շարելով վիպական սյուժեի առանցքին, Պետրոսիուսը մեծածավալ երկ է ստեղծում, որն աչքի է ընկնում պատկերման աշխուժությամբ և կենցաղի լայն ընդգրկմամբ, ճիշտ է, առավելապես սահմանափակված հոսմեական կյանքի «ստորին» կողմերով: Պատմելու հիմնական ընթացքին երբեմն միանում են ընդմիջարկված նովելներ, մատուցված սրպես գործող անձանցից որևէ մեկի պատմվածք: Այդպիսիք են, օրինակ, պատվող-գալլի կամ վամպիր-կախարդուհու մասին «Նրաչքի» պատմությունները, շարադրված արետալոգիայի բոլոր կանոններով «ակնատեսի» անունից, կամ համաշխարհային գրականության մեջ հռչակավոր «էփեսացի մատրոնայի» մասին նովելը (անմխիթար այրին, որ գերեզմանի դամբարանում սգում էր ամուսնու դիակի վրա, կապ է հաստատում իրենից ոչ հեռու, մահապատժի ենթարկվածների դիակները հսկող՝ զինվորի հետ: Երբ այդ դիակներից մեկը գողանում են, այրին տալիս է իր ամուսնու դիակը կորուստը փոխարինելու համար): Պահպանված էպիզոդները ծավալվում են հարավային Իտալիայում, սկզբում կամպանիայի մի փոքր քաղաքում, այնուհետև՝ ծովային ձանապարհորդությունից հետո՝ Կրոտոնում: Բայց մենք գիտենք, որ վեպի գործողության վայրերից մեկը եղել է Մասիլիան (Մարսելը) և չի բացառվում այն հնարավորությունը, որ Պետրոսիուսն իր հերոսին ուղևորել է և Արևելքի երկրները: Գործողությունը վերադրված է մոտ անցյալին, մտավորապես Տիրերիուսի կառավարման վերջին շրջանին, բայց նախորդ սերնդի անվան տակ նկարագրվում են հեղինակի ժամանակակիցները, և այդ աեսակետից վեպը զերծ չէ մանր անախրոնիզմներից:

Պետրոսիուսի պատմողականությունն իր տոնով բազմազան է. այն մերթ պահպանում է լրակատար կենսական նատուրալիստական ոճը, մերթ ծաղրանկարի և մյուս ժանրերի (էպոս, միմ) ծաղրանմանողության բնույթ է ընդունում, մերթ անցնում է ֆանտաստիկ գրոտեսկի: Այդպիսին է, օրինակ, Կրոտոն քաղաքի նկարագրությունը. այդ քաղաքում հարգվում են միայն ամուրիները և անդամակները, և ուր բնակչությունը բաժանված է «որսացողների», այսինքն՝ ժառանգություն որոնողների և «որսաց-

վողները՝ անդալակ ժառանգատուները: Վեպի թափառական հերոսները այդ քաղաքում ապրում են որոնողների հաշվին, և մեզ հասած վերջին հատվածներում պերսոնաժներից մեկն իր երևակայական հարստությունները կտակում է այն կրտսնցիներին, որոնք կհամաձայնվեն հրապարակորեն ուսել իր դիակը:

Պեարոնիուսը պատկերման ամենամեծ ուժի է հասնում «ինչուչք Տրիմալխիոնի մոտ» կպիզուդում: Վեպի գրեթե միակ անբողջությունը պահպանված այդ կպիզուդում նկարագրվում է ազատագրված ստրուկների միջավայրը: Մեր թ. I դարում, երբ հին արխատկրատիան շքանում էր, իսկ նորը տակավին նոր էր ծնունդ առնում, ազատագրված ստրուկների դասը մեծ նշանակություն ստացավ կայսրության տնտեսական և հասարակական կյանքում, գործոն մասնակցություն ունենալով քաղաքային և նույնիսկ պետական կառավարման գործում (մանավանդ Կլավդիուս Կալսրի օրոք)\*: Պեարոնիուսն այդ հարստացող ազատագրվածներին վրա թափեց պալատական էսթետի ամբողջ արհամարհանքը: Հարուստ նորելուկի խնջուչքի թեման նոր չէր, բայց «Սատիրիկոնում» արտակարգորեն ընդարձակ մշակում է ստացել: Նրա կենտրոնական դեմքը՝ ինքը խնջուչքի անբ՝ Տրիմալխիոնն է: Անցյալում ստրուկ, սիրիացի մի աղա, որն իր տերերի սիրային զվարճությունների համար էր ծառայում, դարձավ տիրոջ սիրելին, ազատագրվեց, ժառանգություն ստացավ և տուտրական հաջողակ գործողություններով հակայական կարողություն վաստակեց: Նրա իր համար կազմած գերեզմանաքարի արձանագրությունը պարունակում էր հետևյալ խոսքերը՝ «Նա ելել է մանր մարդկանցից, թողել է երեսուն միլիոն սեասերց և երեք չի լսել ոչ մի փիլիսոփայի»: Այդ կերպարը մատուցված է բազմակողմանիորեն. մենք իմանում ենք Տրիմալխիոնի կյանքի պատմությունը՝ նրա տնտեսական հզորությունը («չկա մի բան, որ նա գրսից

\* 56 թ. ազատագրվածների հարցը բնվում էր սենատում և ոմանք պահանջում էին նվազեցնել նրանց իրավունքները: Ուրիշներն առարկում էին՝ «Այդ դասը լայնորեն տարածված է. նրանով են մեծ մասամբ համալրվում տրիբները, գեկուրիաները [պետական մանր պաշտոնյաների կուրիաները], կառավարական անձանց և բրմերի ծառայողները, նույնիսկ հավաքազբվում են քաղաքի կոգորտներ [պահակ]. նույնպես և հեծյալների մեծամասնությունը և շատ ու շատ սենատորներ իրենց ծագումով ուրիշ տեղից չեն սկիզբ առնում: Եթե դատենք ազատագրվածներին, ապա ակներե կդառնա ազատածինների սակավությունը» (Тацит, Анбалы, кн. XIII, гл. 27): Ներսնը համաձայնից այս վերջին կարծիքի հետ:

գնի՝ ամեն ինչ տանն է պատրաստվում»), նրա տնտեսավարական և կալվածքները կառավարելու եղանակները, նրա մասնավոր կյանքը, վերաբերմունքը՝ կնոջ, ստրուկների, դասաչին քնկերների հանդեպ: Տրիմալխիոնի ապարանքի ամբողջ պերճանքի, նրա խնջույքի, ամեն մի արարքի մեջ հեղինակը դրսևորվում է անճաշակույթուն, քաղաքավարության խապառ բացակայույթուն, տգիտույթուն, անտոխապաշտույթուն, հակումն դեպի կոպիտ հաճույքները: Պետրոնիուսի գեղարվեստական տակտը նրան չափազանց մոռյլ գույն չի հատկացնում: Տրիմալխիոնը ոճրագործ չէ, նույնիսկ շար մարդ չէ, բայց նրա յուրաքանչյուր քայլը՝ թելադրված լինի այդ նորելուկ հարուստի անապարծույթյամբ կամ բնական բարեգթույթյամբ, նրա մեջ երևան է բերում նախկին ստրուկին: Այդ վարպետորեն կազմած, ամենադաժան հեղինակը լեցուն բնութագրույթյան մեջ արիստոկրատիան, դուրս մղվելով տնտեսապես և քաղաքականապես, վրեժխնդիր է լինում, ընդգծելով իր մտավոր և էսթետիկական կուլտուրայի գերազանցույթյունը:

Տրիմալխիոնի հյուրերը (եթե շահավենք վեպի դիտավոր պերսոնաժներին)՝ նույնպիսի ազատագրվածներ են, միայն փոքր մասշտաբի: Այդ միջավայրն է, որից ելել է Տրիմալխիոնը: Նրանք բնութագրված են համառոտակի, բայց ոչ պակաս արտահայտիչ. նրանք «հասարակ մարդիկ» են, անկիրթ և անտոխապաշտ, սահմանափակ հորիզոնով, կոպիտ ճաշակով, բայց ոչ առանց գործնական խելքի: Հետաքրքրական է, որ այստեղ բնութագրման միջոցներից մեկը լեզուն է ծառայում: Ազատագրվածներն արտահայտվում են ոչ կոկիկ և ընդհատ ֆրազներով, լատիներեն լեզվի քերականական նորմաների բազմաթիվ շեղումներով, հունարեն բառերը խառնում են լատիներենին (ստրուկները մեծ մասամբ հունա-արևելյան երկրներից էին), առածներ և սրախոսույթյուններ են տեղում: «Ստորին» պերսոնաժների «գոեհիկ» լեզվով բնութագրման այդ մեթոդը «Սատիրիկոնը» դարձնում է մեզ քիչ հայտնի «ժողովրդական» լատիներենի արտակարգորեն արժեքավոր աղբյուր:

Պետրոնիուսի վեպի գեղարվեստական արժանիքների շարքում պետք է դասել նաև այն հանգամանքը, որ հեղինակը կարողացել է ցայտուն կերպով պատկերել իր ժամանակի սոցիալական կյանքի մի շարք նշանակալից պրոցեսները: Ազատագրվածների նշանակույթյան աճը, Իտալիայի տնտեսական դեպրեսիան, որի մասին գանգատվում են Տրիմալխիոնի հյուրերը, վերնախավի ամու-

րի կյանքն ու անզավակութիւնը, արեւելյան կրօնների լայնորեն տարածվելը, արվեստների անկումը,— այս բոլորը հոմեական ստրկատիրական հասարակութեան քայքայման էական կողմերն են: Պետրոսիտան ի վիճակի չէ գտնել այդ մոմենտները, դրսևորել դրանց էությունը և ցույց տալ հարկ եղած հեռանկարը, նա այդ մատուցում է «ստորին» կարգի նատուրալիստական մանրամասնությունների հետ հավասարապես, բայց միայն գեղարվեստական ֆիքսացիայի ուժն արդեն «Սատիրիկոնին» պատմավոր տեղ է ապահովում ամբողջ ուշ-անտիկ գրականութեան մեջ. այդ նրա այն հուշարձանն է, որն ամենից շատ իրավունք ունի ռեսուրսական կոչվելու:

Հասարակական քայքայման պայմաններում աշխարհը գեղարվեստորեն տեսնելու այդ սրութիւնը այս կամ այն չափով հոռետեսներն է գունավորված: Պետրոսիտան համար այդ սկեպտիկ-արհամարհական վերաբերմունքի երանգ է ստանում, ուղղված դեպի ամբողջ շրջապատը: Ոտանավորների պարտիաները, որոնք վեպի մեջ են մուծված «մենիպայան երգիծանքի» ոճին համապատասխան, հաճախ ծառայում են որպես գործողութեան ընթացքի լիրիկական մեկնաբանութիւններ և ավելի հստակ են դարձնում հեղինակի աշխարհագրացութիւնը, որքանով նա կորցրել է իր հավատը դեպի սովորական արժեքները: Դատարանները կաշառելով են, օրենքներն՝ անուժ փողի իշխանութեան առաջ, բարեկամութիւնը — դատարկ խոսք է, մարդկանց միջև հարաբերութիւնը՝ կեղծիք, միմեկան՝ պիեսի խաղ: Գերբնական աշխարհի հավատը միայն միջոց է ծառայում հավատացյալների հեգնական բնութագրութեան համար: «Մեր մարդն այնքան լեցուն է կենդանի աստվածներով,— ասում է Պրիսպուսի երկրպագուներից մեկը,— որ այստեղ ավելի հեշտ է ասածու հանդիպել, քան մարդու»: Աստվածների վերաբերյալ Պետրոսիտան էպիկուրյան հայացքների կողմնակից է՝ «աստվածներին սարսափն է ստեղծել»: Փիլիսոփայական սխտեմներից ամենից շատ նրա համակրանքին է արժանանում էպիկուրականութիւնը, գերբնական ուժերի իր ժխտմամբ և վաշելքների կոչով, բայց այդ վաշելքները Պետրոսիտան ըմբռնում է ավելի դոկտրինայի իմաստով և ըստ էութեան նա անտարբեր է դեպի փիլիսոփայութիւնը:

Պետրոսիտան ամենից շատ հետաքրքրում է արվեստների ճակատագիրը: Նա բազմիցս անդրադառնում է այդ հարցին, դատողութիւններ անելով իր պերսոնաժների բերանով կերպարվես-

տի, ճարտասանութեան և պոեզիայի անկման մասին: Հեղինակի ճաշակը խիստ կլասիկական է, և «նոր» ոճը նրան թվում է «դատարկահնչուն», խոսքի իսկական արվեստի անկում: «Սատիրիկոսից» մեզ հասած հատվածները սկսվում են նորաձև «ասիակա-նութեան» դեմ ուղղված էնկոլպիոսի ղեկավարացիայով: Էնկոլպիոսը կարծում է, որ պրակտիկական անկման գործում մեղավորը ճարտասանական դպրոցն է, որը կարվելով կյանքից, իր սաներին չի սովորեցնում լրջորեն աշխատել խոսքի վրա. ճարտասանու-թեան դասատու Ադամեմոնը արդարանում է, մատնացույց անե-լով ծնողների անհոգութունը, որոնք պահանջում են արագ և հեշտ ուսուցում: Պոեզիայի թեման քննվում է գլխավորապես պահպանված հատվածների երկրորդ մասում, երբ էնկոլպիոսի և Հիտոնի ուղեկից է դառնում թափառական պոետ էվմոլպոսը. սա բոլոր հանդիպողներին ձանձրացնում է իր բանաստեղծական ղեղումներով: Դրանց թվին է պատկանում «Քաղաքացիական պատերազմի մասին» պոեմը: Էվմոլպոսը քննադատում է այն պոետներին, որոնք այդ սյուժեն մշակում են պատմաբանների եղանակով, առանց ներգրավելու դիցաբանական ապարատը (նկատի է առնվում, իհարկե, Լուկանոսը), և սեփական պոետի-կական մեկնաբանում է տալիս քաղաքացիական պատերազմի առաջացման թեմային, պարուրելով այն դիցաբանությամբ և ար-դարացնելով Կեսարի գործողությունները: Դրանով Պետրոնիոսը, հավանաբար, երկու նպատակ էր հետապնդում՝ բանավեճ Լուկա-նոսի հետ և ծաղրանմանեցնում իր ժամանակի շնորհազուրկ կլասիկականներին:

Ի միջի ալլոց Պետրոնիոսի համար կլասիկականությունը անցյալի հարգանքի մի տուրք էր, որի իդեալները նա կորցրել էր, և ոչ թե ծրագիր գրական պրակտիկայի համար: Նրա սեփական լողունը՝ նատուրալիստական անկեղծութունն էր: Ետ մղելով բարոյախոսական քննադատության հանդիմանություննե-րը («Վատոններին»), նա իր երկն անվանում է «նոր՝ ըստ իր ան-կեղծ անմիջականության». այդ նույն տերմինն է (simplicitas— բառացի «պարզություն»), որը գործադրում է Տակիտոսը, բնու-թագրելով Պետրոնիոսին: «Իմ մաքուր խոսքի մեջ, — շա-րունակում է հեղինակը, — ուրախ գրացիան է, իմ լեզուն պարզ ուղղամտությամբ քարոզում է այն, ինչ որ անում է ամբողջ ժողովուրդը»: Այդ ինքնաբնութագրումը միանգամայն ճիշտ է: Եվ, իրոք, Պետրոնիոսը արձակ և բանաստեղծական

ձեի անհամատեղելի վարպետ է, որը միակերպ հեշտությամբ տիրապետում է ամենաբազմազան գրական ոճերի: Ճիշտ է և վեպի գրական տենդենցների վերաբերյալ մասնանշումը: Բայց դրա հետ միասին Պետրոսիուար մերկացնում է իր էսթետիզմի նիհիլիստական դատարկությունը և այն կառավարող վերնախավի լիակատար քայքայումը, որին նա պատկանում էր:

Ինչպես մենք միշտ ընդգծել ենք, «Սատիրիկոնը» պահպանվել է հատվածորեն, երբեմն շատ կցկտուր: Մենք չգիտենք վեպի ոչ սկիզբը, ոչ վերջը, իսկ մեզ հասած մասը, բացառյալ «ձնջույք Տրիմալխիոնի մոտ»-ից շարադրման զգալի բացեր ունի: XVII դ. վերջին ֆրանսիական սպա Նոզոն փորձեց այդ ներքին բացերը լրացնել և հորինել սկիզբը և վերջը, իբր թե իր գտած լիակատար ձեռագրի հիման վրա: Այդ կեղծարարությունը անհապաղ երևան հանվեց: Այնուամենայնիվ Նոզոյի երեակայական «լրացումները» շարունակում են գործել հանրամատչելի հրատարակություններում և մանավանդ «Սատիրիկոնի» թարգմանություններում՝ հայտնի «ամբողջականություն»: Մեր ընթերցողին պետք է նախազգուշացնել, որ Չուչկոյի թարգմանությունները (1882) և «Бесмирная литература»-յի հրատարակությունը (1924) աղճատված են Նոզոյի ընդմիջարկումներով (1924 թ. հրատարակության մեջ այդ ընդմիջարկումները նշված են նրանով, որ առնված են ուղիղ փակագծերի մեջ):

## 5. ՖԵՐՐՈՒՍ

Վերնախավի գրական հոսանքների հետ չէր առնչվում առակագիր Ֆերրուաի գործունեությունը: Նա սկզբում ստորով էր, հետո միայն ազատագրվեց Օգոստոս կայսրի կողմից: Մնվել էր Մակեդոնիա պրովինցիայում: Կինեկով կիսահույն, նա մանկությունից շփման մեջ մտավ հոռմեական կուլտուրայի և լատիներեն լեզվի հետ: Սկսած առաջին դարի 20-ական թվականներից, նա լույս է ընծայում «Եղովոսյան առակների» հինգ ժողովածու: Իբրև ինքնուրույն ժանր, առակը մինչ այդ չէր ներկայացված հոռմեական գրականության մեջ, թեպետ գրողները (մանավանդ երգիծարանները) երբեմն առակային յլուժեհն մտածում էին իրենց շարադրության մեջ: Ի միջի այլոց, «առակ» տերմինը չպետք է հասկանալ չափազանց նեղ իմաստով: Ֆերրուա իր ժողովածուների մեջ մտցնում է ոչ միայն «առակներ», այլև անեկզոտային բնույթի գրավիչ պատմվածքներ:

Հունական առակները հանդես էին գալիս «Եղոպոսի» անվան տակ, որը դրա հետ միասին բազմաթիվ անեկղոտների հերոս էր: Ֆեդրուան այդ նշուժին լատիներեն ոտանավորի ձև էր հաղորդում: Սկզբում սահմանափակվելով փոխ անվամ սյուժեներով, հետագայում նա փորձում է անցնել նաև ինքնուրույն ստեղծագործության: «Եղոպոսյան առակներ» վերնագիրը, ըստ հեղինակի հայտարարության, հետագայի դրքերում լոկ ժանրային բնույթի ցուցանիշ է, և ոչ թե սյուժեները Եղոպոսին պատկանելու հատկանիշ: Ֆեդրուաի առակների ոտանավորի ձևը սեպուրբիկական դրամայի հին չամբային շափն է, որը որոշ չափով շեղվում էր հունական տիպից և «բարձր» գրականության մեջ գործածությունից արդեն դուրս էր եկել, բայց սովորական էր հռոմեական թատրոնի մասսայական հաճախորդի համար:

Ֆեդրուաը պլերեական պոեա է: Ընտրելով «Եղոպոսյան» ժանրը, նա իրեն հաշիվ է տալիս դրա «ստորին» բնույթի մասին: Ֆեդրուաը կարծում է, որ առակը ստրուկներն են ստեղծել, նրանք չէին համարձակվում ազատորեն արտահայտել իրենց զգացմունքները և դրանց համար կատակով արտահայտվելու այլաբանական ձև գտան: Սոցիալական երգիծանքի տարրն առանձնապես նկատելի է առաջին երկու ժողովածուներում, որոնց մեջ ներառված է կենդանիների մասին առակի արագիցիոն տիպը: Սյուժեների ընտրությունը (թեպետ արագիցիոն), նրանց մշակման բնույթը, խրատի ձևակերպումը — այս բոլորը վկայում են Ֆեդրուաի առակի «ուժեղների» դեմ ուղղված լինելու մասին: Առաջին գիրքն սկսում է «Գալլն ու դադը» առակով: Ուժեղի հետ համաշխատակցությունն անհնարին է («Կովը, այծը, ոչխարը և առյուծը»): «Ուժեղների» միջև անհամաձայնությունները «ստորինների» նոր տառապանքներ են բերում («Յուզամարտից վախեցած գորաներ»): Միակ մխիթարությունը այն է, որ ուժը և հարստությունը ավելի հաճախ են վտանգի հասցնում, քան ազբատությունը («Երկու ջորին և կողոպտիչը»): Աղքատների դրության բարելավմանը Ֆեդրուաը չի հավատում. պետական ղեկավարների փոխվելու դեպքում «աղքատներն այլ բան չեն փոխում, բացի տիրոջ անունից («էջը՝ ծեր հովվին»): Այդ արդեն քաղաքական գունավորում ունեցող առակ է: Ֆեդրուաի մոտ քաղաքական մեկնաբանություն է ստանում նույնպես «Թագավորին խնդրող գորտերի» մասին առակը. ճիշտ է, այն վերագրված է Պիսիտարատոսի տիրանիային Աթենքում, բայց կազմված է այնպիսի

արտահայտութիւններով, որոնք ավելի հարմար են գալիս Հումբ  
սեպարիթիկական ազատութիւնը կորցնելուն: Առակը վերջանում  
է խաղաղութեան կոչով՝ «բազաբացիներ, համբերութեամբ կրեցեք  
այդ շարիքը, որպէսզի ավելի վատը չգաս»: Որոշ բանաստեղծու-  
թիւններում ժամանակակիցները, հավանաբար, կարող էին ար-  
դիական ակնարկներ դիտել, թեպէս ապետը հավատացնում է,  
որ նրա երգիծանքն չի ուղղված առանձին անձնավորութիւնների  
դեմ: Օրինակ՝ Հելիոսը (Արեգակը) ուզում է ամուսնանալ. գոր-  
տերն արձկում են՝ «Առանց այդ էլ նա շորացնում է բոլոր ճա-  
հիճները, իսկ ի՞նչ կլինի, եթէ նա զավակներ ունենա»:

Առաջին երկու ժողովածուները լույս տեսնելուց հետո հեղի-  
նակը տուժեց իր համարձակութեան համար. նա զոհ դարձավ Տի-  
բերիուս կայսրի ժամանակ հանկարծակի իշխանավոր դարձած  
Սեյանուսի հետապնդմանը և դժվարին կացութեան մեջ ընկավ: Իր  
հաջորդ գրքերում նա հավանութիւն է սրտնում ազդեցիկ ազա-  
տագրվածների մոտ: Երգիծանքն ավելի անմեղ է դառնում: «Հան-  
րայնորեն ծպտուն հանելը՝ ոճրագործութիւն է պլեբեյի հա-  
մար» — քաղում է էնեասից Ֆեդրուսը: Ավելի հաճախակի են  
հանդես գալիս վերացական տիպի առակներ, անեկդոտներ՝ պատ-  
մական և ժամանակակից կյանքից, կենցաղային նովելներ, «ան-  
մխիթար այլոս» մասին սյուժէի նման (Պետրոնիուսի «նիստացի  
մատրոնան»), արեստալոգիաներ, նույնիսկ ֆարսուա շունցող  
նկարագրական կամ խրատական բովանդակութիւն ունեցող բա-  
նաստեղծութիւններ, և հեղինակը մեծ հակումն է հանդես բերում  
հանրամատչելի-փիլիսոփայական բարոյախոսութեան նկատմամբ:

Ֆեդրուսն իր արժանիքն է համարում «համառտութիւնը»: Նրա  
պատմողականութիւնը կանգ չի առնում մանրամասնութիւն-  
ների վրա և ուղեկցվում է միայն մի քանի բարոյա-հոգեբանա-  
կան բնութիւն բացատրութիւններով: Պերսոնաժներն արտահայտ-  
վում են սեղմ և որոշակի ֆորմուլներով: Լեզուն պարզ և հստակ  
է: Արդյունքն, այնուամենայնիվ, ստացվում է որոշ շորութիւն,  
իսկ երբեմն էլ շարագրման ոչ բավականաչափ կոնկրետութիւն:  
Խրատները միշտ չէ որ բխում են պատմվածքից: Արդեն ժամա-  
նակակիցները հանդիմանում էին առակագրին «շափաղանց հա-  
մառտութեան և պարզ չինելու համար»: Շուտ վիրավորուող հե-  
ղինակը խիստ բանավեճի մեջ է մտնում այդ «նախանձոտների»  
հետ և հակված է շատ բարձր գնահատել իր գրական ծառայու-  
թիւնները որպէս հումեական պոետիայի նոր ժանր ստեղծողի:

Այն «փառքը», որին սպասում էր Ֆեդրուսը, շուտ չեկավ: Վերնախաղերի գրականութունն անտեսում էր նրան: Սենեկան դեռևս 40-ական թվականներին առակը անվանում է «Տոմեական տաղանգների կողմից շփորձված մի ժանր»։ նա Ֆեդրուսին կամ չգիտեր, կամ չէր ընդունում: Ուշ-անտիկ շրջանում Ֆեդրուսի առակները, պրոզայի վերածած, մտան առակների ժողովածուի մեջ (այսպես կոչված «Ռոմուլոս»), որը շատ դարերի ընթացքում դրսևորոցական ձևոնարի էր ծառայում, և միջնադարյան առակի կարևորագույն աղբյուրներից մեկն էր: Իսկական Ֆեդրուսը լայնորեն հայտնի դարձավ միայն XVI դ. վերջին: Ինչպես իսկական, այնպես էլ վերամշակված Ֆեդրուսը միջանկյալ օղակն էր հունական «Տեոպոսի» և նոր եվրոպական առակի միջև: Այնպիսի հանրահայտնի սյուժեներ, ինչպես «Գալլն ու դառը», «Թագավորին խնդրող գործերը», «Ագուստին ու աղվեսը», «Գալլն ու արագիլը», «Գորտն ու եղը», «Աքաղաղն ու մարգարտի հատիկը» և շատ ուրիշները ուսական գրականության մեջ կլասիկ բանաստեղծական արտահայտություն են գտել հանձին Կոխլովի, որը փոխ է առել գրանք Ֆեդրուսի ժողովածուն անմիջականորեն օգտագործող ֆրանսիական առակագիր Լաֆոնտենից:

## 6. ՌԵԱԿՑԻԱՆ «ՆՈՐ» ՈՃԻ ԳԵՄ: ՍՏԱՅԻՈՒՄ

Ինչպես մատնանշվել է ներածական գլխում, իշխանությունը Ֆլավիուսների դինաստիային անցնելու հետ միասին խաղաղվեց այն ներվային հասարակական մթնոլորտը, որ ստեղծել էին Օգոստոսի մերձավոր հաջորդները: Պալատական խտրիզների և ոճագործությունների, փարթամ շոպյություն և ցոփության ժամանակաշրջանը փոխարինվեց լուրջ և խնայող կառավարումով: Դոմիցիանուսի օրոք արխատոկրատիայի դեմ հալածանքների ռեյզիմի վր միայն ժամանակավոր բռնկում էր: Կայսրությունն ամբաստանեց իր սոցիալական բազան, և արխատոկրատական օպոզիցիան թուլացավ: Բարբերն ավելի խաղաղ և խիստ դարձան:

Հասարակական տրամադրության այդ բեկումն արտահայտվեց և գրականության մեջ: Ամենից առաջ այդ արտահայտվեց «նոր» ոճի դեմ ռեակցիայում, որն ընթանում էր հոմեակական պրոզային և պոեզիային, Յիցերոնին և վերգիլիոսին վերագանալու նշանաբանի տակ: Գործնականում, սակայն, այդ կլասիկականությունը վեր էր ածվում միայն նախորդ ուղղության էքսցեսներից հրաժարվելուն, պահպանելով նրա մի ամբողջ շարք

տենդենցները, և կլասիկներից մակերեսային փոխառումների: Հոտմեական գրականությունը, մանավանդ «վերամբարձ» ոճի գրականությունը, սկսում է ձեռք բերել բովանդակազուրկ-կրկնման բնույթ:

«Նոր» ոճի դեմ պայքարի գրոշակակիրը Մարկուս Ֆաբիուս Քվինտալիանուսն էր (մոտավորապես 30—96 թ. թ.), ճարտասանության ամենազղեցիկ դասատուն I դ. երկրորդ կեսին: Սկսելով իր գործունեությունը Սենեկայի գրական եղանակով համընդհանուր հրապուրանքի ժամանակաշրջանում, Քվինտիլիանուսը հանդես է գալիս Յիցերոնի ոճին վերադառնալու լուղունգով. կարճ, հատու ֆրազների փոխարեն՝ ներդաշնակ պարբերության, անընդհատ պաթետիկ-թատրոնական կեցվածքի փոխարեն ավելի բնական և խիստ պերճախոսություն: Այդ դիրքը պաշտոնական խրատականքի արժանացավ: Երբ վեսպասիանոսի օրոք առաջին անգամ Հոտմոմ հիմնվեց հունական և հոտմեական պերճախոսության հանրային դպրոց, դասատուներին պետության հաշվին վարձատրությամբ, լատիներենի ճարտասանության ամբիոնը հանձնվեց Քվինտիլիանուսին իսկ հետագայում Գոմիցիանոսը նրան հրավիրեց դասախարակ իր եղբոր Թոննեթի, ապագա դահաժառանգների, համար: «Նոր» ոճի դեմ բանակովին Քվինտիլիանուսը նվիրեց «Պերճախոսության վատթարանալու պատճառների մասին» հատուկ տրակտատը: Այդ տրակտատը կորած է, բայց մեզ հասել է Քվինտիլիանուսի մի ուրիշ աշխատությունը, որը նրա երկարամյա դասատուական գործունեության հանրագումարն է կաղմում: Այդ՝ «Հոեոորի ուսուցումն» է (Institutio oratoria) 12 գրքով, մեզ հայտնի ճարտասանության անտիկ ձեռնարկներից ամենաբնագարծակր: Քվինտիլիանուսը հետևում է ապագա հոեոորի պատրաստման բոլոր էտապներին, սկսած վաղ մանկությունից, և ճարտասանական հարցերին զուգընթաց բնություն է առնում մանկավարժական բնույթի մի շարք պրոբլեմներ: Նախագգոշայնելով «նոր» ոճով հրապուրվելուց, նա սահմանազատվում է և ծայրահեղ արխաիստներից, Գրակոսներին և Կատոնին սիրողներից: Միջին ճանապարհը Յիցերոնին հետևելն է: Յիցերոնին գնահատելու կարողությունը հոեոորական ճաշակի կրիաերիումն է: «Արան մենք պետք է նայենք, նա պետք է մեր առաջ գրված օրինակը լինի, և թող իրեն առաջադեմ համարի նա, ում Յիցերոնը շատ դուր կգա»: Համապարփակ կրթված հոեոորի խոփալը, նկարագրված Յիցերոնի կողմից, իր ուժը պահպանում է

և Քվինտիլիանուսի աչքում թեև Հռոմի հասարակական կյանքում պերճախոսության ֆունկցիան կայսրության պայմաններում արմատապես փոխվել էր: Եվ այնուամենայնիվ Քվինտիլիանուսը նույնիսկ տեսականում, առավել ևս գործնականում, որոշ զիջումներ է անում «նոք» ոճին:

Իրականության պատմարանի համար առանձնապես հետաքրքրական է Քվինտիլիանուսի տրակտատի 10-րդ գիրքը: Այստեղ քննության է առնվում այն հեղինակների հարցը որոնց քննելը քննության է առնում այն հանձնարարվի հետո որին և տրվում է հունական և հռոմեական պրոզայի ու պոեզիայի ուրվագիծն ըստ ժանրերի, յուրաքանչյուր ժանրի կարևորագույն ներկայացուցիչների մատնանշումով և քննադատական կարծիքով նրանց ոճի մասին: Հունական գրողների մասին կարծիքները վերարտադրություն են այն դատողությունների, որոնք հաստատված էին ճարտասանական ուսուցման տրագիցիայում: Քվինտիլիանուսն ավելի ինքնուրույն է հռոմեական գրողների նկատմամբ, և «ցիցերոնականությունը» նրան չի խանգարում անաչառ լինել ավելի ուշ հեղինակների արժանիքները գնահատելու մեջ:

Կլասիկական հոսանքը նկատվում է և պոեզիայում: Նորից ծաղկում է դիցաբանական բովանդակությամբ կամ գոնե լայնածավալ դիցաբանական ապարատ ունեցող մեծ էպոսը: Լուկանուսն իրեն նպատակ էր դրել «էնեականը» փոխարինել նոր տիպի պոեմով: Ֆլավիուսների ժամանակվա պոետները «էնեականը» անհասանելի իղեալ են համարում և քնդորինակում են նրա պեղարվեստական եղանակները, դրա հետ միասին պահպանելով ճարտասանական ոճի շատ կողմերը և սարսափներ կուտակելու ձգտումը, որ բնորոշ էր Սենեկայի և Լուկանուսի համար:

Այդ ուղղության ամենատաղանդավոր պոետը Պուբլիուս Պուպիլիուս Ստացիուսն էր (վախճանվել է մոտավորապես 95 թ.) Դոմիտիդիանոս կայսրի կազմակերպած պոետիկական մրցումներից մեկի լաուրեատը: Նրա հիմնական երկը «Թերեականն» է «յոթի արշավանքը Թերեի դեմ» սյուժեով: Մշակելով այդ բավականաչափ ձեռված թեման, Ստացիուսը շարժման մեջ է դնում առհնարագամզան աստվածների ապարատը. այստեղ են և Օլիմպոսի աստվածները Յուպիտերի գլխավորությամբ, և սանդարմետի ուժերը, և մեռյալների սովերնները, և վերացական հասկացությունների ամեն կարգի անձնավորումները (Քաջարիություն, Մոռացություն, Սարսուռ և այլն): Այդ բոլորը միահյուսվում է «օր-

հասի» և ուշ-անտիկ փիլիսոփայության խորհրդավոր «բարձրագույն» աստվածութեան մասին խավար պատկերացումների հետ: Ամբողջ գործողութեանն ուղղութիւն են տալիս աստվածային ուժերը: Այսպիսով, հարելով հոմերա-վերգիլիոսական տրագիցիային, պոեմը վերարտադրում է «էնեականի» ստրուկտուրան. կազմված է այն 12 գրքից և բաժանված երկու մասի, յուրաքանչյուրում վեցական գիրք: Կրկնվում են և էպիզոդներից շատերը. պատմելով երկու ընկերների սպանվելու մասին, գիշերային համարձակ արտելք կատարելու պահին, հեղինակն իր հերոսներին մախթում է սերունդների մեջ ունենալ այն փառքը, որը բաժին ընկալ Նիսուսին և էվրիպլին: Այդ նույն կերպով էլ օգտագործվում են հոմերոսյան էպոսի մոտիվները: Բայց վերգիլիոսը, վերանորոգելով հոմերոսյան ոճի պոեմը, կարողանում էր «էնեականին» ներքին միասնութիւն հաղորդել և նրա միջով ամբողջական գաղափարական կոնցեպցիա անցկացնել: Ստացիուսը շունչի ոչ մեկը, ոչ մյուսը: Գաղափարական առումով նրա պոեմը, միանգամայն բովանդակագուրկ է, իսկ կառուցվածքով նա բավականանում է հեռակէլ գործողութեան այն ընթացքին, որը հաստատված էր դիցաբանական տրագիցիայում, և պատմում է ամբողջ առասպելը, միացնելով նրան ընդմիջարկյալ էպիզոդներ մյուս ցիկլերից: Ինչպես այդ ժամանակի շատ ուրիշ երկեր, «Քերեականը» առաջին հերթին նախատեսնված էր մաս-մաս հանրայնորեն կատարելու համար («ոեցիտացիա»), և այդ մասերի մշակմանը մեծ ուշադրութիւն է հատկացված: Չրնկնելով կուկանուսի և Սենեկայի ոճի պարագոքսալ «սենտենցների» ետևից, Ստացիուսը որոնում է գունեղ բազմապիստութիւն և արտահայտչական միջոցների փարթամութիւն: Մանրամասնութիւններում ուժեղ և էֆեկտավոր լինելով, նրա պոեմը ծանրաբեռնված է պաթետիկայով, շափազանցութիւններով, նենդավոր կրքերով. հերոսների բազմաթիւ ճառերը լիքն են ճարտասանական մաշված ձևերով: Հեղինակին դրավում է Քերեական առասպելի մոռալ կոտորիտը, մի առասպել, որը նյութ է ծառայել ամենահռչակավոր անտիկ ողբերգութիւնների համար, բայց նրան ավելի լավ հաջողվում են մեղմ տեսարանները և նկարագրական մասերը: Դաժան դեմքերը դժգույն են բնութագրված: Ստացիուսը թերևս այդ գիտակցում էր: Նրա սկսած «Աքիլական» երկրորդ պոեմը շատ ավելի պարզ է և ավելի է համապատասխանում նրա տաղանդին: Այնտեղ էլ պոեաի միտումն այն էր, որպեսզի տա հերոսին ամ-

բողջովին», այսինքն՝ հաջորդականորեն շարադրի մի շարք պատկերներում Արիլեսի մասին առասպելները, բայց հաջողվեց մշակել միայն Արիլեսի մանկությունը: Առասպելը ինտիմ-կենցաղային մեկնաբանում ստացավ, որը հիշեցնում էր արեքսանդրյան դպրոցի էպիլլակաները: Պատանի հերոսի դաստիարակությունը կենտավր Նիրոնի մոտ, նրա տղայական տաքարչունությունը, կանացի զգեստով պաշխիկների մեջ լինելը, սերը դեպի նրանցից մեկը, Ողիսեսի խորամանկությունը, որը հնարավորություն է տալիս հայտնաբերել Արիլեսին, — այս բոլորը հանձին Ստացիուսի ունեցյալ իրենց պատմողին, որը կարողանում էր իդիլիկ պատկերումը և բնորոշ մանրամասնությունները զուգակցել հոգեբանական պատճառաբանության և պատմելու խորամանկ տոնի հետ:

Ստացիուսի պոեմները տիպական են, բայց այդ ժամանակի հոռոմեական էպոսի միակ օրինակը չեն: Վալերիուս Ֆլակը (վախճանվել է մոտավորապես 90 թ.) վերամշակում է Ապոլոնիոս Բողոքասցու «Արգոնավորդները», «էնեականի» էպիկական տեխնիկայի օգնությամբ: Նույն «էնեականն» է իրեն օրինակ դարձնում և Սիլիուս Իտալիկը (26—101). նա Վերգիլիուսի և Յիցերոնի շեքմ երկրպագուն էր և ոտանավորի վերածեց Լիզիուսի Պոնտիկյան երկրորդ պատերազմի մասին պատմվածքը («Պոնտիկա» պոեմը): Աստվածային ապարատի լայնորեն օգտագործումը, հրաշքի տարրերով առատ կերպով լցնելը, պաթետիկան, ճառերի և նկարագրությունների ճարտասանական մշակումը՝ այդ բոլոր պոեմների բնորոշ գծերն են:

Ստացիուսը Հոմերի հարուստների պոեար, նրանց մասնավոր կյանքի ղեպքերի նշանակման արժանի երևույթների մոնեատիկն է: Նա հորինում է ամեն կարգի բանաստեղծություններ «ղեպքերի համար»՝ ծննդի, հարսանիքի («էպիտուլամ» ժանրը), կամ առողջանալու շնորհավորումներ, ճանապարհորդներին մաղթանք («պրոպեմպոտիկոն»), մահվան ղեպքերի առթիվ ցավակցություններ — միևնույնն է՝ մարդու կամ թուփակի, — նկարագրում է վիլլաներ, արձաններ, տոնակատարություններ: Օժտված լինելով հմարովիզացիայի ընդունակությամբ, Ստացիուսն այդպիսի բանաստեղծություններ էր հորինում հաճախ հանդիսավոր ղեպքի նույն օրը կամ այն խնջույքի ժամանակ, որին հրավիրված էր լինում նա ուշադրության արժանի ղեպքի տիրոջ կողմից իր պոետիկական փառաբանության ակնկալությամբ: Իր «հանկարծակի ներշնչման» պատուհները (այս կամ այն ձևով վարձատրվող)

Ստացիոնար հրատարակեց մի շարք ժողովածուներով՝ «Սիլվաներ»՝ վերտառութեամբ (Silvae—բառացի՝ «Նյութեր», ալսինքն՝ ուրվագծեր, կաքիղներ, ոչ լիովին մշակված բանաստեղծութիւններ): Այդ մասնավոր կյանքի պոեզիայում՝ նկարագրութիւնը ինքնուրույն ժանրի բնույթ է ստանում, հավասարաբեք այնպիսի հին ժանրերի, ինչպիսիք էին էպիտալամը, պրոպեմպոսիկոնը, ձոնը և այլն: Մինչև կայսրութեան դարաշրջանը՝ նկարագրութեանը, որպես ինքնուրույն պոետիկ միավորի, հանդիպում էր միայն կարճ էպիգրամներում: Ըստ իրենց ֆունկցիայի «Սիլվաները» հունական «սոփեստների» «էպիդիկտիկ» պրոզայի զուգահեռն էին: Գրանք իրար մտեհնում էին և ըստ բովանդակութեան, վերարտադրելով միատեսակ «տոպիկա» («ընդհանուր տեղեր»): Իմպրովիզատոր Ստացիոնն իր տրամադրութեան տակ արտահայտութիւններ, կերպարների, կառուցման շարունակների որոշ պաշար ունի: Այդ արտահայտութիւնները շատ դեպքերում հասնում են մինչև Օգոստոսի ժամանակի կլասիկները՝ Վերգիլուսը, Հորացիոսը, Օվիդիոսը, իսկ շարունակները սովորաբար համընկնում են ճարտասանութեան դասագրքերի ցուցումների հետ: Այլոթների ոչնչութիւնը և շարագրման բովանդակազրկութիւնը ծածկվում են շատ ավելի ճիշտ հիացմունքներով և բաների կեղծ պատճառներով: Ինչպես պետք էր սպասել «Թերեականի» հեղինակից, դիցարանական խաղը «Սիլվաներում» քիչ տեղ չի գրավում: Աստվածներն անմիջական մասնակցութիւն են ունենում Ստացիոսի հասցեատերերի գործերում: Հոմերի պրոֆետիկա, որը և հոետոր է ու պոետ, առողջացել է, այդ նրա հովանավոր Ապոլոնն է դիմել իր որդի էսկուլապի օգնութեանը: Փառահեղ վիլլայի տեղը նոր սրբավայր է կառուցել Հերկուլեսի համար,— այդ եղել է Հերկուլեսի իրեն նախաձեռնութեամբ և օժանդակութեամբ: Նկարագրութիւնը աճում է պատմողական մասով, և սիրո աստվածների օժանդակութիւնը երիտասարդ պատրիկի պսակադրութեանը այլի կնոջ հետ նյութ է տալիս նրբագեղ պատմվածքի համար:

«Սիլվաները» պատկերում են հոմեական կյանքի հանդիսավոր կողմը. բացասական մտեհնաները շին մտնում այդ բանաստեղծութիւնների մեջ: Հարուստ պատվիրատուներին շողոքորթելով, պոետը միշտ հիանում է և երբեք չի դատապարտում: Նրա

\* Այդպիսի վերնագիր էլ ունի՝ մեղ շնաստեղծութեանը և իր բովանդակութեամբ անհատ կեանքի բանաստեղծութիւնների ժողովածուն:

երկերում ամենաչնչին արտահայտություն անգամ չեն գտնում Գամիցիանոսի բռնակալական ուժի մի ստեղծած քաղաքական պայմանները: Այդ իրեն զգացնել է տալիս միայն այն ստորագրա-հավատարմահպատակ տոնում, որով շրջապատվում է կայսրի մասին ամեն մի հիշատակում: Փառաբանելով նրա հաղթանակները, կառուցումները և տոնակատարությունները, Ստացիուսը ջանում է ինքն իրեն գերեզանցել իր խանդավառ չափազանցություններով: Իսկ երբ Ստացիուսին հրավիրում են կայսերական խնջույքին, պոետի շնորհակալական ստրկամտությունը արգեն չի ձանաչում որևէ սահման:

Չնայած պարզորեն արտահայտված աշխատանքի պատվիրատուական բնույթին, Ստացիուսի նկարագրական բանաստեղծությունների թեմատիկ համբնկնումն այդ ժամանակի կերպարվեստի ամենատարծված սլոժենների հետ վկայում է թեմատիկայի ալժմեականության մասին: Ընդհանուր կառուցվածքի ճարասանական սխեմատիզմը և եղանակների շարուն բնույթը հեղինակին չեն խանդարում որսալ կոնկրետ գծերը, և լիրիկական տոները նա վարիացիայի է ենթարկում նայած թեմային և հասցեատիրոջը: Նրա նկարագրությունները հստակ են և պարզորոշ: Ուշ-անտիկ հասարակության մեջ զարգացող խաղաղ գեղեցիկ բնության զգացմունքը լիրիկական արտահայտություն է գտնում՝ Նեպոլիտանական ծովածոցի ափին գտնվող վիլլայի նկարագրության մեջ: Ապրումների անմիջականությամբ աչքի են ընկնում նաև անձնական թեմայով մի քանի բանաստեղծություններ. Ստացիուսի անքնությունը տառապող հիվանդի դիմումն իրենից խուսափող քնին՝ զգացմունքների ուժգնությամբ մոտենում է Արթ ժամանակի լիրիկային:

Ստացիուսն, իր գաղափարական դատարկությամբ, ինտիմ կենցաղային թեքումով և փարթամ ոճով հոռոմեական հասարակության անկման տիպիկ պոետն է: Ուտանավորի գեղեցիկացող թեթևությամբ նա հաճախ հիշեցնում է Օվիդիուսին: Հոռոմեական հասարակությունն իր պոետին պատասխանում էր նրա ստեղծագործության բարձր գնահատումով: Էպիկական երկու պոեմներն ու «Միվաները» ամբողջ ուշ-անտիկ շրջանում ընթերցվում և օրինակ էին ծառայում դրանց հետևելու համար, էպոսները մեկնաբանության էին արժանանում: Այդ փառքը Ստացիուսին ուղեկցում էր և Միջին դարերում, երբ նա հայտնի էր միայն որպես էպիկական պոեմների հեղինակ: Գանթեն Ստացիուսին պատկերել է «Բավա-

րանում» որպես գաղտնի քրիստոնեի: Նոր ժամանակի պոեզիայի համար «Թեթևականը» արդեն մեռած էր, և որոշ հետաքրքրություն էին զարթեցնում միայն «Սիլվաները»:

## 7. ՄԱՐՅԻԱԼԻՍ

Մանր դեպքերի և կենցաղային մանրամասնությունների գրական ֆիքսացիայի ձգտումը նշանակում էր անտիկ պոեզիայի խոշոր ժանրերի մահացում, բայց նպաստավոր ազդեցություն ունեցավ մանր ձևերի վրա: Այդպիսի մանր ձևերից ամենակարևորը էպիգրամն էր, այսինքն կարճ լիրիկական բանաստեղծությունը: «Նոր» ոճը ևս նպաստեց դրա զարգացմանը: Զգուումը դեպի սուր «սենտենցները» և անտիթեզերը էպիգրամին հաղորդեց այն սրվածությունը, որը կապվում է այդ տերմինն հետ նրա հետագա ըմբռնմամբ: Էպիգրամում սկսում է առաջ քաշվել ծաղրական, երգիծական մոմենտը: Ծաղրական էպիգրամը միայն ցաք ու ցրիվ ներկայացված լինելով հելլենիստական պոետների ստեղծագործություններում, մշակման ենթարկվեց Նեբոնի ժամանակ Հռոմում ապրող հույն պոետ Լուկիլլոսի կողմից, բայց իր կլասիկ ներկայացուցիչն ունեցավ հռոմեական գրականության մեջ: Հռոմեական կյանքի Ստացիուսի իդեալականացրած պատկերմանը հակադրված են նրա ժամանակակից Մարցիալիսի երգիծական ուրվագծումները էպիգրամներով:

Մարկուս Վալերիուս Մարցիալիսը (ծնվել է մոտավորապես 42 թ., վախճանվել է 101—104 թ. թ. միջև) հռոմեական I դարի գրականության մեջ եղած բազմաթիվ իսպանացիներից մեկն է: Հայրենիքում սովորական բերականա-ճարտասանական կրթություն ստանալով, 64 թվին նա գալիս է Հռոմ, լինելով Ֆիջոցներից գուրիկ, բախտ որոնող երիտասարդ: Իսպանական կապերը նրա համար հնարավորություն ստեղծեցին մոտք գործելու իր հոշակավոր համերկրացիների՝ Սենեկայի և նրա եղբայրների տները, բայց Պիսոնի դավադրության երևան բերելը (65 թ.) շատով Մարցիալիսին զրկեց այդ հովանավորից: Լուկանուսի աչքուն նա հետագայում ևս անվանում է «Ժազուհի» (այսինքն՝ խնամակալուհի): Սակայն Մարցիալիսը շատ հեռու էր արիստոկրատական օպոզիցիայի մտայնությունից: Նա պատկանում էր այն սերնդին, որը փոխարինեց այդ օպոզիցիային և ամուր կառչած էր կյանքի բարիքներին կաշսերական ուժիմի պայմաններում:

Մտոնկյան արիստոկրատիան Կատոնի նման պահանջում էր կյանքից հեռանալու պատրաստակամություն, Մարցիալիսը բուրովին էլ չի համակրում այդ իդեալը:

Նման չեմ ես նրան՝ ով հեշտությամբ արյունով հռչակ է դնել:

Նման չեմ ես նրան՝ ով առանց մահի կարող է փառք վաստակել:

Հոռմում կյանքի բարիքները վաչեկելու համար, հարկավոր էին միջոցներ, որոնք չէին կարող տալ ինտելիգենտական պրոֆեսիաները:

բոլոր նրանք, որ սառը ծածկաց ունեն,

Բոլորը նազոններ են միայն, և Վերգիլիուսներ այնտեղ:

Երիտասարդ պրովինցիալը, դրա հետ միասին, չէր սիրում աշխատել և «շտապում էր ապրել»:

Քո կյանքը վաղն է... Օ՛, ո՛չ: Այսօրն էլ ուշ է կյանքի համար:

Նախապես ով ապրել է երեկ, միայն նա է իմաստուն:

Ըստ Մարցիալիսի խոսքերի, ազատ կարող է լինել միայն նա, ով ընդունակ է զրկանքների: «Նի՞ն դու կարող ես ստրուկ շունենալ, ապա կարող ես արթա շունենալ» (խնամակալ շունենալ): Մարցիալիսն ընդունակ չէր դրան և իր համար ընտրեց «կլիենտության» պարագիտային ուղին, նրա ամենօրյա «ողջույններով», փշրանքներով և ստորացումներով: Այդ ճանապարհին նա կրեց բազում ծանր հուսախաբություններ: Այնուամենայնիվ նա որոշ ապրուստի հասավ, որը, սակայն, հեռավոր շափով չէր համապատասխանում նրա ցանկություններին:

Մարցիալիսն իր երկերը հրատարակել սկսեց համեմատաբար ուշ: 80-ական թվականներին, Ֆլավիուսների ամֆիթատրոնը օձնու ժամանակ կազմակերպված խաղերը Մարցիալիսին դրդեցին շտապ կերպով շողորթոթող էպիգրամների մի սերիա հորինել (այսպես կոչված «Հանդեսների գիրքը»), որոնք փառաբանում են առանձին հանդեսները (գաղանամարտ, գլադիատորների մարտ և այլն), և նվիրել Տրոուս կայսրին: Կայսերական շնորհի հույսն իրականացավ, սակայն, մասամբ միայն:

Այդ ժողովածուն պարունակում է նկարագրական տիպի էպիգրամներ և կազմում է միասնական ամբողջություն: Մի քանի տարի անց լույս տեսան երկու նոր ժողովածու: Սատուռալիս տոնին սովորություն կար ծանոթներին նվերներ ուղարկել, ինչպես և լինջույքի ժամանակ հյուրերին նվերներ բաժանել: Ժողովածուն»

օր վերնագրված է «Քսենիաներ» («Հյուրեր»), պարունակում է մի տեսակ պիտակներ, առաջին տիպի նվերներն (առավելապես ուտեղեղեն) ուղեկցող երկտողեր, «Ապոֆորետներ» («Ճարվողը») — նույնպիսի երկտողեր երկրորդ տիպի նվերների համար (գրենական, խաղի, պճնանքի առարկաներ, կահույք, զգեստ, գրքեր և այլն): Միայն 85—86 թ. թ. Մարցիալիսն սկսում է սիստեմատիկաբար հրատարակել իր էպիգրամները: Դրանք հսկայական հաջողություն ունեցան և բազմիցս հրատարակվեցին հեղինակի կողմից դանազան ընտրություններ և տարբեր հրատարակչական ձևափոխումով: Նույնիսկ պոետի վաղ շրջանի բանաստեղծություններն իրենց հրատարակողն ունեցան: Շատ էպիգրամներ Հռոմում տարածումն ստացան դեռ մինչև գրքի հրատարակումը, և Մարցիալիսն ստիպված էր պայքարել գրագողության դեմ: Հիմնական ժողովածուն վերջի վերջո կազմեց 12 գիրք: Դրանցից յուրաքանչյուրը պարունակում է հարյուրավոր էպիգրամներ տարբեր բովանդակության, տոնի, տաղաչափության, իրար հետ խառնիխուռն՝ միօրինակությունից խուսափելու նպատակով: Ամբողջ ժողովածուի մոտավորապես երեք քառորդը հորինված է էպիգրամիկ պոեզիայի համար սովորական էլեգիկ դիստիխի շափով, բայց դրան զուգընթաց Մարցիալիսը օգտագործում է կատալլուսի սիրած տասնևեակիտոնյա ֆալեկյան տողը և «կաղ» յամբը:

Մասնագիտանալով էպիգրամներում, այսինքն՝ ամենից փոքր ժանրում, Մարցիալիսը պաշտպանում էր իր ընտրությունը հնաբավոր հանդիմանություններից: Այդ ժանրն այնպես հեշտ չէ, ինչպես թվում է շատերին՝

էպիգրամ գրել գեղեցիկ՝

Դյուրին է հույժ. գիրք գրելը՝ դժվարագույն գործ է:

«Վերամբարձ» դիցաբանական ժանրերին՝ էպոսին և ողբերգությունը էպիգրամը հակադրվում է որպես կյանքի պատկերացում: Առասպելի հերոսները, այդ ամեն կարգի եղիպները, Փրեսատոսները, Մեդեաները՝ «հրեշներ», «դատարկ խաղեր» են.

Դու այն կարգա, ինչի մասին կլաներ կասի՝ «իմն է այս»:

Այտուղ շիա ո՛չ կենտավր, ո՛չ գորոններ, ո՛չ հարպիթ,

Մարդու բուրմոնք գու կգտնես իմ այս գրքի էջերում:

Այդ լուզունքը, էպիգրամը մտցնում է անտիկ գրական դիտակցության տեսակետից, «կենսական» գրականության այն ոլորտը, որին պատկանում են կատակերգությունը, միմը, երգիծանքը,

այսինքն՝ ծիծաղաշարժ ժանրերի ոլորտը: Էպիգրամին հարկավոր է «աղ» և «լեղի»: Դրանով էլ որոշվում է էպիգրամի ոճը, դրա ազատ լինելը ճոռոմաբանությունից և դրա հետ միասին «բառերի ինքնակամ ճշմարտացի» լինելը, որը, ի տարբերություն «վերամբարձ» ոճի, թույլատրելի էր համարում ամեն մի անպատշաճություն:

Հիմնական ժողովածուն կազմող 1200 էպիգրամներից բոլորը չեն, որ ծաղրական բանաստեղծությունների կատեգորիային են պատկանում: Այստեղ հանդիպում են տրադիցիոն տիպի էպիգրամներ՝ դամբանական, ձոնական, խնջույքի: Մարցիալիսին գյուրությունամբ են հաջողվում մտերմական, իդիլիկ տոները: Ստացիուսի պես, նա արձագանքում է հումեական հարուստների կյանքում եղած ուրախալի և տխրալի դեպքերին, նկարագրում է նրանց պատկանող ուշագրավ առարկաները և արվեստի գործերը, սիրալիր բանաստեղծություններ է ուղարկում անվանի և ազդեցիկ մարդկանց՝ հարկավ, հաշվի առնելով, որ նրա ծառայությունն առանց վարձատրության չի մնա: Որոշ դեպքերում Մարցիալիսի բանաստեղծությունները հենց նույն դեպքերին և առարկաներին են վերաբերվում, որոնց մասին գրել է Ստացիուսն իր «Սիլվաներում»<sup>\*</sup>: Էպիգրամի ժանրը, անտիկ ըմբռնմամբ, հնարավոր էր համարում այդ բոլոր թեմաները: Բայց գերակշռում են ծաղրական տիպի էպիգրամները, և դրանք են որոշում Մարցիալիսի ժողովածուների գրական դեմքը:

Այդ Կատուլլուսի կրթոտ, անձնականորեն սրված էպիգրամը չէ: Զգուշավոր Մարցիալիսը սովորաբար օգտագործում է հնարովի անուններ, և նրա ծաղրը մեծ մասամբ արտահայտում է տիպականը: Ընթերցողի աչքի առաջից անցնում են պրոֆեսիաներ, բնավորություններ, մարդկային հատկություններ, հոգեկան և ֆիզիկական թերություններ: Տրպական-բացասականի պատկերման վերաբերյալ Մարցիալիսը իր առաջ երկարատև գրական տրադիցիա ուներ, բայց դրան նա վերաբերվում է լիակատար ինքնուրույնությամբ և կարողանում է իր դեմքերը մատուցել հո-

<sup>\*</sup> Ուշագրավ է, որ Մարցիալիսը, որը հաճույքով ցուցադրում էր իր գրական ծանոթությունները, ոչ մի անգամ չի հիշատակում Ստացիուսի մասին: Էպիգրամիստը ակնհայտորեն չի համակրում «Թերեականի» հեղինակին, բայց խուսափում է նրան շոշափել ընդհանուր հովանավորողների առկայության պայմաններում, որոնք կարող էին վերավորվել Ստացիուսի համար:

մեական կենցաղի կենդանի պայմաններում: Գրկետանտ, ուր կարողանում է ամեն ինչ անել, բայց լավ ոչինչ չի կարող անել, նրբակիրթ պճնամոլը, պատմական հուշարձաններ հավաքողը, ձանձրացնող ծանոթը, ամեն հանդիպողին՝ ըստ հոռմեական հին սովորովի՝ համբուրողը, սիմուլանտը, որը հիվանդ է ձևանում, հույս տաժելով բարեկամների նվերներին, կասկածելի հրդեհված տանտերը, որի օգտին ժողովված է ավելի, քան արժե նրա հրդեհված տունը, — այս միայն մի շատ շնչին մասն է այն կերպարների պատկերասրահի, որոնք հանդես են գալիս Մարցիալիսի մոտ: Բազմակողմանի լուսաբանությունն են ստանում կլիենտի տառապանքները, ստորացումները և հուսախաբությունները: Փըշրանքներ տալու և ուրիշի հաշվին հյուրասիրելուն Մարցիալիսն անդրադառնում է ամենաբազմազան և նորք վարիացիաներով: Մոռացված չեն և տրադիցիոն կերպարներն, ինչպես օրինակ՝ փիլիսոփաները, բժիշկները, սափրիչները, նորեղուններն ու ժառանգություն որոնողները, ժլատները, շոգոթորթիները, նախանձողները և առաջին հերթին, հարկավ, կանայք: Սերը, ամուսնությունը և շվաչությունը՝ առանձնապես շնորհակալ նյութ են ներկայացնում էպիգրամիստի համար, և Մարցիալիսը հաճախ ստիպված է ուրվագծումների ազատությունն արդարացնել ժանրի սպեցիֆիկայով: Շատ էպիգրամներ են նվիրված գրական թեմաներին՝ արխախտների, դիտնական պոեզիայի հետ բանավիճելուն, գրական անշնորհների, գրկետանտների և գրագողները ծաղրամանը: Գրականության անկման մասին տրտուռներին Մարցիալիսը պատասխանում է տիպիկ «կլիենտական» բացատրությամբ՝

Եթե մենք ունենայինք Մեկնտա, անհատող հանդես կգային Մարոններ,

և ախանալոր գրականագետներին, ինչպիսին վերոհիշյալ Սիլիուս Իտալիկն է, գովաբանելը միշտ չէ, որ համապատասխանում է նրանց շնորհալիության իսկական մակարդակին: Ազդեցիկ մարդկանց համար մեր էպիգրամիստի գրչից միայն գովեստներ են հոսում, իսկ «աստվածային» Գոմիցիանուս կաշորի նկատմամբ ունեցած ստրկամտության և նրա կլիվերտներին քծնելու մեջ Մարցիալիսը որևէ չափով չի զիջում Ստացիուսին:

Մարցիալիսը երբեք մոտ չի եղել արքունիքին, բայց Գոմիցիանուսի արքունախոսական ռեժիմի անկումից հետո, նրա գրությունը Հոմոսում սասանվեց: Նոր իշխանություն գովաբանու-

Յիշունները և նախկինի պախարակումը նպաստավոր ընդունելութեան շարժանացան:

Գուր իմ անմեղ շուրթերին ինչու եր զուր կպցնում  
Շողորթի խղճուկ բառեր, որոնք ձեզ շատ են սագում:

34 տարի Հոռոմում ապրելուց հետո Մարցիալիսը տիրութեամբ վերադարձնում է Իսպանիա, ճանապարհի համար օժանդակութեան ստանալով համբավավոր գրականագետ Պլինիոս Կրտսերից: Այդ ժամանակ նա արդեն իր էպիգրամիների հիմնական ժողովածուից լույս էր ընծայել 11 գիրք:

Վերջին, 12-րդ գիրքը գրված է Իսպանիայում: Այնտեղ պոետը առատաձեռն հովանավորուհի գտավ, որը նրան կալվածք նվիրեց, բայց Հոռոմի մթնոլորտից հեռու, «պրովինցիայի մենութեան մեջ» նրա էպիգրամիստական ստեղծագործությունն արդեն սպառփում էր:

Մարցիալիսի ժողովածուներում սփռված «կյանքի» փշրանքների բազմապիսիութեամբ հանդերձ, նրա ծաղրը խորաթափանց չէ: Նա կարողանում էր մի քանի դառը ճշմարտություններ ասել հոռոմեական հարուստների հասցեին, թայց նրա երգիծական հնարավորությունները սահմանափակված են «կլիենտական» հորիզոնով և հովանավորներից կախումն ունենալուց: Մարցիալիսը շատ բան չի տեսնում — կամ չի հանդգնում դռանք շոշափել: Իր ռեալիստական ուժով նրա ստեղծագործությունը մեծապես գիշում է Պետրոնիուսի «Սաաիրիկոնին»: Մարցիալիսին օտար են նաև բարոյա-մերկացուցիչ բնույթի տենդենցները, որ հատուկ էին հին փիլիսոփայուղ երգիծաբաններին, և հասարակական բարքերը նրա մեջ իդեոլոգիական կարգի հակաճառություն չեն առաջացնում: Պոետի հայացքը սահում է մանրուքների վրայով. ոչ թե քննադատության խոցությունը, այլ խոսքի գիպոպությունը և ուրվագծումների սրամտությունն է կազմում Մարցիալիսի ուժը: Կենդանի, որջը շափով դավեշտական շափազանցությունների հակումն օճեցող երևակայությունը, բառերի խաղի աշխուժությունը, անսպասելի վերջավորության արվեստը՝ նրան դարձնում են էպիգրամի ամենաակամավոր կլասիկներից մեկը համաշխարհային գրականության մեջ:

## 8. ՊԼԻՆԻՈՍ ԿՐՏՍԵՐ

Իոմիցիանուսի սպանությունից հետո (96 թ.) կայսր հրոշակվեց ձերբանի սենատոր Ներվան, որի իշխանությունը 98 թ. ժա-

ասնդեց Տրայանուսը: Կայսերական իշխանութեան և սենատի միջև համաձայնութիւնը, որ խախտվել էր նախընթաց կառավարման ժամանակ, երկար ժամանակով վերականգնվեց: Արիստոկրատիան իրեն ավելի ազատ զգաց: «Այժմ վերջապես մենք կենդանանում ենք», — գրում է Տակիտուսը: Ստորաքարշ տոնը գրականութեան մեջ արդեն խրախուսանք չի գտնում, և այդ անդրադարձով, ինչպես մենք տեսանք, Մարցիալիսի ճակատագրի վրա: Գրական նոր գործիչներ են երևան գալիս այն շրջաններից, որոնք Դոմիցիանուսի օրոք ստիպված էին լռել:

Ներվայի և Տրայանուսի ժամանակի գրական կյանքի հետ մեզ ծանոթացնում են Պլինիոս Կրտսերի (Գայոս Պլինիոս Յեցիլիոս Սեկունդայի) նամակները:

Յեցիլիոս Սեկունդան (61—62 — մոտավորապես 114) Պլինիոսի եղբոր որդին է, նրա, որը «Բնապատմութեան» հեղինակն էր, և կորավ 79 թվին Վեզովի ժայթքման ժամանակ, որդեգրվել էր հորեղբոր կողմից ըստ կտակի և այդ ժամանակից կրում էր նրա անունը: Նա հռչակ ստացավ որպես դատական հոետոր, անցաւ հռոմեական պետական պաշտոնների ամբողջ սանդուղքը, ներառյալ և կոնսուլութիւնը, իսկ կյանքի վերջին տարիներում Բիթինիա պրովինցիայի կայսերական կուսակալն էր (մոտավորապես 111—113 թ. թ.):

Պլինիոսն իր ճառերը մշակեց և հրատարակեց: Դրանցից միայն մեկն է մնացել «Ջատագովորչուն Տրայանոս կայսրին», որ արտասանել էր Պլինիոսը կոնսուլի պարտականութիւններն ստանձնելու ժամանակ (100 թ.) և այնուհետև նշանակալիորեն բնորոշել է հրատարակութեան համար: Այդ բավականին տիպական «արքայական ճառ» է ճոռամ-հանդիսավոր ոճով և օրինակ էր ծառայում հռոմեական կայսրների հետագա «ջատագովութիւնների» համար: Ոճի հարցերում իրեն «հեների երկրպագու» էր համարում, մասնավորապես Յիցերոնի, բայց ինքն ավելացնում է, որ «նորերին չի արհամարհում»:

Պլինիոսի գրական գործունեութեան կարևորագույն հուշարձանը՝ նրա նամակներն են: Դրանք հասարակ մասնավոր նամակներ չեն, նախատեսնված իրենց հասցեատերերի համար, այլ մանր, նրբազեղորեն գրված գրական արձակ նամակներ են, որոնք գրվել են հրապարակելու նկատառումով: Այդ նամակների բնույթը հեշտութեամբ պարզվում է Յիցերոնի նամակների հետ համեմատելիս: Յիցերոնը գրում է իսկական նամակներ, որոնք

մեջ իր թղթակիցներին հաղորդում է ամենաբաղմազան նորությունները. այդ նույն թեմաներին նա անդրադառնում է հետագա նամակներում, որքան որ դեպքերը ծավալվում են: Այդպես է Պլինիուսը. նրա նամակը սովորաբար նվիրված է մի ավարտված թեմայի, և այդ թեման հազվադեպ է հաջորդ նամակների նյութ դառնում: Գեղարվեստական նամակը գրական ֆիբրայիցի նույնպիսի գործիք է դառնում կենսական եզակի փաստի և հոգեկան տրամադրության ինչ-որ որոշակի մոմենտի համար, ինչպիսին պոեզիայում էին էպիգրամը, «սիրվաները» կամ Հորացիուսի ներբողներն ու նամակները: Ամառայինը նույնպես ժամանակագրական կարգով չեն դասավորված, այլ ինչպես անտիկ ժողովածուների բանաստեղծությունները՝ ըստ բովանդակության և տոնի վարիացիայի սկզբունքների:

Բովանդակությունը բաղմազան է: Պլինիուսը պատմում է սենատում և դատարանում ունեցած իր ելույթների մասին, արձագանքում է օրվա գրական և կենցաղային դեպքերին, բնութագրում է մեռած գրողներին և պետական գործիչներին, նկարագրում է վիլլաներ, բնություն, շնորհավորական, շնորհակալական կամ ցավակցական գիմումներ անում: Մեծ հռչակ են վայելում պատմաբան Տակիտուսին ուղղված երկու նամակը, որոնց մեջ, Տակիտուսի խնդրանքով, Պլինիուսը նկարագրում է իր հորեղբոր մահը և Վեզուվի ժայթքումը:

Ինքը գրքերին, որոնցից կազմված է Պլինիուսի նամակների ժողովածուն, հետագայում, որպես 10-րդ դիրք, միացվեց հիմնականից անկախ հրատարակված Պլինիուսի գրագրությունները Տրալանուս կայսրի հետ: Դրանք իսկական նամակներ են, Բիթլիյա պրովինցիան կառավարելու գործի վերաբերյալ Պլինիուսի հարցումները և կայսրի ցուցում-պատասխանները: Դրանք մեծ արժեք ունեն պատմաբանի համար: Մանավանդ հետաքրքրական է այն նամակը, որի մեջ Պլինիուսը հարցում է անում, թե ինչ գիծ պետք է բռնի բրիտանյաների վերաբերյալ:

Նամակները պարզ պատկեր են տալիս զժառատ, բայց ինքնահավան և փառասեր հեղինակի մասին: Դրանց հիմնական նպատակն ինքնապատկերումն է: Պլինիուսը սերունդներին պետք է ներկայանա որպես ազնիվ մարդ, հումանիստ ստրկատեր, մարդասեր, նվիրված ընկեր և դերագանց ընտանիքի հայր, որպես կարկառուն գրականագետ: Կայսրության ժամանակի գործիչներից շատերի պես Պլինիուսը դարավոր փառք չի սպասում իր քա-

ազգացիական գործունեությունից («այդ մեզնից կախում չունի», — ասում է Պլինիոսն ինքը), բայց սպասում է գրական անձամասնություն: Այդ նպատակով նա հրատարակում է ճառերը, նամակները, նույնիսկ թեթևամիտ ասանավորիկները, որոնք նա համարում է Կատուլլուսի ոճով հորինված: Գրական թեմաները մեծ տեղ են գրավում և նամակներում:

Պլինիոսի գրական ծանոթության շրջանը շատ մեծ է: «Հազիվ թե գրական զբաղմունքների որևէ սիրող լինի, որն իմ բարեկամը չլինի», — հավատացնում է նա: Նա անվանում է մեծ թվով պատմաբաններ, հեռուորներ, պոետներ, բայց զրանցից և ոչ մեկը թակական հետք չի թողել գրականության մեջ: Դրանք զիլետանտներ, «գրական զբաղմունքներ սիրողներ» են: Այդ անհայտ պոետները, Պլինիոսի «բարեկամները» գրում են լատիներեն և հունարեն, հետևելով հին հեղինակներից որևէ մեկին: Պրոպերցիոսի տոհմի ժառանգներից մեկը էլեգիաներ է հորինում իր հոշակավոր նախահոր դճով և լիրիկական բանաստեղծություններ՝ Հորացիոսի ոճով. ուրիշներն իրենց օրինակ են ընտրում նևոտերիկներին, Կատուլլուսին կամ Կալվոսին, իրենց ուժերը փորձում են էպոսի, դիցաբանության, պատմության բնագավառներում, պիեսներ են հորինում Մենանդրոսի և նույնիսկ հին հունական կատակերգության ոգով: Ոմն հոտմեացի էպիգրամներ է գրում իբր թե Կալիմաքոսից, և միմիամբներ Հերոդոսից ոչ վատ և, փայլելով էրկու ժանրերով էլ, գրանով իսկ «գերազանցում» հիշված հույն հեղինակներին առանձին-առանձին: Գրողներն իրենց երկերը ընթերցում են նեղ շրջանում և հրապարակաչին ռեցիտացիաներում, միմյանց քննադատում են և ուղղում: Պլինիոսը ջերմ մասնակցություն է ցուցաբերում այդ էպիգոնյան իրարանցումի մեջ և հիանում է ժամանակակիցների տաղանդով: Գեկլամացիաների և հրապարակաչին ընթերցանության սիրահար լինելով, նա հաճույքով լսում է ուրիշներին և ստիպում է, որ լսեն իրեն: Այդ շրջանում ոճն ավելի բարձր է գնահատվում, քան բովանդակությունը, գեկլամացիան ավելի բարձր, քան իսկական հեռուորական ելույթը: Կուլտուրական խոր հետաքրքրություն այստեղ չի նկատվում:

## 9. ՅՈՒՎԵՆԱԼԻՍ

Այն ժամանակ, երբ ոմևտը և ականավոր Պլինիոսը հիանում է Տրայանուս կայսրի օրոք առաջացած «երջանիկ» ժամանակնե-

յով, նրա ժամանակակից Յուլիենալիսը տալիս է հոռմեական կյանքի ամելի մոռյլ պատկերներ:

Գեցիմոս Յունիոս Յուլիենալիսը (ծնվել է I դ. 50-ական կամ 60-ական թվականներին, վախճանվել է 127 թ. հետո) երիտասարդ չէր, երբ սկսեց երգիծանքներ գրել: Կենսագրական հավաստի տվյալներ նրա մասին քիչ են պահպանվել: Նա՝ Ակվինա իտալիկական փոքրիկ քաղաքիցն էր, որտեղ նրա ընտանիքը հոգաբարժին ուներ և, ըստ երևույթին, պատկանում էր քաղաքի տեղական վերնախավին: Գոմիցիանուսի ժամանակներում Յուլիենալիսն աննշան գրականագետ էր, հանդես էր գալիս դեկլամացիաներով, թերևս, զբաղվում էր փաստաբանական մանր գործերով և հարկադրված էր կլիենտական ծառայություններ մատուցել ազդեցիկ մարդկանց: Հետագայում նա որոշ նպաստավոր դրուձյան հասավ. իր երգիծանքները նա լույս էր ընծայում առանց «նվիրաբերումների» որևէ հովանավորողի, «այսինքն՝ որպես ինքնուրույն սոցիալական դրուձյան տեր մարդ: Յուլիենալիսի գրական ժառանգությունը 16 երգիծանք է (5 գրքով). դրանք բոչորն էլ հորինված են Գոմիցիանուսից հետո, առաջին վեցը Տրայանուսի, մնացածը Ադրիանուսի օրոք:

Յուլիենալիսը հանդես է գալիս որպես մեկացնող-երգիծարան: Ժողովածուի առաջին երգիծանքը պարունակում է ժանրի ընտրության հիմնավորումը և գրական ծրագիրը: Այն տպավորությունների պայմաններում, որ յուրաքանչյուր քայլափոխում բերում է հոռմեական կյանքը, «ղժվար է երգիծանք չգրել»՝

Թե տաղանդ էլ չունես, օտանավոր է ծնում վրդովմունքը:

Մարցիալիսի պես, Յուլիենալիսը ևս իր երգիծանքը հակադրում է դիցաբանական ժանրերին. երգիծանքի բովանդակությունը մարդկանց իսկական արարքներն ու զգացմունքներն են, —

Քչն բուրն, ինչ որ անում են մարդիկ — ցանկություններ, ասրափ, հաճույք, Արախտություններ, գայույթ և երկպառակություն:

Երգիծաբանի խնդիրները կարծես թե ձևակերպված են պարզորոշ՝ պատկերել իր ժամանակի արատները: Բայց հեղինակն այստեղ մտցնում է մի զրուցակից, որը նրան զգուշության է հրավիրում՝ կենդանի մարդկանց անունները հիշատակելը վատնալավոր է: Սակայն ելքը զտնված է՝ Յուլիենալիսը կհիշատակի մեռածներին:

Ի տարբերութիւն Հորացիուսի «ծիծաղող» երգիծանքի և Պերսիուսի ուսուցողական տոնի, Յուվենալիսի բանաստեղծութիւններն, այսպիսով, պատկանում են վերլուծութեան երգիծանքի տիպին:

Կլասիկականորեն տրամադրված պոետն. ընդունում է տրագիքի տիպի երգիծանքը, որը պարունակում է կոնկրետ անձնափորձութիւններ ծաղրելու «չամբարական» տարր, այսինքն, Պերսիուսի կողմից արդեն վերացված տարրը: Նա հիշում է «բորբոքվող Լուցիլիուսին»: Բայց կայսրութեան պայմաններում Լուցիլիուսի մեթոդն արդեն անհնարին էր: Այստեղից էլ առաջանում է Յուվենալիսի յուրակերպ եղանակը. նա գործում է Դոմիցիանուսի կամ նույնիսկ Ներոնի ժամանակների անուններով, իսկ ապրողներից անվանում է միայն ստորին սոցիալական դիրք ունեցող կամ դատարանով դատապարտված մարդկանց: Դրա հետ միասին հեղինակն ընթերցողին ըմբռնել է տալիս, որ իր երգիծանքը, թեպետև անցյալին է վերաբերվում, իրականում ուղղված է ներկայի դեմ:

Յուվենալիսի ստեղծագործութեան մեջ կարելի է տարբերել երկու շրջան: Ամենից ուժեղ և ցայտուն երկերը վերաբերվում են առաջին շրջանին (մոտավորապես, մինչև 120 թ.), որի ընթացքում կազմվել են ժողովածուի առաջին երեք գրքերը (1—9 երգիծանքները): Այդ ժամանակ հեղինակն ընտրում է սուր թեմաներ և երգիծանքները ազմկարար դեկլամացիոն մաղձոտութեան ձև են ընդունում՝ ուղղված հոռմեական կյանքի արատների և թշվառութիւնների դեմ, իլուստրացիաներով մի քանի սերունդների խրոնիկայից:

Յուվենալիսը ցույց է տալիս իտալիկական քաղաքների դատարկվելը, աղքատ քաղաքացու համար մայրաքաղաքի կուտակված կյանքի ծանրութիւնները, եկվոր օտարականների՝ հույների և սիրիացիների մրցումը, որոնք վանում են հոռմեացի ազնիվ կլիենտոն (երրորդ երգիծանքը): Կենդանի ուրվագծումներով նա տալիս է իտելիգենտ պրոֆեսիանների՝ պոետների, փաստաբանների, ճարտասանութեան և քերականութեան դասատուների շարքաշ դրութիւնը (7-րդ երգիծանք): Կլիենտների նվաստացումը իրենց հովանավորողների խնջույքներում պատկերվում է 5-րդ երգիծանքում՝ «Եթե դու ընդունակ ես այդ ամենը կրելու, ապա քեզ տեղին է այդ», — մոալլորեն եզրակացնում է հեղինակը: Մեր պոետի համար համեմատաբար հարվաղեղ պատմողական տի-

պին է պատկանում 4-րդ երգիծանքը, որը մերկացնում է Գոմի-  
ցիանուսի բռնապետական ռեժիմը. ծաղրանմանն ցնելով էպիկա-  
կան շարադրման ձևին, Յովենալիսը պատմում է, թե ինչպե-  
ս ձկնորսը կայսրի համար բերել է շտեմնված շափի մի տափակա-  
ծուկ և թե ինչպես դրա պատրաստելու համար հրավիրվել է կայ-  
սերական խորհուրդ: Համաշխարհային գրականության մեջ մեծ  
համբավ ստացած ազնվազարմության մասին (8-րդ) երգիծանքը  
մտանում է հռոմեական պոեզիայի մեջ սուլորական խորհրդա-  
ծություն-երգիծանքներին: Բազմաթիվ օրինակներով հեղինակը  
ցույց է տալիս, որ երկարատև տոհմաբանություններն իրենց ար-  
ժեքը կորցնում են, եթե դրանց կրողն իր նախնիների փառքի-  
արժանի չէ:

Ազնվազարմություն չկա ոչ մի տեղ, բացի հողու քաչաբիությունից:

Այլասերվող ավազանու, նրա պճնանքի և ցոփության դեմ  
հարձակումներ ենք գտնում երգիծանքներից շատերում, և այն-  
անունները, որոնցով երգիծաբանը կոնկրետացնում է մերկացվող  
արատները, առավելապես պատկանում են սենատորական դա-  
սին: Արտակարգ վրդովմունքով են մատուցվում հարուստ ազա-  
տագրվածները: Կանանց դեմ ուղղված մեծ երգիծանքը (6-րդ) ամ-  
բողջովին կատուցված է հռոմեական բարձր հասարակության ներ-  
կայացուցչուհիների, ներառյալ և կայսրուհիների, կյանքից վերց-  
րած օրինակների վրա: Ամուսնանալը խելագարություն է. երգի-  
ծանքը պարունակում է կանանց թերությունների երկար թվար-  
կում, որոնց թվի մեջ է մտնում նաև թերությունների բացակայու-  
թյունը:

Այդ երգիծանքներում կան շատ շափազանցություններ, գույ-  
ների խտացում, եզակի դեպքերի միտումնավոր ընտրություններ,  
մանավանդ երբ խոսքը ցոփության մասին է: Հեղինակը հաճախ  
ինքն է պաղեցնում իր դեկլամացիոն բոբրոքը հեղնական վերջա-  
վորությամբ: Բայց դրա հետ միասին Յովենալիսը շոշափում է  
հռոմեական կյանքի մի շարք լուրջ և էական մոմենտները: Իտա-  
լիայի անմարդաբնակ դառնալը և պառուպերիզացիան միանգամայն  
ակտուալ պրոբլեմ էր, որը Ներվային և Տրայանուսին դրդեց մի-  
շարք վարկային և բարեգործական բնույթի միջոցառումներ անց-  
կացնել: Յովենալի երկերում հաճախ խալիկական սզատ բնակ-  
չության ոչ-հարուստ շերտերի ձայնն է հնչում: Երգիծաբանը բա-  
ժանում է նրանց դժգոհությունը ժամանակակից կյանքից, նրանց

բարոյական պատկերացումները և նախապաշարումները: Այս-  
տեղից էլ բխում է նրա ատելութիւնը օտարերկրացիների, հա-  
րուստ-ազգատագրութեան նկատմամբ և ավազանու եսամոլութեան  
հասցեին և նրա ատանձին ներկայացուցիչների խայտառակ վար-  
քի վերաբերյալ դառնագին հանդիմանութիւնները:

Բուրժուական գրականութեան մեջ Յովենալիսի կերպարը  
բազմաթիւ անգամ խեղաթելու է: Քանի ղեռ բուրժուական  
ուսուցիչն դասակարգ էր, նա Յովենալիսի մեջ տեսնում էր  
բռնակալութեան և արհեստկրատիայի մերկացնողին, ռեսպուբլի-  
կական խիստ բարոյախոսութեան բարոզին: Այդ, իհարկե, ճիշտ  
չէր: Բայց նույնքան սխալ է նաև բուրժուական հետազոտողների  
մեջ գերիշխող Յովենալիսին որպես դատարկ «գեկլամատոր»  
պատկերելու տենդենցը: Հոմեոպաթիկ իրականութեան նրա քննադա-  
տութիւնը, ինչպես մենք տեսնք, միանգամայն որոշակի սո-  
ցիալական բաղա ունի: Բայց ստրկատեր-երգիծաբանի «վրդով-  
մտնքը» չի կարող բարձրանալ մինչև ամբողջ սոցիալական սխ-  
տեմի քննադատութիւնը և «բարքերի» վրա հարձակվելու սահմա-  
նից այն կողմը չի անցնում:

Յովենալիսն իր ստեղծագործութեան երկրորդ շրջանում դի-  
մում է բարոյախոսական-փիլիսոփայական թեմաների, դատողու-  
թիւնների է անում անխոհեմ ցանկութիւնների, դաստիարակու-  
թեան և խղճի խայթի մասին: Արդիականութեան բարոյական անկ-  
ման, անբարոյականացած բաղաբացու կյանքի իրականութեան  
քննադատութիւնն ավելի վերացական բնույթ է ընդունում,  
իսկ տոնի խստութիւնը թուլանում է: Յովենալիսը երբեմն  
փորձում է մտանալ Հորացիուսի եզանակին. այդպիսին է, օրի-  
նակ 11-րդ երգիծանքը, որի բովանդակութիւնն ընկերոջը քաղա-  
քից դուրս համեստ խնջույքի հրափրելն է:

Երգիծանքի կոմպոզիցիան յուրակերպ է: Հեղինակը ավելի  
թանկ է դնահատում կերպարների շղթան, քան տրամաբանական  
կապը, մի թեմայից կտրուկ կերպով անցնում է մյուսին և նույն-  
քան անապասելիորեն վերադառնում է նախկինին: Որպես իսկա-  
կան «գեկլամատոր» նա ջանում է ներդրօձել հետադարձական ներ-  
շնչման միջոցներով, կուտակում է զգայական վառ կերպարներ,  
չափազանցութիւններ, պաթետիկ բացաբանչութիւններ և հարցեր:  
Յովենալիսը գեկլամացիոն ոճի երգիծաբան է:

Եվ դրա հետ միասին այդ դրոյի օրինակից երևում է, թե  
ճարասանական կոպտուրան որքանով էր ուղեկցվում ընդհանուր

կուտուրական անկումով: Յուլիենալիսը դատադուքլուններ է անում փիլիսոփայական թեմաների շուրջը, բայց նրա փիլիսոփայական գիտելիքները չնչին են: Նա հաճախ դիցաբանական օրինակներ է բերում, բայց սահմանափակվում է հանրահայտների սյուժեներով: Հետաքրքրական է նրա վերաբերմունքը դեպի դիցաբանությունը. նա դատապարտում է ողբերգության դիցաբանական սյուժեները, որպես անբարոյական արաքների և ոճագործությունների պատմվածքների, և այդ այն դիրքն է, որը հետագայում պետք է գրավեն բրիտանոյա հեղինակները:

Մենք տեղեկություն չունենք այն մասին, թե ժամանակակիցներն ինչպես էին վերաբերվում Յուլիենալիսի երգիծանքներին: Ուշ անտիկ շրջանը և Միջին դարերը նրան դնահատում էին որպես բարոյախոսի և համարում էին հոռմեական լավագույն երգիծաբանը: Բայց Յուլիենալիսը առանձնապես հռչակ ձևով բերեց ուսուցիչն բուրժուազիայի վերելքի ժամանակ: Ինչպես հիշատակել ենք, հոռմեական երգիծաբանի մեջ տեսնում էին արխատոկրատիայի և բռնակալության հրաբորբոք մերկացնողին: Այդ տեսակետի արդյունք էր Վ. Հյուգոյի հիացած գնահատականը Յուլիենալիսին: Այդ տեսակետը տարածված էր նաև Ռուսաստանում, սկզբում դեկաբրիստների ժամանակ, իսկ այնուհետև՝ 50—60 թ. թ.: Պատահական չէ, որ Օնեգինը կարողանում էր «զրուցել Յուլիենալիսի մասին», և Պուշկինը կոչ էր անում «հրաբորբոք երգիծանքի մուսային» իրեն հանձնել «Յուլիենալիսի մտրակը»:

## 10. ՏԱԿԵՏՈՒՄ

«Արծաթե դարի» վերջի էպիգոնական և «դեկլամացիոն» գրականության ֆոնի վրա խստորեն աչքի է դարձվում փայլուն պատմաբան Պուրլիուս (ըստ այլ աղբյուրների Գալուս) Կոռնելիուս Տակիտուսի դեմքը (ծնվել է մոտ 55 թ., վախճանվել՝ մոտ 120 թ.):

Ժամանակակիցներն արդեն ընդունում էին Տակիտուսի բացառիկ տաղանդը: Ամենաերիտասարդ տարիներից նա իր վրա ուշադրություն հրավիրեց իբրև ականավոր հեռուոր: Կինելով Բրիտանիան նվաճող հայտնի զորավար Յուլիուս Ագրիկոլայի փեսան, նա դյուրությամբ սկսեց պետական պաշտոններ զրավել և հասավ կոնսուլության (97 թ.), իսկ Տրալանուսի օրոք զրավում էր կալստության բարձրագույն վարչական պաշտոններից մեկը՝ Ասիայի պրովինցիայի պրովինսուսն էր: Դոմիցիանուսի կառավարման ժամանակ Տակիտուսը ձեռնպահ էր մնում գրական

ներույթներին և միայն նրա մահվանից հետո ձեռնամուխ եղավ իր պատմագրական մտադրությունների իրադրմանը: Սկզբում նա լույս է ընծայում երեք ոչ-մեծ մենագրություն, որոնք վկայում են նրա գրական բացառիկ վարպետության մասին: Դրանք պատկառնում էին արձակ տարբեր ժանրերի և դրված են երեք տարբեր ոճերով՝ Սալյուտտիուսի եղանակով, «նոր» ոճով և Յիցերոնի ոճով:

Դեռ 93 թվին վախճանվեց Տակիտուսի աներ Ագրիկոլան, և լուրեր էին պտտվում, թե նրան թունավորել է Դոմիցիանուսը, որը կասկածամիտ նախանձով էր վերաբերվում Ագրիկոլայի փառքին: Տակիտուսն այդ ժամանակ Հռոմում չէր և շկարողացավ արտասանել տրադիցիոն «հուղարկավորական գովաբանությունը»: Դրա փոխարեն 98 թ. հրատարակում է «Յուլիուս Ագրիկոլայի կենսագրությունը»: Ագրիկոլայի գործունեությունը պետք է ապացույց ծառայեր, որ «վատ արքաների օրոք կարող են մեծ մարդիկ լինել»: Դոմիցիանուսի ռեժիմը համառոտ, բայց մոռալ բնութագրություն է ստանում: «Ինչպես որ մեր նախնիները վկա էին այն բանի, թե մինչև որ աստիճան կարող է հասնել ազատությունը, այդպես էլ մենք տեսանք սարկուսթյան վերջին աստիճանը»:

Արիստոկրատ Տակիտուսը ատում է բռնակալությունը, բայց և սկեպտիկորեն է վերաբերվում դեպի ռեսպուբլիկական ազատությունը և դատապարտում է աննպատակ օպորտիցիան՝ «փառամտ մահը առանց պետության համար օգտակար լինելու»: Նա ողջունում է վերահաս «ամենաերջանիկ դարը», երբ ներքին կարողացավ «միացնել մինչ այդ անմիանալին՝ պրինցիպատը և ազատությունը»: «Ագրիկոլայի կենսագրությունը» իր ոճով կողմնորոշված է դեպի Սալյուտտիուսը:

Նույն 98 թ. Տակիտուսը լույս ընծայեց մի այլ մենագրություն, այս անգամ ազգագրական բովանդակությամբ: Նրա «Իերմանիան» պարունակում է գերման ցեղերի կյանքի և բարքերի նկարագրությունը, սկզբում ամբողջությամբ առած, այնուհետև ըստ առանձին ցեղերի: Շարադրմանը նախորդում են համառոտ տեղեկություններ երկրի և նրա բնակիչների ծագման մասին: Այդ տրակտատի պատմական արժեքը հանրահայտնի է: Դա կարևորագույն աղբյուրներից մեկն է եղել էնգելսի «Լնտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծաղման» մասին կլասիկ աշխատության համար: Պատմագրականագիտական առնչություններ կարևոր է նշել, որ «Գերմանիան» հաջորդականորեն կապ-

ված է պատմական երկերի մեջ մուծվող աշխարհագրա-ազգա-գրական նկարագրությունների տրադիցիայի հետո Տակիտոսն ինքն ալոպիսի էքսկուրս է արել «Ագրիկոլայում», — տալով Բրիտանիայի և նրա բնակիչների նկարագրությունը: Հատկանշական է, որ զուտ նկարագրական երկի համար Տակիտոսն ընտրել է «նոր» ոճը, խոսքի հակադրություններով, սրված սենտենցներով և պոետիկ գունավորմամբ:

Տիցերոնին հիշեցնող ոճով է կազմված նրբագեղ «Հնետունբի մասին դիալոգը»: Դիալոգի նյութն է կազմում պերճախոսության ճակատագիրը և նրա անկման պատճառները, մի հարց, որին մենք արդեն հանդիպել ենք Պետրոնիուսի և Բլինտիլիանուսի մոտ: Այդ երկի մեջ Տակիտոսը հանգես է բերում պերճախոսության իր ուսուցիչներին՝ Մարկոս Ապրուսին և Յուլիոս Սեկունդին: Նրանք հավաքվում էին ողբերգու բանաստեղծ Կուրիացիոս Մատերնի տանը, վերջինս պոեզիայով զբաղվելու համար թողել էր գործնական պերճաբանությունը: Դիալոգը կազմված է երկու մասից: Առաջինում վեճ է գնում պոեզիայի և պերճախոսության համեմատական առավելությունների մասին: Ապրուսը պոեզիան անօգուտ զբաղմունք է համարում, մինչդեռ պերճախոսությունն օգուտ է բերում և հետոքին հասցնում փառքի ու պատվի: Մատերնը դրան հակադրում է պոեզիայի պատճառած ներքին հաճույքը, «անտառների և պուրակների» մենուսթյան մեջ անցնելը, և դատապարտում է ժամանակակից հետոքների «շահամոլ և արյունառուչտ պերճախոսությունը», նրանք «ոչ» տերերին են բավականաչափ ստրուկներ լվում, ոչ էլ մեզ՝ բավականաչափ ազատներ»: Նոր զրուցակցի՝ հնությունը սիրող Մեսալայի գալուստով, զրույցն անցնում է երկի հիմնական թեմային: Ապրուսը, նոր պերճախոսության ներկայացուցիչը չի ընդունում անկման փաստը. պերճախոսությունը միայն փոխվել է, հարմարվելով նոր, ավելի պահանջկոտ ճաշակին: Արխաիստ Մեսալան չի կասկածում, որ անկումն անկա է. դրա պատճառը նա տեսնում է վատ ու մակերեսային դաստիարակության և ճարտասանական ուսուցման բնույթի մեջ: Հեղինակի իրեն տեսակետը պարզվում է դիալոգի եզրափակման մասում՝ անկման պատճառները գտնվում են ավելի խորը, պետական կարգերի մեջ: Անյուալի մեծ պերճախոսությունը անխզելիորեն գապված էր ռեսպուբլիկական ճանկախության հետ, որը հիմարներն ազատություն են անվանում»: Կայսրության հանգիստ պաշ-

մաննեբում այդ արդեն անհնարին է: «Թող չուրաքանչյուրն օգտըվի իր դարի բարիքներէց»: Այսպիսով, Տակիտուսը պաշտպանում է այն հայացքը, որը Բարձրլալի մասին» տրակտատում դրված է «փիլիսոփայի» բերանում (այդ տրակտատի խրոնոլոգիական հարաբերակցութունը Տակիտուսի դիալոգի հետ, դժբախտաբար, անհայտ է): Դիալոգի երկրորդ մասի եզրակացութունը լույս է սփռում առաջինի վրա. այնքանով, որքանով պերճախոսութունը կորցրել է իրեն սնունդ տվող հողը, Մատեբնը բոլոր հիմքերն ունեւր հեռանալու նշանից: Հեղինակը կարծես թե հիմնավորում է իր անցումն պերճախոսութունից՝ պատմագրութիւնը:

Տակիտուսը թողել է երկու խոշոր պատմական աշխատութիւն, որոնք միասին ընդգրկում են Օգոստոսի մահից (14 թ.) մինչև Դոմիցիանուսի անկման (96) ժամանակաշրջանը: «Պատմութիւնները» նվիրված են այդ ժամանակաշրջանի այն հատվածին, որի համար հեղինակը ժամանակակից է հանդիսանում, և սկսվում են 69 թվից, ներոնի տապալմանը հետևող խռովութիւնների նկարագրութիւնը: 14—68 թ. թ. դեպքերը շարադրված են երկրորդ աշխատութիւն մեջ, որ կոչվում է՝ «Աստվածային Օգոստոսի վախճանից սկսած» և սովորաբար անվանվում է «Աննալները» («Տարեգրութիւն»)։ այդ գրվել է «Պատմութիւնից» հետո: Այդ երկու աշխատութիւնը միասին կազմում են 30 գիրք: Դրանցից բոլորը չէ, որ պահպանվել են: Պատմութիւնից՝ առաջին շրջագիրքը և հինգերորդի սկիզբը (69—70 թ. թ. դեպքերը), իսկ «Աննալներից»՝ 1—4 գրքերը, 5-րդի և 6-րդի մի մասը (Տիրերիուսի կառավարումը), այնուհետև 11—16-րդ գրքերը, որոնցից պակասում են 11-րդի սկիզբը և 16-րդ գրքի վերջը:

Տակիտուսը «պատրիկական կերտվածքի և պատրիկական մտածելակերպի հին հոտմեացի» էր (Էնդելս), բայց նա գիտակցում է պրինցիպատի անխուսափելի լինելը: «ժաղաղութիւնի գործը պահանջեց, որպէսզի ամբողջ իշխանութիւնը հանձնվեր մեկ անձի»: Կառավարման «խառը» եղանակը, որին իր ժամանակ հավանութիւն էր տալիս Յիցերոնը, «ավելի է արժանի հավանութիւն, քան իրականում այդ լինում է, իսկ եթէ լինում էլ է, ապա չի կարող երկարատև լինել»: Ռեսպուբլիկական ձևերի առերևույթութիւնը Տակիտուսին չի խաբում՝ «հոտմեական պետութիւնն այնպիսին է, ինչպիսին կառավարվում է մի անձով»: «Ագրիկոլալում» Տակիտուսը դեռ հույս է տածում համատեղել «պրինցիպատը և ազատութիւնները», բայց Տրայանուսի ժամանակը կա-

բող էր նրան համոզել, որ կաշտերական կուսակարման նուշնիսկ ամենամեղմ ձևերի ժամանակ սենատի փաստական նշանակութիւնը չի կարող վերականգնվել: Տակիտուսի աշխարհայացքը տարեց տարի ավելի ու ավելի հոռետեսական է դառնում: Հասարակութեան անկման սուր զգացողութիւնը, ղեկավարի չհաստատմամբ հին-պատրիկական ատելութիւնը՝ դրութեան անկյանելի լինելու գիտակցութեան և ապագա կործանման նախազգացման հետ միասին, նրա պատմական շարագրումը պարուրում են գատապարտվածութեան ողբերգական մթնոլորտով:

Արիստոկրատ-պատմաբանի մտահորիզոնը սահմանափակ է: Հոռոմը կայսրութեան կենտրոնն է, և այն բոլորին, ինչ հռոմեական չէ, Տակիտուսը վերաբերվում է արհամարհանքով: Կլայնը պրովինցիալներում, ուր իրականում փոխադրվել էր կայսրութեան ծանրութեան կենտրոնը, նրա տեսադաշտից դուրս է մնում: Կայսրը, սենատը, Հոռոմ քաղաքը, բանակը, — այն օբեկտներն են, որոնց վրա կենտրոնացած է Տակիտուսի պատմական հետաքրքրութիւնը: Այդ տեսակետից նա կարող է արձանագրել միայն անկում, բարոյական ուժի թուլացում, բռնակալութեան և ստրկամտութեան աճ: Այդ բարոյա-հոգեբանական կողմն էլ գրաւում է նրա ուշադրութիւնը դեպքերը և պատմական գործիչներին պատկերելիս:

Ըստ հին հռոմեական պատմագրական տրագիցիայի Տակիտուսը պահպանում է տարեցտարի շարագրելու ձևը, բայց դրա հետ միասին աշխատում է տալ գեղարվեստորեն ավարտված պատկերներ: Պատմողականութիւնը ծավալվում է լարված, չմտաւայացող դրամատիզմով և ստեղծում է բռնակալութեան և հասարակական քայքայման մի շարք ցնցող պատկերներ: Տակիտուսն անտիկ պատմագրութեան մեջ պրահան դիմանկարի ամենանշանակալի վարպետն է: Նա ջանում է թափանցել պատմական ղեմքերի վարվելակերպի ամենաձաձուկ մոտիվների ներսը, և հոգեբանորեն մեկնաբանված արարքների հանրագումարից ստեղծվում է պայծառորեն տպավորվող գործչի կերպարը: Այդ տեղի է ունենում և երկրորդական ղեմքերի վերաբերյալ, բայց հեղինակը մեծ ուժի է հասնում կենտրոնական գործող անձանց, Տիրերիուսի և Ներոնի կայսրներին պատկերելու ժամանակ: Որոշ շափով պատմաբանին հաջողվում է հաղթահարել անտիկ թուրքագրութիւնների ստատիկականութիւնը և ցույց տալ բռնակալի անձնավորութեան ներքին զարգացումը՝ նրան պատկանող իշխա-

նութիան բարոյալքող ազդեցութիան տակ: «Աննալների» այն մտ-  
աբերը, որոնք նվիրված են Տիբերիուսին և ներոնին, իրենցից կար-  
ծես թե ողբերգութիւնն են ներկայացնում, գործողութիւնն դանդա-  
ղեցումով և արագացումով: Այդ բնութագրութիւնների պատմա-  
կանորեն ճշմարտացի լինելը կարող է վիճելի լինել, թեև Տակի-  
տուսը հավաստիացնում է իր լրակատար անկողմնակալութիւն  
մասին, բայց կերպարների գեղարվեստական ուժը մնում է ան-  
վիճելի:

Շարագրման ողբերգական տոնին համապատասխանում է  
բացարձակորեն յուրակերպ **ոնի** հանդիսավոր խստութիւնը,  
զսպված և հագեցած մտքերով, ամեն ինչ լրիվ շասված, բայց  
խորաթափանց ընթերցողին հասկանալի: Տարբեր ոճերի վարպետ  
լինելով, Տակիտուսը միանգամից շտեղծեց իր սեփական ոճը:  
Սալյուստիուսի պրոզայի համակենտրոնացած զսպվածութիւնը  
նա միացնում է «նոր» պերճախոսութիւն հզղվածութիւն հետ,  
բայց առանց այս վերջինին հատուկ ձևական էֆեկտների:

Տակիտուսը հավասարապես վեր է բարձրանում իր ժամանա-  
կի մակարդակից և որպես գեղարվեստագետ, և որպես մտածող:  
Անտիկ շրջանում նրան բավականաչափ չըմբռնեցին և չգնահատե-  
ցին: Արդարացի գնահատութիւնն նա արժանացավ նոր ժամանակ-  
ներում: Նրա պատմողականութիւնը ոչ միայն բազմաթիվ ողբեր-  
գութիւնների նյութ տվեց (նշանավոր հեղինակներից կարելի է  
հիշատակել Կոռնելի՝ «Լոթոնը», Ռասինի՝ «Բրիտանիկան», Ալֆրիե-  
րի՝ «Օկտավիան»), այլև նշանակալի հետք թողեց Եվրոպայի քա-  
ղաքական մտքի զարգացման մեջ: Բոլոր երկրների ուսուցիչին,  
բուրժուազիան չէր կարող անցնել այդ հեղինակի կողքից, մի հե-  
ղինակ, որը շատ ավելի մեծ իրավմամբ, քան Յուլիանալիսը, պետք  
է համարվի միահեծանութիւն մերկացնող: «Տակիտուսի անունը  
բռնակալներին ստիպում է գունատվել»,— գրում է Նապոլեոնի ժա-  
մանակի ֆրանսիական ուսուցիչին պոետ Մարի-ժոզեֆ Շենյեն:  
Տակիտուսի նկատմամբ այդպիսի վերաբերմունք ունեին ղեկաբ-  
րիսաներն ու Պուշկինը, որը ոգևորվում էր հոռոմեացի պատմաբա-  
նով, երբ աշխատում էր «Բորիս Գոդունովի» վրա, և նշում էր այդ  
«տիրանների մտրակի» «գատողութիւնների խորութիւնը» («Նկա-  
տողութիւններ Տակիտուսի «Աննալների» մասին»):

## ՀՌՈՄԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

## 1. ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՍՐԸ

Հռոմեական գրականության մեջ II դարից սկսվում է ուժասպառություն: Դրանում վճռողական դեր խաղաց պրովինցիաների քարձրանալը և Իտալիայի նշանակության թուլանալը, որն սկիզբ առավ Ադրիանուսի ժամանակից (117—138): Կայսրության կուլտուրական կենտրոնը փոխադրվում է նրա արևելյան մասը, որտեղ սկիզբ է առնում «հունական վերածնության» ժամանակաշրջանը: Պրովինցիայի ավագանու տիրապետող գրությունը, շնորհիվ կայսրների և բարձր բյուրոկրատիայի այդ ավագանուց լինելուն, և կրոնական մասսայական շարժումները, որոնք գալիս էին Արևելքից, նոր էջ են ստեղծում կայսրության կուլտուրական կյանքում, ընդ որում, առաջատար դերը խաղում է հունարեն լեզվով օգտվող նրա արևելյան մասը: Անտիկ հասարակության անկման ժամանակի այդ կուլտուրայի բնութագրությունը մենք ավել ենք կայսրության ժամանակի հունական գրականության մասին պիտում:

Յուլիանուսը և Տակիտուսը հակադրանք էին տաժում դեպի այն ամենն, ինչ հռոմեական չէր: Ադրիանուսի և նրա հաջորդների արքունիքում իշխում է հելլենասիրությունը: Մարկուս Ավրելիուս կայսրը կազմում է իր խորհրդածությունների օրագիրը («Մնքս ինձ») հունարեն լեզվով: Ուրիշ շատ հեղինակների համար բնորոշ է երկկեզվությունը:

Այս վերջինների թվին պատկանում է Ադրիանուսի քարտուղար Գայոս Սվետոնիուս Տրանկվիլիուսը (մոտ 75—150 թ. թ.), որը պատմական և կուլտուր-պատմական նյութերի մի անխոնջ հավաքող էր: Նրա «Հռչակավոր մարդկանց մասին» երկը, մեզ հասած մի չնչին մասով միայն, կարևորագույն աղբյուր է ծառայել հռոմեական գրողների պահպանված կենսագրությունների

և նրանց մասին հետագայի հեղինակներին խրոնոլոգիական տեղեկությունների համար: Գրեթե ամբողջությամբ մեզ է հասել Սվետոնիուսի մի այլ երկը՝ «Կեսարների կենսագրությունը» (մաս 120 Բ.), որը պարունակում է տասներկու կայսրների կենսագրություն՝ Հուլիոս Կեսարից մինչև Դոմիցիանոս: Դրանք բնութագրություն-կենսագրություններ են, մեծ քանակությամբ մանրամասնություններով: Այդ պատճառով էլ նյութը դասավորված է ոչ թե խրոնոլոգիական կարգով, այլ ըստ «երևույթների կատեգորիաների», այսինքն՝ պատկերվող անձնավորության պետական գործունեության և մասնավոր կյանքի տարբեր կողմերն ընդգրկող սխեմայով: Սվետոնիուսի մեջ պատմա-հնարանական հետաքրքրությունը գերակշռում է զեղարվեստականին: Հիշատակված երկու երկերն էլ կաղմված են լատիներեն, բայց Սվետոնիուսը գրում էր նաև հունարեն լեզվով:

Ադրիանուսի կառավարումը շրջադարձային էր այն առնչությամբ, որ կայսրությունը հրաժարվում է սիստեմատիկ նվաճումների քաղաքականությունից և անցնում է պաշտպանողական դրություն: Գալիա է ներքին հարաբերական խաղաղության, խոշոր ինդիքների բացակայության, կառավարման գործում բյուրոկրատիկ հանդարտության ժամանակաշրջան: Հասարակական ինքնագործունեությունը սահմանափակվում է տեղական մասշտաբի բարեգործությամբ և փոխօգնությամբ: Աճում է հարգանքը մասնավոր օրինակելի կյանքի և ընտանեկան կապվածության նկատմամբ, բայց կուլտուրական հետաքրքրությունները դրանով մասնանում են: II դարի պոեզիայի սակավաթիվ մնացորդները վկայում են պարզ ու բնական բովանդակության, առօրյա զգացմունքներ արտահայտելու և առօրյա առարկաներ նկարագրելու ճրգուման մասին: I դարի համար բնորոշ պաթետիկ տոնը այստեղ արդեն չկա, բայց աչքի է ընկնում նեոտերիկներին հիշեցնող բարդացած շափերով, ինչպես և ոտանավորային թոփուսությամբ՝ սլաճուճված ձևի որոնումով:

Ինչպես այդ ժամանակի հունական գրականության մեջ, Հռոմում ևս զարգանում է արխաիզմը, հնով սրանշանալը, հնարանական և ոճարանական հետաքրքրությունը՝ դեպի նախացիցերոնյան շրջանի վաղ հոմեական գրականության հուշարձանները: Արխաիկ ճաշակներ երբեմն հանդիպում էին և I դարում, բայց II դարից գրանք սովորական են դառնում: Ադրիանոս կայսրը Կատոնին և Էննիուսին գերազասում էր Յիցերոնից և Վերգիլիու-

ախց: 11 դարի արխախտների պարագլուխը Մարկուս Ավրելիուսի ուսուցիչ ճարտասան Ֆրոնտոնն էր (մոտավորապես 100—175 թ. թ.): Ժամանակակիցների մեջ մեծ համարում ունեցող այդ հեղինակի ստեղծագործության բովանդակության շնչին լինելը հատկանշական է հռոմեական վերնախավի կուլտուրական մակարդակի համար: Հունական «ստիեստների» պես, նա ճառեր է հորինում ամեն տեսակ թեմաների շուրջը՝ լուրջ և զվարճախոսական, նույնիսկ ծխի և փոշու մասին գովասանական: Նրա երկերի շարքում պահպանվել է բավական ընդարձակ գրագրություն Մարկուս Ավրելիուսի հետ: Ուսուցիչն ու աշակերտը փոխանակում են իրար հետ կապված լինելու հավաստիացումներ, մեկը մյուսին հաղորդում է օրվա մանր դեպքերի մասին և զրուցում են ոճի հարցերի շուրջը: Հետաքրքրության այլ ընդհանուր առարկա նրանք չունեն: Երբ աշակերտը հրապուրվում է փիլիսոփայությանը, ուսուցիչը չի կարողանում թաքցնել իր խոր վիշաք: Ֆրոնտոնի համար ոճը, ճարտասանական արվեստն ամեն ինչից բարձր է: Արտահայտության ուժեղություն և կոնկրետություն որոնելու համար նա դիմում է հնագույն գրողների տակավին չֆիքսված գրական լեզվի բառապաշարի հարստությանը: Կատոնի, Լենիուսի, Պլավտուսի մոտ, ատեւաններում, արխախտ կուլտեցիուսի և Սալյուստիուսի երկերում նա գտնում է այն «անսպասելի», «ժողովրդական և մոռացված» բառերը, որոնք լեզվին «արխախի կուլտիս» են հաղորդում: Ցիցերոնն արդեն նրան ավելի քիչ շափով է քավարարում: Սենեկային և Լուկանուսին նա խիստ բացասաբար է վերաբերվում: Լեզվի մեջ հնագույն բառեր մտցնելով, Ֆրոնտոնն ստեղծում է տարբեր դարաշրջանների ոճերի խաչտարդետ մի խառնուրդ, որով արտակարգ կերպով պարծենում էր:

II դարի արխախզմի ուշագրավ հուշարձանը Ավլուս Գելիուսի «Ատտիկական գիշերներն» են: Անտիկ հասարակության ստեղծագործական ուժերի սպառվելու այդ ժամանակաշրջանում մենք ավելի հաճախակի ենք հանդիպում ավելի վաղ աշխատությունների զանազան «համառոտագրումների» և քաղվածքների ժողովածուների:

Չանազան թեմաների շուրջը հունական և հռոմեական գրողներից բերված այդպիսի քաղվածքների ժողովածու է իրենից ներկայացնում «Ատտիկական գիշերները»՝ 20 գրքից (հեղինակն Աթենքում ավարտում է ճարտասանական և փիլիսոփայական էքրթությունը և ձմեռային գիշերներին սկսում է աշխատել քաղ-

վածքներ ժողովելու վրա): Քաղվածքները հաճախ դեղարվեստական շրջանակում են ստանում Աթենքի և Հռոմի կրթված հասարակության կյանքից վերցրած մանր պատմվածքներով: Այդ ուղղվածումները զուրկ չեն կուլտուր-պատմական հետաքրքրությունից, բայց մեզ համար ժողովածուի հիմնական նշանակությունն այն է, որ Գելիուսը հսկայական քանակությամբ քաղվածքներ է անում մեզ չհասած ռեսպուբլիկական դրականության հուշարձաններից: Ընդհանրապես, ուշ-անտիկ շրջանի գիտնականների արխարիկ թեքմանը մենք պարտական ենք հին գրողներին քաղմամբիվ Ֆրագմենտների պահպանման համար, մինչդեռ Օգոստոսի ժամանակի և կայսրության առաջին զարթի երկրորդական հեղինակներից գրեթե որևէ հետք չի մնացել:

Հռոմի գրական կյանքի թուլանալու հետ միաժամանակ գրական շարժման ծիւրեր են նկատվում կայսրության այն արևմտյան պրովինցիաներում, որոնց համար լատիներենը կուլտուրայի հիմնական լեզու էր: Մինչև այդ ժամանակ լատիներեն լեզվով գրականության միակ կենտրոնը Հռոմն էր և դեպի իրեն էր գրավում պրովինցիաների կուլտուրական ուժերը: Պրովինցիաների նշանակության աճի հետ այդ գրությունը փոխվում է: Աֆրիկա պրովինցիան, զանվելով հելլենիստական աշխարհի հետ հանդիպման կետում, տվեց II դարի ամենաուշագրավ գրողին, Ապուլուսին (ծնվել է 124 թ.):

Ապուլուսի գործունեության մեջ խաչմերվում են ամենաբազմազան կուլտուրական հոսանքներ: Նա ծնվել է Նումիդիայի խորքերի հոմեական Մաղավրա դաղութում և սերում էր հարուստ ընտանիքից: Ապուլուսը ճարտասանական կրթություն ստացավ Աֆրիկա պրովինցիայի գլխավոր քաղաք Կարթագենում, փիլիսոփայություն ուսումնասիրեց Աթենքում և բազում ճանապարհորդություններ կատարեց հունական Արևելքում: Ապուլուսին իրեն պլատոնիկ փիլիսոփա է համարում: Ընդ որում, նկատի է առնվում I—II դ. այն պլուրադորական պլատոնականությունը, որին մենք հանդիպեցինք Պլուտարքոսի մոտ, այն է, մի ուսմունք, որով ընդունվում էր ասածու և մատերիայի հակադրությունը և «դեմոնների» առկայությունը, իբրև միջնորդներ աստծու և մատերիայի միջև, ընդ որում, «դեմոնների» թվի մեջ մտնում էին ժողովրդական կրոնի «աստվածությունները»: Փիլիսոփա Ապուլուսը հրապուրված է միստիկական պաշտամունքներով և նվիրաբերված դանազան «խորհուրդների»: Բայց ամենից առաջ

«սովետա» է, «երկրորդ սովետություն» տիպիկ ներկայացուցիչն է, և այդ ուսմունքի խաչտարդետ ոճը նա փոխադրում է լատինական հոդի վրա: Գտնվելով Հոտմում, ուր Ապուլեուսն զբաղվում էր փաստաբանական գործունեությամբ, նա հնարավորությունն ունեցավ կատարելագործվելու լատինական ոճին տիրապետելու ուղղությամբ և հարեց մոդա դարձած արխայտական ուղղությանը: Վերադառնալով Աֆրիկա, նա թափառական սովետաբեկյանը էր վարում և այդ ժամանակ քիչ մնաց զոհ գնար այն համընդհանուր սնտիպապաշտությանը, որն ինքը նշանակալից շափով բաժանում էր:

Թափառումների ժամանակ Ապուլեուսը պատահեց իր աթենական զբաղմունքների ընկերներից մեկին և ամուսնացավ նրա հարուստ աչրի մոր հետ, որը տարիքով զգալիորեն մեծ էր Ապուլեուսից: Ազգականները, այդ ամուսնությունից դժգոհ, «փիլիսոփայի» դեմ վտանգավոր մեղադրանք հարուցեցին, ասելով, որ նա զբաղվում է կախարդությամբ, որի օգնությամբ էլ իբր թե «կախարդել» է հարուստ կնոջը: Ապուլեուսի բնափիլիսոփայական և «գաղանխորհուրդ» հետաքրքրությունները մեղադրողներին որոշ նյութ էին մատակարարում: Նրա պաշտպանողական ճառը («Կախարդության մեջ մեղադրանքի դեմ ինքս ինձ պաշտպանելու համար», որ սովորաբար կոչվում է՝ «Ջատագություն»), արտասանված Աֆրիկայի պրոկոնսուլի առաջ և հետագայում ընդլայնած ձևով հրատարակված, արտակարգորեն ուշադրավ կուլտուր-պատմական վավերագիր է և գերազանց պատկերացում է տալիս հեղինակի հոետորական և փաստաբանական արվեստի մասին: Ապուլեուսը խիստ և սրամտորեն ծագրի է ենթարկում իր հակառակորդների տգիտությունը, բաց չանում է կանգ չառնել սայթաքման հնարավորություն տվող «գաղանխորհուրդ» թեմաների վրա: Նա իր ճառը սփռում է շեղումներով, կաշտառորեն սեթևեթելով իր գիտնական և գրական զբաղմունքներով, գեղեցիկ արտաքինով և ոճի գերվարպետությամբ: Պրոցեսը վերջացավ Ապուլեուսի արդարացումով, սակայն «կախարդի» համբավը նրա մասին հաստատուն կերպով մնաց սերունդների մեջ: Հետագայում Ապուլեուսն ապրում էր Կարթագենում և, որպես հռչակավոր հոետոր, մեծ փառք ու պատվի հասավ: Դեռևս կենդանության օրոք նրան արձան կանգնեցրին, և նա ընտրվեց տեղական «պրովինցիալի քրմի» բարձր պաշտոնին:

Փիլիսոփա, սոփեաս և կախարդ Ապուլեուսն իր ժամանակի բնորոշ երևույթն էր: Երա ստեղծագործությունն արտակարգորեն բազմազան է: Նա դրում է լատիներեն և հունարեն, հորինում է ճառեր, փիլիսոփայական և բնագիտական աշխատություններ, ասարեք ժանրերով պոետիկական երկեր: Հունարեն երկերը բոլորքը կորել են, լատիներեններից շատ բան պահպանված է. դրանք են՝ պլատոնիզմի, «գեմոնոլոգիայի» և այլ նյութերի մասին փիլիսոփայական տրակատաներ, զանազան թեմաներով սոփեստական դեկլամացիաներից բաղվածքներ («Մաղկաբաղ»), վերևում հիշատակված «Ջատագովությունը», վերջապես «Մետամորֆոզներ» (կամ «Ոսկե կշ»)՝ մեծ վիպը, որի վրա հիմնված է Ապուլեուսի նշանակությունը համաշխարհային գրականության համար: «Մետամորֆոզներին» («Կերպարանափոխություններին») սյուժեն ամենահիմնական դժերով հետևյալն է:

Լուկիոս անունով երիտասարդ մի հույն ընկնում է Թեսալիա, այն երկիրը, որը հռչակված էր հմայումներով, և իջևանում է ծանոթի տանը, որի կինը հզոր կախարդուհի է համարվում: Մաքսի լինելով հաղորդակցվելու մոգություն խորհրդավոր ոլորտին, կուկիոսը կապվում է սպասուհու հետ, որը որոշ չափով մասնակից էր տիրուհու արվեստին, բայց սպասուհին սխալմամբ նրան թուշուն դարձնելու փոխարեն էջ է դարձնում: Լուկիոսի մարդկային բանականությունը և ճաշակը պահպանվում են: Նա նույնիսկ դիտե հմայումից ազատվելու միջոցը՝ դրա համար բավական է վարդեր ուտել: Բայց հակառակ կերպարանափոխումը երկար ժամանակով կանգ է առնում: Նույն գիշերը ավազակները զոդանում են «էջը», նա զանազան արկածներ է ապրում, մի տիրոջից մյուսի մոտ է ընկնում, ամենուրեք ծեծի է ենթարկվում և բազմիցս կործանվելու եզրին է հասնում: Երբ զարմանալի կենդանին իր վրա ուշադրություն է հրավիրում, նրան դուրս են բերում հրապարակային խաչատրակ ցուցադրման: Այդ բոլորը կազմում են վեպի առաջին տասը գրքի բովանդակությունը: Վերջին պահին կուկիոսին հաջողվում է փախչել ծովի ափը, և եզրափակիչ 11-րդ գրքում նա աղերսանքով դիմում է Իսիդա աստվածուհուն: Աստվա-

\* Չնագրերում վեպը վերնագրված է «Մետամորֆոզներ», բայց հայտնի քրիստոնյա գրող Յոզոսինուսը (350—430) նրանից բաղվածքներ է անում: «Ոսկե կշ» վերտառությունը: «Ոսկե», այսինքն՝ «հրաշագեղ», «հիպերանջ»՝ մակդիրը պատկանում է ստորին պատմողների ոճին, որոնք փոշոցի լսարանի առաջ կատարում էին «ոսկե գրություններ»:

ժուհին նրան երևում է երազում, ազատութուն է խոստանում, բայց սլաշմանով, որպեսզի նրա հետագա կյանքը նվիրված լինի իրեն ծառայելուն: Եվ իսկապես, հաջորդ օրը էջը հանդիպում է Իսիդայի սրբազան Թափորին, ուտում է նրա քրմի ձեռքում գտնվող պսակի վարդերը և մարդ է դառնում: Վերածնված Լուկիոսը այժմ ձեռք է բերում Ապուլեոսի իրեն դժերը. դուրս է գալիս, որ նա Մաղավրացի է, հաղորդվում է Իսիդայի գազանիքներով և աստվածային ներշնչմամբ Հոմ է ուղևորվում, ուր արժանանում է հաղորդման բարձրագույն աստիճաններին:

Կախարդուհու հմայումների միջոցով մարդը կենդանու կերպարանափոխվելու և վերստին իր մարդկային կերպարանքն ստանալու մասին ասքր բազմաթիվ վարիանտներով հանդիպում ենք տարբեր ժողովուրդների մոտ: Ռուսական ֆոլկլորում այդ ներկայացված է Դորրինայի և Մարինկայի մասին բլրլինայում: Այդ ֆոլկլորային ասքր անտիկ գրականության մեջ մտել է Ապուլեոսից շատ առաջ և շարադրված սյուժեում նրան ոչինչ չի պատկանում, քացի եզրափակիչ մասից:

Վեպի ներածության մեջ Ապուլեոսը բնութագրում է այն որպես «հունական վիպակ», կազմված «միլետական» (նովելիստական) ոճով: «Մետամորֆոզները» հունական այն երկի վերածափումն է, որի համառոտ վերապատմումը Լուկիանին վերագրվող «Լուկիոս կամ էջը» պատմվածքն է: Այդ նույն սյուժեն է, արկածների նույն սերիայով, երկու երկերի նույնիսկ խոսքի ձևը շատ դեպքերում նույնական է: Թե այնտեղ և թե այստեղ պատմվածքը տարվում է առաջին դեմքով Լուկիոսի անունից: Բայց հունարեն «Լուկիոսը» շատ ավելի համառոտ է (մեկ գիրք)՝ «Մետամորֆոզներից», որը կազմված է 11 գրքից: Լուկիանի երկերի մեջ պահպանված վիպակը պարունակում է միայն հիմնական սյուժեի սեղմ շարադրանքը՝ նկատելի է կրճատումներով, որոնք մթազնում են գործողության ընթացքը: Ապուլեոսը սյուժեն ընդլայնել է բազմաթիվ էպիզոդներով, այդ էպիզոդներում հերոսն անձամբ մասնակցում է, դրան զուգընթաց կան ընդմիջարկյալ նովելներ, որոնք սյուժեի հետ անմիջականորեն չեն կապվում և մուծված են սրպես կերպարանափոխումից առաջ և հետո տեսածի ու լսածի մասին պատմություններ: Տարբեր են վերջավորությունները. «Լուկիոսում» չկա Իսիդայի միջամտությունը: Հերոսն ինքն է ճաշակում փրկարար վարդերը, իսկ հեղինակը նրան՝ արդեն մարդ դարձած «պատմություններ և այլ երկեր կազմող»-ին՝ վերստին ստորա-

ցումներէ և ենթարկում. այն տիկինը, որին նա դուր էր գալիս իր էջ ժամանակ, մարդ դարձած պահին մերժում է նրա սերը: Այդ անսպասելի ֆինալը պարողիկ-երգիծական լուսաբանություն է տալիս «իշի» տարաբախտությունների չոր պատմվածքին և խստորեն հակադրվում է Ապուլեուսի վեպի կրոնա-հանդիսավոր վերջավորությանը: Լատիներեն վերամշակման մեջ փոփոխված են և գործող անձանց անունները, բացի ղլխավոր հերոսի՝ Լուկիոսի (Լյուցիուս) անունից:

IX դ. Կոնստանդնուպոլսի պատրիարք Փոտիոսը դեռևս ունեցել է իր ձեռքի տակ Լուկիոս-էշի մասին վիպակի լիակատար տեսքը և համադրել այն մեզ հասած շարադրության հետ, որը վերագրել է Լուկիանոսին: Այդ վիպակի հեղինակ նա համարում է ոմն Լուկիոս Պատրացու, որի մասին մյուս աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի չէ նույնիսկ, այդ գրողի իսկական անունն է, թե պատմվածքի հիման վրա հորինված անուն է, քանի որ Լուկիոս հերոսը ծագումով Պատր քաղաքիցն է (այդպես է հունարեն «Լուկիոսում», իսկ Ապուլեուսի հերոսի հայրենիքը Կարթագենն է) և պատմությունն անում է առաջին դեմքով: Փոտիոսի ոչ բոլորովին պարզ խոսքերից կարելի է եզրակացնել, որ մեզ հետաքրքրող սյուժեն զբաղեցնում էր Լուկիոս Պատրացու երկի առաջին երկու գրքը. նրա երկի մեջ պատմված են եղել մարդկանց՝ կենդանիների կերպարանափոխվելու մասին և ընդհակառակը, և ուրիշ պատմություններ, ընդ որում, ի տարբերություն ծագրող Լուկիանոսի, իր թեմային միանգամայն լրջությամբ էր վերաբերվում:

Այսպիսով Ապուլեուսը և «Լուկիոս կամ էջ» երկի հեղինակը վերամշակել են նույն երկը երկու ուղղությամբ: Բնագրի կորած լինելու պայմաններում «Մետամորֆոզների» հեղինակի ներգրտմբ միշտ չէ, որ կարելի է ճշգրտորեն որոշել: Բայց եթե հունարեն բնագիր վիպակը իսկապես զետեղված էր երկու գրքում, ապա «Մետամորֆոզների» ընդլայնումները և ընդմիջարկումները նշանակալի չափով պետք է վերագրել իրեն՝ Ապուլեուսին, եզրափակման, կիսակենսագրական մասի հետ գուզընթացաբար:

«Ուշիմ եղիր, ընթերցող, կզվարձանաս», այս խոսքերով է վերջանում «Մետամորֆոզների» ներածական գլուխը: Հեղինակը խոստանում է զվարճություն պատճառել ընթերցողին, բայց բարոյախոսական նպատակ էլ է հետապնդում: Վեպի գաղափարական կոնցեպցիան ղրսևորվում է միայն վերջին գրքում, երբ

սկսում է ջնջվել հեղինակի և հերոսի միջև սահմանագիծը: Մյու-  
 ժե՛ն ստանում է այլաբանական մեկնաբանություն, որի մեջ բա-  
 րոյական կողմը բարդանում է խորհրդավորությունների կրոնի-  
 վարդապետություն: Խելամիտ Լուկիոսի՝ հստակ Իսիդայի հա-  
 մար «վազուց ի վեր զզվելի» հեշտասեր\* կենդանու կաշվի մեջ  
 լինելը դառնում է զգայական կյանքի այլաբանություն: «Քեզ  
 օգուտ չտվին,— ասում է Լուկիոսին Իսիդայի քուրմը,— ոչ ծա-  
 գումդ, ոչ դրուձյունդ, ոչ էլ նույնիսկ գիտությունդ, որով դու  
 աչքի ես ընկնում, որովհետև դու, քո երիտասարդ հասակի կրթ-  
 քով, դառնալով հեշտասիրության ստրուկ, օրհասական հատու-  
 ցումն ստացար անտեղի հետաքրքրության համար»: Այսպիսով,  
 զգայականությանը միանում է երկրորդ արատը, որի կործանա-  
 րար լինելը կարելի է իլուստրացիայի ենթարկել այդ վեպով, այդ  
 «անտեղի հետաքրքրություն է», ինքնակամորեն գերբնականի ծա-  
 ծով գաղտնիքները թափանցելու ցանկությունը: Բայց Ապոլեո-  
 սի համար է՛լ ավելի կարևորը հարցի մյուս կողմն է: Զգայական-  
 մարդը «կույր ճակատագրի» ստրուկն է: Նա, ով հաղթահարում  
 է հաղորդման կրոնի զգայականությունը, «ճակատագրի հանդեպ  
 հաղթանակ է տնում»: «Քեզ իր հովանավորության ներքո է առ-  
 նում մի այլ ճակատագիր, բայց արդեն տեսունակ»: Այդ հա-  
 կադրումն արտացոլվում է վեպի ամբողջ կառուցվածքի մեջ:  
 Մինչև հաղորդակցվելը Լուկիոսը չի դադարում նենգ ճակատագրի  
 խաղալիք լինել. ճակատագիրը նրան հետապնդում է նույնպես,  
 ինչպես հետապնդում է անտիկ սիրավեպի հերոսներին և նրան-  
 անց է կացնում միմյանց հետ շկապված արկածների միջով: Հա-  
 դորդակից լինելուց հետո Լուկիոսի կյանքն ընթանում է պլանաչափ-  
 րատ աստվածության նախատեսության ավելի ստորին աստիճանից  
 դեպի ավելի բարձր աստիճանը: Ճակատագրին հաղթահարելու  
 գաղափարը մենք հանդիպում ենք արդեն Սալյուստիուսի մոտ,  
 բայց այնտեղ դրան հասնում էին «անձնական քաջարիությունը»:  
 Սալյուստիուսից երկու դար հետո ուշ-անտիկ հասարակության  
 ներկայացուցիչ Ապոլեոսան արդեն հույս չի դնում իր սեփական  
 ուժերի վրա և իրեն հանձնում է աստվածության հովանավորու-  
 թյանը:

\* Մենք ընտելացել ենք «իշի» կերպարի հետ կապել հիմարության պատ-  
 կերացումը: Անտիկ ֆոլկլորում և հավատալիքներում էլը առաջին հերթին  
 հանդես է գալիս որպես հեշտասեր կենդանի, կապված պտղաբերության պաշ-  
 տամոճքների հետ:

Եզրափակել զրբի կրոնա-փիլիսոփայական կոնցեպցիան հեղինակին հնարավորութիւնն է տալիս Լուկիոսի կյանքի զգայական շրջանի պատկերման մեջ մեծ քանակութեամբ «զբաղեցնող» նյութ մտցնել: Սակայն նրան օտարոտի շին նաև երգիծական նպատակները: Հերոսի իշային դիմակը լայն հնարավորութիւններ էր տալիս բարբերի երգիծական նկարագրութեան համար. «մարդիկ հաշի շառնելով իմ ներկայութիւնը, ազատորեն խոսում և գործում էին ինչպես ցանկանում էին»: Այդ հնարավորութիւններն արդեն օգտագործված էին հունարեն վիպակում, ուր պատկերված է, օրինակ, սիրիական աստվածուհու մուրացիկ քրմերի անառակ կյանքը, իսկ իրեն՝ Ապոլլեոսին պատկանող հավելումներում ընդլայնված են: Ամբողջ վեպով մեկ սփռված են հսկայական քանակութեամբ մանր շարքիներ, որոնք պատկերում են պրովինցիալ հասարակութեան տարբեր խավերը տարբեր պայմաններում, ընդ որում, Ապոլլեոսը չի սահմանափակվում կենցաղա-դավիճարային կողմով. նա չի ծածկում ստրուկների ծանց շահագործումը, մանր հողատերերի դժվարին կացութիւնը, վարչութեան կամայականութիւնը: Կուլտուր-պատմական մեծ արժեք ունեն կրոնի և թատրոնի հետ կապված նկարագրութիւնները:

Էպիզոդներում և ընդմիջարկյալ մասերում մենք հարուստ ֆուլկլորա-նովելիստական նյութ ենք գտնում: Հեղինակը ջանում է միատիպ հավելյալ նյութը համահինարոնացնել հիմնական պատմվածքի տարբեր մասերի տոնին համապատասխան: Այստեղ կան կախարհութեան մասին ստեր և ավազակների պատմութիւններ, անհավատարիմ կանանց մասին անպարկեշտ կենցաղա-դավիճարական նովելներ և առաքինի հերոսների մասին պատմվածքներ, սպանութիւնների և ոճրագործութիւնների մասին մոռյլ պատմութիւններ և ուրախ ծաղրանմանութիւններ:

Այս խաչատարդետ և գունեղ պատկերի մեջ առանձնապես աչքի է ընկնում մի մեծ ընդմիջարկյալ պատմվածք, որը գետեղված է վեպի կենտրոնում և մեծութեամբ հավասար է երկու զրբի, այդ Ամուրի և Պսիխեի մասին «պառավական պատմվածքը», այսինքն, հեքիաթն է: Այդ՝ համաշխարհային ֆուլկլորում հեքիաթային ամենատարածված սյուժեներից մեկն է. աղջկան ամուսնացրել են ինչոր խորհրդավոր էակի հետ, խախտված է պսակադրութեան արգելքը, ամուսինն անհետանում է, կինն ուղևորվում է որոնումների և երկարատև թափառումներից հետո գտնում է ամուսնուն: Ապոլլեոսն իր պատմութիւնն սկսում է հեքիաթային ֆորմուլա-

յով՝ «Մի պետութեան մեջ լինում է, չի լինում մի թագաւոր է լինում իր թագուհու հետ, նրանք երեք աղջիկ են ունենում»: Այնուհետև հեղինակն անցնում է իր սովորական նրբագեղ ոճին: Գրական մշակումը պահպանել է ֆոլկլորային սյուժեի հիմնական գծերը: Երեք աղջիկներից ամենակրտսերի ալշեցուցիչ գեղեցկութունը, նրա համար նշանակված ամուսնութիւնը սարսափելի հրեշի հետ, ամուսնու մոգական պաշարը՝ անտեսանելի սպասուհիներով, խորհրդավոր ամուսինը, որը կնոջն աչցելում է գիշերները և արգելում է իրեն նայել լույսով, նենգ քույրերի սաղրանքով արգելքի խախտումը, անհետացած ամուսնուն որոնելը, որը դուրս է գալիս մի հմայիչ տղա, քույրերից վրեժառութիւնը, հերոսուհու թափառումները և ստրկական ծառայութիւնը, իր հիասքանչ օգնականների օժանդակութեամբ նրա կատարած դժվարին գործերը, նրա մահանալն ու հարութիւն առնելը, — այս ամբողջ հեքիաթային շղթան առկա է նաև Ապուլեուսի պատմվածքում: Բայց հերոսուհու ամուսինը: Ամուսն է, և հեքիաթի աշխարհը միախառնված է օլիմպիական աստվածների ոլորտի հետ, մատուցված կենցաղազավեշտական տոներով: Հերոսուհին էլ անուն է ստանում. նա՝ Պսիխեն է (Psyche — «Հոգի»): Անտիկ շրջանում արդեն Ապուլեուսի պատմվածքը բմբունվում էր այլաբանորեն, և հեղինակը սրտը շափով նկատի ունի նման մեկնաբանութիւնները: Հերոսուհու — «հոգու» անկումը, լինելով տարաբախտ անտեղի հետաքրքրութեան արդյունք, նրան շար ուժերի զոհ է դարձնում, դատապարտում է տառապանքների և թափառումների, մինչև որ վրա է հասնում վերջնական ազատագրումը գերագույն աստվածութեան ողորմածութեամբ, — այդ առնչութեամբ Պսիխեն նման է գլխավոր հերոս Լուկիոսին: Հարկ չկա փոխաբերութիւններ որոնել միայն մանրամասնութիւնների մեջ, և տառապանքների միջոցով հոգին մաքրելու միտքը, որ մացվում է այդ սյուժեի մեջ՝ նոր ժամանակներում, անհարազատ է Ապուլեուսի կոնցեպցիային:

Ապուլեուսը, ինչպես սովորաբար անտիկ խոսքի վարպետները, աիրապետում է բազմազան ոճերի: «Ջատագովութեան» մեջ նա ջանում է վերարտադրել Յիցերոնի «առատութիւնը», ղեկավարմացիաները հնչում են սոփեստական պերճախոսութեան բոլոր զողանջներով, «Մետամորֆոզներում» սոփեստական գունազարդութիւնը զուգակցվում է նովելի ավելի պարզ ոճի հետ: Ամբողջութեամբ, սակայն, Ապուլեուսը նրբագեղ, սեթեթե ոճաբան է, հաճախ դիմում է արխաիկ բառերի, պոետիկական դարձվածք-

ների, սեփական բառաստեղծման և, դրա հետ միասին, ժողովրդական լեզվի արտահայտության: Ախտադասությունը հաճախ բաժանվում է մի շարք հավասարաչափ, զուգահեռորեն կառուցված մասերի՝ յուրաքանչյուր մասի վերջում հնչնային կրկնությամբ:

Ապոլեոսի փառքը շատ մեծ էր: «Մոգի» անվան շուրջը առասպելներ էին ստեղծվում. Ապոլեոսին հակադրում էին Քրիստոսին: «Մետամորֆոզները» լավ հայտնի էին Միջին դարերում. տակաո՞ի մեջ թաքնված սիրեկանի և փոշտալով իրեն մատնող սիրեկանի մասին նովելներն անցան Բոկաչչիոյի «Դեկամերոնի» մեջ: Բայց ամենից շատ հաջողության բաժին ընկավ Ամուր և Պսիխե»-ին: Այդ սյուժեն բազմիցս մշակվել է գրականության մեջ (օրինակ՝ Լաֆոնտեն, Վիլանդ, մեզ մոտ Բոգդանովիչի «Душенька»-ն) և նյութ է մատակարարել կերպարվեստի մեծագույն վարպետների ստեղծագործություններին (Ռաֆաել, Կանովա, Տորվալդսեն և այլն):

II դարում Ապոլեոսը միակ բանաստեղծը չէր Աֆրիկայի պրովինցիայում: Աֆրիկայում ավելի վաղ, քան այլուր, առաջանում է լատիներեն լեզվով ինքնուրույն քրիստոնեական գրականություն: Դրա նախակարապետը Տերտուլիանոսն էր (մոտավորապես 150—230 թ. թ.)՝ եկեղեցական լատիներենի ստեղծողը, որը քրիստոնեական դպրության մեջ է մտցրել սոփեստական ոճի եղանակները:

## 2. ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴԻՅ—ՎՅՅԵՐՈՐԴ ԳԱՐԵՐԸ

Այն երկարատև ճգնաժամը, որը ցնցեց կայսրությունը III դարում, իր հետ ամայություն է բերում լատիներեն լեզվով գեղարվեստական գրականության բնագավառում: Նա վերածնվում է ճգնաժամը հաղթահարելուց հետո միայն, բայց նրա զարգացման պայմանները խստորեն փոխված էին: III դ. վերջին ստեղծվող բացարձակ միապետությունը կենտրոնը Հռոմից Կոստանդնուպոլիս է փոխադրում, տիրապետող կրոնը շուտով դառնում է քրիստոնեությունը: Գրական զարգացման մեջ ևս առաջատար դերը պատկանում է քրիստոնեական գրականությանը: IV—V դարերի «ուշ կայսրությունը»՝ միջնադարյան լատիական գրականության ծնունդ առնելու ժամանակն է: Անտիկ գրականությունը մահացման պրոցես է ապրում:

Գրական հին ձևերն այնուամենայնիվ շարունակում են գոյություն ունենալ ընդհուպ մինչև կայսրության արևմտյան մասի վերջնական քայքայումը և նրա ոչնչացումը «բարբարոսների» հողմից: Պահպանողական այն ուժը, որը պահում էր գրական հին գույություն, դարձնում էր, քերականական և ճարտասանական ուսուցումը: Դպրոցը սովորեցնում էր տիրապետել «կլասիկ» լեզվին, որից կենդանի լեզվի զարգացումը շատ էր հեռացել. նա սովորեցնում էր հին տաղաչափությունը, հիմնված երկար և կարճ վանկերի տարբերման վրա մի բան, որ կենդանի լեզվի մեջ արդեն վերացած էր: Հին լեզուն մնում է որպես վեղմամբի դասակարգային լեզու, անկախ նրա կրոնական պատկանելիությունից: Քրիստոնեական արձակագիրները [Մուևուցիուս Ֆելիքսը (II—III դ. դ.), Կալտանցիուսը (III—IV դ. դ.) Հիերոնիմը (մոտ 348—420 թ. թ.), Օգոստինուսը (354—430) օգտագործում են նույն ճարտասանական ոճը, ինչ որ և հեթանոսները, իսկ քրիստոնեական պոետները բիրիլական սյուժեները վերապատմում են Վերգիլիուսի եղանակով կամ իրենց լիրիկայում հետևում են հորացիուսական ձևերին (ականավոր պոետ Պրուպերցիուսը, մոտ 348—410 թվականներին):

Հետագայի միջնադարյան զարգացումը նախապատրաստող քրիստոնեական գրականությունը մեր քննության սահմաններից դուրս է գտնվում: Այստեղ մենք կսահմանափակվենք հին գրականության հետ կապված մի քանի կարևորագույն երևույթների համառոտակի մատնանշումով միայն:

Այսպես, IV դ. երկրորդ կեսին հռոմեական գրականության վերածնության խնդիրն իր առաջ դնում է հետոք Սիմախուսի (մոտավորապես 350—410 թ. թ.) շուրջը համախմբված արխատուհրատների խմբակը: Այդ խմբակը, հավատարիմ մնալով հին կրոնին, հին հռոմեական կուլտուրայի տրագիցիաները՝ հակադրում է, մի կողմից, քրիստոնեությունը, մյուս կողմից՝ «բարբարոսությունը»: Մանրակրկիտ կերպով բաղդատած հռոմեական գրողների շատ տեքստերի պահպանումը, դրանց մեկնաբանություններ ստեղծելը՝ այդ խմբակի գործունեության արդյունքներից մեկն էր: Բայց պահպանողական շրջանների սեփական գրական ստեղծագործությունն աչքի է ընկնում գաղափարական հեռանկարից զուրկ լինելով: Սիմախուսի իրեն ճառերն ու նամակները, գեղեցիկ կերպով հղված լինելով ոճաբանորեն, արտակարգորեն աղբատ են բովանդակությամբ: Հին հեղինակների վերապատ-

մտմաները, պաճուճված ձեր և ոտանավորի ձեռնածոթյունը, դրպ-  
րոցական պեղանախղմը և սիմվոլիկա-փոխաբերական ֆանտաս-  
տիկան՝ այդ գրականության բնորոշ հատկանիշներն են: Գրական  
լարախաղացության հատուկ տեսակ էին «ցենստոնները» (կարկա-  
տաններից հագուստ), նոր երկը ստեղծվում է որևէ պոետի  
(ամենից հաճախ Վերգիլիուսի) զանազան տեղերից պոկած տո-  
ղերի միացման օգնությամբ:

IV դարի պոետներից ամենանշանակալիցը Գեցիմ Մագնուս  
Ավստոնիուսն էր (մոտավորապես 310—395 թ. թ.), նա Բուրգի-  
գալում (այժմյան Բորդո) քերականության և ճարտասանության  
դասատու էր և Գրացիանուս կայսրի դաստիարակը: Պոետիկա-  
կան խաղալիքի այդ վարպետը, որը սիրում էր միևնույն թեմա-  
յով «միատողեր» և «երկտողեր» (կամ «քառյակներ») հորինել,  
թողել է մի քանի երկեր, որոնք միայն ֆորմալիստական հե-  
տաքրքրություն չէ, որ ներկայացնում են: Գրանց թվին է պատ-  
կանում Mosella-ն, Հոենոսի և Մոզելի վրա կատարած ճանա-  
պարհորդության նկարագրությունը, բնության զանազան պատ-  
կերների ուրվագծումով, և «էֆեմերիդան» — օրվա ժամանցի  
նկարագրությունը: Ավստոնիուսն իր մեջ միացնում է հոմեական  
հայրենասիրությունը հայրենի պրովինցիան սիրելու հետ, և նրա  
բազմաթիվ բանաստեղծություններում բազմազան արտացոլում է  
զանում IV դարի գալլա-հոմեական վերնախավի կուլտուրական  
կյանքը: Պոետին հաջողվում է պատկերել քնտանեկան զգաց-  
մունքները, բնկերական հաբաբերությունները, աշխարհիկ առա-  
քինությունը. նրա հետաքրքրությունն ավելի խորը չի թափանցում:  
Ավստոնիուսը բրիտանոյա է, բայց նրա հայացքն ուղղված է առա-  
վելապես դեպի անցյալը, և նրա երկերը ծանրաբեռնված են ամեն  
տեսակի քերականական, դիցաբանական և պատմա-աշխարհա-  
գրական «գիտնականությամբ»: Նա լավ դիտե կլասիկ պոեզիան  
և ջանում է անմիջականորեն հարել մեր թ. I—II դարերի պոետի-  
կական տրադիցիաներին (Մարցիալիս, Ադրիանուսի ժամանակի  
պոետներ):

Կայսրության արևմտյան մասի զատվելը IV դ. վերջին Խոա-  
լիային վերադարձրեց նրա համարյա թե կորցրած քաղաքական  
նշանակությունը: Նորից ծագում է քաղաքական թեմատիկայով  
պալատական պոեզիան, որը փառաբանում էր Հռոմի հաջողու-  
թյունները «բարբարոսների» դեմ մղվող պայքարում: IV և V դարե-  
րի սահմանադրված այդ պոեզիայի ամենատաղանդավոր ներկա-

յացուցիչը Կլավդիոս Կլավդիանոսն էր (վախճանվել է 404 թ.), ծագումով արեքսանդրիացի հույն, ոտանավորի փառուն վարպետ էր նա և բանաստեղծություններ էր գրում երկու լեզվով: Կլավդիանոսը բանաստեղծություններ է հորինում արևմտյան կայսր Հոնորիուսի և Արևմտաքի փաստական կառավարող Ստիլիխոսի պատվին և խիստ ծաղրով հարձակվում է արևելյան կայսրի ֆավորիտների վրա: Կոստանդնուպոլսի արքունիքի ներքիններին և ինտրիգաններին կծու ծաղրելը հերթադաշտում է պոետին հովանավորողների հասցեին ուղղված չափազանց գովեստների հետ: Կատինական աշխարհի միասնությունը, որպես հակադրություն հունական կայսրության, հանձին Կլավդիանոսի գտավ իր պերճախոս և պաթետիկ արտահայտչին. նա փառաբանում է Հոռմի անցյալը և գուշակում է Հոռմի հավերժականությունը: Գեղարվեստական լիրիզմով և դիցարանական ապարատի օգտագործման հարստությամբ Կլավդիանոսը հաճախ մոտենում է Ստացիուսի գրելու եղանակին: Մեծ նրբագեղությամբ աչքի է ընկնում նրա «Պրոզերպինայի հափշտակումը» դիցարանական էպոսը: Հոռմի, որպես համաշխարհային տիրապետության կենտրոնի, խանդավառ գովք է պարունակում Ռուսլիոս Նամատիանուսի պոեմը, որն էլեգիկ ոտանավորներով նկարագրում է հեղինակի վերագարձը Հոռմից Գալիա:

Ուշ ժամանակի շատ բանաստեղծություններ մեզ հասել են մի ժողովածուում, որը սովորաբար կոչվում է «Լատինական անտալոգիա»: Ժողովածուն, ըստ երևույթին, կազմված է VI դ. Աֆրիկայում, բայց դանազան ժամանակների երկեր է պարունակում: Դրանց շարքում իր գեղարվեստական արժանիքներով աչքի է ընկնում «Ալեկեռայի հսկումը». հեղինակը, որի համար գարուն չի եկել, փառաբանում է գարնան գալուտար և վենեթայի ծննդյան տոնը: Բանաստեղծությունն անհավասար մասերի է բաժանված և երբ լսած է կրկներգով՝ «Վաղը թող սիրի, ով երբեք չի սիրել, իսկ ով սիրել է, թող վաղն էլ սիրի»: Հայտնի չեն ոչ հեղինակը, ոչ բանաստեղծության ժամանակը (թերևս IV դ.):

Հին տրագիկներում է սնվում և արտակերպական պրոզան: Պլինիուսի օրինակով «ջատագովություններ» և Սվետոնիուսի օրինակով կայսրների կենսագրություններ են կազմվում: Ուշ ժամանակի արձակագիրներից, բացի արդեն հիշատակված Միմախուսից, ամենից շատ հետաքրքրություն են ներկայացնում հոռ-


ճեական վերջին խոշոր պատմաբան, Տակիտոսի շարունակող Ամիաճուս Մարդեկիանուսը (մոտավորապես 330—400 թ. թ.) և Թեոդորիսի կողմից 524 թ. մահապատժի ենթարկված՝ փիլիսոփա Բեռտիուսը, «Փիլիսոփայության պատճառած հաճույքի մասին» տրակտատի հեղինակը:

Բնորոշ է պատմողական գրականության դարգացումը: «Ալեքսանդրի գործերը», «Դիքոսը», «Ռարեոը» լատինական մշակման են ենթարկվում, լատիներենի միջոցով էլ միջնադարյա Եվրոպան ծանոթացավ այդ երկերին: Միջին դարերում հսկայական տարածումն ստացավ մի այլ լատինական արկածային վեպ՝ «Տյուրոսի արքա Ապոլոնիոսի պատմությունը», որը մշակում է աշխարհով մեկ ցրված և վերամիավորվող ընտանիքի մասին սյուժեն: Ապոլոնիոսին հետապնդում է դժբախտությունը: Նա պետք է փրկվի Անտիոք արքայից, որի արշավանքով կապն իր աղջկա հետ նա գուշակել է աղջկա հանելուկներով. կիրենական արքայադուստր՝ Ապոլոնիոսի կինը մահանում է ծովային ճանապարհորդության ժամանակ, և արկղը նրա մարմնով ջուրն է խորասուզվում. նորածին աղջիկը, թողնվելով անարժան մարդկանց մոտ դաստիարակության համար, մահացու վտանգի է ենթարկվում և համարվում է մահացած, բայց իրականում ընկնում է կավատի ընտանիքը: Ամեն ինչ, հարկավ, բարենպաստ է վերջանում: Անտիոքի թագավորությունը, նրա մահվանից հետո, Ապոլոնիոսին է անցնում. արկղը կնոջ մարմնով ափ է դուրս գալիս, մահը երևակայական է եղել, բժիշկը նրան կյանքի է վերադարձնում. աղջիկն անարատ է մնացել, և Ապոլոնիոսը, որն արդեն լիակատար հուսահատության էր հասել, իր աղջկանը ճանաչում է հանձին այն երգչուհու, որին կոպտությունք քիչ էր մնում հրեք. և այնուհետև գտնում է կնոջը Եփեսոսի Դիանայի քրմուհու պաշտոնում: Արատը պատժված է, և բոլոր առաքինի պիերսոնաժները վարձատրվում են: «Ապոլոնիոսի պատմության» սյուժեն նյութ է ծառայել Շեքսպիրին վերագրվող «Տյուրոսի արքայազն Պերիկլեսը» ողբերգության համար:

Արևմտյան կայսրության քայքայումը, բարբարոսների նվաճումները և անտիկ հասարակության անցումը ֆեոդալականին ավարտում են հին հռոմեական գրականության մահացման պրոցեսը: VI—VII դարերի սահմանագլխին այն արդեն մեռած է, և նրա գրական ձևերը մասամբ միայն փոխակերպվում են միջնադարյան լատիներեն գրականության ժանրերի: Բայց դպրոցի և

տեխնիկայի կարիքները պահանջում էին պահպանել հին հուշար-  
ձանները: Վանքերում, որոնք այնուհետև լուսավորութեան կեն-  
տրոններն էին դառնում, տեղի է ունենում հին հռոմեական գրող-  
ների տեքստերի արտագրություն. այդ առնչությամբ առանձնապես  
նշանակալից է Թեոդորիսի ժամանակի ահանավոր պետական  
գործիչ Կասսիոդորուսի (ծնվել է մոտավորապես 480 թ.) ձեռնե-  
րեցությունը: Ռայրոցա-վանքային կարիքին ծառայելով, մանա-  
վանդ Կարոլինգների ժամանակից սկսած, արտագրությունները  
հռոմեական տեքստերը պահպանեցին մինչև այն ժամանակ, երբ  
գրանք վերստին Եվրոպայի կուլտուրական կյանքի հզոր գործոն-  
ներ դարձան, այսինքն՝ մինչև վերածնության դարաշրջանը:

---



## ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հայերեն հրատարակութեան

**Ազրիկուլա,** Կասիուս Յուլիուս (39—93)— հռոմեական զորավար, Ֆալուսով Գալլիայից, նշանակվեց Բրիտանիայի կուսակալ և մինչև 83 թ. նվաճեց այդ ամբողջ երկիրը: Ազրիկուլայի կենսագրութունը գրել է Տակլտուսը, որը նրա փեսան էր:

**Ալլիսեւրացիա** (համահնչունութուն)— հին հունական և լատինական պոեզիայում հատուկ ներդաշնակութուն, որի էությունն այն է, որ յուրաքանչյուր տան երկու-երեք բառեր սկսվում էին նույն ձայնավորով կամ բաղաձայնով:

**Ալիմենա** (առասպ.)— Միկենացի Էլիկրիոնեսի դուստրը, որի հետ կենակցել էր Ջեսը և այդ կենակցութունից ծնվել էր Հերկուլեսը: Հետագայում ապրում էր Նրանելիների կղզում:

**Ամուր**— հռոմեական սիրո աստվածը. նույնն է, ինչ որ հունական Էրոսը (տես մասն I):

**Ամալիգիկացիա**— հին Հռոմում որևէ երկրի (երբեմն և ճառի) մանրամասնեցում կողմնակի նյութով, հետագայում մաքի լսնողում ոչ կարևոր մանրամասնութուններով:

**Ամֆիտրոն** (առասպ.)— արքենթական արքա: Իբրև գեղարվեստական տիպ պատկերվում էր որպես հյուրընկալ տանտեր և խաբված ամուսին:

**Ապոլոգիա**— հին Հունաստանում և Հռոմում մեղադրյալի պաշտպանությունը բանավոր կամ գրավոր: Հետագայում քրիստոնեությունը պաշտպանող երկեր. ավելի ուշ ընդհանրապես շատագրություն: **Ապոլոգես**— քրիստոնեության պաշտպանող, հետագայում՝ շատագրով: **Ապոլոգեսիկա**— քրիստոնեության պաշտպանության մասին ուսմունք:

**Ապոլոնիս, Տիրացի**— հունական վեպի հերոս: Վեպի հունական քննադիրը (հավանաբար III դ.) կորած է. հայտնի է լատինական վերադասմունքներով Լատինական աղբյուրների հիման վրա կաղավել են անգլո-սաքսական, ֆրանսիական և գերմանական վարիանտներ, որոնցից օգտվել է Շեքսպիրը («Պերիկլես», «Չմեռալին հեքիաթներ»):

**Ապոկալիպսիս**— քրիստոնեական նոր Կտակարանի վերջին գրքի անունը, որը պարունակում է այսպես կոչված Հովնան Աստվածաբանի հայտնությունը, որը իբր թե կատարվել է Պաթմոս կղզում:

**Արիստոնա** (առասպ.)— Մինոսի և Պագիֆայի դուստրը. կծիկի օգնությամբ Թեգետին ագառն է լաբիրինթոսից և նրա հետ փախել է Նակսոս կղզին. եր Թեգետը լքում է նրան, Դիոնիսիոս աստվածն իր կինն է դարձ-

նում և պաշտօնում էր նրա հետ միասին: (Այդ անունից էլ ծագում է «Արիադնայի թել» դարձվածքը, որ նշանակում է խճճված դրությունից ելք գտնել):

**Արիսիպ Պրիեւացի (435—360)**— հույն փիլիսոփա, Սոկրատեսի աշակերտներից. կիրենյան փիլիսոփայական դպրոցի հիմնադիրը. նրա ուսմանը հիմք էր՝ մարդուն դեպի երանելիութուն: ամառը հաճույքն է, որը կարող է լինել և՛ դճայական, և՛ հոգեկան, ընդ որում մարդը պետք է լինի ոչ թե իր հաճույքի դերին, այլ նրա վրա իշխողը:

**Աճրիկա**— չպետք է շփոթել արդե մայր ցամաքի հետ. հին հոռմեացիներն Աճրիկա անվանում էին միայն այժմյան Թունիսի և Ալժիրը շրջանը, որն այն ժամանակ Հռոմի պրովինցիան էր: Հետագայում այդ անունը տարածվեց ամբողջ մայր ցամաքի վրա:

**Ալեքսիկա (Վերենիկա)**— Նդիպտոսի և Սիրիայի թագուհիներից մեջանիսի անունը «Ֆերենիկայի ժամերը», որը զեղարվեստական երկի նյութ է ծառայել, վերաբերում է Պտղոմեոս III էվերգետի կնոջը. այդ անունով կոչվել է հատուկ համաստեղութուն:

**Արուսու, Լուցիոս**— հին Հռոմի արխատիրատիայի նշանավոր հերոս. 510 թ. մ. թ. ա. ժողովուրդը նրա զլխավորութամբ տապալեց Տարկինիոսի թագավորական տոհմը: Համարվում էր արխատիրատական ակադեմիկայի հիմնադիր և նրա առաջին ընտրովի կոնսուլը:

**Արուսու, Մարկուս (85—42 թ. թ.)**— սկզբում Պոմպեոսի կուսակցիցներից էր, 48 թ. անցավ Կեսարի կողմը. նշանակվեց Մերձալպյան Գալլիայի կառավարիչ: Մտավ Կեսարի դեմ դավադրական կազմակերպության մեջ և նրան սպանողներից մեկն էր: Մրան է վերաբերում հանրահայտի դարձվածքը՝ «Ճվ դո՛ւ, Բրուտոս»:

**Գրացիաներ**— նույնն է, ինչ որ հունական Սարգիս, (տես մասն I):

**Իիդուս (աասպ.)**— Փյունիկական աստվածուհու անունը. համարվում էր Կարթագեն քաղաքի միջնարբերի հիմնադիրը: Փյունիկիայից փախչում է Աֆրիկա և այնտեղ գնում է մի կտոր հող «եզան կաշվի չափով»: Դիդոնան եզան կաշվի կտրել էր երկար թելի ձևով և, չխախտելով սրտմանը, գրավել է մի ամբողջ սար, որի վրա էլ հիմնել էր Բերսու միջնաբերդը: Հենց դա էլ ըստ առասպելի, հիմք է դառել Կարթագեն քաղաքի: Ըստ վերգիլիոսի պոեմի, Դիդոնան սիրահարվում է Էնեասի վրա:

**Իիդիս, Կրետացի**— այն անձնավորութունը, որի անունով մեղ է հասել «Տրոյական պատերազմի օրագիրը» լատիներեն լեզվով, որը կեղծիք է. այդ մի անհայտ հեղինակի գործ է, զրված հավանաբար մ. թ. IV դարում:

**Իիվիոս, Մինոպացի**— մ. թ. ա. III դարի հույն զբամասուրը. գրել է շուրջ 100 կատակերգութուն, որոնց անուններն են միայն մեղ հասեր: Նա օրինակ է ծառայել Պլավտուսի և Տերենտիուսի համար:

**Իոնիսոս, Էլիուս**— մ. թ. IV դ. հոռմեական քերական և ճարտասան. բացի լատինական քերականութունից, որը միջին դարերում համարվում էր կլասիկ ձեռնարի, գրել է նաև Տերենտիուսի երկերի կոմիստարիաները:

**Իուլիուս, Մարկուս Լիվիուս**— մ. թ. ա. 91 թ. ընտրվեց Հռոմի ժողովրդական արքուն, ձգտում էր համաձայնութուն ստեղծել զգոն ժողո-

վըրդի և արխտողրատիայի միջև. ձգտում էր իրավահավասարութիւնը բարձրացնել իտալիկներին համար, սպանիաց հակառակորդներին կողմից:

**Էլտո** (առասպ.)— հավերժանարս, որին պատժել էր Հերան և դարձրել էր արձագանք, այսինքն՝ չէր կարողանում խոսել և չէր կարողանում լսել, երբ խոսում էին ուրիշները, նարցիսոսին (Տես) տաժած անպատասխան սիրուց այնքան տառապեց, որ քարացավ մնաց միայն ձայնը՝ արձագանքը: Այտուցից էլ էլտո=արձագանք:

**Էկլոգա**— բանաստեղծութիւնների ժողովածու, առանձնապէս հով-վերգական:

**Էդոս** (առասպ.)— Էոլական կղզիների արքան, որն իշխանութիւնը ուներ քամիների վրա:

**Էմնաու** (առասպ.)— Տրոյական պատերազմի հերոսներից մեկը, Պրիամոսի փեսան, ծնվել է Անիդիլիայի և Ափրոդիտից, իր ուսերի վրա այրվող Տրոյայից դուրս է բերել հորը, որդուն, ընտանեկան սրբութիւնները, սակայն կորցրել է կնոջը: Ողջ մնացած արոյացիների գլուխն անցած 50 նավով թափառել է երկրի երկիր, որն էլ կազմել է Վերգիլիուսի «Էնեականի» բովանդակութիւնը: Թափառումների ժամանակ նա ընկնում է Աֆրիկա, որտեղ նրա վրա սիրահարվում է Կարդազենի թագուհի Գլոդոնան (Տես): Այդտեղից ուղևորվում է Լացիում (Իտալիա), ուր, ամուսնանալով Լատին արքայի դստեր հետ, դառնում է լատինացիների նախահայրը:

**Թեոկրիսես**, Սիրակուզացի— մ. թ. ա. III դ. կեսերում ապրել է Ալեքսանդրիայում, որտեղ օգտվում էր Պտղոմեոս Ֆիլադելֆեսի հովանաւորութեամբ Վերադառնալով Սիրակուզա, գրել է իր հռչակավոր իդիլլիաները հովվական կյանքից:

**Թկարոս** (առասպ.)— Գեդալոսի որդին: Մինոս արքայի զայրույթից հոր հետ փախչում է Կրետի կղզուց՝ մօտից շինած արհեստական թեքի օդ-նութեամբ: Թոկլքի ժամանակ շատ մոտենալով արեգակին, մոմը արեգակի ճառագայթներից հալվում է և Իկարոսն ընկնում է ծովը:

**Լաոկոոն** (առասպ.)— Ապոլոնի քուրմը Տրոյայում, նա տրոյացիներին զգուշացնում էր, որ հույները փայտե ձին քաղաք չտանեն, զրա համար երկու հակա օձ նրան իր երկու որդիներին հետ խնդրեցին: XVI դ. սկզբին Հռոմում պեղումների ժամանակ գտնվեց այդ թեմային վերաբերող Ռոդոսի հռչակավոր արձանագրածների մի զեղարվեստական դործ:

**Կասիլինա**, Լուցիուս Սերգիուս (108—62)— աղբատացած պատրիկ ընտանիքից. մասնակցել էր Սուլլայի պրոսկրիպցիաներին: 63 թ. ղավազու-թիւն կազմեց Հռոմի սենատի դեմ, բայց մերկացվեց Ցիցերոնի կողմից: Սպանից ապստամբութեան ժամանակ:

**Կարտուս**, Մարկուս Լիցիիուս— պրովինցիաներից կողոպտած անչափ հարստութեան պատճառով ստացել էր Dives (հարուստ) մականունը: 71 թ. որպէս պրետոր Չալսիանից Սպարտակի ստրկական ապստամբութիւնը: Կեսարի և Պոմպեոսի հետ կազմեց առաջին եռապետութիւնը, նրան կառավարման բաժին ընկավ Սախան: Պարթևները հաջող տակալեցալով նրան առաջ քաշեցին անապատները, Չալսիանիցին նրա բանակը, իրեն էլ սպանեցին: Պլուտարքոսի պատմելով, նրա կարած գլուխը բերին հայոց Արտավազդ թագավորի մայրաքաղաքը ներկայացման ժամանակ:

**Կառոն** Ալլազ (234—149)— հին Հոմի խոշոր արխատկրատիայի պետական գործիչ, մոլեռանդ կերպով պաշտպանում էր հոռեական հին բարքերը, անհաշտ թշնամի էր Կարթագենին, իր ճառերը միշտ վերջացնում էր բացազանչությամբ՝ շայնուամենայնիվ ես կողմնակից եմ Կարթագենի կործանմանն: Գրել է մի շարք աշխատություններ, որոնց թվում նաև Հոմի պատմությունը:

**Կառոն**, Կրտսեր (95—45)— սեպուլքիկական պարտիայի պարագլուխը և մոլեռանդ արխատկրատ, Կեսարի ռեբրիմ հակառակորդը: Կյանքին վերջ դրեց, երբ լսեց Կեսարի հաղթության մասին:

**Կոնստանտինացիա**— պատմելու ժամանակ երկու կամ մի քանի դեպքերի խառնելը: մի դեպքի կամ զբաղված երկի մանրամասնությունները մի ուրիշի մեջ մտցնելը: Կոնստանտինացիան շատ սովորական երևույթ է ֆոլկլորի զարգացման մեջ:

**Կոնսոլիդացիա**— հին հոռեական գաղտնեղում այն թեման, որ արվում էր աշակերտներին ղրախելակայե և պերճաստեղծության մեջ մարդավերջ համար: Այժմ (լուստրովերգա)՝ տարածայնություն, վեճ, վեճի առարկա:

**Մարիուս**, Գայուս— հոռեական տաղանդավոր զորավար, հողագործի սրբի, մայրեց զինվորական սեֆորմներ, մի շարք վալլուն հաղթանակներ տարավ, որի հետևանքով անընդհատ ընտրվում էր կոնսուլ: Սուլլայի ռեբրիմ հակառակորդը: Քաղաքացիական կռիվներում հաղթվեց Սուլլայից:

**Մարս**— Յուպիտերի հետ միասին հոռեացիները զլխավոր աստվածությունն էր: սկզբում համարվում էր զաշտերի և ցանքսի ընդմեջ վերող ուժը, իսկ հետո՝ պատերազմի աստվածը և նույնացվում էր հունական Արեսի հետ (սես):

**Մելլոմենա**— ողբերգության մուսան, պատկերվում էր ողբերգական դիմակով, գովազանով կամ սրով և բաղկի պսակով:

**Մեկինա**, Գայուս Յլինիուս— Օգոստոս կայսեր մտերիմ բարեկամը, բանաստեղծների և արվեստագետների հովանավորը: Նա մեծապես օգնեց վերգիլիուսին ետ ստանալու նրանից բունագրոված կալվածքը: իր ստեղծական կալվածքը նվիրեց Հորացիուսին Այժմ դարձել է հասարականուն, որ նշանակում է արվեստագետի հովանավորը:

**Մուգուրս**— Նումիդիայի թագավորը, պատերազմում էր Հոմի դեմ (111—106 թ.թ. մ. թ. ա.), կաշառելով հոռեական հյուպատոսներին և զորավարներին, հաղթում էր հոռեացիներին: Վերջ է վերջո ջախջախեց Մաքսիմի կողմից և վերջինիս հաղթական մուտքի ժամանակ ոտքով բերվեց Հոմ, որպես ռազմագերի, այնուհետև մեռավ սովամահով:

**Մուկոնա**— համապատասխանում է հունական Հերային (տես ժաման. I):

**Մուպիեր**— համապատասխանում է հունական Զևսին (տես ժաման. I):

**Նագրիուս** (առասպ.)— Լաիդեիմոնացի չքնաղ պատանի, Կեֆիսս գետի և Լեյրիոպա հովիտահարսի որդին, մահից հետո դարձել է ծագիկ (նարկիս):

**Նեմեոս** (նեմեոլիդա)— հունական առասպելաբանություն մեջ պատժող արգարագատության աստվածուհին, պատկերվում էր չափի և սանձահարման (լուծ, սանձ), ինչպես և պատմի (մտքակ, սուր) սիմվոլով:

**Նեորե** (առասպ.)— աստվածներին բարեկացրել էր նրանով, որ գոռո-  
ղացել էր իր 12 դավակներով, ուստի նրանք բոլորը նետահարվել են Ապո-  
լոնի և Արտեմիսի նետերով, իսկ իրեն Նեորեին Ջևար դարձրել է քաղե-  
արձան: XVI դ. պեղումների ժամանակ գտնվել է Նեորեի արձանախումբը,  
որ համարվում է ավելի հնեերի պատճեն:

**Պան**— հունական անտառների և հոտերի աստվածը, Հերմեսի որդին-  
պատկերացվում էր այժի ոտքերով ու կոտոչներով և երկար մորուքով: հա-  
մարվում էր հովիվներին և որսորդներին հովանավորը: նրան էր վերագրվում  
սրինգի գլուխը: Պանը միամամանակ համարվում էր սարսափելի դև, այս-  
տեղից էլ պանիկալան սարսափ, պանիկա:

**Պասարալ**— պոեզիա, հովվերգական այնպիսի պոեզիա, որտեղ գոր-  
ծող անձինք հենց հովիվներն ու հովվուհիներն են, այս կարգի պոեզիան  
տենդենց ունի հովվական պարզ, բնությանը մոտ կյանքը հակադրելու  
քաղաքի ժխտին:

**Պիգմալիոն** (առասպ.)— կիպրոսի արքան, որը փրոսկերից կերտեց  
կույսի արձան և այն աստիճան սիրահարվից արձանի վրա, որ աղերսեց  
Ափրոդիտեին կյանք տալ նրան՝ նրա իղձն իրականացավ, ամուսնանալով  
կենդանություն ստացած արձանի հետ, նրանից որդի ունեցավ:

**Պոմպեոս**, Գնեսոս (106—48)— հռոմեական դարավար, հռչակվեց մի  
շարք հաղթական արշավանքներով, ճնշեց Սիցիլիայի ստրուկներին պատամ-  
բությունը, ջախջախեց ծովահեններին, Ասիայում հաղթեց Միհրդատին  
և Տիգրանին: Պոմպեոսը կեսարի և Վրաստի հետ կազմեց 1 եռապետություն-  
ը, սակայն շուտով նորից անցավ Սենատի կողմը և զլխավորում էր բա-  
նակը Գնեսարի դեմ 48 թ. ջախջախից և փախավ Եգիպտոս, որտեղ էլ  
սպանվեց:

**Պանիֆեհեա**— հին Հռոմի բարձրաստիճան քուրմը: Գերագույն պոն-  
տիֆեհեի հետ միասին դրանց թիվն սկզբում 5 էր, այնուհետև 9, Սուլ-  
լայի ժամանակ հասավ 15-ի. կայսրության շրջանում այդ թիվն ավելի մե-  
ծացավ: Մինչև 382 թ. գերագույն պոնտիֆեհեի տիտղոսը կրում էր կայսրը,  
իսկ բրիտանոնության շրջանում՝ Հռոմի պապը:

**Պրեսոր**— 366 թվականից մ. թ. ա. Հռոմում անսպուրելիական եվ-  
կայսերական բարձրագույն դատական աստանի անդամ, որ ընտրվում էր յու-  
րաբանչյուր տարի. 337 թ. պրեսոր կարող էին ընտրվել նաև պլեբեյները:  
III դ. կեսերից ստեղծվեց հռոմեացիների գործերի հատուկ պրեսորատ և օտա-  
րերկրացիների և քաղաքացիների միջև եղած գործերի առանձին պրեսորատ:  
Հետագայում ստեղծվեցին պրովինցիաների համար պրեսորատներ: Պրեսոր-  
ների քանակը Սուլլան դարձրեց 8, իսկ Կեսարը՝ 16: Յուրաբանչյուր պրեսոր  
պաշտոնի անցնելիս հրապարակում էր հատուկ հրովարտակ (եղիկո): Աղ-  
բիանուս կայսեր ժամանակ դրանցից կազմվեց ժողովածու, որը օրենքի  
ուժ ստացավ:

**Պսիխս** (առասպ.)— մարդկային հոգու անձնավորումը, որին սի-  
քում էր Էրոսը (Ամուրը) (տես մասն I), պատկերվում էր որպես թիթեռ-  
նիկ կամ թիթեռի թևերով գեղեցկուհի:

**Ռոմուլուս**— Հռոմ քաղաքի առասպելական հիմնադիրը և առաջին  
արքան: Մահից ազատելու համար նրան իր եղբայր Ռեմուսի հետ գցում

են զեւրի աիւր, որտեղ նրանց իր կաթով կերակրում է զայլը և խնամում են հովիքն ու հովվուհին: 753 թ. մ. թ. ա. հիմնում է Հոռոմը, սպանում է եղբորը, քաղաքը բնակեցնում է փախստականներով ու անապատաւաններով և դառնում է նրանց թագավորը:

**Սկիլլա** (առասպ.) — վեց զլիանի մի հրեշ, որն սպրում էր Իտալիայի և Սիցիլիայի միջև գտնվող բարձր ժայռի քարանձավում: Նրա դիմաց, լիթիարի թղենու տակ, սպրում էր Սարիբոյա հրեշը: Նրանց միջև եղած տարածութունն այնքան քիչ էր, որ վտանգավոր էր նազազնացութեան համար՝ խուսափելով Սկիլլայից, կարելի էր բնկնել Սարիբոյայի ճանկը: Վերջիլիուսն իր «Էնեիդանում» տրոյացիներին անց է կացնում այդ տեղից:

**Սկիպիոն Ալիպ,** (234—183 մ. թ. ա.), Հին Հռոմի ամենաականավոր գործիչներից մեկն էր. մասնակցել է Կաննի մոտ ճակատամարտին, ուր հռոմեացիներին ջախջախեց Հաննիբալը: 210 թ. նշանակվում է հռոմեական արշավանքի գորավար դեպի Իսպանիա, ուր կենտրոնացած էին կարթագենացիները, այդտեղ նվաճում է Նոր-Կարթագեն քաղաքը և Իսպանիան մաքրում է կարթագենացիներից: 203 թ. ուղևորվում է Աֆրիկա, ուր ջախջախում է կարթագենացիներին և նրանց զաշնակիցներին: Հաննիբալն ստիպված է լինում թողնել Հռոմը և օգնութեան շտապել իր հայրենիքին: Հաննիբալը պարտվում է: Սկիպիոնը գլխավորում էր այն կուլտուրական շարժումը, որը ջանում էր Հռոմ փոխադրել հունական կուլտուրան: Հռչակավոր գեմոկրատներ Գրակրասները նրա ազդեցություններն էին:

**Սկիպիոն Կրտսեր** (185—129 մ. թ. ա.) — աչքի էր բնկնում իր հակումով դեպի գրականութունը, հովանավորում էր իր ժամանակի աչքի բնկնող գրականագետներին: Նրա և Լելիուսի բարեկամութունը անմահացրել է Յիցերոսն իր «Բարեկամութեան մասին» երկում, նա հիանալի հոեսոր էր և հունական գրականութեան լավագույն գիտակներից մեկը: Միաժամանակ հայտնի էր որպես գորավար նա կործանեց Կարթագենը (3-րդ Պունիկ. պատերազմ):

**Սուլլա, Լուցիուս Կորնելիուս** — Հռոմի ղեկաւատոր. Սկզբում գործում էր Մարիուսի հրամանատարութեան տակ, հենց նրա սլատերազմների ժամանակ էլ աչքի բնկավ և 88 թ. ընտրվեց կոնսուլ և արևելյան արշավանքի հրամանատար: Մինչ նա Ասիայում էր, Մարիուսականները գրավեցին Հռոմը: Սուլլան վերադառնալով ջախջախեց իր հակառակորդներին և նրանց հետ դատաստան տեսալ, կազմակերպեց այսպես կոչված պրոսկրիպցիաները, որոնց մեջ բնիկ մարիուսականներն էին: Նա ամբողջութեամբ գրավում էր, որին մի մասը հատկացվում էր մատնողին: Այդ ժամանակ շատ բազդաբնդիները մատնութեամբ հարստութուններ էին ղեկում: Սուլլան նշանակվեց ցմահ ղեկաւատոր: Նա հեռացավ իր կալվածքը և այնտեղ մեռավ ճոխ կյանք վարելուց:

**Սեյիխուն, Յլավիուս** — վանդալ, ծառայում էր Թեոդոս կայսեր մոտ 395 թ. Թեոդոսի որդի՝ Արեմոյան կայսրութեան կայսր Հոնորիուսի դատախարակն էր, 403 թ. հաջողութեամբ պատերազմեց՝ վեստգոթերի դեմ. 405 թ. վերստին փրկեց Իտալիան. 408 թ. սպանվեց Հոնորիուսի հրամանով:

**Յինցիմատուս, Լուցիուս Կլենցիուս** — հռոմեական արխատերապետ

համարում էր հին-հոռմեական առաքինության և պարզության տիպարները անգամ ընարվել է զիկտատոր՝ մեկ անգամ Հոռմը վերկել է արտաքին թշնամուց, մյուս անգամ՝ պլերբայական ասպտամբությունից: Դիկտատորական շրջանը վերջացնելուց հետո անցել է հողագործական աշխատանքի:

**Ճաստի**— հին հոռմեական օրացույցը, այսինքն լի օրերը, երբ կատարվում էին հանրային, մանավանդ դատական գործերը. նաև բարձրաստիճան անձանց պաշտոնավարության տարեհշուհները:

**Փորում**— հին Հոռմում սկզբում շուկայի հրապարակը, ռեսպուբլիկայի ժամանակ Հոռմ քաղաքի հատարակական կյանքի կենտրոնը:

**Փարսուհա**— հոռմեցիները լազդի և ճակատագրի աստվածուհին. Հոռմում նրան նվիրված էին բազմաթիվ տաճարներ. պատկերվում էր թլիփ առատության փողով, թևերով, անիվով կամ գնդով:

**Փուրխաներ**— համապատասխանում է հունական էրինիաներին (տես. մասն 1):





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Մասն II. Հոռմեական գրականություն

#### I Բաժին IV: Հոռմեական գրականությունը ռեսպուբլիկայի ժամանակաշրջանում

	Էջ
ԳՂՈՒՆ I: Ներածություն . . . . .	3
✓ 1. Հոռմեական գրականության պատմական նշանակությունը . . . . .	3
2. Հոռմեական գրականության պերիոդիկացիան . . . . .	8
ԳՂՈՒՆ II: Նախագրական ժամանակաշրջան . . . . .	10
ԳՂՈՒՆ III: Հոռմեական գրականության առաջին դարը . . . . .	25
1. Մ. թ. ա. III դարի և II դարի առաջին կեսի հոռմեական հույ՝ տուրան և հասարակությունը . . . . .	25
2. Առաջին պոետները . . . . .	31
3. Պլափուուս . . . . .	35
4. Էննիուսը և նրա զպրոպր: Տերենտիուս . . . . .	58
5. Թատրոնական գործը Հոռմում . . . . .	73
6. Պրոզա: Կատոն . . . . .	77
ԳՂՈՒՆ IV: Ռեսպուբլիկայի վերջին դարի գրականությունը . . . . .	81
1. Ռեսպուբլիկայի վերջին դարի հոռմեական հասարակությունը և կուլտուրան . . . . .	81
2. Մեր թ. ա. II և I դ. դ. սահմանադրիի գրականությունը . . . . .	90
3. Յիցերոն . . . . .	98
4. Օպոդիցիան ընդդեմ ցիցերոնիզմի: Ռեսպուբլիկայի վերջի ժամանակի հոռմեական պատմագրությունը . . . . .	118
✓ 5. Լուկրեցիուս . . . . .	129
6. Ալեքսանդրիականությունը հոռմեական պոեզիայում: Կատուլ- լուս . . . . .	140

Բաժին V: Կայսրութեան ժամանակաշրջանի հռոմեական  
գրականութիւնը

ԳլՈՒԽ I, Կայսրութեան անցման շրջանի («Օգոստոսի դա- րի») հռոմեական գրականութիւնը . . . . .	156
1. «Օգոստոսի դարի» հռոմեական հասարակութիւնն ու կուլտու- րան . . . . .	166
✓ 2. Վերգիլիոս . . . . .	166
✓ 3. Հորացիոս . . . . .	196
4. Հռոմեական էլիզիան . . . . .	223
5. Տիրուլոս . . . . .	228
6. Պրոպերցիոս . . . . .	233
7. Օվիդիոս . . . . .	239
8. Տիտոս Լիվիոս . . . . .	253
ԳլՈՒԽ II, Հռոմեական գրականութեան արձաթե դարը . . . . .	259
1. Հռոմեական հասարակութիւնը և կուլտուրան մեր թ. I դ. . . . .	259
2. «Նոր ոճը»: Սենեկա . . . . .	271
3. Ներոնի ժամանակի պոեզիան . . . . .	292
4. Պետրոնիոս . . . . .	301
5. Ֆեզոս . . . . .	310
6. Ռեակցիան «նոր» ոճի դեմ: Ստացիոս . . . . .	313
7. Մարցիալիս . . . . .	320
8. Պլինիոս Կրտսեր . . . . .	325
9. Յուվենալիս . . . . .	328
10 Տակիտոս . . . . .	333
ԳլՈՒԽ III, Հռոմեական գրականութեան վերջին շրջանը . . . . .	339
1. Մեր թվականութեան II դարը . . . . .	339
2. Մեր թվականութեան երրորդը—վեցերորդ դարերը . . . . .	350
Բառարան . . . . .	357

Գրք

Գրք

Խմբագիր՝ Է. Դ. ԹՈՓՂՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Վ. ԱԼԵԿՅԱՆ  
Սրբագրել՝ Գ. ՊԱՐԻՍ

---


ՎՖ 03678 Պատվեր 294: Տիրած 1500: 23 տպագրական մամուլ:  
Հանձնված է արտադրության 20/X 1949 թ.:  
Ստորագրված է տպագրության 20/V 1950 թ.

---

Հայկական ՍՍՌ Պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի տպարան  
Երևան, Տեղյան փ. № 127







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0005776

ԳԻՆԸ 10 ՈՒԻՐԷԼԻ

ЦЕНА

II  
21829

Проф. И. М. Тренский

ИСТОРИЯ АНТИЧНОЙ ЛИТЕРАТУРЫ

Изд. Гос. Заочного пед. института А.И. СССР

(на французском языке)

Ереван--1950